ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

ՔԵՐՈՎՆԱՑՒՈՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՀԱՏՈՐ Ե.

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

9(37)
ՊԴՕ

ՔԵՐՈՎՆԱՑԻՈՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԲՆԱԳՐԷՆ
Հ. ԵՂԻԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՄԱՃԵԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԱՐԴԵԱՄԲՔ ՔԱՋԱՓԱՅԼ ԱՄՊԵՏԻ
ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՌԱՓԱՅԷԼԻ
ՂԱՐԱՄԵԱՆ

30

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄՁԳ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

ԵՒ

ԳԱՅԻՈՍԻ ՅՈՒԼԻՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ

Ո ԱՂԵՔՍԱՆԴՐԻ արքայի զվարսն և զկեսարուն՝ յորմէ պարտեցաւն Պոմպէոս՝ 'ի մատենի աստ մերում արձանագրեալ մեր, առ խիտ և գունակ գունակ նահատակութեանցն հանդիսից՝ ոչինչ այլ նախաբանեսցուք մեք, բայց աղաչել զվերծանելեան՝ զի թէ ոչ զամենայնն ծայրալիր, և ոչ դարձեալ զմէն մի ճշգրտագոյնս 'ի գերահռչակ մրցանացն պատմեսցուք՝ այլ բաղում ինչ 'ի նոցանէն ծայրաքաղ, մի բամբասեսցեն զմեզ: Զի ոչ պատմութիւնս արձանագրեմք՝ այլ վարս. և ոչ դարձեալ 'ի հոյակապ մրցանաց անտի՝ առաքինութիւնն մեզ յերևան գայ կամ մոլութիւնն. այլ է բաղում անգամ զի և գուզնաքեայ ինչ գործ և բան, նա և կատակ մի գլխովին, ճշգրիտս մեզ 'ի դէմս զբարս բերէ զմարդկանն, առաւել քան

զմարտս ահագինս պատերազմաց և քան զբազմաձեռն կարգս զգնդաց գնդաց և քան զաւէրութիւնս քաղաքաց :

Եւ արդ՝ զորօրինակ կենդանագիր նկարիչքդ զճշգրտութիւնսն առնուն 'ի դիտակէ երեսացն և 'ի կազմածոյ աչացն, ուստի բոյս բարուցն յանդիմանի . իսկ զայլոց մասանցն դուզնաքեայ յոյժ է նոցա փոյթն . սապէս և մեզ ինքնին շնորհեսցի միջամուխ 'ի ներքս լինել մանաւանդ 'ի տիպս հոգւոյն, և 'ի նոցունց առնուլ յօրինել զառն առն զվարսն . այլոցն թողեալ զերկայնապատում զճառն զմեծաց մրցանաց նոցա և զմարտից պատերազմաց :

Եւ արդ՝ զի Աղեքսանդրոս ըստ հայրենի զարմին էր Հերակլեան 'ի Կարանոսէ, և ըստ մայրենին՝ Էակեան 'ի Նէոպտողմեոսէ, անշուշտ հաւատացեալ է : Եւ պատմեն՝ եթէ Փիլիպպոս 'ի Սամոթրակէ վարժեալ 'ի նուիրականսն 'ի միասին ընդ Ողիմպիայ 'ի տիս պատանեկութեանն, ցանկացաւ օրիորդին Ողիմպիայ որբացելոյ 'ի ծնողացն . և անդանօր ապա յարդարէր զհարսանիսն, հաւանեցուցեալ զԱրիմբաս զեղբայր Ողիմպիայ : Եւ յառաջնում գիշերի մտանելոյ նոցա յառագաստին, թուէր նմա հարսին՝ բոմբիւն լսել որոտմանց, և հրացան բարկութեան շանթել 'ի վերայ որովայնին, և 'ի շանթիցն հուր բորբոքեալ մեծ և 'ի բոցս հատեալ՝ յայսկոյս յայնկոյս ցնցղեալ 'ի չէք լուծանել : Իսկ և Փիլիպպոսի ապա յետ

հարսանեացն՝ Թուէր յանուրջս կնքել ինքնին մատնեհար յորովայն լծակցին, և դրոշմ մատնեհարին՝ երևէր պատկեր առնել զառիւծու: Ապա 'ի թարգմանել գուշակացն և ըղձից զտեսիլն՝ իբրու եթէ պէտք իցեն Փիլիպպոսի պահ գեղեցիկ զգուշութեան ունել զամուսնոյն, անդ Արիստանդրոս Տելմեսեան՝ ասէր զկինն յղի. (քանզի և զթափուր ինչ երբէք մատնեհարեն ոչ). և թէ՝ յղացեալ է կինն զաւակ քաջասիրտ և առիւծաբարոյն:

Ե՛ր երբեմն տեսանել և վիշապի փարել զմարմնովն Ողիմպիայ 'ի ննջել նորա. և պատմեն՝ նուազել յայնմանէ խանդի սիրոյն Փիլիպպոսի. զի և ոչինչ յաճախ այնուհետև ննջէր ընդ նմա՝ զանգիտեալ 'ի վհկէ ինչ և 'ի դեղատուութենէ կնոջն. կամ խուսափեալ մտանել առ նա, իբրու որ գերաշխարհիկ ոք մերձեցեալ իցէ առ կինն: Բայց և պատմութիւն այլ 'ի ներքս բերեն վասն այսորիկ, եթէ 'ի վաղնջուց յոյժ ժամանակաց մարգարեացեալ առհասարակ կանայք գաւառին յոգւոյ անտի Որփէոսի և Դիոնիսեայ, և մականուն վասն այնորիկ առեալ՝ Կլոդոնեանք և Միմալոնեանք, բազում ինչ գործեն նմանօրինակ գործոցն Եդոնեանց կանանցն և Թրակացւոց բնակաւորացն Եմոսի, յորոց և թուի բառդ Թ–ր–է–ս–ք–է–ու–ին՝ ընծայեալ ծայրայեղ իմն և նորակրօնաւոր նուիրագործութեանցն: Իսկ Ողիմպիա յաւէտ իմն քան զայլսն հետամուտ 'ի մարգարէու-

թիւն, և խժդժագոյնս գնացեալ 'ի կոկոզանս, ածէր ձգէր 'ի նուիրական տոնախմբութիւնն՝ օձս վիշապս համբուրեցուցեալս, որ սողեալ 'ի բաղեղանց 'ի դուրս սողեալք և 'ի խորհրդական որթոցն, և փարեալ պատեալ 'ի բարսմունսն կանանց և 'ի բոլորսն պսակաց՝ ահաբեկ զարսն առնէին :

Բայց ասեն յետ երկուութիցն այնոցիկ առաքել Փիլիպպոսի 'ի Դեղփոս զՔերոնէ Մեգաղոպօլեցի, և բերել պատգամ զաստուծոյն պատուիրանաւ առ Փիլիպպոս՝ զոհ յաղել Ամոնին և շուք մեծապէս գնել դիցն այնմիկ : Եւ ասեն ևս՝ զակնն կորուսանել Փիլիպպոսի՝ որով ընդ ծերպ դրանն հայեցաւ 'ի դիս անդր՝ որ 'ի վիշապի կերպարանս ընկողմնեալ էր ընդ կնոջն: Եւ յետ ժամանակաց Ողիմպիա՝ որպէս Էրատոսթենէս պատմէ՝ 'ի չուել Աղեքսանդրի 'ի մարտ պատերազմին նմա միայն 'ի վեր հանեալ զգաղտնիս ծննդեանն, քաջալերէր զնա նահատակել արժանի ծննդոց իւրոց : Իսկ և կէսք ասեն՝ աղարտել Ողիմպիայ զայն ինչ և ասել ևս. " Ո՞չ արդեօք դադարեսցէ Աղեքսանդրոս դատափետել զիս առ Հերայ ,, :

Արդ ծնաւ Աղեքսանդրոս 'ի վեցերորդի աւուր Եկատոմբէոն ամսոյն, զոր Լոոն կարդան Մակեդոնացիք. յորում աւուր այրեցաւ և մեհեանն Արտեմեայ Եփեսացւոց, ուստի և Եգեսիաս Մագնեսի բացագանչութիւն իմն գործեաց սառնիկ

ցուրտ՝ զի և բաւական էր ցրտութեամբն
չինջուցանել զհրդեհ զայն. քանզի ասաց՝
իրաւապէս արդեօք այրել մեհենին՝ 'ի պա_
տաղել անդ Արտեմեայ դայեկաբար 'ի
ծննդեան Աղէքսանդրի: Եւ ապա մոգք
առհասարակ որ յայնժամ յԵփեսոս, զա_
ղէտս մեհենին կարծեալք՝ այլոց գուշակ
աղէտից, յայսկոյս յայնկոյս վազեալք
ընթանային զՃակատ հարեալ և զդոյժ
բարձեալ՝ զի աղէտք մեծամեծք և մահուչք
յաւուր յայնմիկ ծնան Ասիոյ: Իսկ առ_
Փիլիպպոս յայնժամ՝ որ այն ինչ հասեալ
կալեալ էր զՊոտիդէս, հրեշտակք եկեալ
հասանէին աւետաբերք միանգամայն. ա_
ռաջին՝ զի 'ի պարտութիւն Իլիւրիկեցիք
մատնեցան 'ի Պարմենիոնէ 'ի մեծի պա_
տերազմին. և ապա՝ եթէ յՈղիմպիականին
նժոյգ իւր օդապար տարաւ յաղթութիւն.
և երրորդ անգամ՝ զի ծնաւ Աղէքսանդրոս:
Յայտնիկ մեծապէս ցնծացեալ Փիլիպպո_
սի (և 'ի դէպ արդեօք), մեծ ևս զուար_
Ճանայր յանձն իւր յըղձից անտի գուշա_
կութենէն, եթէ որդի որ 'ի ժամանակի
յաղթութեանց երից ծնեալ իցէ՝ անյաղթ
լինիցի:

Այլ զկերպարան դիտակին Աղէքսան_
դրի է տեսանել առաւել ինն յանդրիան
Լիսիպպոսի, զոր և զնա միայն կամէր Ա_
ղէքսանդրոս իւր անդրիագործ. քանզի
այս Ճարտարապետ մեծապէս խնամով
Ճշգրտեաց զնորա ձիգս զպարանոցին՝ փայլ
մի 'ի ձախոյն թեքեալ կոյս, դարձեալ և

զաչացն զաշխոյժսն. զորոյ և զնմանութիւն ապա յանձինս իւրեանց բերէին նորուն պայազատք և բարեկամք: Իսկ Ապելլէս նկարագործեալ զնա շանթաբեր կայծակնաբարձ՝ ոչինչ այնպէս ճշգրտեաց ըզգոյնն, այլ նսեմագոյնս գործեաց զնա և թուխերանգ. բայց նա սպիտակ էր՝ որպէս ասեն, և սպիտակութիւն այն շիկանայր նորա յաւէտ 'ի լանջսն և 'ի դէմսն: Իսկ այն՝ եթէ և 'ի մորթոյն հոտ բուրէր անոյշ, և 'ի բերանոյն դարձեալ և ողջոյն 'ի մարմնոյն բուրումն անուշից և 'ի նոյն վարակել և հանդերձիցն նորա, զայս մեք 'ի յիշատակարանսն Արիստոքսենեայ ընթեռնումք: Եւ պատճառք բանին թերևս խառնուած մարմնոյն իցէ՝ յոյժ ջերմին և հրատապ. քանզի և բուրումն անուշից՝ որպէս Թէոփրաստոս համարի՝ հանդերձի 'ի հասուցանելոյ անտի ջերմոյն զհիւթսն. որք աղազաւ և վայրք հողոյ ցամաք առաւել և հրատապք՝ բազում ինչ և լաւ բուսուցանեն 'ի խնկենեաց. քանզի անդ արև 'ի վերայ անկեալ չքթեցուցանէ զտամկութիւնն՝ իբրև նեխ կայցեալ զերեսօք մարմնոց: Եւ ապա այս տապ մարմնոյն (որպէս թուի՝) գինեճան գործեաց զԱղեքսանդրոս միանգամայն և ցասկոտ:

Անդստին 'ի տղայ տիոցն գայր յերևան զգաստութիւն նորա, թէպէտ և բուռն էր և խրոխտ յամենայնի. բայց 'ի մարմնոյն գրգանս վեհերոտ՝ յորում և մեծապէս չափով պարկեշտանայր: Առ այս՝ 'ի պա-

տուաւորութեան մեծանձնեայ և գեղեցիկ մտածութե՟ք լի՛ էր նա 'ի վեր քան ըզտիս հասակին : Քանզի և սիրէր իսկ ո՛չ նա զամենայն ազգ փառաց՝ որ յինչ և իցէ պատճառաց, ըստ որում Փիլիպպոս՝ որ իմաստակօրէն պանծայր ընդ ճարտասանութիւն : Եւ 'ի դահեկանս ևս դրոշմէր յաղթութիւնս զկառընթացիցն Ողիմպիականին : Իսկ Աղեքսանդրոս հարցեալ յընկերացն առ 'ի փորձ, Մրցեսցի՞ արդեօք յասպարիսին յՈղիմպիականսն (քանզի երագոտն էր), ետ պատասխանի. “ Ընշուշտ՝ եթէ զարքայս հասանէ ինձ ունել ախոյեանս„ : Այլ համբուն թուի թէ՝ երես ինչ չառնէր նա հանդիսից ըմբշացն. քանզի դիմակ դիմակ մրցանաց կարգեալ հանդէսս՝ ո՛չ ողբերգակ միայն քերթողաց և սրնգահարաց և կիթառահարաց, այլ և հագներգուաց, առ այս՝ և ազգ ազգ որսոց կարգեալ զգազանաց, և մականախաղութիւնս, երբէք նա ոչինչ այնպէս խնամոտ հանդիսացաւ ոչ 'ի բռնամարտութ՟իս և ոչ 'ի մրցանսն գունակ գունակ :

Իսկ երբեմն 'ի գալ հասանել դեսպանաց արքային Պարսից՝ յորժամ էր Փիլիպպոս 'ի գաւառսն, յայնժամ Աղեքսանդրոս հիւրընկալեալ մարդասիրապէս յինքն յանկուցանէր զնոսա փարելի սապընջականութեամբն. և զի և ոչ յանոտխական ինչ խնդրոց և 'ի դուզնաքեայ՝ 'ի ներքս արկանէր նոցա. հարցանէր 'ի նոցանէ զերկայնութիւն ճանապարհացն և զուղևորու-

թիւնն 'ի վերնագաւառսն անդր. դարձեալ և վասն նորուն արքայի, զխորդ նահատակեացի նա ընդդէմ թշնամեացն. քանիօն լիցէ զօրութիւնն Պարսից և տէրութիւնն. որպէս զի և զարմանալ արանցն ընդ նա, և առ համեմատութեամբ աշխուժից մանկանն և մեծամեծար ոգւոյն՝ առ ոչինչ զհռչակեալն ունել քաջութիւն զՓիլիպպոսի:

Դարձեալ և հանապազորդ 'ի լուր ինչ աւետեաց՝ եթէ Փիլիպպոսի կամ քաղաք մի հոյակապ առեալ իցէ, կամ յաղթութիւն տարեալ իցէ 'ի մեծի պատերազմի, նա ոչինչ այնպէս խնդացեալ յանձն՝ դառնայր առ հասակակիցսն և ասէր. " Արդ աւադիկ ով մանկունք զամենայնն հասեալ կալցի հայրն իմ. և ինձ ընդ ձեզ չթողուցու 'ի գործ նահատակել 'ի մեծ և հոյակապ,,: Քանզի ոչ զհետ կրթեալ նորա ոչ գրգանաց և ոչ ընչաւէտութեան՝ քան թէ առաքինութեան և փառաց, համարէր եթէ 'ի յաճախել հօրն զյաղթութիւնն՝ այնչափ և պակասեսցին նմա նահատակութիւնք մրցանաց: Ուստի և 'ի յաջողել իրաց արքայութեանն՝ կարծեալ եթէ առհասարակ ապա զամենայնն հօրն յանձն հանեալ իցէ, քան մեծութեանց ինչ մնալ առ 'ի նմանէ և գրգանաց և վայելլից՝ առաւել ևս խնդրէր 'ի նմանէ ժառանգութիւն զտէրութեան՝ ընծայաբեր նահատակութեան, և մարտից պատերազմաց և փառաց և պատուոյ: Այր աղագաւ և չափք

էին անդանօր նմա խնամածուք, դայեակք և դաստիարակք և վարժեալք, որոց առ_ հասարակ ոստիկան 'ի վերայ կայր Լէոնիդ_ դաս այր խստամբեր վարուք՝ ազգական Ոլիմպիայ: Բայց սորա յանձին չկալեալ զանուն դաստիարակի՝ զգեղեցիկ և զփա_ ռաւոր պաշտամանն, անուն նմա կարգային այլ ք վասն աւագութեան առնն և ազգակ_ ցութեանն՝ սնուցիչ և վարիչ Աղեքսան_ դրի. իսկ որ զդաստիարակի տեղի ունէր և զանունն, էր Լիւսիմաքոս Ակառնանացի ազգաւ՝ այր անքաղաքավար. բայց քանզի անուն կարգայր անձին փինիկէ, և Աղեք_ սանդրի՝ Աքիլլէս, և փիլիպպոսի՝ Պեղէոս, սիրելի ընծայեցաւ և զերկրորդն ունէր բարձ փառաց:

Զայնու ժամանակաւ փիլոնիկոս Թես_ սաղացի ածեալ առ փիլիպպոս զերիվարն Ցլուգլուխ՝ վաճառել նմա երեքտասան քանքարաց, իջանէին 'ի դաշտ անդր փոր_ ձել զնա. զի և էր իսկ երիվարն անհամ_ բոյր և սանձակոտոր. Թոյլ չտայր մարդոյ վերելակել, և ձայնին անգամ չժուժայր արանցն փիլիպպոսի, այլ և առհասարակ ահագնիս կանգուն 'ի վեր վազէր: Ցասեաւ փիլիպպոս և հրաման տայր 'ի բաց առնուլ տանել զնա՝ իբրու որ վայրագ ամենևին և ապերասան. իսկ անդ մօտ Աղեքսանդրոս աւաղէր. "Բա՜բէ՝ ասէ՝ զո՞ր երիվար 'ի ձե_ ռաց հանեն դոքա, անփորձք և անարիք 'ի վարել դովաւ,,: Լուեալ փիլիպպոսի՝ զա_ ռաջինն լուռ եկաց. իբրև սակայն այնպէս

քրթմնջէր Աղեքսանդրոս և սրտնէր, ասէ Փիլիպպոս. “Դու աւադիկ թշնամանես զերիցագոյնն քան զքեզ, իբրու որ առաւել քան զդոսա գիտասցես դու, և քաջ ևս վարեսցես երիվարաւդ,,: Ետ պատասխանի Աղեքսանդրոս. “Անշուշտ լաւ ևս քան զայլս վարեցայց ես դովաւ,,: Կրկնեաց Փիլիպպոս. “Ապա եթէ յետնեսցիս, զո՞ր վրէժս լուծցես զյանդգնութեանդ,,: Ասէ Աղեքսանդրոս. “Օ՜ն և օ՜ն Արամազդ՝ ես ինքն հատուցից զգին երիվարիդ,,: Անդանօր ապա 'ի ծաղր հատեալք և գրաւադիրք ընդ միմեանս եղեալք վասն արծաթոյն, անդէն վաղեաց Աղեքսանդրոս յերիվար անդր, և զերասանացն կալեալ յարեդ կոյս դարձուցանէր զնա. Թուի թէ՝ զննեաց դիտեաց ըղխիրտ և զխռով զերիվարին 'ի հանդիպոյ 'ի ստուերաձիգ ծփելոյ մարմնոյն: Ապա տակաւ սանձակալեալ զնա և փայփայանս ածեալ նմա, իբրև այնպէս յաշխոյժ և 'ի փորստիւն եկից զնա, ապա մեղմով 'ի բաց զքղամիդն արկեալ և թափ ընդ օդս 'ի վեր ոստեաւ և աներկևան վերելակէր. և վայրիկ մի ձգեալ անփոփեալ երասանօք ըղսանձն, ոչ 'ի հարուած և ոչ 'ի մտրակ՝ այնպէս ժողովեալ սանձէր զնա: Իբրև համբուն 'ի վայրագութենէն երիվարին հեզացաւ, և եռանդն ևս հարկանէր 'ի նա արշաւել վաղել, թուլացուցեալ զերասանակն՝ թողոյր 'ի գնալ, ձայն նմա արձակեալ խրոխտս և մտրակ 'ի կուշտ: Իսկ

անդանօր Փիլիպպոս և որք ընդ նմա 'ի մեծամեծս անձկութիւն պաշարեալ զառաջինն կային անմռունչ. իբրև Աղեքսանդրոս դարձ առեալ երիվարին դայր շէշտակի անվեհեր և խնդագին, ապա առհասարակ ձայն բարձեալ ծափս հարկանէին նմա ։ Իսկ հայրն՝ որպէս պատմեն՝ վայր մի յարտասուս ցնդեալ առ խնդին, և զճակատ համբուրեալ զորդւոյն յիջանելն յերիվարէն, ասէր. " Քեզ զուգակշիռ խնդրեա՛ դու արքայութիւն՝ ո՛վ որդեակ. քանզի Մակեդոնիա ոչ տանի զքեզ ,, ։

Յետ այսորիկ դէտ ակն կալեալ Փիլիպպոսի բուսոյ բարուց որդւոյն, զի դժուարընդել ընդդէմ դառնայր բռնութեան. իսկ 'ի բանական փաստից հեշտալուր էր 'ի հրահանգս, քան հրամանաւ՝ առաւել ևս անդ բանիւք վարէր ընդ նմա. և ոչ մեծ ինչ վաստակ եղեալ 'ի վարժապետան երաժըշտականին և ներըրջանակաց վարժիցն՝ 'ի խնամս և 'ի քաջիկ դաստիարակութիւն որդւոյն, իբրու որում առաւելագոյնի պէտք իցեն քրտանց, և ըստ Սոփոկլեայ՝ " Բազմաց սանձից պէտք իցեն գործոյն և շատից ղեկաց ,, , առաքեաց կոչեաց զԱրիստոտէլ զգերահռչակեալն և զքաջահմուտն ամենայն իմաստասիրաց. և փոխարինէր նմա վասն իւրոց վարժիցն գերունակ տրիտուր և փառաւոր. քանզի հիմնայատակ զքաղաքն Ստագիրացւոց արարեալ Փիլիպպոսի՝ ուստի Արիստոտէլն էր, միւսանգամ շինէր կանգնէր զքաղաքն, և

անդրէն ընակեցուցանէր 'ի նմա զքաղաքացիսն՝ յայսկոյս յայնկոյս 'ի ծառայութեան կացեալս կամ փախստեայս . և առեալ տայր նոցա 'ի վարժարան և 'ի զբօսարան զվայրն անուանեալ Յաւերժահարսնեան մօտ 'ի Միեզա , ուր և մինչև ցայսօր ժամանակի ցուցանեն զբազմոցս զԱրիստոտէլին 'ի քարէ , և զհովանաւոր զՃեմելիսն շուրջանակի : Եւ թուի թէ ոչ միայն 'ի վարժս բարոյականին և քաղաքականին հրահանգեցաւ 'ի նմանէ Աղեքսանդրոս , այլև զվսեմականն զայն և ըղգաղտնեաց զվարժսն ուսաւ նա , զոր նոքա առանձինն անուանակոչեն Ակրոամատիկէ և Էպոպտիկէ , այն է՝ Լսողականն և Տեսական . և չեն այսոքիկ ծանօթ խուժանին :

Քանզի յետ ժամանակաց անցեալ Աղեքսանդրոս յԱսիա , և լուր առեալ 'ի լոյս ածել Արիստոտէլի մատեանս իմն վարդապետութեան զվարժիցն այնոցիկ , առեալ գրէր առ նա նամակ՝ յորում և համարձակախօս եղեալ առ նա ստգտանէ վասն բանի իմաստասիրութեանն . և է պատճէն նամակին՝ այս . " Աղեքսանդրոս առ Արիստոտէլ՝ խնդալ : Ո՛չ բարւոք արարեր 'ի լոյս ընծայեալ քո զԼսողական զվարժսն զայն : Քանզի իւ իւիք ապա մեք տարբերեալ լիցուք յայլոց անտի , եթէ վարժքդ այդոքիկ՝ յորս մեք դաստիարակեցաք՝ հասարակ ամենեցուն իցեն : Այն զի սիրելի էր ինձ երևելի լինել 'ի գիտութեան վեհագունիցն՝ քան 'ի տէրու-

թեան՝ Ո՛ղջ լե՛ր ,, ։ Իսկ Արիստոտէլ 'ի
մխիթար պատուականութեան նորա, 'ի
չքմեղս լինէր վասն վարժիցն այնոցիկ՝ ա-
սելով, եթէ 'ի լոյս ած զնոսա, և 'ի լոյս
չէած զնոսա։ Նու արդեօք ճառք նորա որ
յետ բնաբանականին՝ ոչ յուսուցանել
ինչ ախտանացուք են և ոչ յուսանել.
քանզի արձանագրեալ կան միայն 'ի պէտս
յիշատակի յառաջագոյն հմտացելոցն ։

Այլ ինձ թուի՝ առաւել քան զամե-
նայն հրահանգել զԱղեքսանդր Արիստո-
տէլի և 'ի վարժս բժշկականին. որոյ ոչ
տեսականն ևեթ սիրելի էր նմա, այլ և
արդեամբք 'ի թիկունս հասանէր նա բա-
րեկամացն 'ի հիւանդութեանն, և դար-
մանս դեղոց և սահմանս կերակրոց կար-
գէր նոցա, ըստ որում է իմաստասիրել
'ի թղթոց անտի նորա ։

Էր նա անդստին 'ի բնութենէն բանա-
սէր և ուսումնասէր և ընթերցասէր։ Ընտում
կարդայր Եղիականին Հոմերեայ, Զ[illegible]
[illegible], և այնպէս
անշուշտ հաւատայր. և առեալ զհաւա-
սարն նորա՝ ուղղագրեալ 'ի նմին իսկ Ա-
րիստոտէլէ, զոր կոչէին Նարթեկեան [1],
ունէր զնա միշտ 'ի ներքոյ բարձիցն՝ 'ի միա-
սին ընդ դաշնակին, որպէս պատմէ Ոնե-
սիկրատէս։ Իսկ յորժամ էր նա 'ի վերնա-
դաւառսն, 'ի կարօտել մատենից՝ պատ-
ուէր յղէր Արպաղեայ առաքել նմա գիրս.
և նա առեալ յղէր առ նա մատեանս զՓի-
լիստեայ և շատ ինչ յՈղբերգութեանցն

Եւրիպիդեայ և Սոփոկղեայ և Եսքիւղեայ, և զԳինեբրգութիւնն զՏեղեստեայ և զՓիլոքսենեայ :

Բայց Աղէքսանդրոս թէպէտ և զառաջինն յոյժ սքանչացեալ էր ընդ Արիստոտէլ, և սիրէր (որպէս և ինքնին ասէր) ոչինչ պակաս քան զհայր իւր, 'ի տալ սորա զկեալն, և նորա զբարւոք կեալն. այլ յետ այնորիկ ապա ընդ ակամբ իմն հայէր ընդ նա, սակայն և չար ինչ չգործեաց նմա. և մարդասիրութիւն նորա առ նա ոչինչ եռանդուն և սրտակաթ իբրու զառաջինն՝ հաւաստիք էին ուծանալոյն նորա: Համայն և այնպէս՝ եռանդ ըղձին անկակից անդստին յառաջին տիոցն առ իմաստասիրութիւն անդր՝ երբէք ոչ շիջաւ 'ի հոգին նորա, զոր մեզ հաւաստարմացուցանեն շուք պատույն նորա առ Անաքսարքոս և յիսուն քանքարն առաքեալ առ Քսենոկրատէս, և քաջիկ փոյթ խնամոց նորա առ Դանդամիս և առ Կաղանոս :

Բայց 'ի ժամանակի մարտին Փիլիպպոսի ընդ Բիւզանդացւոց՝ էր Աղէքսանդրոս ամաց վեշտասանից, և թողեալ ինքն 'ի Մակեդոնիա տէր և իշխան ամենայնին և արքունի կնքոյն, վանեաց եհար զՄեդարացիս զվտարանջեալսն. և հասեալ կալեալ զքաղաքն նոցա՝ հալածէր զխուժադուժսն և բնակեցուցեալ 'ի նմա մարդիկ ազգաց ազգաց, անուն կարդայր նմա Աղէքսանդրուպօլիս: Ապա նիզակակից գտաւ նա և 'ի մարտին Քերոնէնիոյ ընդդէմ Հելլենա-

ցւոց . և ասեն՝ առաջին նմա նհանջել վանել զնուվրական դունդն զԹեբայեցւոց . և մինչև ցայսօր ժամանակի ցուցանեն մեզ մօտ 'ի Կեփիսոս՝ կաղնի վաղնջուց , անուանեալ՝ Աղեքսանդրի . ուր մօտ խորան հարեալ էր նա յայնժամ, և անդուստ ոչ ինչ հեռի կայ Գերեզմանք Մակեդոնացւոց : Որ աղագաւ և Փիլիպպոս ընդ արժանին մեծապէս սիրէր զորդի իւր զայս . որ զի՝ և սիրելի էր նմա 'ի կոչել անդ Մակեդոնացւոց զԱղեքսանդրոս՝ Արքայ , և զՓիլիպպոս՝ Զօրավար : Բայց այս ընտանի աղմուկք 'ի պատճառս հարսանեացն և ամուսնացն Փիլիպպոսի , խօԹակից ընդ կանանցին եղեալ և արքայութեանն դըէխովին , գժտութիւն շատ և կագս մեծամեծս յուզեցին ընդ նոսա . և զայրացուցին 'ի դառնութենէն Ողիւմպեայ՝ նախանձորդ և դեդ կնոջն , որ գրգռէր զԱղեքսանդրոս : Իսկ Ատտաղոս 'ի յայտնի վէգ դրդեաց զնոսա 'ի հարսանիսն Կղէոպատրայ , որում ցանկացեալ աղջկանն Փիլիպպոս 'ի տարաժամ հասակի՝ հարսնացոյց զկոյսն : Քանզի Ատտաղոս քեռի օրիորդին 'ի կոչունսն գինեհարեալ՝ խրատ տայր Մակեդոնացւոց աղաչել զդիսն , զի 'ի Փիլիպպոսէ և 'ի Կղէոպատրեայ ծնցի օրինաւոր պայազատ արքայութեանն : Որ վասն սրտմտեալ Աղեքսանդրոս ասէր . " Աղջկորդի ուրեմն Թուիմք մեզ քեզ , այր չարագլուխ ,, . ասաց և բաժակ մի առեալ ձգեաց ընդդէմ առնն : Յայնժամ Փիլիպ_

պտոյ 'ի վեր վաղեալ և զվաղակաւորն մեր-
կացեալ դիմեաց 'ի վերայ նորա . այլ ըստ
գեղեցիկ բախտին երկոցուն նոցա՝ դե-
դեւեալ 'ի ցասմանէն և 'ի գինւոյն՝ գթեալ
անկանէր Փիլիպպոս ։ Իսկ Աղեքսանդրոս
ոտնհար եղեալ նմա և հեգնեալ՝ ասէր .
“Սա այս է ով արք, որ յԵւրոպայ պատրաս-
տէր անցանել յԱսիա , այն՝ որ յանցանել
այժմիկ 'ի բազմոցէ 'ի բազմոց, տապալեցաւ
ընդ գետին „ ։ Բայց յետ թշնամանալից
գինեբբուացն , առեալ Աղէքսանդրի զՈ-
լիւմպիա՝ ածէր յԵպիռոս , և չոքաւ ինքն
բնակեցաւ առ Իլիւրիկեցիս ։

Զայսու ժամանակաւ Դեմարատոս
կորնթացի հիւր մտերիմ զարմին Փիլիպ-
պեայ՝ որ ազատագոյնս եւս խօսէր ընդ Փի-
լիպպոսի՝ չոքաւ տեսանել զնա. իբրև մար-
դասիրապէս ժողովեալ զնա՝ հարցանէր
Փիլիպպոս , զիա՞րդ միաբանութեամբ կայ-
ցեն ընդ միմեանս Հելլենացիք , ետ պա-
տասխանի . “Եւ կարի իսկ քաջ ով Փի-
լիպպէ արժան իցէ քեզ հոգալ վասն Ել-
լադայ , քեզ՝ որ զտունն քո լցեր այնչափ
կագիւք և վայիւք „ ։ 'Ի զգաստութիւն
կրթեալ Փիլիպպոսի , առաքեաց դարձոյց
զԱղեքսանդրոս՝ ամոքեալ զնա 'ի ձեռն
Դեմարատեայ ։

Բայց յետ այսորիկ իբրև Պեքսոդորոս
նախարար Կարիոյ նիզակակցութիւն խըն-
դրեալ ընդ Փիլիպպեայ 'ի ձեռն ազգակ-
ցութեան , կամէր զերէց դուստրն տալ 'ի
կին Արրիդեոսի որդւոյ Փիլիպպոսի , և ա-

առաքեաց ևս զԱրիստոկրիտոս 'ի Մակեդոնիա վասն բանի հարսանեացն, անդրէն միաբանգամ յուղեցան զրոյցք և բամբասանք առ Աղեքսանդրի 'ի բարեկամացն և 'ի մօրէն. իբրու որ 'ի պայծառ հարսանեաց անտի և 'ի մեծաշուք հանդերձանացն պատրաստել Փիլիպպոսի զարքայութի̅ն վասն Արրիդէոսի: Ոյր աղագաւ մեծապէս խռովեալ Աղեքսանդրոս՝ առեալ առաքէր ըզԹեսսաղոս զդերասան ողբերգակ 'ի Կարիա խօսել ընդ Պեքսոդովրոսի և ասել, 'ի դէպ արդեօք իցէ նմա թողուլ զԱրրիդէոս աղջկորդի և խօթամիտ, և ազգակցութե̅ հաստել մանաւանդ ընդ Աղեքսանդրի: Լուեալ Պեքսոդովրոս, քան ընդ առաջինն՝ առաւել ևս հաճեցաւ ընդ վերջինն խորհուրդն: Իսկ իբրև իրազեկ այնմ լինէր Փիլիպպոս, առեալ ընդ իւր զՓիղովդաս 'ի մտերիմ բարեկամացն զորդին Պարմենիոնի, եմուտ 'ի սենեակ անդր Աղեքսանդրի. անդանօր կշտամբանս 'ի վերայ կապէր սաստիկս, և Թշնամանս արձակէր 'ի նա դառինս, վատ որանց կարդայր զնա և անարժան առաջակայ բարեացն, իբրու որ շատ իսկ համարի անձին փեսայանալ լինել Կարիացւոյ՝ ծառայի բարբարոս արքային: Ապա գրէր առ Կորնթացիս առաքել առ ինքն զԹեսսաղոս 'ի կոճեղս. և 'ի բարեկամաց ևս Աղեքսանդրի՝ վտարանդի հանէր 'ի Մակեդոնիոյ զԱրպաղոս և զՆէարքոս և զՓրիւգիոս և զՊտղոմէոս. զորս և ապա Աղեքսանդրոս դարձուցեալ

յաքսորանաց անտի՝ մեծապէս շքով պա-
տուասիրեաց:

Իսկ յետ այնորիկ յորժամ Պաւսանիաս բռնաբարութիւն կրեաց 'ի խորհրդոյ անտի Ատտաղոսի և Կղէոպատրայ, և իրաւանց չհանդիպեալ՝ սպան զՓիլիպպոս, բազումս 'ի մխասուն բամբասեցաւ Ողիւմպիա՝ իբրու 'ի նմանէն դրդեալ պատանւոյն, որ ինքնին վառեալ իսկ էր 'ի սրտմտութեանն. առ այս և Աղեքսանդրոս ինչ մի բամբասեցաւ: Քանզի ասեն՝ եթէ 'ի պատահել նմա Պաւսանիասայ յետ Թշնամանացն և 'ի գանգատելն, ասաց Աղեքսանդրոս զմեծավերջին զայն զՄեդեայ. “ Եւ զհարսնածուն և զփեսայն և զհարսն „ 2: Սակայն և խոյզ խնդիր արարեալ Աղեքսանդրոս որբանեկաց մատնութեանն, պատուհաս 'ի վերայ կապէր. և շատ ևս ցասեաւ ընդ Ողիւմպիա, զի 'ի նորա բացակայութեանն անագորոյն բարս ցուցեալ էր Ողիւմպիա առ Կղէոպատրա:

Ապա յինքն զարքայութիւն առնոյր Աղեքսանդրոս ամաց քսանից, պաշարեալ շուրջանակի 'ի կիրս սաստիկ մախանաց և յոխերիմ ատելութեանց և 'ի սպառնալեաց վտանգաց: Քանզի անդ յայնժամ ոչ խուժադուժ ազինք դրացիք Մակեդոնիոյ հանդարտէին ինչ ընդ լուծ ծառայութեանն՝ անձկացեալ իւրեանց հայրենի արքայութեանն, և ոչ դարձեալ Փիլիպպոս պարապ եգիտ սանձել ընդ լծով և ամոքել զԵլլադայ՝ զոր զինուն նուաճեաց.

այլ լքեալ էր այնպէս՝ փոփոխութիւնս միայն և չփոթս գործելով յերան, որ և յանսովոր կրից անտի 'ի յոյզս ծփային սաստիկս: Ուստի և Մակեդոնացիք զանգիտեալ յայնժամ և խիթացեալ՝ թողուլ լքանել Աղեքսանդրի իսպառ զԵլլադա և բուռն չառնել նմա, և 'ի հնազանդութիւն զբարբարոսսն չնուաճել զապստամբսն՝ հեզ և ամոք դարմանս 'ի վերայ ածեալ սկզբանց խռովութեանն, նա ընդ հակառակս խորհուրդ կալեալ յանդորր զիւր իրսն հանել քաջութեամբ արութեամբ. զմտաւ ածէր՝ զի 'ի թողանալ անդ 'ի տիրական և յարխական հանդիսիցն՝ առհասարակ ապա 'ի վերայ անկեալ առաթուր հարցեն զնա: Իսկ յետ այնորիկ արագ արագ հասեալ նուաճէր զխռովս և զամբոխս բարբարոսացն և զմարտս պատերազմաց, դիմեալ զօրու մինչև յԻստրոս. ուր և հարկանէր վանէր 'ի մեծի պատերազմի և զՍիւրմոս զարքայն Տրիբաղացւոց:

Բայց ապա լուր առեալ զվտարանջութեան Թեբայեցւոց՝ դաշնաւորացն Աթենացւոց, կամելով՝ այր զանձն 'ի դէմս բերել, անդէն առեալ զբանակն չու առնէր ընդ Պիւղէ և ասէր. եթէ մինչդեռ առ Լիւրիկեցիս էր և առ Տրիբաղացիս, մանուկ զնա կարդայր Դիմոսթենէս, և մինչդեռ 'ի Թեսաղիա էր՝ պատանի. իսկ այժմ առ պարսպօքն Աթենայ՝ խնդրէ այր զանձն երևեցուցանել:

Մօտ հասեալ 'ի Թեբէ, և պարապոյ

ժամ տուեալ Թեբայեցւոց պապշաւել ընդ եղեալսն, խնդրէր 'ի նոցանէն տալ նմա 'ի ձեռս զՓիւնիկէ և զՊրոտիտէս. և քարոզ տայր կարդալ մունետկին՝ յանդորր հանել զորս միանգամ անցցեն առնա: Այլ անդուստ խնդրեալ և Թեբայեցւոց 'ի նմանէ զՓիլոտոսս և զԱնտիպատրոս, և քարոզ ևս կարդացեալ խմբել ընդ նոսա ամենայն նիզակակցաց յազատութիւն անդր Եղլադայ, համայս Աղեքսանդրոս 'ի կռիւ մարտի հորդան տայր Մակեդոնացւոց: Յայնժամ մարտ եդեալ կռուեցան Թեբայեցիք քաջապէս արութեամբ անդրադոյն ևս քան զզօրութիւն իւրեանց, այր այր 'ի նոցանէն ախոյեան արձանացեալ ընդդէմ բազմաց նահատակաց: Իսկ իբրև անդուստ և դունդ Մակեդոնացւոց որ պահ ունէին Կադմեայ՝ Թողեալ զդղեակն՝ 'ի Թիկանց կուսէն անկան 'ի վերայ Թեբայեցւոց, բազումք յայնժամ 'ի նոցանէն 'ի ներքս փակեալք՝ տապատ անկանէին 'ի կռուին. հասեալ կալան և զքաղաքն և աւար հարեալ հիմնայատակ առնէին: 'Ի զնին ամբաւ հարուածոյն ակն ունէր Աղեքսանդրոս, եթէ զահի զդողանի հարեալ Հելլենացւոցն՝ ոչ ևս ժտեսցին խլրտիլ. մանաւանդ զի և արդար և իրաւ երևեցուցանէր զհարուածն, իբրու որ 'ի բողոքելոյ անտի նիզակակցացն 'ի գործ յայն կրթեալ իցէ. իբրև ամբաստանութիւն շատ շարժեցին Փովկէացիք և Պղատացիք ընդդէմ Թեբայեցւոց:

Յետ այսորիկ Աղեքսանդրոս յաղաւութեան թողեալ զքահանայսն և ազատաբար զհիւրսն Մակեդոնացւոց և զճնեան զՊինդարոսին, և որք 'ի խորհուրդ ապստամբութեանն ընդդէմ դարձան, 'ի վաճառ հանէր զայլսն ոգիս իբրև երիս բիւրս ։ իսկ տապաստ արկեալքն եղեն աւելի քան ըզվեց հազար ։ Բայց 'ի ժամու անդ ամբաւ աղէտից քաղաքին, ոմանք 'ի Թրակացւոց անօրի խուժեալ 'ի տուն Տիմոկղեայ ականաւոր և պարկեշտ կնոջն, առին յափշտակեցին զգոյսն ։ իսկ նոցուն զօրապետ բըռնաբարեալ և զկինն գլխովին, ապա հարցանէր՝ եթէ ոսկի և արծաթ ուրեք արգեօք 'ի պահ թաքուցեա՞լ իցէ ։ Նա ասացեալ եթէ՝ Այո՛, ածեալ զնա միայնակ 'ի պարտէզ մի և ջրհոր ցուցեալ նմա՝ ասէր, յառնուլ քաղաքին՝ անդր 'ի վայր արկեալ նորա զպատուականսն 'ի գոյից ։ իբրև զօրապետն թեքեալ 'ի խոր կոյս խոնարհեցաւ զննել զվայրն, կինն յետուստ կողմանէն մղօն տուեալ ամայր զնա 'ի գուբ անդր, և քարինս բազում 'ի վերուստ հոսեալ 'ի նա, այնպէս քարակոչկոճ առնէր զայրն ։ Իսկ իբրև կապանօք զկինն ածեալ տանէին Թրակացիք առաջի Աղեքսանդրի, նա 'ի դիմաց կերպարանացն և 'ի քայլից ոտիցն կին տոհմիկ և արիական զանձն 'ի դէմս բերեալ՝ այնպէս աներկիւղ զհետ գնայր կալանաւորացն ։ Հարցեալ յԱղեքսանդրէ՝ ո՞ ոք իցէ, ետ պատասխանի՝ Քոյր եմ Թէագենեայ, այն՝ որ մարտ եդեալ

կռուեցաւ ընդ Փիլիպպոսի 'ի վերայ ազա-
տութեանն Հելլենացւոց և տապաստ ան-
կաւ 'ի Քերոնիկիա՝ ուր զօրավարէր ինքն
բանակին ։ Զարմացաւ Աղեքսանդրոս ընդ
պատասխանին, և ընդ գործ նահատակու-
թեանն, և հրաման տայր ազատ թողուլ
զնա հանդերձ որդւովք իւրովք ։

Յետ այսորիկ և ընդ Աթենացւոցն 'ի
հաշտութիւն գայր Աղեքսանդրոս, թէպէտ
և նոքա դժգմնեալ էին ընդ աղէտս Թե-
բայեցւոցն ։ Որպէս զի և հանդերձեալ նո-
ցա 'ի կատարել զհանդէս տօնի խորհրդոցն,
թողուին առ ժամն 'ի պատճառս սգոյն,
և մեծապէս մարդասիրութեամբ առեալ
ժողովեցին զԹեբայեցիսն՝ որ միանգամ
անկեալ ապաւինեցան 'ի քաղաք անդր նո-
ցա ։ Բայց նա կամ զի զսրտմտութիւն բար-
կութեանն հարեալ իսկ էր՝ որպէս առիւ-
ծունք դոռք, կամ զի զանագորոյն զայն
և զաշխարհելի զգործն փոխարինեալ մեծաւ
հեզութեամբ, ոչ միայն զամենայնն իսկ
զմնասն թողոյր նոցա, այլ և քաջալէր իւ-
րախոյս կարդայր քաղաքին նոցա՝ գօտէ-
պինդ դարձադարձ ջանալ, իբրու որ յա-
տեացս յելանել նորա՝ այնր քաղաքի հա-
սանիցէ իշխել Ելլադայ ։ Եւ ասեն՝ բա-
զում անգամ ապա զեղջ և ապաշաւ լի-
նել Աղեքսանդրի ընդ աղէտսն՝ զոր անցոյց
ընդ Թեբայեցիս, ուստի և յետ այնորիկ
մեծ ևս մարդասիրեաց նա առ բազումս ։
Եւ 'ի բուն՝ նա և զկիրսն զայն զոր յարբե-
ցութեանն անցոյց ինքն ընդ Կղիտոս, առ

այս՝ և զանարի վատութիւն զՄակեդոնացւոցն 'ի Հնդիկս 'ի թողուլ նոցա այնպէս անվճար զարշաւանսն և զփառս նորա, զայս ամենայն նա 'ի վեր հանէր 'ի սրտմտութիւն անդր Դիոնիսեայ և 'ի վրէժն : Եւ ապա 'ի Թեբայեցւոց անտի մնացելոյն չէր ոք որ վասն ինչ խնդրոյ մատուցեալ առ Աղեքսանդրոս՝ չառնոյր զխնդրելին : Որ ինչ վասն Թեբայ, այսպիսի ինչ է :

Զկնի ժամանակաց այսոցիկ 'ի մի վայր խմբեալ Հելլենացւոց յԻսթմոս 'ի կիրճն, և անդ աշխարհօրէն վճիռ տուեալ զէն առնուլ խաղալ ընդ Աղեքսանդրի ընդդէմ Պարսից, կարգեցաւ նա 'ի զօրավար : Ոյր ազդաւ բազում արք աւագք քաղաքականք, և շատք ևս յիմաստասիրաց խնդակիցք ընդ առաջ եկեալ նմա, ակն կալեալ մնայր Աղեքսանդրոս և Դիոգինեայ Սինովպացւոյ՝ որ դեգերէր մօտ 'ի Կորնթոս : Բայց զի փոյթ ոչինչ կալեալ նա զԱղեքսանդրէն՝ կայր հանդարտիկ 'ի վայրն՝ զոր Կրանիոն կարդային, ինքնին արքայն յուղի անկաւ յայցելութիւն նորա : Անդ յայնժամ էր 'ի կողմն եղեալ Դիոգինէս յարեգակնի վայրան. տեսեալ զիւրև զբազմութիւն որերոյն, 'ի վեր եկեալ վայր մի՝ 'ի նիստ լինէր, և զակն իւր յառեալ կառուցեալ էր առ Աղեքսանդրոս : Իբրև Աղեքսանդր մարդասիրապէս ողջոյն տուեալ նմա հարցանէր՝ թէ խնդիր պէտք իցեն նմա, ասէ Դիոգինէս. “ Վայրիկ մի յարևէդ 'ի կողմն կացցես դու „ : Եւ պատ-

մեն՝ այնչափ իմն յապուշ ընդ պատասխանին կրթել Աղեքսանդրի՝ հիացեալ ընդ մեծամտութիւն առնն և ընդ պերճութիւնն՝ յորմէ նկուն զանձն տեսանէր, որպէս զի և 'ի դարձին լուեալ յիւրոց անտի արանցն ծիծաղել և հեգնել զԴիոգինէս, ասէր. "Եւ սակայն՝ թէ չէր իմ Աղեքսանդրոս լեալ, անշուշտ Դիոգինէս լինէի,,:

Ապա իբրև պատգամ խնդրէր Աղեքսանդրոս հարցանել վասն արշաւանին այնորիկ, չոգաւ 'ի Դեղփոս. և անդ դիպեք եղեն յայնժամ անպատգամ աւուրց, յորս օրէն չէր սահման 'ի դուրս տալ. առաքեաց նա առաջին փարելի լինել աղաչել զքրմանոյշն. իբրև նա զօրէնսն առաջի արկեալ հրաժարեցաւ, ինքնին Աղեքսանդրոս ելեալ առ նա՝ 'ի մեհեան անդր ուժգին ձգէր զնա. նա ապա բռնութեան կրեալ 'ի նմանէ՝ ասէր զայս ինչ. "Անպարտելի աւադիկ ես դու ո՛վ որդեակ,,: Իբրև զայն լուաւ Աղեքսանդրոս, ասէր՝ ո՛չ ևս այլում գուշակութեան պէտք ինչ են նմա. իբրև զոր խնդրէրն՝ էառ 'ի նմանէն զպատգամն:

Բայց ապա 'ի խաղալ իւրում յարշաւանին, թո՛ղ զայլ 'ի հրէշից ցուցեալ նմա 'ի դից անտի, նա և դրօշեալն Որփէոսի մօտ 'ի Լիբէթրա (և էր այն 'ի Կիւպարիս փայտէ՝) քիրտն շատ հոսէր յաւուրսն յայնոսիկ: Առհասարակ յայնժամ զահի հարեալ 'ի հրէշից անտի, անդուստ Արիստանդրոս խրախոյս 'ի ներքս տայր, իբրու

հանդերձեալ Աղեքսանդրի նահատակութիւնս նահատակել յաւերժայիշատակս և անուանիս, որպէս զի և քիրտն շատ և աշխատութիւն հասուցեն քերթողացն և երաժշտաց 'ի նուագել զնա: Բայց զբազմութիւն զօրաց նորա՝ կէսք առ նուազն ասեն երից բիւրուց հետևակաց և հինգ հազար այրուձիոյ. և կէսք առ առաւելն՝ երից բիւրուց և չորից հազարաց հետևակաց, և չորս հազար այրուձիոյ: Իսկ արծաթ 'ի թոշակ ճանապարհին՝ Արիստոբուղոս պատմէ՝ ոչինչ աւելի ունել նմա քան զվաթսուն քանքար. և Դուրիս ասէ՝ ունել նմա պաշար վասն աւուրց երեսնից միայն: Բայց Ոնեսիկրիտոս վկայէ՝ առնուլ նմա 'ի փոխ և այլ ևս քանքարս երկերիւր:

Այլ թէպէտ և յայնչափ դուզնաքեայ հանդերձանս պատրաստեալ 'ի չու, ոչ ամբարձաւ 'ի նաւ՝ մինչև զիրս յարդարեալ զբարեկամացն. բաշխէր տայր՝ միում ագարակ, և միւսումն՝ աւան. և միւսումն դարձեալ զհասս գեղջ ուրեք կամ զնաւահանգստի: Օրինակ զայս բաշխեալ և ծախեալ գոգցես զարքունի զգոյսն, ասէր Պերդիկկաս. “Իսկ քեզ ապա ո՞վ արքայ, զի՞նչ պահես„. պատասխանի տուեալ, եթէ՝ “Զյոյս ակնկալութեանն„. կրկնեաց Պերդիկկաս. “Այլ և մեք ինքնին ուրեմն հասարակորդք այնմ լիցուք՝ որ զինուորիմքս ընդ քեզ„: Ապա Պերդիկկաս հրաժարեալ 'ի բաժնէն իւրմէ, զնոյն և բա-

զումք 'ի բարեկամացն առնէին: Բայց Աղեքսանդրոս տայր մտադիւրագոյնս և խնդրելեացն 'ի նմանէ. և ապա 'ի բաշխոյն բազում ինչ սպառեաց նա 'ի դոյից իւրոց 'ի Մակեդոնիա:

Եւ այնպէս ապա զուարթամիտ խորհրդով հասանէր անցանէր ընդ Հելլեսպոնտոս, և ամբարձեալ յԻլիոն՝ զոհ զոհէր Աթենասայ, և ձօնս նուիրէր դիւցազանց: Եւ ապա իւղեալ զարձանն զԱքիլլեայ՝ շուրջ գայր զնովաւ 'ի մերկուց (ըստ սովորութեան կարգին) 'ի միասին ընդ բարեկամացն, և պսակէր բոլորէր զնա. երջանիկ կարդայր զնա՝ առ կենդանութեամբն վիճակեալ հաւատարիմ բարեկամի, և 'ի մահուն՝ մեծի Քարոզի: Եւ 'ի շրջել անդ 'ի զնին քաղաքին՝ հարցեալ յումեմնէ՝ կամէ՞ր արդեօք զքնարն տեսանել զՊարիսին, ետ պատասխանի՝ փոյթ չառնել ինչ զքնարին զայնորիկ. այլ ինքն զԱքիլլէսինն խնդրէ՝ որով նա նուագ զփառաց հարկանէր և նահատակութեանց զքաջաց արանց և զառաքինեաց:

Բայց յայնժամ զօրավարք Դարեհի զօրաժողով սաստիկ եղեալ, և կարգեցան կազմեցան առ Գրանիկոն գետովն, ընդ որ էր Աղեքսանդրի անցանել և կռուել իբրու առ դուրսն Ասիոյ, և բանալ զմուտսն: Իբրև անդանօր բազումք 'ի Մակեդոնացւոցն զանգիտեցին 'ի խորութենէ գետոյն և յափափայից և 'ի դժուարից յայնկոյս ափանցն՝ զոր 'ի կռիւ մարտի էր հասանել

ունել, և կէսք ևս պատկառ կային օրի_
նացն վասն ամսոյն այնորիկ (զի և սովո_
րութիւն չէր արքայից Մակեդոնացւոց զօր
խաղացուցանել յամսեանն Դեսիոսի),
հնարս հնարէր Աղեքսանդրոս, հրաման
տայր զամիսն զայն կոչել Արտեմիսիոս եր_
կրորդ 3 : Իսկ առ Պարմենիոնիւ, որ յանձա_
դան ժամուն՝ ասէր՝ մի դիմադրաւել 'ի
վտանգն, ասէ Աղեքսանդր՝ ամօթ կրել 'ի
Հելլեսպոնտոսէն, եթէ զնա անցեալ՝ զան_
դիտեսցէ այժմիկ 'ի Գրանիկոնէ : Ասաց և
դիմեաց 'ի դետ անդր երեքտասան գնդաւ
հեծելազօրուն՝ ձի 'ի վեր առեալ ընդդէմ
տարափոյ նետից թշնամեացն խաղայր յայն_
կոյս յառապարս վայրացն լցեալս զեղեալս
զինուք և երիվարօք, այնպէս տարուբե_
րեալ ձգեալ 'ի հոսանացն և ողողեալ,
թուէր լինի՝ քան խոհականութեամբ բա_
նին՝ մանաւանդ մոլեգնիս և անհանճարս
զօրավարել: Սակայն և անցանէր՝ ճիգն
սաստկապէս թափեալ և քիրտն, և հազիւ
ուրեմն հասեալ ունէր զվայրսն սկախառն
և լպրծուտ, և անդէն շտապէր այնպէս
խառն 'ի խուռն մարտ դնել կռուել. և
մինչև դասաւորեալ կարգեալ զզօրն որ
անցանէր, անդ այր այր 'ի վէգ ընդ ա_
խոյեանին դայր : Քանզի և աղաղակ մե_
ծագոչ բարձեալ յայնժամ բարբարոսացն
խուռն անկանէին 'ի վերայ Մակեդոնա_
ցւոցն, և երիվար առ երիվար 'ի դիմի հա_
րեալ՝ տէգընկէցք լինէին. ապա և 'ի տի_
դացն բեկանել՝ սուսերամարտք խաղային :

Անդանօր բաղումք ոմանք չահատակեալք ընդդէմ Աղէքսանդրի, (քանզի և երևելի կայր նա 'ի մէջ խուռնն 'ի վահանէն և 'ի վերջից սաղաւարտին, աստի անտի ամբարձեալ թև մի սքանչելի լուսաձաձանչ և մեծ), տիգահար լինէր Աղէքսանդրոս ընդ կարան զրահիցն, այլ ոչ վիրաւորեցաւ: Ապա միանգամայն 'ի վերայ անկեալ նորա կրկին զօրավարք Հռոսակոս և Սպիթրիդատէս, նա խոյս տուեալ 'ի վերջնոյն և աճապարեալ հարեալ գեղարդեամբ զպատեան զրահիցն Հռոսակայ և բեկեալ տիգին, 'ի գործ զվաղակաւորն առեալ խոյանայր 'ի նա. և անդ նոցա 'ի կռիւ խառնեալ, անդուստ 'ի կողմանէն Սպիթրիդատէս մտրակեալ զերիվարն՝ արագ արագ զխուժդուժ զասկրն առեալ իջուցեալ 'ի կառափն Աղէքսանդրի՝ հարկանէր ջաղխէր զվերջան սաղաւարտին և զմի 'ի թևոցն. հազիւ անդ գլխանոցին բերեալ զհարուածն՝ չեղբ սակերն հասեալ ունէր զգէս առաջին վարսիցն: Եւ այն ինչ Սպիթրիդատէս ամբարձեալ ըզձեռն իջուցանել անդրէն վաղակաւոր, անդուստ աճապարեալ կանուխ մեծն Կղիտոս, ընդ մէջան թամփ զտէգ գեղարդանն անցուցանէր վիրադին. անդանօր միանգամայն դիտապաստ անկանէր և Հռոսակոս՝ սուսերահար եղեալ յԱղէքսանդրէ:

Մինչդեռ այնպէս զօրն նահատակէր 'ի հեծելամարտ դուռին, փաղանգ Մակեդո֊

նացւոցն անցեալ ընդ գետն խառնեցան 'ի կռիւն. ապա ոչինչ յերկարագոյնս հան-դուրժեալ բարբարոսացն Թիկունս տու-եալ փախչէին, բայց 'ի Յունաց անտի վարձկանացն Պարսից. որոց 'ի բլրակ մի խումբս առեալ՝ ձեռն օգնականութեան խնդրէին յԱղէքսանդրէ ։ Այլ նա յայն-ժամ քան 'ի բանէն՝ մանաւանդ ևս 'ի Թա-փոյ բարկութեանն բերեալ՝ յարձակէր ա-ռաջին նահատակեալ 'ի խառն նոցա. ուր և զերիվարն կորուսանէր սուսերահար խո-ցեալ ընդ կողն, (իսկ էր այն երիվար այլ, և ոչ Ցլագլուխն)․ և անդանօր ապա բազումք յիւրոց անտի անկանէին դիտապաստ և վիրաւորք՝ 'ի կռիւ ելեալք ընդ յուսահատ և ընդ քաջամարտիկ մարդկանն ։

Եւ ասեն՝ տապաստ յայնժամ անկա-նել 'ի բարբարոսաց երկուց բիւրուց հե-տևակաց և երկու հազար և հինգհարիւր այրուձիոյ. իսկ 'ի զօրաց Աղէքսանդրի՝ որ-պէս Արիստոբուղոս ասէ՝ առհասարակ երեսուն և չորից, և 'ի նոցանէ ինունքն էին հետևակք ։ Հրաման տայր Աղէքսան-դրոս վասն նոցա պատկերս կանգնել պղն-ձիս՝ գործ Ճարտարին Լիւսիպպոսի ։ Ապա հասարակորդ յաղթութեանն արարեալ և զՀելլենացիս, առեալ առաքէր մասնաւոր Աթենացւոցն վահանս երեքհարիւր՝ ըն-տիր ընտիր յանկածէ Թշնամեացն, և հա-սարակ ապա 'ի վերայ այլոցն աւարացն դրոշմէր վերտառութիւն հոյակապ, Աղէք-սանդրոս Փիլիպպոսի և Հելլենացիք, Բաց

Ղակեդեմոնացին, առ 'ի բարբարոսացն բնակաւորաց Ասիոյ։ Իսկ զսկահս և զծիրանիս, և որ ինչ յայսպիսեաց գտեալ 'ի կահս կարասւոյն Պարսից, բաց 'ի սակաւուց ումանց, առեալ յղէր առ մայր իւր։ Եւ ապա 'ի մարտէ աստի յայսմանէ մեծապէս շրջեցան իրք 'ի կողմն Աղեքսանդրի. մինչև և Սարդի գըլխովին՝ մահարձան պատնէշ 'ի ծովու տէրութեանն բարբարոսաց՝ անձնատուր նմա լինէր։ Զնոյն արարին և այլք 'ի քաղաքաց։ Ընդդէմ միայն դարձան Ալիկարնասսոս և Մեղետոս. և բռնի առեալ և զնա, և ողջոյն և զգաւառն նուաճեալ, յանձն իւր ապա տարաբերէր Աղեքսանդրոս յաղագս հանդերձելոցն իրաց։ Էր 'ի բազում անգամ՝ զի փութայր ձեպէր անդէն և անդ ճակատամարտիլ ընդդէմ Դարեհի սահմանել զգործն. և բազում եւ՝ լաւ համարէր դիմել տիրանալ ծովափնեայ վայրացն և անդանօր մթերից հարստութեանցն, և այնպէս ապա կիրթս և բարգաւաճս խաղալ ընդդէմ Դարեհի.

Իսկ է անդ 'ի Լիւկիա աղբիւր մօտ 'ի քաղաքն Քսանթիոսի. և ասեն՝ զայն աղբիւր ինքնին յայնժամ պղտորեալ և զեղեալ, 'ի դուրս տալ 'ի խորոց անտի թիթեղն պղնձի դրոշմաւոր 'ի գիրս հին վաղընջուց, արձանագրեալ 'ի նմա յաղագս կատարածի տէրութեանն Պարսից՝ առ 'ի Հելլենացւոց տապալեալ։ Յորմէ 'ի խրախոյս քաջալերութեան բերեալ Աղեքսանդրի՝ փութայր ձեպէր ողջոյն զգաւառն

զտու ափամբ ծովուն Նկուն առնել մինչև
'ի Փիւնիկէ և 'ի Կիլիկիա: Բայց անցքն՝
զոր անց Աղեքսանդրոս ընդ Պամփիլիա՝
քաջ իսկ նիւթ բազմաց եկաց պատմագրա-
նից ամեցուցանել զբանն և յապուշ զըն-
թերցանելիսն կրթել 4, իբրու որ աս-
տուածայնով գոգցես բախտիւ՝ տեղի յայն-
ժամ անցիցն Աղեքսանդրի տալ ծովուն
գլխովին. յորում ցանդ անդանօր սաս-
տիկս աշէկոծեալ բախէին ծովափունք, և
գուն ուրեք անդանօր յերևան գային ծայրք
սեպացեալք և հնչակք ընդ ապառաժ և
ընդ առապար աճապին ժայռիցն: Զնոյն
առնակէ և Մենանդրոս յիւրում կատա-
կերգութեանն, խաղ զհրէշիւքն զայն առ-
նելով, այսպէս. " Ո՞վ զիարդ Աղեքսան-
դրեան է բանդ: Եւ թէ երբէք խնդրեմք
զոք, ինքնին այնպիսին անդէն յանդիման
լինի ինձ: Եւ թէ երբէք անշուշտ ընդ ծով
անցանել գնալ պարտ իցէ ուրեք, այն
դարձեալ է ինձ քայլելի ": Բայց ինքնին
Աղեքսանդրոս 'ի թուղթս իւր առ սքանչե-
լիս ինչ ոչ գրեալ զբանն, ասէ՝ յուղի ան-
կանել ինքեան ընդ լեառն կոչեցեալ Կլի-
մակս և հատանել անցանել՝ մեկնեալ 'ի
Փասելիդեայ. ուստի և եկաց աւուրս բա-
զումս 'ի քաղաքին, և տեսեալ անդ զպատ-
կերն Թէոդեկտոսի մեռելոյ (զի և էր
ինքն Փասելիդացի) կանգնեալ 'ի հրապա-
րակին, ինքն յետ ընթրեացն և յետ գի-
նեւոյն չոքաւ անդր կայթելով, և առեալ
արկանէր 'ի վերայ պսակս պսակս. և այն-

պէս 'ի խաղուն շուք փարելի գնէր բարեկամութեանն իւրոյ՝ զոր հաստեաց ընդ առնն 'ի ձեռն Արիստոտէլի և իմաստասիրականին ։

Յետ այնորիկ նկուն առնէր և զՊիսիդացիս՝ որ ընդդէմ դարձան, և նուաճէր զՓռիւգիա. և անձնատուր նմա եղեալ քաղաքն Գորդիոն, յորում ասեն զտուն բնակութեան զնախնոյն Միդասայ, անդ եւես նա զգերահռչակեալ զայն զկառսն կապեալ 'ի կեղև հոյն ծառոյ. և անդանօր լսէր զբանն որ վասն կառացն՝ մեծապէս հաւատացեալ 'ի բարբարոսաց անտի. իբրու եթէ սահմանեալ թագ կապել տիեզերաց առն՝ որ զհանգոյցն զայն լուծանէ ։ Արդ բազումք պատմեն՝ եթէ ոչինչ հնարագէտ եղեալ Աղեքսանդրոս լուծանել զկնճիռ հանգուցին, զի և չերևէին իսկ ծայրք կապոյն, այնպէս բազմակնճիռն ծալեալ և կրկնեալ էր. առ և խզեաց զհանգոյցն սուսերաւն, և այնպէս 'ի հատածոյն յերևան գային ծայրք բազումք ։ Բայց Արիստոբուղոս ասէ, եթէ և հեշտին յոյժ եղոյծ նա զայն, 'ի դուրս 'ի քեղւոյն ձգել զսեպն՝ զորով ածեալ պարուրեալ էր փոկ լծոյն, և ձգեալ այնպէս յայնժամ և ըղլուծն գլխովին ։

Ապա յետ այնորիկ նուաճեալ ընդ ձեռամբ և զՊափղագոնացիս և զԿապադովկացիս, և լուր առեալ զմահուն Մեմնոնի այր երևելի առհասարակ 'ի զօրավարս ծովապետս Դարեհի, որ բազում ինչ վիշտս

և խոչ և խութ բիւրս հաստուցանէր նա Աղեքսանդրի, այլ առաւել ևս հաստատեցաւ յայնժամ Աղեքսանդրոս առնուլ խաղացուցանել զզօրն միանգամայն 'ի վերնագաւառն անդր :

Բայց անդուստ ինքնին Դարեհ յայնժամ իջանէր գայր 'ի Շուշայ մեծապէս վստահացեալ 'ի բազմութիւն զօրուն, (քանզի աղխաղխեալ ածէր նա բանակ ամբաւ վաթսուն բիւրուց զօրականին) : Առ այս՝ և յանրջոց իւրն խրախուսեալ 'ի մեկնութենէ անտի Մոգացն, որ քան զհաւանականն՝ մանաւանդ զհեշտալուրն բարբառէին արքային : Քանզի թուէր նմա տեսանել հուր մեծ բորբոքեալ և ընթացեալ 'ի փաղանգ անդր Մակեդոնացւոց, տեսանել և զԱղեքսանդր արկեալ զիւրև հանդերձ զնոյն՝ զոր ինքնին Դարեհ յառաջագոյն արկանէր՝ յորժամ էր Իշխան 5 թագաւորին, և սպաս հարկանել նմա, և մտեալ ապա 'ի տաճարն Բելայ աներևոյթ լինել: Յայտնեաց աստի՝ որպէս թուի՝ գուշակեցին դիք զշուք փառաց պայծառութեան առհասարակ զնահատակութեանցն Մակեդոնացւոց, և զտիրանալ Աղեքսանդրի 'ի վերայ Ասիոյ, ըստ որում և տիրացաւ. իսկ Դարեհ թագ կապեալ՝ որ յառաջագոյն Իշխան էր, և ապա արագ արագ 'ի մարտին յայնմիկ ունէր փառօք վճարել զկեանսն :

Բայց Դարեհ խրախուսեալ քաջալերէր նաև 'ի ժամավաճառ դեգերելոյն Ա-

ղեքսանդրի 'ի Կիլիկիա, ուստի և իբրև ա-
նարի բամբասէր զնա: Այլ ժամանավաճա-
ռութիւն նորա էր 'ի կրից անտի խօթու-
թեանն, զոր խօթացաւ Աղեքսանդրոս՝ որ-
պէս կէսք ասեն՝ 'ի տարապայման վաստա-
կոյն. և որպէս կէսք ասեն՝ զի լուացաւ 'ի
սառնասառոյց հոսանսն Կիւդնոյ: Այլ 'ի
բժշկաց յայնժամ և ոչ ոք ժտեցաւ դար-
ման տանել նմա, և առհասարակ կար-
ծեալք զվտանգ ախտին յամենայն հնարից
ապաստամբ, զանգիտեալ խիթային 'ի զըր-
պարտութէ Մակեդոնացւոցն՝ եթէ յան-
կարծ ձախողակս ինչ վճարեսցին իրքն:
Բայց Փիլիպպոս Ակառնանացի յայն տագ-
նապ տարակուսի տեսեալ զԱղեքսանդրոս,
առ մտերիմ սիրոյն գժպատեհ համարե-
ցաւ 'ի վտանգի՛ արքային խուսափել յիւր-
մէն, ձեռնամուխ զվերջին փորձելով փորձ
յաւաքել զնա. ապա կազմեցաւ պատրաս-
տեցաւ դեղ մի խառնել նմա, և ամոքէր
հաւանեցուցանէր զարքայ մնալ անսալ
մինչև 'ի պատրաստութիւն դեղոյն և ըմ-
պել. քանզի և յոյժ իսկ ձեպէր Աղեքսանդր
հաստատիլ և խաղալ 'ի մարտ պատերազ-
մին: Մինչ այս մինչ այն՝ նամակ 'ի Պարմե-
նիոնէ եկեալ հասանէր առ նա 'ի բանա-
կէ անտի, ազդ առնէր նմա անձնապահ 'ի
Փիլիպպոսէ լինել, իբրու որ հրապուրեալ
իցէ այլն 'ի Դարեհէ մեծամեծ պարգևօք
և խոստմամբք ևս տալ նմա 'ի կին զիւր իսկ
դուստրն՝ առ 'ի կարճել զնա 'ի կենաց:
Զնամակ զայն ընթերցեալ Աղեքսանդրի

գնէր 'ի ներքոյ բարձին, և ոչ 'ի բարեկամաց ումեք 'ի վեր զբանն հանէր:

Իբրև ժամ եղև, մտեալ Փիլիպպոս 'ի միասին ընդ բարեկամացն 'ի սենեակ անդր Աղեքսանդրի, մատուցանէր նմա զբաժակ դեղոյն: Իսկ Աղեքսանդրոս կարկառեալ տայր նմա զնամակն, և ինքն անվեհեր անկասկած առնոյր 'ի նմանէ զբաժակն: Անդ էր ապա տեսիլ տեսանել սքանչելի և թատերական. մին ընթեռնոյր, և միւսն ըմպէր, և այր ընդ ընկեր փոխ անդանօր զակն յառեալ հայէր, այլ ոչ օրինակ զնոյն. Աղեքսանդրոս պարզերես զուարթադէմ զմտերմութիւն վստահութեանն առ Փիլիպպոս 'ի դէմս բերէր, իսկ Փիլիպպոս 'ի ժամուն այլ յայլմէ եղեալ և բնաւ իսկ գոյն շրջեալ դիմացն ընդ ահագին զրպարտութիւնն, էր զի զմատունս 'ի վեր յերկինս առեալ տատանեալ՝ վկայ զդիսն կոչէր. էր զի զանձն զմահճօքն հեղեալ Աղեքսանդրի, քաջալերէր խրախոյս կարդայր արքային հաւատալ զանձն նմա: Քանզի և անդ արագ արագ այնչափ ինչ ուժգնակի ազդեցաց դեղն 'ի մարմինն, զի և հարեալ ընդոտնեաց ողջոյն զոյժ և զզօրութիւն նորա, զի և անբարբառ կայր մնայր և նշանս զկենաց տուեալ յոյժ դուզնաքեայ և նուազ, այնպէս անկեալ թալանայր: Սակայն և քաջացաւ Փիլիպպոս արագապէս անդէն ուշաբերել զարքայն, և կազդուրեալ ապա ինքնին՝ յարեաւ չոքաւ երևեցոյց զինքն Մակեդոնացւոց, և

տալս ուրեմն նոքա դիւրացան 'ի մորմոքելոյն՝ յորժամ տեսին զԱղեքսանդրոս :

Իսկ էր անդ 'ի բանակին Դարեհի այր Մակեդոնացի Ամինտաս անուն՝ փախուցեալ 'ի Մակեդոնիոյ, և ճշգրիտ գիտէր ըզբոլոր բարուցն Աղեքսանդրի : Սա այս Ամինտաս տեսեալ զԴարեհ այնպէս 'ի ձեռ տագնապի խաղալ ընդդէմ Աղեքսանդրի ընդ վայրս անձուկս և ընդ կիրճս , աղաչէր կալ զտեղի առնուլ 'ի դիւրին և 'ի դաշտս արձակս և բացարձակս մարտ դնել կռուել ամբաւ խուժանաւն ընդ սակաւաձեռն թշնամեացն : Բայց պատասխանի տուեալ Դարեհի , խիթալ՝ եթէ 'ի փախուստ խուճապեսցին թշնամիք և անձնապուր լիցի Աղեքսանդրոս, կրկնեաց Ամինտաս. "Այլ 'ի բանիդ յայդմիկ աներկեան լեր արքայ. գալով գայցէ Աղեքսանդր 'ի վերայ քո , և արդ աւադիկ առ դուրս կայ,, : Սակայն և այնպէս ոչինչ հաւանեցաւ Դարեհ , այլ եղեալ 'ի չու անկաւ 'ի Կիլիկիա . և 'ի նմին նա պահու չուէր խաղայր Աղեքսանդրոս յԱսորիս ընդդէմ նորա . այլ 'ի մութ գիշերոյն ոչ պատահեալ նոքա միմեանց , այլ իւրաքանչիւր դառնայր յետս :

Բայց Աղեքսանդրոս յաջողեալ 'ի յաջողակիւր բախտին փութայր ձեպէր պատահել Դարեհի յանձուկսն . իսկ Դարեհ աճապարէր տեղի տալ յառաջին բանակն և յանդորր 'ի կրճից անտի հանել զզօրն . քաջ իսկ խելամուտ եղև զի 'ի մտաս անձին չոքաւ թակարդեցաւ 'ի վայրս անելս

այրուձիոյն և բազմուղիս՝ 'ի պատճառս ծովուն և գօտեաց լերանց և Պինդարոն գետոյն որ գնայր ընդ մէջ. իսկ սակաւաձեռն գնդի թշնամեացն քաջադէպ էին վայրքն: Եւ արդեօք բախտն ինքնին 'ի ներքս մատուցանէր Աղեքսանդրի զվայրն դիպան. բայց և ինքն քաջիկ զօրավարեաց և բազում 'ի յաղթութենէն առաւելաւ քան զբախտն ինքնին գլխովին: Քանզի թէպէտ և յոյժ սակաւաւոր քան զբարբարոսն էր, պարապոյ ժամ չետ նոցա առնուլ 'ի ներքս փակել զանձն, այլ տարածեալ ձգեալ ինքն զթև իւր զաջոյ առաւել քան զձախոյն թշնամեաց, և անդ արձանացեալ 'ի փախուստ զբարբարոսն դարձուցանէր 'ի հանդիպոյ իւրմէ. և ինքնին շահատակեալ 'ի մէջ նահատակաց՝ վէրս ևս առնոյր սուսերահար 'ի բարձս իւր 'ի նմին իսկ 'ի Դարեհէ՝ որպէս ասէ Քարէս. (քանզի 'ի վէգ եկին նոքա այր ընդ ընկերի): Բայց Աղեքսանդրոս գրեալ վասն կռուոյն այնորիկ առ Անտիպատրոս, չասէ զայրն՝ որ զվէրն ետ, այլ թէ վիրաւորեցաւ միայն 'ի բարձսն. սակայն և վըտանգեցաւ և ոչինչ 'ի վիրաց անտի:

Զհոյակապ զայս տարեալ յաղթութիւն Աղեքսանդրի և տապաստ առաւել քան զմետասան բիւր արկեալ 'ի թշնամեացն, ոչ ժամանեաց ձերբակալ զԴարեհ առնել. քանզի փախստեայ տարադէմ չոքաւ նա ասպարիսօք չորս կամ հինգ, սակայն կալեալ զնորա կառսն և զաղեղն, ոչ պըն-

դեալ զհետ՝ դարձաւ յետս։ Եւ անդ գտանէր զեւր Մակեդոնացին բեռնաբարձս 'ի բանակէն բարբարոսաց մթերից դանձուց, (թէպէտ և յայն կռիւ Պարսիկք թեթևաբեռնինք եկեալ էին, թողեալ բազում ինչ յաղխէն 'ի Դամասկոս)։ Բայց Մակեդոնացիք զԴարեհի խորանն պահեցին Աղեքսանդրի լի և զեղուն 'ի դասս պայծառ ծառայից և հոյակապ կահուց կարասեաց և բազմահարուստ գոյից։

Անդէն ապա 'ի զինուցն մերկացեալ Աղեքսանդրի՝ դէմ եդեալ 'ի բաղանիս անդր, ասէր "Ո՞ն գնասցուք մեք լուանալ զքիրտն պատերազմին 'ի բաղանիսն Դարեհի,,։ Իսկ 'ի բարեկամաց ոմն լուեալ զայն՝ ասէր. "Ո՛չ ևս, ո՛ն և ո՛ն, 'ի Դարեհին, այլ յԱղեքսանդրին. քանզի յաղթելոցն իրք՝ յաղթականացն գոն և կոչին,,։ Եւ մտեալ ապա տեսանէր անդ զկոնքս և զսափորս և զշիշս և զապակեայս, համակ յոսկւոյ գործ հրաշակերտ. առնոյր անդ 'ի տանն և զհոտ բուրմանց անուշից զխընկենեաց և զիւղոց. անտի անցեալ 'ի խորան անդր բարձրաձեղուն և լայնատարր՝ 'ի հանդերձանս պայծառ բազմականաց և սեղանոց և մեծահաց ընթրեաց՝ նոր և չքնաղ և սքանչելի, հայեցեալ յայնժամ ընդ բարեկամսն ասէր. "Սա՛ այս է՝ որպէս ինձ թուի՝ անչուշտ թագաւորել,,։

Բայց յընթրիս 'ի գնալ նորա, ազդ առնէին զի ընդ գերւոյ պատերազմին ածան և մայրն Դարեհի և Տիկին նորա և դստերք

երկու կոյսք. որոց և յակն զկառսն արկեալ զԴարեհի և զաղեղն՝ ՚ի խոր խոցեալս կոծէին, որք և աշխարանս մեծապէս ջայլէին. համարեցան եթէ և ինքնին Դարեհ տապաստ անկեալ իցէ: Ապա հարուստ մի ժամ այնպէս կայր անմռունչ Աղեքսանդրոս, և քան ՚ի գեղեցիկ բախտին խրմէ՝ առաւել ևս յաղէտից նոցուն սիրտն իւր գելոյր թնդայր. յղեաց առ նոսա զԼէոննատոս ազդ առնել, եթէ ոչ Դարեհ տապաստ անկեալ է, և ոչ դարձեալ յԱղեքսանդրէ երկիւղ ինչ է նոցա. քանզի մարտ ընդ Դարեհի եղեալ կռուի միայն ՚ի վերայ տէրութեանն. և կալցեն նոքա յԱղեքսանդրէ՝ զոր միանգամ էր նոցա առ Դարեհի արքայութեամբն վայելել: Եւ ապա այս պատգամ ամոք՝ մեծապէս քաղցրացաւ կանանւոյն, զի և ՚ի գերութեան անդ խրեանց մեծ ևս մարդասիրութիւն տեսին նոքա. քանզի շնորհեաց նոցա Աղեքսանդր թաղումն տալ Պարսից՝ որոց և կամեսցին, և ՚ի նոյն ՚ի վար ևս առցեն նոքա ՚ի հանդերձից անտի և ՚ի զարդուց աւարին: Ոչ նուաղեցոյց նոցա ոչ ՚ի բազմութենէ ծառայից նոցա և ոչ ՚ի շքոյ ինչ պատուոյն նոցա. և ռոճիկ առաւել ևս քան զառաջինսն կարգեաց նոցա: Իսկ որ գեղեցիկ ևս շնորհ և առաւել արքենի, զի տիկնայք փափկասունք այնպէս տոհմիկք և պարկեշտք՝ գերի վարեալք երբէք չուան և չկասկածեցան, և երբէք զանդիտեալ չխիթացին ինչ ՚ի խոհերից և ՚ի քա-

րուականաց. և իբրու որք ոչ 'ի բանակի դեգերեալք թշնամւոյն լցեն, այլ ուրեք 'ի տաճարս սուրբս և 'ի նուիրական կուսատանս, այնպէս զատուցեալք ամփոփ կային անտեսք անմատոյցք 'ի մարդկանէ: Եւ ասեն՝ տիկնոջն Դարեհի չքնաղագեղ առաւել լինել՝ որպէս ոչ երբեք յամենայն 'ի դշխոյս. նոյնպէս և Դարեհ ինքնին գեղեցիկ տեսանելով քան զամենայն մարդ, և բարձր և հարուստ հասակաւ. ըղնոյն և դստերքն՝ հանգունատիպք ծնողացն:

Սակայն Աղեքսանդրոս զմտաւ ածեալ՝ որպէս թուի՝ վայելուչ արքայի առն, քան թշնամեացն՝ անձին մնաւանդ յաղթել, երբէք ոչ մերձեցաւ առ նոսա, և ո՛չ դարձեալ նախ քան զհարսանիսն զուգեցաւ ը̃ ումեք 'ի կանանց. բայց 'ի Բարսենեայ՝ զոր այրի մնացեալ 'ի մահուն Մեմնոնի՝ կալան մօտ 'ի Դամասկոս: Սա այս Բարսենէ 'ի դպրութիւնս վարժեալ յունականս, և բոյս բարուց նորա հեշտ և բաղձալի. ունէր հայր՝ զԱրտաբազ, ծնեալ 'ի դստերէ արքայի. ընդ սմա զուգեցաւ Աղեքսանդրոս, թելադիր նմա լինելով Պարմենիոնի (որպէս ասէ Արիստոբուղոս՝) մտանել առ այն կին, որ ընդ գեղոյն և լաւ և ազնուական բարս ստացեալ ունէր: Իսկ վասն այլոց կանանցն գերելոց՝ այնպէս գեղանիս տեսեալ զնոսա Աղեքսանդրոս և առոյգահասակս, ասէր ընդ խաղ. ''Զխորդ Պարսկանոյշքդ՝ ցաւք են աչաց,,: Բայց ընդ գեղ վայելչութեան նոցա՝ զիւ-

րոյ ժուժկալութեանն գեղ և զպարկեշտութեանն 'ի դէմս բերելով, իբրու արդարև զանկենդան պատկերօք դրօշելոց՝ այնպէս զանց առնէր զնոքօք ։

Այլ 'ի ժամանակին յայնմիկ Փիլոքսենոս նախարար ծովափնեայ վայրացն գրէր առ Աղէքսանդրոս, եթէ առ իւր բնակէ Թէոդորոս ոմն Տարանտացի և մանկունս երկուս ունի 'ի վաճառ յոյժ վայելչագեղս. և հարցանէր՝ եթէ կամք իցեն արքային գնել զնոսա վասն նորա. 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեցաւ Աղէքսանդրոս, շուրջ եկեալ առէպ բողոք բառնայր առ բարեկամսն, հարցանէր ցնոսա՝ զինչ ինչ 'ի խոհերականաց երբէք Փիլոքսենէս տեսեալ իցէ 'ի նմա, զի շահավաճառութիւն զայն անբարի 'ի ներքս արկանէ նմա։ Ապա 'ի թուղթ իւր առ Փիլոքսենոս կշտամբանս շատ կուտեալ 'ի վերայ, հրաման տայր վաղվաղակի հանդերձ վաճառօքն զԹէոդորոս 'ի կորուստ մատնել։ Սոյնպէս պատուհասեաց նա սաստիկ և զպատանին Ագնոնէ, որ գրեաց առ նա գնել զԿրովբիւղոս զյոյժ հռչակելին 'ի Կորնթոս և ածել առ նա ։ Որպէս և իրազեկ եղեալ, զի զկանայս զինուորաց ոմանց վարձկանաց բռնաբարեցին Դամոնէ և Տիմոթէոս Մակեդոնացիք զինուորեալք առ Պարմենիոնիւ, առեալ գրէր առ Պարմենիոնէ. հրաման տայր ճշգրտել զիրսն և մահու պատուհաս 'ի վերայ կապել նոցա՝ իբրու արդարև գազանաց ոմանց ծնելոց յապա-

կանութիւն մարդկան. և վասն իւրոյ անձինն զայս ինչ գրէր 'ի նամակին յայնմիկ. " Զի և իմ երբեք հայեցեալ ո՛չ միայն չէ 'ի կին անդր Դարեհի, կամ երբեք հետամուտ լեալ տեսանել զնա, այլ և երբեք յանձին կալեալ չէ՝ բան լսել զգեղոյն նորա ,,: Եւ ասէր Աղեքսանդրոս, յերկուց աստի առաւել իմն ճանաչել եթէ մահկանացու է. 'ի քնոյն և 'ի զուգելոյն. քանզի երկու այս՝ խոնջել և հեշտանալ՝ հաստեցաւ 'ի բնութեանս 'ի նոյն և 'ի մի տկարութենէն:

Եւ էր Աղեքսանդրոս մեծապէս ժուժկալ և յորովայնին. և յայտնի է այս 'ի բազում հաւաստեացն, դարձեալ և 'ի բանից անտի իւրոց առ Ադա, զոր առ մայր իւր կալաւ Աղեքսանդր, և կացոյց զնա դշխոյ Կարիոյ: Քանզի այս Ադա զօրհանապազ հիւրամեծարեալ զնա առաքէր բազում խահս համադամս և քաղցրաւենիս, և արձակեալ ևս առ նա 'ի վերջէ և խոխամոքս անուշարարս և հացարարս ճարտարս, ասէր Աղեքսանդրոս՝ չունել այնպիսեաց ումանց պէտս. զի և են իսկ առ նմա խահարարք լաւ ևս՝ տուեալք նմա 'ի դաստիարակէն իւրմէ Լէոնիդեայ: Խահարար վասն ճաշուն՝ ասէր՝ է գիշերախաղն քայլք. իսկ վասն ընթրեացն՝ սակաւապէտ ճաշ: Եւ յաւել ասել առ նա. "Եւ այս այր դաստիարակ լինէր գնալ բանալ զպատուհանս զմահճացն և զհանդերձիցն, տեսանել զննել՝ գուցէ դիրգս ինչ

և աւելորդս անդանօր մայրն եդեալ լիցէ 'ի պատուհանսն ,,:

Չէր ինչ Աղեքսանդրոս և այնչափ ինչ զհետ կրթեալ գինւոյ, որպէս կարծեցին զայն վասն ժամանակին՝ զոր ձգէր երկայնէր նա 'ի սեղանի, ոչ յարբումն՝ այլ 'ի զրուցաց սակս. առ մէն մի բաժակին՝ ցանդ ընդ մէջ երկայնս արկանելով խօսս: Եւ այն 'ի մեծի պարապմանն և եթ, քանզի յանպարապութեանն երբէք չերկարէր ոչ 'ի գինի, ոչ 'ի քուն, ոչ 'ի խաղ, ոչ 'ի հարսանիս, ոչ 'ի թատր. որպէս այլք ընաւորեցան երբէք 'ի զօրավարաց: Եւ արգեօք հաւաստիս քաջ վասն այնորիկ են մեզ 'ի կենաց անտի նորա. որ թէպէտ և 'ի կարճոյ և սուղ, լի է բազմադէմ և մեծամեծ նահատակութեամբք: Բայց 'ի պարապել խորում՝ առաջին նա յարուցեալ զոհ յաղէր դից, և անդէն բազմէր 'ի ճաշ. և անցուցանէր ապա զօրն կամ յորս ընդ բարակաց, կամ 'ի բանից յօրինուածս, կամ խրատաբանել ինչ ընդ մարտիկ որերոյն, կամ յընթերցուածս: Իսկ 'ի հանգարտիկ ուղևորութեանն՝ կրթէր 'ի ճանապարհին կամ յաղեղնաւորութիւն, կամ 'ի վեր 'ի կառս վազել ելանել՝ 'ի ձգել նորա, կամ 'ի վայր ոտնածեալ ոստնուլ. բազում անգամ և 'ի սփոփութիւն՝ յորս ելանէր նա աղուէսուց և թռչնոց, ըստ որում է մեզ իմանալ յՕրականացն նորա:

Հասեալ յիջավանն՝ 'ի մտանել 'ի բաղանիս կամ իւղով յօծանել՝ հարցանէր զվե-

բռնկացուս հացեփեցաց և խահարարաց , կա՛զմ 'ի կարգի լցեն լրք ընթրեացն . և սկսանէր ընթրել անդադան՝ ընդ մութն՝ բազմեալ 'ի բազմոցի : Եւ էր նորա փոյթ խնամոցն սքանչելի վասն սեղանոյն . ինչ մի ամենևին չկամէր 'ի նմա խառն 'ի խուռն և վեր 'ի վերոյ . և երկայնէր ձգէր՝ որպէս ասացաք՝ զարբումն բաժակացն 'ի ճառս զրուցաց : Եւ թէպէտ և ինքնին Աղեքսանդր 'ի կենակից կեանսն հեշտ և բաղձալի յոյժ էր քան զամենայն թագաւորս և շնորհօք լի , իսկ յայնժամ տաղտուկ արկանէր 'ի մեծաբան պանծանաց անձինն . և արդարև զզօրականի սոսկականի յայնժամ կիրս 'ի դէմս բերէր ճոխաբար պարծանօքն , և հեշտալուր առ մարդելոյզն լինելովն . որք աղագաւ և անդանօր մօտ քաջախորհուրդ մարդիկն՝ 'ի մեծապէս անձկութեան ջերանէին . քանզի ոչ զմարդահաճոյ շնթողօքն ելևելս կամէին առնել , և ոչ դարձեալ 'ի սորև նոցա մնալ 'ի դովել զնա . իբրու որ առաջինդ՝ անարգ և դժպատեհ , և վերջինդ՝ վտանգաբեր : Յետ գինեբրուացն լուանայր , և ապա ննջէր բազում անգամ մինչև ցօրհասարակ . էր երբեք՝ և զօրն ողջոյն անցուցանէր 'ի քուն :

Բայց և էր նա 'ի համեղաճաշակս այնչափ ժուժկալ , զի և բազում անգամ զպատուականս և զազնիւս 'ի կարծրապատեան մրգաց և 'ի ձկանց բերեալ նմա 'ի ծովէ , առեալ այսր անդր յղէր առ մէն մի 'ի բարեկամացն , և անձին պահէր և ոչինչ : Սա_

կայն և մեծահաց էին ընթրիք նորա հանապազօր. և երթալով երթայր և բազմակատար էր սեղանն ըստ բարգաւաճել դոյից. մինչև բիւրուց դրամակշռոց լինել ծախուցն, և անդ զկայ առնոյր. և նոյնչափ դարձեալ ծախք սահմանեալ էին կոչնատեարցն Աղեքսանդրի :

Իսկ յետ մարտին պատերազմին՝ որ յԻսոս, առաքէր 'ի Դամասկոս առնուլ անտի զգրամն և զաղխն և զորդիս և զկանայս զԴարեհին. և յայնժամ յոյժ ճոխացան յանկածէ անտի այրուձի Թեսաղացւոց. քանզի սոքա քաջապէս արութեամբ նահատակեալ 'ի կռուին, վասն այնորիկ ըզնոսա առեալ յղէր անդր՝ զի լիասցին յաւարէն : Մեծապէս հարստացան և այլ զօրականք. և յայնժամ Մակեդոնացիք ըզճաշակ առեալ առաջին զոսկւոյ և զարծաթոյ և զկանանց և զկենաց քաղաքավարութեան զբարբարոսացն, փութային ճեպէին՝ արդարև իբրև զբարակս ոմանս որսականս հոտոտեալք զհետս 'ի վեր 'ի վայր՝ խիլ արկանել յուզել զընչաւէտութիւնս Պարսից :

Բայց Աղեքսանդրոս լաւ համարեցաւ յառաջ քան զամենայն յանդորր եղանել 'ի ծովափնեայ 'ի վայրսն : Հա՛պա արագ արագ դային հասանէին առ նա Թագաւորք՝ 'ի ձեռս տալ զԿիպրոս և զՓիւնիկէ, բայց 'ի Տիւրոսէ : Այլ ամիս եօթն պաշարեալ զնա Աղեքսանդրոս՝ պատեալ 'ի պատնէշս և 'ի մանգղիոնս և յեռաթիւ

երկերիւր առ 'ի ծովէն, տեսանէր նա յետ այնորիկ յանուրջս զհերակլէս՝ զաջն կարկառեալ նմա 'ի պարսպէն և 'ի ներքս զնա հրաւիրել։ Ղաոից և 'ի Տիւրացւոց անափ թուէր յերազի տեսել առ նոսա Ապողոնի, երթալ չուել առ Աղեքսանդրոս՝ դժկամակն եղեալ ընդ գործս քաղաքին։ Այլ Տիւրացիք ձերբակալ զգլխն զայն արարեալ՝ իբրու դաւաճանք այր ըմբռնեալ յանցանելն առ թշնամիս, այնպէս 'ի սարիս արկեալ պատանդէին զանդրի նորա զանարի, և աւեալ բևեռէին ընդ խարիսխ նորա. և անուն կարդային նմա՝ [illegible]։

Բայց Աղեքսանդրի և յայլ երազ 'ի քուն թուէր տեսանել առաջի իւր զՊայն Ճիւաղ՝ զոր հելլենք [illegible] կոչէին, իբրու խնծղեւք հապաեալ ընդ նմա 'ի հեռաստանէ. և 'ի խնդրել Աղեքսանդրի ունել զնա, փախստեայ սրանալ 'ի նմանէ. և ապա ուրեմն շատ ինչ հետամուտ եղեալ և հիւ եկեալ՝ ձերբակալ առնել զնա։ Անդանօր յայնժամ դուշակք և իղձք անջատեալ զհելլենական անուանդ [illegible] 6, ոչինչ անհաւանական բանիւ ասէին նմա՝ եթէ [illegible] [illegible]։ Եւ ցուցանեն մինչև ցայսօր ժամանակի աղբիւր մի, առ որով թուէր նմա յայնժամ յերազին տեսանել զՊայն զայն։

Բայց 'ի ժամանակի անդ պաշարմանն, արշաւան ես այլ կարգեալ նորա ընդդէմ Արաբացւոցն բնակաւորաց 'ի Լիբանաներն, մեծապէս վտանգէր 'ի պատճառս դաս-

տիարակին լուրոյ Լիւսիմաքեայ. քանզի խնդրեաց և սա զհետ խաղալ նորա և ասէր, բա՛ չեմ ես յաւեոյթ յեցեալ առաւել քան զՓիւնիկէ և կամ նուազեալ: Իբրև մերձեցաւ նա 'ի լեռնակողմանսն և թողեալ զայրուձին գնայր հետևոտս, անդանօր նիզակակիցք հարուստ մի յառաջեցին քան զնա. իսկ ինքն 'ի տարաժամել աւուրն և 'ի մօտել առ թշնամին՝ չհանդուրժեալ թողուլ զկնի զԼիւսիմաքոս այնպէս դանդաղ և ծանր, քաջալերեալ՝ ձեռն ես տայր նմա. և այնպէս ապա ընդ սակաւուց ոմանց յետամնաց լինէր մեկուսի 'ի բանակէն՝ անցուցանել զգիշերն յաղջամուղջ խաւարին և 'ի սառամանիս 'ի դժուարս վայրաց: Անդուստ յակն արկել նորա խարոյկ բազում 'ի բացեայ ցիրուցան բորբոքեալ 'ի թշնամեացն, ապաստան յարագութիւն մարմնոյն՝ դիմագրաւ ինքնին եղեալ 'ի քիրտն, որպէս և միշտն, 'ի քաջալեր սրտաբեկութեանն Մակեդոնացւոց՝ դիմեաց առ որս 'ի մօտոյ խարոյկ արկեալ էին. և սուսերահար խոցեալ զերկուս 'ի բարբարոսացն նստեալ առ հրովն, և խանձող մի ես յափշտակեալ՝ այնպէս դառնայր առ իւրսն: Ապա և ինքն հուր վառեալ մեծ, կէսք 'ի թշնամեացն յայնժամ զահի հարեալք 'ի փախուստ դառնային, և կէսք դարձեալ 'ի վերայ յարձակեալ՝ տապաստ անկանէին. և այնպէս նոքա յանդորր եղին: Զայս մեզ պատմէ ինքնին Պարէս:

Իսկ պաշարմանն Տիւրոսի էլք այսպիսի եղեն ։ Մինչդեռ անդ Աղեքսանդրոս հանգիստ տուեալ բազմութեան զօրուն 'ի վաստակոց բազում մարտից, նուազունս ումանս խաղացոյց 'ի զօրականէն ընդդէմ պարսպացն՝ մի տալ դուլ թշնամեացն, անդանօր Արիստանդրոս գուշակ զոհ յաղէր, և դէտակն հմայիցն կալեալ, ասէր և կնքէր ևս անվեհեր՝ առ որս մերձն կային, եթէ յամսեանն յայնմիկ անշուշտ առցի քաղաքն ։ Իբրև յընչաց քերեցին զմարգարէութիւն (քանզի և վերջին օր էր ամսոյն,) տեսեալ Աղեքսանդրի զվարանումն գուշակին, ցանգ պատկառ կացեալ հաստատութեան գուշակութեանց, պատուէր տայր մի երեսներորդ հաշուել զօրն զայն՝ այլ քսաներորդ ութերորդ ․ և նշան տուեալ մարտի 'ի ձայն փողոյ, յարձակեցաւ 'ի պարիսպ անդր ամենայն զօրութեամբ ․ և դռոյթ տուեալ քաջութեամբ՝ 'ի նոյն և հանդուցեալոյ զօրականին միահամուռ դիմեալ նիզակակից նմա, ոչինչ հանդարտեցին Տիւրացիք ․ և այնպէս Աղեքսանդրոս 'ի նմին իսկ աւուր հասեալ ունէր զքաղաքն քաջութեամբ ։

Յետ այսորիկ 'ի պատել պաշարել նորա զԳազա քաղաք մեծ զԱսորւոց, դէպ եղև անկանել կնծոյ 'ի վերայ թիկանց նորա 'ի բարձանց անտի զերծեալ 'ի թռչնոյ ․ որ և սպա իջեալ հանգչել 'ի մանգղիոնս, յանդգուշ թակարդեալ ըմբռնեցաւ 'ի ցանցս ջայլոտիցն՝ որովք ոլորեն պարանս ։

Նա այս դէպք 'ի ձեռն պատահեցան մեկնութեանն Արիստանդրոսի. քանզի վէրս 'ի թիկունս իւր առեալ Աղեքսանդր, այնպէս առ զքաղաքն։ Ապա բազում ինչ աւարաման հանեալ առաքէր առ Ոլիւմպիա և առ Կղէոպատրա և առ բարեկամսն. յղէր և առ Լէոնիդաս իւր դաստիարակ տաղանդս հինգհարիւր զլիբանոսի, և հարիւր՝ զմըռոյ. յուշ իւր ածեալ զգեղեցիկ զյոյսն՝ զոր ետ Լէոնիդաս 'ի տղայութեան իւրում։ Քանզի էր ուրեք 'ի զոհի՝ Լէոնիդեայ տեսանել զԱղեքսանդրոս բռնալիր յերկուց ձեռաց առ 'ի նուէր խունկս, և ասէր ցնա. "Յառնուլ քո ո՛վ Աղեքսանդրէ զաշխարհն խնկաբերաց, յայնժամ ապա բռնալիր խնկեսցես. այլ զարդիս՝ խնայօրէն վարեա՛ց 'ի դոսա,,։ Ապա յայնժամ առեալ Աղեքսանդր՝ գրեաց առ նա այսպէս, "Առաքեցի քեզ առատագի՛ն լիբանոս ամբաւ և զմուռս, զի մի այլ ճղճիմ եղիցիս դու առ դիս,,։

Յետ այսորիկ և տապանակ մի ածեալ առաջի նորա ծանրագինի՝ առաւել քան զամենայն զկահ և զհարստութիւն Դարեհի, հարցանէր ցբարեկամսն՝ զո՞ր առաւել արդոյ և պատուական պահել արժան իցէ 'ի տապանակին։ Իբրև բազումք բազում ինչ պատասխանի առնէին, ասէր Աղեքսանդր՝ զԻղիականն պահել 'ի նմա զՀոմերոսին։ Նա վկայեն մեզ զայս ոչ սակաւք ոմանք արժանահաւատք։ Բայց թէ արդեօք ճշմարիտ իցէ՝ զոր վկայեն Աղեք-

սանդրացիք 'ի հաւատս Հերակղիդեայ, անշուշտ ապա ոչինչ անգործ և անպիտան եկաց նմա Հոմերոս յարշաւանին յայնմիկ: Քանզի պատմեն՝ եթէ նուաճեալ Աղեքսանդրի զԵգիպտոս, քաղաք մի հելլենացի կամէր շինել անդ մեծ և բազմամժողով, և յիւր անուն կարդալ զնա: Արդ մինչ հանդերձեալ իսկ էր տեղագրել զվայրն և զշրջապատն՝ ըստ խորհրդոյ Ճարտարապետաց արուեստին, տեսանէր նա 'ի քուն 'ի գիշերին յայնմիկ տեսիլ սքանչելի: Թուէր նմա՝ ծերունւոյ ուրումն սպիտակափայլ ալեօք և գիսօք արդոյ՝ մօտ գալ առ նա և ասել քերթած զայս.

Իսկ յալէտանջ անդ 'ի ծովուն
Քեզ աւադիկ կղզի կայ,
Ի հանդիպոյ Եգիպտոսի,
Փարոս անուն է նորա:

Անդէն ապա յարուցեալ ինքնին չոքաւ 'ի Փարոս. և էր նա յայնժամ՛ կղզի՝ վայր մի 'ի վերոյ Կանոպեան բերանոյն, բայց այժմիկ կից ցամաքի է նա 'ի թումբ մի ամբարտակի:

Տեսեալ զվայրն գեղեցիկ 'ի դիրսն և երևելի, (քանզի և է իսկ նա լեզու մի երկայնեալ հանդունմատիպ լայնարձակ նեղուցի, և առնեալ պարուրէ լիճ ընդարձակ առ 'ի ծովէ՝ որ եկեալ յանկչի անդր իբր 'ի նաւահանգիստ մեծ). ապա ասէր Աղեքսանդրոս՝ անշուշտ հրաշալի է Հոմերոս

յայլ ինչ, բայց է նա և ճարտարապետ ա-
մենիմաստ: Եւ հրաման տայր ծրագրել
զձև քաղաքին՝ 'ի ճահ յարմարելով վայ-
րացն: Եւ քանզի չէր նոցա առ ձեռն հող
սպիտակ, առեալ նոքա ալիւր՝ նովաւ 'ի
թուղթ գետնին ծիր ձգէին 'ի գոգ աղեղ-
նաձև, և բոլորածիր նորա ներքին յան-
գեալ 'ի խարխիս ուղղաձիգս՝ իբրև 'ի վեր-
ջաւորաց իմն 'ի ձև քղամդի, ամփո-
փեալք հաւասար զընդարձակութիւն աս-
պարիսին: Մինչդեռ անդ յանձն իւր զուար-
ճացեալ էր արքայն ընդ պատրաստութիւն,
անդուստ յանկարծ թևածեալք տարմա-
բար գայլին թռչունք 'ի գետոյն և 'ի լճէն
երամովլին, ազգ ազգ թռչնոց մեծամեծք,
և իջեալք արօրացեալք իբրև ամպք 'ի վայր
անդր, կերան և սպառեցին ողջոյն զա-
լեւրն. և յայնժամ Աղեքսանդրոս սրտա-
բեկ սրտառուչ լինէր 'ի դիպաց անտի.
բայց քաջալերէր 'ի գուշակացն առեալ և
յըղձից, քանզի ասէին՝ արգաւանդահող
հանդերձելոյ քաղաքին լինել և ազգի ազ-
գի մարդկան կերակուր պատրաստել, տայր
ապա հրաման ոստիկանացն պարապել
ճգնել 'ի գործն. և ինքն չու արարեալ
յուղի անկանէր առ Ամմոնն դիմն, ճանա-
պարհ կալեալ երկայն և բազմաքիրտն և
վշտամբեր, յորում և է կրկին տեսանել
վտանգս մեծամեծս. մի՝ առ անջրդու-
թեանն, քանզի է ապարէզ անջուր գա-
ւառի՝ գնացս ոչ սակաւ աւուրց. և երկ-
րորդ անդամ՝ որ 'ի հարաւային հողմոյ ան-

տի, եթէ երբէք ուժգինս շնչեսցէ յուղւոջ ընդ անդնդախոր և ընդ ահագին աւազուտն. ընդ որում և պատահեալ ասեն 'ի նախնումն զօրուն Կամբիւսեայ, ամբարձեալ 'ի հողմոյ անտի կարկառ ահագին աւազոյ, և յուղեալ իբրև կոհակս կոհակս ալեաց 'ի գիւրի անդ, և թաղել ընդաւազել ոգիս բիւրս հինգ 'ի զօրականէն:

Զայս ամենայն քաջիկ յայնժամ առհասարակ մոռախորհ եղեալ, սակայն և դժնդակ էր շրջել զԱղեքսանդրոս 'ի խորհրդոյն: Քանզի և բաղդն ինքնին գլխովին զօրավիգն նորայոցն՝ անյեղլի զնա յարդարէր 'ի կարծիսն, և քաջալերութիւն ոգւոյն անպարտելի առ 'ի գործ. որով և և բռնանայր ոչ 'ի վերայ թշնամեացն միայն, այլ և 'ի վերայ վայրաց և 'ի վերայ ժամանակաց: Իսկ և առ 'ի դէպ օժանդակութեանցն 'ի դժուարին ուղևորութեանն՝ հաւատք ընծայեցան՝ առաւել քան առ յառաջ պատգամացն առ նա. դարձեալ և նոքին իսկ պատգամքն հաւատարիմք դըտան 'ի հաւատոց անտի օժանդակութեանցն: Քանզի նախ առաջին յորդութիւն ջրոյ և անձրևք տեղատարափք առ 'ի յԱրամազդայ՝ զահ ծարաւոյն կարճեցին. և զանջրդի զաւազն դանդաղամած տամկացուցեալ՝ յատակեցին զօդն պայծառ 'ի տուրևառ շնչոյ: Իսկ երկրորդ՝ 'ի խառնակել շփոթել սահմանացն՝ զոր իւրեանց առաջնորդ ունէին ուղեցոյց ալիքն, և յայսկոյս յայնկոյս թափառեալ զօրականք՝

անձանօթք Ճանապարհին, երևեցան նոցա յանկարծ 'ի հանդիպոյ ագռաւք ուղեցոյցք առաջնորդականք. արագաթռիչք լինէին յառաջոյ՝ 'ի ձեպել զօրուն, և զկայ առնուլին՝ 'ի դանդաղել և 'ի դեգերել նոցա: Իսկ որ առաւել սքանչելին, որպէս Կալլիսթենէս պատմէ, զի նոքա իւրեանց իսկ ձայնիւ ազդ առնէին գիշերադնաց զարտուղելոցն. և 'ի կռինչս իւրեանց՝ յուղին հանէին զնոսա:

Այսպէս հատեալ անցեալ Աղեքսանդրոս զահագին անապատն և 'ի քաղաք անդր հասեալ, անդ գուշակին Ամոնի ողջոյն տայր նմա 'ի դիցն դիմաց՝ իբրև 'ի հօրն. իսկ 'ի հարցանել Աղեքսանդրի՝ եթէ արդեօք ոք զերծաւ 'ի սպանողաց հօր իւրոյ, ազդէր նմա գուշակին՝ բարեբան լինել. (զի չէ իսկ նորա հայր մահկանացու). յայնժամ փոխեալ զբանն, հարցանէր՝ եթէ համբուն սպանողացն Փիլիպպոսի պատուհաս 'ի վերայ կալեա՞լ իցէ. ապա և վասն տէրութեանն հարցանէր՝ եթէ շնորհեսցէ՞ նմա իշխան կալ 'ի վերայ ամենայն մարդկան: Իսկ պատասխանի տուեալ դիցն՝ տալ շնորհել նմա. և զի՝ և Փիլիպպոսի վրէժխնդրութիւնք ողջիկ վճարեցան, յայնժամ առեալ Աղեքսանդրի ձօնս պայծառս կախէր դիցն 'ի պարգև, և ինչս բաշխէր տայր անդ որերոյն: Զայսոսիկ ապա վասն պատգամացն պատմեն մեզ բազումք 'ի մատենագրացն, և Աղեքսանդրոս ինքնին նամակագիր եղեալ առ մայրն՝ ասէ

եթէ գաղտնեաց ինչ գուշակութեանց ինքն 'ի վերայ հասեալ իցէ, զոր 'ի դարձին նմա միայնոյ 'ի վեր հանցէ ։

Բայց և կէսք պատմեն՝ եթէ 'ի լեզու հելլենացի կամեցեալ գուշակին գգուանօք խօսել ընդ Աղեքսանդրի, բարբառելով Օ ՓԷԴԻՕՆ, *այն է՝* Ո՛Վ ՈՐԴԵԱԿ, *հենգեալ ըստ վերջ ձայնին խուժադուժ բարբառոյն, 'ի* ՍԷ *զբառն յանգեալ՝ փոխանակ 'ի* ՆՈՒ, *և ասէր՝* Օ ՓԷ ՏԻՕՍ· *այն է՝* Ո՛Վ ՈՐԴԻ ԴԻԱՅ· *և թէ՝ խնդաց Աղեքսանդրոս ընդ վրիպել ձայնին. և առա հռչակ հարաւ բանին՝ իբրու նորուն իսկ դիցն անուն կարդալ նմա* ՈՐԴԻ ԱՐԱՄԱԶԴԱՅ ։ *Եւ պատմեն ևս՝ եթէ և յԵգիպտոս գնացեալ յունկնդրութիւն բանից իմաստասիրին Պսամմոնի, յոյժ հաճեցաւ յասել նորա՝ եթէ ամենայն մարդիկ թագաւորին յԱստուծոյ. քանզի և իշխան և տէր 'ի վերայ ամենայնին Աստուածութիւնն է. սակայն կարծիս իմաստասիրագոյն ևս ունելով նա՝ ասէ, թէպէտ և Աստուած հայր հասարակաց է ամենայն մարդոյ, սակայն և առանձինն իւր սեպհականս գործէ զլաւս և զառաքինիսն ։ Եւ համբուն՝ Աղեքսանդրոս առ խուժադուժն պերճանայր յանձին՝ իբրու անշուշտ հաւանեալ 'ի միտ՝ իբրև ծնունդ և ձետ լինել 'ի դից. իսկ առ Հելլենացիս 'ի չափու եկեալ պարկեշտանայր 'ի դիւցազնութեանն. միայն զայն նուագ յորում գրեալ առ Աթենացիս վասն Սամոսի, ասէր այսպէս. " Ես ինքնին անշուշտ*

չտայի ձեզ քաղաք զայն ազատ և զխա_ռաւոր . այլ առէք դուք զայն 'ի Նմանէ՝ որ յայնժամ թագ կապէր, և հայր իմ Ամո_նէր ,, . և խմանայր զՓիլիպպոս:

Իսկ երբեմն Նեկտանաբ խոցեալ, և ցա_ւեալ սաստիկ, ասէր . «Դա այդ ով բա_րեկամք՝ որ վիժէն ուսուցիկ, արիւն է ան_շուշտ, և ոչ Ա–Ի–Ւ ՈՐ 'Ի ՏԻՋ ԲՂԻԵ ԵՐԱՆԵ_ԼԵԱՑ 7: Էր և երբեմն ահագին Ճայթիւն լինել որոտմանց և առհասարակ պակնուլ, և անդ Անաքսարքոս իմաստակ մօտ կացեալ ասէր առ Աղեքսանդր . «Իսկ և դու ինք_նին ով Արամազդայ որդի չառնե՞ս զնոյն օրինակ ,,: Նա ծիծաղեալ ընդ բանն՝ տայր պատասխանի . «Ոչ են ինձ կամք ահաբեկ բարեկամաց լինել՝ որպէս դուդ թելա_դրես . դու՝ որ զխմորս ընթրեօք արհամար_հես, տեսեալ 'ի սեղանի եդեալ ձկունս, և ոչ զնախարարաց կառափունս ,,: Քան_զի և պատմեն իսկ, եթէ յառաջել եր_բեմն արքային ձկունս առ Հեփեստիոն, ասել Անաքսարքոսի յայնժամ յայտնի_սեաց բանից . Իբրու ընդ վայր զմարդիկն հարկանելով և խաղ առնելով որ մեծա_քիրուն և բաղում վտանգօք զհետ կրթին փառաւորաց, և ապա 'ի հեշտութիւնս և 'ի վայելչութիւնս չեն ինչ ընդհատ կամ թէ խուն մի տարբերեալք են յայլոց ո_մանց: Եւ արդ 'ի բանից աստի յայտնէ քաջայայտ գոյ, զի չէր ինչ հաւանեալ Աղեքսանդրոս 'ի միտս վասն իւրոց ծննդ_դոցն՝ և ոչ ամբարտաւանեալ ինչ . այլ

զկարծիս զնորոյ գիւտաղնութեանն գործի 'ի ձեռն առեալ էր հեշտեաւ միանգամայն նուաճել զմարդիկ ։

Դարձ ապա արարեալ յԵգիպտոսէ 'ի փիւնիկէ, զոհս կատարէր և հանդէսս կարգէր դից, և մրցանս շրջանակաւոր պարուց և զուրերգակաց, շքեղս և պայծառս ոչ միայն 'ի հանդերձանսն, այլ և յեւելս մրցողացն. քանզի հանդիսադիրքն էին թագաւորք Կիւպրացւոց, որպէս և յԱթէնս վիճակաւ ելեալքն ըստ ցեղից. և այր զարամբ ելանէին պքանչելապէս պատուասիրութեամբ յաղթահարել այր զընկեր. և քան զամենեսեան առաւել Նիկոկրէոնն Սաղամինացի և Պասիկրատէս Սոլիացի. քանզի սոցա էր ելեալ վիճակն կարգել տալ հանդերձանս վասն գերահամբաւիցն այնոցիկ դերասանաց. Պասիկրատեայ՝ վասն Աթենոդորոսի, և Նիկոկրէոնին՝ վասն Թեսաղոսի. բայց Աղեքսանդր ինքնին պատկառ կայր Թեսաղոսին. սակայն և չերևեցոյց ինչ՝ բայց յորժամ 'ի քուէայս յաղթական հրատարակեցաւ Աթենոդորոս. քանզի 'ի մեկնել խւրում անտի ասաց այսպէս. Գովեմ զդատաւորսն. սակայն էր ինձ արդեօք մտադիւր տալ մասն զթագաւորութեանս և ոչ տեսանել պարտեալ զԹեսաղոս ։ Որպէս և յետ այնորիկ դատակնիք տուգանաց առեալ Աթենոդորոս յԱթենացւոց՝ զի ոչ գտաւ 'ի տօնի մրցանացն Դիոնիսեայ, և գնացեալ յողոքս առ Աղեքսանդր՝ գրել վասն նորա, յանձն չէառ

արքայն. արձակեալ զնա գնալ լուծանել զդատակնիքն: Իսկ յետ այսորիկ Լիւկովնէս Սկարփէոս քաջացեալ 'ի տեսարանի և ծափահարս առեալ, 'ի կատակերգակ քերթուածին իւրում բարբառեցաւ և Տող մի՝ յորում քանքարս տասն խնդրէր նա յարքայէն. ծիծաղեցաւ Աղեքսանդրոս, և տայր նմա զխնդրելն:

Զայնու ժամանակաւ նամակ 'ի Դարեհէ գայր առ նա, և բարեկամս ևս արձակեալ առ նա աղօթակերս յանձն առնուլ ընդունել քանքարս բիւր 'ի փրկանս գերւոյն, և բարեկամ և նիզակակից լինել նմա, և յիւր վտարել առնուլ ողջոյն զգաւառն յայսկոյս Եփրատայ. 'ի վերայ այսր և ածել իւր կին զմի 'ի դստերաց անտի նորա: Զխորհուրդ զայս 'ի վեր հանեալ Աղեքսանդրոս բարեկամացն, իբրև Պարմենիոն ասէր. “Եթէ ես Աղեքսանդրոս էի, անշուշտ յանձն առնուի զբանդ„. ես պատասխանի Աղեքսանդր. “Եւ ես ինքնին ո՞ն և ո՛ն, եթէ Պարմենիոն էի„: Այս առեալ գրէր առ Դարեհ ամենայն հաստատութեամբ, զի թէ առ նա եկեսցէ՝ զամենայն հիւրամեծար մարդասիրութիւն գտցէ առ 'ի նմանէ. ապա թէ ոչ՝ ինքն չու արասցէ ընդդէմ նորա: Սակայն և արագ արագ առաջացաւ նա. քանզի յայնժամ մեռանէր տիկին Դարեհի յերկունս ծննդեանն. և յայտնի իսկ վշտանայր Աղեքսանդրոս՝ զի բարձաւ 'ի նմանէ ոչ դուզնաքեայ ինչ պատճառ հանդիսից

բարեւլաւութեան նորա. սակայն և յուղարկաւորութիւն չքեղ կարգեաց դշխոյին լիաձեռն առատութեամբ: Իսկ անդ մի ոմն յաւադատապան ներքինեաց անուն՝ որ գերեցան ընդ կանանւոյն Տիրէոմս անուն՝ փախուցեալ 'ի բանակէն, և հապճեպ տագնապաւ եկեալ առ Դարեհ, գոյժ տայր նմա զմահու տիկնոջն: Զճակատ հարկանէր Դարեհ և յոգւոց հանեալ աշխարէր. "Աւա՜ղ (ասէ) բաղդին Պարսից. զի անդ տիկին արքայի և քոյր ոչ գերի միայն վարեցաւ 'ի կեանան, այլ և անբաժ 'ի մահուն մնաց յարքունի յուղարկաւորութենէն„: Կրկնեաց ներքինին և ասէ. "Այլ ո՞վ դու արքայ՝ վասն յուղարկաւորութեանդ և մեծապէս պատուոյն և չքեղ հանդերձանաց տիկնոջն, երբէք դու դանդատ մի կալցես ընդ չարաչուք բաղդն Պարսից: Քանզի անշուշտ ոչ դշխոյդ Ստատիրէ 'ի կենաս իւր, և ոչ մայրն քո, և ոչ դարձեալ քոյին զաւակքդ երբէք չվրիպեցան յառաջին բարեաց անտի իւրեանց և 'ի վայելչութեանց. բայց զի վրէպ 'ի քումդ դտան յարևէ, զոր տէրն Որմիզդ փայլատակեալ անդրէն ծագեսցէ: Բայց ապա և 'ի մահուան իւրում՝ չէր ինչ 'ի փառաց՝ զոր ոչ փառաւորեցաւ. այլ և պատուեցաւ իսկ նա և յարտասուաց նոցուն թշնամեացն. քանզի և ինքնին Աղեքսանդրոս այնչափ իմն հիւրամեծար և մարդասէր գոյ յետ յաղթութեանն, որչափ ինչ ահագին է 'ի կռուին„:

Լուեալ զայս Դարեհի, բայց և խռովեալ ամբոխէր 'ի վարանս և 'ի կասկածանս գժպատեհս, և 'ի ներքսագոյն կողմն խորանին առեալ զներքինին, ասէր. " Եթէ չէ՞ և քո արդեօք մակեդոնացեալ ընդ բաղդին Պարսից, այլ քոյ տէր տակաւին՝ ես Դարեհ, ասա ինձ՝ շուք եղեալ Միհրայ մեծի լուսոյն և այս արքունի իմոյ աջոյս, լա՞մ ես արդեօք աւաղիկ զդուզնաքեայն 'ի կրից անտի աղէտիցն Ստատիրայ. կամ թէ արդեօք կիրս իմն առաւել աշխարհելիս կրեցի՞ք արդեօք մեք առ նորա կենդանութեամբն. կամ թէ արդեօք հիքացեալ ինչ էր մեր ըստ արժանին մերոյ՝ եթէ երբէք անկեալ էաք 'ի ձեռս անագորոյն և խուժադուժ թշնամւոյ: Քանզի և զի՞արդ վայելուչս արդեօք պարկեշտասցի երբէք ընդ լծակցի իւրն թշնամւոյ այր մի երիտասարդ՝ այնչափ շքադիր տիկնոջն ,,: Այն ինչ Դարեհի բանքն 'ի բերան էին, գետնամած առ ոտն նորա անկանէր Տիրէոս, աղաչէր աղերսէր՝ բարեբան լինել և մի ինչ առ Աղեքսանդրոս անիրաւել. մի՛ յամօթ զվախճանեալն առնել զքոյր և զտիկին, և վրէպ զանձն 'ի մեծէ մխիթարութենէն կացուցանել 'ի կիրս աղէտիցն. այլ անշուշտ հաւատալ՝ զի յաղթեցաւ 'ի մարդոյ՝ որ գերաբուն է քան զմարդ. նա՛ մանաւանդ զարմանալ ընդ Աղեքսանդրոս, զի առաւել պարկեշտացաւ առ կանայս Պարսից, քան թէ քաջացաւ առ արս Պարսից: Մինչդեռ անդ և երդմունս ես ահա-

գինս կնքէր և կուէր ներքինին վասն բանին, և հռչակ ես հարկանէր զժուժկալութին Աղեքսանդրի և զմեծանձնութիւնն, ել արտաքս Դարեհ առ բարեկամսն, ձեռս 'ի յերկինս համբարձեալ աղօթէր զայս ինչ. "Ո՛վ աստուածք դուք ոստիկանք ծննդոց, և հովանաւորք արքայից, ա՛ղէ տո՛ւք ինձ միւսանգամ՝ յոտին կանգնեալ զբաղդն Պարսից՝ յառաջին բարձին թողուլ զհետ իմ՝ որպէս առի. զի յաղթեալ՝ փոխարէն հատուցից շնորհացն՝ զոր յաղէտս իմ գտի յԱղեքսանդրէ առ իմ սիրասունս: Ապա թէ արդեօք օրահասն եկեալ հասեալ իցէ վրէժխնդրութեանն և իրացն փոփոխութեան՝ վախճան լինել Պարսից արքայութեանն, մի՛ ոք այլ 'ի մարդկանէ 'ի գահ բազմեսցի Կիւրոսի՝ բայց յԱղեքսանդրէ,,: Արդ զայսոսիկ այսպէս, դարձեալ և զբանս զայսոսիկ խօսեալ յայնժամ, վկայեն մեզ բազմագոյնք 'ի մատենագրաց:

Բայց Աղեքսանդրոս տիրացեալ ողջոյն գաւառին յայսկոյս Եփրատայ, չու առնէր խաղայր գնայր ընդդէմ Դարեհի. իսկ նա գայր իջանէր ընդդէմ՝ ածեալ ընդ իւր բիւրս զօրաց հարիւր: Անդ մի ոմն 'ի բարեկամացն պատմէր Դարեհի իբրև 'ի ծիծաղելեաց ինչ, եթէ խումբ ծառայից մերձապահաց յերկուս բաժանեալ կեղծս 'ի կեղծս, մէն մի 'ի խմբիցն ունելով իւր առանձին զօրավար, անուն միոյն Աղեքսանդրոս, և միւսոյն՝ Դարեհ, և գրգռեալ

նոցա 'ի նախամարտութիւնս՝ կուռնծս հողոյ արձակէին 'ի միմեանս. ապա և բռնամարտիկք եղեալք, այնչափ իմն բորբոքեցան 'ի կռուին, զի և բազումք անդանօր քարձիգք լինէին և մականաձիգք, և հազիւ ուրեմն հանդարտեալք դադարէին: Իբրև զխաղն զայն նոցա լուաւ Դարեհ, հրաման տայր երկուց այն զօրավարացն մենամարտիկ ընդ միմեանս լինել. և տուեալ ինքն զանուանեալն Աղեքսանդր՝ զինէր վառէր. իսկ զանուանեալն Դարեհ՝ վառեաց Փիղոփոսս: Եւ անդանօր զօրն կայր 'ի զնին մենամարտութեանն՝ հայեցեալ ընդ գործըն իբրև գուշակութիւն անշուշտ հանդերձելոցն: Իբրև սաստիկ և բուռն 'ի վէգ եկին նոքա ընդ միմեանս, յաղթական ելանէր անուանեալն Աղեքսանդրոս. և 'ի պարգևի մասին առնոյր գեօղս երկոտասան, և իշխան լինէր՝ պատմուճան տանել պարսկական: Եւ պատմէ մեզ զայսոսիկ ինքնին Երատոսթենէս:

Բայց ահագին մարտ պատերազմին ընդդէմ Դարեհի (ոչ որպէս գրեն բազումք) մղեցաւ անդ 'ի յԱրբելաս, այլ 'ի Գաւգամելաս. զոր ասեն նշանակել ըստ բարբառոյն նոցա՝ Տուն ուղտու. քանզի 'ի վաղընջուց անտի թագաւորաց ումն փախուցեալ երբեմն յերեսաց թշնամեացն՝ հեծեալ 'ի տաճիկ ուղտ, անդանօր ապա դադարեցոյց զնա՝ կարգեալ 'ի տեղւոջ յայնմիկ վասն նորա գեւղեան և ռոճիկ 'ի դարման:

Արդ յամսեանն Բոէդրոմիոնի խա-

ւարէր լուսին 'ի սկզբան տօնախմբութեան խորհրդոցն յԱթէնս։ Ապա 'ի մետասաներորդի գիշերի յետ խաւարմանն՝ յերևան միմեանց եկեալ երկուց բանակացն, կազմէր վառէր Դարեհ զզօրս իւր՝ 'ի հանդէս անցեալ դասուց կարգացն 'ի լոյս ջամբարաց։ Այլ Աղեքսանդրոս հանգիստ Մակեդոնացւոցն տուեալ, ինքն դեգերեալ կայր յանդիման վրանին ընդ Արիստանդրեայ գուշակին. նուիրագործեալ նուիրականս ինչ գաղտնիս՝ զոհ յաղէր Փեբեայ։ Իսկ յայնժամ արք հինօրեայք 'ի բարեկամաց նորա, առաւել ևս Պարմենիոնն, յակն արկեալ առհասարակ զդաշտն՝ որ ընդ Նիփատոն և ընդ լերինս Գորդիենացւոց՝ 'ի խարուկաց անտի բարբարոսացն ողջոյն փայլատակեալ, և լուեալ ևս զխառնախուռն խառնամբոխ սօսաւիւն սոսկալի զբանակին նոցա՝ իբրու զահագին զալետանիչ ծովու, յապուշ հարեալ ընդ ամբաւութիւն խուժանին, բարբառեալք ընդ միմեանս ասէին. զի՞արդ դժնդակ քիրտն և բազմավաստակ իցէ նհանջել ընկրկել զայնչափ ամբաւութիւնն 'ի մարտ յայտնի. ապա եկեալ կացեալ առ արքայի 'ի կատարել նոցա զզոհսն, դուն գործէին ածել ամոքել զնա՝ գիշերախառն անկանել 'ի վերայ թշնամեացն, և այնպէս ապա զմութ գիշերոյն առագաստ 'ի վերայ ձգել ահագին կռից պատերազմին։ Այլ նա պատասխանի նոցա զհռչակելին զայն առնէր բան. Ո՛չ գողանամ ես զյաղթութիւնն. յո-

բում և անտխականս իմն թուեցաւ նա ո_
մանց և մնտոխաբանս բարբառել պատաս_
խանի և 'ի խաղ կաքաւել յամբաւ վտան_
գին. բայց կխոց լի արութեամբ քաջու_
թեամբ բարբառ 'ի ժամուն. դարձեալ և
վասն հանդերձելոցն՝ ողջախոհ մտածու_
թեամբ. զի մի պատճառս տացէ Դարեհի
յետ պարտութեանն միւսանգամ մարտ
յարդարել. պատճառելով երկրորդի հա_
րուածոյն զմութ գիշերոյն, ըստ որում և
առաջնոյն պատճառեալ խոկ էր զերանց
գօտիսն և զկապանսն և զծոփն գլխովին:
Քանզի և Դարեհ այնչափ զօրաց տէր և
ընդարձակատարր աշխարհի՝ արդեօք դու_
երբէք չառնէր կռուոյն 'ի նուազել ինչ զի_
նուն և զօրուն. սակայն դադարէր արդեօք՝
եթէ երբէք վրէպ 'ի դուաղութենէն և 'ի
յուսոյն՝ փորձ անժխտելի փորձէր զքա_
ջութեան թշնամեացն՝ հարուած առեալ
'ի մարտ տունջեան:

Ապա 'ի բաց մեկնեալ բարեկամացն,
ընկողմանեցաւ Աղեքսանդրոս ննջել յիւ_
րում վրանի. և ասեն՝ ողջոյն զգիշերն ան_
ցուցանել 'ի քուն խորութեան առաւել
քան զսովորականն. մինչև և զօրավարացն
ընդ այգս այգուն եկեալ 'ի վրան անդր
նորա՝ զարմացեալ կային. և առ ժամն նո_
քա հրաման ձայնոյն տուեալ զօրականին,
ապա նեղեալք 'ի ժամանակէն՝ մտանէր 'ի
ներքս Պարմենիոն, և մերձեցեալ 'ի մա_
հիճն՝ կարդայր զնա յանուանէն երկից և
երից. և այնպէս զարթուցեալ զնա հարցա_

նէր՝ զի՞արդ երբէք քուն զայն ննջել նմա, իբրու որ զյաղթութին գլխովին տարեալ իցէ, և ոչ մնացեալ գոնէ պինդ յառնել 'ի մարտ ահագին քան զամենայն մարտ: Իսկ Աղեքսանդրոս ժպտեալ տայր պատասխանի. " Եւ զի՞նչ արդ, ո՞չ թերևս թուիք քեզ՝ զյաղթութիւնն տարեալ. ազատեալ մեր այժմիկ տարաշրջիկ թափառել ընդ ահագին աշխարհ ամայի՝ հետամուտ Դարեհի, եթէ նա այժմիկ խուսափէր 'ի մարտէն ":
Այսպէս նա ոչ միայն յառաջ քան ըղմարտն, այլ և միջամուխ գլխովին 'ի վտանգին, մեծ և անսասանելի առաքինացաւ 'ի խորհրդեան իւրում և յարիութեանն: Քանզի և յայնժամ 'ի մարտին՝ յորժամ ձախոյ թևն՝ ուր կայր ինքնին Պարմենիոն՝ շփոթեալ խառնակեցաւ 'ի թափոյ յարձակման այրուձիոյն Բակտրիացւոց, առ այս՝ և Մազէոս հեծելազօր շրջանաւ խաղացուցանէր արտաքս քան զփաղանգն՝ անկանել 'ի վերայ վանապանաց աղխին Մակեդոնացւոց, զահի հարեալ Պարմենիոնի արձակէր ձեպով հրեշտակ առ Աղեքսանդրոս. ասել՝ եթէ վասն բանակացն և աղխին վճարեալ է՝ թէ ոչ վաղվաղակի ձեռն տուար արձակեսցէ նա 'ի ճակատէն առ վերջապահսն: Եւ էր յայնժամ Աղեքսանդրոս 'ի տալ նշան զօրականին իւրոյ յարձակել 'ի թշնամին. իբրև զայն բանն լսէր զՊարմենիոնին, ասէ՝ դա այդ այր խելայեղեալ ուրեմն է և վրիպեալ 'ի խորհրդոց. յարհաւրաց սրտին

չխորհի դա՝ եթէ յաղթական լինելով առ֊ցեն կալցեն և զաղխ թշնամւոյն. իսկ յաղ֊թեալ՝ փոյթ այնու հետև չկալցեն ոչ ըղ֊դոյից և ոչ զծառայից, ուշ միայն կալցեն նահատակել 'ի մարտին յայնմիկ և մեռա֊նել քաջութեամբ և փառօք:

Զայս պատգամ յղեալ առ Պարմե֊նիոն, ինքն առեալ դնէր 'ի գլուխն ըղ֊սաղաւարտն. քանզի և յառաջ 'ի վրանին արկեալ էր ողջոյն զապառազինութիւնն, տառատակ մի Սիկիլիացի կամարակապ, և 'ի վերայ կրկին պատեան 'ի կտաւոյ՝ յան֊կածէ առեալ որ յԻսսոս: Բայց սաղաւարտն թէպէտ և յերկաթոյ, ճաճանչ արձակէր իբրև արծաթ սուրբ, գործ ճարտարին Թէոփիլեայ, և էր զնովաւ հարստեալ քայռամանեակ երկաթոյ՝ ականակապ. էր և նորա սուսեր սքանչելաւոյս և թե֊թև, ընծայ նմա յարքայէն Կիտիացւոց. քանզի և սովորեալ իսկ էր բաղում վա֊րել սուր 'ի պատերազմի: Արկաւ և պատ֊մուճան ճարմանդաւոր՝ ձեռակերտ հոյա֊կապ առաւել քան զամենայն կազմածն, գործ ճարտար նախնոյն Եղիկոնեայ, պար֊գև նմա 'ի քաղաքէն Հռոդացւոց 'ի շուք մեծարանաց. և վարէր նա զայն 'ի մարտս պատերազմաց: Իսկ ուր երբէք վազէր նա ձիաւորեալ ընդ կարգս զօրուն, կամ կար֊գէր կազմէր մասն մի զփաղանգին, կամ թէ պատուէր հրամանի կարգայր և հրա֊հանգ տայր զօրուն, կամ թէ միայն դէտ֊ակն կալեալ զննէր զիրսն, խնայեալ 'ի

Ցլագլուխն առ ծերութեանն, յայլ երիվար աշտանակէր. իսկ ձեռնամուխ 'ի մարտն եղեալ՝ առաջի զՑլագլուխն մատուցանէին, և 'ի նա վերելակեալ՝ անդէն և անդ հորդան զօրականին տայր:

Ապա յայնժամ յերկարագոյնս խօսեալ Աղեքսանդրոս առ Թետտաղացիս և առ այլս 'ի Հելլենացւոց, զի մեծապէս քաջալերեցին զնա՝ բողոք բարձեալ առնուլ խաղացուցանել զնոսա ընդդէմ բարբարոսացն, նա անդէն 'ի ձախոյ ձեռն ըղնիզակն տարեալ, զաջ իւր ամբարձեալ կարդայր զդիսն. աղաչէր՝ (որպէս Կալլիսթենէս պատմէ) զի թէ արդարև Արամազդածին իցէ, հովանի և զօրավիգն կայցեն նոքա Հելլենացւոց: Իսկ անդանօր և Արիստանդրոս գուշակ՝ պատմուճան արկեալ ձիւնափայլ, և պսակ ոսկի 'ի գլուխ, ձիաւորեալ առ երի Աղեքսանդրի, կայր և ցուցանէր արծիւ մի 'ի բարձունս 'ի վերոյ գլխոյն նորա՝ առաջնորդական նմա 'ի թռիչսն կշիռ 'ի թշնամիս անդր: Իբրև զայն տեսին, մեծապէս քաջալերեցան նահատակք. և 'ի նոյն խրախոյս ձայն տուեալք միմեանց, յարձակէր դիմէր այրուձին. յառաջամուխ խաղայր միաբան միադունդ և փաղանգն թափով ալէսատ կոհակաձև. այլ մինչև նահատակաց զօրականին 'ի կռիւ կաքաւեալ, թիկնադարձոյց խուժադուժքն լինէին: Սաստիկ յայնժամ զհետ պնդեալ Աղեքսանդրի՝ վարէր արկանէր զնոսա մինչև 'ի մէջ անդր բանակին

նոցա, ուր կայր ինքնին Դարեհ: Քանզի և 'ի հեռաստանէ յակն իւր զնա արկանէր Աղեքսանդրոս, այնպէս յերևան եկեալ 'ի միջոյ ճակատելոյ զօրուն 'ի միջակի արքունի գնդին՝ գեղեցիկ և յաղթ հասակաւ՝ 'ի բարձրաբերձ ելեալ 'ի կառս՝ շուրջ պահ զկառօքն արկեալ խուռն և անձնադեղ այրուձիոյ, կազմք և վառեալք ընդդէմ թափոյ թշնամեացն. բայց յայնժամ մօտ զԱղեքսանդրոս տեսեալ նոցա ահաբեկ և սոսկալի՝ վարեալ սաստկապէս զփախստեայսն ընդդէմ արձանացելոյ զօրուն, զահի հարեալք յայսկոյս յայնկոյս փարատեալ գնային բազումք 'ի նոցանէն. իսկ որ քաջագոյնքն էին ընտիր ընտիր նահատակաց՝ անդ 'ի կռուին 'ի վերայ արքային 'ի մահ տարածեալք՝ տապաստ զմիմեամբք անկանէին, խոչ և խութ Մակեդոնացւոցն, 'ի տապալել կայտառալ իւրեանց դիտապաստ առ ոտս նոցա և երիվարացն:

Յայնմ մեծի տագնապի վարանեալ Դարեհ, զի և յառաջոյ անտի զօրն խուժեալ անկանէր 'ի վերայ, իբրև յայն յաղէտ ամբաւ տարակուսին դժնդակ ևս էր դարձուցանել զկառսն և յանդորր յահադին խուանէն հանել. քանզի և անիւքն կառեալ կասեցան 'ի բազմակոյտ դիականցն, և 'ի վեր ևս բռնութեամբ երիվարացն վազեալ՝ ահաբեկ սրտաբեկ զկառավարն առնէին՝ արգելեալք կապեալք յամբաւից դիակունին. ապա թողուլ լքանէր անդէն Դարեհ զկառսն և զզէնսն, և 'ի

վեր՝ որպէս ասեն՝ ելեալ 'ի ձակ մի մատաղամայր, այնպէս անձնատուր փախչէր։

Այլ սակայն և ոչ յայնժամ՝ որպէս թուի՝ ձողոպրէր նա, թէ չէին անդրէն միաբանգամ ձիաւորք Պարմենիոնի հասեալ առ Աղեքսանդրոս կոչել 'ի թիկունս. զի անդ սակաւին գունդ ստուար թշնամեացն՝ ասէր՝ զահեղի առեալ կռուին։ Քանզի և համբուն իսկ բամբասեցաւ Պարմենիոն երբև յոյլ և անպարգաստաւոր 'ի մարտին յայնմիկ. կամ զի յաշխուժիցն վատեալ էր այրն 'ի ծերութենէն, կամ զի չհանդուրժեալ՝ որպէս ասէ Կալլիսթենէս՝ խանդայր զպերճութիւն և զմեծապէս տէրութիւնն զԱղեքսանդրի։ Արդ յայն կոչ դժգմնեալ յայնժամ արքային, սակայն զօրականին 'ի վեր չեհան զճշմարիտն. այլ իբրու այն թէ՝ դուլ տալ հարուածոյն և գիշերոյն 'ի վերայ հասանել՝ այնպէս տայր նշան վերջանել զօրուն։ Ապա և 'ի խաղալանդ 'ի թիկունս վտանգելոյն, լուր նմա հասանէր յուղւոյ խապառ սպառ պարտութեան թշնամեացն և առհասարակ փախստեանն։

Եւ 'ի վախճանել ապա այսպէս պատերազմին, թուէր այնուհետև տապալել ողջոյն Պարսից տէրութեանն. և Աղեքսանդրոս ինքնին անուն առեալ՝ Արքայ Ասիոյ, զոհ դից զոհէր հոյակապ, և բաշխէր պարգևէր բարեկամացն հարստութիւնս և ապարանս և իշխանութիւնս։ Ապա և առ հելլենացիս ինքնին պատուասիրեալ ա-

ուեալ գրեր՝ ընաջինջ բառնալ 'ի միջոյ ամենայն բռնակալութեանց և վարել առհասարակ ինքնուրոյն օրինօք. տայր նամականի և առ Պղատացիս մասնաւոր, շինել անդրէն զքաղաքն նոցա. զի նախնիք նոցա շնորհեցին Հելլենացւոց զիւրեանց աշխարհն՝ մարտ անդանօր դնել կռուել 'ի վերայ ազատութեան: Առ այսոքիւք՝ և առ Կրոտոնիացիս յԻտալիա առեալ յղէր աւարամասն. պատուէր մեծարել զմտադիւրութիւն ոգւոյն և զքաջութիւն Փաւղոսի զօտեկռուին. այն որ առ ժամանակօք պատերազմացն Մարաց՝ մինչդեռ այլք յԻտալացւոց վճարեալ այնուհետև կարծէին վասն յունաց, ինքն 'ի Սաղամինա նաւազնաց եղեալ իւրովք իսկ ծախուք՝ հասարակորդ զանձն առնէր վտանգին: Այսչափ ինչ կրօնաւորէր Աղեքսանդրոս յայնժամ յամենայն ազգ առաքինութեան. և հաւանի և բարեկամ կայր հոյակապ նահատակութեանց:

Մխեալ ապա 'ի գաւառ անդր Բաբիլոնի՝ ողջոյն անձնատուր նմա, անդ հիացեալ կայր մեծապէս՝ տեսեալ զխորափիտն որ յԷկբատանս. յորմէ հուր 'ի դուրս ծաւալեալ յաւէրժ՝ իբրու յանատահոս աղբերէ: Դարձեալ և ընդ հոսանս նաւթին հիացեալ էր՝ որ զեղեալ լճանայ անդ ոչինչ հեռի 'ի խորափոսէն: Եւ է այս նաւթ նման կպրաձիւթոյ, այլ սաստիկ դիւրավառելի. զի և մինչև հպեալ բոցոյն՝ բազում անգամ 'ի բոցապարփակ նշուլիցն

վառել ողջոյն միջօրոյն ։ Որպէս և անգանօր բարբարոսք ցուցեալ արքային զզօրութիւն և զընութիւն նիւթոյն, կաթիկս 'ի նմանէ առեալ սրսկէին 'ի վերայ ուղւոյն՝ որ հանէր 'ի խորան անդր նորա. ապա կացեալք 'ի ծայրին և ջահ մատուցեալ 'ի սրսկեալսն, (էր պահ գիշերոյն,) 'ի քթիթ ական ճարակէր ը. առաջինսն. ընթանայր առհասարակ բոցն, և անդէն իբրև արագաթև խորհուրդ սրոյ՝ այնպէս հասեալ 'ի միւս ծայր անդր՝ հուր միաձոյլ գետահեղէր ողջոյն ընդ ուղին ։

Իսկ էր յայնժամ Աթենոփանէս ումն Աթենացի 'ի պաշտօնէայս արքային՝ որ յօծումն և 'ի բաղանիս սպաս ունէին մարմնոյ արքային, և զբօսեցուցանէր սա զարքայ 'ի տաղտապալից խորհրդոց նորա ։ Սա այս այր յաւուր միում տեսեալ 'ի յարկի բաղանեացն առ արքայի պատանեակ մի գիմօք խոշորագեղ յոյժ և ծիծաղելի, այլ քաղցրանուագ ձայնիւ, Ստեփանոս անուն, ասէր. " Կամիցի՞ս թերևս ո՞վ արքայ՝ փորձ զկպրաձիւթոյն փորձել 'ի վերայ Ստեփանոսի ։ Զի թէ վառեսցի զմարմնով դորա և ոչ մեռցի, ասասցուք՝ եթէ արդարև սաստիկ հզօր է դա և անվանելի ,, ։ Իբրև և պատանեակն մտադիւրագոյնս յանձին կալաւ զփորձն, անդէն իբրև օծին և կրակ մատուցին, բոց մեծ վառեալ 'ի մարմնին՝ պաշարեցաւ առհասարակ 'ի հրոյն, զի և 'ի վարանս երկիւղի լինէր Աղեքսանդր. և թէ անդ չէին ըստ դիպաց՝ որ ամանս բա-

զումս զՋրոյ բարձեալ բերէին 'ի պէտս բաղանեացն, զօրավիգն ամենայն 'ի զուր էր առ 'ի փրկութիւն. համայն և այնպէս շատ ինչ վաստակեցան 'ի շիջուցանել ըզհրավառեալ մարմին պատանեկին, սակայն և վտանգեցաւ տղայ: Եւ այսպէս ոչինչ յանիրաւի կէսք զառասպելին բան 'ի ճշմարտութիւն ածեալ, ասեն՝ եթէ այս ինչ էր արդեօք դեղն Մեդեայ, որով օծ նա զպսակն զհռչակելին յՈղբերգութիւնսն, և զանեռն: Քանզի ասեն ոչ հուր ել 'ի նոցանէն, և ոչ դարձեալ ինքնին վառեցաւ հուրն. այլ կայծ մերձեցուցեալ 'ի նոսա՝ ծաւալէր անդէն և հրդեհէր զայնոսիկ անտես 'ի քթիթ ական: Քանզի շող և սխողք հրոյն անկեալ 'ի բացուստ յայլ մարմինս, միայն լուսաւորեն և ջերմացուցանեն. իսկ անկեալ 'ի ցամաքուստ ոգելիցս և 'ի ճարպալից տամուկս և կուտակեալ և խռնեալ՝ արագ արագ փոփոխեալ զնիւթն հրակիզեալ վառեն:

Բայց և դժուարիմանալի է արարած նաւթին այնորիկ . . . [8], կամ թէ հեղանիւթ այս՝ լուցկիք բոցոյն՝ ըղխեացէ 'ի պարարտաբուն և 'ի հրածին հողոյն. քանզի և է իսկ գաւառն Բաբելոնի յոյժ հրատապ. մինչև բազում անգամ և գարւոյ ոստնուլ 'ի հողոյն և 'ի վեր վազել՝ իբրու 'ի բուռն թնդմանէ հրայրեաց վայրացն. և մարդիկ ինքնին անդանօր 'ի տապս տաստիկս ննջեն 'ի վերայ ջրալից տկաց: Եւ Արպաղոս ինքնին խնամածու կարգեալ 'ի վերայ գաւա-

ուխն, ջան մեծապէս եդեալ զարդարուն յարդարել հելլենացի տնկովք զարքունիսն և զձեմելիսն, արմատացոյց աճեցոյց անդանօր առհասարակ զբոյսս՝ բայց 'ի բաղեղանէ. զոր չընկալաւ երկիրն, այլ միշտ ապականէ, զի և ոչ բերէ օդոյն. քանզի հրակէզ է անդանօր հողն, և բաղեղն ցըրտասէր է: Սակայն և այսպէս արտաքոյ արշաւել բանիս՝ բայց չափով, թերևս ոչ ինչ այնպէս բամբասելի իցէ անաչառիցն:

Արդ յայնժամ Աղեքսանդրոս տիրացեալ Շուշայ, գտանէր յարքունիսն քանքարս բիւրս չորս դահեկանաց, և ամբաւութիւն պատուական կարասւոյ. յորս ասեն գտեալ և հինգ հազար քանքար ծիրանւոյ Հերմիոնեան, մթերեալ անդ 'ի հարիւր և ինն տասն ամաց հետէ, կացեալ այնպէս անդրժելի գունեան և նորափըթիթ. և պատճառ ասեն բանին՝ զներկուած զկարմիր ծիրանեացն 'ի մեղուէ. իսկ զսպիտակացն՝ 'ի սպիտակ իւղոյ. և ասեն եւ՝ գտանել տակաւին յայնցանէ այնչափ հինօրեայ՝ անվթար անարատ 'ի մոյնն և 'ի գոյնն: Եւ պատմէ մեզ Դինոնն, եթէ թագաւորք աշխարհին առաքէին առնուլին և 'ի ջրոյ անտի Նեղոսի և Իստրեայ, և եդեալ պահէին 'ի Գազա 'ի գանձուն իւրեանց. իբրու հաւաստիս 'ի դէմս բերելով աշխարհի զլայնածաւալ տիեզերակալութեանն և զտէրութեանն 'ի վերայ ամենայն մարդկան:

Իսկ յետ այսորիկ դժուարամուխ 'ի

ներքս եղեալ Աղեքսանդրի 'ի Պարսս՝ 'ի դժուարից անտի վայրացն, և զի և զգուշացեալ յոյժ էր երկիրն 'ի կորովեաց կորովեաց Պարսից, (ուր անկեալ ապաւինեալ էր Դարեհ), առաջնորդ ուղեցոյց առնոյր Աղեքսանդրոս զայր մի հմուտ կըրկին լեզուաց՝ ծնեալ 'ի հօրէ Լիւկիացւոյ և'ի Պարսիկ մօրէ. որ և ոչինչ երկայնաձիգ շրջանաւ առեալ գնացուցանէր զԱղեքսանդրոս: Եւ պատմեն՝ նախագուշակ լինել Պիւթիայ առ նա 'ի տղայութեանն, առն Լիւկիացւոյ ուղեցոյց նմա 'ի Պարսս լինել: Բայց 'ի ժամանակին դէպ եղև սաստիկ կոտորածի ձերբակալ մարդկանն. քանզի գրէ իսկ ինքնին Աղեքսանդր՝ եթէ շահ օգտի անձին տեսեալ զբանն՝ հրաման ետ իւրոցն 'ի մահ վարել զմարդիկն. և ասեն՝ գտանել նմա մթերս դրամոց որչափ ինչ և 'ի Շուշա. և թէ՝ զհարստութիւնս ամբաւ և զկահս և զկարասիս բարձեալ տանէին զոյգք ջորեաց բիւր մի, և ուղտք հինգ հազար: Եւ ապա անդանօր յակն Աղեքսանդրոս արկեալ անդրի մեծ զՔսերքսեայ թաւալեալ անկեալ 'ի գետին 'ի խուռնընթաց թափոյ խուժելոցն յարքունիս, անդ զկայ առեալ և իբրև ընդ կենդանւոյ խօսէր այսպէս. "Պա՛րտ արդեօք իցէ մեզ անցանել յառաջ, թողեալ զքեզ այդպէս գառացեալ փոխանակ քոյ արշաւանիդ ընդդէմ Ելլադայ, եթէ արդեօք առնուլ կանգնել զքեզ 'ի մեծանձնութեան քո սակս և 'ի քաջութեանդ,,: Եւ

այնպէս հարուստ ժամ կացեալ մտախորհ անմռունչ, անցեալ գնայր: Ապա հանգիստ տուեալ զօրականին՝ բնակէր անդանօր ամիսս չորս 'ի ձմերոցի: Եւ համբաւեն՝ եթէ զառաջին նուագ 'ի բազմել Աղեքսանդրի 'ի գահն արքունի 'ի ներքոյ երկնաձեւ ոսկի հովանոցին, յայնժամ Դեմարատոս Կորնթացի մտերիմ Աղեքսանդրի և հայրենի բարեկամ, յարտասուս ցնդեալ ըստ օրինակի ծերունեաց՝ ասէր. վրէպ կացին 'ի մեծէ հեշտութենէ Հելլենացիք դիտապաստք՝ մինչեւ տեսեալ 'ի գահ Դարեհի բազմեալ զԱղեքսանդրոս:

Յետ այնորիկ հանդերձեալ Աղեքսանդրի խաղալ ընդդէմ Դարեհի, պարապեցաւ օր մի ընդ զօվողացն 'ի խնճոյս՝ գինարբու եղեալ և 'ի խաղս հատեալ. անդանօր եկին խմբեցան և կանանին ըմպել խրախճանակից ընդ տարփածուաց: Իսկ որ ականաւոր 'ի նոսա և հռչակելին, էր Թախս հարճ Պտղոմեայ՝ որ ապա թագկապեաց, կին Ատտիկեցի: Սա կէս մի 'ի գովութիւն գեղեցիկ առեալ զԱղեքսանդրոս, և կէս մի կատակեալ ընդ նմա, ապա 'ի գիներբուս բան մի բարբառէր առ նա՝ 'ի ճահ արդեօք բարոյից իւրոց հայրենեացն, այլ անճահ անձինն: Քանզի ասէր, եթէ ողջոյն վշտաց թափառմանն իւրոյ ընդ Ասիա՝ վարձ գեղեցիկ այն օր է, յորում ոտնհար լինի արքայապանծ պերճութեանցն Պարսից. սակայն մեծ ևս հեշտասցի՝ եթէ 'ի գիներբուսն ինքնին հուր

առեալ յանդիման արքայն այրեսցէ զապարանսն Քսերքսեայ՝ որ զԱթէնս այրեաց. ուստի և համբաւ 'ի մարդիկ հարցի՝ եթէ կանանին դուշնաքեայ որ ընդ Աղեքսանդրի, մեծ ևս պահանջեցին 'ի Պարսից վասն Ելլադայ՝ քան զառաջին զօրավարսն որ մարտ եդեալ կռուեցան վասն նորա նաւամարտ և ցամաքամարտ: Զև զբանսն կատարեալ, անդանօր ծափս հարկանէին, և ձայն աղաղակին բարձրանայր. այր զբարեկամ իւր վառէր, և զմիմեամբք եղանէին 'ի գլուխ զգործն տանել. անդ և Աղեքսանդրոս հաւանեալ՝ 'ի վեր վազէր, ընթանայր յառաջոյ պսակ 'ի գլուխ և ղամբար 'ի ձեռին. և նորա զհետ ընթացեալք առհասարակ խնծղալիցք 'ի կայթս ոտին և 'ի ձայն աղաղակի պատեցին զարքունեօքն: Յայն գոչիւն աղաղակին և այլք 'ի Մակեդոնացւոց անտի՝ անդր վազեալք ղամբարօք խնդագինք առհասարակ ակնկալեալ յուսային՝ զի հրկիզութիւն և քանդել արքունեացն նշան իցէ Աղեքսանդրի դարձին 'ի հայրենիսն, ոչ ևս յերկար 'ի մէջ բարբարոսացն թարթափեալ: Արդ կէսք ասեն՝ պատահել իրացս ըստ օրինակիս ըստ այսմիկ. իսկ կէսք՝ յարդարել կազմել իրացն հնարիմաց խորհրդով: Սակայն առհասարակ խոստովանեալ է, եթէ արագ արագ զեղջ և ապաշաւ եղեալ Աղեքսանդրի՝ հրաման տայր շիջուցանել զհուրն:

Բայց Աղեքսանդրոս թէպէտ և անդըստին 'ի բնութենէն յոյժ առատապարգև,

և առաւել ևս յայնժամ 'ի յաճախել գոյից: Դարձեալ և զուարթառատ առտուրսն, որ միայն բնաւորեցաւ քաղցրացուցանել զպարգևատուսն. առ որով և սուղ ինչ յառաքինութեանցն յիշատակեսցուք աստէն: Պէոնացւոց զօրավարն սպանեալ զայր աւագ 'ի թշնամեաց անտի, առաջի մատուցանէր Աղեքսանդրի զգլուխն, և ասէր. “Այսր պարգևի տրիտուր առ մեզ ո՛վ արքայ՝ է բաժակ մի ոսկի„: Ծիծաղեալ Աղեքսանդրի, ասէ. “Այլ բաժակ թափուր արդեօք. ես մատռուակեմ քեզ զայն լի՛ անապակաւ„: Իսկ և այլ ոմն Մակեդոնացի այր ռամիկ՝ վարեալ յառաջոյ գրաստ բեռնաբարձ ոսկւոյ արքայի, իբրև պարտասեցաւ գրաստն՝ ինքն 'ի վերայ թիկանցն բարձեալ բերէր ըզբեռնն: Տեսեալ Աղեքսանդրի յոյժ վաստակեալ զայրն և յոգնս ապաստան, և իրազեկ եղեալ բանին, ասէր ցայրն՝ յիջուցանել նորա զբեռնն. “Քա՛ջ լեր մի՛ վհատիր. վաստակեա՛ ողջոյն զուղին, և տարցես զայդ 'ի վրան անդր քո„: Եւ համբուն քան ընդ խնդրելիսն՝ առաւել զայրանայր նա ընդ հրաժարեալսն առնուլ ինչ 'ի նմանէ: Առ այս և նամակ մի տուեալ նա առ Փոկիոնի՝ ասէր, ոչ ևս ճանաչել զնա իւր բարեկամ, եթէ հրաժարեսցէ 'ի պարգևացն նորա: Իսկ Սերապիոնի՝ որ 'ի պատանեկաց անտի մի էր և նա 'ի գնտակախաղութիւնն նորա, ոչինչ պարգևեաց Աղեքսանդր. զի և ոչինչ խնդրեաց նա եր֊

բէք 'ի նմանէ. էր երբեմն՝ Սերապիոնի 'ի խաղուն ձգել միշտ զգնդակն առ այլս ոմանս, ասէ Աղեքսանդր: “Իսկ և առիս չտա՞ս երբէք զդա„. ասէ Սերապիոնն. “Ո՛չ. զի ո՛չ խնդրես„. ծիծաղեցաւ Աղեքսանդր, և պարգևս ապա բազում տայր նմա: Էր երբեմն՝ զի վայրացեալ իմն երևէր Աղեքսանդրոս ընդ Պրովտէաս ումն զուարճախօս հացկատակ. նմա աղօթկեր բարեկամացն եղեալ և ինքնին ևս Պրովտէաս արտասուս թափեալ, ասէր Աղեքսանդրոս հաշտել ընդ նմա. Նա պատասխանի ետ և ասէ. “Նախ ապա գրաւական տացես ինձ ո՛վ արքայ„. և հրամայէր տալ նմա քանքարս հինգ:

Իսկ թէ քանի՛օն ապա լիաձեռն և հոյակապ տայր նա բարեկամացն և անձնապահապետացն, քա՛ջ իսկ յայտ առնէ Ոլիմպիա 'ի նամակին իւրում առ նա, այսպէս. “Այլ բարեգործեսցես դու առ բարեկամս լիաձեռն և առատաբաշխ. սակայն զարդիս արքայատիպս առնես դու առհասարակ զդոսա. և բարեկամութիւնս շատ հանդերձես դոցա, և զքեզ ինքնդ ամայացուցանես„: Ստէպ յայսպիսեաց աստի գրէր նմա Ոլիմպիա. այլ նա 'ի ծածուկ զթուղթսն ունէր. միանգամ միայն թողեալ Եփեստիոնի (ըստ սովորութեանն) ընթեռնուլ 'ի միասին թուղթ մի, այլ ապա զմատանին իւր հանեալ 'ի մատանցն, և տարեալ 'ի շրթունս նորա դրոշմէր կընքովն: Այլ և որդւոյն Մազէոսի աւագ

նախարարին Դարեհի տայր յանձն նա յայնժամ և նախարարութիւն երկրորդ՝ մեծ ևս քան զառաջինն. նա հրաժարեցաւ և ասէ. «Յայնժամ ո՛վ արքայ մի միայն Դարեհ էր աստանօր. և զարդիս դու եդեր Աղեքսանդրոս բազում,,: Իսկ Պարմենիոնին ետ նա զապարանն Բագուայ, յորում ամեն դնեալ պատմուճան զՇուշայ՝ հազար քանքարաց: Եւ առ Անտիպատրոս գրեր ազդ առնէր անձնապահ զգուշանալ առ 'ի հնարից լարելոց: Առաքէր ընծայէր և իւրում մօրն բազում յոյժ, բայց երբէք չեթող նմա միջամուխ յիս լինել կամ խառնել ինչ զանձն 'ի խորհուրդս պատերազմին. Թէպէտ և մայրն մեծապէս բողոք բառնայր, նա հեզաբար տանէր վշտին: Իսկ և երբեմն ընթերցեալ նամակ երկայն զԱնտիպատրոսին գրեալ առ նա ամբաստան զմօրէն, ասէր՝ անգիտանալ Անտիպատրեայ՝ եթէ կաթ մի արտասուաց մօրն՝ նամականի բիւր ջնջէ:

Այլ յետ այսորիկ անձնատուր յաղականս տեսեալ զիւրան, 'ի համադամս խահից, և 'ի ծախս բազմակատարս. մինչև Ագոնինի Տէյոսի հողաթափս տանել պալարակապս յարծաթոյ. անդուստ և Լեոննատոս յԵգիպտոսէ ուղտերամակօք տայր բերել աւազ վասն ասպարիսաց ըմբշաց: Դարձեալ և Փիլոտասայ 'ի գնալն յորս՝ էին նորա գործք արկանելիք ընդ հարիւր ասպարէզ: Դարձեալ և որք 'ի բաղանիս վարէին մեռոն՝ առաւելագոյնք էին

քան զօծեալսն 'ի ձէթ, ածեալ զհետ իւրեանց արս չփողս յաջողակս և անկողնարկս ։ Այսպէս զայս ամենայն տեսեալ Աղեքսանդրոս, ամբ բանիւք և իմաստասէր՝ կշտամբէր զնոսա. զարմանայր՝ եթէ արք որ այնչափ պատերազմունս մղեցին մեծամեծս՝ չեն խելամուտ եթէ վաստակաբեկ մարդիկն քան զգրգայեալսն առաւել քաղցր 'ի քուն ննջեն. և զիւրեանց զծափ կենաց 'ի կշիռ ընդ Պարսիցն ածեալ՝ ոչ տեսանեն, զի ծառայական է՝ 'ի հեշտութիւնս հատանել, և արքայական է՝ 'ի գործ վաստակել ։ Եւ ասէր Աղեքսանդրոս. " Եւ զիա՞րդ ապա դարմանն իւրումն տարցի երիվարի, կամ զգեղարդն զիւր ջինջ գործեսցէ կամ զսաղաւարտն, այր՝ որ իւրով ձեռօքն յուլանայ պաշտել զիւրական մարմինն՝ զյոյժ սիրելին ։ Եւ ո՞չ դարձեալ գիտիցէք դուք (յաւելոյր ասել) զի նպատակ անշուշտ մերոյ յաղթութեանս է՝ ոչ կրօնաւորել նմանօրինակ գոյս՝ որոց յաղթեցաքն ահաւադիկ,, ։

Այսպէս այնուհետև անխնայ առաւել 'ի քիրտն արկանէր զանձն, առաջին նահատակեալ յորս և 'ի մարտս՝ դիմադրաւ 'ի վիշտ և 'ի վտանգ. որպէս զի և դեսպանին Լակոնացւոյ մերձ գտեալ առ նմա 'ի տապաստ արկանել նորա առիւծ մի ահագին, ասէր. " Քաջութեամբ արութեամբ դու ո՞վ Աղեքսանդրէ 'ի վէգ եկիր ընդ առիւծուդ, նահատակեալ 'ի վերայ արքայութեան,, ։ Եւ ապա զայս ոստորդութիւն

բարականաց՝ տայր Կրատերոս կախել ձօն 'ի Դեղփիս, 'ի պատկերս պղնձիս՝ քաջիկ ճշգրտեալ զառիւծն և զբարականն և զարքայն ճգնեալ ընդ առիւծուն, և զինքն դարձեալ 'ի թիկունս ընթացեալ արքային։ Եւ համադերձեցաւ այս պատկեր կէս մի 'ի Լիւսիպպոսէ, և կէս մի 'ի Լէովքարեայ։ Եւ այսպէս 'ի նախաճիրս յայտնի անխնայ էր Աղեքսանդրոս 'ի կրթանս անձին, և այլոցն՝ 'ի խրախոյս առաքինութեան. բայց բարեկամքն ընչաւէտք և բազմահարուստք և ամբարտաւանք՝ գրգանաց միայն և պարապորդ կենաց զհետ կրթեալք, չբերէին զտարադէմ թափառանան և զարշաւանն. և այնպէս տակաւ սկսան և բամբասել զնա և խոտել. մեծապէս հեզութեամբ տանէր նա զառաջինն և ասէր՝ Արն թագաւորի է 'ի բարեգործել խրում լսել նախատինս։ Եւ արդեօք և համդէպք նորա դուզնաքքեայք յայնժամ վասն բարեկամացն՝ ցոյցք էին մեծապէս մարդասիրութեան և պատուոյն։ Ցացուք սուղ մի և վասն այսորիկ օրինակս։ Առեալ երբեմն գրէր առ Պեւկեստաս դանդատ կալեալ, զի խածեալ յարջոյ՝ այլոց ծանօթս տայր 'ի գըրին, և ինքեան ոչ. և գրեաց այսպէս առ նա. “Այլ այժմիկ գրեսցես դու ինձ զողջունէ քումմէ. և թէ՝ արդեօք ո՞յք յորսակցացդ քոց լքին զքեզ, զի լուծցեն դոքա զվրէժն,,։

Իսկ և առ Եփեստիոն՝ որ այլուր գնացեալ էր 'ի գործ՝ գրէր եթէ 'ի զբօսանել

նոցա յորս Հիլոսի՝ անդանօր Կրատերոս պատահեալ նետին Պերտիկասայ, վիրաւորեցաւ 'ի բարձն: Ար այս՝ և Պեւկեստաս աւաքեալ 'ի խօթութենէն, առեալ Աղեքսանդրոս գրեր առ Աղեքսիպպոս բժիշկ գիր շնորհակալութեան: Իսկ և 'ի խօթանալ երբեմն Կրատերոսի, և տեսիլ տեսեալ Աղեքսանդրի 'ի քուն՝ զոհ զոհեր վասն նորա, և զնոյն և պատուիրեր նմա. և առեալ 'ի գրել առ Պաւսանիաս բժիշկ՝ որ հանդերձեալ էր վրացի կոծ տալ նմա, էր զի զտագնապ իւր յայտ առնէր նմա, և էր զի պատուիրեր զզուշութեամբ բերել 'ի գարմանն դեղոյն: Ար այս՝ և զԵփիալտես և զԿիսսոս 'ի կապանս արկանէր, որ առաջին գոյժ բերին նմա զփախստեանն զԱրպաղոսի, իբրու ստութեամբ զրպարտեալ զայրն: Եւ յորժամ 'ի տուն առեալ արձակէր Աղեքսանդրոս զխօթացեալսն և ըղծերսն, 'ի համար խօթացելոցն եւ գրել զանձն իւր Եւրիւլոքոս Եգէացի. իբրև 'ի վեր ել բանն՝ զի խօթ չէր նա, և ինքնին եւ խոստովան եղեալ զտարփանսն առ Տելեսիպպէ, յոյր 'ի մեկնելն՝ խնդրէ և ինքն ծովագնաց զհետ երթալ, հարցանէր ցնա Աղեքսանդրոս՝ ո՞ ոք իցէ կինն. և լուեալ եթէ յազատ կանանցն է, ասէ. " Դու ինքնին ո՞վ Եւրիւլոքէ սիրողակից ունիս զմեզ: Արդ հնարս հնարեսցուք՝ ածել հաւանեցուցանել զՏելեսիպպէ, եթէ ընծայիւք, եթէ բանիւք, որովհետև յազատաց է,,: Եւ զքանչելի է արդեօք յայս-

պխնեաց նամակաց պարապել գրել Աղեքսանդրի 'ի շնորհս բարեկամացն. ըստ որում և 'ի գրել անդ իւրում պատուիրանաւ՝ խնդրել յուղել զմանուկն Սելեւկոսի՝ փախստեայ 'ի Կիլիկիա. և 'ի գովել իւրում զՊեւկեստաս՝ զի կալաւ զնիկոնն զծառայն Կրատերեայ. դարձեալ և 'ի գրրել իւրում առ Մեգաբիւզոս վասն այլում ծառայի ապաւինելոյ 'ի մեհեան անդր, պատուէր տուեալ՝ ունել զնա արտաքոյ մեհենին, այլ մի ձեռն մխել 'ի նա 'ի մեհենի անդ:

Եւ պատմեն՝ յառաջինսն 'ի բազմել նորա դատաւոր յեղեռն գլխապարտութե, խնուլ ձեռամբ զմի յականջացն 'ի խօսել դատախազին. պահեալ զայն սուրբ և անլուր յամբաստանութեանցն, և լսել ապա նովաւ ամբաստակարին: Այլ յետ ժամանակաց, 'ի բազմադէմ ամբաստանութեանց անտի՝ որ և յառաջոյ Ճշգրտախօս եղեալք, հաւատարմացուցանէին ապա և զսուտս, դառն և խիստ հանդերձեցաւ նա. և յաւէտ ևս 'ի լուր բամբասանաց զանձնէն այլ յայլմէ լինէր և անաչառ էր և անողոքելի. իբրու այն՝ որ քան զկեանսն և զարքայութին՝ առաւել զանձին փառսն սիրէր:

Յետ այսորիկ իբրև անդրէն հանդերձեցաւ կազմեցաւ Աղեքսանդրոս խաղալ ընդդէմ Դարեհի՝ իբրու միւսանգամ մարտ ընդ նմա յարդարել, լուր էառ ըզպարտութեան նորա յերեսաց Բեսսոսի. և յայնժամ առեալ զԹետաղացիս արձա-

կէր յիւրմէ 'ի տուն իւրեանց, պարգևեալ նոցա 'ի վերայ Թոշակին և քանքարս երկու հազար։ Ապա 'ի հետամուտ պնդել նորա զհետ Դարեհի՝ ուղի հատեալ դըժուարին և երկար (քանզի և զաւուրս մետասան ձիաւորեաց ասպարէզս երեքհազար և երեքհարիւր), բազումք յայնժամ 'ի զօրականէն տագնապեցան զհետ խաղալ նորա, մանաւանդ առ ջրոյն նուազել։ Արդ յայնժամ դէպ լինէր ուրեք հանդիպել նմա ոմանց 'ի Մակեդոնացւոց՝ բարձեալ 'ի ջորիս տիկս ջրոյ լցեալ 'ի գետոց. և տեսեալ զԱղեքսանդրոս 'ի հասարակ աւուր սպառեալ 'ի ծարաւոյ, լցեալ սաղաւարտ մի անդէն առաջի մատուցին նմա։ Հարցանէր արքայն՝ ո՛յց տանել զջուրն, ետուն պատասխանի. “Որդւոց մերոց. այլ 'ի յաւերժանալ քո 'ի կեանս, արասցուք մեզ այլս, եթէ երբէք վրիպեսցուք 'ի նոցանէն,,։ Լուեալ զբանն, առնոյր 'ի ձեռն զսաղաւարտն. այլ շուրջ հայեցեալ և տեսեալ զասպետսն իւր այնպէս գլխակորեալ առհասարակ և ակնկառոյց 'ի ջուր անդր, ոչինչ արբեալ՝ տայր անդրէն զջուրն. սակայն և շնորհս ունէր արանցն և ասէր, “Քանզի յըմպել իմում միայնակ՝ դոքա առաւել ևս պապակեսցին,,։ Իսկ զայնչափ ժուժկալութիւն զարքային և զմեծանձնութիւնն տեսեալ ասպետացն, աղաղակ բարձեալ առնուլ անվեհեր խաղացուցանել զնոսա՝ մտրակէին զերիվարս, ո՛չ խոնջս և վաստակս ինչ ասէին զանձինս և ո՛չ պապա-

քեալս, և ոչ ես այնուհետև իբրու մահկանացու մարդիկ, ցոր վայր զայնպիսի ունիցին իւրեանց թագաւոր:

Այլ թէպէտ և զնահատակութիւն զայս նահատակեցան յայնժամ առհասարակ, վաթսուն ոգիք միայն՝ որպէս ասեն՝ 'ի միասին ընդ Աղեքսանդրի միջամուխ մըտին 'ի բանակետղ թշնամեացն: Անդանօր կոխեալ անցեալ 'ի վերայ մթերից արծաթոյ և ոսկւոյ սփռեալ ընդ գետինն, և զանց զբազում արարեալ կառօքն՝ որ անկառավար այսր անդր ձգէին բարձեալ 'ի վերայ զմանկունս և զկանայս, դիմեցին ըզհետ մտին նոքա առաջապահ թշնամեացն՝ կարծէին եթէ և Դարեհ ինքնին անդանօր իցէ: Այլ զնա հազիւ ուրեմն գտանէին՝ ողջոյն 'ի մարմինն նետահար և վիրաւոր անկեալ 'ի վերայ կառաց և յոգւոց պարզել տապաստան: Յայնժամ վերջին տագնապին խնդրեաց Դարեհ ըմպել, և արբեալ ջուր ցուրտ, ասէր առ Պողիստրատոս՝ որ արբոյց նմա. "Այս՝ ով այր դու՝ ողջոյն աղէտից իմոց ծայր, զի մարդասիրեալ առ 'ի քէն չեմ բաւական փոխարինել. այլ փոխարինեսցէ քեզ Աղեքսանդրոս. և Աղեքսանդրի ինքնին փոխարէն տացեն դիք մարդասիրութեան նորա առ մայրն իմ և առ կին և առ իմ որդիս. որում ես ինքնին այժմ աւադիկ 'ի քո ձեռն կարկառեմ զաջ իմ.,:

Զայս ասաց, և զձեռանէ կալեալ Պողիստրատոսի, մեռանէր: Յետ այնորիկ

Աղեքսանդր 'ի վերայ հասեալ, 'ի խոր խոցեալ ընդ արկած աղեղն Դարեհի, 'ի բաց հանեալ զերական քղամիդն և 'ի վերայ արկեալ զիւրականն՝ պատէր զնա: Իսկ յետ այնորիկ 'ի ձեռս բերեալ զԲեսսոս, անդամ անդամ յօշէր զնա՝ օրինակ զայս: Տայր Թեքել բռնութեամբ 'ի նոյն 'ի մի վայր ծառս ուղղաբերձս. և 'ի մէն մի 'ի նոցանէն կապէր յանդամոց մարմնոյն նորա. ապա արձակեալ միանգամայն զծառսն յամենայն կողմանց, այնպէս անհնարին Թափով ուղղաբերձեալք մէն մի 'ի ծառոցն յինքն ձգէր տանէր զանդամս առնն: Բայց յայնժամ արքայօրէն դիազարդեալ նա զմարմին Դարեհի, առեալ առաքէր առ մայրն նորա. և զեղբայր Դարեհի, զԵքսաթրէս առնոյր գրէր 'ի Թիւ բարեկամաց իւրոց:

Իսկ յետ այնորիկ այրընտիր զօրընտիր եղեալ 'ի բանակէն խաղայր իջանել 'ի Վրկանս, և տեսեալ զծոց ծովուն՝ որ ըստ կշռելոյ ական չէր ինչ պակաս քան զՊոնտոսին. այլ էր քաղցր քան զմիւս ծովն. Թէպէտ և շատ խուզեաց, ոչինչ ճշգրիտ իմացաւ վասն նորա. սակայն և յաւէտ իմն հաստատեցաւ՝ լինել նմա ջուր լճացեալ Մէովտիդեան լճին: Բայց և 'ի բնախօսից արանց ոչինչ զանխուլ մնաց ճշմարտութիւն իրացն, որ բազում ամօք յառաջ քան զԱղեքսանդրի արշաւանն արձանագրեցին. եթէ 'ի քառից անտի ծոցոցն՝ որ սուզին 'ի խորս յարտաքին ծովէն, դա

այդ է առաւել հիւսիսակողմեանն, որ ծով Վրկանայ կոչի և Կասպից ։

Իսկ անդանօր բարբարոսացն յեղակարծումն 'ի վերայ անկեալ արանցն՝ որ ածէին զերիվար նորա զՑլագլուխն, հանին 'ի ձեռաց նոցա ։ Ոչինչ հանդարտեալ Աղեքսանդրոս, արձակէր քարոզ բանիւք սպառնալեաց, 'ի մահ վարել խողխողել առհասարակ զնոսա որդւովք և կանամբք հանդերձ, թէ ոչ դարձուսցեն 'ի նա զերիվարն նորա ։ Ապա ածեալ նոցա առ նա զերիվարն և 'ի ձեռս ևս տուեալ նմա զքաղաքս իւրեանց, առհասարակ մարդասիրեաց առ նոսա. հատուցանէր և զփրկանս երիվարին՝ որոց հանինն զնա ։

Անտի անցեալ խաղաց 'ի Պարթևս. և պարապեալ 'ի սահմանին՝ յայնժամ առաջին արկանէր զիւրեաւ հանդերձ զբարբարոսաց, կամ զի խնդրեաց օրինաց աշխարհին յարմարել զանձն, և այնպէս իբրու համաբարոյ և համազգի հեշտին ևս յանդուցանել զմիտս որերոյն. կամ զի խնդրեաց յայնժամ փորձել զՄակեդոնացիսն, յանձին ունել նոցա և սակաւ սովորել բերել զայլազան զչափ կենացն և զփոփոխութիւնն ։ Սակայն և ոչ ուղջ յանձին կալաւ նա զխուժադուժն զայն և զդըժոխատիպ հանդերձաւորութիւն զՄարացն, և ո՛չ դարձեալ զանդրավարտիսն նոցա և ո՛չ զպատմուճանն՝ զոր կոչեն Քանդէ, և ոչ զարտախուրակն նոցա. այլ միջասահման ընդ Պարսիկն և ընդ Մարն՝ ա-

ուեալ քաջին խառնեաց, և հանդերձաւորութիւն գործեաց նուազ շքեղ քան ըզՄարացն, և առաւել պերճ քան զՊարսիցն: Յառաջինսն նովին վարէր հանդերձիւ՝ միայն 'ի պարապել խլում ընդ բարբարոսացն և ընդ բարեկամացն առ տնին. բայց ապա 'ի նոյն հանդերձեալ՝ գայր յերևան և 'ի հրապարակի և յատեանս: Թէպէտ և տեսիլ այն՝ խոշական էր Մակեդոնացւոց, պարտ համարեցան Թոյլ տալ՝ հիացեալք ընդ առաքինութիւնս արքային, ինչ մի գործել նմա ըստ ախորժակաց և ըստ կամին: Նա՛ զի՝ Թո՛ղ զայլ արկածս նորա, սակաւ մի յառաջ վէրս առեալ նա նետահար 'ի մի 'ի սըրունիցն, ջախեալ անկանէր կկոցաձև ոսկրն. առ այս՝ և քարկոծ 'ի պարանոցին եղեալ, ստուերած՝ հարուստ մի ժամ անկաւ զտեսանելեօքն: Համայն և այնպէս անխնայ դիմագրաւէր 'ի վտանգս, և անցեալ ևս ընդ գետն Որէքսարտէս՝ զօր և կարծէր Տանայիս գոլ, և 'ի փախուստ զՍկիւթացիսն փախուցեալ հետամուտ պընդէր ասպարէզս հարիւր՝ Թէպէտ և նեղեալ 'ի Թանչից: Անդր չոքաւ տեսանել զնա Ամազոնին, ըստ որում բազումք պատմեն մեզ 'ի պատմաբանից. յորս և Կղիտարքոս և Պողիւկրիտոս և Ոնեսիկրիտոս և Անտիգենէս և Հիստրոս: Բայց Արիստոբուղոս և Քարէս Իսանգեղացի և Պտղոմէոս և Անտիկղիդէս և Փիլոնն Թեբայեցի և Փիլիպպոս Իսանգեղացի, հանդերձ ստ-

քօք և Հեկատէոս Երէտրիացի և Փիլիպպոս Քաղկիդացի և Դուրիս Սամոսացի առ կեղծիս գրեն զբանն. և թուի՝ և Աղեքսանդր ինքնին վկայել սոցա: Քանզի գըրեալ նորա ճշգրտագոյնս զամենայն առ Անտիպատրոս, ասէ՝ տալ Սկիւթուհւոյն զդուստրն 'ի կին նմա. այլ զԱմազոնէն յիշատակ ինչ չառնէ: Եւ պատմեն՝ յետ բազում ժամանակի յընթեռնուլ երբեմն Ոնեսիկրատեայ առ Լիւսիմաքոս արքայ զչորրորդ Դպրութիւն իւր՝ յորում վասն Ամազոնի արձանագրեալ էր, մանր ժըպտեալ Լիւսիմաքոսի՝ ասէր, "Եւ ո՞ւր արդեօք էի ես յայնժամ": Սակայն 'ի բանից՝ եթէ անհաւատացի ոք կամ հաւատասցէ, արդեօք հրաշալի չլինիցի Աղեքսանդրոս՝ ո՛չ աւելի և ո՛չ նուազ:

Բայց 'ի ժամանակին զանդիտեալ Աղեքսանդրի՝ յանձն չառնուլ Մակեդոնացւոց զհետ խաղալ նմա ողջոյն յարշաւանին, խորհեցաւ թողուլ անդէն 'ի դաւառին զբազմութիւն զօրականին. և ընդ իւր առեալ զընտիր ընտիր զօրուն խաղալ 'ի Վրկանս՝ քսան հազար հետևակաց և երեքհազար այրուձիոյ, հրապարակախօս եղե̃լ ասէր՝ ցայնվայր իբրու յերազի երևութանալ նոցա առ բարբարոսս. որոց և տեսեալ ապա զչու նոցա յԱսիոյ՝ ահաբեկ միայն առնելով, անդէն արագ արագ յարձակեցին 'ի վերայ՝ իբրև 'ի վերայ կնամարդեաց: Այլ սակայն և 'ի կամս ազատութեան իւրաքանչիւր՝ ասէր՝ առնել ապա-

տան զչուն. բայց և վկայութիւն դնէ՝ զի 'ի նուաճել խրում ընդ Մակեդոնացւոց ձեռամբ ողջոյն զցամաք, լքաւ Թողունա միայնակ ընդ բարեկամացն և ընդ իւրոց նիզակակցացն: Եւ այս բանք՝ գոգ նովին բառիւք արձանագրել կան 'ի Թղթին առ Անտիպատրոս: Առ այսոքիւք՝ դրեալ կայ և այն, եթէ 'ի հրապարակախօսել նորա զայս, առհասարակ աղաղակ բարձին առնուլ խաղացուցանել զինքեանս յոր կոյս երկրի և կամք իցեն նմա: Ապա այնպէս մատդիւր ընկալեալ նոցա զբանն՝ փորձ վասն նոցա, այնուհետև ոչինչ դժուարին զհետ իւր ձգեաց բովանդակ և զխուժան զօրուն նահատակեալ ընդ նմա:

Բայց յետ այսորիկ առաւել ևս համաբարոյ աշխարհին յարդարեալ զանձն 'ի չափ կենացն, գուն գործէր և զբարոյս աշխարհին յարմարել ընդ Մակեդոնացւոցն. զի այնպէս խառնեալ և ընդ միմեանս պատշաճեալ գեղեցիկ ևս հաստատեսցին իրք մտերմութեամն քան եթէ բռնութեամբ՝ 'ի հեռանալ նորա: Որ աղագաւ և երից բիւրուց մանկտւոյ քաջընտիր արարեալ, հրաման տայր վարժել զնոսա 'ի դպրութիւնս յունականս և մարզել 'ի զէնս ըստ օրէնի Մակեդոնացւոց, տուեալ նոցա վարժեարս բազումս և վերակացուս: Իսկ ածել նորա 'ի կին զՀռոքսանէ 'ի տարփանացն հանդերձեցաւ՝ տեսեալ զնա երբեմն 'ի կոչունս ուրեք գեղեցիկ յոյժ և հասակաւ առոյգ. և Թուե-

ցու եւ նմա 'ի ճահ յոյժ պատահել հարտանեացն՝ իւրոց ժամանակին այնորիկ ։ Քանզի 'ի խնամութենէ անտի հարսանեացն մեծապէս վասն եղեալ բարբարոսացն՝ խանդակաթ կապեցան ընդ Աղեքսանդրի․ իբրու որ յոյժ պարկեշտացեալ 'ի բանին՝ առանց օրինաց յանձին չկալու յայնժամ զուգել երբեք ընդ կնոջն՝ յորմէ միայն պարտեցաւ ։

Այլ տեսեալ Աղեքսանդրի զի յերկուց անտի իւրոց 'ի մեծ բարեկամացն՝ Հեփեստիոն եւ Կրատերոս, առաջինն հաւանեալ ընդ փոփոխութիւնն Աղեքսանդրի՝ եւ ինքն եւս օրինակ զնոյն հանդերձաւորէր․ իսկ վերջինդ զսովորոյթ պահէր հայրենեացն․ նա 'ի գործս զառաջինն առ բարբարոսն առաքէր, եւ զերկրորդն առ Հելլենացիս եւ առ Մակեդոնացիս․ իսկ հասարակ՝ շուք մեծապէս դնէր երկրորդին․ Հեփեստիոնի անուն կարդայր՝ Աղեքսանդրասէր, եւ Կրատերեայ՝ արքայասէր։ Որ աղագաւ խէթ 'ի ծածուկ կալեալ նոցա այր ընդ ընկերի, սակս ոգորէին ։ Էր երբեմն 'ի Հնդիկս զի եւ 'ի վէգ ընդ միմեանս մերկեցին վաղակաւորս․ աստի եւ անտի բարեկամք 'ի մէջ անցեալ ձեռն տալ նոցա, անդր վազեալ Աղեքսանդրոս՝ յայտնապէս զՀեփեստիոն ընդ վայր հարկանէր․ անուն կարդայր նմա ապուշ եւ անմիտ, որ խելամուտ չէ՝ զի 'ի կապտել իւրում յԱղեքսանդրէ՝ դարձցի եւ յոչինչ․ այլ ապա առանձինն զառնա-

պէս կշտամբէր և զԿրատերոս: Եւ այնպէս միաբանութեամբ 'ի հաշտութիւն բերեալ զնոսա, երդումն կուէր յԱմմոնն և յայլ ևս դիս՝ անշուշտ քան զամենայն մարդիկ զնոսա զերկոսեան առաւել սիրել. սակայն եթէ և այլ ևս զկռուոյ նոցա երբէք լուր առցէ, 'ի մահ մատնեսցէ զերկոսին միանգամայն, կամ թէ զսկզբնաչարն միայն: Ոստի և պատմեն, այնուհետև նոցա ոչ բան մի՝ ոչ գործ մի՝ և ոչ 'ի խաղս գործել ընդդէմ միմեանց:

Բայց առ Մակեդոնացիս մեծապէս ըղձամբաւ հարեալ էր Փիղովտաս Պարմենիոնեան, իբրու քաջ այր և համբերատար. և ոչ ոք այլ զկնի Աղեքսանդրի առաւել քան զնա առատաձեռն և խանդակաթ առ բարեկամսն: Եւ պատմեն՝ եթէ 'ի խնդրել 'ի նմանէ արծաթ միոյ ուրուք 'ի մտերմացն, և հրամայեալ տալ նմա, ասէր հազարապետ տանն՝ ոչ ունել. ասէ Փիղովտաս. "Զի՞նչ խօսիս, չիցէ՞ քո ուրեմն 'ի բաժակաց կամ 'ի հանդերձից": Սակայն առ 'ի գոռոզութենէն և 'ի պերճութենէ ընչաւէտութեանն, առ այս՝ և 'ի հապատանաց զարդու մարմնոյն և 'ի կերակրոյն, փքանայր և անհամէր առաւել քան զայր սովական. և յայնժամ պատուասիրեալ 'ի հանդէս իմն աւագամեծար՝ ոչինչ 'ի ճահ, այլ անշնորհս և հետևակս և տարօրինակս, կասկածելի գոյր և ատելի. մինչև և Պարմենիոնի ասել նմա երբեմն. "Ո՞վ որդեակ իմ, լե՛ր ինձ խո-

նարհ,,: Եւ այս՝ և 'ի բազմաց հետէ բամբասեցաւ սա առաջի Աղեքսանդրի: Քանզի 'ի պարտիլ անդ Դարեհի 'ի Կիլիկիա և յաւարել Դամասկոսի, ընդ գերւոյն առեալ 'ի բանակ անդր և կին մի ազգաւ Պիւտնացի չքնաղագեղ Անտիգոնէ անուն, և վիճակեցաւ Փիլոտեայ: Այս Փիլոտաս երիտասարդաբար անձնացոյց եղեալ առ տարփածուն 'ի սեղանի 'ի գիներբուան բազում ինչ համարձակաձայն բարբառէր մեծաբանս մտօտեաց ըստ զինուորաց կարգին, անձին իւրում և հօրն ընծայեալ զհոյակապան 'ի նահատակութեանց. և Աղեքսանդրի անուն կարդայր պատանեակ՝ որ 'ի նոցուն քաջութեանն զանուն պողաբերէ զարքայի: Զմեծաբանն զառն պատմեալ կնոջն յունկն միոյ 'ի բարեկամացն, և նա դարձեալ՝ (ըստ որում բնաւորեցաւ լինել) այլում ումեք, այնպէս բան 'ի բանէ հասանէր զրոյցն և առ Կրատերոս: Սա առեալ զկինն մուծանէր 'ի ծածուկ առ Աղեքսանդրոս: Լուեալ արքային զբանն, հրաման տայր կնոջն դնալ կալ առ Փիլոտեայ, և գալ պատմել նմա զամենայն զլուեալսն: Իսկ Փիլոտաս անդէտ մեքենային՝ կենակից եղեալ Անտիգոնեայ՝ զրոյց շատ դժպատեհս խօսէր նա ընդդէմ արքային. է զի առ զայրուց բարկութեն, և է դարձեալ՝ առ պանծանացն: Բայց Աղեքսանդրոս թէպէտ և այսպէս հաւաստիս անսուտ առ ձեռն ունէր ընդդէմ Փիլոտեայ, համբերատար լռութեամբ

ժուժկալէր ։ Կամ զի մեծապէս վտանգ եղեալ 'ի մտերմութիւնն Պարմենիոնի, կամ զի զանգիտեալ ինչ առ 'ի համբաւոյ և 'ի զօրութենէ նորա ։

Զայնու ժամանակաւ էր այր ոմն Մակեդոնացի անուն Լիմնոս 'ի Քաղեստրեայ։ Սա այս Լիմնոս նենգ լարեալ մահահոտ Աղեքսանդրի՝ 'ի սատար գործոյն դրդէր զպատանի ոմն Նիկոմաքոս անուն՝ զիւր տարփածու ։ Ոչ հաւանեալ պատանւոյն ընդ բանն և 'ի վեր զնենգն հանեալ խուրում եղբօրն Բաղինեայ, երկոքին նոքա 'ի միասին գնացեալ առ Փիլոտոսս, ստիպէին զնա մուծանել զնոսա առ արքայ. իբրու որ վասն մեծաց իրաց և կարևորաց հարկ իցէ բերան 'ի բերան խօսել ընդ արքայի ։ Այլ Փիլոտաս՝ յինչ արդեօք պատճառաց (քանզի և անյայտ իսկ է) չեմոյծ զնոսա 'ի ներքս, իբրու 'ի կարևորագոյնս ինչ պատաղեալ յայնժամ արքային. զնոյն Թախանձ երկիցս արկին նոքա և ոչ յաջողեցան. ապա 'ի կարծիս եղեալ վասն Փիլոտեայ, դիմեալ առ այլ ոք յաւագանւոյն՝ մուծան առ արքայ ։ Անդանօր առաջին նոքա 'ի վեր հանէին Աղեքսանդրի զբանն Լիմնոսի. ապա և զրուցաց դէպ լինէր և վասն Փիլոտեայ, զի երկիցս գնացեալ առ նա, նա զանց արար զնոքօք ։ 'Ի մեծ բարկութիւն սրտմտութեան բրդեցաւ Աղեքսանդրոս. իսկ իբրև այրն սուրհանդակ առաքեալ ունել զԼիմնոս՝ սպան զնա, զի ընդդէմ դարձաւ Լիմնոս, յայն-

ժամ սաստիկ եւ ամբոխեալ խռովեցաւ Աղեքսանդրոս՝ զի հաւաստիք անխաբ դաւանիացն զերծաւ 'ի նմանէ ։ Ապա դառնացեալ ընդդէմ Փիլոփոնեայ, դրդեաց ըզմարդիկ՝ որ 'ի վաղնջուց իսկ ատելութեամբ էին ընդ Փիլոփոնոսս՝ բամբասել յայտնի, եթէ մեծապէս արդեօք խօթամիտ է արքայ՝ կարծեալ եթէ Լիմնոս այր Քաղեստրացի ինքնին գօտէպինդ լեալ իցէ 'ի գործ անդր դժուարին յոյժ. Նա արբանեակ մանուանդ և գործի միայն 'ի ձեռս իցէ վեհագունի պատճառին. ուստի յուղել խիլ արկանել արժան է դաւանիացն այն մարդիկ՝ որ զամ մի զգաղտնութիւնն խնդրեցին զգաւին զայնորիկ ։

Յայապխեաց բանից և 'ի կասկածանաց բացեալ նորա զլսելիս արքային, ամբաստանութիւնս ապա ամբաւս 'ի ներքս արկանէին ընդդէմ Փիլոփոնեայ։ Ուստի ձերբակալ Փիլոփոնոս եղեալ և 'ի խոշտանգանս քննեալ չարչարանաց՝ առաջի բարեկամացն Աղեքսանդրի, որ և ինքնին արքայն կայր արտաքոյ և լսէր յետոյ որմակալին. և պատմեն՝ եթէ լուեալ զողբ ըզկանացի զՓիլոփոնեայ և զաշխարն, և ըզպաղատանան առ Եփեստիոն, ասէր Աղեքսանդրոս. " Իսկ քո սուադիկ այդչափ գիրգ գոլով և կնամարդի ո՞վ Փիլոփոնէ, ձեռնհամս լինչ էիր դու 'ի նահատակութիւնս մեծամեծս,, ։ Ապա հրաման տուեալ մահու նորա, անդէն արձակէր և 'ի Մարս սպանանել և զՊարմենիոն, զայր ա-

ւադ, որ՚ի մրցանս բաղում նահատակեալ էր ընդ Փիլիպպոսի, և որ միայն կամ թէ առաւել քան զամենեսեան ՚ի ծերունեաց բարեկամացն, գրգեալ էր զԱղեքսանդրոս ինքնին անցանել յԱսիա. այր՝ որ յերից անտի իւրոց զաւակացն նահատակեալ ՚ի զինուորութեան՝ զերկուսն յառաջագոյն եռես մեռեալ, և ինքն դարձեալ մեռանէր յայնժամ յետ մահուն երրորդի զաւակին: Յայսմանէ ապա ահագին լինէր Աղեքսանդրոս բաղմաց ՚ի բարեկամացն. յաւէտ իմն՝ Անտիպատրոսի. որ և դեսպանս խորհրդով առ Ետոլացիս արձակեալ՝ դաշնաւոր լինէր նոցա: Քանզի այս Ետոլացիք խիթացեալ իսկ էին յԱղեքսանդրէ վասն հարուածոյն՝ զոր հարին նոքա զԵնիադացիս, զորմէ լուր առեալ Աղեքսանդրոս ասէր՝ եթէ ոչ որդիք Ենիադացւոց՝ այլ ինքնին նա վրէժ խնդրեսցէ յԵտոլացւոց անտի:

Ո՛չ յետ բաղմաց ինչ դէպ լինէր յայնժամ և պատահարին Կղիտոսի. բայց ուրուք զպարզապէս պատմութիւն զաղէտիցն զայնորիկ լուեալ, կարծեսցէ իմն դժոխըմբերելի քան զՓիլոփոտայն. այլ որք ՚ի պատմութիւն անդր և զպատճառսն հիւսեսցեն և զժամն, տեսցեն ոչ ՚ի խոհականութենէ ինչ պատահեալ զբանն, այլ յարկածէ իմեմնէ, զարտմտութիւն զարքային և զարբեցութիւնն ածեալ բարուր աղէտից օրահասին Կղիտեայ: Եւ պատահար լինէր բանին օրինակ զայս:

Արք ոմանք հասեալ 'ի ծովէ և մրգբերեալ արքային հելլենացի, նա զարմացեալ ընդ գեղն նոյա և ընդ գալարութիւնն, առաքեաց կոչեաց զԿղիտոս յուցանել նմա և բաժանորդ մրգացն առնել զնա: Կայր յայնժամ Կղիտոս պատրաստեալ 'ի զոհ. եթող զզոհն և չոքաւ առ արքայ. և զհետ իւր առեալ բերէր երիս յոչխարաց անտի՝ յոյց վերայ հեղեալ իսկ էր ձօն նուիրացն: Զայն լուեալ Աղեքսանդրի, 'ի վեր զբանն հանէր գուշակացն Արիստանդրեայ և Կղէոմենեայ Լակոնացւոյ. իբրև նոքա վատախոտր ասացին ըզբանն, հրաման տայր վաղվաղակի զոհ զոհել վասն Կղիտեայ. քանզի և ինքնին Աղեքսանդրոս երեք աւուրբք յառաջ տեսիլ տխուր տեսանէր 'ի քուն, իբրու 'ի 'ի թուխս համակեալ Կղիտոսի՝ նստել ընդ որդւոցն Պարմենիոնի ընդ մեռելոցն: Բայց Կղիտոսի մինչև կատարեալ զզոհ իւր՝ չոքաւ արագ յընթրիսն մինչդեռ արքայն զոհ յաղեալ էր Դիոսկուրեանցն: Իբրև 'ի գինեբբուս մոլին անխնայ, անդանօր նուագք 'ի մէջ առնուլին տաղից Պրանիքոսի ուրումն (կամ որպէս կէսք ասեն՝ Պիերիոնի) յանհարութիւն և 'ի խաղ զօրավարացն՝ որ սակաւ մի յառաջ նկուն եղեալ պարտեցան 'ի բարբարոսաց անտի. իսկ յայնժամ ծերունիք դժգմնեալք ընդ բանն, եպերէին միանգամայն և զքերթողն և զնուագածուն. բայց Աղեքսանդրոս և այլք 'ի մտերմացն մատղաշագոյնս ունկն

եդեալ՝ ստիպէին եւ զնուագածուն յառաջ վարել:

Իսկ Կղիտոս յայնժամ՝ զոյր եւ զակամբ նորա եկեալ իսկ էր գինին, եւ անդստին 'ի բնութենէն այր խիստ եւ խրոխտ՝ մեծապէս սրտմտեալ ասէր. ընաւ իսկ անճահ է անդանօր 'ի մէջ բարբարոսացն եւ թշնամեացն՝ տանջար Մակեդոնացւոցն լինել, որք հախողակի հանդիպեալ բախտի՝ քաջագոյնք եւս գտան արդեօք դոքա քան զայսպանողսն ինքնին զլխովին: Իբրեւ Աղեքսանդրոս ասէր, եթէ Կղիտոս զիւրոյ անձին դատն վարէ՝ բաղդ հախողակ զվատասրտութիւնն կարդալով, 'ի վեր վազեաց Կղիտոս եւ ասէ. "Այլ դա այդ վատասրտութիւն ապրեցոյց զքեզ, յորժամ դու ինքնին ձեռդ աստուածոց՝ թիկունս դարձուցեր առ 'ի սրոյն Սպիթրիդատեայ: Եւ դու միայն յարիւն ապաժոյժ Մակեդոնացւոյդ եւ 'ի վէրս դոցա՝ այդչափ մեծացար աւադիկ, զի եւ յանձին չկալար զփիլիպպոս. ժտեցար Ամմոնին զաւակ համբաւել զքեզ,,: 'Ի խոր 'ի բանից սաստի խոցեալ Աղեքսանդրոս, ասէ. "Քո՛ ուրեմն՝ ո՛յ չարագլուխ՝ այդպէս հանապազօր զմէնջ բարբանջեալ, եւ 'ի Մակեդոնացիսն խռով հարեալ, կարծիցե՞ս թերեւս խրախ լինել,,: Եւ պատասխանի Կղիտոս. "Այլ եւ ոչ զարդիս ո՞վ Աղեքսանդրէ չեմք ինչ խրախ, զայսպիսի տարեալ մրցանակ զմերոց քրտանց: Նա՛ եւ երանի տամք նոցա՝ որ տապաստ անկան մինչչեւ տեսեալ զՄակեդոնացւոցն խոշ-

տանկել 'ի խարազանս Մարաց, և զմեզ ինքնին՝ պէտս ունել արանց Պարսից մուտ գտանել առ արքայ,, :

Յայսպխւեաց աստի ազատաբերան խօսեալ Կղիտոսի, դարձեալ և Աղեքսանդրի յարուցեալ և ընդդէմ յիշոցս արձակեալ նմա, անդանօր ծերունիք 'ի մէջ մտեալ դուն գործէին խաղաղել զվէգն: Բայց Աղեքսանդրոս 'ի Քսենոդոքոս կարդիացի կոչմն դարձեալ և յԱրտեմիոս Կողոփոննացի, ասէր. "Եւ ո՞չ արդեօք թուի ձեզ ձեմել Հելլենացւոցդ 'ի մէջ Մակեդոնացւոց՝ իբրև զկիսաստուածս ումանս 'ի մէջ գազանաց,, : Չհանդուրժեալ Կղիտոսի ստիպէր զԱղեքսանդր յայտնագոյն ևս մերկանալ զբանն, կամ թէ ոչ կոչել հրաւիրել յիւր ընթրիս զարս ազատս որ բաւականք իսկ իցեն ազատօրէն խօսել, այլ գըլնալ և կեալ ընդ բարբարոսս և ընդ գերւոյն, որ նորա երկրպագութիւն հարցեն պարսկական կամօրին և սպիտակափառ պատմուճանին: Ապա Աղեքսանդրոս ո՛չ ևս ժոյժ կալեալ ցասման բարկութեանն, խնձոր մի յափշտակեալ 'ի սեղանոյն՝ արձակէր ընդդէմ Կղիտոսի, և յուզէր խընդրէր զսուսերն. այլ քանզի զսուրն կանուխ 'ի բաց 'ի նմանէն տարեալ էր Արիստոփանէս մի 'ի թիկնապահացն, և այլք դարձեալ յողոք խոնարհէին առ նա, նա 'ի վեր վազեալ 'ի բազմոցէն ձայն բարձրագոչ բառնայր 'ի լեզու Մակեդոնացի. կարդայր զիւր սուրհանդակն (և նշանակ

էր այն անհնարին ամբոխից)․ հրաման տայր և փողարին տալ նշան․ իսկ անդ փողարին ժամավաճառ՝ ոչ կամելով տալ զնըշանն, բռնցի ծեծէր զնա Աղեքսանդրոս․ (իսկ այրն ապա գովեցաւ, զի մեծապէս զգօնացեալ չետ բանակին յայնժամ վեր ՚ի վայր շարժել)։

Բայց Կղիտոս պնդեալ տակաւին ՚ի Թըշնամանս՝ հազիւ ուրեմն բարեկամք զնա արտաքս հանէին քան զդահլիճն․ այլ նա ընդ դուրս այլ՝ միւսանգամ ՚ի ներքս խուժեալ, մեծապէս արհամարհանօք և ճոխաբար՝ առեալ արտասանէր զմեծավերջսն զայն զԱնդրոմաքեայն Եւրիպիդեայ․ “Բա՜բէ, յԵլլադա զիա՞րդ անբարի բարք„։ Յայնժամ ապա աճապարեալ Աղեքսանդրոս՝ կորզեալ զնիզակն ՚ի ձեռաց միոյ ուրուք ՚ի տիգաւորացն, մինչդեռ Կղիտոս ընդ առաջ վարեալ ձգէր ՚ի բաց զվարագոյր դրանն, հարեալ նիզակաւն տապալէր զնա։ Անդ տապաստ Կղիտոս վա՜յ արձակեալ և մռնչիւն տուեալ, մեռանէր։

Բայց Աղեքսանդրի անդէն զիջանէր զայրուց բարկութեանն, և ՚ի միտս իւր եկեալ և շուրջ զբարեկամսն անդանօր յակն արկեալ այնպէս ապուշ և ընդարմացեալ, փութացաւ ՚ի բաց զտէգն քարշեաց ՚ի դիականէն, և յիւրական ՚ի փողս արդեօք տարեալ հարկանէր զայրն, թէ ոչ արագ ՚ի զինակրացն արգելեալ, կալեալ նորա ըզձեռսն՝ այնպէս բռնի ՚ի ներքս ՚ի սենեակ անդր առեալ ածէին զնա։ Անդանօր ու֊

Ջոյն զցիշերն արտասուս աշխարհելիս Թափեալ Աղեքսանդրի, ողջոյն և զոխն, ապա 'ի վերջէ յուսալից ձայնիցն և 'ի կոծոյն և յաշխարհանացն վատեալ և նուաղեալ՝ այնպէս անկեալ կայր անմռունչ, միայն մեծամեծս արձակէր Թառաչս. յորմէ և բարեկամացն զանգիտեալ յանբարբառլռուԹենէն, ուժգին 'ի սենեակն մխեցան: Բայց նա այլոցն բանից միտ ոչ դնէր. իսկ յայնժամ Արիստանդրոս գուշակ յուշ նմա բերեալ միանգամայն և զսեռն նորա վասն Կղիտոսին և զվատախտար զնշանն, իբրու որ անդստին 'ի հարուստ ժամանակաց սահմանեալ օրահասին, Թուեցաւ վայր մի դիւրանալ: Ուստի և 'ի ներքս առեալ յայնժամ մուծանէին առ նա և զԿալլիսԹենէս իմաստասէր զմերձաւոր Արիստոտէլի, և զԱնաքսարքոս Աբդերացի. յորոց ԿալլիսԹենէս դուն գործէր քաղցրամոք և պարկեշտ և հնարիմաց վարեալ բանիւք, և հեշտ և բաղձալի դնացեալ, ողոքել հանդարտել զտագնապ ոգւոյն: Իսկ Անաքսարքոս՝ որ անդստին 'ի բնէ նա ուղի հորդեալ յիմաստասիրուԹե սեպհական անձին առանձին, զհամբաւի հարեալ էր իբրու որ զանց զընկերօքն ունչս արասցէ, այն ինչ մտեալ 'ի ներքս՝ ձայն բարձեալ ասէր. "Սա այս Աղեքսանդրոս իցէ, յոր զարդիս ակնկառոյց կան տիեզերք: Դա՛ աւադիկ գետնամած 'ի լացս իբրև զգերի զարհուրեալ իմն է յօրինաց և 'ի նախատանաց մարդկան. դա՝ որում օ-

րէնս արժան է լինել նոցա և սահման իրաւանց, եթէ արդեօք յաղթեաց դա առ 'ի թագ կապել և տիրանալ, և ոչ ծառայութիւն հարկանել՝ նկուն եղեալ 'ի ծաղկընկէց փառաց: Եւ չգիտիցե՞ս դու երբէք (յաւել Անակարքոս), զի աթոռակից իւր ունի Արամազդ՝ զԱրդարութիւն և զիրաւունս, յայտ արարեալ՝ եթէ ամենայն գործ Տիեզերակալի իրաւունք է և արդարութիւն ,,:

Յայսպիսեաց ասելի բանից՝ թէպէտ և դիւր վշտին առնէր արքային Անակարքոս, սակայն և զբարսն նորա մեղկագոյնս 'ի բազում ինչ և անիրաւագոյնս յարդարեաց: Եւ յայնժամ ասա սքանչելապէս շնորհս եգիտ նա առաջի նորա, և խորթ և խամ ընծայէր արքային զքաղաքավարութիւն Կալլիսթենեայ, և անախորժ առխստամբերութեանն: Եւ պատմեն՝ եթէ յընթրիս երբեմն զբանիւք անկեալ յաղագս եղանակաց և բարեխառնութեան օդոյն, և 'ի պնդել Կալլիսթենեայ զկարծիսն՝ եթէ քան յԵլլադա՝ անդանօր ցուրտ և դառնաշունչ ևս իցէ ձմեռն, բուռն ընդդէմ պայքարէր Անակարքոս. ապա ասէր առ նա Կալլիսթենէս. "Այլ սակայն և հարկ է քեզ խոստովանել, եթէ քան անդ՝ ցուրտ ևս է աստանօր. քանզի անդանօր դու ձմերէիր՝ արկեալ դրդլեակ մի. իսկ աստանօր՝ գորգս երիս արկեալ բազմիս ,,: 'Ի բանից աստի կարի զայրացաւ Անակարքոս. զնոյն և այլք յիմաստակացն

և 'ի մարդելոցն դժգմնեցան, տեսեալ զի այսպէս խնամով հարկանէին պատանիք կալլիսթենեայ 'ի սակս Ճարտարախօսութեանն. նոյն և արանց ծերունեաց սիրելի էր նա 'ի քաղաքավարութեանն անտի կենացն 'ի պերճ և 'ի պարկեշտ և սակաւապէտ. զի և անշուշտ հաւատարմացուցանել կայլիսթենեայ զպատճառ զուգիորութեանն իւրոյ յայնժամ՝ զոր համբաւէին, դալ նմա առ Աղեքսանդրոս՝ զի հնարիւք 'ի հայրենիսն անդրէն ածցէ զիւր քաղաքացիսն, և միւսանգամ շէն գործեսցէ զհայրենի զքաղաքն:

Զայս օրինակ ապա առեալ եղեալ կայլիսթենէս առ 'ի համբաւոյն, առ այն՝ և անձամբ անձին զարթոյց զամբաստանսն. քանզի բազում անգամ հրաժարէր 'ի հրաւիրանաց ընթրեացն Աղեքսանդրի. և թէ երբէք երթայր՝ պերճութեամբն և անմռունչ լռութեամբն ցուցանէր ոչ գովել և ո՛չ հաճել ընդ եղեալսն. որպէս զի և Աղեքսանդրոս ինքնին ասէր վասն նորա. "Ատեամ զիմաստակն զայն՝ որ ոչն իմաստնանայ յանձին իւրում": Եւ պատմեն՝ յընթրել երբեմն կալլիսթենեայ ընդ Աղեքսանդրի 'ի բազմամարդով ակմբի, առեալ 'ի ձեռն զբաժակն՝ 'ի ստիպել զնա 'ի գովութիւն զՄակեդոնացւոն առնուլ, այնչափ իմն պերճաբանեաց Ճարտար, զի և յառնել բազմականացն և ծափ զծափի հարեալ՝ պսակաց բոլորս 'ի նա թափել: Իսկ Աղեքսանդրոս ասէր՝ եթէ ըստ Եւրի-

պիղեայ, Որ բանիցն իւրոց առնու. "Նիւթս գեղեցիկս, գործ մեծ չէ պերճաբանել,,: Եւ յաւել Աղեքսանդրոս. "Այլ 'ի դէմս բերցես դու մեզ զքաջութիւն քո, պարսաւ ընդդէմ կարգելով Մակեդոնացւոց, զի խելամուտք իւրեանց սխալանաց՝ 'ի լաւագոյնս դարձցին,,: Եւ պատմեն եթէ դարձեալ դարձուցեալ նա զնուագ բանիցն, շատ ինչ համարձակ աղարտեաց ըզՄակեդոնացիսն. և ցուցեալ՝ եթէ հելլենացւոցն աղմուկ ինքնին բարդաւաճ և հարուստ յարդարեաց զՓիլիպպոս, յայն յանդեաց զբանն, եթէ "Յաղմուկս՝ փառս որսալ բնաւորեցաւ և այր եղեռնաւոր,,: Այր աղաղաւ սաստիկ ատելութիւն և ոխերիմ յուզեցաւ առ Մակեդոնացիս ընդդէմ առն. և Աղեքսանդրոս ասէր՝ եթէ Կալլիսթենէս ոչ եթէ զճարտարաբանութեանն իւրոյ զարուեստ մեզ 'ի դէմս եբեր, այլ զատելութեանն առ Մակեդոնացիս:

Եւ պատմէ Հերմիպպոս, եթէ զայս ամենայն Ստրիբոս վերծանող Կալլիսթենեայ գնացեալ պատմեաց յունկն Արիստոտէլի. և թէ՝ Կալլիսթենէս ինքնին խելամուտ եղեալ ուծանալոյ 'ի նմանէ արքային, երկիցս և երիցս՝ 'ի մեկնել իւրում յարքայէն, ասէր ցանձն իւր. "Մեռաւ և Պատրոկղոս, որ յոյժ առաւել էր քան զքեզ,,: Եւ թուի՝ յոյժ ճահողակի խօսել Արիստոտէլի յասել անդ իւրում՝ եթէ ճարտարաբան յոյժ էր Կալլիսթենէս,

այլ անմիտ էր. որ ուժգին և իմաստասիրաբար ընդ վայր հարեալ զերկրպագութիւնն (առ Աղեքսանդրոս). և ինքն միայն հրապարակագոյժ արարեալ զայն ինչ զոր գաղտնի շշնջէին սրտնեալք՝ ամենայն լաւորեարն և ծերունիք Մակեդոնացւոց, թէպէտ և կանխեաց կալաւ զհելլենացիս 'ի մեծէ անարգութենէն, և զԱղեքսանդրոս ինքնին 'ի մեծագունէն՝ աղարտելով զերկրպագութիւնն զայն, սակայն և միանգամայն յարիէն հատանէր զանձն. քանզի թուի թէ՝ 'ի բանին յայնմիկ բուռն առաւել արար արքային, քան եթէ հաւանեցոյց: Եւ պատմէ մեզ Քարէս Միտիւլենացի, եթէ 'ի կոչունս ուրեք Աղեքսանդրոս արբեալ նախ ինքն 'ի բաժակէն, տայր միում 'ի բարեկամացն. իսկ նա 'ի ձեռին զբաժակն առեալ յարեաւ կանգնեցաւ 'ի կրակետղն կոյս և արբեալ և ինքն, երկիր եպագ արքայի և ապա եկեալ համբուրեաց զնա և բազմեցաւ անդրէն 'ի սեղան. զնոյն ըստ նմանէ արարեալ և այլոցն, 'ի վերջէ առնոյր և Կալլիսթենէս զբաժակն. և արբեալ՝ մինչդեռ անդ միտ չեդեալ նմա արքայն խօսէր ընդ Եփեստիոնի, չոքաւ ապա և ինքն 'ի համբոյր արքայի. բայց անդ Դեմետրիոս մականուանեալն Փիդոն՝ ասէր, "Մի՛ զդա համբուրեսցես արքայ, զի դա միայն երկիր չեպագ քեզ,,. և հրաժարեալ Աղեքսանդրոս 'ի համբուրիցն, ձայն բարձեալ յայնժամ Կալլիսթենէս ասէր. "իսկ ապա ես զարդիս 'ի

բա՞ց գնացից վոխպեալ միանգամայն 'ի համբուրից աստի,, :

Զայս օրինակ ապա 'ի նմանէ ուծացեալ, առաջին Եփեստիոնի ընծայեցին հաւատս՝ որ վկայէր զԿալլիսթենեայ խոստանալ զերկրպագութիւն արքային, և դրժեաց խոստմանն. բայց ապա և Լիւսիմաքոսք և Ագնոնք ամբաստան լինէին զնմանէ՝ եթէ դա այդ իմաստակ շուրջ գայ ճոխաբար պերճութեամբ իբրու որ ինքն առաթուր զբռնակալութիւնն հարեալ իցէ. և զի՛ առ նա ընթանան խռնին պատանիք և զդովաւ պատեն իբրու որ միայն ազատ այր իցէ 'ի բիւրաւորս մարդկան: Ուստի և 'ի նշաւակել դաւանացն Երմողայոսի ընդդէմ Աղեքսանդրի, թուէր իմն այնպէս ամբաստանից Կալլիսթենեայ դատախազութիւն 'ի ներքս բերել ոչինչ անհաւանական՝ 'ի վկայել անդ նոցա, եթէ 'ի հարցանել Երմողայոսի ցԿալլիսթենէս՝ թէ իւիք արդեօք մարթ իցի նա այր լինել գերահռչակ, ետ պատասխանի Կալլիսթենէս. 'ի մահ զգերահռչակն մատնելով. և յայն եղեւն խրախոյս ետ Երմողայոսի. մի՛ ինչ երկնչել յոսկեհանդերձ անկողնոյն, այլ զմտաւ ածել՝ ընդհարկանել յայր որ խօթութեանց ներքոյ դրաւեալ կայցէ և վիրաց: Սակայն և ոչ ոք 'ի դաւադրաց անտի դաշնաւորացն Երմողեայ՝ և ո՛չ 'ի կտտանս անգամ անհնարինս՝ երբեք վկայեցին ինչ ընդդէմ Կալլիսթենեայ: Եւ Աղեքսանդրոս ինքնին գրեալ ապա փաղփաղակի առ

Կրատերոս և առ Ատտաղոս և առ Աղկեդաս, ասէ՝ եթէ պատանիք հարցափորձեալք 'ի խոշտանգանս խոստովան եղեն զխմրդ անձամբ անձին յայն եղեռն մտաբերել, և այլ ոք ամենևին իրազեկ չէր ։

Բայց յետ այսորիկ ապա գրեալ և առ Անտիպատրոս և մեղադիր ևս Կալլիսթենեայ եղեալ, ասէր ․ “Պատանիքն քարակոշկոծ 'ի Մակեդոնացւոց եղեն, այլ իմաստակիդ ես ինքնին ածեմ պատուհաս, զնոյն և որոց արձակեցինն զնա առ իս ․ և ոյք դարձեալ 'ի քաղաքս առեալ ժողովեցեն զդաւաճանս անձին իմոյ„ ։ Որով և յայտնի առնէր Աղեքսանդրոս զկիրս հոգւոյն առ Արիստոտէլ ։ Քանզի առ Արիստոտէլի սնեալ դաստիարակեցաւ Կալլիսթենէս 'ի սակս ազգականութեանն՝ որդի գոլով Հերեայ դստեր քեռն Արիստոտէլի ։ Արդ կէսք ասեն Կալլիսթենեայ 'ի կախաղան ելանել հրամանաւ Աղեքսանդրի ․ և կէսք դարձեալ՝ արկանել 'ի կոճեղս և խօթանալ ։ Իսկ Քարէս պատմէ՝ ձերբակալ եղեալ 'ի դիպահոջ կալ նմա 'ի կալանս զամիսս եօթն ․ զի ապա վարեսցեն զնա յատեան ժողովոյ յանդիման նորուն իսկ Արիստոտէլի ․ բայց նա 'ի նոյն աւուրս՝ յորս Աղեքսանդրոս մարտ եդել 'ի հնդիկս ընդդէմ Մաղացւոց Ոքսիդրակեանց՝ վիրաւորեցաւ, մեռանէր յայնժամ Կալլիսթենէս 'ի թանձրամարմնութենէն և յորդնեաց ախտէն ։ Բայց այդոցիկ յետոյ ուրեմն դէպք եղեն ։

Արդ Դեմարատոս Կորնթացի անցեալ
յոյժ զաւուրբք՝ պատուասիրեաց յառնել
գալ առ Աղեքսանդրոս. իբրև ետես զնա՝
ասէր ծերունին, 'ի մեծէ հեշտութենէ
վրէպ գտան Հելլենացիք որք միանգամ
մեռան մինչև տեսեալ զԱղեքսանդրոս 'ի
գահ բազմեալ Դարեհի: Բայց այս Դե-
մարատոս ոչ հարուստ ինչ ժամանակ վայե-
լեաց 'ի խնամս մտերմութեանն արքայի.
քանզի հիւանդացաւ և մեռաւ, և թաղումն
առնոյր հոյակապ. և զօրականք շիրիմ ամ-
բարձին նմա մեծաշրջանակ՝ ութսնականդ-
նեան բարձրութեամբ. առ այս՝ և նշխարք
նորա բարձեալ տարան մինչև 'ի ծով անդր
'ի քառաձիս շքեղ զարդարեալ:

Յետ այսորիկ հանդերձեալ Աղեքսան-
դրի անցանել խաղալ 'ի Հնդիկս, տեսեալ
զբանակ զօրուն ծանրաբեռնս 'ի մթերից
աւարացն և դժուարաքայլս, ինքն 'ի ծա-
գել առաւօտուն 'ի պատրաստել աղխին՝
առաջին հուր իւրովք ձեռօքն արկանէր
յիւր աղխն և 'ի բարեկամացն. ապա հրա-
ման տայր հրկիզութեան աղխին և այլոց
Մակեդոնացւոցն: Իսկ խորհուրդ գործոյն
դժուարին ևս թուեցաւ և դժնդակ՝ քան
զգործն ինքնին գլխովին. քանզի նուա-
զունք ոմանք դժկամակք գտան. և բազումք
անդանօր գեղեցիկ մոլութեամբ ձայն մե-
ծագոչ բարձեալ և աղաղակ ցնծութեան,
յորժամ կարևորացն հաղորդս զկարօ-
տեալսն արարին, ապա հուր հարեալ յա-
ճիւն դարձուցին զաւելորդսն. ոյր աղա-

դաւ և զուարթութեամբ և աշխուժիւք լի՛ լինէր Աղեքսանդրոս ։ Սակայն և առաջին յայնժամ և անողոքելի եկաց նա պատուհասակոծ յանցաւորացն. քանզի սպան զՄենանդրոս զոմն յիւրոց ընտանեացն, զի հեստեաց նա կալ իշխան պահպան գընդին՝ յոր կարգեաց զնա. Ինքնին նա նետահար առնէր և զՕրոդատէս 'ի բարբարոսաց անտի յապստամբացն ։

Իսկ 'ի ժամանակին յայնմիկ դէպ լինէր ուրեք ոչխարի ծնանել գառն՝ ձև և գոյն զարտախուրակի առ գլխովն ունելով, և սատի անտի կախեալ ամորձիս երկու. պժգացեալ ընդ հրէշն Աղեքսանդրի՝ տայր քաւութիւն առնել Բաբելացւոցն, զորս նմին իրի ածեալ խաղացուցանէր ընդ իւր ըստ սովորութեանն. և ասէր առ բարեկամս իւր, չեմ ես սրտաբեկ վասն իմ, այլ վասն ձեր. զանդիտեալ եթէ Քաջն Ինքնին 'ի վախճանել իմում, 'ի ձեռս զօրութիւնն տացէ անազգի և անարի առն ։ Սակայն և նշան այլ բարի պատահեալ յետ այնորիկ դիւրէր տխրութեան ոգւոյն ։ Քանզի ոստիկան անկողնարկացն այր Մակեդոնացի Պրոքսենոս անուն, պեղեալ զվայրն ուր խորան հանդերձեալ էր հարկանել արքայի մօտ 'ի գետն Ովքսոս, գտանէր աղբիւր հեղանիւթոյ ճարպաւոր և պարարտ, յորմէ՝ պարզեալ զառաջինն զայն՝ բղխէր ապա իւղ սուրբ և ջինջ հոտով և համով ոչինչ ընդհատ 'ի ձիթոյ, և բնաւ իսկ հանդոյն յստակութեամբն և

պարարտութեամբն. և այն զի և ոչ ձի-
թենի բերէ աշխարհն այն։ Այլ պատ-
մեն՝ և ջրոյն Ովքսոսի գլխովին կակուղ լի-
նել, զի և մորթոյ լուանալեացն 'ի նմա
Հարկանալ։ Բայց Աղեքսանդրոս մեծա-
պէս խնդացեալ իմն էր վասն բանին, որ-
պէս և յայտնի իսկ մերկացուանա 'ի թուղթն
իւր առ Անտիպատրոս. յորում զայն նը-
շան կարգէ նա առ մեծամեծ պարգևսն
աստուածատուրս։ Իսկ գուշակք ամէին
զայն նշան ազգարար փառաւոր արշաւա-
նին, բայց և դժուարաքիրուն. քանզի և է
իսկ իւղն տուեալ մարդկան առ 'ի յԱս-
տուծոյ 'ի սփոփանս վաստակոց քրտանց։

Եւ արդեօք բազում ինչ վտանգեցաւ
նա յայնժամ 'ի մարտս պատերազմաց, և
մեծամեծս վիրաւորեցաւ 'ի դիմագրաւ-
նահատակութեանն։ Առ այս և զօրն յոյժ
տաղտկացաւ առ կարօտութեան պարե-
նին և յօդոցն անբարեխառնութէ։ Բայց
նա պատուասիրեալ արութեամբ նկուն
զբաղդն առնել, և քաջութեամբ և առաքի-
նութեամբ զմարդկան զօրութիւն, հաս-
տատեալ էր՝ եթէ անվանելի չիք ինչ ա-
ռաջի քաջասիրտ որերոյն, և ամուր ան-
խար չիք առաջի կորովեաց։ Եւ պատմեն՝
եթէ 'ի պատել պաշարել նորա զվէմն Սի-
սիմեթրեայ զառապար և զանմատոյց և 'ի
վհատել զօրականին, հարցանէր ցՈքսիար-
տէս՝ քանի՞ սրտեայ իցէ Սիսիմեթրէս. և
պատասխանի տուեալ Ոքսիարտէս՝ եթէ
վատասիրտ ևս է քան զամենայն մարդ, ա-

սէ Աղեքսանդրոս. «Աստ դու ուրեմն դիւրաւին մեզ զմեմդ, զի չէ հզօր պահապան դորա»: Քանզի և ահարեկ յայնժամ արարեալ զՍխմեթրէս՝ առնոյր զամուրսն:

Ապա և յայլ ամրոց անմատոյց դուռոյթս 'ի վերայ տուեալ պատանեացն Մակեդոնացւոց, անդանօր Աղեքսանդրոս դարձեալ առ մի ոմն 'ի նոցանէն անուն Աղեքսանդր, ասէր. «Այլ քեզ արդեօք 'ի դէպ իցէ նահատակել արութեամբ և 'ի պատճառս անուանդ»: և արդեօք պատանին մեծապէս արութեամբ մղեալ և տապաստ անկեալ՝ ոչինչ դուզնաքեայ ցաւեաց Աղեքսանդրի: Իսկ յետ այնորիկ վարանեալ Մակեդոնացւոց խաղալ անկանել 'ի վերայ Նիւսեայ (քանզի նորա 'ի հանդիպոյ գնայր գետ բազմախոր), անդ առ ափամբն արձանացեալ Աղեքսանդրի, ասէր. «Ես զի՞նչ ապա անարիս ես չգիտիցեմ 'ի լուղ անկանել»: և այնպէս վահան զանձամբ՝ պատրաստեցաւ անցանել:

Ապա 'ի հանդիստ տալ զօրուն 'ի մարտէն. գային հասանէին առ նա դեսպանք 'ի քաղաքացն պաշարելոց աղաչել զնա: Իբրև նոքա գամ մի յակն արկին զնա զինու զարդու այնպէս անշուք՝ հիացեալ զարմանային: Ապա ակումբ մի ածեալ առ նա, և հրաւիրեալ Աղեքսանդրի զհինօրեայն դեսպանացն Ակուփիս անուն՝ առնուլ զակումբն և բազմել. զարմացեալ Ակուփիս ընդ գեղեցիկ հիւրամեծարու_

թիւնն, հարցանէր Աղեքսանդրի՝ զիա՞րդ արդեօք կատարեալ նոցա զկամս նորա՝ լինել նմա բարեկամս, ասէ Աղեքսանդր. « Եթէ զքեզ ինքն իշխան կարգեսցեն և առեալ արձակեսցեն առ մեզ հարիւր մարդ 'ի լաւ որերոյն »: Ծիծաղեցաւ Ակուփիս և ասէ. « Այլ ես քա՛ջ ևս իշխանացայց ո՛վ արքայ՝ արձակելով առ քեզ մանաւանդ 'ի վատ որերոյն, քան եթէ 'ի լաւացն »:

Եւ պատմեն՝ եթէ անդանօր 'ի Հնդիկս Տաքսիղէս գրաւեալ ունէր աշխարհ լայնածաւալ ոչինչ պակաս քան զԵգիպտոսին, պարարտարօտ և մրգաւէտ յոյժ և քաջարեղուն: Եւ էր Տաքսիղէս այր հանճարեղ, որ և գնացեալ յողջոյն Աղեքսանդրի, ասէր. « Զի՞նչ մարտից պատերազմաց պէտք ինչ իցեն մեզ ընդ միմեանս ո՛վ Աղեքսանդրէ, եթէ չիցես դու հասեալ այսր բառնալ 'ի մէնջ զջուր և զկարևոր պարէնն, որց աղագաւ միայն արժան է մտաւոր մարդկանն մարտ դնել կռուել: Իսկ յաղագս այլոց գոյից և ստացուածոց զոր ասեն, եթէ իմ ինչ մի առաւել է քան զքոյդ, մտադիւրագոյնս ընձեռեցից. ապա եթէ նուազ՝ ես ոչինչ խորշիմ շնորհս ունել՝ եթէ ընձեռեսցես »: Յոյժ խնդաց Աղեքսանդրոս, և գիրկս Տաքսիղեայ ածեալ՝ ասէր. « Կարծիցե՞ս թերևս, եթէ կենակցութեան մեր այս՝ յայսպիսեաց բանից և 'ի մտերմութեանց անպատերազմ վճարեսցին ելք: Այլ ոչինչ յաջողեսցի

քեզ: Քանզի 'ի վէգ ընդ քեզ եկեալ կռուեցայց 'ի վերայ շնորհացն. զի մի դու ինձ յաղթեսցես լիաբաշխ առատութբ ,, : Ապա ձիոս բազում ընծայից ընկալեալ առ 'ի նմանէ, և առաւելագոյն ևս տուեալ նմա, 'ի վերջէ և քանքարս հազար դահեկանի պարգևեաց նմա: Թէպէտ և ընդ բանն դժկամակ եղեն բարեկամք, սակայն ամենքս առաւել յանդուգանէր նա զբազում 'ի բարբարոսացն:

Բայց 'ի ժամանակին յայնմիկ 'ի Հնդկաց անտի 'ի քաջամարտկաց գնացեալ 'ի զինուորութիւն 'ի քաղաքս քաղաքս՝ որ թոշակ կարգեցին նոցա. և քաջապէս արութեամբ կռուեալ 'ի վերայ քաղաքացն և զեան շատ հասուցեալ Աղեքսանդրի, ինքն 'ի միում 'ի քաղաքաց անտի դաշն կռեաց խաղաղութեան ընդ նոսա. իսկ յուղւոջ 'ի չուել նոցա ձերբակալ զնոսա արարեալ առհասարակ կոտորէր: Եւ այս բան ապա գոգցես աղարտեաց զայլ ինչ մրցանս նահատակութեանց նորա՝ յորս ողջոյն անարատ կրօնաւորեցաւ նա և արքայօրէն: Ոչ ինչ պակաս վէշտ կրեաց նա և յիմաստասիրաց անտի նոցա, որ բամբասեալք խօսէին զթագաւորսն որ գնացեալ խմբեցան ը Աղեքսանդրի, և ընդդէմ դրդէին նոցա զժողովուրդսն ազատս. որ աղագաւ զբազումս և 'ի սոցանէն եհան նա 'ի կախաղան:

Իսկ թէ զիարդ վճարեցան ապա իրք 'ի մարտին ընդդէմ Պովրոսի, ինքնին Աղեքսանդր գրեաց 'ի նամականին իւր: Քանզի

տաէ, եթէ ընդ մէջ երկուց բանակացն գնացեալ գետոյն Խեդասպայ, 'ի հանդիպոյ յայնկոյս գետոյն կարգեալ արձանացուցեալ էր Պովրոս զերամակս փղացն, մեծապէս պահ զգուշութեան կալեալ անցիցն. իսկ ինքն յայսկոյս՝ հանապազօր խուռն բանակին շառաչիւնս մեծամեծս և բոմբիւնս և ամբոխս յուզէր՝ սովորեցուցանել զնուրան անզարհուրելի մնալ 'ի բարբառոյ անտի: Եւ գրէ դարձեալ՝ եթէ 'ի գիշերի միում մրրկայոյզ ձմերայնոյ և անլուսին՝ առեալ ինքն ընդ իւր մասն մի զհետևակացն և զընտիր ընտիր զայրուձիոյն, և հարուստ միջօցաւ 'ի բաց երկայնեալ 'ի թշնամեացն, անցանէր 'ի կղզի մի. և հասեալ անդր՝ տեղատարափ լինէր անձրևոյ, և փայլատակունք հատանէին և կայծակունք շանթէին 'ի զօրականին. և թէպէտ և զբազումս 'ի նոցանէն տեսեալ անձինացեալ և հարեալ 'ի շանթիցն, չու արարեալ 'ի կղզւոյն՝ գնայր դէմ եդեալ յայնկոյս յափն, 'ի վայրն՝ ուր Խեդասպէ առ 'ի տեղատարափ մրրկէն լցեալ դարիւ և դարիւ՝ խրամատ գործեալ ահագին, և անդր վազեալ բազմակոհակ խաղայքն հոսանք. և ինքն եկեալ հասանէր յափն 'ի միջակի խրամատին՝ 'ի դժնդակ կոռուան ոտից 'ի լպիրծ և 'ի խորխորեալ գետնոյն: Եւ պատմեն՝ ասել յայնժամ Աղեքսանդրի զբանն. "Ո՛վ Աթենացիք կարծիցէ՞ք թերևս քանի՞ մեծամեծ մասնիմ վտանգաց, առնուլ 'ի ձէնջ ներբողս": Բայց

զայս Ոնեսիկրիտոս պատմէ: Իսկ Աղեքսանդրոս ասէ, եթէ ինքն և որք ընդ նմա թողեալ անդանօր զլաստան՝ անցանէին զինուք ընդ խրամատն մխեալ 'ի ջուր մինչև յստինսն: Եւ անցեալ խաղայր ինքն այրուձիովն ասպարէզս քսան յառաջացեալ քան զհետևակն. զմտաւ ածէր՝ զի թէ այրուձին թշնամեաց խաղասցէ ընդդէմ, ինքն քաջ ևս նահատակեսցի. ապա եթէ հետևակազօրն, հասցեն նմա 'ի թիկունս 'ի ժամանակի հետևակք նորա: Բայց դէպ առաջնոյն լինէր, քանզի 'ի վերայ անկեալ նորա հազար այրուձի և կառք վաթսուն, եհար վանեաց և կալաւ ողջոյն զկառսն, և ոգիս չորեքհարիւր տապաստ արկանէր յայրուձիոյն նոցա:

Ապա լուր առեալ Պովրոսի զանցանելոյն Աղեքսանդրի, խաղայր ընդդէմ նորա ամենայն բազմութեամբն. թողոյր և առ գետովն գունդ խոշ ընդ ռան արգելուլ զանցս զայլոցն Մակեդոնացւոց: Իսկ յերամակէ անտի փղացն զանգիտեալ Աղեքսանդրոս և յամբաւ խուժանէն, խաղաց դիմեաց ինքն 'ի ձախոյ թև անդր, և պատուէր տայր այլոցն միանգամայն անկանել և 'ի վերայ աջոյն: Եւ այնպէս յերկաքանչիւր 'ի թևսն վատթարեալ Պովրոսեանց, վերջոնեալ տեղի տային յերամակս փղղացն. իբրև անդր առհասարակ խմբեցան և 'ի դիմի հարան, խառնուրդ անհնարին լինէր մարտին. և հազիւ ութեմն 'ի նմին վայրի յութերորդ ժամուն տեղի ետուն

Թշնամիք ։ Եւ զայսոսիկ պատմէ մեզ 'ի նամակսն ինքնին նա՝ որ զմարտն զայն մղեաց ։ Իսկ մատենագիրք բազմագոյն մասամբ միաբան ասեն , զի չորեք կանգնաւ և Թզաւ բարձր էր հասակաւ Պոռոս՝ 'ի չափ առն հեծելոյ . և զի՝ յաղթ և հաստի մարմնոյն 'ի ճահ գեղեցիկ յարմարէր իւրում փղին՝ Թէպէտ և ահագին յոյժ էր գազանն . և այն գազան 'ի մարտին սքանչելապէս իմն զգօնացեալ խնամ մեծապէս տանէր իւրում արքային . քանզի ցորչափ վերելեակն քաջութեամբ նահատակէր , մեծաւ արութեամբ 'ի դիմի հարաւ և ինքն ախոյենիցն և վարաթարէր զնոսա . Իսկ իբրև զգաց զի 'ի տարափոյ նետիցն և 'ի վիրացն նուաղեալ պարտասէր՝ զանգիտեալ եԹէ 'ի Թիկանցն 'ի վայր Թաւալգլոր եղիցի Պոռոս , 'ի գուճս եկեալ տակաւ և յուշիկ գնայր ընդ գետին , և ապա հանդարտիկ մի առ մի զփքինան կալեալ պատճոյն՝ 'ի դուրս 'ի մարմնոյն քարշէր ։

Արդ յայնժամ այնպէս ձերբակալ եղեալ Պոռոս՝ հարցանէր զնա Աղեքսանդրոս , զիա՞րդ և ո՞րպէս վարել ընդ նմա . եւ պատասխանի Պոռոս . Արքայօրէն ։ Իբրև կրկնեաց Աղեքսանդր՝ ասել և այլ ինչ , ասէ Պոռոս . “ Ամենայնն բոլորեալ կայ յԱրքայօրէնն„ ։ Ապա Աղեքսանդրոս ոչ միայն Թողոյր նմա իշխել յարքայուԹեանն՝ յանուն նախարարի , այլ և յաւելոյր նմա և այլ գաւառ նուաճեալ նմա և ժողովուրդ ինքնուրոյն օրինօք . յորում ասեն՝

հնդեստան լինել ազգաց, և հինգհազար քաղաքաց մեծաց, և գեօղեան ամբաւ։ Յետ այսորիկ հասեալ կալաւ Աղեքսանդրոս և այլ աշխարհ երիցս մեծ քան զառաջինն. և նախարար 'ի նմա կարգէր զՓիլիպպոս զոմն՝ 'ի բարեկամաց անտի իւրոց։

Իսկ յետ կռուոյն ընդդէմ Պովրոսի մեռանէր և Ցլուգլուխն, ոչ անդէն՝ այլ զկնի 'ի դարմանել անդ զերիվարն՝ որպէս պատմեն բազումք՝ 'ի վերայ անտի իւրոց. բայց որպէս Ոնեսիկրիտոս ասէ՝ 'ի պատճառս ծերութեանն. զի և կարի վատեալ էր կենդանին 'ի բազում ճգանցն՝ երեսնամեայ գոլով 'ի մահուն։ 'Ի խոր խոցեցաւ Աղեքսանդրոս, ոչինչ տարօրինակ իբրու որ վրէպ 'ի կենակցէն իւրմէ կացեալ իցէ և 'ի բարեկամէն. և շինեալ քաղաք մօտ յՀիդասպէ՝ ուր մեռաւ՝ անուն կարդայր քաղաքին՝ Ցլուգլուխ։ Եւ ասեն՝ զերկեալ Աղեքսանդրի յայնժամ և 'ի բարակէն իւրմէ անուն Պերիտաս, զոր ինքնին սնուցեալ և սիրէր մեծապէս. շինեաց և այլ քաղաք համանուն նմա։ Եւ պատմէ զայս Սովտիոս լուեալ 'ի Պոտամոնէ Լեսբիացւոյ։

Բայց մարտ պատերազմին Պովրոսի վատեալ զՄակեդոնացիս, սրտաբեկ արար զնոսա, և խափանել յառաջ չառնուլին յանձն։ Քանզի և մեծավաստակ եղեն նոքա 'ի վանել ընկրկել զՊովրոս. և այն զի ճակատ ընդդէմ յարդարեաց նա նոցա քսան հազար միայն հետևակաց և երկու հազար այ-

րուծիոյ։ Ուստի և սաստիկ ընդդէմ դարձան Աղեքսանդրի, որ և ընդ Գանդէս դըլխովին շտապէր անցուցանել զնոսա։ Քանզի և լուր առին նոքա զլայնութեան գետոյն իբրև երեսուն և երկու ասպարիսաց, և զխորութեան՝ հարիւր դրկաց, և զի՝ ափունքն առհասարակ յորդեալ զեղուն յամբաւ խուժանէն զինուց և երիվարաց և փղաց երամակաց։ Քանզի հռչակ հարեալ պատմէին, անդանօր կալ արձանանալ Թագաւորաց Գանտարացւոց և Պրեսիացւոց, և սպասել նոցա ութ բիւր այրուձիով և քսան բիւրուք հետևակաց և ութ հազար կառօք և վեց հազար վառեալ երիվարիկ փղօք։ Եւ առաւելազանց արդեօք չէր զըրոյցն. քանզի և Անդրոկոտոս, որ անդանօր թագ կապեաց ոչ յետ բազմաց ինչ, պարգևեաց Սելևկոսի հինգ հարիւր 'ի փղաց. և խաղացուցեալ 'ի Հնդիկս բանակ վաթսուն բիւր զօրականին, ողջոյն գրաւեաց զաշխարհն։

Ապա յայնժամ Աղեքսանդրոս զառաջինն, առ զայրոյթ սրտին և 'ի խոր խոցեալ՝ չոքաւ փակեաց զանձն անկեալ 'ի խորանի անդ իւրում. և բողոք բառնայր՝ շնորհս Մակեդոնացւոց ունել և ոչինչ երբէք զամենայն նահատակութեանցն որ ցայնվայր, եթէ չանցանեն նոքա զԳանդէս. և զի՝ և առ պարտութիւն ունի ըզդարձն։ Իսկ իբրև յաղերս առ նա մատուցեալ բարեկամացն՝ յորդորակս ամոքս 'ի ներքս բերելով, յողոք և զօրականին առ

հասարակ խոնարհեալ առ նա գուժկուք և աղաղակաւ առ դուրս խորանին, 'ի վերջէ ուրեմն զկջեալ արքային՝ չու հրամայէր բանակին. սակայն և յառաջագոյն հնարխմաց մենքենայէր չար ինչ պատրողականս՝ որսալ անձին փառս: Քանզի տայր կազմել գործել զէնս առաւել յաղթս և մուրս երիվարաց և սանձս կուռս ծանունս քան զհասարակացն, և թողոյր անդէն զայն կազմածն, և սփռէր ես յայնցանէ այսր և անդր. կանգնէր անդ և բագինս դից, յորոց և 'ի պաշտօն՝ մինչև ցայսօր ժամանակի անցեալք զգետն՝ ընթանան գան Թագաւորք Պրեսիացւոց, և անդ զոհս զոհեն հելլենական: Իսկ Անդրոկոտտոս յայնժամ պատանեակ՝ ետես զԱղեքսանդր. և պատմեն՝ բազում անգամ զկնի ասել նմա, եթէ վայրիկ մի ես և ամենայնին տիրանայր Աղեքսանդր. քանզի և Թագաւոր ժամանակին ատելի և խոտեալ իսկ էր առ վատթարութեանն և վատասոհմիկ զարմին:

Ապա անտի չու արարեալ Աղեքսանդրի, և ցանկացեալ տեսանել զծովն՝ որ արտաքոյ, և կերտեալ նմին իւր նաւս բազումս զԹիավարաց և լաստս ևս կապեալ բազում, խաղայր գնայր վայրաբերեալ հեշտիկն ընդ հոսանս գետոյն: Սակայն ոչ ինչ յանդորրու յաջողէր նաւագնացութիւնն և անկոխ: Քանզի իջեալ նա 'ի քաղաքս և 'ի վերայ դիմեալ՝ հասանէր ունէր զամենայնն. բայց յայնժամ Մաղղացիք անուանեալքն՝ քաջամարտիկք յոյժ՝

որպէս ասեն՝ քան զամենայն Հնդիկս՝ փոքր միւս ևս և յոգի հարկանէին զԱղեքսանդրոս ։ Քանզի ուրէք 'ի Թափ տարափոյ նետից վարատեալ նորա զմարդիկն՝ որ կռուէին 'ի վերայ պարսպաց քաղաքին, ինքն առաջին նահատակեալ ելեալ 'ի պարիսպ անդր ընդ սանդուղսն, իբրև անդ խորտակեալ լինէր սանդուղքն և ինքն վէրս ընկալաւ նետաձիգ 'ի բարբարոսաց ոմանց 'ի ներքոյ առ պատուարին, յայնժամ Աղեքսանդրոս ամփոփեալ ժողովեալ զանձն՝ այնպէս կծկեալ 'ի վայր կոյս խոյանայր 'ի խուռն անդ թշնամեացն, և բուռ դիպաց կանգուն եկաց յոտին ։ Բայց 'ի սաւառնել անդ նորա 'ի բարձանց անտի այնպէս 'ի խօշխնչկահին զինուցն, Թուեցաւ իմն բարբարոսաց փայլակն հատանել 'ի նմանէ, և խօլական իմն ցնորից յառաջոյ մարմնոյն ընթանալ նմա. ուստի և զառաջինն զոտս արձակեալ յայսկոյս յայնկոյս փարատէին. բայց ապա տեսեալ զնա երկու միայն զինակրօք, դիմեցին 'ի վերայ. մինչ այս մինչ այն՝ իբրև 'ի սուր և 'ի գեղարդն խոցէին զնա ընդ զրահսն, և ինքն 'ի դիմի հարեալ մարտ եդեալ կռուէր, անդուստ մի ոմն 'ի բարբարոսացն վայր մի 'ի բացեայ կացեալ, նետ մի յաղեղանէն արձակէր հաստաձիգ և կորովի՝ և Թափ ընդ պատեան զրահիցն հարստէր զփքինն 'ի կողս անդր նորա մօտ յատինան ։ Նա 'ի սաստիկ հարուածոյն յետս կոյս վերջոցեալ կորացեալ անձամբ, անդուստ նե-

տաճիգն այր յարձակեալ անկանէր 'ի վե-
րայ մերկեալ զբարբարոսական վաղակա-
ւորն: Բայց Պեւկեստաս և Լիմնէոս աճա-
պարեալք անձնապահապետ արժանացան
'ի հանդիպոյ արքային, և երկոքին միան-
գամայն առեալք վէրս, անդ դիտապաստ
անկանէր Լիմնէոս. և Պեւկեստաս միայ-
նակ 'ի դիմի հարեալ, անդէն 'ի նոյն Ա-
ղէքսանդրոս հարեալ տապաստ արկանէր
զբարբարոսն:

Բայց և վէրս այլ առեալ բազում, և
հարուած ևս սանդխտոյան ընկալեալ 'ի
պարանոցին, այնպէս 'ի պատուարն յե-
ցեալ զմարմինն՝ կայր Աղէքսանդրոս ապի-
կար ափշեալ յառեալ զակն 'ի թշնամիս
անդր: Արագ արագ 'ի վերայ հասեալ
Մակեդոնացւոցն, շուրջ պատեալ զնա և
առեալ այնպէս ապուշ և անզգայ ածէին
'ի խորանն. և անդէն համբաւ 'ի բանակին
հարկանէր՝ եթէ մեռաւ Աղէքսանդրոս:
Ապա հազիւ ուրեմն և մեծաքիրտն եղեալք՝
առեալ կորէին զփքինն զփայտեայ. և ճիգն
ևս թափեալ՝ 'ի բաց առեալ 'ի նմանէն ըզ-
պատեան զրահիցն, ապա կորէին շուրջ՝
քարշել արտաքս զսայրն վարսեալ մինչև
յոսկրն. և ասեն՝ զլայնութիւն նորա երից
մատանց, և զերկայնութիւնն՝ չորից. իսկ
'ի գործ յայն դարմանոյն Աղէքսանդրոս
նուաղեալ սաստիկ՝ յոգւոց պարզել ապա-
տան լինէր. մինչև զսայրն քարշեալ՝ վայր
մի ոգի առեալ զօրանայր: Անձնապուր
յահագին վտանգէն եղեալ, բայց և

անկեալ փառեալ յուժոյն, և հարուստ ժամանակ դարման գեղեցիկ տարեալ նմա և ապաքինութիւն, այն ինչ արտաքոյ զաղմուկն լսէր զՄակեդոնացւոցն՝ զանձուկ սիրոյն 'ի տեսանել զնա, ինքնին արկեալ զպատմուճանն՝ ելանէր արտաքս 'ի խորանէն. ապա զոհ յաղեալ դից՝ անդրէն ամբարձեալ 'ի նաւ կատարէր զուղին, և հասեալ գրաւէր հարուստ մի 'ի գաւառէն, և քաղաքս մեծամեծս։

Ապա յետ այնորիկ ձերբակալ առնէր 'ի Մերկիմաստակաց անտի 9, ոգիս տասն. որք և գրգռեցին իսկ նոքա մանաւանդ ըզՍաբբաս յապստամբութիւն, և տուգանս ևս չատ հասուցին Մակեդոնացւոց. և քանզի զհամբաւի հարեալ էին սոքա իբրև կորովիք և ճարտարախօսք 'ի պատասխանիս և համառօտաբանք, խնդիրս ինն ապա բազմավարանս առաջի մատուցանէր նոցա Աղէքսանդրոս, սպառնացեալ մահու մատնել առաջին 'ի նոցանէն զայլսն՝ որ անճահ տացէ պատասխանի, և ապա ըստ նմանէն և զայլսն առհասարակ. և հրաման տայր միում ումեք 'ի նոցանէն դատաստան առնել՝ որ հինաւուրցն էր 'ի նոսա։ Ապա հարցեալ զառաջինն. '' Արդեօք զկենդանի՞ս համարեսցէ բազմագոյնս, եթէ զմեռեալս ,,. ասէ. '' Զկենդանիս, զի ոչ ևս են 'ի միջի մեռեալք ,,։ Հարցեալ և զերկրորդն, ''Արդեօք երկի՞ր՝ եթէ ծով, մեծ ևս սնուցանէ գազանս ,,, ետ պատասխանի. '' Երկիր. զի մասն է երկրի ծով ,,։ Հար-

ցեալ և զերրորդն. " Ո՞ր կենդանի է խորամանկ յոյժ „. ասէ. " Զոր ցայս վայր ոչ ծանեաւ մարդ „: Հարցեալ և զչորրորդն. " Զի՞նչ խորհեալ՝ դրդեաց զՍաբբաս յապստամբութիւն անդր „. ասէ. " Քանզի գեղեցիկս կամէի կեալ նմա, կամ թէ չարեաւ մեռանել „. Իսկ հարցեալ և զհինգերորդն, " Զո՞ր արդեօք համարեսցի առաջին կացեալ, զտի՞ւ եթէ զգիշեր „. ասէ. " Զտիւ, միով տունջեամբ „. Իբրև զարմանայր Աղեքսանդրոս, յաւել և ասէ. " Դժուարին խնդրոց, դժուարին և պատասխանւոյն հարկ է լինել „: Առեալ ապա և զվեցերորդն հարցանել, " Զիա՞րդ մարթ իցէ ումեք առաւել սիրելի լինել „. ասէ. " Եթէ մեծազօր գոլով, չիցէ ահաւոր „: Իսկ և 'ի մնացելոց անտի հարցեալ զմին. " Զիա՞րդ կարասցէ ոք 'ի մարդոյ աստուած լինել „. ետ պատասխանի. " Եթէ գործեսցէ զանհնարինսն 'ի մարդկանէ „: Հարցեալ և զմիւսն. " Ո՞ր առաւել 'ի սոցանէ հզօր եւս իցէ, կեա՞նք՝ եթէ մահ „. ասէ. " Կեանք, զի բերէ բազում չարեաց „: 'Ի վերջէ ուրեմն հարցեալ և զյետինն. " Ցո՞ր վայր գեղեցիկ իցէ կեալ մարդոյ „. ասէ. " Ցորվայր ոչ կարծեսցէ լաւագոյն զմեռանելն քան զկեալն „: Ապա 'ի դատաւորն կոյս դարձեալ Աղեքսանդր, ասէր նմա ածել 'ի վերայ նոցա զվճիռն. նա ետ պատասխանի և ասէ. " Վատթար եւ մի քան զմի արարին պատասխանի „: Ասէ Աղեքսանդրոս, " Դու

ուրեմն մահու մեռցիս առաջին, զի զայդ-
պիսի ածեր դատաստան,,: Կրկնեաց նա և
ասէ. « Քաւ 'ի քէն արքայ, թէ ոչ սուտ.
զի տայցէր մահու մեռանել առաջին զայրն՝
որ անճահ տայցէ պատասխանի,,: Ապա
Աղեքսանդրոս արձակէր զնոսա յազատու-
թիւն. 'ի վերայ այսր՝ տայր նոցա և պար-
գևս:

Բայց առ այս 'ի Մերկիմաստակացն՝
որ առաւել զհամբաւի հարեալ էին, և
անդորրաւէտ կենօք մենակեացք էին, ար-
ձակեաց առ նոսա զՈնեսիկրիտոս. իսկ էր
Ոնեսիկրիտոս իմաստասէր՝ որ և կենակից
լեալ էր Դիոգինեայ Կինիկեան: Արդ՝
պատմեն՝ եթէ Կալանոս (մերկիմաստակ)
մեծապէս խեռութեամբ և չինականա-
գոյնս հրաման տայր Ոնեսիկրիտեայ՝ մեր-
կանալ զհանդերձս իւր և այնպէս յառաջ
մատչել լսել 'ի բանից նորա՝ բնաւ իսկ
մերկ. ապա թէ ոչ՝ խօսեսցի և ոչինչ ընդ
նմա, թէպէտ և յանուն իսկ Արամազդայ
անդր հասեալ իցէ: Սակայն Դանդամիս
(մերկիմաստակ)՝ ասեն եթէ մարդասիրա-
գոյնս ժողովեաց զՈնեսիկրիտոս. և լու-
եալ 'ի նմանէ յաղագս Սոկրատայ և Պիւ-
թագորայ և Դիոգինեայ, ասէր՝ եթէ ան-
շուշտ արքդ այդոքիկ քաջաբունք գտան,
սակայն և կեցին դոքա յոյժ իմն պատկառ-
ացեալ օրինաց: Իսկ կէսք ասեն, այլ ինչ
չասել Դանդամեայ, բայց այսչափ միայն,
« Եւ առ ի՞նչ արդեօք մինչև ցայսր չոքաւ
Աղեքսանդրոս՝ ուղի այսչափ հատեալ,,:

Բայց զԿալանոս ած հասանեցոյց Տաքսիղէս յառնել գնալ առ Աղեքսանդրոս: Այլ Կալանոսին անուն էր Սփինէս. այլ քանզի որոց պատահէրն, ողջոյն տայր նոցա և ասէր 'ի հնդկաց լեզուն Քալէ՛. փոխան Հելլենականին Քէ՛րէն, այն է՝ խնդալ. ուստի և Հելլենացիք անուն կարդացին նմա Կալանոս: Եւ պատմեն՝ եթէ սա այս մերկ խմաստակ առաջի եդ Աղեքսանդրի՝ Օրինակ մի յաղագս Թագաւորութեան: Քանզի արկեալ 'ի գետին մորթ խստամորթ և չոր, 'ի վերայ կացեալ կոխէր զմի 'ի ծայրիցն մորթոյն. Թէպէտ և յայն կուսէն ընկճէր, 'ի միւս այլ ծայրիցն ցցէր մորթն 'ի վեր. և շուրջ եկեալ ապա և կոխեալ այնպէս առ ծայրիւքն, առհասարակ 'ի ծայրսն նոյն պատահէին դէպք. մինչև եկեալ 'ի միջակին՝ անդ կոխէր զմորթն և անշարժ այնպէս առկայացուցանէր զամենայնն. և յայն առակ յարացուցի խրատէր զԱղեքսանդրոս՝ զի պարտ է նմա առկայանալ և անշարժելի մանաւանդ զմիջակն պահել զարքայութեան իւրոյ, և մի տարադէմ յառնել Թափառել:

Բայց յէջսն իւր ընդ հոսանս գետոց 'ի ծովակողմն կոյս, ծախեաց Աղեքսանդրոս ժամանակ զամսոց եօթանց: Ապա յառաջ նաւադնաց խաղացեալ յՈվկիանոս, հասանէր 'ի կղզի մի՝ զոր ինքն Սկիլլուստի անուանէ. իսկ այլք՝ Պսիլտուկի: Անդ ելեալ 'ի ցամաք՝ զոհէր զոհս դից. և դէտակն կալեալ զննէր զբնութիւն ծովուն և զծո-

վափնեայցն՝ որչափ և բաւական եղև խաղալ 'ի խորս. ապա խնդրուածս արարեալ զի որք այլ 'ի մարդկանէ յետ նորա մի անցցէ ըստ սահման արշաւանին իւրոյ, դարձաւ յետս. պատուէր տուեալ նաւացն խաղալ շուրջանակի Թեւակոխեալ և յաջմէ զՀնդիկս ունել. կարգեալ նոցա զօրավար զՆէարքոս, և ղեկավար իշխան զՕնեսիկրիտոս. և ինքն յուղի անկանէր ընդ ցամաք անցեալ ընդ Ովրիտացիս, ուրանօր և մեծապէս չքաւորեալ 'ի կերակրոց, կորուսանէր սաստիկ որեար. զի և ոչ զչորրորդն զքաջամարտիկ զօրականին ածեալ բերէր 'ի Հնդկաց, որ էր երկոտասան բիւրուց հետևակաց, և հնդետասան հազար այրուձիոյ. այլ շատք 'ի նոցանէն կորեան 'ի դժուարին ախտից և յանառողջ կերակրոց և 'ի հրատապ տօթոյն, և բազումք ևս 'ի սովէ. քանզի և անմշակ էր երկիրն զոր գնային՝ բնակեալ 'ի խոշորակեաց մարդկանէ, իբրու այն որ տեարք էին միայն սակաւահօտ և վոխտ ոչխարակաց՝ ձկնաբոյծք 'ի ծովէ, որոց և միսն գլխովին խոշոր և չարահոտ: Ապա հասեալ անցեալ ընդ երկիրն ընդ այն հազիւ ուրեմն զաւուրս վաթսուն, և հասեալ մօտ 'ի Գեդրովսիա, անդ գտանէր առատութիւն յոյժ զամենայնին՝ պատրաստեալ նմա 'ի շրջակայ նախարարաց և 'ի Թագաւորաց:

Իբրև անդանօր կազդուրեալ հաստատեցաւ զօրն, ապա չու առնէր անցեալ ընդ Կարմանիա 'ի կայթս և 'ի կաքաւս և

'ի խնձոյս զաւուրս եօթն, բարձեալ բերեալ հեզաքայլ յուղթից երիվարաց՝ միաբանութեամբ բարեկամացն 'ի բազմոց մի կողմնաւոր բարձրաբերձ և երևելի, ուր և կայր 'ի խրախճանս խնձոյից անդուլ զտիւ և զգիշեր: Իսկ անդ և շատք յոյժ 'ի կառաց զհետ խաղային նորա՝ պատեալ շուրջանակի կէսք 'ի ծիրանեաց և 'ի խայտաճամուկ գործոց, և կէսք դարձեալ՝ 'ի նորաբողբոջ և 'ի դալարադեղ հովանաւոր ոստոց. իսկ 'ի կառսն բարձեալք բերէին այլք 'ի բարեկամաց անտի և 'ի զօրավարացն պսակեալք 'ի գլուխս և պարապեալք 'ի գինեըմբուս: Անդ ոչ վահանս էր տեսանել և սուսեր, ոչ սաղաւարտս և գըլխանոց, ոչ աղեղս և գայխոսս. այլ զօրականս ողջոյն ընդ ուղին թափել գինի 'ի մեծամեծ տակառաց և 'ի խառնարանաց 'ի սկահս և յըմպանակս և 'ի բաժակս. և առեալ մատռուակէր այր ընկերի իւրում. կիսոցն խաղացեալ գնացեալ զճանապարհ իւրեանց, և կիսոցն՝ դադարեալք և բազմեալք: Անդ առհասարակ զվայրն գրաւէր ունէր ձայն լսելի սրնգաց և եղեգնափողոց, երգոց նուագաց և սաղմոսաց և կայթից կաքաւուց կանանւոյն 'ի գինեըմբուսն շփացելոց: Եւ էր այն անկարգ չուն և ցոփ՝ հանդունատիպ բաժակացն անսպակին և խեղկատակութեան Դիոնիսեան թշնամանացն. որպէս եթէ ինքնին Դիոնիսեայ դիքն անդանօր մերձ կացեալ իցեն, և ուղեկից հետևեալ աղակատանացն այնոցիկ:

Եւ այնպէս ապա եկեալ հասեալ յարքունիսն Գեդրոզեայ, անդրէն միասանգամ խրախունս և սփոփութիւնս տօնից պատրաստեաց զօրականին : Եւ ասեն՝ գինեհարեալ նորա երբեմն այնպէս կալ 'ի ջնին մրցանաց պարերգուացն . և 'ի տանել Բագոայ տարփածուին զյաղթութիւնն որ հանդիսադիրն էր պարուն , անցեալ սա ընդ մէջ թատրոնին՝ այնպէս զարդարեալ չոգաւ բազմեցաւ առընթեր Աղեքսանդրի . զայն տեսեալ Մակեդոնացւոցն՝ աղաղակ բարձեալ ծափս հարկանէին , ստիպէին զԱղեքսանդրոս համբոյր տալ , մինչև գիրկս ածեալ համբուրեաց :

Բայց 'ի ժամանակի անդ եկեալ հասեալ առ նա Նէարքոս , մեծապէս զուարճանայր Աղեքսանդր . և լուեալ զանցս զամենայն զնաւարկութեանն՝ վառեցաւ ցանկութեամբ և ինքն 'ի նաւագնաց ուղին . խորհուրդ խորհէր չու առնել 'ի վայր ընդ հոսանս Եւփրատայ նաւաց հանդիսիւ , և շուրջ զԱրաբիա պատեալ և զԼիբիւա , գալ մտանել 'ի միջերկրեայն ծով ընդ արձանսն Հերակլեան: Այս կազմէին պատրաստէին ազգ ազգ նաւաց մօտ 'ի Թափսակոս , և գային ժողովէին 'ի կողմանց կողմանց նաւաստիք և ղեկավարք:

Բայց սակայն և դժուարին ուղևորութիւն նորա յարշաւանին վերնագաւառացն , և կռիւ մարտին նորա ընդ Մաղացւոց , և համբաւ ձայնին բազմահոյլ կորըստեան զօրականին նորա , կարծիս ետուն՝

եթէ վճարեալ վասն նորա այնուհետեւ իցէ. եւ յապստամբութիւն եւս դրդեցին ըզնուաճեալսն, եւ զկուսակալս եւ զնախարարս յանիրաւութիւնս անխտիրս եւ 'ի հարստահարութիւնս եւ 'ի զրկանս: Եւ համբուն յայնժամ առհասարակ յուզէր ծփայր աղմուկ եւ շփոթից ամբոխ, մինչեւ եւ Ոլիմպիա եւ Կղէոպատրա ընդվզեալք յԱնտիպատրոսէ՝ բաժանեցին յիւրեանս զարքայութիւնն: Ոլիմպիա առնոյր զԵպիրոս, եւ Կղէոպատրա՝ զՄակեդոնիա: Լուր զբանին առեալ Աղեքսանդրոս ասէր՝ գեղեցիկ կալեալ խորհուրդ մօրն. քանզի եւ ոչ իսկ հանդուրժէին արդեօք Մակեդոնացիք ընդ տէրութեամբ կալ կնոջ: Որ աղագաւ առեալ արձակէր նա միւսանգամ զՆէարքոս 'ի ծով անդր. խորհուրդ խորհէր լնուլ մարտիւ պատերազմի առհասարակ զծովափնեայսն. եւ ինքն խաղայր իջանէր՝ պատուհաս 'ի վերայ կապէր կուսակալացն չարաց. եւ իւրովք իսկ ձեռօքն 'ի մահ վարէր զՈքսիւարտէս զորդին Աբուլիտեայ, տիգահար խոցեալ զնա: Իսկ անդ Աբուլիտէս ինքնին ոչ պատրաստեալ պաշար կերակրոյ, այլ բերեալ առ Աղեքսանդրոս քանքարս երեքհազար զդահեկանաց, հրաման տայր արքայն առաջի արկանել երիվարաց զարծաթն. իսկ 'ի չուտել զայն նոցա, ասէ Աղեքսանդր. “ Եւ զի՞նչ սպաս պէտք էին մեզ այդպիսի կարասւոյ ,,. եւ տայր զԱբուլիտէս արկանել 'ի կապանս:

Ապա մտեալ 'ի Պարսս, անդ յառաջ քան զամենայն տայր բաշխէր ինչս կանանց. քանզի և սովորութիւն իսկ էր արքայից առ մէն մի կանանցն պարգևել դահեկան մի ոսկի զամենայն նուագ մտին նոցա 'ի Պարսս: Եւ վասն այնորիկ ասեն՝ արքայից ոմանց սակաւ անգամ մտանել 'ի Պարսս. իսկ Ովքոսին և ոչ միանգամ առ ճղճիմ բարոյիցն, անձամբ զանձն վտարանդի 'ի հայրենեացն արարեալ: Իսկ յետ այնորիկ տեսեալ Աղեքսանդրի զգերեզմանն պեղեալ զԿիւրոսին, 'ի մահ մատնէր զգերեզմանակրկիտ անիրաւն. Թէպէտ և Պեղղացի էր այրն և ոչ յաննշանից ոք՝ անուն Պողիւմաքոս: Եւ ընթերցեալ անդանօր զվերտառութիւնն, հրաման տայր քանդակել զայն 'ի ներքոյ 'ի տառս հելլենացիս, և էր օրինակ զայս. "Ո՛վ մարդ՝ ո՛ ոք և իցես դու, և ուստի և եկեալ հասեալ իցես. (քանզի և գիտեմ իսկ քա՛ջ եթէ եկեսցես): Ես ինքն եմ Կիւրոս՝ որ զիշխանութիւնն պատրաստեցի Պարսից: Մի՛ ուրեմն խանդասցիս դու զդուզնաքեայ զհողդ՝ որ զմարմին իմ ծածկէ,,: 'Ի տառից աստի յոյժ 'ի խոր խոցեալ Աղեքսանդրոս, 'ի միտս եկեալ՝ կայր այնուհետև և զանյայտութիւն զիրացն խոկայր և զփոփոխութիւնն:

Զայնու ժամանակաւ ապա Կալանոս զաւուրս ո՛չ բազումս նեղեալ 'ի խթից որովայնին, խնդրեաց խարոյկ պատրաստել անձին. և հեծեալ յերիվար և երթեալ

'ի խարոյկ անդր, խնդրուածս աղօթից առնէր և ձօնս նուիրաց հեղեալ զանձամբն և փունջ մի 'ի հերացն կտրեալ, յեղանել անդ. իւրում 'ի վերայ խարուկին գիրկս ածեալ Մակեդոնացւոցն որ անդ, խրախոյս տայր ուրախ լինել յաւուր յայնմիկ և խրախուսնս կազմել և գինեըբուս 'ի միասին ընդ արքային. և ասէր՝ յետ սակաւ միոյ միւսանգամ տեսանել զնա 'ի Բաբելոն. և զայս ասացեալ 'ի կողմն լինէր 'ի վերայ խարուկին. և ողջոյն ծածկեալ, իբրև հրոյն աղտխարշանք հասանէին՝ և նա ամենևին չխլրտէր. այլ նոյնպէս անշարժ 'ի նոյն կայս՝ ողջակիզէր ըստ հայրենաւանդ օրինի իմաստակացն այնոցիկ: Զնոյն գործեաց յետ ամաց և այլ ոմն 'ի Հնդկաց անտի յԱթէնս՝ ուր 'ի միասին կայր ընդ Կեսարու. և մինչև ցայսօր ժամանակի ցուցանեն զգերեզմանն, որում անուն կարդան Հնդիկ:

Ապա 'ի բաց 'ի խարուկէն մեկնեալ Աղէքսանդրի, խմբեալ զբազումս 'ի բարեկամացն և 'ի զօրավարաց ընթրել ընդ նմա՝ մրցանս առաջի արկանէր այր զարամբ, ո՞ ոք առաւել արբցէ անապակ, և մրցանակ պսակ մի խոստանայր յաղթականին. իսկ յայնժամ շատ քան զամենեսին գինըմպու եղեալ Պրոմաքոս՝ մինչև չորից կոնքոց, առնոյր մրցանակ զպսակն, և էր կշիռն քանքարի միոյ. բայց եկեաց 'ի վերայ աւուրս երիս: Նաև յայլոց անտի՝ (որպէս պատմէ Քարէս՝) մեռան ոգիք քառասուն

և մի 'ի տարապայման գինեըրբուացն , անդէն յարբեցութեան իւրեանց ըմբռնեալք 'ի դժնդակ ցրտոյ ։

Բայց 'ի Շուշ կարգեաց Աղէքսանդր հարսանիս , ածեալ իւր կին զՍտատիրա զդուստր Դարեհի , և տայր ևս աւագացն իւրոց՝ յազատաց անտի պարսկանուշիցն , և մեծահաց պատրաստէր կոչունս ․ ուր և եկին բազմեցան և 'ի Մակեդոնացւոց անտի որ յառաջագոյն կին ածեալ էին ։ Եւ ասեն՝ ինունց հազարաց յայնժամ կոչնականացն պարգևել առ մէն մի բաժակ մի ոսկի 'ի ձօնս նուիրաց ։ Եւ ապա հոյակապ յոյժ և պայծառ հանդիսացաւ նա և յայլ ինչ իրս , և յանձնէն հատուցանէր զպարտս զօրականին ․ յորում և ծախեաց քանքարս ինն հազար և ութ հարիւր և եօթանասուն ։ Անդ յայնժամ և Անտիգենէս միականի այր՝ խաբանօք ընդ համար անցեալ պարտապանաց և զայր ոմն ևս առաջի մատուցեալ իբրև փոխատու , հատուցանէր և նմա Աղէքսանդր ․ բայց ապա նշաւակեալ Անտիգենէս 'ի խաբանսն , 'ի մեծ բարկութի արտմտութեան բրդեալ արքայի՝ հալածէր յարքունեացն և հանէր 'ի նմանէ զզօրավարութիւնն ։ Իսկ էր այս Անտիգենէս սաստիկ հզօր 'ի պատերազմի ․ և 'ի պաշարել անդ ուրեմն Փիլիպպոսի զՊերինթոս , էր սա տակաւին պատանի ․ և 'ի նետակալէն արձակեալ նետ և վարսեալ 'ի մի յաչաց նորա , նա ոչինչ թոյլ տուեալ քարշել զփքինն յականէն և ոչ ևս դուլ առնէր պա-

տերազմին , մինչև ընկրկեալ զթշնամիսն ածէր փակէր զնոսա 'ի պատուար անդր: Արդ յայնժամ չհանդուրժեալ նորա ընդվատ անունն, կարծիս անշուշտ տայր մարդկանն՝ եթէ առ տագնապ վշտին և առ սաստիկ տխրութեան ոգւոյն՝ նա զիւրովին գնացէ․ յորմէ և արքային զանգիտեալ և 'ի հաշտութիւն ընդ նմա բերեալ, հրաման տայր ունել առ իւր և զդրամսն:

Բայց յայնժամ զերիս բիւրսն զայն ըզմանկտոյն՝ զոր եթող նա անդէն 'ի վարժս կրթանաց, գտեալ կորովիս մարմնով և արոյգս տեսլեամբ, առ այս և 'ի կրթանսն աշխոյժս և յաջողակս սքանչելապէս , յանձն իւր զուարճանայր Աղեքսանդրոս․ իսկ անդուստ Մակեդոնացիք 'ի խոր խոցեալք խիթային՝ եթէ երես այնուհետև չարասցէ նոցա արքայն: Ուստի և յարձակել նորա յիւրմէն ընդ ծով զտկարս 'ի նոցանէն և զհաշմս, դանգատ կալան նոքա ընդ գործն՝ իբրև ընդ անիրաւութիւն և ընդ նախատինս․ զի գործի 'ի ձեռս առեալ զնոսա յամենայն մրցանս նահատակութե իւրոյ, և յայնժամ անփառունակ այնպէս 'ի բաց մերժեալ՝ առեալ ձգէ զնոսա 'ի հայրենիս իւրեանց և առ ծնողս իւրեանց՝ փոփոխեալս յառաջին քաղաքավարութենէն՝ որպէս էառ զնոսա: Եւ ասէին ևս՝ 'ի բաց ուրեմն արձակել յիւրմէն և առհասարակ զամենեսեան, առ անպիտանս ունելով այնուհետև զՄակեդոնացիսն․ զի և են իսկ առ նմա աւագիկ խումբ

մանկտւոյդ այդորիկ՝ յոյց ձեռն բաւական իցէ 'ի բուռն ողջոյն զտիեզերս արկանել:

Յայսպիսեաց աստի բանից 'ի սրտմտութիւն բրդեալ Աղեքսանդրոս, յիշոցս բազում և թշնամանս արձակեալ ընդդէմ և 'ի բաց վարեալ զնոսա, անձնապահապետս իւր հրամայէր զարս Պարսիկս. և 'ի նոցանէն դարձեալ հաստատէր կարգէր իւր տիգաւորս և զինակիրս. զորս և պարաւոր զարքայիւ տեսեալ զնոսա յայնժամ Մակեդոնացւոց, իսկ զանձինս յաչաց եղեալ արքային և առ անարգս, յոյժ հարեալ խոցեցան 'ի միտս իւրեանց. և այր ընդ ընկերին բարբառեալ վասն այնորիկ, գոգցես խելաց ծփումն առնէին առ սաստիկ խանդին և առ զայրոյց բարկութեանն: Ապա 'ի միտս եկեալ, այնպէս անզէնք և բաճկոնիւ միայն չափ՝ չոքան 'ի խորան անդր արքային. անդանօր աղաղակ բարձրեալ յաւաղս ձայնից՝ անձնատուր նմա լինէին, թախանձ արկեալ պատուհաս 'ի վերայ ածել նոցա իբրև անզգամաց և իբրև ապաշնորհից: Նա թէպէտ և արդահատեալ 'ի սրտին, ոչ ընկալաւ զնոսա. այլ նոքա այնպէս զտեղի կալեալ կացին մնացին յողբ և 'ի կոծ աւուրս երկուս և գիշերս երկու. կարդային զԱղեքսանդրոս՝ իւրեանց Տէր: Ապա յաւուրն երրորդի ելեալ արտաքս առ նոսա, և տեսեալ յայն չափ խոնարհութեան և յաշխարհելի կերպարան, կայր անդ և յարտասուս հատանէր Աղեքսանդրոս հարուստ մի ժամ. ա-

պա և կշտամբանս 'ի վերայ ածեալ չափաւորս, և մարդասիրագոյնս խօսեալ ընդ նոսա, առեալ 'ի նոցանէն զանպիտանսն 'ի մարտ՝ մեծապարգև արձակէր: Գրէր և առ Անտիպատրոս՝ յամենայն իսկ 'ի տեսարանս մրցանաց և 'ի թատերս բազմել նոցա՝ պսակ 'ի գլուխ յառաջին բարձին· առ այս՝ և որբացելոց զաւակացն տայր առնուլ զթոշակ զհարց իւրեանց վախճանելոց:

Իսկ յետ այսորիկ հասեալ Աղեքսանդրի յԵկբատանս Մարաց և յօրինաւոր կարգ հաստատեալ զիրսն, անդրէն Թատերական տեսարանացն հրաման տայր և հանդիսից տօնից· քանզի և եկին հասին առ նա յԵլլադայ երեք հազար որեար՝ վարժք և հմուտք արուեստին: Բայց դէպ տայր յաւուրսն յայնոսիկ Եփեստիոնի տագնապել ջերմամբ· և քանզի այր երիտասարդ էր և զինուորական, ոչ բերեալ զճշգրտութիւն պահոցն՝ յորժամ՝ ինքնին բժշկապետ նորա Գլաւկոս 'ի Թատրին հետևեալ էր, նա 'ի ճաշ բազմեալ լափլիզէր խորովեալ որձակլի, և զհետ քամէր բաժակ մեծ անապակ ցուրտ· յորմէ և ծանրացեալ ախտին՝ յետ սակաւ միոյ մեռանէր: Յայնժամ Աղեքսանդրոս առ կիրս ցաւոցն ոչինչ ամենևին խոհականացեալ, անդէն վաղվաղակի հրաման տայր սգոյն՝ հատանել կտրել զվարսս զամենայն զերիվարաց և զջորեաց, և քակել բառնալ ըզպսակս պատուարաց շրջակայ քաղաքաց,

և 'ի խաչ եւս զհեքացեալն բժիշկ բեւեռել զԳլաւկոս, և հարուստ մի ժամանակ այնպէս արգել կնքեաց 'ի բանակին զձայն սրնգաց և զերաժշտաց նուագսն. մինչև անդուստ պատգամ գայր նմա յԱմմոնէ, պատուէր տուեալ շուք ընծայել Եփեստիոնի և զոհ յազել նմա իբրև դիւցազին: Եւ ապա առ 'ի դիւր ագոյն, ելանէր արտաքս 'ի պատերազմ՝ իբրու 'ի բարակաց յորս մարդկան. և հարկանէր վանէր զազգն Կոսսացւոց, և առհասարակ մարդակոտոր առնէր՝ ոչինչ խնայեալ 'ի հասակ. և կոտորածին անուն կարդայր՝ Ենէափիաջի Դիահանփ:

Ապա մտախորհ եղեալ և 'ի շիրիմ գերեզմանին նորա և 'ի շուք հանդիսին և 'ի հանդերձանս դամբանականս՝ ծախել քանքարս բիւր, իսկ 'ի ճշգրտութեան և 'ի ճարտարութեան արուեստի քանդակաց գործոյն զանցանել և զայնչափ ծախիւքն, ուստի 'ի վեր քան զամենայն ճարտարապետսն ընտրեաց իւր զՍտասիկրատէս այր հոյակապ մեծագործ 'ի նորասկերտս արուեստին և յոյժ յաջողակ և սքանչելի: Քանզի և այս ճարտարապետ երբեմն բերան 'ի բերան խօսեալ ընդ Աղեքսանդրի, ասացեալ իսկ էր՝ եթէ 'ի լերինս Թրակիոյ՝ Աթոսին յոյժ 'ի ճահ յարմարէ առնուլ տաշել զնա, և 'ի նմանութիւն պատկերի մարդոյ ճշգրտել զնա. ուստի եթէ հրաման տացէ՝ ինքն գօտեպինդ 'ի լեռնէ անտի Աթոսի անդրի մի յաւերժական

դրօշեաց և յոյժ հոյակապ, 'ի ձախոյ ձեռին քաղաք մի բարձեալ բերցէ անդրին՝ բնակաւոր 'ի բիւրուց մարդկան, և յաջոյն խուրձ գետ գնացուացէ յորդահոսան՝ թափեալ 'ի ծով անդր: Բայց Աղեքսանդրոս յայնժամ ոչինչ հաւանեցաւ ընդ առաջարկութիւնն. իսկ 'ի ժամուն հետամուտ հնարիմաց եղեալ 'ի միասին ընդ Ճարտարապետան վասն առաւելահրաշից և բազմածախից, դեգերեալ զբանիւք անկանէր ընդ նոսա:

Ապա յետ այսորիկ խաղացեալ նորա 'ի Բաբելոնէ կոյս, անդ՝ Նէարքոս (որ դարձ արարեալ խոկ էր 'ի մեծ ծովէն նաւեալ ընդ Եփրատ) ասէր Աղեքսանդրի՝ պատահել նմա Քաղդէացւոց ոմանց՝ որ խորհուրդ տային արքային 'ի բացեայ գնալ 'ի Բաբելոնէ. այլ Աղեքսանդրոս ոչինչ անսացեալ խորհրդոյն՝ հետևէր յուղին: Իբրև եկն եհաս նա հանդէպ պատուարաց քաղաքին, անդ տեսանէր ագռաւս բազումս խառն 'ի խուռն մարտ ընդ միմեանս եղեալ. յորոց և կէսք եկին հոսեցան 'ի վայր մօտ առ նա: Յայնժամ և զրոյց բերէին նմա, եթէ Ապողոդովրոս զօրավար Բաբելոնի զոհ յաղեալ է իմանալ զելս կատարածի նորա: Առաքեաց կոչեաց առ ինքն զՊիւթագորաս խըժ. և յուրաստ չեղև նա զգործն Ապողոդորոսի. ապա հարցեալ զնա Աղեքսանդրի վասն զոհին, իբրև պատասխանի ետ խըձն՝ եթէ անբլթակ գտաւ լեարդն, ասէր Աղեքսանդրոս. " Բաբէ

ահագին նշանին ,, ։ Սակայն չար ինչ Պիւթագորայ ոչ հասոյց․ և ցուցէր նմա զի չանսաց Նէարքոսի․ և յաճախ այնուհետև խորան հարեալ նստէր արտաքոյ Բաբելոնի․ և ափոփութիւն իւր խնդրէր նաւագնացութեամբ ընդ Եփրատ․ քանզի և տագնապէր ևս նա 'ի բազմադէմ նըշանաց ։ Զի և անդ յառիւծունսն՝ զոր բուծանէին՝ որ ահագինն էր 'ի նոսա և առաւել գեղեցիկ, կցածեալ ուժգին յիշոյ անտի տանն՝ անկանէր մեռեալ։

Առ այսոքիւք՝ և յաւուր միում մերկացեալ նա յօծանել և գնտակախաղ լինել, անդանօր պատանիքն ընկերշակեալք խաղուն՝ գնացեալ առնուլ զիւրեամբք զհանդերձսն, տեսանէին այր մի նստեալ յաթոռն Աղեքսանդրի անմռունչ թագ 'ի գլուխ՝ արկեալ զարքունի զպատմուճանն, հարցեալ՝ ո՞ ոք իցէ, նա հառուստ մի ժամ այնպէս կայր անմռունչ․ և ապա ուրեմն 'ի միտս եկեալ ասէր՝ անուն իմ Դիոնեսիոս է՝ ազգաւ Մեսսենացի․ ամբաստանեալ վասն իմաստու ածայ ընդ ծով 'ի Բաբելոնէ և արկայ 'ի կոճեղս 'ի շատ ժամանակաց․ իսկ վայր մի յառաջ երևեալ ինձ Սարապիս, լուծեալ 'ի կապարանէն՝ այսր ածել զիս, հրաման ետ ինձ առնուլ զպսակն և զպատմուճանն և բազմել անմռունչ ։ Լուեալ զայսոսիկ Աղեքսանդրի, տայր 'ի միջոյ 'ի բաց բառնալ զայրն ըստ խորհրդոյ ըղձիցն․ բայց ինքն սրտաբեկ սրտաթափ լինէր՝ յերկուացեալ այնուհետև 'ի զօրավիգն

ստուածակողմանն, և խէթ կասկածանաց կալեալ զբարեկամացն ։

Զանգիտէր առաւել քան զամենեսեան յԱնտիպատրոսէ և 'ի նորուն զաւակաց. յորոց և մին Յոլաս անուն՝ էր տակառապետ. իսկ միւսն Կասսանդրոս անուն՝ այն ինչ եկեալ էր առ նա. որոյ և տեսեալ 'ի բարբարոսաց անտի երկրպագութիւն տալ արքային՝ յորոց յայսպիսեաց ստոր երբէք յառաջագոյն նորա չէր տեսեալ, իբրու որ ընդ Հելլենացի օրէնսն սնեալ էր, ուստի և յայն տեսիլ քրքինջս արձակէր մեծամեծս. անդ սաստիկ որոտմնեալ Աղեքսանդրի՝ բուռն զնորա վարսիցն հարեալ և երկոքումբ ձեռօքն ուժգին ընդ որմն առեալ զարկանէր զգլուխ նորա ։ Իսկ և երբեմն Կասսանդրոսի խօսել ինչ կամեցեալ ընդդէմ ամբաստանիցն Անտիպատրոսի, մերժեալ զնա Աղեքսանդրի՝ ասէր. " Զինչ խօսիս. զայդ չափ երկայնութիւն ճանապարհին հատանէին արդեօք արքդ այդոքիկ ոչինչ զրկեալք, դալ այսր 'ի զրպարտել զհայր քո ,, ։ Ետ պատասխանի Կասսանդրոս. Այդ իսկ գլխովին զդոսա իբրև զզրպարտողս առակէ, զի եկին հասին աւադիկ ամբաստան լինել զնմանէ 'ի բացեայ 'ի հաւաստեացն ։ Վեր 'ի վերոյ ծիծաղեցաւ Աղեքսանդրոս և ասէ. " Դա այդոքիկ են յիմաստակութեանց անտի Արիստոտելի յերկայրաբանիցն. այլ դու պատուհաս անշուշտ լուծցես, թէ երբէք և փոքրիկ մի անիրաւեսցին արքդ այդոքիկ ,, ։

Ուստի և պատմէն՝ այնչափ իմն անմոռաց զահի 'ի բանից անտի հարկանել Կասսան֊դրեայ, զի և յանցանել ժամանակաց՝ նա թագ կալեալ Մակեդոնացւոց և տիրա֊ցեալ Եղլադայ, յաւուր միում 'ի ձեմելն 'ի Դեղփիս 'ի զնին անդրեացն՝ տեսեալ անդ և զԱղեքսանդրին պատկեր, այնչափ իմն զարհուրեալ պակեաւ և զդողանի հար֊կանէր մարմինն, մինչև հազիւ ուրեմն ան֊դրէն հաստատել յահաբեկ տեսութենէն։

Արդ օրինակ զայս 'ի ժամանակին յայն֊միկ Աղեքսանդրոս անձնատուր եղեալ յաստուածայինսն, և ողջոյն ամբոխեալ խռովեալ 'ի հոգին և վատասրտեալ, որ զինչ և իր անսովոր և օտար՝ թէպէտ և 'ի չնչենոց, համբուն առ հրէշս ունէր զայ֊նոսիկ և առ գուշակութիւնս իմն. ուստի և լի էր յայնժամ արքունիքն նորա 'ի զոհ֊արարս և 'ի քաւիչս և 'ի մարգարէացեալս ոմանս: Եւ այսպէս ապա դժնդակ է ար֊դեօք անհաւատութիւնն յաստուածա֊կողմանսն և արհամարհութիւն նոցա. սա֊կայն դժնդակ է և սնապաշտութիւնն. այն՝ որ իբրև ջուր վայրահոս ցանդ 'ի նկուն կրթեալ է, և լնու զեղու ապշութեամբ և արհաւրօք. ըստ որում յայնժամ զԱ֊ղեքսանդրոս: Բայց և այնպէս 'ի պատգա֊մաց ինչ դիցն առ նա վասն Եփեստիոնի՝ դադարեալ նա 'ի սգոյն, անդրէն միւսան֊գամ դառնայր 'ի զոհս և 'ի գինեխումս:

Ե՛ր երբեմն զի կոչունս տուեալ մեծա֊հաց Նէարքոսի, և ապա լուացեալ ըստ սո֊

վորութեանն՝ 'ի գնալ խրում 'ի ննջել եկն առ նա Մեդիոս և աղաչէր գալ 'ի խրախճանս առ նա. և յարեաւ չոքաւ. անդանօր ապա արբեալ ողջոյն զօրն յետագայ, սկսաւ տագնապիլ ջերմամբ: Այլ ոչ եթէ զՀերակլեանն ըմպեալ զբաժակ 10, և ոչ դարձեալ յանկարծակի 'ի ցաւոց ըմբռնեալ թիկանց՝ իբրու թամփ 'ի գեղարդանէ իմէքէ հարեալ, ըստ որում խորհեցան ոմանք պատկանագրել զբանն. և այնպէս ողբերգակ ելս և յոյժ աշխարհելի 'ի ներքս բերել մեծի տեսարանի: Այլ Արիստոբուղոս պատմէ մեզ, 'ի ջերմանէ անտի յախտ մտաթափութեան անկանել Աղեքսանդրի. և թէ՝ 'ի սաստիկ ծարաւոյն պապակեալ և արբեալ գինի, և ապա մոլեգնեալ՝ մեռանէր յերեսներորդի աւուր Դէսիոն ամսոյն: Իսկ Օրագիրք օրինակ զայս արձանագրեն զխօթանալ նորա:

"Յութ և տասներորդի աւուր Դէսիոն ամսոյն չոքաւ յանկողին 'ի սենեակ բաղանեացն վասն տագնապելոյ ջերմանն. իսկ 'ի յետագայ աւուրն մտեալ 'ի բաղանիս, ապա անցանէր յիւր սենեակն, և ըզտիւն ողջոյն՝ նարտ խաղայր ընդ Մեդիոսի. ապա երեկուն յետ լուանալոյն դարձեալ 'ի բաղանիսն և զոհ դիցն զոհելոյ և ուտելոյ, տենդէր զգիշերն ողջոյն: Իսկ յաւուրն քսաներորդի՝ անդրէն լուացեալ 'ի բաղանիս, կատարէր դարձեալ զսովորական զզոհն. և ընկողմանեալ 'ի սենեկի անդ բաղանեացն, զբօսանէր ընդ Նէար-

քեայ 'ի լոյր նուագնաց պատմութեանց նորա և յաղագս ծովուն մեծի ։ 'Ի քսաներորդի առաջներորդի զնոյն արարեալ, սաստիկ ևս տապանայր ջերմամբ․ բաղումս տանջեցաւ զգիշերն, և 'ի յետագայ աւուր տենդեցաւ ահագին ջերմամբ․ և ածեալ բերեալ առընթեր մեծի լոգարանին, անդ 'ի կողմն եղեալ խօսէր ընդ զօրավարացն վասն անզօրավար գնդացն, տալ նոցա 'ի գլուխ զարս առաքինիս և փորձս ։ 'Ի քսաներորդի չորրորդի նովին ջերմամբ դարձեալ զօհեաց՝ ածեալ 'ի նուիրականսն․ և հրամանն տայր աւագ զօրավարացն կալ դեգերել 'ի գաւթին, իսկ գնդապետացն և վաշտապետաց հինգհարիւրոցն՝ գիշերապահ ունել արտաքոյ ։ Ապա ածեալ տարեալ յայքունիսն՝ որ յայնկոյս, յաւուրն քսաներորդի հինգերորդի սակաւ մի առնոյր նինջ, սակայն դուլ չլինէր ջերմանն․ և գնացեալ առ նա զօրավարացն, անբարբառ գտանէին զնա ։ Նոյնպէս եկաց նա և յաւուրն քսաներորդի վեցերորդի, ուստի և Մակեդոնացիք համարելով զնա մեռեալ, գիմեալք աղաղակաւ առ դուրս նորա, սպառնալիս 'ի վերայ կապէին բարեկամացն արքային, մինչև և բռուն առնէին նոցա ։ Ապա բացեալ առաջի նոցա զդուրսն, մի առ մի անցանէին նոքա բաճկոն միայն արկեալ զիւրեամբք՝ առ անկողնովք նորա ։ Եւ 'ի նմին աւուր դարձեալ Պիւթոնն և Սելեւկոս առաքեցին 'ի մեհեան անդր Սարապեայ, հարցանել

զգլխան՝ եթէ ածցեն անդր զԱղեքսանդրոս, և պատգամ եւ 'ի դիցն թողուլ անդէն ուր էրն: Իսկ ապա յաւուրն քսաներորդի ութերորդի ընդ երեկս մեռանէր,,: Այսոքիկ ապա բազմագոյն մասամբ այսպէս ըստ բառին՝ արձանագրեալ կան յՕրագիրսն անդ:

Բայց յայնժամ բախեցաւ և ոչ ուրուք կասկած մնացն վասն դեղատուութեանն. այլ ասեն՝ յետ վեցից ամսոց 'ի վեր ելեալ բանին, զբազումս 'ի մահ մատնէր Ողիմպիա. և տայր ցանել սփռել զոսկերս Յողասայ մեռելոյն՝ իբրու որ զդեղն խառնեալ իցէ 'ի բաժակին: Իսկ որք հաստատեն՝ Արիստոտէլի ինքնին խորհուրդ տալ Անտիպատրոսի առնել զայն, և թէ ինքնին նա ածեալ իցէ առ նա զդեղն, ասեն՝ պատմել զայն Ագնոթեմեայ ուրումն՝ իբրու լուեալ յարքայէն Անտիգոնոսէ. և թէ՝ այն դեղ ջուր իմն իցէ ցուրտ և սառնասառոյց՝ կաթեալ 'ի քարէ յերկրին Նոնակրացւոց. և զայն ջուր առեալ ժողովեն իբրու շաղս ցօղոյ և ամփոփեալ պահեն 'ի սմբակ իշոյ. զի և աման այլ ամենևին չբերէ և չհանդուրժէ, այլ առհասարակ ճայթին և պայթին առ 'ի սաստիկ ցրտոյն և 'ի ժանտութենէ ջրոյն: Սակայն և բազմագոյնք այն են՝ որ զբան զայս դեղատուութեանն ամենևին առ կեղծիս ունին. և հաւաստիք ոչինչ դուզնաքեայ են նոցա՝ զի աւուրս շատ 'ի կագի եղեալ զօրավարացն ընդ միմեանս, մարմին արքային

այնպէս անխնամ անկեալ'ի ջերմին վայրս և 'ի հեղձամղձուկ, նշան տապականութեան 'ի թունիցն չերևէր ինչ 'ի միջի. այլ կայր մնայր այնպէս անդրժելի և իբրու այն ինչ մեռեալ:

Բայց 'ի ժամանակին յայնմիկ Հռովքսանէ յղի գոլով շուք նմա հարկանէին Մակեդոնացիք, որ և խանտացեալ ընդ Ստատիրա, նենգաւ նամակ մի խարդախեալ՝ կոչէր առ ինքն և սպանանէր զնա, և զքոյր նորա 'ի միասին. և արկեալ զդիակունս նոցա 'ի ջրհոր մի՝ անդ թաղէր. և էր խորհրդակից և սատար գործոյն Պերդիկկաս: Քանզի այս Պերդիկկաս անդէն վաղվաղակի յինքն վարէր իշխանութիւն մեծազօր, թիկնածու Արրիդէոսի եղեալ՝ իբրու անձնապահապետ արքայութեանն. և էր ծնեալ այս Արրիդէոս յաննշան և 'ի բոզ կնոջէ՝ Փիլիննէ անուն. և չէր Արրիդէոս ողջ 'ի խելս առ 'ի խօթութենէ մարմնոյն, ոչ 'ի տնկակից և ոչ ինքնածին, այլ որպէս ասեն յայտնի՝ 'ի տղայութեան տիան նա բարս չնորհաշուք 'ի դէմս բերեալ և ազատանի, ապա դեղովք աղարտեաց զնա Ողիմպիաս, և խանգարեաց այնպէս զխելսն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ναρθήκιον. է Ընօթ բժշկական հանդերձանաց. յորում Աղեքսանդրոս ամփոփեալ պահէր զքերդած Եղիականին Հոմերեայ:

2. Իբրու զերեսին միանգամայն պատուհասել արժան իցէ: Մեծամերջն՝ Եւրիպիդեայ է:

3. Դէսիոն ամիս համեմատէր Յունիսի Հռոմայեցւոց: Իսկ զՄայիս նոքա անուանէին Արտեմիսիոս. ուստի և զՅունիս կոչեաց յայնժամ Աղեքսանդր՝ Արտեմիսիոս երկրորդ:

4. Քաջիկ ասէ զայս Պլուտարք. քանզի և ոչ 'ի հրաշից կարգի էին այն անցք, տեղատուութիւն և մակընթացութիւն ծովու գոլով 'ի վայրսն, որպէս յայտնապէս դնէ Ստրաբոն. Գիրք, ԺԴ: Ուրանօր ապա կայցեն բանք չնչահաւատին այնորիկ՝ որ'ի դիպաց աստի Աղեքսանդրի ժպրհեցաւ խաթարել զպանծալին Աստուծոյ 'ի կարմիր ծովուն:

5. Զոր եդաք՝ Իշխան, Պլուտարքոս կոչէ, Ασγάνδης. իբրև յունական՝ մանաւանդ թէ յունացուցեալ բառի: Տա-

բակուսեալ են ամենայն մեկնիչք 'ի վերայ բառին, և ո՛չ գտանեն. ասեն՝ այլազգական լինել զբառն և արևելեան: Թուի թէ ո՛չ տարակուսէին, եթէ ունէին 'ի ձեռս զՀյ. անունդ Իշխան, որ ըստ յունականին ծեքեալ և թիւրեալ՝ հնչի Աշտանք. որպէս և Յուստինոս գիրք. Է. ասէ՝ զԴարեհ յառաջն Իշխան կամ Նախարար կարգեցեալ 'ի վերայ Հայոց՝ վասն զօրութեան աւագութեան առնն:

6. Ս՛, 'ի Յն. լեզու և 'ի բարբառ Դովրիսեան, նշանակէ՝ Քոյ:

7. Հոմերոսին է տողն, յԻղիականին Հագներգ. Ն:

8. ... Թուի անշուշտ պակասել աստանօր տողից ինչ 'ի Բնագրին Պլուտարքեայ, որպէս կասկածեն Ծանօթարարք:

9. Իմաստասէրք այս Հնդկաց՝ Մերկիմաստք անուն առին բազմօք յետոյ քան զԱղեքսանդրոս. բայց յայնժամ անուն կարդային նոցա Բրաման և Սերման. ըստ որում ծանուցանէ Ստրաբոն Գիրք. ԺԵ:

10. Բաժակ ըմպեալ յանուն և 'ի պատիւ Հերակլեայ՝ իբրև իւրոյ Նախնոյն. ըստ որում կէսք մեկնեն:

Գ. ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ

ՕԿԻՆՆԱՄԱՅ Միապետին դուստր
զԿոռնելիա՝ իբրև ոչինչ ձեռնհաս եղև
Սիւղղաս ՚ի տիրանալ իւրում քակել ՚ի
Կեսարէն, ոչ ՚ի յոյս ակնկալութեան և
ոչ յահ երկիւղի, այլ ՚ի վաճառ զօժիտն
հանէր զԿոռնելեայ։ Իսկ պատճառք Թըշ-
նամութեանն Կեսարու ընդ Սիւղղաս, էր
ազգականութիւնն Կեսարու ընդ Մարիո-
սի։ Քանզի ծերն Մարիոս ած ՚ի կին զՅու-
լիա հօրաքոյր Կեսարու, յորմէ ծնաւ Մա-
րիոս կրսեր հօրաքեռորդի Կեսարու ։ Ոչ
ինչ հանդարտեալ Կեսար՝ զի զանց զնովաւ
առնէր զառաջինն Սիւղղաս ՚ի մեծ կոտո-
րածին և ՚ի մեծի անպարապութեանն,
ժտեցաւ եւ նա խնդրել ՚ի հրապարակի և
զքահանայութիւնն, Թէպէտ և տէգ մօ-
րուացն այն ինչ արձակեալ էր. բայց Սիւղ-

զաս ընդդէմ դարձեալ՝ արգել զնա 'ի խնդրոյն ։

Ապա զմտաւ ածեալ Սիւղղաս զարևն հատանել և զնորա, և յասել անդ ոմանց՝ անպարտ զմանուկ մի դեռահասակ այնպէս 'ի մահ վարել, անմիտս կարգայր ըղնոսս Սիւղղաս՝ զի ոչ տեսանեն 'ի մանուկ մի այնպիսի՝ Մարիոսս բազումս։ Իրազեկ բանին եղեալ Կեսար, առ ժամանակ մի թաքուցանէր զանձն թափառեալ աստ և անդ 'ի մէջ Սաբինացւոց։ Ապա 'ի պատճառս խօթութեանն 'ի տանել զնա 'ի տուն մի, անկաւ գիշերի 'ի ձեռս զօրականին Սիւղղայի, որ խիլ արկեալ վայրացն՝ ձերբակալ զզօղեալսն առնէին. և էր զօրականին գլխաւոր Կոռնելիոս, որ քանքարս երկուս առեալ՝ թողոյր ազատ զԿեսար։ Յայնժամ Կեսար իջեալ 'ի ծով, փութապէս նաւագնաց 'ի Բիւթանիա լինէր առ Նիկոմեդէս արքայ։ Ոչ շատ ինչ ժամանակ կացեալ առ նմա, իբրև միւսանգամ ծովագնաց եղև՝ մօտ 'ի կղզին Փարմակուսա անկաւ 'ի ձեռս ասպատակաց հինին, որ նաւաց բազմութեամբ և այլ ևս անբաւ նաւակօք հասեալ գրաւեալ էին զծովն ։

Անդ 'ի փրկանս խնդրեալ նոցա 'ի նմանէ քանքարս քսան, ծիծաղեցաւ Կեսար, իբրու ոչինչ ճանաչել նոցա զայրն՝ զոր ձերբակալ արարին. և խոստանայր ինքն նոցա յիսուն քանքար։ Ապա առեալ յիւրոց անտի արձակէր 'ի քաղաքս քաղաքս

ժողովել զփրկանսն , և մնայր ինքն միով միայն բարեկամաւ և երկոքումբք ծառայիւք 'ի մէջ մարդախողող հինին Կիլիկեցւոց · սակայն և գնայր ընդ նոսա այնչափ իմն արհամարհանօք , զի և միշտ 'ի ննջել նորում պատուէր տուաքէր նոցա՝ անշշունջ կալ : Ձաւուրս երեսուն և ութ այնպէս եկաց նա ընդ նոսա , ո՛չ իբրև գերի՝ այլ իբրև 'ի դիպահոջ · կայր և դեգերէր յանգորրու 'ի խաղս և 'ի կրթանս ընդ նոսա : Գրէր անդանօր և քերթուածս ինչ և ճառս, և վերծանէր 'ի լուր նոցա · և որք միանգամ 'ի նոսա ոչինչ զարմանային ը̄ տառսն , յերեսս իսկ ախմարս կարդայր զնոսա և բարբարոսս : Բազում անգամ և 'ի խաղոյ ըսպառնալիս կայքէր նոցա 'ի կախաղան հանել զնոսա · Նոքա զուարճացեալ էին ընդ համարձակախօսութիւնն՝ իբրև 'ի պարզ մտաց բարբառ և անտխական կատակ :

Իբրև 'ի Միլետոսէ եկեալ հասեալ առ նա արծաթոյն , և փրկանաւորեալ արձակէր յազատութիւն , անդէն վաղվաղակի նաւս հանդերձեաց կազմեաց · և 'ի նաւահանգստէ Միլետացւոց խաղայր ընդդէմ ասպատակացն , և անկեալ 'ի վերայ՝ մինչդեռ՝ տակաւին դեգերեալ կային նոքա յայն կղզի , զբազումս 'ի նոցանէն 'ի բուռն արկանէր · հանէր 'ի ձեռաց նոցա զգրամսն, և 'ի բանդ արկանէր զնոսա 'ի Պերգամոն : Ապա չոքաւ առ Յունիոս կուսակալ Ասիոյ· քանզի և նմա անդ էր իբրև զօրավարի պատուհաս 'ի վերայ ածել գերւոյն : Իբ_

րև նա անկանոյց 'ի դրամն եղեալ (զի չէին իսկ դուզնաքեայք), առէր խորհել հանդարտութեամբ վասն գերւոյն, անդ թողեալ զնա Կեսար և գնացեալ ինքն 'ի Պերգամոն՝ տայր զհէնն առհասարակ 'ի խաչ հանել. ըստ որում ստէպ 'ի կղզւոջ անդր սպառնացեալ իսկ էր նոցա յառաջագոյն, և նոքա 'ի խաղու կարծէին:

Յետ այսորիկ 'ի նուաղել իշխանութեանն Սիւղղայի, և 'ի հրաւիրել Կեսարու յիւրոց անտի 'ի հայրենիսն, նա առաջին նաւեաց 'ի Հռոդոս 'ի վարժարանն Ապողոնիոսի Մողոնեան, որում և աշակերտեալ իսկ էր ինքնին Կիկերոն. քանզի հռչակաւոր էր իմաստասէրն և այր լաւ և առաքինակրօն: Եւ ասեն՝ անդստին 'ի բնութենէն յոյժ յաջողակ զԿեսար 'ի ճարտարախօսութեան քաղաքականին, և մեծապէս ջանիւ և պատուասիրութեամբ մշակել զանկակից պարգևն. զի և յարուեստին յայնմիկ զերկրորդն անպայքար ունէր նա զբարձն՝ թողեալ այլոց զառաջինն. քանզի զհետ կրթեալ էր յիշխանութեան բարձերէց լինել և 'ի զէնսն. և զի և ո՛չ յընդաբոյն իւր յօժարեցաւ յաւագութիւն յայն հռետորականին՝ 'ի պատճառս զինուորութեանցն և քաղաքական հրահանգացն՝ որովք և տիրացաւ նա: Որ աղագաւ և յետ ժամանակաց 'ի պատասխանին իւր առ Կիկերոն յաղագս գովութեանն Կատոնի, 'ի չքմեղս լինի և աղաչէ՝ մի 'ի կշիռ զատենաբանութիւն ձգել

զառն զինուորականի ընդ պերճաբանութեան քաջուշիմն հռետորի՝ որ շատ ժամանակ 'ի նոյն պարապեալ լիցէ ։

Այս գործ արարեր Կեսարու 'ի Հռոմ ամբաստան լինել յատենի զԴոլոբելլայ՝ զի հարստահարեաց նա զգաւառ կուսակալութեան իւրոյ․ յորում և քաղաքք շատք Եղլադայ վկայեցին նմա ։ Սակայն և այնպէս արձակեցաւ Դոլոբելլաս ։ Բայց Կեսար 'ի գործ փոխարինի յօժարամտութեանն Հելլենացւոց 'ի զօրավիգն իւր, պաշտպան և հովանի կայր նոցա, պայքարելով և ընդդէմ Պոպղիոսի Անտոնիոսի՝ զորմէ ամբաստանէին իբրև կաշառաբեկ յանդիման Լեւկուղղոսի Մարկոսի զօրավարին Մակեդոնիոյ․ յորում և այնչափ քաջացաւ Կեսար, զի և Անտոնիոս յայնժամ բողոք բառնայր առ ժողովրդապետս՝ պատճառեալ զանբաւականութիւն անձինն 'ի վէճ յԵղլադա ընդ Հելլենացիս ։

Բայց 'ի Հռոմ յոյժ հռչակ հարեալ ճարտարաբանութեանն Կեսարու՝ արդոյ և պատուական գտաւ նա 'ի դատս ատենից․ և մեծապէս սիրելի ընծայեցաւ խուժանին՝ ցանգ ընդ նոսա մարդասէր վարեալ բարոյիւք և հիւրամեծար եղեալ 'ի վեր քան զոխս հասակին ։ Առ այս՝ և 'ի կոչունս և յընթրիս իւր և 'ի հոյակապ չափու կենացն՝ երթալով երթայր և բարգաւաճէր զօրութիւն նորա 'ի քաղաքին․ զոր և նախանձորդք նորա զառաջինն ծաղկընկէց համարելով 'ի նուաղել անդ գոյից նո-

րա, փոյթ ինչ չառնէին՝ թէպէտ և արգոյ տեսանէին զնա 'ի ժողովրդեան: Այլ ապա անագան ուրեմն՝ 'ի հարստանալ զօրութեան նորա և անվանելի լինել և յայտնապէս աշխարհօրէն փոփոխութեան քաղաքին զհետ կրթել, յայնժամ խելամուտ լինէին նոքա՝ եթէ արժան չէ փանաքի զսկիզբն կարծել զիրաց՝ որ 'ի կարգաւութենէ ժամանակին բնաւորեցաւ առնուլ զաճումն, և յարհամարհութենէն՝ լինել աննահանջելի:

Արդ առաջին յայնժամ՝ որ խիթայր զանգիտէր 'ի քաղցրամոք և 'ի հեշտ քաղաքավարութենէն Կեսարու՝ իբրու 'ի ծիծաղերես ծովէն, և խելամուտ եղև առագաստեալ խորամանկութեանն մարդասէր և զուարթաբարոյ կերպարանին նորա, առաջին եկաց Կիկերոն. այն՝ որ ասէր՝ յամենայն իսկ 'ի խորհուրդս Կեսարու և 'ի քաղաքական 'ի գործսն՝ կէտ նպատակի տեսանել բռնակալութեան. "Այլ ապա յակնարկել իմում՝ ասէր Կիկերոն՝ 'ի հոպոտանս խոպոպեաց վարսիցն նորա, և 'ի քերել նորա միով մատամբն զգլուխն, թուի ինձ՝ թէ երբէք այր այնպիսի չմտաբերեսցէ յայնչափ կիրս աղէտից՝ տապալել զՀռոմ քաղաք": Այլ այս յետոյ ուրեմն պատահեցաւ:

Բայց յայնժամ 'ի հետամուտ լինել նորա հազարապետութեան զօրականին ընդ Գայիոսի Պոպղիոսի, առաջին զհանդէս սիրոյն առ նա ցուցեալ խուժանին,

զնա անուանելին Նախաթոռ ։ Բայց ապա երկրորդ և յայտնագոյն ևս՝ զի 'ի մեռանել Յուլեայ կնոջն Մարիոսի և հօրաքեռն Կեսարու, ներբող գեղեցիկ վասն նորա հրապարակախօս լինէր Կեսար. և 'ի յուղարկաւորել զմեռեալն՝ ժտեցաւ և յերևան հանել յայնժամ առաջին յետ սիրապետութեանն Սիւղղայի զպատկերսն Մարիոսի. քանզի իբրև Թշնամիք հայրենեաց՝ նըշաւակեալ իսկ էին Մարիոս և իւրքն ։ Իբրև կէսք բողոք ընդդէմ Կեսարու բառնային, խուժանն ընդ հակառակս նոցա ձայն բարձեալ 'ի ծափահարս հաճեցան ընդ գործն Կեսարու. որ յետ հարուստ ժամանակաց այնպէս իբրու 'ի դժոխոց յայնժամ 'ի վեր բերէր քաղաքին զփառսն Մարիոսի ։

Առ այսոքիւք՝ և փաղնջուց սովորութեամբ Հռոմայեցւոց վերծանելին դամբանականս 'ի վերայ պառաւանց և ոչ երիտասարդուհեաց. բայց Կեսար յայնժամ առաջին վերծանեաց 'ի մահ ամուսնոյն իւրոյ. որով և շատ իսկ գովեցաւ, և ժողովուրդն ինքնին ախտակից նմա եղեալ՝ սիրեաց զնա իբրև այր մարդասէր և քաղցրաբարոյ ։ Թաղումն ապա տուեալ ամուսնոյն, չոգաւ գանձաւոր յԻբերիա 'ի միասին ընդ Բետովրեայ զօրավարի. զոր և միշտ պատուեաց, և ապա յիւրում ևս զօրավարութեանն զորդին նորա գանձաւոր կարգեաց ։ Դարձ անտի աքարեալ, ած 'ի կին երրորդ զՊոմպէա. և էր իսկ նորա 'ի

Կուռնելեայ դուստր մի, որ ապա տուաւ 'ի կին Պոմպէի մեծի։

Իսկ յետ այսորիկ ծախս անխնայ արարեալ, Թուէր թէ յայնչափ ծախուցն փառս որսալ անձին առօրեայ և սուղ. սակայն և գնոց դուզնաքէից գնեալ մեծամեծս, ասեն՝ մինչև յաւագութիւն ամբարձեալ էր՝ պարտապան լինել նմա հազար և երեքհարիւր քանքարաց։ Այլ իբրև մթերս բազում 'ի գոյից իւրոց ծախեաց նա յոստիկանութեան իւրում 'ի վերայ Ապպեան ճանապարհին, և հանդէս ևս կարգեաց յամբարապետութեան իւրում երեքհարիւր և քսան ամոլից մենամարտկաց, և յայլ ևս ծախս և 'ի հանդերձանս թատերաց և տօնախմբութեց և ընթրեաց՝ սպառեաց նա միանգամայն զամենայն հարստութիւնս զնախնեաց իւրոց, ապա յետ այնորիկ մեծապէս յինքն յանկոյց զժողովուրդն. զի և անդ այր այր խնդրէր 'ի դարձ փոխարինին աւագութիւնս նորա և շուք փառաց 'ի ներքս բերել նմա։

Իսկ յայնժամ 'ի քաղաքին կրկին դոլով հերձուած, Սիւղղային և Մարիոսին, զարհուրեալ թէ էին Մարիոսեանք և վարատեալք ցրուէին նկունք և խոտանք. ապա Կեսար 'ի քաջալէր նոցա և յինքն դրաւել, 'ի ճոխանալ իւրում յամբարապետութենէ բարձին՝ տայր դրօշել 'ի ծածուկ զպատկերս Մարիոսի և զյաղթութիւնս նորա ախոյեանաբէրս. և գիշերի գնացեալ արձանացուցանէր զնոսա 'ի Կա-

պիտոլիոնին: Իբրև առաւօտն մերկանայր՝
տեսեալ անդ զպատկերսն զայնոսիկ հա-
մակ ոսկեճաճանչ և ճարտարք և հրաշա-
կերտք, դարձեալ և արձանագրութիւնս
'ի նոսա զմրցանաց նահատակութեանց
ընդդէմ Կիմբրացւոց, յապուշ կրթեցան
ընդ համարձակութիւն առն, որ արձանա-
ցոյց զնոսա. քանզի և առակեցաւ բանն:
Անդէն զհամբաւի հարեալ, անդր խռու-
ժեցին առհասարակ մարդիկն 'ի տեսանել:
Իսկ որ 'ի հերձուածոյ անտի Սիւղղայի,
բողոք բառնային՝ եթէ կէտ նպատակին
Կեսարու 'ի բռնակալութիւն է, այն-
պէս յերևան բերեալ զշուք փառացն՝ զոր
Օրէնք և Հրովարտակք քաղաքին ընդ հո-
ղով թաղեցին. առ այս՝ և ասէին՝ փորձ
բանին փորձել Կեսարու զխուժանին ա-
մոքելոյ, իմանալ թէ արդեօք յինքն զմիտս
յանդուգեալ յառատաբաշխութեանց ան-
տի նորա՝ թո՞յլ նմա տացէ խաղուցդ այդո-
ցիկ և նորութեանց: Իսկ անդուստ Մա-
րիոսեանք խրախոյս առեալ՝ յանկարծա-
կի խումբ մեծ երևեալ 'ի վայրին 'ի բոմ-
բիւն ձայնից և 'ի ծափս լցին առհասարակ
զԿապիտոլիոնն. բազումք ևս անդանօր 'ի
տեսիլ պատկերին Մարիոսի յարտասուս
ցնդէին 'ի հեշտութենէն. և յայնժամ
զԿեսար մեծամեծ պսակեալ գովութիւք՝
այր աւագ արժանի ազգականութեանն
Մարիոսի համբաւէին:

Ապա 'ի ժողով խմբեալ Սինկղիտոսին
վասն բանին այնորիկ, Կատղոս Լուտատիոս

այր ականաւոր յոյժ յայնժամ առ Հռոմայեցիս՝ յոյն կայեալ առէր ընդդէմ Կեսարու զհռչակելին բան. « Ոչ ևս Կեսար ական հատանէ, այլ մանդղինոս ամբառնայ վանել զքաղաքն »: Իսկ իբրև անդանօր Կեսար յառաջ բերեալ զիւր պատասխանին՝ 'ի բանի իւրում առնէր զՍինկղիտոսն, յայնժամ և որք հրաշացեալքն էին ընդ այրն՝ մեծ ևս 'ի վեր վազեալ խրախոյս տային նմա՝ տեղի և ոչ ումեք տալ 'ի մեծանձնութեան իւրում. քանզի և 'ի կամս խուժանին յաղթահարեալ նա առհասարակ՝ ինքն բազմեսցի նախաթոռ:

Բայց ընդ այն ժամանակս 'ի մեռանել Մետեղղոսի մեծի քահանայապետի. և հետամուտք մեծի քահանայութեանն եղեալ Իսաւրիկոս և Կատղոս որք արդոյք և զօրաւորք 'ի Սինկղիտոսին, յայնժամ և ո՛չ նոցա տեղի տուեալ Կեսար՝ իջեալ 'ի խուժան ժողովրդեան, 'ի նոյն կրթեցաւ և ինքն: Իբրև հաւասար երևէր հանդէս հետամտացն երեցունց, յայնժամ Կատղոս աւագամեծար քան զնոսա՝ սակայն և յանյայտութենէ իրացն զանգիտեալ՝ արձակէր առ Կեսար արս՝ մթերս շատ դրամոց 'ի ներքս տալ նմա հրաժարել 'ի բանէն. եւ պատասխանի Կեսար՝ եթէ 'ի վէգ ընդ նմա վասն բանին այնորիկ՝ արդեօք շատ ևս մթերս 'ի փոխ առնոյր նա յայլոց:

Արդ օր հասեալ ընտրութեանն, մայրն Կեսարու ուղեկից նմա՝ արտասուս յաչս

մինչև առ դուրսն, նա համբուրել զմայրն ասէր. «Ո՞վ մայր իմ տեսցես դու այսօր զքոյին զաւակ կամ քահանայապետ մեծ կամ վտարանդի: «Ապա արկեալ քուեայս 'ի մեծ ամբոխ և 'ի պայքար, յաղթական եղանէր Կեսար: Զահի հարաւ Սենկղիտոսն և լաւորեարն՝ թէ դուցէ 'ի խռովութիւն մեծ այնուհետև դրդեսցէ նա զխուժանն. ուստի և Պիսոնին յայնժամ և Կատուղղոս մեծապէս սադրէին տային Կիկերոնին, զի ոչինչ ընդհարաւ յայնժամ 'ի Կեսար 'ի բանի Կատիլինեան դաւանացն, յորժամ ինքնին Կեսար պատճառս անդանօր 'ի ներքս ընծայէր Կիկերոնին: Քանզի այս Կատիլինա մտաբերեալ ոչ ըղկարգ միայն շրջել փոխել զքաղաքին, այլ և ողջոյն զտէրութիւնն վանել և վեր 'ի վայր առնել զամենայնն, իբրև 'ի վերայ հասանէր նշաւակութեան խորհրդոյն, փախեաւ՝ մինչև բնաւ իսկ խայտառակեալ դաւանացն: Սակայն թողոյր 'ի քաղաքին զԼենտղոս և զԿեթեգոս փոխանակ իւր տածել զդաւանսն. որոց՝ և ստոյգ չէ՝ եթէ արդեօք 'ի ծածուկ յայնժամ զօրավիգն եկաց Կեսար: Սակայն ապա 'ի նշաւակել սոցա յայտնապէս 'ի Սենկղիտոսին, և 'ի հարցանել Կիկերոնին՝ որ հիւպատոս էր 'ի ժամուն՝ զմէն մի յաւագանւոյն վասն պատուհասի սրանցն, առհասարակ յայնժամ վճիռ զմահու տային նոցա՝ մինչև եկեալ հասանէր հարցումնն և առ Կեսար: Սա յայնժամ յոտն կացեալ ճառ

մի առէնաբանէր ճարտարահիւս. յորում և ասէր ոչ արժան ոչ իրաւ և ոչ հայրենականացն 'ի ճահ սովորութեանց՝ 'ի մահ առանց ճշդրիտ ևս քննութեան մատնել զարս աւագս զարմիւ և բարձիւ՝ յորժամ ոչ հարկ վերջին 'ի միջի իցէ. այլ 'ի դիպահոյն արգելցին աւէ դոքա 'ի քաղաքսն Իտալիոյ՝ զոր ընտրեսցէ ինքնին Կիկերոն, մինչև 'ի սպառ սպուռ հարուած Կատիլինեայ. և ապա յետ այնորիկ անդորր և հանդարտիկ վճիռ վասն նոցա միանգամայն ածցէ Սենատոսն:

Իբրև մարդասիրագոյն ևս երևեցաւ խորհուրդն Կեսարու՝ 'ի ներքս բերեալ անդանօր այնչափ իմն կորովի պերճաբանութեամբ, յայնժամ ոչ միայն՝ որ զհետ Կեսարու յարեան յատենին՝ հաւանեցան ընդ բանն, այլ և բազումք ևս յառաջնոցն շրջեցան 'ի խորհրդոցն, մինչև եկեալ հասանէր բանն առ Կատոն և առ Կատղոս: Իբրև սոքա հզօրագոյնս ընդդէմ դարձան, և մանաւոր ևս Կատոն 'ի բանին իւրում կասկածեցաւ և վասն Կեսարու ինքնին գլխովին, յայնժամ դատակնքեալք 'ի մահ վարեցան արքն. նաև Կեսարու ինքնին՝ յելն յատենէն 'ի վերայ անկան սուսերամերկք բազումք 'ի պատանեացն Թիկնապահաց Կիկերոնին: Այլ ասեն՝ յայնժամ Կուրիոնին արկեալ 'ի վերայ զիւր պատմուճանն, ապրեցուցանել զԿեսար. և Թէ՝ Կիկերոն ինքնին՝ 'ի հայել առ նա պատանեացն՝ ակնարկել արգել զնոսա. կամ

'ի խուժանէն զանգիտեալ, կամ զապանութիւնն զայն անխրաւ գլխովին համարեալ և անօրէն :

Բայց զբան զայս՝ եթէ Ճշմարիտ արդեօք իցէ, ոչ գիտեմ առ ի՛նչ Կիկերոնի չարձանագրեալ յիւր գիրսն վասն հիւպատոսութեանն : Սակայն յապայս բամբասեցաւ նա. զի ոչ քաջացաւ յայնժամ 'ի բարեպատեհ ժամուն ընդդէմ Կեսարու, այլ երկեաւ 'ի խուժանէն՝ որ մեծապէս զօրավիգն կայր Կեսարու: Եւ արդեօք յետ սակաւ աւուրց մտեալ Կեսար առաջի Սենկղիտոսին 'ի չքմեղս լինել վասն կասկածանաց անձինն, և 'ի լինել անդանօր անհնարին ամբոխից ընդդէմ նորա, յայնժամ արտաքոյ խուժանն՝ իբրև քան զսովորականն առաւել յերկարաձգեցաւ ժողովն՝ դիմեաց 'ի ձայն աղաղակի և խըռնեալ զՍենկղիտոսն խնդրէին արտաքս զԿեսար : Ուստի և Կատոնի իմքնին զանգիտեալ 'ի խռովութենէ աղքատաց խուժանին՝ որ դրդիչքն էին առ հասարակ բազմութեանն ակնկառոյցք 'ի Կեսար անդր, հաւանեցուցանէր զծերակոյտն բաշխել տալ ցորեան ռամկին ամսոյ յամիս, ուստի և հինգհարիւր և յիսուն բիւրք յաւելան ամի ամի յայլ ծախսն :

Եւ ապա այս խորհուրդ հանճարեղ նուազ առնէր յայնժամ զարհաւիրս երկիւղին, և մեծապէս գձձէր զզօրութիւնն Կեսարու, յորժամ հանդերձեալ իսկ էր նա ամբառնալ 'ի զօրավարութիւն, և ա-

ռուել ևս երկուցեալ էին 'ի բարձէ անտի: Սակայն և ամբոխք զհետ եկին յայնժամ և ոչինչ, բայց դէպք ինն դժպատեհ դիպան Կեսարու յիւրում իսկ տան. Պոպղիոս Կղովդիոս այր տոհմիկ և ընչաւէտ և ճարտարաբան, սակայն խեռ և սաստիկ քան զամենայն եղեռնաւոր, սա տարփացաւ Պոմպէեայ կնոջն Կեսարու, և կինն դժգմնեալ ինչ չէր ընդ տարփանսն. սակայն մեծապէս էր պահ զգուշութեան 'ի վերայ կանանոցին. առ այս և Աւրելիա մայր Կեսարու կին իմաստուն և պարկեշտ ցանդ կացեալ առ նմա, անել և անմուտ գործէր զյարկն: Արդ՝ է առ Հռոմայեցիս դիցուհի՝ որում նոքա անուն կարդան Բարի. զնոյն դիցուհի Հելլենք կոչեն՝ Գինէկէա. և փռիւգացիք իւրեանց կարդան զնա, և ասեն զնա մայր արքային Միդայ. Հռովմայեցիք համարին զնա Յաւերժահարսն Դրիւանդեան՝ հարմնացեալ ընդ փաւնոսի, իսկ Հելլենացիք ասեն զնա մի 'ի մարց անտի Դիոնիսեայ՝ անասելի և անճառելի. ուստի և կանայք 'ի տօնախմբութեան նորա՝ ծածկեն զվրանս 'ի բարունակս որթոց, և վիշապ մի նուիրական առկայացեալ գառացեալ կայ առ դիցուհւոյն՝ ըստ առասապելին: Ոչ է օրէն առն մարդոյ մերձենալ 'ի նա, և ոչ 'ի տան անդամ կալ՝ ուր կատարին խորհրդատօնք նորա. այլ պատմեն՝ առանձինն միայնակ կատարել կանանց 'ի նուիրական պաշտամանն շատ ինչ նմանօրինակ Որփէականացն: Իսկ 'ի հասանել ժա֊

ժամանակի տօնին 'ի տան անդ Հիւպատոսին կամ զօրավարին, ելանէ նա արտաքս՝ ընդ նմա և ամենայն այր մարդ, և յայնժամ միայնակ կինն տիրացեալ՝ կազմէ հանդերձէ և զարդարէ զտունն: Բայց արարողութիւնք տօնին բազում այն են որ ցայգապաշտօնք են. և 'ի գիշերային պահուն լինին և խաղք պէսպէս, և շատ ևս երաժշտական նուագք:

Արդ և յայնժամ 'ի կատարել Պոմպէեայ զտօնն, յայնժամ Կղոդիոս՝ որ չև էր տէգ մօրուացն արձակեալ և վասն ևս էր մինչ անծանօթ, արկեալ հանդերձ և կազմած զվարձակի, չոքաւ անդր զնմանութիւն բերելով զդիմաց օրիորդի. բայց գտեալ զդուրսն մտանէր յանդորրու 'ի ձեռն աղախնոյն՝ որ գիտակն էր խորհըրդոյն: Ընթացեալ աղախնոյն զզոյց տալ Պոմպէեայ, և վայրիկ մի դեգերեալ, չհանդուրժեալ Կղոդիոս զտեղի անդէն առնուլ, շուրջ գայր ընդ լայնարձակ ընդյարկն, զգուշացեալ մեծապէս 'ի ճրագաց: Սակայն դէպ տայր յայնժամ հանդիպել նմա նաժշտին Աւրելիայ, ինքն կին և 'ի կանանց ոք կարծեալ զնա՝ հրաւիրեաց 'ի խաղ. իբրև յանձին չկալաւ Կղոդիոս, քարշեալ ձգեալ զնա 'ի մէջ դահլճին՝ հարցանէր ո՞ ոք և ուստի՞ իցէ: Ցասեալ Կղոդիոսի՝ եթէ սպասեալ մնայ Աբրային աղախնոյն Պոմպէեայ, զի այս էր անուն նորա. և անդէն առ 'ի ձայնէն ծանուցեալ, ճիչ բառնայր նաժիշտն և վազեալ յետս

'ի Ճրագացն կողմն և 'ի խումբ կանանւոյն, ձայն արձակէր՝ զի ըմբռնեցաւ այր մարդ: Զահի հարեալ կանանւոյն, և անդուստ Աւրելիա դադարեցուցեալ վաղվաղակի զնուիրական խորհուրդսն դիցուհւոյն՝ առեալ ծածկէր, և հրաման տայր փակելոյ դրացն, և ինքն շրջեալ ընդ յարկն ջահիւք լուցելովք 'ի խնդիր Կղոդիոսի՝ գտանէ զնա ղօղեալ 'ի սենեկի աղախնոյն՝ որ եմոյծն զնա: Ապա ծանուցեալ զնա կանանցն՝ արտաքս քան զդուրսն վարէին զայրն, և ինքեանք ևս ելեալք արտաքս Թէպէտ և ցայգ էր, գնացեալ պատմէին զբանն արանց իւրեանց: Իսկ 'ի ծագել աւուրն հռչակ հարեալ 'ի քաղաքին վասն անիրաւութեան գործոյն Կղոդեայ, ասէին պատուհաս 'ի վերայ ածել ոչ միայն վասն կանանցն Թըշնամանաց, այլ և վասն քաղաքին ողջոյն և վասն դիցն գլխովին:

Յայնժամ և 'ի ժողովրդապետաց անտի ոմն ամբաստանութիւն ամբարշտութեան ածէր զԿղոդեաւ. դարձեալ և աւագանի ծերակուտին յարուցեալ վկայէին ընդ այլ անառակութիւնս առնն և զմծղնէութիւնն ընդ քեռնն՝ որ ամուսինն էր Լուկուղղոսի: Իսկ յայնժամ խուժան ժողովրդեան ընդդէմ դարձեալ դատախազեցն Կղոդեայ՝ հովանի կացեալ զօրավիգն տային առնն առաջի դատաւորացն. ուստի և զահի հարեալ երկեան 'ի բազմութենէն: Բայց Կեսար անդէն վաղվաղակի զգիր զապահարզանին տայր Պոմպէեայ. և կոչեալ

յառեան 'ի վկայութիւն՝ տեսեր ոչինչ դի-
տել ընդդէմ Կղոդեայ. ստորացուցիչ իմն
կարծեալ բանին և անհաւատալի, հարցա-
նէր դատախազն զԿեսար. « Իսկ առ ինչ
ապա դեր կնոջն եւուր զապահարզանն ». .
Կեսար ասէ. « Քանզի կամիմ զկինն՝ և ոչ
կասկածելի անգամ գոլ »։ Արդ կէսք պըն-
դեն՝ ասել զայս Կեսարու յանկեղծաւոր
մտաց։ Իսկ և կէսք՝ ասել զայն 'ի հաճել
զխուժանն՝ որ հոմանին կայր Կղոդեայ։
Եւ այսպէս ապա արձակէր Կղոդիոս.
բայց յայնժամ բազումք 'ի դատաւորաց
տային վճիռ խառն 'ի խուռն միանգամայն
և վասն այլ ինչ իրաց. զի մի թերևս վտան-
գեսցին ինչ 'ի խուժանէն 'ի դատապար-
տել զայրն, և մի դարձեալ անփառունակ
ինչ գտցին յայնժամ առ լաւորերոյն՝ յար-
ձակել անդ զայրն։

Բայց Կեսար յետ զօրավարութեան
բարձին առնոյր զանձամբ զկուսակալու-
թիւն զԻբերիոյ. սակայն անձեռնհաս է-
լեալ 'ի հաճել զպարտատեարսն և իրա-
ւախոհ ընդ նոսա լինել՝ որ բողոք բար-
ձեալ նեղէին զնա 'ի չուել նորա, դիմեալ
ապաւինեցաւ Կեսար առ Կրասոս այր
ընչաւէտ յոյժ 'ի Հռոմայեցիս, որում և
պէտք իսկ էին զօրութեան և արիութեանն
Կեսարու 'ի քաղաքականսն ընդդէմ Պոմ-
պէի։ Ուստի և յանձին կալեալ Կրասոսի
հատուցանել պարտատեարցն՝ որ առաւել
ստամբակքն էին 'ի նոսա, և երաշխաւոր
կացեալ ութ հարիւր և երեսուն քանքա-

րաց, այնպէս Կեսար յուղի անկանէր 'ի կուսակալութիւն իւր: Եւ պատմեն՝ յանցանել նորա ընդ Ալբեանն առ աւանաւ միով բարբարոսացն՝ սակաւամարդ և հիքացեալ, ասել բարեկամացն ծիծաղելով. " Եւ զի՞նչ. իցեն թերևս և աստանօր կարգք փառաց վասն աւագութեանց, և պայքարք վասն առաջին բարձից, և խանդք 'ի մէջ աւագաց,,: Իսկ Կեսար լրջագոյնս տայր պատասխանի. " Անշուշտ կամէի մանաւանդ լինել առաջին 'ի սոսա, քան երկրորդ 'ի Հռոմայեցիս,,: Առ այս՝ և պատմեն՝ 'ի հասանել նորա յԻբերիա պարապեալ երբեմն ընթեռնուլ բանս ինչ վասն Աղեքսանդրի, հարուստ մի ժամ այնպէս առանձին մտախորհ եղեալ, ապա յարտասուս հատանէր: Զարմացեալ բարեկամացն և հարցեալ զպատճառն, ասէր Կեսար. " Եւ ո՞չ արդեօք թուեսցի ձեզ իրաւապէս ինձ յողւոց հանել, յորժամ Աղեքսանդրոս 'ի տիս յայս հասակի՝ ամբաւից թագ կապեաց. իսկ իմ չև է նահատակեալ 'ի հոյակապս ինչ,,:

Անդէն ապա գօտէպինդ հանդերձեալ 'ի նախապատրաստութիւնս մեծամեծս, և 'ի սակաւ աւուրս կուտէր ժողովէր գունդս տասն զօրականի բաց յառաջնոց անտի քանիցն. խաղայր գնայր ընդդէմ Կալլեկացւոց և Լուսիտանացւոց և նուաճէր ըզնոսա, և չու առնէր խաղայր մինչև 'ի ծովն որ արտաքոյ. վանէր նկուն առնէր զազգս՝ որ երբէք յառաջ ժամանակաւ ընդ լծով

չմոլին Հռոմայեցւոց : Քաջապէս նահատակեալ 'ի պատերազմի, ոչինչ պակաս քաջացաւ և 'ի խաղաղութեան, միամտեալ ընդ միմեանս զքաղաքս. և առաւել քան զամենայն՝ դարման տարաւ կագից և գժտութեանց պարտապանացն և պարտատերաց : Քանզի հրաման տայր 'ի տարևոր հասից անտի պարտապանաց մասն զերկու ունել պարտատեառն, և զերրորդն ունել պարտապանին 'ի պէտս, մինչև այնպէս բնաւ իսկ հատուցանել զպարտսն :

Այս 'ի չու անկեալ դառնայր 'ի կուսակալութենէն մեծապէս փառօք 'ի ժողովրդոց անտի. ընչաւէտեալ ինքն՝ զնոյն և զօրականին յարշաւանին յայնմիկ. որք և անուն յայնժամ կարդացին նմա՝ ԻՄՓԵՐԱՏՈՐ: Եւ քանզի որք յաղթանակին հանդիսի հետամուտք լինէին, պարտ էր նոցա արտաքոյ դեգերել քաղաքին. իսկ որք հիւպատեան բարձին՝ լինել 'ի ներքս և ինքնին 'ի նոյն աւագութիւնն կրթել, ապա Կեսար հասեալ անդր յաւուրս ընտրութեան հիւպատոսաց, և տագնապեալ 'ի հակառակ օրինացն, առաքէր աղաչել զՍինկղիտոսն 'ի բացուստ այնպէս զհետ կրթել աւագութեանն այնմիկ 'ի ձեռն բարեկամացն : Բայց Կատոնի զառաջինն ընդդէմ դառնայր խնդրոյն վասն օրինացն. ապա տեսեալ զբազումս պաշտարկեալ 'ի Կեսարէ, ժամավաճառ լինէր 'ի գործն՝ 'ի դերևս հանեալ զօր ժողովոյն. յոր աղագաւ և Կեսար հրաժեշտ յաղթանակին

տուեալ, կրթեցաւ յայնժամ 'ի հիւպատոսութիւն անդր ։

Ապա վաղվաղակի անցեալ 'ի Հռոմ, բուռն հարկանէր 'ի քաղաքական ինչ ձեռնարկ 'ի խաբանս առհասարակ ամենեցուն՝ բայց 'ի Կատոնէ. քանզի առեալ հաշտեցուցանէր ընդ միմեանս զԿրասոս և զՊոմպէոս զարս աւագս 'ի քաղաքին ։ Այսպէս 'ի բարեկամութիւն հաստեալ զնոսա յառաջին գժտութենէն, և յինքն ձգեալ ժողովեալ զերկոցուն նոցա զօրութիւն, յաջողեցաւ 'ի գործն մարդասիրութեան վերին երեսօք՝ տապալել զքաղաքն ծածուկ յամենեցուն ։ Քանզի ո՛չ եթէ (որպէս բազումք կարծեցին) գժտութիւն Կեսարու և Պոմպէի մարտս գրգռեաց ընտանի, քան թէ բարեկամութիւն նոցա ընդ միմեանս. քանզի միաբանեցան զառաջինն քանդել տապալել զաւագպետութիւնն. և ապա զայն 'ի ձեռս բերեալ՝ բաժանեցին յիւրեանս ։ Իսկ յայնժամ Կատոնի բազում անգամ նախագուշակ զհանդերձելոցն եղեալ, կարծեցաւ իբրև այր խիստ և դժպհի. այլ զկնի փառս ընկալաւ նա զհանճարեղի, այլ ոչ և զբարեբաղդ խորհրդականի ։

Ապա Կեսար անձնասալահապետ իւր զբարեկամութիւնն արարեալ զՊոմպէի և զԿրասոսի, ամբառնայր 'ի բարձ հիւպատոսութեան փառաւոր ընտրութեամբ 'ի միասին ընդ Կալպուռնիոսի Բիբուղոսի ։ Հաստատեալ յիշխանութեանն՝ անդէն օրէնս

'ի ներքս մատուցանէր ոչինչ 'ի ձահ առն հիւպատոսի, քան թէ ստամբակ ուրումն ժողովրդապետի 'ի հանել զխուժանն. քանզի առաջի մատուցանէր բաժինս գետնոյ հանել վիճակաւ, դարձեալ և բաշխս զցորենոյ: Երբև արք աւագամեծարք 'ի Սենկղիտոսին ընդդէմ դարձան նորա, նա՝ որ 'ի վաղնջուց իսկ բարուր խնդրէր, բողոք բարձեալ յայնժամ՝ յակամայ կամս իւր դիմել ապաստարկութեամբ այնուհետև առ խուժանն՝ ստիպեալ 'ի ձախաբար խստութենէ անտի Սենկղիտոսին, արտաքս վազեալ առ խուժանն և աստի անտի զԿրասսոս արձանացուցանել և զՊոմպէոս, հարցանէր զնոսա՝ հաւանի՞ն արդեօք ընդ Օրէնսն ընդ այն. երբև պատասխանի արարին, Հաւանել, թախանձ ապա արկանէր նոցա կալ նմա զօրավիգն ընդդէմ հակառակացն՝ որ սուր սպառնային: Նոցա խոստումն տուեալ նմա, յաւելոյր Պոմպէոս և ասէր՝ եթէ սուսերաց ընդդէմ սրով արձանացի նա, այլ և ասպարաւ: 'Ի խոր խոցեցաւ աւագանին 'ի լուր ձայնին, անարժան պարկեշտութեանն առնն և անձահ մեծարոյ երեսաց Սենկղիտոսին, նաև մոլեգին ձայն և անտխական. սակայն և մեծապէս խնդաց խուժանն:

Բայց Կեսար առաւել ևս սերտեալ 'ի բազում զօրութեանն Պոմպէի, խոստանայր նմա 'ի կին զիւր դուստրն զՅուլիա՝ թէպէտ և խոստացեալ իսկ էր զնա յառաջագոյն Սերվիլիոսի Կեպիոնի. և ա-

սէր՝ տալ Սերվիլիոսի զդուստրն Պոմպէի՝ որ և չէր իսկ ազատ և նա․ քանզի խոստացեալ իսկ էր կոյսն Փաւստոսի որդւոյն Սիւղղայի ։ Ապա յետ սակաւու ածէր իւր Կեսար կին զԿալպուրնիա զդուստր Պիսովնի, և կարգէր զՊիսոնն իւրնին 'ի հիւպատոս վասն ամին երկրորդի ։ Իսկ անդուստ Կատոն բողոք մեծապէս բառնայր, կնքէր՝ եթէ դժոխըմբերելի կիրք իցեն տանել բերել զտէրութիւնն 'ի հրապարակս դրդանաց հարսանեացն, և 'ի կանանւոյն ձեռն ամբառնալ 'ի կուսակալութի̅ գաւառաց, յառաջնորդութիւն բանակաց, և 'ի բարձս աւագութեանց ։ Իսկ Բիբուլոս յայնժամ իշխանակից Կեսարու՝ իբրև յանհընար մտանէին իւրքն խափանել զօրէնսն նորա, առ այս՝ և բազում անգամ 'ի հրապարակի վտանգեալ 'ի մահ ընդ Կատովնիւն, չոքաւ մնացաւ 'ի տուն իւր․ և այնպէս անցուցանէր զաւուրս հիւպատոսութեանն ։ Իսկ Պոմպէոս 'ի կին իւր ածեալ զՅուլիա, անդէն վաղվաղակի լցեալ զեղեալ զինուք զհրապարակն, հաստատէր կնքէր ժողովրդեանն զօրէնսն զայն ։ Դարձեալ և Կեսարու տայր 'ի ձեռս զկուսակալութիւն ողջոյն զԿեղտաց՝ յայսկոյս և յայնկոյս Ալբեանցն հնգամեայ ժամանակաւ․ յաւելոյր 'ի նա և զԼիւրիկեցիս հանդերձ քառիւք գնդօք ։

Իբրև Կատոն հակառակ ամբարձաւ իրացս այսոցիկ, 'ի դիպահոջ կալաւ զնա Կեսար, խիթացեալ՝ եթէ բողոք առ ժո-

ղովրդապետութն բարձցէ նա ։ Սակայն ՚լուռ մնջիկ զայրն տեսեալ, և զի՝ և ո՛չ աւագանին և ո՛չ ժողովրդականք բերին զիրսն զայն, որ պատկառ առաքինութեանն կացեալք կատոնին՝ զհետ գնային նորա այնպէս անբարբառք և մտահարք, ինքնին Կեսար ՚ի ծածուկ աղաչէր զմի ՚ի ժողովրդապետաց անտի՝ գնալ թափել զայրն ։

՚Ի լինել այսմ այսպէս՝ նուաղունք յոյժ այնուհետև ՚ի Սինկղիտոսէն մտանէին ընդ Կեսարու յատեան խորհրդոյ. իսկ այլք առհասարակ խորշեցան ուծացան ՚ի նմանէ ։ Եւ յասել առ նա երբեմն Կոնսիդիոսի ուրումն հինօրեայ առն, եթէ երբէք չգումարեսցին նոքա անդր առ ահի զինուց և զօրականին, եւ պատասխանի Կեսար. “ Առ ի՞նչ ապա և դու ինքնին ո՛չ գնաս փակիս ՚ի տան առ ահին „ ։ Ասէ Կոնսիդիոս. “ Քանզի աներկիւղ զիս գործէ ծերութիւնն։ Զի նշխարեալ կենացս խուն մի աւուրց՝ չեն պէտք մեծապէս հոգոց „ ։

Բայց յայնժամ առ հիւպատոսութեն Կեսարու՝ յամենայն ՚ի քաղաքականութեան գործսն՝ որ առաւել թշնամանագիր նմա, ընտրութիւնն եղև Կղովդիոսի ՚ի ժողովրդապետական բարձին. Կղովդիոս այն՝ որ վնասակար գտաւ ինքնին Կեսարու ՚ի շուք հարսանեացն և պղծեաց զխորհրդատօնն զայն զպիղծերապաշտօն. համայն և այնպէս ընտրեցաւ նա տապալել զԿիկերոնն. և ո՛չ ինքնին Կեսար յուղի անկաւ ՚ի կուսակալութիւն իւր՝ մինչև

'ի միասին ընդ Կղոդեայ նկուն զնա արա-
րեալ վարեաց յԽտալիոյ. և ասեն՝ պա-
տահել իրացս յառաջ քան զԳաղատեան
զմարտն: Այլ սակայն 'ի բնէ ժամանա-
կաց մարտիցն այնոցիկ՝ զոր մղեաց, և 'ի
գեղեցիկ նահատակութեանցն՝ որովն նկուն
զԿեղտան արար, իբրու զայլմէ բուռն հա-
րեալ յայնժամ զսկզբնէ, և նոր և չքնաղ
կալեալ նա ուղի զկենաց և զմրցանաց,
մարտիկ քաջ 'ի ներքս ընծայեցաւ Կեսար
և զօրավար ոչինչ խոնարհագոյն քան ըզ-
հրաշացեալսն յառաջնորդութիւն բանա-
կաց, և քան զաւագամեծար մարդիկ: Եւ
թէ ոք արդեօք յամենայն ազդ զինուորու-
թեան նահատակութեան 'ի կշիռ ընդ նմա
բերցէ զՓաբիոս և զՍկիպիոնս և զՄետել-
լոսս, և զորս առ իւրովքն ժամանակօք կամ
վայր մի յառաջ՝ զՍիւղղաս և զՄարիոս, և
զերկոսին Լեւկուղղոս, կամ թէ զՊոմպէոս
ինքնին զկոմվին. ‘‘Որ փառք երկնաբերձ
ամբառնայր,,, 'ի վերոյ արդեօք անցեալ
կայցեն նահատակութիւնք Կեսարու՝ յոր-
մէ զլեցան նոքա. ոմն՝ 'ի դժուարութենէ
վայրացն՝ ուր մարտ եդեալ կռուեցաւ նա.
ոմն՝ 'ի լայնատահման գաւառացն՝ զոր հա-
սեալ կալաւ. միւս ոմն՝ յամբաւութենէ
անտի և յուժոյ թշնամեացն՝ որոց յաղ-
թեաց նա. ոմն դարձեալ՝ 'ի վայրագասուն
բարոյիցն՝ զոր համբուրեցոյց. և ոմն՝ 'ի
մարդասէր հեզութենէն՝ որով առ պար-
տեալսն առաքինացաւ. և մի ոմն դար-
ձեալ՝ 'ի պարգևաց ձրիցն նորա առ իւրնի-

զակակլիցն. իսկ առ հասարակ ամենեքին՝ 'ի բազմադէմ մարտից պատերազմաց նորա և 'ի բազմութենէ թշնամեացն՝ զոր դիականացոյց նա: Քանզի չև բոլորեալ ամաց տասանց՝ յորս մարտ մղեաց 'ի Գաղատիա, հասեալ կալաւ քաղաքս աւելի քան զութ հարիւր. վանեաց նկուն արար ազգս երեքհարիւր. և 'ի ժամանակս ժամանակս մարտ տուեալ ճակատամարտ ընդ երից հարիւրոց բիւրուց թշնամեաց, 'ի սայր սուսերի մաշեաց հարիւր բիւր 'ի նոցանէ, և նոյնչափ գերի առնէր:

Առ այս՝ և այնչափ խին յորդեաց մտերմութեան սէր զօրականին առ նա և յօժարամտութիւն նոցա, զի և որք հեքացեալքն էին յարշաւանի այլոց զօրավարացն, անպարտելիք յայնժամ երևեցան՝ անվկանդ զօրութեամբ նահատակեալք 'ի վտանգս անհնարինս վասն փառացն Կեսարու: Այսպիսի ոք եկաց Ակիլիոս, որ 'ի նաւամարտին 'ի Մասսալիա վարեալ 'ի նաւ թշնամեացն, և հատեալ նորա աջոյ ձեռնն, անվանելի 'ի ձախոյն կալեալ զվահանն և արձանացեալ նովաւ ընդդէմ թշնամեացն, եհար վանեաց առհասարակ և տիրացաւ նաւուն: Այսպիսի ոք եկաց և Կասսիոս Սկեւաքս, որ 'ի Տիւրրաքեան կռուին նետահար կորուսեալ զակն, և թափ 'ի գեղարդանէ հարեալ ընդ թիկունսն՝ դարձեալ և 'ի բարձն, առ այս և հարուածս փքնաց հարիւր և երեսուն առել 'ի վահանին, համայն և այնպէս ձայն կար-

դայր Թշնամեացն՝ իբրու անձնատուր նոցա լինել. իբրև երկու 'ի նոցանէ մօտեցան առ նա, նա 'ի գործ զվաղակաւորն առեալ հատանէր զուս միոյն, և զմիւսն տապալ յերկիր կործանէր՝ հարեալ 'ի դէմսն. ապա և ինքն անձնապուր լինէր՝ 'ի Թիկունս նմա հասեալ նիզակակցացն: Սոյնպէս և 'ի Բրետտանիա անկեալ Թշնամեացն 'ի վերայ գնդապետացն նահատակաց՝ որ եկեալ խրեցան 'ի վայրս ճախճախուտս և 'ի ջրշեղջսն, անդանօր մի ումն 'ի զօրականէն Կեսարու՝ մինչդեռ ինքնին Կեսար դէտակն ունէր 'ի կռիւն՝ խոյացեալ 'ի մէջ Թշնամեացն և մրցանս քաջութն և դեղեցիկս նահատակեալ, ապրեցոյց զհարիւրապետսն և 'ի փախուստ զբարբարոսն դարձուցանէր, և ինքն ապա յետ ամենեցուն տագնապեալ հատանէր զվայրն՝ մխեալ 'ի տղմասիդ ջրշեղջսն, և հազիւ ուրեմն առանց վահանի կէս 'ի լուղ և կէս մի 'ի քայլ՝ այնպէս անցանէր: Հիացեալ Կեսարու և ընդառաջ զօրականին ելեալ հրճուալից և ծափահար, նա ակնկոր և արտասուօք անկեալ յոտս Կեսարու՝ խնդրէր ներումն զի անդ 'ի վայրին եթող զվահանն: Որպէս և 'ի Լիբիա կալեալ Սկիպիոնի նաւ մի զԿեսարուն՝ յոր ամբարձեալ էր Գրանիոս Պետրոնիոս՝ ընտրեալ գանձաւոր, և գերի վարեալ Սկիպիոնի առհասարակ զամենեսեան՝ ասէր առ Պետրոնիոս՝ արձակել զնա յազատութիւն. նա պատասխանի տուեալ՝ եթէ Կեսարու զօրականն ընաւո-

բեցաւ տաղ փրկութիւն և ոչ առնուլ, հարեալ զուրն գնայր զեւրովլին [1] :

Եւ ապա այս հանդէպք և պատուասիրութիւնք յորդեցան և հանդերձեցան 'ի նմին իսկ 'ի Կեսարէ. առաջին՝ զի պատուէր և պարգևէր զզօրականն լիաձեռն, իբրու որ զկարասին 'ի մարտից կուտեալ իցէ՝ ոչ 'ի գրգանս ինչ և 'ի վայելս անձինն, քան թէ յաւանդ առ իւր պահել զայնոսիկ՝ 'ի մրցանակ հասարակաց քաջութեանն, և ընչաւէտեալ ինքն իցէ 'ի ձիր պարգևաց արժանաւորաց զօրականին. և երկրորդ անգամ՝ զի և ինքնին մտադիւրագոյնս դիմագրաւէր զանձն ամենայն վտանգաց՝ միջամուխ յամենայն 'ի վտանգս: Իսկ այս յառաջամուխ նահատակութիւն նորա չէր ինչ արդեօք սքանչելի, քանզի պատուասիրէր 'ի փառս. սակայն և յափչութիւն կրթեալ էին ընդ այնչափ ժուժկալութիւն առնն 'ի վտանգս քրտանց 'ի վեր քան զկար զօրութեան մարմնոյն. քանզի վտիտ և ապիկար գոլով 'ի խառնուածն, և 'ի մոյն մարմնոյն սպիտակ և դիրգ, և 'ի դում համակեալ գլխոյն և 'ի վերնոտութիւն հատեալ, յորում և ըմբռնեցաւ յախտէ անտի առաջին՝ (որպէս ասեն՝) 'ի Կորտիւբէ. համայն և այնպէս ոչ ինչ բարուր դրգանացն առեալ զապիկարութիւն անձինն, դարման մանաւանդ խնդրէր ախտին 'ի զինուորական վաստակն, 'ի չու անպարտասելի, և 'ի սակաւապէտ հացին, և բացօթեալ գոլով, մարտ

եդեալ կուռէր ընդ կարևոր կիրսն, և այնպէս անպարտելի զմարմինն պահէր։

Էր բազում անգամ զի և 'ի կողմն եղեալ 'ի կառս նստէր կամ 'ի դարգիճ, և այնպէս գործ յարդարէր և զհանդիստ ինքնին գլխովին։ Իսկ զցերեկ բարձեալ բերէր 'ի կառս յայցելութիւն բերդից և քաղաքաց և դղեկաց, բազմեցուցեալ իւր առընթեր մանուկ մի՝ արձանագրել զոր միանգամ տուն տայր նա յուղւոյն, և յետոյ իւր կացուցեալ զօրական մի սուսերաւոր։ Եւ ուղի հատանէր նա 'ի շտապ տագնապի, զի և 'ի խաղալն իւրում առաջին 'ի Հռովմայ, զաւուրս ութ հասեալ ժամանէր 'ի Հռոդանոս։ Եւ էր ինքն յաջողակ 'ի ձիավարել՝ մարզեալ անդստին 'ի մանկութենէն, (քանզի և վարժեալ իսկ էր ձիարշաւ լինել յետ կոյս թիկանցն ընդ միմեամբք զձեռսն ածեալ.) առ այս՝ և 'ի զինուորութեանն գլխովին սովորեցաւ նա դաս նամակաց ասել յերիվարէն, և 'ի միում ժամանակի երկուց ևս դպրաց տուն տալ. իսկ որպէս Ոպպիոս ասէ, և առաւել ևս։ Եւ ասեն՝ Կեսարու առաջին հնարել 'ի գիր խօսել առ բարեկամս՝ ոչ ժամանեալ բարբառել նոցա բերան 'ի բերան 'ի պէտս կարևորս՝ առ մեծաց անպարապութեանց և առ երկայն ապարխայ քաղաքին։ Իսկ սակաւապիտութեան կերակրոյն նորա 'ի ներքս բերեն տարացոյց զդէպսն՝ որ 'ի Մետիոլան. ուրանոր հիւրընկալեալ 'ի Վաղերիոսէ Լէոնէ և եդեալ

նորա առաջի յընթրիս ծներեկ՝ ածեալ 'ի վերայ միւռոն փոխանակ ձիթոյ, եկեր նա անտրտունջ, և յանդիմանէր ևս զբարեկամսն՝ որ պժգային, և ասէ. " Քանզի շատ է ձեզ չուտել յորոց չախորժէքդ. իսկ որ վայրագութիւն զայդպիսի խոտէ, նա ինքն է վայրագ ": Նաև երբեմն յուղւոջ նեղեալ 'ի մրրկէ, և ապաւինեալ 'ի 'ի տաղաւար առն աղքատի, գտեալ 'ի ներքս յարկ մի միայն՝ հազիւ բաւական միոյ մարդոյ, դարձեալ առ բարեկամսն ասէր, տեղի փառաւորն՝ աւագաց է. իսկ անդորրն՝ տկարաց. ապա հրամանն տայր Ոպպիոսի անդանօր հանգիստ առնուլ, և ինքն ընդ այլոց ընկողմանէր անդէն ընդ քուով դրացն:

Արդ առաջին 'ի կեղտացւոց մարտոն նախատակեցաւ նա ընդդէմ Հելվետիացւոց և Տիգուրինացւոց, որ հուր հարեալ՝ այրեալ երկոտասան 'ի քաղաքաց իւրեանց և չորեքհարիւր գեօղեան, հորդան ետուն ընդ Գաղատիա Հռոմայեցւոց, ըստ որում անդ ուրեմն արարին Կիմբրացիք և Տևտոնք. դարձեալ և ոչինչ խոնարհագոյնք քան զնոսա 'ի քաջութեան և 'ի բազմութեան, զի էին առհասարակ նոքա երեսուն բիւրք. և 'ի նոցանէն ինն և տասն բիւրք՝ մարտիկք: Արդ 'ի նոցանէ զՏիգուրինացիսն եհար վանեաց ոչ ինքնին Կեսար, այլ Լաբիենոս արձակեալ 'ի նմանէ՝ մօտ 'ի գետն Արարա: Իսկ Հելվետացիք յեղակարծումն 'ի վերայ անկեալ Կեսարու՝

'ի խաղացուցանել նորա զզօրն 'ի քաղաք մի Նիզակակցաց , աճապարեալ անկաւ նա յանխաբ տեղիս . անդանօր 'ի մի խմբեալ և կարգ տուեալ զօրուն , իբրև 'ի ներքս մատուցին նմա երիվար մի՝ ասէր . " Երիվարաւդ՝ տարեալ նախ զյաղթութիւնդ՝ հետամուտ թշնամեացդ եղէց, այլ զարդիս օ՞ն անկցուք մեք 'ի վերայ դոցա ,, . ասաց և այնպէս հետի առանց կազմածոյ վարազաբար յարձակեցաւ 'ի վերայ : Եւ այնպէս ձիգն մեծ թափեալ և յերկարագոյնս մղեալ մարտ , հարեալ ընկրկէր զթշնամիսն . և սաստիկ ևս ճգնեցաւ ապա 'ի վերայ կառաց նոցա և 'ի զակչլին նոցա . քանզի անդանօր միանգամայն և մանկունք գըլխովին և կանանոյն խումբ մահուչափ մարտ եդեալ կռուեցան , և հարան առհասարակ 'ի սայր սուսերի , ուստի և մարտ պատերազմին հազիւ ուրեմն առնոյր վախճան 'ի հասարակ գիշերի : Բայց 'ի հոյակապ յաղթութեանն յաւելեալ ինչ մի հոյակապ ևս ժողովէր կուտէր զփախստեայ բարբարոսն աւելի քան զաստն բիւր , և ստիպեաց զնոսա դառնալ յերկիրն զոր լքին , և 'ի քաղաքսն՝ զոր աւերեցին : Քանզի զանգիտեաց՝ եթէ զամայացեալ զերկիրն հասեալ կալցեն Գերմանացիք :

Իսկ երկրորդ մարտ մղեաց Կեսար ընդդէմ նոցուն Գերմանացւոց 'ի վերայ Կեղտաց . Թէպէտ և յառաջագոյն 'ի Հռոմ նիզակակից իւր յորդորեալ իսկ էր զԱրիովիստոս զարքայն նոցա : Բայց Գերմանա-

ցէք այսոքիկ սահմանակիցք՝ դժոխըմբերելեք էին հնազանդելոյն Կեսարու. և թուէր նմա այնպէս՝ եթէ պարապ գտեալք և յակատանին իւրեանց չկացեալք՝ ձգեսցին տարածեսցին և հասեալ կալցեն նոքա զԳաղատիա: Այսպ յանհի տեսեալ Կեսարու զինչ զօրապետութեան, մանաւանդ զառհմիկան և զպատանեան՝ որընդ նմա խաղային 'ի Հռովմայ յայն արշաւան՝ իբրու 'ի գըրդանս նմա և յընչաւէտանալ, 'ի մի վայր խմբաց զամենեսեան. սոխպէր զնոսա դարձ առնել. և մի այնպէս գիրգս և կնամարդիս ակամայ դիմագրաւել 'ի վտանգս մարտին. և ասէր՝ առնուլ ընդ իւր զգունդն միայն զտասներորդ և խաղալ ընդդէմ բարբարոսացն՝ զի և չէն իսկ դոքա առաւել քան զԿիմբրացիս, և չէ իսկ ինքն նուազ քան զՄարիոս: Յայնժամ 'ի տասներորդ գնդէն դային առ նա դեսպանք շնորհս ունել մեծապէս. իսկ այլոց գնդացն զօրականք մեղ եդեալ ցանուլին իւրեանց զօրագըլխայն՝ և այնպէս ապա առհասարակ միագունդ նահատակեալք զհետ խաղային նորա բազմօրեայ ճանապարհաւ. մինչև եկել բանակ հարկանէին հեռի 'ի թշնամեացն ասպարէզս երկերիւր:

'Ի գալուստ միայն Հռոմայեցւոցն սըրտաբեկ լինէր Արիովիստոս. քանզի անակնունելի այնպէս զՀռոմայեցւոցն տեսեալ զհորդան ընդդէմ Գերմանացւոց, յորոց և յերեսացն փախչէին նոքա, իսկ յայնժամ դիմագրաւ ինքնին զԿեսար տեսեալ,

հիացեալ կայր ընդ արիութիւն առն, տե_
սանէր և զիւր զօրն միջաբեկ առհասարակ։
Բայց ապա սրտաթափք ևս անկան բեկան
յայնժամ Գերմանացիք և 'ի դրդջանց ըն_
ձապատուամ կանանւոյն, որք դէտակն 'ի
պտոյտս դետոց կալեալ՝ գուշակութիւնս
'ի վեր բերէին 'ի յորձանաց անտի և 'ի
գրգանաց ջրոյն. չտային խորհուրդ՝ մարտ
յարդարել պատերազմի՝ մինչև ծագեալ
նորոյ լուսնի։ Իրազգած այսոցիկ եղեալ
Կեսարու և յանդորրու զԳերմանացին
տեսեալ, լաւ համարեցաւ մարտ ընդ նո_
սա դրդուել 'ի սրտաբեկութեան նոցա,
քան թէ զտեղի առնուլ մնալ դէպ ժա_
մանակին նոցա։ Հա՛պա խաղաց գնաց կր_
ռուել յամուրս նոցա և 'ի վերայ բլրոյ 'ի
բանակետղ անդր նոցա, դրդեաց գրգռեաց
մինչև առ զայրացուս բարկութեանն մղե_
ցան իջին նոքա 'ի գոռն։ Ընդ սպառ սպուռ
հարուած 'ի վերայ ածեալ նոցա Կեսար,
հետամուտ լինէր ապարէզս երեքհա_
րիւր 2 մինչև 'ի Հռենոս, և ընոյր զեղոյր
զամենայն զգաշտն դիակամբք անկելոցն և
յանկածէ աւարացն։ Բայց Արիովիստոս
աճապարեալ 'ի փախուստ ընդ սակաւուց՝
անցանէր 'ի Հռենոս։ Եւ ասեն ութ բիւ_
րուց յայնժամ տապաստ անկանել։

'Ի դլուխ զգործն տարեալ՝ թողոյր զզօրն
'ի ձմերոցս Սէկուանացւոց. և ինքն ուշ կա_
լեալ 'ի Հռոմ՝ իջանէր 'ի Գաղատիա առ
Պադոսիւ 'ի գաւառ կուսակալութեան
իւրոյ. քանզի Հռուբիկոնն դետ անջրպե_

տէ զխտալիս զմիւս 'ի Կեղտացն՝ որ յայսկոյս Ալպեանց: Անդանօր զտեղի կալեալ յինքն յանկուցանէր զմարդիկն՝ զի բազումք խռնեցան զնովաւ. և նա առն առն տայր բաշխէր զխնդրելին. և մեկնեալ գնային նոքա բազում ինչ 'ի ձեռս բերեալք, և բազմագոյն ևս ակնկալեալ. և այնպէս ողջոյն յարշաւանսն յայնմիկ ոչինչ խելամտեցաւ Պոմպէոս՝ եթէ յայնժամ Կեսար 'ի զէնս քաղաքացեաց միանգամայն և զԹըշնամին հարկանէր վանէր, և յինչս Թշնամեացն՝ յինքն զքաղաքացին տանէր:

Բայց լուր առեալ Կեսար՝ զի Բելգացիք յաղԹահարուստք 'ի Կեղտս բնակաւորք երրորդ մասին Կեղտաց, փոխանջեալք խմբեցին բիւրաւորս բազում վառելոց, դէպ ուղիղ 'ի նոսա դիմեալ չու առնէր 'ի շտապ տագնապի. անկեալ 'ի վերայ նոցա՝ յապականել նոցա զերկիր նիզակակցացն, հարկանէր սաստիկ զբազումս 'ի գնդէն նոցա՝ որ գամ մի վատացան 'ի կռուին. հարուածս անհնարին ածէր նոցա՝ որպէս զի և ընդ լիճս և ընդ գետս խորս անցանել Հռոմայեցւոց՝ 'ի Թանձրութենէ անկեալ դիականցն: Եւ ապա յայլոց ապստամբեացն առհասարակ բնակաւորքն առ Ովկիանուն, անկռիւք անձնատուր նմա լինէին: Բայց նա առեալ խաղացուցանէր զզօրն ընդդէմ Ներբիացւոց, որ վայրենիք ևս էն 'ի նոսա և քաջամարտիկք: Սոքա բնակաւորք 'ի Թաւուտս անտառախիտ մայրեաց, ամրացու-

ցեալ զԼուրեանց որդիսն և զկարասին 'ի խոր անտառին հեռի յոյժ 'ի Թշնամեացն, անկանէին յեղակարծումն ամբոխիւ վեց բիւրուց 'ի վերայ Կեսարու՝ 'ի գործել նորա ղակիչ յանակնկալ ժամուն: Ընդհարեալ սատակէին զայրուձին, և 'ի ներքս փակեալ զերկոտասաներորդ զգունդն և զեօթներորդ՝ առհասարակ զխաթեալ առնէին զգնդապետսն. և Թէ ինքնին Կեսար 'ի բուռն զասպարն առեալ և ուղի հատեալ ընդ մէջ նահատակացն՝ չէր յայնժամ ընդդէմ խոյացեալ խժդժիցն, և անդուստ 'ի բլրոցն չէր նմա 'ի տագնապին 'ի Թիկունս հասեալ տասներորդ գնդին և սուր 'ի վերայ ածեալ Թշնամեացն, արդեօք ճողոպրէր և ոչ ոք յայնժամ 'ի Հռոմայեցւոց: Ապա յայնմ մեծի տագնապին մարտ սաստիկ եղեալ կռուեցան նոքա խրախուսեալք 'ի քաջութենէն Կեսարու, սակայն և ոչ այնպէս Թիկունս դարձուցեալ 'Ներբիացւոց՝ անդէն 'ի սուր սուսերի մաշեցան յանհնարին գռուին. յորոց և ասեն ապրեալս հինգհարիւր ոգիս յերից բիւրուց անտի, և երիս միայն 'ի չորեքհարիւր աւագանւոյն նոցա:

Համբաւ բանին հասեալ 'ի Հռոմ, հրաման տայր Սենկղիտոսն զոհ յաղէլ դից և տօն կատարել զաւուրս հնդետասան. որչափ ինչ երբէք ոչ տօնախմբեցաւ յաղԹութիւն այլ. քանզի և մեծապէս էր վըտանգն, զի 'ի միում ժամու ալմկեալք յուզեցան այնչափ ժողովուրդք. առ այս՝

զի և 'ի Կեսարէն ինքնին շուք առնոյր յաղթութիւնն՝ առ մեծապէս մտերմութեան խուժանին առ նա ։

Յայնժամ ապա կարգ առեալ իրայն Գաղատիոյ՝ դառնայր միւսանգամ ձմերել առ Պադոսիւ, դէտ ակն կալեալ 'ի քաղաքն ։ Քանզի անդանօր ոչ միայն հետամուտք բարձից յաջողէին յայնժամ նպաստ զնա ունելով և զարծաթ նորա 'ի կաշառ խուժանին, և գունակ գունակ հնարէին յաղթահարուստ առնել զնա, այլ և բազումք յոյժ յաւագաց անտի և 'ի հոյակապից ընդառաջ չոքան նորա 'ի Լուկա. յորս և ինքնին Պոմպէոս և Կրասսոս և Ապպիոս զօրավար Սարդոնեայ և Նեպոս փոխանակ հիւպատոսին Իբերիոյ. զի և էին իսկ յայնժամ անդանօր հարիւր և քսան վարոցաւորք, և 'ի Սինկղիտոսէն ոգիք աւելի քան զերկերիւր ։

Արդ սոքա կատարեալ զակումբ խորհրդոյն՝ զատեան 'ի միմեանց, հաստատեալ յայնժամ կարգել հիւպատոս զՊոմպէոս և զԿրասսոս, և տալ Կեսարու արծաթ և երկայնել ձգել զկուսակալութիւն նորա այլ ևս հնգամեայ ժամանակ. որ և դժպատեհ բանն երևէր իմաստուն մարդկանն ։ Քանզի որ այնչափ արծաթ առնուին 'ի Կեսարէ՝ նոքին յայնժամ յառաջ անցեալ թելադիր լինէին Սինկղիտոսին տալ նմա արծաթ 'ի ձեռս իբրև չքաւորի. նաև ստիպէին ևս 'ի գլուխ տանել՝ Թէպէտ և դժկամակս՝ զխորհուրդս իւրեանց, զի և

չէր իսկ յայնժամ մերձ կատոճն՝ (զոր և խորհրդով տարադէմ 'ի Կիպրոս արձակեալ իսկ էին նոքա): Թէպէտ և Փաւով-նիոս անդանօր Թեկն զկատոճնի ածեալ՝ ընդդէմ դառնայր նոցա, տեսեալ անօգուտ զջանսն՝ արտաքս ընդ դուրսն վազեալ բողոք առ ժողովուրդն բառնայր. սակայն ունկն դնէր նմա և ոչ ոք. կէսք՝ շուք Պոմպէի ածեալ և Կրասոսի, և կէսք դարձեալ և բազմադոյնք՝ լռիկ հանդարտեալք 'ի շնորհս Կեսարուն՝ իբրև առ նա ակնկառուցք 'ի յոյս ակնկալութեան:

Ապա դարձ Կեսարու արարեալ 'ի բանակ իւր առ Կեղտս, մարտ անդանօր գտանէր պատերազմի. քանզի այն ինչ անցեալ էին ընդ Հռենոս կրկին ժողովուրդք Գերմանացիք հասանել գրաւել գետին՝ Ուսիպատացիք և Տենտերացիք: Իսկ վասն կըռուոյն սոցա՝ ինքն Կեսար արձանագրեաց յիւր Օրագիրսն, եթէ 'ի բանի արարեալ զնա բարբարոսացն 'ի ձեռն դեսպանացն իւրեանց, ապա յանակնկալ ժամուն անկան 'ի վերայ նորա յուղւոջ, և յայնժամ ութհարիւր 'ի նոցանէ այրուձի՝ եհար վանեաց հինգ հազար յիւրոց անտի: Իբրև կրկին նոքա բանբերս այլ արձակեցին առ նա 'ի նենգել, յայնժամ նա 'ի դիպահոջ զնոսա արարեալ՝ խաղաց ընդդէմ բարբարոսացն. ծանծաղմութիւն համարէր հաւատ ընծայել այնպիսի խաբուսիկ և դըռուժան մարդկանն: Նա պատմէ մեզ Գանիւսիոս՝ եթէ 'ի վճիռ տալ Սինկղիտոսին

տոնից և զոհից յայնժամ վասն յաղթութեանն Կեսարու, անդուստ Կատոնի զիւր խորհուրդն 'ի ներքս բերէր՝ զԿեսար ինքնին առնուլ 'ի ձեռս տալ բարբարոսացն և քաւեալ զքաղաքն յուխտադրուժ վնասէն՝ 'ի գլուխ վնասակարին կոտել զանէծսն: Բայց յայնժամ յորոց միանգամ ընդ գետն անցին՝ դիտապատ անկան ոգիք քառասուն բիւր, և նուաղունք յետ ընդ կրունկն դարձեալք՝ ապաւինեալք անկան յայնժամ առ Սուգամբրացիս ժողովուրդ Գերմանիոյ:

Յայսց պատճառաց ապա Կեսար խաղացեալ ընդդէմ նոցա, և զի և պատուասիրէր ևս 'ի փառս՝ առաջին 'ի մարդիկ անցանել զօրու ընդ Հռենոս, կամուրջ կապեաց 'ի վերայ լայնարձակ գետոյն, 'ի վայրն ուր մանաւանդ լցեալ նա դարիւ և դարիւ դայր բուռն և ալէտանջ, ածեալ ընդ իւր 'ի ծառոց բունս կոճեղս և չերուս, և հարեալ սասանէր զմոյթս կամրջին. բայց Կեսար հաստատեալ 'ի վերայ 'ի մէջ հոսանացն ստուարս գերանաց 'ի թումբ բռնութեան թափոյն՝ խորտակէր զբախուն կոհակացն ընդ հաստարանն. կատարեալ զկամուրջն աւուրս տասն՝ անհաւատալի լինի իրս ամենայն տեսանելեաց: Ապա զզօրն անցուցեալ յայնկոյս, և 'ի թշնամեաց 'ի դիմի հարեալ նմա և ոչ ոք, այլև ինքնին Սվէբացիք հզօրք առաւել քան զԳերմանացիս՝ խոյս տուեալք վերջանեցան 'ի ձորս խորաձորս և անտառա-

մոլս. իսկ նա 'ի հուր դատեալ զերկիրն և հաստատեալ անդէն զՀռոմայեցւոց նիզակակիցսն, դարձաւ միւսանգամ 'ի Գաղատիա. աւուրս միայն ութ և տասն անցուցեալ 'ի Գերմանիա:

Այլ ապա յարշաւանսն իւրում ընդդէմ Բրետանացւոց յոյժ քաջացաւ և ըզհամբաւի հարաւ: Քանզի ինքն առաջին նաւագնաց խաղայր ընդ Ովկիանոսն արեւմտեան. հատեալ զԱտլանտեանն, ածէր անդանօր զօր 'ի մարտ պատերազմի՝ 'ի մոլի եղեալ հասանել ունել զԿղզին. որ և ըստ համբաւոյն՝ լայնատարր մեծութիւնն անհաւատալի կարծէր, և պայքարս եւս շատ և վէգ վասն նորա մատենագիրք յուզեցին՝ իբրու որ անուամբ չափ միայն իցէ և կեղծիք անգոյից իցեն. բայց Կեսար նովաւ զՀռոմայեցւոց տէրութիւնն առեալ ընդարձակեաց ըստ սահման տիեզերացս: Երկիցս յայն կղզի նաւէր անցանէր 'ի Գաղատիոյ՝ որ 'ի հանդիպոյ կայ նորա. և անդ 'ի բազում պատերազմունս առաւել զեան թշնամեացն հասուցեալ՝ քան շահ օգտի իւրոցն (քանզի և չէր ինչ 'ի պատուականաց առնուլ գանձել յարանց անտի խոշորակեցից և յաղքատաց), և ոչինչ ելք լինէին արշաւանին այնորիկ ըստ ըղձին նորա. այլ պատանդս միայն առեալ 'ի թագաւորէ կղզւոյն՝ և հարկս 'ի վերայ եդեալ չու առնէր 'ի վայրացն: Հասեալ 'ի Գաղատիա, առնոյր զնամականին զոր 'ի կղզի անդր հանդերձեալ էին առաքել՝ դրեալ

'ի Հռովմայ 'ի բարեկամացն՝ գումարեր մահու դատերն 'ի ծնունդան առ Պոմպէի. յորմէ և կարի 'ի խոր խոցեցաւ միանգամայն Պոմպէոս և Կեսար: Սրտառուչ և բարեկամքն լինէին՝ զի լուծաւ մերձաւորութիւն նոցա ընդ միմեանս՝ ախտակրելոյ քաղաքին խաղաղարար և յօդակապ. այն զի և երեխայն արանց մեռանէր յետ ոչ բազում ինչ աւուրց 'ի մահուանէ մօրն: Բայց զՅուլիա բարձեալ ժողովրդոց ուժգին՝ Թէպէտ և ժողովրդապետաք ընդդէմ դարձան՝ տանէին 'ի դաշտն Արեսեան, և անդ դիահանս արարեալ հանդուցին:

Յետ այսորիկ բռնադատեալ Կեսարու բաժանել բաշխել զբանակն մեծ 'ի ձմերոցս ձմերոցս. և ինքն ըստ սովորութեանն յուղի անկեալ յԻտալիա կոյս, անդէն միւսանգամ յուզեցան ապստամբութիւնք 'ի Գաղատիա. և գունդք ստուարք ասպատակ կապեալ հարկանէին զձմերոցս Հռոմայեցւոց, և մարտ եդեալ կռուէին ընդ պատնէշսն: 'Ի նոցանէն գունդ մեծ և բազմաձեռն 'ի քաջամարտկաց անտի զօրավարեալ յԱմբիորիգեայ՝ անկեալ 'ի վր̃ Կոտտասայ և Տիգիւրիոնի, հարին ողջոյն զզօրս նոցա: Եւ ապա ամբոխ մեծ վեցից բիւրուց եկին պատեցին պաշարեցին զգունդն Կիկերոնի. և վայրիկ մի ևս մեծաւ բռնութեամբ նկուն առնէին զզօրն, որ առ հասարակ վիրաւորք զտեղի առեալք կռուեցան քան զօրութեամբ՝ առաւել ևս արիութեամբ: Բօթ հասեալ առ Կեսար՝

որ 'ի բայեայ կայր, 'ի շտապ մեծի տագնապի դառնայր յետս, և խմբեալ գունդ մի եօթն հազարաց փութայր ձեպէր 'ի Թիկունս Կիկերոնի: Իրազգած գալըստեանն եղեալ պաշարողացն, խաղացին ընդ առաջ Կեսարու յընչաց քերեալ ըզգունդն սակաւաձեռն՝ իբրու որ ճարակ նոցա իցէ: Բայց Կեսար խաբկանօք խոյս տուեալ 'ի նոցանէ, մինչև եկեալ հասանէր 'ի վայրս քաջադէպ կռուոյ սակաւուք ընդ բազմաց. անդանօր ամրութիւն ածեալ բանակին՝ պատուէր տայր զօրականին խուսափել յամենայն կռուոյ. առ այս՝ և առնուլ բարձրացուցանել զպակիշն և քաջ պնդել աղխել զդուրսն, իբրու որ բնաւ իսկ արհաւրօք լցեալ իցեն. բիւրապատիկ հնարէր՝ արհամարհ յոյժ երևել յաչս Թշնամեացն: Իբրև նոքա յանձնապաստանք հրօսակ եդուն այնպէս անկարգ և խառն 'ի խուռն, յանկարծակի խաղաց նա արտաքս, և 'ի վերայ անկեալ 'ի փախուստ դարձուցանէր և տապաստ զբազումս արկանէր 'ի նոցանէ: Ցայսմանէ ապա 'ի տեղեաց տեղեաց նկուն ապստամբութիւնքն լինէին Գաղատացւոցն այնոցիկ. իսկ նա շուրջ ընթանայր, և զձմեռն զայն՝ ամենայն ուրեք պահ մեծապէս զգուշութեան ունէր ամբոխից նոցա: Քանզի և յայնժամ եկին հասին առ նա յԻտալիոյ գունդք երեք փոխանակ անկելոց զօրականին. երկուք առ 'ի Պոմպէէ, և երրորդ դարձեալ զօրաժողով 'ի Գաղատիոյ՝ որ առ Պադոսիւ:

Բայց յետ այսորիկ 'ի տեղիս բացաձիգս սկիզբն ահեղ և բազմարկածեան մարտի՝ որպիսի ոչ երբէք 'ի կողմանս յայնոսիկ՝ անդուստ 'ի վաղ ժամանակաց անկեալ նիւթեալ զանխուլ 'ի ժողովուրդս քաջամարտիկս, և տածեալ աճեցեալ 'ի ճոխից արանց և յաւագաց, 'ի վեր յերկան գային յայնժամ 'ի կողմանց կողմանց զօրաժողով ամբոխ մեծ պատանեաց և զինուց, և կուտեալ ամբարեալ բազմամթերս ընչից 'ի գործ մարտին, և հասեալ կալեալ քաղաքս ամուրս և վայրս անխաբս: Եւ էր յայնժամ եղանակ ձմերայնոյն, և սառամանիք էին 'ի գետս, և ձիւնախաղաղ մայրիք անտառաց, և դաշտագետինք ուղխահոս ողողեալ. և խցեալ յայնժամ կուրացան ճանապարհք, որ 'ի թանձրութէ հիւսից ձեանց, և որ 'ի ճահճաց և 'ի յորդելոց հոսանաց. և մեծապէս վտանգեալ ուղևորութիւն՝ թուէր լինել անհնարին սպարտել Կեսարու յայնժամ զբարբարոսն: Եւ ազգք խմբեցան յայնժամ բազումք, և գլխաւորք էին նոցա Արվեննացիք և Կարնուդացիք. և սպարապետ մեծ առհասարակ մարտին էր Վերգենտորիքս, որոյ զհայրն սպանեալ իսկ էր Գաղատացւոց՝ կասկած առեալ զբռնակալութեան առն: Արդ սա զզօրն 'ի գունդս գունդս բաժանեալ, և զօրավարս կարգեալ բազումս, հասանէր ունէր ողջոյն շուրջանակի զգաւառն մինչև յԱգրիա. զմտաւ ածէր՝ 'ի յուզել ալմիկաց 'ի Հռոմ ընդդէմ Կե-

սարու, համօրէն զԳաղատիա դրդել վառել 'ի կռիւ մարտի. իսկ եթէ և վայր մի դանդաղեսցի 'ի գործն, 'ի պատաղել Կեսարուն 'ի մարտս քաղաքին, ինքն արհաւիրս մեծամեծս արկցէ խռովոյ առհասարակ ոչինչ պակաս քան զԿիմբրացին' որ 'ի Նախնումն:

Բայց Կեսար անդստին 'ի բնէն' 'ի մարտին նախահատակութիւնս յոյժ ակնկառոյց 'ի դէպ ժամանակն, անդէն իբրև լուր էառ զապստամբացն, վաղվաղակի չու առնէր դառնայր ընդ նոյն ճանապարհ. յայն շտապ անհնարին տագնապի ուղևորութենն այնպէս 'ի խոր ձմերայնի' անկռուելի և անպարտելի զիւր զօրականն ցուցանէր յաչս բարբարոսացն: Քանզի ուր հրեշտակի առն կամ պատգամաւորի ուրուք անհնարին երևէր ընդ ժամանակ ձիգ հասանել ժամանել, նա եհաս ժամանեաց անդր ողջոյն բանակաւն. յաղարտ վարէր զերկիրն. հարկանէր վանէր զամուրս. քանդէր տապալէր զքաղաքս. իսկ որ հնազանդեալ անձնատուր լինէին' առնոյր ժողովէր: Յայնժամ մարտ ընդդէմ կարգացին նմա և Եդուացիք ինքնին, նոքա' որ յառաջ ժամանակաւ Հռոմայեցւոց հարազատս կարդային զանձինս, և մեծապէս պատուեալք էին 'ի նոցանէ, և յայնժամ խմբեալք ընդ ապստամբացն, յոյժ սրտաբեկ զզօրականն արարին զԿեսարուն: Այր աղագաւ և նա չու անտի արարեալ անցանէր գայր յերկիրն Լինգոնացւոց, խնդրէր միանալ ընդ

Սիկուանացիս բարեկամն իւր և դրացիս Իտալիոյ 'ի հանդիպոյ Գաղատիոյ ։

Անդանոր ապա 'ի վերայ նորա անկեալ Թշնամեացն և 'ի ներքս փակեալ զնա 'ի բիւրաւորս բազում զօրաց , նա ընդդէմ քաջապէս նահատակեալ, իբրև խառնուրդ լինէր դոռին՝ 'ի վերջէ ուրեմն յաղթական վանէր հարկանէր զբարբարոսն՝ ժամս հարուստ կռուեալ և արհաւիրս արկեալ ։ Բայց Թուի յառաջինն կռուոյն՝ ձախողակի ինչ պատահեալ նմա . քանզի Արուվենացիք սուսեր մի ցուցանեն կախեալ 'ի ձօն ուրեք 'ի մեհենին իւրեանց՝ իբրու աւար կապուտ զԿեսարուն , զոր և յետ ժամանակաց անդանոր տեսեալ ինքնին Կեսար՝ ժպտեցաւ . իբրև անդանոր բարեկամքն պնդեցան առնուլ զսուրն 'ի վայր՝ Թոյլ չետ այնմ Կեսար իբրև նուիրական ձօնի ։ Իսկ 'ի փախստէից անտի մարտին բազում այն էին որ ընդ արքային անկեալ ապաւինեցան 'ի քաղաքն Աղեսիա ։ Բայց Կեսար 'ի պաշարել անդ զքաղաքն զայն անվանելի ահագնապարիսպ և մարտիկ որերով բազմաժողով, արտաքոյ 'ի վտանգս անհնարին տագնապեցաւ , զոր և չմարթի ոք բանիւ պատմել ։ Քանզի յայնժամ կորովեք և առհասարակ քաջք 'ի Գաղատացւոց զօրաժողով վառեալք եկին Թափեցան 'ի Թիկունս Աղեսեայ ամբոխ մեծ երեսուն բիւրուց . և 'ի ներքս դարձեալ՝ ոչ ինչ պակաս քան զհարիւր և վաթսուն հազար էին արք պատերազմիկ ։ Յայնմ մեծի

տագնապի յորդիս ապստամբ Կեսար՝ փակեալ պաշարեալ յառաջոյ և 'ի Թիկանց յայնպիսի ահեղ պատրաստուԹենէն, հրաման տայր պատնէշս կրկին ածել ամրուԹիւն յառաջոյ քաղաքին, և միւս ևս յետոյ ընդդէմ խուժելոցն արտաքուստ. զի Թէ երբէք երկուց բանակաց Թշնամեացն միացեալ էր՝ անշուշտ մահ առ դուրս հասեալ կայր սպառասպուռ զօրուն Կեսարու:

Որ աղագաւ և յոյժ ճահողակի 'ի մեծապէս վտանգէն Ալեսեան բազմապատիկ փառաւորեցաւ Կեսար. 'ի հանդէս մեծի արուԹեան և հանճարոյ՝ առաւել քան յամենայն մրցանսն առաքինացեալ 'ի վայրին. և որ սքանչելին ևս՝ զանխուլ 'ի բնակչաց քաղաքին պահեաց զկռիւն և զպարտուԹիւնն զբիւրաւորացն որ արտաքոյ. նա և ոչ Հռոմայեցիք ինքնին պահակերք յառաջոյ պատնիշին իմացան ինչ, մինչև անդուստ 'ի քաղաքէն ձայն արտասուաց լսէին զարանց և ձիչ զկոծոց և զաշխարանս կանանւոյն, այն ինչ 'ի կողմանց կողմանց քաղաքին յակն արկեալ տեսանէին ասպարս բազումս արծաԹազարդս և ոսկեճամուկս, և պատեանս զրահից արիւնաԹաԹաւս և կահս և կարասիս և խորանս զԳաղատացւոց, զոր բարձեալ բերեալ կուտէին Հռոմայեցիք 'ի բանակետղն. այնպէս ուրեմն արագավախճան իբրև խօլք ցնորից կամ երազք անուրջոց՝ դիր և տար լինէր այնչափ ամբոխ Թշնամեացն, բազմադոյնք 'ի նոցանէն տապաստ անկեալ 'ի կը-

ռուլին: Իսկ որք 'ի ներքս յԱլեսիա՝ ոչինչ դուզնաքեայ հաւատացեալ վիշտ անձանց և Կեսարուն դարձեալ, 'ի վերջէ ուրեմն անձնատուր լինելին. և անդ Վերգենտորիքս զօրավար մեծ առհասարակ պատերազմին՝ արկեալ զանձամբ զէնս գեղեցիկս յոյժ և վառեալ այնպէս ելանէր դայր ընդ դուրսն յերիվար աշտանակեալ շքեղ և պալարակապ, և մօրակեալ շրջան առ Կեսարուն առեալ՝ որ անդ բազմեալ կայր. էջ յերիվարէն և զսպառազինութիւնն մերկացեալ և 'ի բաց եդեալ՝ այնպէս յոտս անկանէր Կեսարուն և կայր անմռունչ. մինչև զօրականին 'ի ձեռս տուեալ զնա Կեսար՝ տայր պահել 'ի հանդէս յաղթանակին իւրոյ:

Բայց էր անդուստ 'ի բազմաց հետէ խորհուրդ Կեսարուն՝ մենքենայել տապալել զՊոմպէոս, բառ որում և ինքնին Պոմպէոս հնարէր դաւաճանել զԿեսար: Քանզի յանկանել Կրասոսի 'ի Պարթևս՝ այն որ երկոցունցն ևս ահագին էր, այնուհետև առ 'ի աւագանալ՝ հասանէր արդեօք Կեսարու զՊոմպէոս տապալել զայր աւագ. դարձեալ և Պոմպէի անձնապահ 'ի վըտանգէն եղեալ՝ կանուխ բառնալ զնա յորմէ երկնչէր: Քանզի և այն ինչ սկսեալ էր զանդիտել 'ի Կեսարէ՝ զօրով և ցանդարհամարհեալ իսկ էր, իբրու հեշտին կարծեալ գործ՝ նկուն անդէն զայրն առնել զոր նա ինքնին յաւագութիւն ամբարձ:

Բայց Կեսար անդստին 'ի ընէն զնոյն

խորհուրդ կալեալ ընդդէմ ախոյենիցն՝ երկայնադոյնս յածեալ և վարժեալ 'ի Կեղտաց մարտն իբրև ըմբիշ, կրթեաց հրահանգեաց զիւր զօրականն, և բարգաւաճէր 'ի փառս, և ամբարձաւ բարձրացաւ 'ի մըրցանս քաջութեանն զուգակշիռ արդեօք նահատակութեանցն Պոմպէի. դէպ ժամանակ գտեալ կէս մի ինքնին 'ի Պոմպէէ, և կէս մի 'ի հանգամանաց ժամանակին և 'ի ձախողակ վարչութենէ անտի քաղաքին: Քանզի յայնժամ արքն հետամուտք բարձից՝ տրապիզս եդեալք 'ի հրապարակի անպատկառ լրբութեամբ գնոց գնէին ըզխուժանն. և անդանօր վարձկան խուժանն՝ իջանէր գայր ոչ քուէայս միայն արկանել 'ի կաշառատուացն կողմն, այլ և 'ի վերայ նոցա 'ի վէդ գալ կռուել աղեղամբք և սրովք և պարսաքարամբք. և էր բազում անգամ մեկնել բաժանել այր յընկերէ՝ ընդ ապաժոյժ բերելով զատեանն և ընդ արիւն և ընդ ապաւառ, լքեալ այնպէս յանիշխանութեան զքաղաքն՝ իբրու անղեկավար առ 'ի ծփանացն տարաբերեալ. որպէս զի և մտաւոր մարդկանն յայնժամ սիրելի էր, զի ոչ 'ի վատթարագոյն ինչ ևս քան զմիապետութիւն՝ հոլովեալ կործանեսցին իրքն յայնչափ մոլեգնութենէ և յալէտանջ կրիցն: Էին էին և որ ժտեցան յայնժամ տալ յայտնի, եթէ միապետութեան միայն պէտք իցեն քաղաքին 'ի բժշկութիւն. և զի՝ զդեղ զայն առնուլ պարտ իցէ 'ի դեղատուէն՝ որ հեզագոյն

նա լիցէ քան զամենայն բժիշկս. և ծածուկ ակնարկէին բանիւն զՊոմպէոս: Եւ թէպէտ և ինքնին Պոմպէոս վեր 'ի վերոյ բանիւք հրաժեշտ տայր 'ի բարձէն, այլ արդեամբք թուէր խնամ առ 'ի նոյն կրթել. որ աղագաւ և Կատոնին յայնժամ խելամուտ իրացն եղեալ՝ ածէր հաւանեցուցանէր զծերակոյտն՝ հիւպատոսութիւն տալ նմա առանց իշխանակցի. որպէս զի նա օրինաւորաւն այնուիկ գոհ եղեալ բարձիւ, մի ուժգին զիշխանապետութիւնն առցէ: Հաւանեցաւ Սենկղիտոսն. և առ այս դարձեալ՝ երկայնեաց նմա զաւուրս իշխանութեան կուսակալութեան գաւառացն, այն են՝ Իբերիա և Լիբիա ողջոյն. զոր և տանէր բերէր նա 'ի ձեռն փոխանակաց բդեշխից՝ կարգեալ անդանօր բանակ զօրաց. ուստի և ամի ամի հազար քանքարաց տայրն նմա յարքունի գանձէն:

Բայց անդուստ Կեսար կրթէր 'ի հիւպատոսութիւն՝ արձակեալ մարդիկ վասն այսորիկ 'ի Հռոմ. առ այս՝ և խնդրէր երկայնել և նմա զաւուրս իշխանութեան իւրոյ: Զառաջինն լուռ եւթ կայր Պոմպէոս. այլ ընդդէմ դարձան նմա Մարկեղղոս և Լենտղոս՝ ատելութեամբ բերեալք առ Կեսար, և իրս կարևորս և անկարևորս 'ի ներքս բերէին նոքա 'ի նախատինս և յատնհարութիւն Կեսարու: Քանզի 'ի քաղաքացեաց համարէին զլկեցին հանէին զՆեոկոմացիս՝ այն ինչ արձակեալս 'ի Կեսարէ բնակել 'ի Գաղատիա. և Մարկեղղոս ինք-

նին այր հիւպատոս գան անարգաբար գաւազանի տայր ըմպել միում յաւագացն՝ որ եկեալն էր 'ի Հռոմ. և ասէր նա՝ զկապուտակ գանին կնքել 'ի մարմնի՝ գիտել զի չէ Հռովմայեցի. և ասէր նա՝ գնալ ցուցանել զայն Կեսարու:

Իսկ իբրև ժամանակ ընդ հիւպատոսութեանն Մարկեղլոսի, յայնժամ Կեսար բաշխեալ ամենայն աւագաց քաղաքին ինչս լիաձեռն 'ի գանձէ անտի՝ զոր կուտեաց 'ի Գաղատիա, և զԿուրիոնն ինքնին զժողովրդապետ պատուեալ 'ի ծանր պարտուցն, և Պաւղոսի առն հիւպատոսի տուեալ քանքար հազար և հինգ հարիւր՝ որով և շինեաց նա զարքունիսն՝ չէն հրաշակերտ 'ի հրապարակին փոխանակ Փուլվեան արքունեացն, յայնժամ ապա Պոմպէի զանգիտեալ յամբոխից՝ 'ի վեր առեալ զպատրուակն մաքառէր. հնարս հնարէր և զնոյն տայր առնել և բարեկամացն, առնուլ զոք ընտրել փոխանակ Կեսարու 'ի կուսակալութիւն անդր. և առաքէր խնդրէր 'ի Կեսարէ զզօրականն՝ զոր ինքնին արձակեալ իսկ էր առ նա 'ի մարտն Կեղտաց: Ցանձն առնոյր Կեսար. դարձուցանէր առ նա զզօրականն, և պարգևս ետ առն առն 'ի նոցանէ բաշխէր դրամակըշիռս երկերիւր և յիսուն: Իսկ որք զզօրականն զայն առեալ ածին առ Պոմպէոս, եկեալ զրոյցս անճահս և դժպատեհս վասն Կեսարու յորդէին 'ի խուժանն, և զՊոմպէոս ինքնին խանդարեցին մտօքն յու-

սովք. կարծեցուցին՝ ըղձակալԹ առ Պոմ-
պէոս լինել զօրուն Կեսարու. որպէս զի
եԹէ և 'ի Հռոմ 'ի մախանաց ինչ, և յան-
կարգուԹենէ քաղաքին նմա դժուարին ի-
ցէ 'ի գլուխ կալ գործոցն, լիցին իսկ ա-
ւագին 'ի նա զօրականք Կեսարու յոյժ
զմիտս յանդուցեալք, զի և դամ մի ան-
ցեալ յԻտալիա՝ անդէն խմբեսցին ընդ
նմա. այնպէս ուրեմն տաղտկացեալ են
նոքա 'ի Կեսարէ 'ի բազմապատիկ արշա-
ւանացն. առ այս՝ զի և զանգիտեալ խի-
Թան 'ի միապետուԹենէ նորա: Յայսպի-
սեաց աստի զրուցաց յիմարեցաւ փքացաւ
Պոմպէոս. և զանց առնէր զօրաժողով լի-
նել, իբրու որ յանդորրու կացեալ իցէ.
ուստի և բանիւք չափ միայն և խորհրդովք
յատենին 'ի դիմի հարկանէր Կեսարու,
և կարծէր վէր 'ի վայր առնել զայրն:

Բայց Կեսարու փոյԹ ինչ չէր վասն այ-
սորիկ. և պատմեն եա՝ հարիւրապետի ու-
րումն առաքեալ 'ի նմանէ 'ի Հռոմ և կա-
ցեալ 'ի Սենկղիտոսին՝ 'ի զլանալ ատենին
զերկարաձգել կուսակալուԹեանն Կեսա-
րու, նա հարեալ ձեռամբն ընդ երախա-
կալ սրոյն՝ ասէր. "Այլ սա այս տացէ
նմա,,: Սակայն և խնդիր Կեսարու Թուէր
գեղեցիկ և արդար. քանզի խնդրէր 'ի միա-
սին ընդ Պոմպէի 'ի բաց զզէնսն դնել. և
այնպէս ապա իբրև զմի 'ի ռամկականաց՝
ձիր ապա 'ի ձեռաց առնուլ քաղաքա-
ցեաց: Իսկ յայնժամ որ տեռազերծ 'ի
զօրուԹենէն զԿեսար կամէին առնել, և

յաղթ զՊոմպէոս գործել, միանգամայն նոքա յոռնհար լինել միումն, զմիւսն 'ի բռնաւորութիւն կրթէին :

Ապա Կուրիոնին առաջի մատուցեալ խուժանին զխնդիրն յանուն Կեսարու, ծափս հարին մեծապէս. և կէսք ևս պսակս բոլորից ծաղկանց թօթափեցին 'ի նա իբրև 'ի վերայ մրցանաւոր ըմբշի: Իսկ Անտոնիոս յայնժամ ժողովրդապետ՝ նամակ մի զԿե-սարու 'ի նոյն 'ի ներքս բերէր խուժանին, և առեալ ընթեռնոյր յականջս հիւպա-տոսացն: Այլ Սկիպիոն աներ Պոմպէի խորհուրդ առաջի արկանէր Սինկղիտոսին, զի եթէ 'ի ժամանակեալ աւուրն զինա-թափ չլինիցի Կեսար, իբրև թշնամի համ-բաւեսցի այրն: Ապա և հիւպատոսք ինք-նին հարցումն արարեալ, արդեօք լո՞ւ իցէ արձակել Պոմպէի յիւրմէ զզօրականսն. և կրկին դարձեալ՝ արդեօք լո՞ւ իցէ արձա-կել և Կեսարու զիւրսն, նուազունք յոյժ հաւանեցան ընդ առաջինն. իսկ ընդ եր-կրորդ հարցումն առհասարակ ամենեքին՝ բայց 'ի սակաւուց: Իսկ յայնժամ Անտո-նիոսի խորհուրդ զայս առաջի արկեալ՝ եր-կոցուն միանգամայն 'ի բաց կալ յիշխանու-թենէն, յայնժամ առհասարակ եկեղե-ցին միաբան ձեռն տայր հաւանութեան: Իբրև անդանոր բուռն արար Սկիպիոն, բո-ղոք և հիւպատոսն եբարձ Լենտուղոս, ե-թէ ընդդէմ աւազակի՝ զինուց պէտք են՝ քան թէ քուէից, լուծաւ ատեան ժողո-վոյն. և փոխեցին յայնժամ զհանդերձս

և 'ի սուգ առհասարակ համակեցան վասն ամբոխին այնորիկ ։

Իսկ յետ այսորիկ թուղթ մի եկեալ հասանէր 'ի Կեսարէ համեստ և վայելուչ, յանձին կալեալ թողուլ զամենայն. և խնդրէր անձին՝ զոր յայսկոյս Ալպեանցն և զԻլիւրիկէ հանդերձ երկու գնդօք, մինչև առնուլ զանձամբ հիւպատոսութիւն երկրորդ. անդանօր և Կիկերոնն հռետոր այն ինչ եկեալ 'ի Կիլիկիոյ՝ գուն գործէր խաղաղել զիրսն՝ ամոքեալ զՊոմպէոս ։ Այլ Պոմպէոս յանձին կալեալ տալ Կեսարու զոր խնդրէրն, զլանայր նմա զզօրն. յայնժամ Կիկերոնն խօսէր հաւանեցուցանէր զբարեկամսն Կեսարու հրաւախոհ լինել կրկին գաւառօքն, և վեց հազար միայն զօրականօք ։ Հաւանեալ Պոմպէի ընդ բանն, անդուստ Լենտուլոս հիւպատոս ընդդէմ դարձաւ. և ոտնհար եղեալ Անտոնիոսի և Կուրիոնին՝ վարէր զնոսա արտաքս յատենէն անարգաբար. և յայնմանէ ապա պատճառս 'ի ձեռս տայր Կեսարու գրգռել զոգի զօրականին՝ յերևան ածեալ նոցա զարսն զայնոսիկ զաւագս և զիշխանաւորս, որ այնպէս փախստեայք եկեալք 'ի սայլս վարձուորս 'ի հանդերձ ծառայի՝ խոյս ետուն 'ի Հռովմայ ծպտեալք առ ահի երկիւղին ։

Եւ էր յայնժամ առ Կեսարու այրուձի ոչինչ աւելի քան զերեքհարիւր, և հետևակք հինգհազար. իսկ զմնացորդ զօրուն դադարեալ յայնկոյս Ալպեանց՝ պաշտօ-

նեայք արձակեցան ածել առ նա : Սակայն և այնպէս տեսեալ Կեսարու , զի սկզբան գործոյն՝ զորմէ բուռն հարեալ էր՝ չէն ինչ պէտք յայնժամ բազմաձեռն գնդի, քան թէ արհաւրաց արութեան և ձեպընթաց փութոյ, (քանզի և հեշտագոյնս ըննաւորեցաւ նա աճապարել զթշնամին առնել յանկարծօրէն հրոսակաւ, քան զօրութեամբ յաղթահարել 'ի պատրաստութեան նոցա). հանպա հրաման տայր զօրավարաց և գնդապետաց վառեալք միայն 'ի սուսերս՝ այնպէս առանց այլ զինուց հասանել ունել զԱրիմինոն քաղաք մեծ զկեղտոց , զգուշացեալ ամենևին՝ առնել մահուանս կամ յուզել աղմուկ : Եւ ապա 'ի ձեռս զբանակ զօրուն տուեալ Հորտեսիոսի, ինքն անցուցանէր զօրն 'ի հրապարակի 'ի զինին կացեալ մրցանաց մենամարտից և դեգերեալ ընդ նոսա . իսկ 'ի կարճատել աւուրն լուացեալ և յարդարեալ զմարմինն և անցեալ յայրանոցն, և խառն մի կենակից լեալ անդանօր ընդ կոչնական հիւրսն, իբրև նսեմանայր՝ յարեաւ և մարդասիրագոյն բանիւք առէր նոցա կալ անդէն և մնալ նմա՝ իբրև որ 'ի մօտոյ դարձ արասցէ առ նոսա :

Բայց սակաւուց ումանց 'ի բարեկամացն կանուխ ազդեալ իսկ էր գալ զհետ իւր , ոչ ամենեցուն միահետ, այլ ընդ զատ ուղի . և ինքն ամբարձեալ 'ի կառս՝ զառաջինն խաղաց ընդ այլ ճանապարհ . այլ ապա զարտուղեալ դէմ եդեալ յԱրիմինոն

կոյս, եկեալ հասեալ 'ի Հռուբիկոնի գետ որ անջրպետէ յԻտալիոյ զԳաղատիա որ յայսկոյս Ալպեանց, անդանօր 'ի մօտել իւրում 'ի մեծ վտանգն՝ կայր և խորագոյնս խոկայր, և տագնապեալ էր 'ի խորհուրդսն 'ի մեծութենէ գործոյն նահատակութե : Սանձէր զընթացսն, և զկայ յուղւոյն առեալ բազում՝ ծփայր 'ի միտս և այնպէս անմռունչ տարաբերէր յանձն իւր՝ բազմապատիկ փոփոխեալ 'ի հաստատութեան սրտին. և այնպէս հարուստ ժամ տագնապաւ վարանեալ, և զբարեկամսն հարցեալ որ մերձն կային՝ յորս էր և Պողլիոնն Ասինիոս, զմտաւ ևս ածէր 'ի ժամուն զամբառ աղէտս զմարդկանն 'ի գործոյն իւրմէ, և որ յառաջոյ զշատխօսութիւն մարդկանն վասն իրաց անձինն : Եւ ապա 'ի վերջէ գահավէժ՝ որպէս ասացէ ոք՝ խարդաւանեալ 'ի խորհրդոց բանին 'ի վէհ արկածիցն, ասէր զբանն՝ զոր սովորեցան յանձնապատանքն առ 'ի բախտս բազմարկածեանս, եթէ, " Արկաւ իսկ նարդն ,, . ասաց և պատրաստեցաւ անցանել : Իսկ իբրև էանց՝ արձակերասան այնուհետև հատանէր զմնացեալ ուղին . և դիմեալ յԱրիմինոն կալաւ գրաւեաց մինչև ծագեալ առաւօտուն : Եւ պատմեն՝ 'ի գիշերին նախ քան զանցանելն երազ դժպհի տեսանել նմա՝ իբրու լինել ընդ իւրում իսկ մօրն :

Առեալ զԱրիմինոն՝ իբրու այն թէ բացեալ դրունք պատերազմին առհասարակ ընդ ծով և ընդ ցամաք, և ընդ սահմանաց

գաւառին խառնեալ չփոթեալ առհասարակ և օրէնք քաղաքին, անդ էր տեսանել ոչ զարանց խումբ և զկանանցն դաս (որպէս այլ անգամ) յայսկոյս յայնկոյս արհաւրջք լի վազել ընդ Իտալիա, այլ քաղաքք ողջոյն յուզեալք ծփեցան և առ միմեանս փախստեայք անկանէին. անդ և զՀռոմ գլխովին իբրև 'ի հօսանաց էր տեսանել յորդեալ զեղեալ 'ի շրջակայ ժողովրդոցն փախստէից ապաւինելոց 'ի նմա. ուր ոչ ունկնդրութիւն աւագաց էր յայնժամ և ոչ սանձահարել բանի, և յահագին մրրկին յայնմիկ և 'ի ծփանան փոքր մի ևս վէր 'ի վայր ինքնին տապալէր: Քանզի անդ առհասարակ և ներհակակիրք յուզեցան կիրք և թափք բռնութեան դրաւեալ ունէին, և ոչ ցնծայեալքն 'ի ժամուն՝ անդորրութիւն զգեցան. այլ 'ի մեծի բազմաժողով քաղաքին խուռն պատահեալ միմեանց վատասիրտ և վշտատես մարդկան և խիզախելոցն յաղագս հանդերձելոյն, կագ յուզէին և վէգ:

Իսկ յայնժամ Պոմպէոս ահաբեկ 'ի սրտին, սաստիկ ևս սրտաթափէր՝ յորժամ կէսք նմա զլուծանելն ասէին վրիժուն՝ զի այնպէս առեալ բարձրացոյց զԿեսար հակառակ անձին և քաղաքին. և կէսք դարձեալ դատափետ առնէին՝ զի 'ի տեղի տալ Կեսարուն և 'ի խնդրել պայմանս մարդասիրագոյնս՝ նա թոյլ ետ թշնամանացն նորա առ 'ի Լենտուղեայ: Իսկ անդուստ և Փաւոնիոս ասխպէր զնա՝ դոփել ընդ գե-

տին ոտամբն. քանզի էր իսկ երբեմն Պոմպէի պարծանօք հանդարտեալ զՍինկղիտոսն՝ մի՛ վասն հանդերձանացն հոգալ մարտին. իբրու որ գամ մի 'ի խաղալ իւրում՝ ինքն զգետին ոտամբն հարեալ՝ զօրականօք զԻտալիա լցցէ: Սակայն և այնպէս քան զԿեսարուն՝ նորա շատ ևս էին զօրականք 'ի ժամուն. բայց թոյլ չեղև առն զերասանակ վարել խորհրդոյն. նա՛ 'ի բազմադիմակ և 'ի սափաստուտ հրեշտակութեանց և յարհաւրաց երկիւղին, իբրու այն որ առդուրս թշնամին հասեալ կայցէ և զամենայնն կալեալ իցէ, տեղի տուեալ՝ զհետ ձգեցաւ 'ի թափ բազմութեանն. և զաղմուկ միայն յակն արկեալ շփոթից՝ թողուլ լքանէր զՀռոմ քաղաք. հրաման տայր և Սինկղիտոսին զհետ իւր խաղալ, զնոյն և առհասարակ մարդկանն՝ որ միանգամ քաղաքին պատկառ կայցեն և ազատութեանն՝ քան բռնակալութեանն:

Յայնժամ և հիւպատոսք փախստեայ գնային՝ չկատարեալք զզոհսն անգամ ըստ օրինացն յառաջ քան զչուն. չոքան փախստեայ և բազումք ևս յայնժամ 'ի Սինկղիտոսէն, առեալք ընդ իւրեանս շտապաւ յառձեռն գոյից իւրեանց, իբրու այն թէ զօտարինն յափշտակեսցեն: Էին էին և 'ի կուսակցաց անտի Կեսարու, որ յայնժամ առ ահին շրջեալք 'ի խորհրդոյն՝ ձգեցան անբռնադատ յալեաց հոսանացն: Եւ էր անդ քաղաքին տեսիլ կարի ողորմ. զի այնպէս ծփեալ յահագին մրրկէն յայսկոյս

յայնկոյս տարուբեր գնայր հարկանէր ընդժայռս՝ իբրև նաւ որ անպատսպար 'ի ղեկավարէն լքեալ իցէ։ Այլ Թէպէտ և այնպէս աշխարելի էր քաղաքացեացն չու, առ սէրն Պոմպէի՝ նոքա զփախուստն իբրև առ հայրենիսն կալան, և զչուումն իբրու բանակեալ Կեսարու՝ այնպէս ամայի լքին։ Այլ և Լաբիէնոս ինքնին գլխովին 'ի կարևոր բարեկամացն Կեսարու և տեղակալ նորա, և կռուեալ ևս էր նա մեծաւ քաջութեամբ 'ի միասին ընդ նմա յամենայն 'ի մարտս Կեղտաց, դասալիք 'ի նմանէն անցանէր յայնժամ առ Պոմպէոս. բայց Կեսար առեալ առաքեաց առ նա և զինչսն և զաղխն նորա։

Ապա խաղայր գնայր Կեսար ընդդէմ Դոմիտիոսի որ 'ի գլուխ կացեալ երեսուն վաշտաց՝ նստէր 'ի Կորփինիոն, և բանակեցաւ մօտ առ նա։ Իսկ Դոմիտիոս յուսաբեկ յայնժամ խնդրեաց դեղ մահու յընտանւոյն իւրմէ բժշկէն, և առեալ ըմպէր զոր մատոյց նմա. կարծեաց առ օրին մեռանել. բայց լուր ապա առեալ նա զգեղեցիկ մարդասիրութեանն Կեսարու առ հնազանդեալսն, սաստ կարդայր անձինն և նզովէր զխուճապել խորհրդոյն. յայնժամ բժշկին խրախոյս տուեալ առնն՝ զի արբուցմն բաժակին քնաբեր էր և ոչ մահացու, ցնծայր և բերկէր. յարեաւ չոքաւ առ Կեսար, և կալեալ զաջոյն և հաշտեալ, և ապա ձողոպրեալ զանձն՝ անցանէր միւանգամ առ Պոմպէոս։

Լուր այսորիկ հասեալ 'ի Հռոմ, ցնծայան բնակիչք. և 'ի փախստէից անտի ևս դարձան յետս: Այլ Կեսար յինքն զզօրականն յանդուգեալ զԴոմիտեայ, և արագ արագ տիրացեալ և զօրուն Պոմպէի պահապանաց քաղաքին, ահեղ և երևելի յայնժամ՝ յարուցեալ հետամուտ Պոմպէի լինէր: Բայց Պոմպէոս ոչ մնացեալ հրոսակին, փախստեայ գնայր 'ի Բրենդիսիոն. յառաջ զհիւպատոսսն արձակեալ բանակաւ 'ի Դիւրրաքիոն, և ինքն վայր մի կացեալ՝ 'ի խուժել անդ Կեսարու նաւադնաց յուղի անկանէր, որպէս 'ի նորուն իսկ 'ի վարսն պատմեսցուք ոճով: Այլ Կեսար կամեցեալ ձեպով հետամուտ լինել, ոչ կարաց առ 'ի չգոյէ նաւացն. այլ դարձ 'ի Հռոմ արարեալ, զաւուրս վաթսուն տիրէր ողջոյն Իտալիոյ առանց արեան: Իսկ զքաղաքն գեղեցիկ յանդորրու գտեալ առաւել քան զյոյս ակնկալութեանն, և բազմութիւն ևս անդ 'ի Սինկղիտոսէն, եկեալ մարդասիրագոյնս խօսէր ընդ նոսա քաղցրութեամբ՝ յորդորակ 'ի ներքս տալ արձակել արս առ Պոմպէոս իրաւախոհ լինել ըստ վայելուչ կարգին: Սակայն յանձին կալաւ և ոչ ոք երթալ. կամ զի երկեան 'ի Պոմպէէ՝ զոր լքին նոքա, կամ թէ խիթացեալ ևս ընդ անկեղծութիւնն Կեսարու, իբրու վէր 'ի վերոյ բանիւք խնդացուցանել զնոսա:

Դէպ եղև յայնժամ Մետեղղեայ ժողովրդապետի ընդդէմ դառնալ նմա և թոյլ

չուայր Կեսարու առնուլ արծաթ 'ի գանձէն, և օրէնս ևս 'ի ներքս մատուցանէր նմա: Ասէ Կեսար. Ո՛չ նոյն է ժամանակ զինուց և ժամանակ օրինաց: Եւ յաւել Կեսար. « Իսկ թէ քեզ անհաճոյ առաջիկայքդ իցեն, փաղփաղակի հեռ՛ արա՛: Քանզի մարտ՝ չառնու յանձն աղատաբերան բարբառ: Այլ յորժամ ես զէնընկէց եղեալ դաշինս կռեցից, յայնժամ ապա դու յառաջ մատուցեալ պաշտպան կայցես ժողովրդեանդ: Եւ ասեմ քեզ յայսպիսեաց աստի՝ 'ի բաց զինն եդեալ զիրաւունս: Քանզի իմ ես դու և առհասարակ ամենեքեան՝ որ միանգամ ընդդէմ դարձան ինձ, և այժմիկ յիմ բուռն կալայ »: Զայս ասաց առ Մետեղղոս, և դէմ եդեալ գնայր 'ի դուրս գանձուն. իբրև անդ առաջի չմատուցան նմա փականք, արձակեաց կոչէր դարբինս, հրաման տայր խորտակել զփեղկսն. իսկ իբրև միւսանգամ ընդդէմ դարձաւ նորա Մետեղղոս և գովութիւն ևս էառ յոմանց, ձայն յայնժամ ամբարձեալ Կեսար սպառնայլս մահու 'ի վերայ կայսէր առն՝ եթէ խոչ ընդ ոտն լինիցի, և ասէր. « Եւ չգիտիցես իսկ քաջ դու զայս՝ ո՜վ պատանի, զի ինձ քան առնել՝ դժուարին ևս է ասել »: 'Ի բանից աստի զանգիտեալ Մետեղղոս գնայր 'ի բաց, և անդէն 'ի ձեռս տային Կեսարու արծաթ ըստ պիտոյից պատերազմին:

Ապա յետ այնորիկ չու առնէր խաղայր զօրու յԻբերիա, 'ի մոլի եդեալ վանել հա-

լածել նախ զԱփրանիոս և զՎարոն զօրա-
վարսն Պոմպէի. և ապա յինքն տարեալ
զզօրականն նոցա և զգաւառսն, խաղալ
ընդդէմ Պոմպէի՝ 'ի Թիկանց կուսէն ան-
դորրացեալ 'ի Թշնամեացն: Թէպէտև ինքն
'ի մեծամեծ պաշարեցաւ 'ի վտանգս 'ի
խիտ առ խիտ դարանաց անտի Թշնամեացն,
դարձեալ և զօրն 'ի սովու կրից, ոչինչ
կասեալ Թողացաւ հետամուտ լինել. աս-
պարէզ կարդայր, և պատնէշ զԹշնամեօքն
փակէր. մինչև զօրացու տիրեաց բանակաց
նոցա և զօրականին առհասարակ. իսկ զօ-
րավարքն փախուցեալ անկանէին առ Պոմ-
պէոս:

Դարձ միւսանգամ 'ի Հռովմ արարեալ
Կեսար, յայնժամ Պխոմին անէր նորա
յորդորէր արձակել հրեշտակս առ Պոմ-
պէոս բանիւք խաղաղութեան. բայց Իսաւ-
րիկոս ընդդէմ դարձաւ՝ 'ի հաճել զԿէ-
սար: Ապա իշխանապետ 'ի Սենկղիտոսէն
կարգեալ՝ դարձուցանէր Կեսար զվտարան-
դիսն. 'ի յաւագութիւն առեալ ամբառ-
նայր զորդիս տարադրելոցն առ 'ի Սիւղ-
ղայէ, և Թեթևաբեռնիս եւս յարդարեաց
զպարտապանսն նուազեցուցեալ զտոկո-
սիսն: Արար նա և այլ ինչ յայսպիսեաց
անտի քաղաքականութեանց, այլ ոչ բա-
զում. և ապա յետ մետասան աւուրց
հրաժեշտ 'ի միապետութենէն տուեալ, և
կարգեալ հիւպատոս 'ի միասին ընդ Սեր-
վիլիոսի Իսաւրիկեայ, զհետ կրԹէր ար-
շաւանին:

Ծեալ տուեալ ուղւոյն, և յառաջ ինքն անցեալ քան զզօրն՝ վեցհարիւր այրուձիով և հինգ գնդօք յարևադարձոն ձմերայնոյն 'ի սկիզբն Յունուարի ամսոյն (որ առ Աթենացիսն է Պոսիդէոնն), ծովագնաց եղեալ և անցեալ ընդ Յոնիական ծով, հասանէր ունէր զՆէովլիկոն և զԱպողոնիա. և անդրէն դարձուցանէր ըզնաւսն 'ի Բրենդեսիոն առ յետամնաց զօրն: Այլ որքա յուղւոյն պատրաստեալք և յոգնի աշխատանք 'ի բազմութենէ յոյժ թշնամեացն, գանգատ կալեալ ընդդէմ Կեսարուն՝ զայս բարբառէին. "Իսկ ուրանօր երբէք և յոր սահման արդեօք դուլ մեզ տացէ այրդ այդ՝ ածեալ շրջեցուցեալ և վարեալ զմեզ իբրու անշունչ անզգայս ոմանս և անկեդանս: Նա՛ աւադիկ և երկաթ գլխովին 'ի հարուածոն բթանայ. և 'ի բազմօրեայ ժամանակիս և տապարաց անդամ և զրահից պատենից դո՛յ հանդիստ: Թերևս խեղամուտ չէ ինքնին Կեսար 'ի հարուածոց վիրաց մերոց, եթէ զօրավար կայ մահկանացու մարդկանն. և մեք ինքնին անդստին բնաւորեցաք զգալ մահացու կրից և ցաւոց: Բուռն ձմերայնոյն առնել եղանակի և շրջանաց հողմոց 'ի ծովուն, և ոչ աստուծոյ արդեօք է հնարաւոր. այլ դա 'ի վտանգս անխնայ դիմադրաւէ զմեզ, իբրու ոչ թշնամեացն հետամուտ, այլ 'ի նոցանէն փախստեայ,,: Զայսոսիկ նոքա յուղւոջ, յամրաքայլ խաղային 'ի Բրենդեսիոն կողմն. և անդ հասեալք անդր և

զԿեսար չգտեալք, զի այնպէս 'ի խուճապ
տագնապի ծովագնաց լեալ էր, դարձան
փոփոխեցան. զզուէին զանձինս. մանաւանդ
խուժանից ինքնակալին կարգային զինքեանս.
ցասնուլին և զօրապետաց՝ զի ձեռն չետուն
կարաւանին. և ելեալք կացեալք 'ի դարա-
ւանդս բարձանց՝ այնպէս ծովահայեցք
յԵպիրոս դէտ ակն ունէին 'ի գալուստ
նաւացն՝ ամբառնալ գնալ առ Կեսար:

Բայց յայնժամ Կեսար յԱպողոնիա
չունելով առ իւր զօր բաւական 'ի դիմի
հարկանել Թշնամւոյն, քանզի անագանե-
ցաւ գալուստ զօրուն 'ի Բրենդեսեայ, վա-
րանեալ տագնապէր. մխեցաւ 'ի բազմա-
վտանգ գործ գաղտ յամենեցուն ելանել
մտանել 'ի նաւ մի երկոտասան թիոց և խա-
ղալ ինքնին 'ի Բրենդիսիոն. Թէպէտ և
տորմիղ մեծ նաւաց թշնամեաց դրաւեալ
ունէր զծովն: Այս 'ի գիշերային պահու
զգեստ ծառայի արկեալ զանձամբ, մտա-
նէր Կեսար 'ի նաւ և 'ի վայր իջեալ այն-
պէս իբրև զմի 'ի սինլըքորաց մարդկանն՝
կայր հանդարտիկ և անմռունչ: Եւ իջանէր
գայր նաւն 'ի ծովն ընդ Անիոս գետ. այլ
անդ սիւդ առաւօտեան որ շնչեալ 'ի ժա-
մուն և ընկրկեալ տարեալ զալիս ծովուն՝
սովորեցաւ խաղաղիկ պահել զջուրն 'ի բե-
րան գետոյն, յաղթահարեալ յայնժամ
'ի ծովային սաստկաշունչ հողմոյն գիշե-
րոյ, 'ի կոհակս կոհակս և 'ի թափ մրրկին
յուզեալ ամբոխեալ զգետն և 'ի վեր զմկա-
նունս տարեալ 'ի ձողքինս մեծամեծս և

'ի գրգանս աՀագին պտուտից, տագնապեցաւ զեկավարն զդէմ ունել բռնութեանն, Հրաման ետ նաւաստեացն յետս զնաւն դարձուցանել: Զայն լուեալ Կեսարու՝ յայտնէր զանձն. և զձեռանէ կալեալ զեկավարին՝ յապուշ Հարեալ 'ի տեսանել զնա անդր, ասէր. " Յառաջ դու խաղա՛ ով քաջ. քա՛ջ լեր մի՛ զանգիտեր. զԿեսար ինքնին տանիս, և զբախտն զլխովին Կեսարու նաւագնաց է ընդ քեզ ,,: Այս նաւաստիք ոչ ևս մրրկին երեսս ինչ առբարեալ՝ մխեալք կորովի 'ի Թիակսն՝ ձիգն մեծապէս Թափէին նկուն զբռնութիւնն առնել Հոսանացն. իբրև ոչինչ այլ բաւական էին յառաջ խաղալ. տեսեալ Կեսարու՝ զի ջուր շատ առնոյր նաւն և վտանգ անՀնարին էր լատին 'ի բերան գետոյն, Թոյլ ապա տայր զեկավարին Թէպէտ և յոյժ ակամայ՝ դարձուցանել զնաւն: Իսկ 'ի դառնալ նորա՝ ընդ առաջ ելանէին նմա զօրականք նորա խուռներնԹաց. մոմոքեալ սրտնէին առՀասարակ՝ զի ոչինչ վստաՀացաւ 'ի նոցա ձեռն միայն 'ի գլուխ զյաղԹութիւնն տանել. այլ վարանեցաւ և յայն վտանգ նաՀատակեցաւ 'ի չնորՀս բացական զօրականին յերկուացեալ ը̄ մերձակայսն:

Բայց յայնժամ եկեալ Հասանէր առ նա և Անտոնիոս 'ի Բրենդեսեայ ածեալ զզօրն. ուստի և Կեսարու խրախուսեալ ասպարէզ կարգայր Պոմպէի, որ յամուր վայրի անդ բանակեալ նստէր և լի էր ամբարօք 'ի ծովէ և ցամաքէ. յորժամ Կե-

սար ոչ յառաջին ունէր լինելի , խել յետ այնորիկ և 'ի վերջինսն տագնապէր: Որ աղաղաւ և նորա զօրականք փշրեալ լռեալ արմատ մի և ընդ կաթին խառնեալ՝ ստաս զայն առնուին • էր զի և հաց ևս գործեալ յայնմանէ՝ և ընթացեալ մինչև յառաջին պարեկապանսն Թշնամեացն , ատա անդ 'ի ներքս արկեալ զայն հաց՝ առէին • ցոր վայր երկիրն ինքնին յարմատոց այտի բուսուցէ , նոքա դուլ երբէք չտացեն առ 'ի պաշարել զՊոմպէոս: Այլ Պոմպէոս յանձն երբէք չառնոյր զայն հաց երևեցուցանել ամբոխին և ոչ զբան զայն լսելի առնել • քանզի և իւր սրտառուչ էր զօրականն յայնմանէն՝ զարհուրեալք 'ի վայրագասուն կենաց անտի Կեսարեանցն և 'ի գազանական խոշորութենէն :

Յակայն սապատակ անդուլ կայէին նոքա յայնժամ առ պատնշօքն Պոմպէի , ուր և յաղթական ցանգ ելանէր Կեսար • բայց 'ի նուագ մի 'ի փախուստ անհնարին խուճապեալ Կեսարեանց , և փոքր մի ևս 'ի ձեռաց զբանակն հանէր • քանզի 'ի վերայ անկեալ նոցա ինքնին Պոմպէոս , յայնժամ և առհասարակ միադունդ յարձակեցան , և խառն 'ի խուռն վանեալ զամենեսեան և հարուածս մեծամեծս ածեալ նոցա , լնուին դիականբք զփոսս , և տապաստ արկանէին զնոսա մինչև 'ի հողապատուարս և յամուրս նոցա : Թէպէտ և Կեսար արձանանայր ընդդէմ փախստէիցն դարձուցանել յետս , ոչինչ կարաց • և

անդանօր ինքնին կամեցեալ 'ի բուռն ըղդրօշակսն առնուլ, դրօշակակիրքն առեալ 'ի բաց ընկենուին. և այնպէս դրօշակք երեսուն և երկու 'ի ձեռս անկան Պոմպէոսեանցն, և զնորա վայրիկ մի և զարեն հատանէին : Քանզի անդանօր նա ձեռն մխել յայր մի հարստի և կորովի՝ փախստեայ քերեալ զնովաւ, իբրև հրաման տայր նմա արձանանալ ընդդէմ թշնամեացն, նա սաստիկ ամբոխեալ 'ի հողին 'ի մեծի տագնապին, ամբարձեալ զսուրն՝ փոքր մի և հարկանէր զԿեսար, թէ ոչ զինակրին անձապարեալ խլուցեալ զվաղակաւորն հարկանէր զուս առն :

Այսպէս ուրեմն յուսաբեկ Կեսար հիքացաւ յայնժամ. բայց զի յայնժամ Պոմպէոս կամ զի ահիւ անձնապահ եղև, կամ թէ առ 'ի բախտէն չարեալ 'ի գլուխ զմեծ գործն՝ տեղի ետ, ապա Կեսար զփախըստեայսն 'ի պատնէշ անդր փակեալ, ասէր առ բարեկամսն 'ի չուել իւրում. "Օր այս յաղթութե թշնամեացն էր, եթէ էր նոցա զօրավար յաղթօղ" : Ապա մտեալ 'ի խորան իւր և 'ի կողմն եղեալ՝ յոյժ տխրագին զգիշերն անցուցանէր՝ որպիսի ոչ երբէք. 'ի վարանս տագնապէր խորհրդոց՝ սարջանայր ընդ անհանճար առաջնորդութիւնն. քանզի մօտ իւր ունելով գաւառ ընդարձակ և արգասաւոր և քաղաքս ճոխս զՄակեդոնիոյ և զԹետտաղիոյ, անդր չէառ ձգեաց զմարտն. այլ բանակ հարեալ առ ծովուն՝ տիրացեալ առ 'ի նաւաց թշնա-

մեաց, անձամբ զանձն պաշարեաց 'ի սովէ, քան թէ զթշնամին 'ի զինուց: Այսպէս յուղեալ 'ի խորհուրդս և տագնապեալ 'ի քաղցէն և 'ի դժոխըմբեր ժամանակէն, չու հրամայեր զօրուն. եդ 'ի մտի խաղալ ընդդէմ Սկիպիոնի 'ի Մակեդոնիա: Զի այնպէս կամ զՊոմպէոս զհետ իւր ձգեսցէ 'ի կռիւ, ուր նմա կարծեացին կերակուրք առ 'ի ծովէն, կամ զՍկիպիոն միայնակ հեշտին նկուն արասցէ:

Իսկ յայնմանէ զօրականք Պոմպէի և զօրապետք 'ի վեր վաղեցին առհասարակ յառնել հետամուտ Կեսարու զինել՝ իբրու պարտեցելոյ առն և փախստէի: Այլ Պոմպէոս խոյս տայր դիմադրաւել զանձն 'ի մեծ և 'ի կարևոր մարտն. քանզի և քաջիկ իսկ հանդերձեալ կազմեալ զամենայնն 'ի ժամավաճառութիւն, լաւ համարեցաւ վատնել տակաւ զդուզնաքեայն զայն ոյժ զթշնամեացն: Քանզի զօրականք որ քաջամարտիկքն էին Կեսարու, թէպէտ և խրախուսեալք մեծապէս էին և քաջք անվանելիք 'ի գոռին, սակայն և 'ի չու թափառական և 'ի բանակահարութիւն և 'ի պատուարամարտս և 'ի գիշերահսկմունս պարտասեալք էին 'ի ծերութենէն, և դանդաղք մարմնով յաշխատութեան վաստակս, և առ տկարութեանն անբաժք 'ի ժրութենէն: Եւ առէին ևս յայնժամ մահաշշուկ ախտի 'ի խոշորակեաց կենացն անտի ճարակել 'ի զօրուն Կեսարու. և որ մեծ ևս՝ նուաղեալ նորա միանգամայն և 'ի

դրամոց և 'ի կերակրոյ , Թուէր իմն յետ սակաւ միոյ ինքնին եղծանել : Այր ալագաւ և Պոմպէոս խոյս տուեալ յայնժամ 'ի կռուոյն , 'ի Կատոնէ միայն առնոյր դովութիւն՝ զի այնպէս 'ի կեանս խնայէր նա քաղաքացեացն : Կատոնի այն՝ որ զանկեալն յակն արկեալ 'ի մարտին հազար Թուով , տեղի տայր 'ի վայրացն ձորձ զգլխոյն արկեալ և յարտասուս հատեալ՝ Թէպէտ և 'ի Թշնամեաց անտի էին : Իսկ այլք առհասարակ յայնժամ անդոսնէին զՊոմպէոս 'ի խուսափել նորա . և զայրացուցանէին ես զնա՝ անուն նմա կարդալով Ագամեմնոն և արքայից արքայ , իբրու որ 'ի բաց 'ի միապետութենէն չկացեալ՝ ճոխաբար խնդայցէ ընդ դեգերել բազմութեան զօրավարացն սպասարկութեամբ առ խորանին : Իսկ Փաւոնիոս զնմանութիւն բերեալ յայնժամ ազատաբերան համարձակութեանն զԿատոնի , մոլեգինս ասաղէր զի 'ի պատճառս միապետութեանն Պոմպէի և ոչ 'ի տարւոջ յայնմիկ յաջողեսցի նմա գնալ ճաշակել 'ի Տուսկուղեան Թզոցն : Ընդ և Ափրանիոս ինքնին՝ (այն ինչ եկեալ յիբերիոյ՝ ուր զօրավարեալ , և ստգտեալ ես էր՝ արծաթոյ մատնել զզօրականն) , հարցանէր զՊոմպէոս . առ ինչ մարտ եղեալ չկռուի ընդ վաճառականին ընդ այնմիկ՝ որ գնոց գնեաց 'ի նմանէ զգաւառսն :

Բայց Կեսար յայնժամ զառաջինն սաստիկ տագնապեցաւ յուղւոյն . զի և ոչ ոք

համբաւս պատրաստեաց նմա․ և արհամարհեցաւ ևս առ հասարակ՝ վասն նորոգ հարուածոյն ։ Եւ ապա հասեալ կալեալ զԳոմփոս քաղաք Թեսսաղիոյ, ո՛չ կերակրով միայն լիացոյց յայնժամ զզօրն, այլ և տարօրինակ իմն յախտէն իւրեանց աւաքեաց զնոսա ։ Քանզի գինի առատ գըտեալ անդանօր զօրականին և անյագ ըմբեալ, ապա և յուղուղջ ևս 'ի նոյն խրախացեալք և գինեհարեալք՝ այնպէս արբեցութեամբն մերժեցին հանին 'ի բաց զախտն, այլայլելով զխառնուած մարմնոյն։ Արդ հասեալ երկոցուն նոցա 'ի Փարսաղիա և բանակ հարեալ, դարձեալ Պոմպէոս բուռն հարկանէր զառաջին խորհրդոյն․ նա զի և յանրջական ցնորից խռովեցաւ՝ տեսեալ զինքն 'ի քուն 'ի թատրոնի ծափահար առ 'ի Հռոմայեցւոց 3 ։ Բայց որ զնովաւ զօրապետք այնչափ իմն խրախուսեալք էին և աներկևանք 'ի յաղթութիւն, զի և յայնժամ Դոմիտիոս և Սպինթէրոս և Սկիպիոն այր զարամբ ելանէին վասն բարձի քահանայապետութեանն Կեսարու ։ Եւ բազումք ևս յայնժամ արձակեցին արս 'ի Հռոմ 'ի վարձու ունել իւրեանց տունս 'ի մօտ հիւպատոսաց և զօրավարաց, իբրու եթէ յետ մարտին հասանել ունել նոցա զաւագութիւնն զայն։ Իսկ որ առաւել անձկացեալ էին մարտին՝ այրուձի նոցա, հանդերձեալ կազմեալ 'ի զէնս շքեղս և յերիվարս յաղթաբոյծս, մեծապէս քաջալերեալք և զուարթա-

ցեալք՝ առոյգանձինք և բազմագունդք · քանզի և էին իսկ նոքա թուով եօթն հազար ընդդէմ հազարացն Կեսարու ։ Նաև հեծեալկազօրք Պոմպէի բազմագոյն ևս էին քան զԿեսարուն · քառասուն և հինգ հազարք ճակատեալ կային ընդդէմ քսան և չորից հազարաց ։

Այլ Կեսար 'ի խորհուրդ զզօրականն կոչեալ ասէր ։ Մօտ աւասիկ հասեալ կայ առ մեզ Կորփինիոս՝ ածեալ ընդ իւր գունդըս երկու · դարձեալ և վաշտք հնգետասան 'ի ձեռս Կաշենեայ՝ են իսկ 'ի Մեգարա և յԱթէնս · արդեօք իցէ՞ ձեզ սպասեալ մնալ գալստեան դոցա, եթէ առանձին 'ի կռիւ կաքաւել ։ Նոքա բողոք բարձեալ աղաչէին մի՛ ևս մնալ, այլ հնարիմացութիւն 'ի գործ առեալ եա ընդ եա խառնել 'ի կռիւն ։ Ապա Կեսար քաւութիւն ածեալ բանակին, և յաղեալ զառաջինն 'ի սպանդից, անդանօր գուշակն ազդ առնէր՝ զաւուրս երիս սահմանել բանին ընդ Թշնամիսն 'ի ձեռն մարտի պատերազմի ։ Իսկ 'ի հարցանել Կեսարու զայրն, արդեօք նշան գեղեցիկ ելից տեսանէ՞լ 'ի սպանդսն, եա պատասխանի իղձն և ասէ · « Դու ինքնին լաւ ևս տացես քեզ պատասխանի ։ Քանզի փոփոխութիւն և դարձ մեծապէս զիրացն 'ի ներհականն՝ ցուցանեն դիք ։ Արդ եթէ 'ի լաւին զարդիս տեսանես զքեզ, ակն կալցես վատթար բախտին · ապա եթէ 'ի յոռին՝ ակնկալցես լաւին » ։ Իսկ յառաջնում գիշերի մարտին՝

յայց ելանել կեսարու 'ի պարեկապանսն, զհասարակ գիշերաւ ղամբար երկնատեղաց հրոյ երևեր քերեալ 'ի վերոյ բանակին կեսարու փայլակնաճաճանչ և մեծաբորբոք՝ գնալ անկանել 'ի բանակն Պոմպէի. և ապա յառաւօտուն պահու և դղրդիւն լի արհաւրօք լսելի լինէր առ Թշնամիսն։ Բայց նա ակն չունէր կռուոյն 'ի նմին իսկ աւուր, նա և չու ընդ մուԹն հրամայեաց բանակին. իսկ 'ի ժողովել անդ զվրանսն, 'ի ճեպ տագնապի եկեալ հասանէին լըրտեսք, պատմէին՝ զի իջին Թշնամիք 'ի կռիւ մարտին։

Ապա կեսար մեծապէս զուարճացեալ 'ի ժամուն՝ խնդրուածս առնէր դից. և առեալ կարգէր կազմէր զփաղանգն 'ի գունդըս երիս, տայր 'ի միջոցին զօրավար զԿալվինոս Դոմիտիոս. իսկ զձախոյ Թևն 'ի ձեռս ընծայէր Անտոնիոսի. յանձն իւր առնոյր զԹևն աջոյ. պատրաստէր մարտ ընդդէմ յարդարել տասներորդ Լէգէոննին։ Բայց 'ի հանդիպոյ իւր՝ զայրուձին տեսեալ ճակատ Թշնամեաց, զանգիտեաց 'ի կոլովեա՛ց բազմուԹենէն. հրաման տայր զանխուլ վեցից վաշտաց զօրահատոյց լինել 'ի վերջին կարգէն և շրջան առեալ գալ առ ինքն. զնոսա առեալ կարգէր իւր վերջապահս. խրատ տայր նոցա՝ զոր նահատակել պարտ էր 'ի յարձակել այրուձիոյն Պոմպէի։ Իսկ անդուստ Պոմպէոս արձանացեալ կայր յաջոյ Թև բանակին. իսկ Դոմիտիոս 'ի ձախոյն. 'ի միջոցին զտե-

զի առնոյր Սկիպիոն աներ Պոմպէի: Բայց այրուձին առհասարակ խմբեալ կայր 'ի Թև ձախոյ՝ առնուլ 'ի ներքս փակել զաջոյն Թև Կեսարու, և հարուած խապառածել կողման զօրավարին: Քանզի և հաստատեալ իսկ էին անշուշտ ոչ նկուն զըստուարագունդն առնել փաղանգաց հետևակաց, այլ և առաւթուր կոխել վանել զամենայն բազմութեամբ այրուձիոյն անդէն 'ի յարձակմանն:

Արդ իբրև այնպէս յերկոցուն ևս կողմանց նշանք տային հրոսակին, պատուէր տայր Պոմպէոս հետևակացն՝ կալ և պատրաստ առկայանալ և մնալ հորդանին Թշնամեաց տէգընկեցիւ չափ: Բայց Կեսար ասէ՝ սխալել Պոմպէի և 'ի բանին յայնմիկ. քանզի Թափով յարձակելն ինքնին աճաբեկ է և ոյժ տայ հարուածոյն, և քաջալերեալ ևս խրախուսէ առհասարակ յարշաւանսն: Իսկ 'ի խաղացուցանել Կեսարուն զփաղանգն, յակն արկեալ զառաջինն 'ի գնդապետաց անտի զայր հաւատարիմ և հմուտ մարտին՝ խրախուսել զիւր գունդն 'ի հանդէս քաջութեան, կարդաց զնա յանուանէն և ասէ. “Եւ լիմ իմիք ակնկալցուք մեք ո՛վ Գայիէ Կրասսինիէ, և զիարդ քաջալերեսցուք”: Ընդ Կրասսինիոս զաջ իւր կարկառեալ առ նա և ձայն բարձեալ ասէր. “Գեղեցիկս տարցուք յաղթութիւն ո՛վ Կեսար. իսկ զիս ինքնին գովեսցես դու այսօր կամ կենդանի կամ մեռեալ”: Ասաց և անհնարին յարձակեցաւ նահատա-

կեալ ընդդէմ թշնամեաց, և զհետ իւր փողեաց զիւր դունդն հարիւր և քսան զօրականին: Անդ 'ի սայր սուսերի մաշեալ զախոյեանն, իբրև յառաջամուխ եւ խառնեալ հարուած սաստիկ 'ի վերայ ածէր, թափ ընդ բերան իւր սուսերահար վարսեալ՝ այնպէս ընդ ծոծրակն ելանէր սայրն։

Իբրև այնպէս խառնուրդ գոլին լինէր 'ի միջոցին հետևակաց զօրուն, անդանօր այրուձին Պոմպէի յառաջ նահատակեալ 'ի ձախոյ թևոյն՝ խիզախք և յանձնապաստանք՝ ձգեցան ճապաղեցան 'ի կողմանն 'ի ներքս առնուլ փակել զաջոյն թև զԿեսարու: Այլ մինչև 'ի վերայ անկեալ՝ 'ի դուրս յորդեցին վաշտքն ածեալք 'ի Կեսարէ. և յայնժամ ոչ անգրընկէցք ըստ սովորութեանն լինէին և 'ի մօտոյ վէրս բարձից դնէին թշնամեացն և սրունիցն, այլ դէտակն յաչս նոցա կալեալ՝ հարեալ խոցէին զերեսս նոցա՝ ըստ հրամանն Կեսարու: Զմտաւ ածէր Կեսար՝ եթէ այն զօրականք ոչինչ այնպէս փորձք 'ի մարտս և 'ի վէրս, և զի պատանիք եւ էին նոքա զուարթածաղիկք և անձնադեղք, յոյժ տաղտկացին 'ի վիրաց անտի, և վտանգին ոչինչ ժուժացեն, և անձնապահ եւ եղիցին նոքա յապայս յանդեղութենէ անտի երեսացն. և 'ի գլուխ խորհուրդն ելանէր Կեսարու: Քանզի և ոչինչ բերին նոքա զոխդացն զայնոցիկ ամբառնալ 'ի դէմս նոցա և ոչ զերկաթոյն շողալ առ աչօք նոցա. զդէմսն դարձուցեալք ամփածածուկք լի-

նէին 'ի հանդիպոյ երեսացն. և 'ի վերջէ դղորդեալք և շփոթեալք 'ի փախուստ դառնային մեծաւ կորանօք, և վեր 'ի վայր ամենայնն լինէր յայնժամ. քանզի և յաղթականք նոցա 'ի ներքս այնուհետև արագ արագ զհետևակն փակէին և 'ի թիկանց 'ի վ̅ր անկեալ՝ հարուածս հարկանէին: Իսկ անդուստ Պոմպէոս 'ի թևոյն իւրմէ դէտ ակն կալեալ փախստեան վարատելոյ այրուձիոյն, այլ յայլմէ եղեալ՝ ոչ ևս յիշէր եթէ Պոմպէոսն իցէ մեծ. այլ իբրև մարդ մոլոթափեալ յաստուածային ցասմանէն, և յապուշ հարեալ ընդ խորտակումն՝ իբրու որ յաստուածակոյս կողմանէն, այնպէս անմռունչ վերջոտնեալ տեղի տայր. մըտեալ 'ի խորանն նստէր ընդարմացեալ ակնկալեալ ելից իրացն. մինչև առհասարակ իւրոյն 'ի փախուստ խուճապեալ, անդուստ թշնամիք գային հասանէին կըռուել և ընդ զակշին, մարտ եդեալ ընդ պահապանսն: Նա ապա ուրեմն Պոմպէոս 'ի միտս եկեալ, բարբառեալ՝ որպէս ասեն՝ զայս միայն, "Արդ ուրեմն և մինչև 'ի բանակե՞տղ անդր,,. ասաց և մերկացեալ զմիցանացն և զզօրավարութեան պատմուճանն՝ ձորձ զանձամբ արկանէր զփախըստէի, և զանխուլ ելանէր արտաքս: Այլ թէ զի՞նչ ապա անցք անցին ընդ նա, և զիա՞րդ սպանաւ նա անձնատուր յԵգիպտացւոց արանց, արձանագրեսցուք մեք 'ի վարս նորա:

Իսկ Կեսարու մտեալ յայնժամ 'ի զա-

կիշն Պոմպէի, տեսեալ դիտապաստ զթըշնամին և զորս յայնժամ տապաստ անկանէին, յոգւոց հանեալ ասէր. « Զայն կամեցան դոքա. 'ի դոյն հարկ առեալ զիս ածին դոքա: Քանզի եթէ Գայիոս Կեսարս ես՝ որ մարտս 'ի գլուխ տարայ մեծամեծս՝ արձակեալ էի յինէն զզօրականն, դատապարտ արդեօք լինէի »: Եւ պատմէ Պողլիոնի Ասիննիոս՝ բարբառել յայնժամ զայս Կեսարու 'ի լեզու Հռոմայեցի, և արձանագրել ապա ինքնին 'ի Հելլենացի: Առ այս և յայնժամ 'ի խմբէ ծառայիցն՝ ասէ՝ անկանել դիտապաստ բազմագոյն մասամբ յառնուլ զակչին. իսկ 'ի զօրականէն տապաստ անկանել ոչինչ առաւել քան վեցից հազարաց:

Ապա Կեսար զբազումս 'ի գերուոյն հետևակաց առեալ խառնէր 'ի գունդս իւր. և բազմաց աւագաց թոյլ առնէր և ներումն, ընդ որս և Բրուտոսին ինքնին՝ յորմէ ապա մահ ընկալաւ: Եւ ասեն, 'ի չերևել նորա զառաջինն՝ 'ի խոր խոցեցաւ Կեսար. իսկ ապա յանդիման եկեալ նմա ողջանդամ, ցնծացեալ բերկրեցաւ:

Բայց 'ի բազմապատիկ նշանսն կանխախուշակ յաղթութեանն, ականաւոր է զոր պատմեն պատահեալ 'ի Տրաղղիս: Քանզի 'ի մեհենի անդ Յաղթութեանն կայր դրօշեալ անդրի Կեսարու. զորով և գետինն յոյժ կարծր էր և անվանելի, նաև սալայատակ ողջոյն յորձաքար վիմաց. սակայն և այնպէս ելանել ասեն 'ի յատակէն

սրմաւենի առ խարխաւ անդրւոյն ։ Իսկ և 'ի Պատավիա Գայիոս Կոռնելիոս այր հռչակաւոր գուշակ՝ քաղաքակից Լիվիոսի պատմաբանի և ծանօթ, կայր նստեալ յաւուր յայնմիկ դէտակն կալեալ 'ի հաւահմայս . և անդէն առաջին (որպէս Լիվիոս ինքնին պատմէ) ծանեաւ նա զժամանակ մարտին . և ասէր առ մերձակայսն՝ 'ի ժամուն յայնմիկ լինել հանդիսի նահատակութեանն և զօրավարայն խառնել անդ 'ի կռիւն ։ Եւ ապա միւսանգամ պարապեալ 'ի հմայսն, և նշանս տեսեալ նոր, 'ի վեր վազեալ 'ի գեղեցիկ մոլութենէն՝ աղաղակեաց . " Յաղթես դու ով Կեսար ,, ։ Իբրև անդ յապուշ հարան մերձակայքն, նա 'ի բաց զպսակն առեալ 'ի գլխոյն՝ կնքէր զերդումն՝ ոչ ևս դնել 'ի գլուխն, մինչև հաւաստիք յաղթեանցն 'ի ներքս բերցին իւրում արուեստին ։ Եւ հաստատէ Լիվիոս՝ օրինակ զայս պատահել իրացն յայնժամ ։

Յետ այսորիկ Կեսար յազատութիւն գրեալ զժողովուրդն Թեսաղացւոց 'ի շնորհս անդանօր յաղթութեանն, հետամուտ ապա յառնէր զհետ Պոմպէի . և մխեալ յԱսիա՝ ազատ կարգէր և զԿնիդացիս մեծարանս երեսաց արարեալ Թէոպոմպոսի, որ 'ի մի առեալ ժողովեաց զառասպելսն . դարձեալ և երրորդ մասին հարկաց թողութիւն առնէր ամենայն Ասիացւոց ։ Իսկ հասեալ ապա յԱղեքսանդրիա յետ մահուն Պոմպէի, յետս զդէմսն

դարձուցանէր ոչ տեսանել զԹեոդոտոս ընծայաբեր նմա գլխոյն Պոմպէի. և առեալ 'ի նմանէ զմատանին միայն, կայր և յարտասուս լուծանէր: Բայց և զամենայն նիզակակիցսն Պոմպէի և զընտանիսն՝ որ վարատեալ Թափառականք յաշխարհին ձերբակալ լեալ էին 'ի Թագաւորէն՝ բարեգործեալ յինքն առնոյր ժողովէր. և գրէր առ բարեկամս իւր 'ի Հռոմ, մեծապէս բերկրել նմա 'ի յաղթութեանն՝ յապրեցուցանել անդ իւրում զայր քաղաքացի՝ որ միանգամ մարտ եդեալ կըռուեցաւ ընդ նմա:

Բայց վասն մարտի պատերազմին զոր մղեաց նա անդանօր, կէսք ասեն ոչ 'ի հարկէ նահատակեալ 'ի նոյն, քան թէ 'ի սիրոյն Կղէոպատրեայ. և այն մարտ անարգութիւն մեծապէս հանդերձեաց նմա և վտանգ: Իսկ կէսք դարձեալ առդիտ ածեն պաշտօնէից արքային, առաւել ևս՝ Պոթինոսի ներքինւոյն, որ Ճոխ առաւել եղեալ և այն ինչ զարեն հատեալ զՊոմպէի և զԿղէոպատրա ինքնին վարեալ հալածեալ, նենգ 'ի ծածուկ լարէր Կեսարու. ուստի և պատմեն՝ անցուցանել այնուհետև Կեսարու զգիշերն 'ի խնճոյս՝ 'ի պահ զգուշութեանն անձինն:

Եւ էր այս Պոթինոս դժոխըմբերելի այր 'ի բազում իւրոց յայտնի բանիցն և գործոց ընդդէմ Կեսարու՝ խէթ ածել և 'ի Թշնամանել զնա: Քանզի և ցորեան հնացեալ յոյժ բաշխեալ զօրականին, ա-

սէր նոցա՝ համբերութեամբ գո՛հ լինել՝ զի զօտարինն ունեն : Իսկ յընթրիսն տայր 'ի գործ վարել միայն կահս փայտի և խեցւոյ, իբրու եթէ զոսկին և զարծաթին առ հասարակ 'ի գլուխ տարեալ իցէ Կեսարու : Քանզի և էր իսկ հայր առնն՝ որ թագաւորէր 'ի ժամուն՝ պարտապան Կեսարու հազար և եօթն հարիւր և յիսուն բիւրուց • այլ 'ի պարտուց անտի թողեալ իսկ էր որդւոցն պարտապանին, և պահանջէր Կեսար բիւրս միայն հազար 'ի պաշար զօրուն: Ապա խրատ տուեալ Պոթինոս Կեսարու չու առնել և մեծամեծաց ուշ ունել նահատակութեանց, առ այս՝ և զպարտսն զայն յամում պահանջել, և այնպէս շնորհս ևս առաջի գտանել արքային • Եւ պատասխանի Կեսար, չէն ինձ պէտք Եգիպտացի խորհրդականաց • և առաքէր 'ի ծածուկ կոչէր առ ինքն զԿղէոպատրա : Նա 'ի բարեկամացն առեալ միայն զԱպողոդորոս Սիկիլիացի, և մտեալ 'ի փոքրիկ նաւակ՝ եկեալ հասանէր յարքունիսն 'ի նսեմանալ աւուրն • Իբրև յանհնարին իրքն մտանէին Կղէոպատրեայ թաքուցանել զանձն, պարզեալ մեկնեալ 'ի պաստառակալն՝ այնպէս պատատեցաւ • Իսկ Ապողոդորոս կապեալ փոկով զպաստառակալն՝ այնպէս առեալ բերէր զնա 'ի ներքս ընդ դրունսն առ Կեսար : Եւ ասեն յապուշ մնալ Կեսարու յառաջին այս հնարիցն Կղէոպատրեայ, զոգւոյն արութիւն յայնմանէ 'ի դէմս բերեալ . և թէ՝ կենակից նմա ապա

եղեալ Կեսար, և 'ի շնորհացն և 'ի գգուանացն յաղթեալ, առեալ զնա հաշտեցուցանէր ընդ եղբօրն և 'ի միասին ընդ նմա թագաւորեցուցանէր:

Ապա խրախունս մեծ կարգեալ առ հասարակ վասն հաշտութեանն այնորիկ, անդանօր մի ոմն 'ի ծառայիցն Կեսարու վարսավիրայ նորա՝ այր անառի յոյժ քան զամենայն մարդ և խուզարկու ամենայնի և ունկնդիր ականջալուր և հետաքրքիր այր, իրազգած լինէր դաւանաց հաղբին Աքիլլասայ զօրավարի և Պոթինոսի ներքինւոյն ընդդէմ Կեսարու: 'Ի վերայ հասեալ բանին Կեսար, պահապանս կարգեալ յայրանոցին, սպանանէր զՊոթինոս: Այլ Աքիլլաս զերծեալ 'ի բանակ իւր, նա ընդդէմ մարտ գրգռեաց բուռն և դժնդակ. քանզի և սակաւաձեռն գնդաւ հասանէր նմա այնուհետև 'ի դիմի հարկանել քաղաքի և ստուարագունդ բանակի:

Արդ առաջին վտանգեցաւ Կեսար 'ի ծարաւոյ. քանզի հասին խցին 'ի նմանէ թշնամիք զաղուգայս ջուրցն: Իսկ երկրորդ անգամ՝ 'ի նեղ արկեալ նա 'ի ձեռաց ըղնաւատորմիղն հանել, 'ի փրկութիւն անձինն հուր ինքնին արկանէր 'ի տորմիղն. և ընթացեալ բոցոյն 'ի նաւակայից անտի՝ յաճիւն դարձուցանէր և զմեծ Մատենադարանն: Իւ ապա երրորդ անգամ՝ 'ի կըռուել նորա մօտ 'ի փարոս, 'ի վայր յամբարտակէն ոստնոյր նա յակատ մի թիկունս տալ զօրականին իւրոյ. բայց յայն-

ժամ 'ի կողմանց կողմանց նաւակադնաց 'ի նա դիմեալ Եգիպտացւոց՝ ամայր նա զինքն 'ի ծով, և հազիւ ուրեմն 'ի լող՝ 'ի տագնապէն մազապուր լինէր: Եւ ասեն՝ 'ի բուռն յայնժամ կալեալ Կեսարու պնակս շատ գրեալս, չեթող 'ի ձեռացն՝ թէպէտ և նեղաձիգ 'ի նա լինէին. ինքն ջրասոյզ լինէր, և 'ի վերոյ ջուրցն միով ձեռամբն կալեալ զայնոսիկ՝ միւսովն միայն այնպէս 'ի լող ընթանայր. իսկ զակատն անդէն ծովամոյն առնէին:

Այս 'ի վերջէ անցեալ արքային առ թշնամիս անդր, զհետ նորա պնդեալ և մարտ եդեալ յաղթէր. տապաստ զբազումս արկանէր, և արքայն ինքնին անհետանայր, զի և ոչ ուրեք այնուհետև երևեցաւ: Յայնժամ ապա զԿղէոպատրա թողեալ դշխոյ 'ի վերայ Եգիպտոսի, որ յետ սակաւուց ծնեալ նմա որդի՝ Կեսարիոն կարդացեալ յԱղէքսանդրացւոց, ինքն չուանէր խաղայր յԱսորիս. և անտի անցեալ յԱսիա՝ լուր էառ եթէ Դոմիտիոս պարտեալ 'ի Փառնակայ որդւոյն Միհրդատայ փախստեայ գնաց սակաւուք 'ի Պոնտոսէ. և թէ՝ ինքնին Փառնակ ոչինչ պարկեշտացեալ 'ի յաղթութեանն՝ ունելով զԲիթինիա և զԿապպադովկիա, թիկնածէր և 'ի Հայս՝ զոր Փոքրն կոչեն, գրգռել որ անդ առհասարակ զարքայս և զչորրորդապետս:

Հապա խաղաց գնաց Կեսար ընդդէմ Փառնակայ երիւք գնդօք, և մարտ սաստիկ

պատերազմի յարդարեալ առ քաղաքան Զելայ՝ 'ի փախուստ 'ի Պոնտոսէ խուռնապեցուցանէր զՓառնակ. և խաղաղ հարուած 'ի վերայ հասուցանէր զօրուն: Այսպ ըղժրութիւնն զայս և զարագութիւն մարտին զոր մղեաց, ազդ արարեալ 'ի Հռոմ, գրէր առ Ամինտիոս ոմն բարեկամ իւր՝ բառս երիս. "Եկի, Տեսի, Յաղթեցի,,: Բայց 'ի Հռոմայեցւոց բարբառ՝ նմանօրինակ 'ի յանդն բերեալ բառիցն՝ համառօտախօսութիւն հեշտալուր 'ի ներքս բերէն 4:

Յետ այսորիկ անցեալ յԻտալիա չոգաւ 'ի Հռոմ. քանզի և 'ի կատարած էր տարին երկրորդի իշխանապետութեան նորա. Թէպէտ և յառաջ ժամանակաւ երբէք այն աւագութիւն չեկաց տարևոր: Այսպ ընտրեալ կարգեցաւ նա հիւպատոս վասն ամին երկրորդի. սակայն և շատ բամբասեցաւ. քանզի աղմուկ 'ի զօրականին յուզեալ և սպանեալ յայնժամ արանց երկուց աւագաց 'ի զօրավարական կարգէն՝ Կոսկոնիոսի և Գալբայայ, նա պատուհաս զայս 'ի վերայ ածէր նոցա՝ անուն միայն կարդացեալ նոցա Քաղաքացի՝ փոխանակ Զօրականի. և դրամակշիռս ևս հազար տայր բաշխէր միում միում 'ի նոցանէ, և գետին ևս բազում յԻտալիա հրամայէր նոցա: Բամբասեցաւ նա և յանմտութեանն Դողոբելլայայ, և յարծաթսիրութեանն Ամինտիոսի և 'ի գինեձանութեանն Անտոնիոսի, և 'ի գործոն Կորֆինիոսի՝ որ յինքն տարեալ զապա-

բանն Պոմպէի՝ փախելոյ չլինելոյ իբրու ոչ բաւական վասն նորա : Քանզի և հանդուրժէին իսկ ոչ հաճոյեսցիք ընդ այսոսիկ. և Կեսար ինքնին չէր անտեղեակ, և ոչ հաճեալ ինչ էր, սակայն և բռնադատեցաւ 'ի սաստ իւր զմարդիկն զայն վարել յայնժամ :

Բայց 'ի պատերազմին փարսաղեան՝ փախըստեամբ 'ի Լիբիա չուեալ Կատոնի և Սկիպիոնի և անդանօր զօրաժողով եղեալ 'ի ձեռն արքային Յոբայայ, խաղայր Կեսար ընդդէմ նոցա. և անցեալ 'ի Սիկիլիա յարևադարձն ձմերայնոյն, զամենայն յոյս դանդաղանաց և զդեգերանաց միանգամայն հատեալ 'ի զօրավարայն՝ զխորան իւր հարկանէր անդէն առ ծովեզերբն՝ ուր եկեալ հարկանէին ալիք. և անդէն 'ի շնչել յաջողակ հողմոյն ծովագնաց լինէր երեքհազար հետևակօք և սակաւ այրուձիով. և հասեալ 'ի ցամաք թափէր անդր զանխուլ. և ինքն միւսանգամ խաղայր 'ի խորս յանձանձել ածել 'ի բանակ անդր և զայլ ևս բազմութիւն զօրուն՝ որոց և պատահեցաւ իսկ նա յայնժամ 'ի ծովուն :

Լուր առեալ նորա զմեծապէս վստահութեան թշնամեացն 'ի պատգամ մի վաղնջուց, իբրու եթէ՝ զարմին Սկիպիոնից ցանգ յաղթական լինել 'ի Լիբիա. դըժուարապատում իցէ ասել՝ եթէ կատակ մի յայնժամ 'ի վար արկեալ Կեսար արգեօք ոտնհա՞ր խնդրեաց լինել Սկիպիոնին զօրավարին թշնամեաց, եթէ արդեօք լըրջ-

մութեամբ խնդրեաց յիւր կողմն զպատգամն զայն յանկուցանել: Քանզի կալեալ առ իւր զայր ոմն սնընդքոր և ընկերիկ 'ի զարմէ անտի Ափրիկանոսից՝ անուն Սկիպիոն Սալլուստիոն. զնա առեալ կարգէր յառաջամարտիկ, իբրու զօրավար զօրուն՝ ստէպ ստէպ մարտ դնել կռուել մտադիւրութեամբ ընդ թշնամիսն. յորժամ անդանօր զօրականին պակասեալ էր ցորեան, և գրաստուցն՝ ձիարակ, և տաղնապելեան ես յայնժամ տալ երիվարաց 'ի կեր զծոռս ծովուն լուացեալ յաղութենէն և խառնեալ համեմեալ ընդ սակաւ սիզոյ. քանզի անդանօր Նումադացիք արապոտինք և բազմամբոխք համապատօր յերևան եկեալ գնային ընթանային և հասեալք ունէին զգաւառն: Էր երբեմն, զի և սպառապեալ զօրավարացն կեսարու և զերիվարսն 'ի ձեռս տուեալք ծառայիցն, և ինքեանք նստեալ հեշտացեալ 'ի զնին առն ուրումն Լիբէացւոյ՝ որ կաքաւս և կայթս արոփայր առաջի նոցա՝ 'ի նոյն և սրինգ սքանչելի ինքնին հարկանէր, անդէն 'ի կողմանց կողմանց յանկարծօրէն 'ի վերայ խուժեալ նոցա թշնամեացն զբազումս տապաստ արկանէին, և զայլսն 'ի փախուստ դարձուցեալ՝ խառն ընդ փախստէիցն և նոքա 'ի բանակ անդր մխեցան մտին: Եւ թէ կեսար անդանօր և ընդ նմա Պողլիոնին Ասիննիոս չէին 'ի թիկունս արտաքս ելեալ 'ի 'ի զանկշէն և զփախստեայսն արձանացուցեալ, վճարեալ իսկ էր յայնժամ գործ

պատերազմին: Իսկ և այլ անգամ 'ի կըռուին վաղթարեյան Կեսարեանք. ուր և պատմեն՝ տեսեալ Կեսարու 'ի փախուստ զայրն արծուեկիր դարձեալ՝ ունել զփողոյ զաւունն և դարձուցանել զնա և ասել. '' 'Ի կոյս յայս կան թշնամիքդ ,,:

Այս 'ի յաջողակ սաստի նախամարտիկ ելից խրախուսեալ Սկիպիոնի մարտ սահմանաւոր յօրդարել պատերազմի, և յայսկոյս թողեալ զԱփրանիոս և յայնկոյս զՅոբաս՝ որ անդ վայր մի 'ի բացեայ բանակ հօրեալ կային, ինքն զամուրսն հասեալ կալաւ վասն խրոյ բանակին 'ի վերոյ լճին մօտ 'ի քաղաքն Թապսոսոն, լինել 'ի մարտին առհասարակ զօրականին 'ի գլխաւ և յամուր ապաստանի: Մինչդեռ նա յայն գործ պարապեալ էր, անդուստ Կեսար անհնարին արագ հասեալ անցեալ զանտառախիտ վայրաց անկոխ և առապար՝ 'ի վերայ անկանէր նորա. զկէսս պատեալ պաշարեալ և կիսոցն ճակատ ընդդէմ յարդարեալ հարկանէր վանէր, և յաջողեալ 'ի դէպ ժամանակ և 'ի ձեպ բախտին՝ անդէն միանգամայն 'ի բուռն զբանակն արկանէր զԱփրանիոսին, և աւերէր եղծանէր և զՆոմադացւոյն, և յայնժամ Յոբաս 'ի փախուստ խուսափէր: Եւ այնպէս սակաւ 'ի սակաւ ժամս տիրանայր Կեսար միանգամայն երից բանակաց. և հինգ բիւր թըշնամեաց տապաստ արկեալ՝ և ոչ յիսնից չափ կորուսանէր յիւրմէ զօրականէն: Զայս օրինակ պատմեն կէսք պատահեալ

յայնժամ խրացն ։ Իսկ կէսք ասեն՝ ոչ նահատակել յայնժամ Կեսարու ՚ի կռուին. քանզի ՚ի կարգել դասաւորել անդ զօրուն՝ զգայր նա անկակլից ախտին իւրոյ. և մինչչև ըմբռնեալ և զգայազիրկ եղեալ՝ այն ինչ սօսիւն և սասանիւն շարժէր զնա, նա արագ արագ տայր տանել զինքն յաշտարակ մի մօտ, և անդ կայր յանդորրու ։

Այլ յորանց անտի աւագաց հիւպատեան և պրետորեան փախստէից ՚ի մարտէն՝ կէսք զիւրովին գնացին յըմբռնել իւրեանց. և կէսք բազումք սպանան ապա ՚ի Կեսարէ ։ Բայց Կեսար մեծապէս ընձացեալ կենդանւոյն ձերբակալ զԿատոն առնել, ճեպեաց խաղաց յՈւտիկէ (քանզի անդանօր Կատոնի պահ կալեալ ունէր քաղաքին և ՚ի մարտն չէր եկեալ)․ Լուր յայնժամ առեալ անձին առնելոյն Կատոնի, ՚ի խոր խոցեցաւ Կեսար․ իսկ թէ առ ի՞նչ, անյայտ է ։ Սակայն և զայս ինչ բարբառեցաւ յայնժամ․ " Բա՛րէ Կատոն․ խանդամ քեզ զմահդ, զի դու խանդացար ինձ զփրկութիւնդ ,, ։ Այլ սակայն և այն Ճառ արձանագրեալ ապա ՚ի Կեսարէ ընդդէմ Կատոնի մեռելոյ, թուի իմն ՚ի դէմս բերել զԿեսար ոչինչ ամոք և հաշտ ընդ Կատոնի ։ Քանզի և զիա՞րդ արդեօք ներէր նմա ՚ի կենդանութեանն, այնչափ ցասումն դառնութեան թափեալ ընդդէմ յանզգայ անդր ։ Սակայն և ՚ի մարդասէր հեզութենէ անտի Կեսարու առ Կիկերոն և առ Բրուտոս և առ բիւրս ո-

մանս 'ի հակառակամարտից, 'ի ներքս արդեօք բերցուք մեք՝ ոչ առ ատելութենէ ինչ զայն ճառ արձանագրեալ կեսարու ընդդէմ կատոնի, այլ 'ի քաղաքական պատուասիրութենէն կրթեալ առ 'ի նոյն։ Քանզի գրուաս զկատոնի արձանագրեալ իսկ էր ինքնին կիկերոնի՝ անուն եդեալ ճառին՝ կատոն, յոյժ արդոյ և պատուական առ բազումս, գործ հրաշալի այնպիսումն գոլով պերճախօս հռետորի և ճարտարի, և նիւթ այնպիսի ունելով յոյժ գեղեցիկ։ Դժգունեցաւ կեսար, բամբասանս իմն համարեցաւ զգրուաս զառնն զնորովին գնացելոյ յիւր պատճառս. առեալ արձանագրեաց կուտեաց շատ ինչ 'ի բամբասանս կատոնի, և մակագրեաց զգիրն Դնէրկատոն։ Եւ ապա կրկին այս Արձանագրութիւնք բազումս ունին իւրեանց փաստաբանս 'ի մեծարանս երեսաց կեսարու և կատոնի։

Դարձ ապա արարեալ 'ի Լիբիոյ 'ի Հռոմ, առաջին հրապարակախօս եղեալ պանծայր կեսար ընդ յաղթութիւնն, զի ընդարձակատարր հասեալ կալաւ աշխարհ. յորմէ ամի ամի հարկս հարցէն նոքա զերկերիւր հազարաց ատտիկեցի գըրուաց զցորենոյ, և զերից հարիւրոց բիւրուց լտերաց զիւղոյ։ Նոյն և հանդէս տանէր յաղթանակաց զԵգիպտոսին և ըզՊոնտոսին և զԼիբիոյ, ոչ զՍկիպիոնին՝ այլ զՅոբայայ արքային. որ որդի մանուկ յոյժ՝ Յուբաս անուն՝ ածաւ յայնժամ 'ի

հանդէս յաղթանակին. բայց ձերբակալն լինել երջանկութիւն յոյժ առթեաց մանկանն. քանզի այնպէս 'ի միջոյ բարբարոսացն ելեալ և 'ի Նումադացւոցն, եմուտ նա ապա ընդ համար բազմահմուտ մատենագրացն Հելլենացւոց:

Իսկ յետ յաղթանակացն՝ մեծապէս պարգևէր զզօրականսն, և կոչումս հանդերձէր ժողովրդոց, և Թատրս տեսարանաց, տուեալ հացկերոյթ ամենեցուն միանգամայն 'ի սեղանս եռաբազմականս երկու բիւր և երկու հազար. տայր և տեսարանս զմենամարտից և զնաւամարտից արանց 'ի պատիւ դստերն իւրոյ Յուլեայ մեռելոյ յառաջ ժամանակաւ: Բայց յետ տեսարանացն՝ հանդէս առնէր ժողովրդեանն և յերեսուն և յերկու բիւրուց անտի՝ որ յառաջն, գտանէր միայն հնդետասան բիւր. այնչափ աղէտք յորդեցին յամբոխից անտի, և այնչափ ժողովուրդք եղծեալ ապականեցան. Թող զմիշտս վտանգին յայնժամ զխտալից և զդաւառացն գլխովին:

Զկնի այսորիկ ընտրեալ կարգեցաւ նա հիւպատոս այս չորրորդ անգամ. խաղաց գնաց յԻբերիա ընդդէմ որդւոցն Պոմպէի, Թէպէտև պատանիք տակաւին՝ սակայն և բանակ գումարեալ էին նոքա զօրու ծանու. և մեծապէս նահատակեցան 'ի զօրս վարութեան իւրեանց, զի և տագնապ անհնարին հասուցին Կեսարու: Եւ մղեցաւ յայնժամ մարտ մեծի պատերազմին մօտ

'ի քաղաքն Մունդաս. յորում զվատթարել զնւրոցն տեսեալ Կեսարու, արձանացեալ 'ի մէջ զինուցն և 'ի մէջ դասատորացն՝ ձայն բարձեալ գոչէր, իբրև չակնկուրեն նոքա մատնեալ զինքն այնպէս 'ի մանկտոյն ձեռս: Այպա հազիւ ուրեմն ձիգն մեծապէս թափեալ վանէր ընկրկէր զթշնամիսն, հարեալ 'ի նոցանէ ոգիս բիւրս երիս. իսկ յիւրոց անտի անկանէլին հազարք միայն 'ի քաջաց զօրականէն: Իսկ 'ի տեղի տալ 'ի մարտէն՝ ասէր առ բարեկամսն. բազում անգամ մարտ եդեալ կռուեցայ վասն յաղթութեան, այլ զայս առաջին նուագ՝ վասն անձին փրկութեան: Եւ տանէր նա զյաղթութիւն զայն յաւուր տօնին Դիոնիւսեայ, յորում աւուր ասեն և Պոմպէի մեծի խաղալ 'ի մարտ չորիւք ամօք յառաջ: Բայց յորդւոց անտի Պոմպէի կրսերն 'ի փախուստ դարձաւ, և զերիցուն գլուխն յետ սակաւ աւուրց Դիդիոս առաջի մատուցանէր Կեսարու: Եւ եղև այս՝ վերջին պատերազմացն Կեսարու.

Իսկ յետ այսորիկ հանդէս յաղթանակին նորա յոյժ դժոխըմբեր լինէր Հռոմայեցւոց: Քանզի ոչ զօտարս ոմանս 'ի զօրավարաց եհար վանեաց նա յայնժամ և ոչ 'ի խուժադուժ արքայից. այլ զորդիս եղծեալ և զզարմն զառն աւագի և զքաջին Հռոմայեցւոց՝ զվատաբաղդին: Ուստի և չէր ինչ գեղեցիկ և 'ի ձաւ հանդէսս յուզել յաղէտս հայրենեացն, և հրճուել խայտալ 'ի նահատակութեան գործոյն՝ զոր

'ի չքմեղս առ. գիս և առ մարդիկ հանցէ
միայն հարկն բռնադատ : Որպէս և ինքնին
նա յառաջն երբէք ոչինչ հրապարակեաց
ո՛չ հրեշտակ և ո՛չ նամականի 'ի յաղթու֊
թեան ընտանի մարտիցն . այլ հրաժարէր
խուսէր 'ի փառացն՝ պատկառանօք զամօ֊
թի հարեալ: Սակայն և այնպէս 'ի բախտ
առնն խոնարհեալ Հռոմայեցւոց և զլուծն
առեալք յանձինս և նուաճեալք ընդ ինք֊
նակալ տէրութեամբն 'ի դիւր քաղաքա֊
կան մարտիցն և վշտաց աղէտիցն՝ առեալ
կարգէին զնա իշխանապետ ընդ յամայր
ամս . և էր ապա այն յայտնի բռնակալու֊
թիւն , զի յինքնիշխան միապետութիւն
անդր յաւելաւ և անվախճանութիւնն :
Ապա Կիկերոնի սահմանեալ նմա 'ի ձեռն
Սինկղիտոսին շուք մեծապէս պատուոյ՝
չափաւոր և վայելուչ , անդանօր այլք առա֊
րապայման փառս յաւելուլին նմա . և այր
զարամբ ելեալ շուք ձօնել նմա , ատելի
յարդարեցին զայրն և խոչ ընդ ակն արանց
առաքինեաց՝ 'ի պերճ՝ և յանսովոր փա֊
ռաց անուն՝ զոր փառաւորեցին զնա . յո֊
րում թուի գործակից և ատելեացն Կե֊
սարու լինել ոչինչ պակաս քան զմարդե֊
լոյզ որեարն . զի ապա մեծ ևս պատճա֊
ռեալ 'ի չքմեղս լինիցին՝ դաւաճանեալ
զայրն իբրև պարտ մեծաց վնասուց . և այն
զի նա յետ կատարածի քաղաքական մար֊
տիցն վարս անբամբաս ամենևին յանձին
եբեր : Եւ թուի ինձ՝ ոչինչ տարադէպ
յայնժամ սահմանել Հռոմայեցւոց՝ տա֊

Ճար կանգնել գԹուԹեան 'ի շնորհս հե֊
զուԹեան առնն ։ Քանզի ներեաց եԹող
Կեսար բազմաց իւրոց հակառակամարտից ,
և կիսոց տայր բարձս և աւագուԹիւնս .
ըստ որում Բրուտոսի և Կասսիոսի , որք և
կարգեցան զօրավարք ։ Ո՛չ զանց և զպատ֊
կերօքն արար նա զՊոմպէի . զի որ յերկիր
կործանեալքն էին՝ ետ նա վերստին կանգ֊
նել . ոյր աղագաւ ասէր և ինքնին Կիկե֊
րոն՝ եԹէ զպատկերսն կանգնելով Կե֊
սար զՊոմպէի՝ զիւրսն գլխովին արձա֊
նացոյց յայնժամ ։

Իսկ յայնժամ 'ի խրատել զնա բարե֊
կամացն զգուշանալ անձին , և 'ի տալ ևս
նմա բազմաց յիւրեանց իսկ Թիկնապա֊
հացն , յանձին չկալաւ և ասէր . քան ցանգ
զանգիտել 'ի մահուանէ՝ լաւ ևս է միան֊
գամ մեռանել ։ Եւ զանձն իւր պարըս֊
պեալ 'ի սէր մտերմուԹե քաղաքացեացն՝
իբրու յամուր ապաստանի , 'ի խրախունս
հասարակաց և 'ի բաշխս ցորենոյ խնդա֊
ցուցանէր և յինքն զխուժան ժողովրդեանն
յանկուցանէր . Թևակոխեաց և ընդ միտ
մտանել զօրականին . 'ի գաղԹականս ար֊
ձակէր զնոսա մանաւանդ 'ի Կարքեդոն և
'ի ԿորնԹոս . որով և այնք քաղաքք յա֊
ռաջագոյն աւերեալք երկոքեանն 'ի միում
ժամանակի , միւսանգամ շէն կացին 'ի
միում ժամանակի ։ Նա և աւագորերոյն՝
կիսոց խոստումն առնէր զհիւպատեան
բարձից և զզօրավարացն . և կիսոց՝ ափո֊
փանս և յոյս առաջի դնէր այլոց աւագու֊

թեանց. և ըղձացեալ տիրանալ մարդկանն մտադիւրադոյնս հնազանդելոց՝ յուսացուցանէր զամենեսեան առհասարակ. և 'ի մեռանել անդ Մագսիմոսի հիւպատոսի՝ յորժամ մի օր միայն մնացեալ էր նորա հիւպատոսութեանն, կարգեաց վասն աւուրն հիւպատոս զԿանինիոս Հռեբիղիոս. որում և ընթացեալք բազումք (ըստ սովորութեանն) 'ի մեծարանս խնդութեան, ասէր Կիկերոն. "փութացուք ձեպեսցուք, մինչև առնն 'ի գլուխ զհիւպատոսութիւնն հանեալ,,:

Այլ քանզի բազմադէմ մրցանք կեսարու հոյակապք՝ ոչինչ հանդարտէին զոգի նորա անդստին 'ի բնութենէն կրթեալ 'ի մեծ նախատութիւնս և 'ի փառս՝ նստել վայելել յանդորրու, նա և դրդեալ և սադրեալ որ յառաջոյ 'ի հանդէսս, խորհուրդս նորոգածինս յորդէին նմա զմեծ ևս մրցանաց և զնորոց փառաց՝ իբրու որ յոյժ հնացեալք իցեն նմա առձեռինքն: Եւ ապա այն կիրք նորա ելևելս իմն էին զանձամբ առնն՝ իբրու զօտարինն. և պատուասիրութի՝ յաղթահարել վերջնովքն զառաջինման մրցանան:

Զմպա հաստատեաց 'ի միտս հանդերձել կազմել՝ խաղալ գնալ ընդդէմ Պարթևաց, և նուաճեալ զնոսա և անցեալ ընդ Վրկանիս՝ պատել զծովն Կասպից և զԿաւկաս, և յարձակել 'ի Սկիւթիա. և հատեալ անցեալ զվայրան զսահմանակից Գերմանիոյ և զԳերմանիա ողջոյն, դարձ յի-

տալիս առնել ընդ Կեղտս, և կատարել պսակել զծիր զայն զանէրութեանն՝ պարագծեալ ողջոյն յՈվկիանոսէն: Բայց 'ի պատրաստութեան արշաւանին այնորիկ՝ խորհէր և զկիրճն փորել պեղել զԿորնթոսին. դարձեալ և զԱնիէն և զՏիբերիս առնուլ ժողովել արտաքոյ քաղաքին 'ի խրամ մի խոր, և դարձուցեալ գնացուցեալ զնոսա 'ի Կիրկէոն կոյս՝ թափել զնոսա 'ի ծով 'ի Տարրակինաս, հեշտ և աներկեան գործելով ճանապարհ վաճառականացն Հռովմայ: Առ այսոքիւք՝ և խորհէր առնուլ զարտաւղել զջուր ճահճացն մօտ 'ի Պոմենտինոն և 'ի Սետինս, և հաստատել անդ ագարակս և գեօղեան 'ի գործ բիւրուց բազմաց մշակաց: Կամէր և ամբարտակս ածել 'ի թումբս ծովուն մերձ 'ի Հռոմ, և զխոչ և զխութ մաքրեալ զծովափանցն Ովստեայ՝ զկուրացեալն և զդըժուարամատոյց, լինել անդ անօրնաւահանգիստ և նաւակայս՝ բաւական առ այնչափ նաւարկութիւն: Այլ այսոքիկ ամենայն պատրաստութեամբ չափ միայն էին:

Բայց նորա կարգաւորութիւն Օրաբանին, և ուղղագրութիւն նորա յաղագս անհաւասարութեան ժամանակին՝ իմաստասիրաբար եւ 'ի գլուխ, և գեղեցիկս վարեցան նովաւ: Քանզի ոչ միայն հինքն Հռոմայեցւոց շրջանս ունէին զամսոց անկանոն, և տարւոյն անհամեմատ, զի և տակաւ զոհսք նոցա և տօնախմբութիւնք մեծամեծս խախտեալք՝ գային հանդիպէին

յեղանակս ներհակակլրս ժամանակացն. այլ և մարդիկ ժամանակին այնորիկ՝ զարեգակնային ունելով տարի, անբաւք գլխովին էին 'ի գիտութենէ իրացս այսոցիկ. և քահանայք՝ միայն հմուտք ժամանակաց զանխուլ յամենեցուն և գողաբար՝ առեալ յաւելուլին ամիս մի նահանջ՝ որում անուն կարգային Մէրջէտօնիուս. զոր ասեն առաջին յարքայէն Նումայէ հնարագիտութեամբ մուծեալ յուղղութիւն վրիպակին. բայց ուղղութիւն այս դուզնաքեայ էր և սակաւաւոր, որպէս 'ի վարսն Նումայի արձանագրեցաք: Իսկ Կեսար յայնժամ զիւրն առաջի արկեալ քաջաց իմաստասիրացն և Մաթեմաթիկոսաց, 'ի սադրելոյ հնարագիտութեան նոցա՝ զուղղագրութիւն իւր ճշգրտագոյնս յարդարեաց. որով և մինչև ցայսօր ժամանակի վարեն Հռոմայեցիք, և թուի թէ քան զայլսն նուաղ վրիպեցին նոքա յանհաւասարութեան յայնմիկ:

Այլ սակայն արք յաչաղկոտք և որ ընդ ակամբ հայէին յիշխանութիւն նորա, առին և յայպանեաց տալ բամբասել զնա: Քանզի Կիկերոն հռետոր՝ է զի լուեալ յումեմնէ ասել, եթէ առ. վաղիւն ծագեսցի Քնարն 5, ասէր. "Նա կարի իսկ քաջ՝ 'ի ձեռն Հրովարտակի„. իբրու եթէ և զայն ևս հարկաւորեալք յանձին կալցեն մարդիկ: Սակայն յայտնի ընդդէմ նորա յուզեաց ատելութիւն և մահ ևս առթեաց նմա՝ ցանկութիւն նորա 'ի թագա-

ւորութիւն անդր. և այն եկաց առ խուժանին առաջին պատճառք ատելութեան նորա, և առ վաղնջուց ատելիս նորա ոխերիմ՝ բարուր գեղեցիկ: Իսկ որ յայնժամ թեակոխէին զշուք զայն ձօնել Կեսարու, համբաւ հարկանէին 'ի խուժանին՝ իբրու 'ի մատենից անտի Սիբիլլեանց 'ի վեր ելեալ, Հռոմայեցւոց նկուն զՊարթևսն առնել 'ի կռուին ընդ զօրավարութեամբ արքայի. իսկ այլազգ ոչ երբէք: Եւ էր երբեմն 'ի դառնալ Կեսարու յԱլբեայ 'ի քաղաքն, յողջունել զնա անդ կուսակցացն յանուն Արքայի, և անդ 'ի սրտնել և յաղմկել խուժանին, նա ինքն ցասումն 'ի դէմսն բերեալ՝ ասէր: Ոչ Արքայ, այլ Կեսար է անուն իմ: Իբրև յայնժամ առհասարակ 'ի լռութիւն դարձան, նա ոչինչ խնդամիտ և գոհ՝ այնպէս անցեալ ընդ մէջ նոցա գնայր:

Ապա յետ այսորիկ շուք մեծաշուք և յոյժ հոյակապ պատուոյ սահմանեալ նմա 'ի Սենկղիտոսէն, առ նա ինքն դէմ եդեալ յայնժամ հիւպատք և զօրավարք առհասարակ միաբանութեամբ ողջոյն Սենկղիտոսին, նա բազմեալ՝ յոտն չեկաց. այլ այնպէս բարբառեալ առ նոսա իբրև առ ռամկականս ոմանս, պատասխանի ևս առնէր՝ եթէ չքոյ պատուոյ նորա անձկութեան առաւել պէտք են՝ քան ընդարձակութեան: 'Ի խոր 'ի պատասխանւոյն խոցեցան ոչ աւագանին միայն, այլ և խուժանն ինքնին գլխովին, իբրու յանհարութեան

Սինկղիտոսին տանհար և ողջոյն եղեալ քա-
ղաքին ․ յայնժամ և որոց միանգամ էր
մատչել առ նա , այնպէս 'ի խոր խոցեալք
անդէն մեկնեցան 'ի բաց ․ ուստի և ինքն
ապա 'ի միտս եկեալ, վաղվաղակի երթեալ
'ի տուն և 'ի բաց 'ի պարանոցէն առեալ
զպատմուճանն , ձայն բառնայր առ բարե-
կամսն՝ մտադիւրագոյնս առաջի զպարա-
նոցն մատուցանել՝ որ դամ մի կամիցի փո-
ղոտել զնա ։ Բայց ապա 'ի հնարս հայ-
թայթանաց մտեալ Կեսար , արկանէր ըղ-
ձիւսան զանկակից ախտին ․ և ասէր եթէ
վերնոտեալք չեն ինչ առողջամիտք 'ի հրա-
պարակախօսելն յոտնկելիս , այլ սարսին
շարժլին , և ցնորեալք դանդաչեն զգայա-
զիրկք ամենեքին ։ Սակայն չէր այնպէս , այլ
և յերևել անդ Սինկղիտոսին պատրաս-
տեալ նա անշուշտ յոտն կալ , ասեն ար-
գելու 'ի Կոռնելիոսէ Բալբոսէ՝ որ 'ի
բարեկամաց անտի՝ մանաւանդ թէ 'ի սու-
տակապասից ․ որ և ասէր առ նա ․ “ Ո՞չ
իսկ յիշես դու Կեսար լինել քո ։ Եւ ո՞չ
յանձին կալցես դու զպատուականութիւն
անձինդ՝ իբրև վեհագունի ումեք ,, ։

ԱՅԼ 'ի դժպատեհս յայտոսիկ յաւել
նա և թշնամանս առ ժողովրդապետս ։
Քանզի էին յայնժամ աւուրք տօնախըմ-
բութեանն Լուպերկալեան , զոր դրեն
բազումք 'ի վաղ ժամանակաց անտի լինել
տօն հանդիսի հովուաց ․ և նմանաւոր է
այս Լիւկէանցն՝ որ յԱրկադիա ։ Արդ 'ի
տօնին յայնմիկ մերկամարմինք ընթանան

ընդ քաղաքն շարք 'ի պատանեաց ազատաց և յաւագանւոյն, և հարեալ ծեծեն թաւ փոկովք ընդ խաղ՝ որոց և միանգամ պատահեն նոքա. անդանօր և շարք ևս յաւագաց կանանւոյն՝ ընդ առաջ գնացեալք նոցա՝ առաջի մատուցանեն զանկին նոցա՝ որպէս 'ի վարժարանս՝ զափս ձեռացն. զի դիւր յղեաց համարին նոքա զբանն՝ դիւրածին լինել. և ամլոցն՝ 'ի յղանալ։ 'Ի զնին իրացն կայր Կեսար բազմեալ 'ի բեմին յոսկի յաթոռ՝ արկեալ զյաղթանակին պատմուճան։ Եւ յայնժամ մի յընթացողաց անտի զնուիրական վազսն՝ էր ինքնին Անտոնիոս հիւպատոս. իբրև եկն եմուտ 'ի հրապարակ անդր և խուժանն 'ի բաց փարատեալ տեղի ետ նմա, նա չոքաւ և իբրև առաջի ընծայէր Կեսարու պսակ բարձեալ 'ի ձեռս բոլորեալ 'ի բոլորս սարդենեաց, ծափք և կայթք նուաղք լինէին յայնժամ 'ի պատրաստական որերոյն՝ ոչ մեծ ինչ և բազմաշռինդն։ Իբրև յանձին չկալաւ Կեսար առնուլ զպսակն, յայնժամ շառաչիւն մեծ լինէր ծափից 'ի խուժանէն։ Իսկ կրկին անգամ 'ի մատուցանել առ Կեսար, ծափեցին դարձեալ նուազունք ոմանք. և 'ի հրաժարել դարձեալ նորա, անդրէն և առհասարակ ծափէին միանգամայն։

Զփորձ զայս փորձեալ, յարուցեալ յոտին Կեսար՝ հրաման տայր զպսակն կախել 'ի Կապիտոլին։ Իսկ ապա զանդրիսն զԿեսարու յակն արկեալք պսակաւորս 'ի

պսակս արքունի, յայնժամ երկուք 'ի ժողովրդապետացն Փլաւիոս և Մարուլլոս չոքան՝ 'ի վայր կորզեցին զպսակսն. և 'ի ձեռս զարան բերեալ՝ որք առաջին ողջոյն զարքունի ողջունեցին զԿեսար, 'ի բանդ քարշեցին զնոսա. և զհետ ընթանայր նոցա ամբոխն կայթս հարեալ և անուն կարդային նոցա Βρούτους. քանզի և Բրուտոս անդ ուրեմն ջնջեաց 'ի միջոյ զպայազատութիւն զարքայից, և 'ի միապետութենէն փոխեաց յիշխանութիւն Սենկղիտոսին և ժողովրդեան: Զայրացաւ Կեսար, և յերկուց անտի արանցն հանէր զիշխանութիւնն, և զեւր ամբաստանութիւնս յուզեալ ընդդէմ նոցա՝ տանհար և խուժանին լինէր. սոէպ և ինքն անուն կարդայր նոցա Βρούτους և Κυμαίους [6]:

Իբրև այս այսպէս լինէր, խուժան ամբոխին ակնկառոյց այնուհետև էր 'ի Մարկոս Բրուտոս, որ հայրենեօքն կարծէր ձեռ 'ի նախնոյն Բրուտոսէ, և մայրենեօք 'ի Սերվիլեանց՝ զարմ հոյակապ. և էր ինքն փեսայ Կատոնի, դարձեալ և քեռորդի նորա: Սա այս Բրուտոս ինքնաշարժ էր եղծանել տապալել զմիապետութիւնն. սակայն և դանդաղէր 'ի պատճառս պատուոյն և շնորհացն առ նա 'ի Կեսարէն. զի ոչ միայն 'ի Փարսալիա 'ի փախստեանն Պոմպէի ապրեցոյց զնա Կեսար, և ինքնին Բրուտոս աղօթկեր եղև և ապրեցոյց զբազումս յիւրոց բարեկամաց, այլ և մտերիմ յոյժ էր նա Կեսարու՝ որ մեծապէս վըս-

տահ էր 'ի նա. և տուեալ ևս էր զօրավարութիւն մեծաշուք. առ այս և հիւպատոս համանէր նմա լինել՝ նախամեծար եղեալ քան զԿասսիոս հետամուտ բարձին. քանզի և պատմեն՝ ասել Կեսարու՝ եթէ Կասսիոսին թէպէտ և իրաւացի ևս իցեն պատճառք, սակայն ոչ յառաջեսցէ նա քան զԲրուտոս: Եւ էր երբեմն՝ զի 'ի խորամանկել դաւանաց ընդդէմ Կեսարու՝ ամբաստան ոմանց եղեալ զԲրուտոսէ, ոչ ինչ միտ դնէր Կեսար. այլ ձեռամբն շօշափեալ զիւր մարմինն, ասէր առ ամբաստանսն. "Մորթս այս սպասեալ մնայ Բրուտոսի„. յայտ արարեալ եթէ թէպէտ և իշխանութեանն արժանի իցէ Բրուտոս վասն առաքինութեանն, սակայն և վասն իշխանութեանն երբէք նա յանշնորհակալութիւն չկրթեսցի և 'ի չարութիւն:

Իսկ յայնժամ որ փոփոխութեան իրացն զհետ կրթեալ էին և միայն կամ առաւել իմն 'ի Բրուտոս ակնկառոյց էին, ոչ ինչ ժտէին խօսել ընդ նմա վասն բանին այնորիկ. այլ գաղտ գիշերի գիրս առեալ սփռէին յատենի և 'ի վերայ աթոռակին՝ յորում նա զօրավարութեամբ բազմեալ առնէր իրաւունս. և բազում ինչ 'ի նոսա գրեալ կայր այսպէս. "Ննջես դու ով Բրուտոս. և չես դու Բրուտոս„: Իրազգած Կասսիոս եղեալ 'ի ծածուկ գրգռութեան պատուասիրութեանն Բրուտոսի յայսպիսեաց աստի, չոքաւ առաւել ևս քան զառաջինն գրգեաց և սրեաց զնոսա.

քանզի և մտանաւոր էր նա ատելութեամբ ընդ Կեսարու 'ի պատճառաց անտի՝ զոր ծանուցաք մեք 'ի վարսն Բրուտոսի ։ Այլ և ինքնին Կեսար խիթայր զառնէն. և էր զի առ բարեկամսն ասէր. « Զի՞նչ թուի ձեզ՝ եթէ կամեսցի Կասսիոս ։ Չեմ ինչ յոյժ հաճեալ ընդ նա. զի յոյժ դեղնեալ կայ »։ Առ այս և պատմեն՝ յամբաստանել երբեմն առ նա զԱնտոնիոսէ և զԴոլաբելլայ իբրև զխռովեցուցչաց, ասէր. « Ոչ ինչ այնպէս յարանցդ յայդցանէ երկնչիմ ես 'ի յոյրիցդ և 'ի վարսագեղից, որչափ 'ի դեղնելոցն և յերկիթացելոցն ». և ակնարկէր բանիւն զԿասսիոս և զԲրուտոս ։

Բայց թուի թէ Օրահասն ինքնին ոչ այնչափ ինչ անակնունելի է, որչափ անխուսափելի. քանզի և ասեն երևել յայնժամ սքանչելեաց հրէշից և խօլական ցնորից ։ Արդ զփայլատակունս երկնաւորս և զգիշերաշրջիկ զթափառական զուրուականսն, և զմենակեաց զթռչունսն վայրիջեալս 'ի հրապարակ անդր, թերևս և ոչ արժան ինչ իցէ յիշատակել 'ի պատահարդ՝ որ յառաջոյ՝ թաւծագին յոյժ ։ Այլ Ստրաբոնին իմաստասէր պատմէ՝ երևել յայնժամ բազմութեան հրակերպեան մարդկան դուոյթս տալ ։ Առ այս՝ և ծառայի ուրումն զինուորականի հատանել 'ի ձեռանէն բոց մեծ. և թուէր տեսանելեացն՝ եթէ կիզուցու ձեռնն, այլ 'ի բոցոյն չիջանել՝ անբոցակէզ մնաց այրն ։ Եւ թէ՝ 'ի զոհ զոհել Կեսարու, առանց սրտի

գտանէր սպանդն, հրէշ ահաւոր. զի և բնաւորապէս կենդանի անսիրտ կալ ոչ ունի: Առ այսոքիւք՝ և պատմեն բազումք՝ առն ուրումն գուշակի խրատ տալ Կեսարու անձնապահ լինել 'ի մեծէ վտանգէ յամսեանն Մարտի յաւուրն՝ զոր հռոմայեցիք Իդուք կոչեն: Իսկ 'ի գալ աւուրն և 'ի գնալ Կեսարուն 'ի Սինկղիտոսն, ողջունեալ զգուշակն և յընչաց քերեալ՝ ասէր. « Եկեալ իսկ են աւադիկ Իդուքն Մարտի »: տայր պատասխանի գուշակն 'ի ցած. « Այո՛ եկին, այլ ո՛չ անցին »:

Իսկ յառաջնում աւուրն հրաւիրեալ նա յընթրիս 'ի Մարկոսէ Լեպիդեայ, և 'ի բազմել 'ի սեղանն՝ կնքէր նա ըստ սովորութեանն նամականի. և յայնժամ զրոյց 'ի մէջ հարցանէին այսպէս, ո՞ր մահ լաւս իցէ. անդուստ Կեսար կանուխ քան զամենեսեան պատասխանի տայր բարձր ձայնիւ. ԱՆԱԿՆՈՒՆԵԼԻՆ: Ապա գնացեալ 'ի ննջել ըստ սովորութեանն ընդ ամուսնոյն. և բացեալ միանգամայն դրացն և պատուհանից սենեկին նորա, զարհուրեալ 'ի շառաչիւնն միանգամայն և 'ի լոյս, 'ի փայլատակեալ լուսնին տեսանէր անդանօր խոր 'ի քուն զԿալպուրնիա. և լսէր 'ի քունել նորա պապաչս իմն և թառանչս արձակել նմա և հառաչս անյօդաւորս: Քանզի երևութանայր 'ի քուն ամուսնոյն՝ խողխողեալ 'ի գիրկս իւր ունել յայնժամ զնա. և զայն ողբայր: Իսկ կէսք ասեն՝ ոչ զերազ զայն տեսանել Կալպուրնիայ, այլ

քանզի ապարանք Կեսարուն՝ որպէս պատմէ Լիվիոս՝ 'ի վճռոյ Սենեկղիտոսին գմբեթարդ յօրինեցան 'ի զարդ և 'ի շուք փառաց, յերազին տեսեալ Կալպուրնիա 'ի վայր զգմբեթն հոսեալ, զայն ասաղէր և արտասուէր : Իսկ 'ի ծագել առաւօտուն յաղերս անկանէր Կեսարուն ամուսինն, զի եթէ հնար ինչ իցէ՝ մի ելցէ ըստ տունն, այլ յայլ օր զատեան սահմանեսցէ Սենկղիտոսին. և եթէ զերազովքն ունչս առնէ, խնդրեսցէ նա այր՝ 'ի հմայս գուշակութե և 'ի սպանդից ինչ մի ճշգրիտ իմանալ վասն հանդերձելոցն : Յայսմանէ և ինքնին Կեսար յայնժամ՝ ըստ որում և 'ի դէպ արդեօք՝ սկսաւ խիթալ վայր մի և զանգիտել. քանզի և յառաջ ժամանակաւ երբէք ըզԿալպուրնիա չէտես նա կանացաբար զգածեալ մնապաշտութեամբ. և յայնժամ 'ի մեծ տագնապի տեսանէր զկինն :

Իսկ իբրև և իղձք և գուշակք՝ բազումս յաղեալք զոհս՝ նշանս վատաբաստս ազդարարին նմա, ապա հաստատեցաւ նա առնուլ առաքել զԱնտոնիոս՝ արձակել զատեան Սենկղիտոսին : Յայնժամ Դեկիոս Բրուտոս՝ մականուանեալն Ալբինոս՝ հաւատարիմ յոյժ Կեսարու՝ զոր և ժառանգ ինքն երկրորդ արարեալ էր զնա, դաւակից և ինքն միւսոյ Բրուտոսին և Կասսիոսին, զանգիտեալ եթէ 'ի վրիպել աւուրն խայտառակեսցին հաղբքն, սկսաւ ունչս առնել զըղձիւքն. և մեղ ևս դնէր Կեսարու՝ զի բամբասանս անձին յանձնէ առ Սենկ-

զխոստովին՝ ոտնհար լինելով նմա բանիւն. քանզի և խմբեալ իսկ կայ առհասարակ Սինկղիտոսն 'ի հրամանէն նորա, և միաբան ամենեքեան կազմ կան և պատրաստ վճիռ տալ նմա և անուանել զնա Արքայ գաւառացն արտաքոյ Իտալիոյ. և 'ի խաղալ նորա արտաքս՝ տանել պսակ արքունի ընդ ծով և ընդ ցամաք։ Արդ եթէ ոք՝ ասէ՝ 'ի բազմել նոցա այնպէս յատենին, գնացեալ պատգամ տարցէ նոցա արձակել այսօր զատեանն, և դարձեալ միւսանգամ ժողովել՝ 'ի յերազել անդ Կալպուրնեայ երազս բարիս, զո՞ր ապա զրոյցս ո՛չ ժայթքեսցեն արք յաչաղկոտք. կամ ո՞ ոք այնուհետև երբէք յանձին կալցէ զբարեկամացն բանս՝ եթէ ոչ ծառայութիւն ինչ են այսոքիկ և ո՛չ բռնակալութիւն ինչ։ Եւ յաւել ասել Դեկկիոս. իսկ եթէ անշուշտ կամք իցեն զօրս զայս իբրև վատախտար խափանել, լա՛ւ ևս իցէ արդեօք անձամբ անձին երթալ անդր՝ խօսել ընդ Սինկղիտոսին և յայլ օր սահմանել զատեանն։ Զայս ասաց Դեկկիոս և զձեռանէն կալեալ Կեսարու ած զնա արտաքս։

Իբրև վայր մի քան զդուրսն յառաջ վարեցան, անդուստ 'ի ծառայից ոք օտարաց տագնապաւ խնդրէր կալ առաջի Կեսարու. այլ որ զնովաւ 'ի խուժանէ ամբոխին արգելեալ, պնդեաց նեղեաց զինքն 'ի խռանն և անկաւ 'ի տուն անդր նորա. և հասեալ առ Կալպուրնիա՝ աղաչէր անդանօր պահել զինքն ցդարձն Կեսարու,

զի բան մի մեծ և կարևոր 'ի վեր հանցէ նմա ։ Զնոյն և Արտեմիդովրոս ազգաւ Գնիդացի՝ սոփեստէս հելլէն ճարտարախօսութեանն , և վասն այնորիկ ընտանի կենակից ոմանց 'ի Բրուտոսեանց անտի՝ ուստի և բազում ինչ գիտակ դաւանացն , չոքաւ առ Կեսար պնակ մի 'ի ձեռին՝ ազդարար նմա վասն հանդերձելոցն . բայց տեսեալ՝ զի զամենայն իսկ զպնակսն մատուցեալս՝ Կեսար տայր 'ի ձեռս պաշտօնէիցն , ինքն մօտ յոյժ եկեալ առ նա , ասէր . " Զայս դու մի՛ Կեսար, ընթերցցիս դու միայն և նոյն հետայն . քանզի 'ի մեծաց իրաց և 'ի քոյոցդ արձանագրեալ կան 'ի դմա ,, ։ Ապա Կեսար առեալ զայն, 'ի խուռնընթաց բազմութենէն առ նա՝ միշտ արգելեալ ընթեռնուլ զպնակն , թէպէտ և ըղձիւ բազում անգամ պատրաստեցաւ յընթերցումն . և կալեալ զայն միայն այնպէս 'ի ձեռսն , անցանէր գնայր 'ի Սինկղիտոս անդր ։ Այլ կէպք ասեն՝ այլոյ ուրումն տալ նմա զպնակն զայն . և թէ՝ Արտեմիդովրոս երբէք ոչ կարաց մօտել առ նա , արգելեալ 'ի մեծ խուժանէն ողջոյն ընդ ուղին ։

Արդ մարթ իցէ արդեօք ասել՝ ըստ դիպաց ինքնին պատահեալ յայնժամ բան մի . բայց քանզի 'ի տեղւոջ անդր աղէտիցն և սպանութեանն՝ ուր և խմբեալ իսկ էր յայնժամ Սինկղիտոսին , էր պատկեր կանգնեալ Պոմպէի, և էր իսկ այն վայր նուիրեալ 'ի Պոմպէէ 'ի զարդ իւրոյ թա֊

տերն, անշուշտ Թերևս առ 'ի Քաջէ ու-մեմնէ յաջողեցաւ այնպէս յայն վայր ածել ձգել զարկած աշխարհելի գործոյն: Քանզի և սակն՝ և Կասսիոսի մինչև ձեռնամուխ 'ի գործն եղեալ՝ դառնալ հայել յանդրին Պոմպէի, և լուելեայն կարդալ զնա յօգնականութիւն, Թէպէտ և ինքն օտարացեալ ինչ չէր 'ի վարդապետութեն Եպիկուրոսի. բայց 'ի ժամանակէ անտի բազմավտանգ գործոյն այլ յայլմէ եղեալ և 'ի հոգին ամբոխեալ, ոչինչ պատկառեկաց յայնժամ առաջնոց խորոց կարծեացն: Այլ զԱնտոնիոս զհաւատարիմ Կեսարուն և զկորովի այր՝ արտաքոյ արգելեալ դեգերեցուցանէր Դեկիոս Աղբինոս 'ի զրոյցս երկարս ժամավաճառ ընդ նմա լինելով յայնժամ:

Ապա Կեսար մտեալ 'ի ներքս՝ յառնէր յոտին Սինկղիտոսն մեծարեալ զնա: Իսկ որք ընդ Բրուտոսին էին, կէսք չոգան յետ կոյս գահուն Կեսարու, և կէսք ընդ առաջ եկին նմա իբրու յողոք առ նա խոնարհեալք 'ի միասին ընդ Մետեղղիոսի Կիմբրոսի՝ որ աղերս արկանէր վասն եղբօրն իւրոյ վտարանդի եղելոյ. և այնպէս աղերսաբանեալք զնա՝ ածին մինչև 'ի գահ անդր: Իբրև բազմեցաւ, յանձին չկալաւ զաղերսն նոցա. իբրև նեղեցին և պնդէին զնա վասն բանին, և նա ցասնոյր և սրանէր ընդ նոսա, անդ Մետեղղիոս երկոքումբք ձեռօքն կալեալ զպատմուճանէն Կեսարու՝ քարշէր զայն 'ի վայր 'ի պարանոցէն (և էր այն նը-

շան պայմանադիր դաւաճանութեանն): Համայս անդուստ Կասկաս առաջին քան զամենեսեան խոցէր զնա սրովն առ պարանոցին, հարուած ո՛չ մահացու և ոչ 'ի խոր. քանզի սրտաթափեալ դեղևեցաւ այրն՝ որպէս և 'ի դէպ արդեօք՝ 'ի ձեռնարկութիւն ահագին գործոյն. որպէս զի և 'ի կողմն տագնապաւ դարձեալ Կեսար՝ բուռն հարեալ պնդապէս ունէր զդաշնակէն. և անդ միանգամայն երկոքին նոքա ձայն բարձեալ գոչեցին, վիրաւորն՝ 'ի լեզու հռոմայեցի "Կասկա՛ս մեծեղեռն, զի՞նչ գործես„. և որ զվէրն եդ՝ 'ի լեզու հելլենացի առ իւր եղբայրն. "Ո՛վ եղբայր, օգնեա՛ ինձ„:

Յայն շունչն ահեղ՝ որք միանգամ ըղդաւանացն գիտէին և ոչինչ, թմբրեալք և զահի զդողանի հարեալք 'ի տեսիլ իրացն, ոչինչ իշխան լինէին՝ ո՛չ 'ի փախուստ խուսափել, ո՛չ թիկունս ինչ տալ, այլ և ոչ բարբառ մի արձակել անգամ: Յայնժամ ապա սուսերս առհասարակ մերկացեալ դաւաճանացն Կեսարու, նա շուրջանակի 'ի ներքս 'ի նոցանէն փակեալ, և յոր կոյս միանգամ զաչսն դարձուցանէր՝ խոցուածոց պատահեալ և շողշողուն սուսերաց՝ հարեալ 'ի դէմսն և յաչսն, այնպէս հուգայր՝ իբրև գազան 'ի բուռն անկեալ 'ի մէջ յոքնաթիւ պաշարողացն. քանզի և պարտ էր առհասարակ նոցա յաղել նուէր և յարենէ անտի առնուլ ճաշակ. ուստի վէրս մի և Բրուտոս ինքնին յայնժամ դնէր

ընդ քունջ երանաց նորա ։ Եւ պատմեն՝ եթէ 'ի վէգ եկեալ պաշտպանեալ անձին Կեսար յայլոց դաւաճանացն՝ յայսկոյս յայնկոյս յածէր վաղէր ձիչ բարձեալ և բարբառ մեծ . իսկ ապա և զԲրուտոս ինքնին տեսեալ մերկապատեան սուր 'ի ձեռին՝ ածէր զգլխովն զպատմուճանն և ողջոյն անձնատուր լինէր, վարեալ անդ կամ ըստ դիպաց կամ թէ 'ի հայթայթելոյ այնպէս մարդախոշոշիցն՝ 'ի խարսխի անդր պատուանդանի անդրւոյն Պոմպէի՝ յորում և ցայտեաց արիւն շատ . զի և թուէր այնպէս՝ Պոմպէի ինքնին 'ի վերոյ 'ի զնին կացեալ վրէժու թշնամւոյն իւրոյ, որ անդ առ ոտիւքն այնպէս դիաթաւալ յոդւոց պարզեալ ապաստան լինէր 'ի բազմախոց վէրացն, զոր ասեն՝ առեալ քսան և երիս . բայց յայնժամ բազումք ես 'ի նոցանէն վէրս 'ի վերայ եդին միմեանց, 'ի կշիռ գործել անդ առհասարակ նոցա այնչափ վէրս 'ի մի միայն մարմին ։

Իբրև այնպէս խողխողեալ անկաւ, անդէն ծերակոյտն՝ թէպէտ և Բրուտոս յառաջ մատեաւ ասել ինչ վասն գործոյն՝ ոչինչ հանդուրժեալ զտեղի առնուլ, 'ի դուրս վազեալ ընդ դուրսն, և փախստեայ՝ յաղմուկ շփոթից և յանհնարին ահ ընուին զխուժան ժողովրդեանն . որպէս զի և կէսք փակեալք պնդեցին զտունս իւրեանց, և կէսք լքին թողին զկրպակս և զհանութս համավաճառաց . կէսք ընթացեալք վազէին 'ի զնին ցաւադին տեսարանին, և

կէսք խուռն դառնային յայնժամ յետս 'ի տեսլենէն ։

Իսկ յայնժամ Անտոնիոս և Լեպիդոս կարևոր մտերիմք Կեսարու անձնապուր եղեալք անկան ապաւինեցան 'ի տունս այլոց ։ Բայց Բրուտոս և արբանեակքն, այն ինչ ջերաջերմինք յարենէ անտի, մերկապատեան սուսերօքն 'ի մի խմբեալք՝ այնպէս դէմ եդեալ յատենէն դնային 'ի Կապիտոլիոն. ոչինչ ամենևին զարհուրեալք իբրև զանարի փախստեայս, մեծապէս զըւարթացեալք և լի քաջալերութեամբ, խրախուսեալք զխուժան ռամկին յազատութիւն և մարդասիրապէս ժողովեալ զազատ մարդիկ՝ որոց միանգամ պատահէին. անդ և կէսք խառնեալք ընդ նոսա գային ելանէին 'ի միասին՝ իբրու հասարակորդք նահատակութեանն և ընդ փառս պանծացեալք գործոյն. յորս էր Գայիոս Հոկտաւիոս և Լենտղոս Սպինթեր. բայց սոքա զվրէժն լուծին ապա զպարծանացն՝ սպանեալք յԱնտոնիոսէ և 'ի Կեսարէ կրսերոյ. և ոչ 'ի փառսն անգամ վայելեցին՝ որ աղագաւ զմահ ընկալան. քանզի և ո՛չ հաւատաց զայն մարդիկն. քանզի և պատուհասադիրքն ինքնին պատուհաս 'ի վերայ ածին նոցա ոչ զգործոյն, այլ զկամաց նոցա ։

Իսկ յաւուրն երկրորդի եկեալ Բրուտոս ընդ արբանեկացն, և խմբեալ եկեղեցին, անդանօր ժողովուրդն կայր ունկն դնէր բանից Բրուտոսի. ոչ դժկամակութիւն

'ի դէմս բերկէր ընդ գործ սպանութեանն ,
և ոչ հաճութիւն․ այնպէս խորին լռու-
թեամբն զկիրս յայտնէր զխանդաղատա-
նացն առ Կեսար , դարձեալ և զերեսաց
մեծարանան առ Բրուտոս: Բայց աւագա-
նի Սինկղիտոսին յայնժամ անյիշաչարու-
թիւն սահմանեալ անցիցն անցելոց, և առ
հասարակ զամենեսեան ամոքեալ, վճիռ
տայր շուք զգլից ձօնել Կեսարու․ և զի՛
անդրժելի գլխովին կայցեն ամենայն կարգք
սահմանեալք յիշխանութեանն Կեսարու:
Նա այս՝ և Բրուտոսի և այլոց գաւառս 'ի
ներքս մատուցանէր և պատիւս շքեղս․ զի
և առհասարակ կարծեցին խաղաղել հան-
դարտել իրացն վայելուչ կարգաւ:

Սակայն յետ այնորիկ իբրև զկտակն բա-
ցին Կեսարու , և ընթերցան տեսին 'ի նմա՝
զի միում միում 'ի Հռոմայեցւոց անտի
հրխտակս թողոյր երևելիս․ իսկ անդուստ
և զնորա դիակն յակն արկին այնպէս ընդ
մէջ տարեալ հրապարակին՝ ողջ խաթա-
րեալ և կեղեքեալ 'ի վիրաց անտի , յայն-
ժամ ապա սանձակոտոր խուժան ամբո-
խին խռովլ առհասարակ հարեալ՝ յափըշ-
տակեցին առին աթոռակս , և վանդակա-
պատս, և տրապիզս 'ի հրապարակէն , և
փայտակոյտ մեծ արկեալ զդիակաւն և
հուր հարեալ այրէին զնա : Իսկ անդուստ
և կէսք խանձողս 'ի բուռն կալեալ ընթա-
նային այրել 'ի հուր դատել զտունս սպա-
նողացն , և կէսք յայսկոյս յայնկոյս վա-
զէին ողջոյն ընդ քաղաքն , յուզէին խըն-

դրէին 'ի բուռն զնոսա արկանել և գէշ գէշ պատառել. այլ գոյն նոքա և ոչ զոք, զի առհասարակ փակեալք ամրացան:

Բայց դէպ եղև՝ զի Կիննաս ոմն 'ի բարեկամաց անտի Կեսարու, տեսանէր՝ որպէս ասեն՝ յառաջնում գիշերին երազ անտեղի. քանզի թուէր նմա յընթրիս հրաւիրել 'ի Կեսարէ, և 'ի հրաժարելն՝ զձեռանէն կալեալ բռնի տանել զնա յընթրիսն: Սորա լուր առեալ յայնժամ ըղխարուկելոյ դիականն Կեսարու 'ի հրապարակին, յարեաւ և չոքաւ անդր շուք ձօնել նմա, թէպէտ և տակաւին զարհուրեալ 'ի նոյն երազ և ջերմամբ ևս տագնապեալ: Իբրև երևեցաւ նա անդր, մի ոմն 'ի խուժանէն ասէր ընկերին զանուն առն՝ որ եհարց 'ի նմանէ, և նա՝ միւսումն, և այնպէս համբաւեցաւ առհասարակ այրն իբրև զմի ոք 'ի սպանողացն Կեսարու. քանզի և 'ի դաւաճանսն էր իսկ այր՝ Կիննաս անուն նորա. ուստի և զնա կարծեալք՝ խուժեալ 'ի վերայ առն՝ գէշ արկին զնա 'ի հրապարակին:

Յայսմանէ զահի հարեալք՝ յաւէտ իմն Բրուտոս և Կասսիոս, յետ սակաւ աւուրց ելին խոյս ետուն 'ի քաղաքէն. և ապա զինչ անցք անցին ընդ նոսա և զիարդ մեռան, արձանագրեալ իսկ է մեր 'ի վարսն Բրուտոսի: Արդ մեռաւ Կեսար, ընդ ամենայն կեցեալ ամս յիսուն և վեց. ամս չորս և սակաւ մի աւելի կեցեալ յետ մահուն Պոմպէի: Եւ զամենայն աւուրս կե-

նաց իւրոց ընդ այնչափ վտանգս՝ կրթեցաւ
միայն յիշխանութիւն և 'ի տէրութիւն. և
հազիւ ուրեմն զբռնամբ արկեալ, պտուղ և
ոչ այլ պտղաբերեաց առ իւր քաղաքացիսն,
բայց զանունն և եթ և զնախանձելի և ըղ-
մեծապէս զփառսն:

Այլ անչուշտ նորա բաղդն մեծապէս
և գեղեցիկ առ կենդանութեամբն, նոյն և
'ի մահուն զհետ ընթացեալ նորա, վրէժ
խնդրեաց զարեանն՝ հետամուտ վարեալ
հալածեալ առհասարակ ընդ ցամաք և ընդ
ծով զգործօնսն, մինչև մնաց և ոչ ոք 'ի
նոցանէն. և 'ի մահ առհասարակ մատնեաց
ոչ զձեռնամուխսն միայն զգործոյն, այլ
և զհամախոհսն գլխովին: Սակայն 'ի մարդ-
կայինս յայտնիկ յոյժ սքանչելի իցեն ար-
դեօք դէպքն Կասսիոսի. քանզի պարտեալ
'ի մարտին 'ի Փիլիպպեան դաշտին, դաշ-
նակ զնոյն՝ զոր 'ի Կեսարոս՝ մխեաց ինքնին
և յանձն իւր: Իսկ և յաստուածայինսն
սքանչելի է Գիսաւորն մեծ. (քանզի յետ
մահուն Կեսարու գիշերս եօթն փայլա-
տակեալ շողշողեալ, և ապա աներևութա-
նայր): Դարձեալ և նուազել ճառագայ-
թից արևուն. քանզի ընդ տարին ողջոյն
թալկացեալ ծագէր սկաւառակն և անճա-
ճանչ, տապ իմն շողեալ նուաղ և վա-
տեալ. և օդքդ գլխովին միգապատ և մըղ-
տապատ՝ առ 'ի տկարութենէ տապոյն 'ի
պարզել զնա. և ազազեցան ապա՝ մինչև
հասեալք՝ և միրգք և պտուղք, և թօշնեալք
չորացան յանջերմին օդոցն:

Իսկ առաւել քան զամենայն՝ 'ի խօլականէն անտի երեւութացեալ առ Բրուտոս՝ համօրէն 'ի վերայ կացին եթէ սրրտնեցան դէք ընդ սպանութիւնն Կեսարու. և էր այսպիսի ինչ: Երբեմն Բրուտոս չու հրամայէր զօրուն՝ անցանել յԱբիւդեայ 'ի միւս ցամաքն, կայր նա ընկողմանեալ գիշերի 'ի խորանին ըստ սովորութեանն՝ ոչ 'ի քուն, այլ մտայոյզ վասն հանդերձելոցն. քանզի և ասեն լինել նմա սակաւաքուն քան զամենայն զօրավարս. և բընաւորեցաւ նա զաւուրս իւր բազմադոյն մասամբ տքնութեամբ անցուցանել: Արդ թուէր իմն նմա տրոփիւն առ դուրսն լսել, և ելեալ 'ի զննել 'ի լոյս առկայծեալ լապտերին, տեսանէր ուրուական մարդոյ ահեղ, հարստի, դժոխահայեաց և խոշորադեղ: Զահի հարաւ Բրուտոս. և տեսեալ զխօլականն զայն այնպէս անշարժ և անբարբառ կացեալ անմռունչ առ մահճին, հարցանէր, ո՞ ոք իցէ. Նա ետ պատասխանի. "Քաջն քո չար՝ ո՛վ Բրուտոս. և տեսցես դու զիս 'ի դաշտն Փիլիպպեան": Յայնժամ Բրուտոս խրախուսեալ՝ ասէր. "Եւ կարի իսկ քաջ, տեսից զքեզ". և 'ի նոյն անհետանայր խօլն:

Իսկ յետ այնորիկ ճակատ ընդդէմ Անտոնիոսի և Կեսարու տուեալ նորա 'ի նոյն դաշտն, յառաջին մարտին յաղթական եղեալ հարկանէր վանէր զախոյեանսն, և յառաջ վարեալ աւար ևս առնոյր զբանակն Կեսարու: Իսկ իբրև 'ի մարտն եր-

կրորդ հանդերձեցաւ, անդրէն 'ի գիշերի նոյն խօլական երևութանայր նմա բնաւ իսկ անբարբառ : Խելամուտ օրահասին եղեալ Բրուտոս՝ ինքնագրաւ դիմեաց 'ի վըտանգն : Սակայն տապաստ չանկաւ 'ի կըռուփն, այլ 'ի փախուստ իւրոցն՝ խուճապեալ և ինքն 'ի վայր մի առապար, անդ 'ի սուրն մերկապատեան արկեալ զլանջսն, 'ի նոյն և ուրուք 'ի բարեկամացն՝ որպէս ասեն՝ ոյժ տուեալ վերին, այնպէս գնաց զիւրովլին 7 :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Բայց սա 'ի քաջս զօրականին կեսարու վատացաւ, ոչ միայն իբրև անարի, այլև իբրև անմիտ գլխովին:

2. 'Ի յիշատակարանսն կեսարու՝ զոր ունիմք այժմ 'ի ձեռին, ընթեռնումք՝ ապարէզս երեսուն:

3. Ձերազ զայս Պոմպէի ողջ բերեալ Պղուտարքեայ՝ տես 'ի վարսն Պոմպէի:

4. Յայտնի է գիտակաց՝ հեշտն և համառօտն Հռոմայեցւոց. Veni, Vidi, Vici. Գործցես նոյնչափ է և 'ի Հայն: Այլ քանզի 'ի Յն. այլազգ է, վասն այսորիկ ասէ զայս Պղուտարքոս. քանզի է՝ Ἦλθον, εἶδον, ἐνίκησα:

5. Քնար, անուանեալն 'ի Համաստեղութիւնս երկնից:

6. Կի–մէ–––ք կամ Կ––մ–ն–––ք, անուանիք էին 'ի խօթամտութեան և յապշութեան:

7. Մի է 'ի կորուսելոցն Պղուտարքեայ, կամ թէ և բնաւ իսկ յոչ արձանագրելոցն 'ի նմանէ, և Զուգակշռութիւն Աղէքսանդրի և կեսարուն:

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՑ

ԶՈՒԳԱԿՇԻՌՈՒՔ

ԱԳԻՍԵԱՑ ԵՒ ԿՂԵՈՄԵՆԵԱՑ

ԵՒ

ՏԻԲԵՐԻՈՍԻ ԵՒ ԳԱՅԻՈՍԻ ԳՐԱԿՔԵԱՆՑ

ԱԳԻՍ ԵՒ ԿՂԷՈՄԵՆԷՍ

ՈՉԻՆՉ անտեղի արդեօք և տարադէպ կարծեցին ոմանք կարդեալ ընդդէմ փառասիրացն անձանց զհիւս առասպելին Իքսիոնի. իբրու թէ փոխանակ Հերայ զամպն կալեալ նա և գիրկս ածեալ, և այնպէս ապա կենտաւրոսաց ծնունդ լեալ իցէ: Քանզի և նոքա ինքնին գլխովին ընդ փառացն խառնեալ և զուգեալ՝ իբրու ընդ դրօշելոյ ումեմն առաքինութեան, ոչինչ բոլորապատուղ և ազնուական 'ի ներքս բերեն. այլ բազում ինչ խորթս և խառնածինս, աստ անդ տարուբերեալք 'ի բազմադէմ ըղձից, նախանձուն զհետ կրթեալ և այլոց կրից:

Եւ որպէս առ Սոփոկղեայ ասեն խոկ հովիւքն վասն իւրեանց հօտիցն, եթէ, "Քանզի դոցա՝ տեարք մեք գոլով, ծառայութիւն հարկանեմք: Եւ հարկ է մեզ

լսել դոցա, թէպէտ և լուռ կան դոքա ,, : Զնոյն անշուշտ կրեն կիրս և ովք միանգամ վարեն զքաղաքն ըստ ըղձից խուժանին և ըստ թափոյն ծառայութիւն հարեալ նոցա և սպաս, որպէս զի ժողովրդապետի անուն առցեն և իշխանի: Քանզի զոր օրինակ՝ ովք յառաջակողմն նաւուն իցեն, թէպէտ և յառաջոյ առաւել տեսանիցեն քան զղեկավարսն, սակայն դէտակն 'ի նոսա ունին և զամենայն հրամայեալսն 'ի նոցանէ կատարեն, սոյնպէս և առաջնորդք քաղաքին ակնկառոյցք 'ի փառս՝ կամակատար պաշտօնեայք են խուժանին, թէպէտ և զանունն կալցեն զիշխանի. և այն զի առն բարւոյ և կատարելոյ չեն ինչ պէտք փառաց, բայց որչափ ինչ 'ի համբաւոյ անձինն սկիզբն լիցի նմա 'ի նահատակութիւնս հոյակապս:

Իսկ որ տակաւին պատանի պատուասէր իցէ, ներելի արդեօք իցէ նմա 'ի գործսն քաջութեան խնդալ նմա վայր մի 'ի փառս անձին և ճոխանալ: Քանզի առաքինութիւնք դեռաբուսիկք 'ի նոսա և նորաբողբոջք՝ որպէս Թէոփրաստոս ասաց՝ 'ի գովութեանց անտի հաստատին լինին 'ի բարեգործութիւն, և բարգաւաճեն և յաղթահարուստք լինին: Այլ եթէ ծայրայեղն՝ միշտ բազմավտանգ է յամենայն իսկ յիրս, իսկ 'ի պատուասիրութեան 'ի քաղաքաւորութիւնս՝ դլխովին մահաբեր գոյ. քանզի և առեալ ձգէ իսկ նա զմեծազօր իշխանսն 'ի մոլեգնութիւն և 'ի յայտնի խե-

լաթափութիւն. որպէս զի ո՛չ զլաւն՝ պատճառք փառաց, այլ զամենայն զպատճառս փառաց՝ համարին նոքա լաւ և բարի: Եւ որպէս անդ երբեմն ասէր Փոկիոնն առ Անտիպատրոս՝ որ անբարի ինչ խնդրէր 'ի նմանէ. « Չէ՛ քեզ՝ ասէ՝ մարթ ունել զՓոկիոնն միանգամայն և բարեկամ և մարդահաճոյ »: նմանապէս, կամ թէ՝ նմանօրինակ իմն՝ է ասել առ խուժանն. « Չէ՛ք քեզ զնոյն այր ունել քո՝ միանգամայն իշխան և սպասաւոր »: Քանզի 'ի բանից յայդմիկ նոյն արդեօք պատահեսցեն կիրք՝ որ ինչ վիշապին այնմիկ. որոյ տուտն՝ որպէս առասպելին պատմէ բան՝ սրտնեալ և 'ի կագ ընդ գլխոյն եկեալ, խնդրէր և ինքն երբէք առաջնորդ լինել, և մի՛ այնպէս միշտ զհետ աղխաղխեալ երթալ: Ապա առաջնորդ և տուտն կացեալ, անդէն արագ արագ վատթարէր զինքն անհանճար գնացիւքն. և ձգէր ցրցտէր զգլուխն՝ ընդհակառակս բնութեանն զհետ քարշեալ զաչացու և խուլ անդամոցն այնոցիկ: Զնոյն պատահեալ կիրս տեսանեմք մեք և առ բազումս՝ որ միանգամ 'ի քաղաքաւորութեան խնդրեցին ընդ միտ մտանել ամբոխին: Քանզի ակնկառոյցք 'ի խուժան անդր եղեալ անհանճար և վայրավատին, յանհնարին այնուհետև մտին իլքն՝ ուղղել կամ սանձել կարճել զանկարգութիւնն:

Զայսոսիկ մեք յուշ ածաք ասել վասն փառամոլ կրիցն առ խուժանին, 'ի խոկալ մեր անդ զմեծապէս ոյժ զօրս 'ի դի-

պուածոյ անտի կրկին Գրակքեանցն Տիբերեայ և Գայիոսի․ որ երկոքին նոքա քաջածնունդք և քաջամնունդք և քաջախորհուրդք յառաջնորդութեան քաղաքին, և 'ի կորուստ ապա մատնեցան ոչ այնչափ առ տարապայման փառասիրութեանն, քան թէ յերկիւղէ անփառութեանն՝ ոչ յանազատական ինչ պատճառէ։ Քանզի մարդասիրութիւն շատ տեսեալ կանուխ յիւրեանց քաղաքայնոց, խորշէին ամօթով եթէ յանկարծ 'ի պաշտամանն վրիպեսցին․ ուստի և թեւակոխեալք հաճոյակատար առաջնորդութեամբ մեծ ևս փոխարինել պատուոյն զոր առին, և այնչափ ևս առաւել պատուեալք՝ որչափ ինչ ըստ քմաց խուժանին գնացին․ և այնպէս զմիմեամբք՝ նոքա և խուժանն ելեալք, յայն սահման ապա հասանէին, զի և չէր նոցա այնուհետև ասել զառածն, եթէ “Քանզի գեղեցիկ չէ բանն, ամօթ է յաւերժանալն 'ի նոյն,,։

Այլ դու ինքնին 1, քաջ 'ի վերայ կացցես իրացս 'ի պատմութենէ անտի։ Արդ մեք 'ի կշիռ համեմատութեան երկոցուն սոցա կարդեմք զամոլսն զայն զԼակոնացւոց՝ զախրօղան խուժանին, զարքայս կրկին զԱգիս և զԿղէոմենէս։ Քանզի և սոքա ինքնին իբրու զնոսա՝ կամելով բարգաւաճել զժողովուրդն, և առնուլ բերել զքաղաքն 'ի նախնին յայն լաւ և արդար քաղաքականութիւն՝ յորմէ նա 'ի վաղնջուց խոկ էր վրիպեալ, 'ի թշնամութիւն դարձան և առ-

քո ճոխից քաղաքին. զի յանձին չկալան 'ի բաց կալ 'ի սովորական խուեանց աւելատացութենէն: Իսկ այս Լակոնացիք թէպէտ և ոչ կացին եղբարք, սակայն և քաղաքաւորութիւնք նոցա յոյժ մերձաւորք գտան միմեանց և համահարզք, որ և սկիզբն առին օրինակ զայս:

Յորմէհետէ սպրդեալ եմուտ զառաջինն 'ի Լակեդեմոն արծաթսիրութիւն և ոսկեսիրութիւն, և բազմահարուստ գոյից զհետ եկն ընչաքաղցութիւն և ճղճիմ բարք, և 'ի նոցունց պէտոն և 'ի վայելուն գրգացան և փափկացան և շռայլեցան, ապա արագ արագ բազումն 'ի հոյակապ փառաց իւրոց նկունեղեալ՝ տապալեցաւ քաղաքն և յոյժ հիքացեալ դժնեցաւ, մինչև 'ի բուն ժամանակացն արքայութեան Լէոնիդեայ և Ագիսայ: Եւ էր այս Ագիս 'ի զարմէն Եւրիւտիոնիդեայց՝ որդի Եւդամիդեայ, և վեցերորդ յԱգեսիղայոսէ՝ այն որ խաղաց գնաց յԱսիա և մեծապէս զօրացաւ յԵլլադա: Քանզի յԱգեսիղայոսէ ծնաւ Արքիդամոս, որ սպանաւ 'ի Մեսսապիացւոց մօտ 'ի Մանդոնիոն 2 վայր Իտալիոյ. և ծնան որդիք երկուք Արքիդամոսի, անուն երիցուն՝ Ագիս, և կրսերոյն՝ Եւդամիդաս. և սպանեալ Ագիս յԱնտիպատրոսէ 'ի Մեգաղոպօլիս և ոչ թողեալ զաւակ՝ թագ կապեաց Եւդամիդաս. յորմէ ծնաւ ապա միւս այլ Արքիդամոս, և յԱրքիդամոսէ միւս այլ Եւդամիդաս, և 'ի սմանէ ապա Ագիս՝ վասն որոյ բանքս են:

Իսկ Լէոնիդաս որդի Կղէոնիմեայ յայլմէ տոհմէ Ագիսեանց՝ էր ութերորդ 'ի Պաւսանիասայ՝ այն որ 'ի Պղատէա 'ի մարտին պարտեաց զՄարդոնիոս : Քանզի Պաւսանիաս ծնաւ զՊղիստոնակտէս, և Պղիստոնակտէս զմիւս Պաւսանիա, որ փախեաւ 'ի Լակեդեմոնիոյ 'ի Տէգէա, ուստի և որդին նորա երէց Ագեսիպօղիս անուն՝ թագ կապեաց . և յետ նորա՝ կըրսերն Կղէոմբրոտոս անուն . քանզի Ագեսիպօղիս մեռաւ անորդի: Այլ սա 'ի Կղէոմբրոտեայ ծնան միւս այլ Ագեսիպօղիս և Կղէոմենէս, և Ագեսիպօղիս թագ կապեաց ոչ հարուստ ժամանակ, և ոչ նա դաւաձել եթող զաւակ : Իսկ Կղէոմենէս թագաւորեալ յետ նորա, ծնաւ որդիս երկու, անուն երիցուն Ակրոտատոս՝ որ մեռաւ առ կենդանութեամբ հօրն . և անուն կրսերոյն՝ Կղէոնիմոս, և եկաց յետ մահուն հօրն՝ բայց ոչ թագաւորեաց . այլ փոխանակ նորա առ զթագն Արէոս թոռն Կղէոմենեայ՝ որդի Ակրոտատոսի : Իսկ սպանեալ Արէոս մօտ 'ի Կորնթոս, կալաւ զարքայութիւնն որդի նորա Ակրոտատոս : Իսկ 'ի մեռանել սորա 'ի մարտի յԱրիստոդիմեայ բռնաւորէ մերձ 'ի Մեգաղոպօլիս, թողոյր յղի զկինն, յորմէ և ծնաւ մանուկ՝ որում և խնամակալու եկաց այս Լէոնիդաս Կղէոնիմեան : Իսկ 'ի մեռանել մանկանն 'ի տղայութեան տիս, անցանէր առա արքայութիւնն 'ի Լէոնիդաս, այլ ոչինչ այնպէս 'ի ձահ պատահեալ քաղաքայնոցն :

Քանզի Թէպէտ և առհասարակ ամենեքեան յայնժամ նուաղեալք իմն էին առ խանգարել կարգի քաղաքին, այլ առաւել քան զայլսն և 'ի հայրենականացն խորթացեալ բարեպաշտութեանց երևէր Լէոնիդաս. քանզի և էր իսկ նորա հարուստ ժամանակ շրջեալ յածեալ 'ի դահլիճսն նախարարաց, և սպաս յանձնիս հարեալ Սելևկեայ, և անդուստ ապա դժպատեհս փոխաբերեալ 'ի գործս Ելլադայ և 'ի քաջիկ քաղաքականութիւնն՝ զդոռոզութեան կերպարան և զպերճութիւն :

Իսկ Ագիս՝ ըստ քաջամոյն բնաւոյ բարուցն և ըստ ազնուականութեան ոգւոյն, ոչ զԼէոնիդաս միայն հարուստ միջոցաւ զհետ իւր Թողոյր, այլ և դոգցես առհասարակ զոր միանգամ Թագ կապեցին՝ յետ մեծին Ագեսիղայոսի. որպէս զի և չև գոլով ամաց քսանից (Թէպէտ և ինքն 'ի մեծութիւնս և 'ի դրգանս սնեալ էր կանանց՝ յԱգեսիստրատեայ մօրէն և յԱրքիդամեայ 'ի հանւոյն, կանայք բազմահարուստք յոյժ 'ի մէջ Լակեդեմոնացւոց), համայն և այնպէս միանգամայն ընդոտնեաց զզարդանսն, և քօղաձիգ ևս լինէր չքնաղագեղ դիտակի երեսացն. առնոյր բառնայր յապուրակի 'ի մարմնոյն զամենայն զարդ պաճուճանաց նորա, և 'ի բաց մերկանայր միանգամայն յամենայն շքոյ. խնդայր հանդերձ զխուրեաւ արկանել անպաճոյճ և դուզնաքեայ, և զհետ կրթէր ընթրեացն և բաղանեացն և չափու կենացն բնիկ Լա-

կռնացւոյն. և սակր՝ ոչինչ արդոյ զար-քայութիւնն համարել, եթէ 'ի նմին չյաջողեսցի նմա առնուլ բերել զիւր քաղաքացին 'ի հայրենին իւրեանց օրէնս և 'ի կարգս :

Արդ սկիզբն ապականութեան և խռո-թութեան իրացն Լակեդեմոնացւոց կալաւ 'ի ընէ ժամանակացն՝ յորում նոքա զիշխանութիւն քանդեալ զԱթենացւոցն, լցան ոսկւով և արծաթով: Այլ քանզի տակաւին պահէր 'ի նոսա բաշխ և բաժին դոյիցն ըստ Լիկուրգոսին օրինացն, սահմանաւոր չափով 'ի պայազատութիւնն, և թողոյր հայրն որդւոյն զիւրն վիճակ, այս կարգ ապա և այս հաստատութիւն՝ դիւր լինէր քաղաքին 'ի վատթարութենէ անտի: Իսկ իբրև անդանօր Պարեա եկաց Եպխադէս անուն ոմն՝ այր զօրաւոր խստապարանոց և անհամբոյր բարուք, 'ի գժտութիւն բերեալ սա ընդ որդւոյն իւրոյ, գրեաց կարգեաց օրէնս, զի այր այր զգոյս իւր և զվիճակ իւր իշխան լիցի տալ 'ի կենդանութեան իւրում և թողուլ կտակաւ 'ի մահուն իւրում՝ ում ումեք և կամք իցեն նմա : Արդ սա օրէնս զայս 'ի ներքս բերէ՟ առ զայրուց ցասմանն, այլք ապա ըստ նմանէն հաւանութեամբ ընկալեալ զնոյն առ կիրս ընչաքաղցութեանն, տապալեցին զվայելուչ զկարգն : Քանզի որ միանգամ ձոխք 'ի նոսա՝ շահեալք կուտէին անխընայ, 'ի բաց 'ի պայազատութենէն վարէ՟ զօրինաւոր ժառանգսն, ուստի և վաղվա-

ղակի մեծութիւն միահաղոյն ամփոփեալ մթերեալ 'ի նուազունս ոմանս, չքաւորէր քաղաքն. և փոխանակ գեղեցիկ արուեստիցն 'ի ներքս մուծանն ծառայականքն, և թշնամութիւն և խէթ յուղեցաւ ընդդէմ մեծատանցն: Եւ մնացին յայնժամ Սպարտացիք եօթն հարիւր թուով և ոչ առաւել. և 'ի նոցա հարիւրիւ չափ միայն՝ որ ժառանգաւորք էին գետնոյ և վիճակաց իւրեանց: Իսկ առհասարակ այլք՝ ամբոխ մուրկաց անչքորաց 'ի քաղաքին՝ որ թուլակի և յակամայս մարտ մղէին ընդ օտարս, և ցանդ դէտ ակն կալեալ մնային պարապոյ ժամուն շրջել փոխել միանգամայն զկարգ զայն քաղաքին:

Ոյր ազգաւ և Ագիս քաջիկ կարծեալ նահատակութիւն՝ որպէս և էր իսկ արդեօք՝ առնուլ բերել զքաղաքն 'ի հաւասարութիւն և բաղմաժողով զնա դնել, գուն գործեաց իմանալ դիտել համօրէն զմիտս մարդկանն: Արդ՝ պատանիք յայնժամ արագ արագ յանակնկալս յանդուցին 'ի նա զմիտս. գօտէպնդեալք զհետ կըրթեալ առաքինութեան՝ փոխեցան 'ի ողնկակից քաղաքավարութենէն, և մերկացին զայն իբրև հանդերձ՝ 'ի շնորհս ազատութեն: Իսկ շատք 'ի ծերունեացն յայնժամ իբրու հինօրեայք և ծրդեալք յապականութեանն, որպէս պատահէ ծառայից փախուցելոց՝ որ ուժգին ածեալք բերցին առ տէարս իւրեանց, այնպէս զահի հարեալք դողային 'ի Լիկուրգոսէ. խոտէին

անդունէին զԱգիս, զի զայրանայր ընդ առիջակայս իւրն և ըղձայր տենչմամբ 'ի շուք իւր նախնին առնուլ ածել միանգամայն զՍպարտա:

Սակայն և Լեւսանդրոս Լիբեան և Մանդրոկղիդաս Եկփանեան և Ագեսիղայոս դարձեալ՝ ձեռն ետուն հաւանութեան բարւոք ջանիցն Ագիսայ, և քաջալեր եւս կարգային նմա: Եւ էր Լեւսանդրոս յոյժ արգոյ և պատուական 'ի քաղաքին իւրում. իսկ Մանդրոկղիդաս՝ այր ճարտարամիտ և հնարիմաց, և ընդ խորագէտ զգօնութեանն նահատակէր և յարիութեան: Իսկ էր Ագեսիղայոս քեռի արքային՝ այր կորովաբան, թէպէտ և ինքն դրդաւէր և ընչաքաղց. սակայն և խրախոյս քաջալեր մատուցանէր նմա որդին նորա Հիպպոմեդոն փառաւորեալն 'ի մարտս բազումս և ճոխացեալն 'ի սիրոյ մտերմութեան պատանեացն առ նա: Բայց Ագեսիղայոս ճշգրիտ յորդորեցաւ 'ի բանն. զի էին իսկ նորա պարտք բազումք և ակնունէր զերծ 'ի հատուցմանէն լինել յայնժամ 'ի փոփոխել կարգի քաղաքին:

Ապա Ագիս 'ի բանի իւրում արարեալ զնա՝ անդէն թեւակոխէր հանդերձ նովաւ 'ի հաւան և զմայրն ածել՝ զքոյր Ագեսիղայոսի, տիկին ճոխ յոյժ 'ի քաղաքին 'ի բազմութենէ անտի իւրոց սպասաւորուացն և բարեկամացն և պարտապանացն, և շատ միջամուխ 'ի հասարակաց գործն: Լուեալ տիկնոջն զխորհուրդ մտաց պատանւոյն,

զառաջինն յափշութիւն կրթէր, և 'ի բաց զնա 'ի խորհրդոյն քեցեալ, առէր՝ անհնարինս զհետ չկրթել՝ միանգամայն և անպիտանեացն։ Բայց Ագեսիլայոս 'ի դէմս բերեալ նմա զհեշտին կատարել բանին և որ 'ի նմանէն զշահ օգտին, իբրև յայնժամ և արքայն ինքնին աղերս մօրն արկանէր՝ թողուլ հրաժարել 'ի բազմահարուստ ընչիցն՝ 'ի շուք փառաց ուշ եդեալ և պատուոյն՝ որում անձկայր. և առէր ևս նմա՝ հաւասարել երբէք մեծութեամբ այլոց արքայից նմա չէր հնար. (քանզի և պաշտօնեայք ինքնին նախարարացն և ծառայք գլխովին կուսակալացն Պտղոմեայ և Սելեւկոսի բազմահարուստք ևս էին քան զամենայն արքայս Սպարտիոյ 'ի միասին). այլ եթէ յաղթեսցի նա ժուժկալութեամբն և անպաճոյճ քաղաքավարութեամբն և ոգւոյն մեծութեամբն նկուն զնոցունն առ բարեաւ զգրգանան, հաւասարութիւն 'ի քաղաքացիսն հաստել և հաղորդութիւն գոյից, նա անշուշտ յայնժամ անուն ժառանգեսցէ և զփառս զմեծի արքայի։ Եւ այսպէս ապա տիկնայքն փոփոխեալք 'ի մտաց իւրեանց, խրախուսեցին և նոքա 'ի բարիոք պատուասիրութենէ անտի պատանւոյն. և 'ի վեր վառեալք գեղեցիկ մոլութեամբ ձեռն տալ քաջութեան խորհրդոյն, ինքնին նոքա ձեպ տուեալ փութացուցանէին զԱգիս. և քաջալերէր ևս 'ի նոյն նահատակութիւն տայլին և բարեկամացն՝ զոր առաքեալ կոչեցին. և կային

խօսէին վասն բանին և ընդ այլոց ևս կանանց․ զի և Ճարտար գիտէին զԼակեդեմոնացիս ցանգ հեշտալուրս առ խրեանց կանանին, որք և քան միջամուխ նոքա յառանինան, առաւել ևս զկանայս խառնէին նոքա 'ի հասարակաց պխտառնութիւն։

Բայց քանզի բազում ինչ 'ի հարստութեանցն Լակեդեմոնացւոց ժառանգեալ ունէին կանայք, ուստի և քիրան մեծապէս և խոչ ընդ առն հանդերձեցաւ Ագիսայ․ քանզի զգէմ դարձաւ կանանին, ոչ միայն զի վասն անպաճոյճ կենացն այնոցիկ և հեշտին' 'ի դրդանացն վրխպէին նոքա, այլ զի և անբաժք 'ի շքոյ պատուոյն և 'ի զօրութենէ ընչաւէտութեանն մնային։ Ապա չոքան ապաւինեցան նոքա 'ի Լէոնիդաս․ դրդեցին դրդուեցին' զի նա իբրև երիցագոյն հասակաւ սանձեսցէ զԱգիս և կարճեսցէ զխորհուրդ մտաց նորա։ Կամէր կամէր և ինքնին Լէոնիդաս զօրավիգն կալ մեծատանց դասուն․ բայց 'ի խուժանէն զանգիտեալ' որ փոփոխել զիրացն խնդրէին, ոչինչ յայտնի նկրտէր ընդդէմ Ագիսայ․ այլ 'ի գաղտագող անդանէր հնարել աղարտել զխորհուրդ մտաց նորա․ խօսէր ընդ իշխանսն, և ամբաստան զնմանէ կայր' իբրու որ 'ի վարձ բռնաւորութեանն' զմեծատանց զգոյսն խորհի աղքատաց բաշխել, և հասարակաց զգետինն առնել, և անվաւերական զպարտսն գործել, գնոց այնոցիկ գնելով իւր սուրհանդակս

բաղումն, և ոչ թէ քաղաքացիս ինչ Սպարտիոյ պատրաստել:

Սակայն Ագիս հնարիմաց խորհրդով յաջողեաւ և զԼիւսանդրոս կարգել ընտրել 'ի Պարետ, արագ արագ օրէնս 'ի ներքս մատուցանէր 'ի ծերակուտին. և էին օրինացն գլուխք այս: Զի պարտապանք զերծ լիցին միանգամայն յամենայն պարտուց. և զի՛ բաշխ եղիցին գետնոյ, բաժանեալ 'ի չորս հազար և 'ի հինգ հարիւր վիճակս զգետինն' 'ի ձորոյն Պեղենեան մինչև 'ի Տաւգետոն, 'ի Մաղէա, և 'ի Սէլլասիա. և 'ի բիւր մի և հինգ հազար' զգետինն որ անդր քան զսահմանան զայնոսիկ. և զի՛ այս վիճակք բաշխեսցին մօտակայիցն' որ զէն բառնալ բաւականք իցեն. իսկ այլք 'ի մէջ սահմանացն բաշխեսցին Սպարտացւոցն' որ կանն 'ի քաղաքին. և զի՛ և 'ի լրումն թըւոյ սոցա' այլընտիր լինիցի 'ի շրջակայիցն և յեկաց' ամենայն քաջահրահանգ և բարեձոյն մարդկանն. առ այս՛ և կորովեացն մարմնով և առոյգ անձանց. և զի՛ կարգեալք նոցին նոքա 'ի հնգետասան հացկերոյթս թեթևախորտիկս, է որ չորից հարիւրոց արանց, և է որ երկերիւրոց. և կեցցեն քաղաքավարեսցին նոքա ըստ հայրենատուր կարգի նախնեաց իւրեանց:

Իբրև զայն օրէնսն 'ի ներքս մատուցին, և յայնժամ ծերակոյտն չէր ինչ միաբան 'ի խորհուրդ բանին, անդուստ Լիւսանդրոս աշխարհօրէն խմբեալ ժողով՝ խօսէր ինքնին առ քաղաքացիսն. անդուստ և

Մանդրոկղիդաս և Ագեսիղայոս յուղք մատչէին նոցա, զի մի 'ի պատճառս սակաւուց այն ընչեղացն՝ յորոց ոտնհարն լինէին, ընդ վայր զչուք փառացն հարցեն զՍպարտոյ. այլ յուշ լիցին նոցա վաղընջուց պատգամքն՝ ազդարարք նոցա անձնապահ յընչասիրութենէն լինել իբրև 'ի սատակչէ Սպարտոյ: Առ այս և նորոգատուր պատգամքն Պասիփեայ. և էր այս Պասիփեայ տաճարն և պատգամախօսն 'ի Թալամեայս մեծապէս պատուեալ: Եւ վիպեն զնա՝ կէսք մի յԱտղանտեան դստերաց անտի յԱրամազդայ՝ մայր Ամմոնի. իսկ կէսք ասեն զնա Կասանդրէ դուստր Պրիամու վախճանեալ անդանօր. և քանզի ամենեցուն առհասարակ դուշակէր նա, անուն կարդային նմա Փասիփաա, այն է՝ Ամենագուշակ: Այլ Փիւղարքոս ասէ՝ եթէ դուստր Ամիւկղայ՝ անուն Դափնի զերծեալ փախստեայ յԱպողոնէ՝ որ խնդրէր դիտել զնա, և շրջեալ փոխեալ 'ի ծառ, ապա մեծապէս պատուեալ 'ի դից անտի՝ առնոյր զօրութիւն դուշակութե̃: Արդ յայնժամ 'ի ներքս բերէին Ագիսեանք՝ եթէ և 'ի պատգամաց անտի այսր Պասիփեայ պատուէր գայր Սպարտացւոց՝ հաւասարավիճակ լինել նոցա առհասարակ ըստ առաջին կարգի օրինացն Լիկուրգոսի: Իսկ 'ի վերջէ յառաջ մատուցեալ ինքնին և Ագիս՝ խօսէր սղադունիւք և զանձն ևս 'ի ներքս արկանէր մեծապէս զօրավիգն 'ի նոյն կարգ քաղաքին:

Քանզի և ինքն առաջին նահատակեալ ընծայէր հասարակաց զդոյս իւր բազմահարուստ. զի էին իսկ նորա գետինք մշակեալք, դարձեալ և այգիք, առ այս և վեցհարիւր տաղանդ դրամոց: Եւ զնոյն դարձեալ գործէին և մարք նոցա և բարեկամք նոցա և մերձաւորք՝ որք բազմահարուստք ևս էին 'ի մէջ Սպարտացւոց:

Յայնժամ ապա ժողովուրդք առհասարակ յապուշ կրթեալ ընդ մեծանձնութիւն պատանւոյն, ցնծացան յոյժ զի 'ի հոլովել երից հարիւրոց ամաց ծնաւ նոցա թագաւոր արժանի Սպարտիոյ: Իսկ անդուստ Լէոնիդաս անհնարին պայքարէր· և զմտաւ ևս ածեալ եթէ և ինքնին հարկաւորեալ 'ի նոյն գործ, ոչ շնորհս զնոյն կալցէն նմա քաղաքացիք· այլ թէպէտ առհասարակ ամենեքեան 'ի նոյն նահատակեսցին հրաժարեալք 'ի գոյից, նմա միայնոյ շուք դիցեն՝ որ սկիզբն գեղեցիկ եա գործոյն այնորիկ· ապա կայր Լէոնիդաս և հարցանէր զԱգիս, եթէ զԼիկուրգոս գիտացէ՞ նա արդար և առաքինի· իբրև պատասխանի ետ Ագիս, Այո՛: Կրկնեաց Լէոնիդաս և ասէ. "Եւ ո՞ւր երբէք հրաման Լիկուրգոս ետ զազատութեան պարտուցն. կամ թէ ո՞ւր արդեօք 'ի քաղաքացիս առեալ գրեաց նա զեկս և զօտարս. այն՝ որ անշուշտ յանհնարիցն գիտէր զքաջողջութիւն քաղաքին՝ եթէ 'ի բաց չվտարեսցին եկք և օտարք,,: Եւ պատասխանի Ագիս և ասէ, երբե՞ք զարմանալ

և ոչինչ՝ եթէ Լէոնիդաս ինքնին անեալն
'ի տարաշխարհս և ծնօղ զաւակաց 'ի նա-
խարարեան հարստնեաց, ոչ գիտէ եթէ
զոսկի և զարծաթ 'ի բաց 'ի քաղաքէն վտա-
րեալ Լիկուրգոս, միահաղոյն և զպարտս
գլխովին և զտոկոսիս 'ի բաց պարուրեաց:
Իսկ յաղագս եկացն և օտարաց՝ 'ի բաց
խորշեցաւ նա որ միանգամ հանգուցեա-
տեղք չէին կարգի և չափու կենացն՝ զոր
սահմանեաց. քանզի և զայն որեարն վտա-
րէր նա՝ ոչ ընդդէմ մարդկանն մարտ ե-
դեալ, այլ 'ի կենաց նոցա և 'ի վարուցն
զանգիտեալ. գուցէ ընդխառնեալք նո-
քա՝ յիւրան զգործանացն յորդեսցեն սէր
և զփափկութեանց և զընչից: Այլ նա
զՏերպանդրոս և զԹաղէս և զՓերեկիդէս
զարս օտարս մեծապէս պատուեաց. քան-
զի և իւրեանց իսկ նուագօքն և իմաստա-
սիրութեամբն 'ի նոյն կէտ նպատակին Լիւ-
կուրգեայ կրթէին արքն: Եւ յաւել ասել
Ագիս. "Եւ դու իսկ ինքնին գովես զԵկ-
պրեպէս, այն՝ որ Եփորոս կացեալ՝ առեալ
կտրէր կտրոցաւն լարս երկուս յինունց
անտի՝ Փրինիդեայ երաժշտի. գովես և զոր
միանգամ զնոյն գործեցին առ Տիմոթէոս.
այլ սակայն և զմեզ խոտես, որ խնդրեմք
'ի բաց 'ի Սպարտոյ կարծել զցփղդանան և
զշռայլութիւն, և զամբարտաւանութիւն.
Իբրու եթէ և ոչ արքդ այդորէկ փոյթ ըղ-
նոյն կալան կարծել զպերճութիւնն և
զառաւելազանցն յերաժշտութեան՝ զի մի
մուտ ունիցի այսր, ուր անչափ և տարա-

պայման չափ կենաց և վարուց 'ի ներքս սպրդեալ՝ ցանգ անդաշնակաւոր և տարաձայն յարդարեցին զքաղաքն ,, ։

Ապա յետ այնորիկ ժողովուրդք առհասարակ 'ի կողմն կայքն Ագիսայ. իսկ անդանօր ընչեղք աղերս արկանէին Լէոմնիդեայ՝ մի թողուլ լքանել զնոսա. և յողոք ևս մատեան ծերակուտին , որոց և իշխանութիւն համբուն 'ի ձեռս էր 'ի կանուխ խորհրդեան վասն բանին. ուստի և յաջողեցան նոքա , զի որք ընդ օրէնսն ընդ այն չհաճէին՝ քուեայ մի առաւել կալան ։ Բայց Լիւսանդրոս տակաւին իշխանացեալ համածանս 'ի վերայ յարուցանէր Լէոմնիդեայ 'ի վաղնջուց ինչ օրինաց , որ արգելուր զարմին Հերակլեայ առնել որդիս 'ի տարաշխարհիկ կնոջէ. և դատակնիք մահու սահմանէր 'ի վերայ մարդոյ՝ որ տարադէմ գնացեալ 'ի Սպարտիոյ բնակեսցէ այլուր ։ Առ այս՝ և այլոց մարդկանն թելադիր սադրէր Լիւսանդրոս՝ զի զայսոսիկ ամբաստան լիցին վասն Լէոմնիդեայ. և ինքն ընդ այլոց իշխանակցաց իւրոց նստաւ դէտակն ունել նշանին. և էր բանն օրինակ զայս ։ Ցիննամեայ ժամանակ միանգամ ընտրեն Պարէտք գիշեր մի պայծառ և անլուսին, և լուռ անմռունչ նստեալ դէտակն կալեալ հային ընդ երկինս. և թէ երբէք 'ի կողմանց ինչ աստղ մի անցեալ ընթասցի առ այլ՝ եկեալ ամբաստան լինին զարքայից իւրեանց 'ի դատաստանի՝ իբրև զյանցաւորաց ոմանց յաստուածակողմն անդր ,

և հանէն 'ի նմանէ զտէրութիւնն. մինչև պատգամ մի հասցէ նոցա 'ի Թիկոնս 'ի Դեղփեայ կամ յՈղիմպիոյ: Արդ յայնժամ Լիսանդրոս վկայեալ վնչան զայն տեսանել, քարշէր 'ի դատաստան զԼէոնիդաս, և վկայս ևս առաջի ածէր, յասիցի կնոջէ՝ զոր ածին նմա կուսակալք Սելեւկոսի՝ ծնանել նմա որդիս երկու. և Թէ՝ յետ այնորիկ ատելի եղեալ կնոջն, ընդդէմ կամաց նորա դարձ արարեալ 'ի տուն, եկն և զքռամբ արկանէր զԹագաւորութիւնն կացեալ անպայազատ:

Մինչդեռ ամբաստանութիւն այս յուզէր 'ի դատաստանի, անդուստ և զԿղէոմբրոտոս դրդէր Լիսանդրոս՝ յառաջ մատչել խնդրել զարքայութիւնն՝ փեսայ ինքն գոլով Լէոնիդեայ և արքայազարմ: Զահի հարեալ Լէոնիդաս, անկեալ ապաւինեցաւ ողոքաւոր առ Աթենաս Քաղկիկեան. իսկ և դուստր նորա պաղատանս մատուցանէր վասն հօրն՝ Թողեալ յայնժամ զայր իւր զԿղէոմբրոտոս: Այլ 'ի դատաստան կոչեալ Լէոնիդաս, և ոչ յանդիմանեալ ատենին, առին հանին 'ի նմանէ զԹագաւորութիւնն, և 'ի ձեռս ետուն Կղէոմբրոտեայ:

Զայնու ժամանակաւ լցեալ աւուրցն Լիսանդրեայ՝ փոխէր յիշխանութենէն. իսկ որ զկնի նորա Պարէտք՝ արգահատեալք առին զողոքաւորն Լէոնիդաս. և ամբաստանութիւն յուզեցին ընդդէմ Լիսանդրեայ և Մանդրոկղիդեայ, իբրու որք հա-

կառակ օրինացն վճիռ եւուն նոքա զա-
զատութեան պարտուցն և զբաշխից դեռ-
նոյն ։ Տագնապեալ նոցա 'ի վտանգին, չո-
քան ամոքեցին զԹագաւորսն. զի միաբա-
նեալ նոքա ընդ միմեանս՝ զանց զխորհըր-
դովն արասցեն զՊարետոյն ։ Քանզի և բո-
վանդակ ոյժ իշխանութեան Պարետոյն է
յամիաբանութեան երկուց Թագաւորացն.
զի Պարէտք իւրեանց քուէիւքն նպաստ
լինին լաւագոյն կարծեաց միոյն՝ 'ի հա-
կառակել միւսոյն. իսկ յորժամ երկոքին
նոքա համախորհուրդք պատահեն, յայն
ժամ իշխանութիւն արքայիցն անդրժելի
է, և հակառակել նոցա՝ օրինազանցութիւն
համարեալ է. քանզի և պաշտօն Պարե-
տոյն է իրաւախոհ կալ ընդ մէջ արքայից
յանմիաբանութեան նոցա. այլ ոչ և մի-
ջամուխ լինել 'ի գործս նոցա 'ի համախո-
հութեան նոցա ։ Արդ յայնժամ ամո-
քեալ այնպէս արքայիցն երկոցուն, իջեալ
'ի հրապարակ հանդերձ բարեկամօքն և 'ի
բաց զՊարէտսն վարեալ յաթոռակաց իւ-
րեանց՝ զայլս փոխանակ նոցա կարգէին,
յորոց և մի էր Ագեսիղայոս. և զբազումս
'ի զէն վառեալ 'ի պատանեաց, և լուծեալ
արձակեալ զբանտարկեալսն, արհաւիրս
արկանէին հակառակորդացն՝ իբրու որ
մահունս գործեսցեն. սակայն և սպանին
և ոչ զոք ։ Նա՛ զի և 'ի խնդրել Ագեսիղայո-
սի սպանանել զԼէոնիդաս գաղտագնաց
փախստեայ 'ի Տէգէաս, և յարձակել եւս
արս անկանել յուղւոջ 'ի վերայ առն, ի-

բաղդած Ագիս եղեալ անդէն արս հաւատարիմս առաքէր. որոց և յիւրեանս առեալ զնա յանդորրու ածին 'ի Տէգէաս։

Իբրև այս եղև, և հակառակորդ ուրեք ոք և խոչ ընդ ոտն չէր 'ի միջի, յայնժամ Ագեսիղայոս ինքնին միայնակ խանդարեաց և հիմն 'ի վեր տապալեաց զամենայն, աղարտեալ զգեղեցիկ զայն օրէնսն և զլոյծ Լակոնականն՝ ամօթալի ախտիւն ընչաքաղցութեան իւրոյ։ Քանզի ժառանգեալ սորա կալուած մի լայնատարածման և արգաւանդաշող, և պարտապան ևս գոլով նա շատ պարտուց և ոչ ունելով հատուցանել, առ այս և ոչ զիւր կալուածն կամէր հասարակաց գործել, սադրէր հաւանեցուցանէր զԱգիս՝ իբրու եթէ զերկուս զայն օրէնսն միանգամայն օրինադրելով մեծապէս արդեօք յուղեսցին աղմուկք 'ի քաղաքին. իսկ եթէ նախ՝ պարտուցն ազատութի̄ 'ի բանի խրեանց արասցեն զտեարսն կալուածոց, դիւրաւ այնուհետև և անվրդով հպատակեսցին նոքա 'ի բաշխոն գետնոյ։ Հաճոյ թուեցաւ բանն և Լիւսանդրեայ գլխովին, պատրեալ 'ի խորամանկութենէն Ագեսիղայոսի։ Ապա ածեալ կուտեալ 'ի հրապարակ զամենայն զմուրհակս զպարտապանաց, որոց Սպարտացիք անուն կարդան Քլէրիա, այրեցին 'ի հուր։ Ընդ յամբառնալ բոցոյն՝ առ հասարակ ընչեղք և փոխատուք յոյժ 'ի խոր խոցեալք գնային 'ի բաց. իսկ Ագեսիղայոս՝ իբրու ոտնհար եղեալ առնէր՝ երբէք չու-

սեալ նորա լոյս պայծառ առաւել և ոչ հուր սաստիկ առաւել։

Իսկ իբրև խնդրեաց խուժանն՝ արագ արագ և զբաշխն գետնոյ 'ի ներքս բերել, և զնոյն և պատուիրեաց արքայն, յայնժամ Ագեսիլայոս համակ խոյս և խութ արկեալ իրացն, և բարուր կարկառեալ ժամանակաձգու լինէր. մինչև դէպ տայր՝ Ագիսայ չու առնել խաղալ յարշաւանին։ Քանզի Աքայեցիք նիզակակիցք Լակեդեմոնացւոց առաքեցին խնդրէին օգնութիւն ընդդէմ Էտոլացւոց՝ որ անցեալք ընդ սահմանս Մեգարայ հորդան տային 'ի Պեղոպոննիսոս. և Արատոս զօրավար Աքայեցւոց ընդդէմ դարձեալ զօրաժողով լինէր և առեալ գրէր առ Պարէտսն։ Յայնժամ Պարէտք առեալ վաղվաղակի արձակէին անդր զԱգիս՝ որ մեծապէս և խրախուսեալ էր 'ի պատուաւորութենէն, և զի և յառաջամիտ և յոյժ տեսանէր զզօրականն. քանզի և էին իսկ նոքա բազմագոյնք 'ի պատանեաց անտի և յաղքատաց, որք և 'ի պարտուց իւրեանց ազատացեալք և ակն և կալեալք 'ի դարձի արշաւանին ունել և զբաշխս գետնոյն, մտադիւրագոյնս հպատակէին զանձինս իւրեանց Ագիսայ։ Եւ էին անդ նոքա տեսիլ չքնաղ քաղաքացն, յակն արկեալք զնոսա այնպէս հեզաբար անցանել հատանել զՊեղոպոննիսոս. ոչ տուգանս ինչ ածէին, գոգցես և ոչ շռինդն հարկանէին. որպէս զի և զարմացեալ իսկ էին հելլենացիք և զմտաւ և

ածէին զքաջիկ եւ զհրահանգն զօրականին զՍպարտոյ՝ առ Ագեսիլայոսիւ կամ առ Լիւսանդրեաւ կամ առ նախնին Լեովնիդեաւ, յորժամ անդանօր պատանւոյն այնմիկ ալքայի՝ որ կրսերագոյն եւ էր քան զամենեսեան՝ այնչափ շուք և պատկառանս 'ի ներքս բերէր զօրականն: Այլ արդեօք և ինքնին պատանին փառս անձին հանդերձէր 'ի սակաւապէտ կենացն և 'ի վատառակասէր ջանիցն, և զի և ոչ հանդերձ զիւրեաւ արկանէր և ոչ զէնս շքեղ առաւել քան զռամկականին, այլ ալպաւ և ըստ արժանին սքանչելի եղև խուժանին և փարելի: Սակայն և ընչեղք խեթացան ընդ նորոգատուր չափ կենաց պատանւոյն. զանգիտեալք՝ եթէ նա ամենայն ուրեք 'ի նմանութիւն վարուցն կրթեսցէ առհասարակ զժողովուրդս:

Արդ հասեալ Ագիս և խմբեալ ընդ Արատեայ մօտ 'ի Կորնթոս, մինչդեռ խորհուրդ Արատոս հարցանէր վասն մարտի և վասն ճակատուն զօրու ընդդէմ թշնամեացն, մեծ իմն յայնժամ ժրութիւն ողւոյ և խիզախել ոչ մոլեգին և ոչ անհանճարաբար 'ի դէմս բերէր Ագիս: Քանզի խորհուրդ տայր մարտ դնել կռուել, և մի թոյլ տալ մարտին մուտ ընդ դրունսն ունել Պեղոպոննիսոյ: Համայն և այնպէս՝ զհաճոյն իւր՝ ասէ՝ արասցէ Արատոս, այր երէց հասակաւ և այր զօրավար Աքայեցւոց, որոց ոչ 'ի զօրավար հասեալ գայ ինքն և ոչ առաջնորդ, այլ 'ի նիզակակից

և 'ի զօրավիգն ։ Բայց Բատոնի Սինոպացի պատմէ, հրաժարել նմա 'ի մարտէն՝ թէ֊պէտ և կամէր Արատոս ։ Սակայն Բատոնի ընթերցեալ չէ զոր միանգամ գրեաց ինք֊նին Արատոս 'ի չքմեղս անձին, եթէ 'ի ժամանակին յայնմիկ ժողովեալ մշակացն և ամբարեալ գոգցես ողջոյն զարմտիսն, լաւ համարեցաւ նմա անցս տալ թշնամւոյն, քան թէ մարտիւ վտանգել զամենայնն միանգամայն ։ Այսպէս խորհուրդ հաստատել Արատոս ոչ կռուել, և առեալ արձակեալ 'ի բաց զնիզակակիցսն մեծապէս գովու֊թեամբք, յայնժամ Ագիս սքանչացեալ առ ամենեսեան դառնայր գայր 'ի տուն 'ի ժամանակին՝ յորում ամբոխեալ և խռո֊վեալ յոյժ էր Սպարտիա ։

Քանզի Ագեսիղայոս Պարէտ՝ անպատ֊կառ այնուհետև խեռացեալ միտէր յամե֊նայն զօշաքաղութիւն . և առեալ եմոյծ ամիս մի երեքտասաներորդ 'ի հարկսն, թէպէտ և շրջանի տարւոյն յայնժամ չէին պէտք այնմ, և հակառակ ևս էր կարգի ժամանակացն . և այնպէս հարկս հանէր և վասն ամսոյն այնորիկ ։ Ապա զանգիտեալ նորա 'ի հարստահարելոց անտի արանցն և ատելի ևս եղեալ ամենեցուն, պահէր առ իւր սիկարեանս՝ որովք և 'ի միասին հե֊տևէր յատեանն . և յերկուց անտի արքայից զմին յայտնի իսկ յընչաց քերէր . իսկ Ագիսայ շուք 'ի ներքս մատուցանէր, քան վասն արքունի բարձին՝ առաւել ևս վասն ազգակցութեանն արդեօք ։

Համբաւ եւ հռչակ հարկանէր Ագեսի-ղայոս՝ կարգել միւսանգամ 'ի Պարէտ. ուր աղագաւ թշնամիք նորա յայնժամ արագ արագ մխեցան 'ի բազմավտանգ գործն, և միաբանեալք առեալ ածէին յայտնապէս զԼէոնիդաս 'ի Տեգեայ, և կացուցանէին զնա թագաւոր. և անդ մեծապէս եւ խըն-դայր ժողովուրդն, զի սրտմտեալ եւ էին ընդ խաբանան 'ի բաշխ անդր գետնոյ: Յայնժամ անձնապուր Ագեսիղայոս զեր-ծանէր 'ի ձեռն որդւոյն իւրոյ Հիպպոմե-դոնտեայ՝ յաղերս վասն հօրն անկեալ առ ժողովուրդն, զոր և մեծապէս սիրէին նոքա վասն քաջութեանն: Իսկ Ագիս արքայ չոքաւ ապաւինեցաւ առ Քաղկիկեան դի-ցուհին. և Կղէոմբրոտոս արքայ՝ 'ի տաճար անդր Պոսիդոնի անկաւ աղաչաւոր. քան-զի և թուէր իմն այնպէս՝ Լէոնիդեայ սրտմտեալ առաւել ընդ սա: Եւ համբուն թողեալ յայնժամ զԱգիս՝ հանդերձ զօ-րականօք չոքաւ Լէոնիդաս ուր կայր Կղէոմբրոտոս. անդանօր զայրացեալ բար-կութեամբ յերեսս հարկանէր նորա՝ զի փեսայ գոլով նորա՝ հայր լարեաց նմա, զարքայութիւնն եհան, և վտարանդի արար զնա 'ի հայրենեացն:

Վարանեցաւ Կղէոմբրոտոս, և այնպէս 'ի տագնապ տարակուսի նստեալ կայր անմռունչ: Իսկ յայնժամ Քէլոնիս դուստր Լէոնիդեայ, այն՝ որ յառաջագոյն թիկ-նածու հարստահարելոյ իւրում հօրն՝ զանձն եւ իւր 'ի նոյն կիրս համարեալ և

զատեալ 'ի Կղէոմբրոտեայ յառնէն 'ի Թա-
գաւորել նորա, յարեցաւ առ հայրն և
միխիթար մատուցանէր հօրն յաղէտս նորա,
և պաղատէր ևս ընդ նմա 'ի քաղաքին, և
ապա 'ի փախստեան հօրն՝ համակ 'ի սուգ
կայր և զայրանայր ընդ Կղէոմբրոտոս, նոյն
այն Քելոնիս յայնժամ փոխեալ միւսան-
գամ ընդ փոխել բաղդին, ողջքաւոր և
ինքն նստաւ 'ի միասին ընդ առն իւրոյ՝ կա-
լեալ զձեռաց նորա և զերկուս տղայսն կա-
ցուցեալ աստի և անտի: Իբրև անդ առհա-
սարակ ամենեքեան հիացեալ կային դեր-
արտասուալիցք՝ ընդ լաւութիւն և ընդ ա-
զեխորով կիրս կնոջն, նա յայնժամ 'ի վեր
առեալ զպարհանդերձն և ցուցեալ զհեր-
արձակ զխռուացեալ զգեստն՝ ասէր առ
Լէոնիդաս. "Այս իմ տեսիլ աւադիկ
ով հայր, և այս կերպարան չէ առ ցաւս
կարեկցութեան վասն Կղէոմբրոտեայ. այլ
սուգ է դա անդստին 'ի ընէ 'ի քոց աղէ-
տից և 'ի փախստենէն մնացեալ ընդ իս
մնդակից և բնակակից: Արդ ուրեմն 'ի
Թագ կապել քո յաղթական 'ի Սպար-
տա, հասցէ ինձ տակաւին 'ի նոյն յաւեր-
ժանալ 'ի վիշտս. կամ թէ պարտ ինձ ի-
ցէ՝ պատմուճան արկանել զանձամբ պայ-
ծառ և արքենի՝ 'ի սպանանել քո զիմ ա-
մուսին՝ որում հարսնացայ 'ի կուսութենէ
իմմէ. որ եթէ 'ի հաշտ ածեալ չամոքէ
դա զքեզ և ոչ 'ի ցօղ անդամ արտասուաց
տղայոցդ և կնոջն, պատուհաս ուրեմն դա
կրեսցէ զիւրոյ մխատուն դառնադոյն ևս

քան զքո կամելդ, կանուխ քան զինքն՝ զիս տեսեալ զիւր զտարփաւղն 'ի մահ տարածեալ: Քանզի և որո՛վք երեսօք տեսից ես երբէք զայլ կանանին, վրէպ իմ գտեալ 'ի գութ ածել խանդաղատանաց իմովս պաղատանօք՝ ոչ զայր և ոչ զհայր: Այլ ուրեմն ծնայ ես լծակից և դուստր, ցանդ այնպէս ընդ իմոցս լինել վշտահար և արհամարհ: Այլ արդ եթէ և էր ինչ երբէք դիմս փառս վայելուչ 'ի չքմեղս անձին, վրէպ յայնմանէն կացուցի ես զնա, յորժամ յարեալ ես 'ի քեզ՝ դաստախաղ եղէ զգործոց դորա: Բայց դու ինքնին զարդիս զանիրաւութիւն դորա մեծապէս ներելի ողորմութեան առնես, դու՝ որ այնչափ մեծ զթագաւորելն 'ի դէմս բերես և այնչափ տարփալի, զի և վասն այնր արժան է իրաւ իցէ միանգամայն և զփեսայս սպանանել և զորդւովք զանց առնել,,: Զայսոսիկ կողկողէր Քէլոնիս, և 'ի նոյն զերեսս իւր առեալ՝ զգլխոյն փարէր Կղէոմբրոտեայ, և զթալկացեալ զաչսն առ 'ի ցաւոյն և զծիւրեալ և զհաշեալ՝ յածէր զմարդկամբն:

Ապա Լէոնիդաս խօսեալ ընդ բարեկամացն, հրաման տայր Կղէոմբրոտեայ յառնել գնալ վտարանդի. բայց զդուստրն իւր աղաչէր մնալ առ իւր և մի լքանել զհայրն, որ այնչափ սիրեաց զնա և զկեանս զառնն շնորհեաց նմա: Այլ նա անսաց և ոչինչ. անդէն 'ի յառնել 'ի վեր առնն՝ առեալ եդ 'ի նորա ձեռս զմի 'ի տղայոցն,

և զմիւսն ինքն 'ի գիրկս առեալ և երկր-պագեալ անդ առաջի բագնին դիցն , հե-տեւէր արտաքս հանդերձ նովաւ ։ Եւ թէ արդեօք 'ի մտօք փառաւորութենէն չէր դերի վարեալ Կղէոմբրոտոս , անշուշտ նա զայն վտարանդութիւն ընդ այնպիսումն ընկերի , լաւագոյն յոյժ բախտ համարեալ էր .քան զամենայն արքայութիւն ։

Եւ այսպէս ապա Լէոնիդաս արտա-սահման զԿղէոմբրոտոս արարեալ, և 'ի Պարետացն որ յայնժամ՝ զիշխանութիւնն հանեալ և զայլսն փոխանակ կարգեալ, անդէն դառնայր դաւաճանութիւն մե-քենայէր Ագիսայ ։ Գունդ գործեաց զա-ռաջինսն ածել զնա 'ի հաւանութիւն՝ յառ-նել և գալ թագ 'ի միասին կալել, իբրու որ ներեալ իսկ լիցին նմա քաղաքացիքն իւ-րև պատանւոյ առն և պատուասիրի զա-ռածելոյ յԱգեսիղայոսէ ։ Իսկ կասկա-ծեցաւ Ագիս և եկաց մնաց յիւրում ա-պաստանի , ոչ ևս այնուհետև խաբանօք գնայր ընդ նմա Լէոնիդաս ։

Բայց Ամփարէս և Դեմոքարէս և Ար-կեսիղայոս սովորեցան յառնել և կենա-կից խօսակից լինել ընդ Ագիսայ . էր զի և 'ի վայր առեալ ածէին զնա 'ի միասին 'ի բաղանիս անդր , և լուացեալ՝ անդրէն միւ-սանգամ 'ի նոյն տաճար կարգէին զնա . զի էին իսկ նոքա երկբեան կենակիցք նո-րա ։ Այլ Ամփարէս՝ որ ա՛յն ինչ յանօթ առեալ էր յԱգեսիստրատայ պատմու-ճանս և սկահս մեծագինս , խորհէր մատ-

նել զԱգիս արքայ և զկանայս տան նորա և ազատանալ 'ի դարձուցանելոյ զկարասին . և ասեն վասն նորա յաւէտ իմն լսել Լէովնիդեայ և գրգռել ևս զՊարէտսն, յորոց մի էր և ինքն գլխովին :

Արդ Ագիս ապաւինեալ միշտ 'ի նոյն տաճարի, և քանզի էր նորա սովորութիւն ըստ ժամանակին յառնել իջանել միայն 'ի բաղանիս անդր, խորհեցան նոքա դարանել որսալ զնա արտաքոյ տաճարին: Ապա դէտակն կալեալ ճնայլին և ընդ առաջ եկեալ նմա յելսն 'ի բաղանեաց, ողջոյն և համբոյր տային նմա և ընդ նմա հետևեալք խօսէին, և խնդային ևս իբրու ընդ պատանւոյ իւրեանց ընտանւոյ : Իսկ էր 'ի ճանապարհին յայնմիկ առ 'ի շեղ զարտուղի մի 'ի բանտ կոյս անդր . իբրև եկին հասին 'ի փողոց անդր, յայնժամ Ամփարէս մխեալ 'ի նա ձեռս ըստ իշխանութեան կարգին . ասէր . "Ես զքեզ ով Ագիս ածեմ առ Պարէտս՝ տալ զհամար զիշխանութեան քո,, : Իսկ Դեմոքարէս այր հարստի մարմնով և կորովի, առեալ զվերարկուն ածէր զպարանոցաւն նորա և քարշէր տանէր . յայնժամ և այլքն դաշնաւորք մղօն 'ի թիկանց տուեալ նմա, իբրև չէր ոք օգնական նմա յանմարդի փողոցին, այնպէս առեալ արկին զնա յայնժամ 'ի բանտ անդր :

Յայն վայր արագ արագ եկեալ հասեալ Լէոնիդաս ստուար գնդաւ վարձկան զօրականին, պատեալ պաշարէր շուր֊

Ջանակի զբանտն: Ապա եկին մտին Պարէտք ուր կայրն Ագիս, և առաջեալ կոչեցին անդր և զծերակոյտն համախորհուրդ, իբրու ատեան կարգեալ դատաստանի. և հրաման տային Ագիսայ առնել պատասխանի վասն գործոց իւրոց: Իբրև անդ պատանի արքայն ընդ այնպէս կեղծաւորել ատենին՝ 'ի ծաղր հատանէր, ասէ Ամփարէս. սակայն մերձ ընդ մերձ 'ի կոծ հատեալ քո՝ լուծցես զվրէժ յանդգնութեանդ: Իսկ անդուստ այլ ոմն 'ի Պարետիցն իբրու գթութեամբ առ Ագիս՝ զօրինակ նմա սադրեալ ազատութեան փասուն, հարցանէր զնա՝ միթէ արդեօք 'ի բռնադատութենէն Լիւսանդրեայ և Ագեսիղայոսի յայն գործսն մխել նորա: Եւ պատասխանի Ագիս և ասէ: Բռնադատեալ և ո՛չ յումեքէ, այլ 'ի նախանձ նմանութեան բերեալ Լիկուրգեայ՝ զնոյն յօժարեցայ հաստատել կարգ զքաղաքին: Իբրև միւսանգամ հարցաւ՝ սորջանա՞լ արդեօք ընդ գործն, կրկնեաց պատանին՝ եթէ երբէք զեղջ և ապաշաւ չէ նա ընդ այնպիսի գեղեցիկ խորհուրդ՝ Թէպէտ և զվերջինն կրեսցէ պատուհաս: Յայնժամ դատակնիք մահու ածեալ նմա՝ հրաման ետուն պաշտօնէիցն քարշել ձգել զնա 'ի վայրն անուանեալ՝ Դեկադէս. (և է այն՝ յարկ 'ի բանտին ուր խեղդամահ առնեն զմահապարտսն): Իբրև զպաշտօնեայսն տեսանէր Դեմոքարէս՝ զի ոչ ժտեցան ձեռն մխել 'ի նա, և զի որ անդ զօրականք

վարձկանք վերջանեալ տեղի տային հրաժարեալք 'ի դառնութենէ գործոյն, և ամբարշտութիւն և ապիրատութիւն համարեցան նոքա ձեռն յանձն մխել արքայի, կայր Դեմոքարէս և սպառնայր 'ի վերայ կապէր նոցա և յիշոցնատու լինէր և ինքնին ևս ձգէր քարշէր զԱգիս 'ի վայր պատուհասին: Քանզի յայնժամ և բազումք լուր առին զձերբակալ լինելոյն նորա, և առաջի դրացն խռովլ և շառաչիւն ևս հարեալ էր, և լապտերք բազումք խռնեցան 'ի վայրն. և իրազգած ևս եղեալ մայրն Ագիսայ և հանի նորա, բողոք մեծապէս բարձին, պաղատանս ձայնէին՝ շնորհել արքային Սպարտացւոց ժամ պարապոյ առնել պատասխանի և 'ի դատաստան յանդիման գալ իւրոց քաղաքացւոց:

Վասն այսորիկ ապա առաւել ևս ձեպեալ արագեցաւ մահ նորա. երկեան՝ զի 'ի ձեռաց ելցէ գիշերն բարեպատեհ, եթէ սաստիկ ևս որեար 'ի վայրն խուժեսցէ: Արդ մինչդեռ 'ի վայր խեղդամահ պատուհասին ածեալ լինէր Ագիս, տեսեալ անդանօր զմի ոք 'ի պաշտօնէիցն՝ զի յարտասուս հարեալ աշխարէր զաղէտն նորա. ասէ. " Թող անդր ա՛յր դու զարտասուելդ քո: Քանզի մահ զայս անիրաւ և անօրէն առեալ իմ, լաւագոյնի ևս պատահեալ եմ արդեօք վիճակի քան զիմ զսպանօղսն,,: Զայս ասաց Ագիս, և ինքնին 'ի խեղդամն մատուցանէր զպարանոցն:

Ապա Ամփարէս ելեալ արտաքս առ-

դուրսն, անդանօր Ագեսիստրատէ զոտիւքն փարեալ նորա առ մեծերիմ բարեկամութեան իւրոյ ընդ նմա, նա 'ի վեր կանգնեալ ասէր՝ կլիս դառնութեան և ոչ մի հասցէ Ագիսայ. և սոսկայր եւ զնա՝ եթէ կամք իցեն՝ մտանել տեսանել զորդին. իբրև խնդրեաց 'ի միասին ունել և զԱրքիդամէ զմայր իւր, Թոյլ տայր Ամփարէս. և կալեալ զերկոցուն նոցա զձեռացն և պատուէր տանել փակել անդրէն զշուրս բանտին, զԱրքիդամէ տայր առաջին 'ի ձեռս դահճացն զպատուեալ կինն. և էր կինն մինչև ցայն վայր մեծապէս արդոյ և ականաւոր կացեալ քան զամենայն կանայս քաղաքին իւրոյ: Իբրև սպանին և զնա, յառաջ ապա վարեաց զԱգեսիստրատէ. իբրև նա 'ի ներքս 'ի վայր պատուհասին մտեալ տեսանէր գլխատապատ զորդին և զմայր իւր այնպէս անշնչացեալ կախեալ ընդ ձողանն, անդէն իւրովք իսկ ձեռօքն 'ի միասին ընդ դահճացն գործակից 'ի վայր առնոյր զմայրն, և դառացուցեալ զգիականն առ մարմնոյն Ագիսայ՝ յարդարէր յօրինէր և ծածկէր զնա: Ապա 'ի վերայ անկեալ որդւոյն և համբուրեալ զերեսս նորա, ասէր. “Շատ բարեխառնութիւնդ ոմ որդեակ, և հեզութիւնդ, և մարդասիրութիւնդ կորուսին զքեզ և զմեզ”: Իսկ անդուստ Ամփարէս՝ որ ընդ դուռնն տեսանէր զամենայն և լսէր զամենայն, 'ի ներքս վազեալ և խոժոռ զակն յԱգեսիստրատէ դարձուցեալ, ասէ, “Արդ եթէ

քո ընդ գործս հաւանեալ է որդւոյդ, վրէժ զնոյն լուծցես ,,: Իսկ Ագեսիլաւարա֊ տէ ինքնին 'ի վեր 'ի խեղդանն ամբարձեալ ասէր. "Այո՛, միայն եթէ պիտանիք Սպար֊ տիոյ լիցին այդոքիկ ,,:

Իսկ յետ այնորիկ շուխնդն ընդ քաղաքն հարեալ գումարէր աղէտիցն, և գլխա֊ կունք երեք այնպէս յանկարծ յերևան եկեալք, Թէպէտ և յայնժամ մեծապէս յոյժ էր արհաւիրք երկիւղի քաղաքին, ոչ ինչ Թողացան կոծ աշխար զգլխակամքն ջայլել, և յատելութիւն ոխերիմ ընդ Լէոնիդեա դառնալ և ընդ Ամփարէս: Զմտաւ եւ ածէին՝ զի ոձիր այնպէս ահա֊ գին և եղեռնաւոր երբէք չետես Սպար֊ տիա՝ յորմէհետէ Տովրացիք եկեալ բնա֊ կեցան 'ի Պեղոպոննիսոս: Քանզի և Թշնա֊ միք ինքնին զկռովին քաջ իսկ անձնապահ էին ձեռն յարքայս մխել Լակեդեմոնա֊ ցւոց 'ի պատահելն 'ի մարտի, և խորշէին խուսէին այլուր՝ շուք և մեծարանս եդեալ երեսաց նոցա: Ուստի Թէպէտ և մարտ պատերազմաց Լակեդեմոնացիք շատ մղե֊ ցին ընդդէմ Հելլենացւոց, մի միայն Կղէոմբրոտոս՝ յառաջ քան զՓիլիպպոս նիզակահար սպանաւ 'ի Լենկտրա: Իսկ Թէ Մեսսինացիք և զԹէոպոմպոս ինքնին ասեն սպանեալ յԱրիստոմենեայ, ընդ֊ դէմ կան Լակեդեմոնացիք և ասեն՝ վիրա֊ ւորեալ միայն: Բայց պայքարք են վասն բանիցդ:

Այլ սակայն անշուշտ Ագիս արքայ ա֊

ռաջին 'ի Լակեդեմոնիա սպանաւ 'ի Պա-րետոնիցն, 'ի նահատակել խուռն 'ի մրցանս հոյակապս և փառաւորս վասն քաղաքին, և յառոյգ 'ի տիան՝ յորում և յանցաւոր մարդիկն արդեօք հանդիպեսցին ներողութեան : Իսկ բամբասեցաւ նա իբրաւամբք առաւել 'ի բարեկամացն՝ քան 'ի թշնամեացն, զի ապրեցոյց զԼէոնիդաս . և զանձն հաւատաց այլոց՝ հեզ նա գոլով և առաւել հեզ և համբոյր :

ԲԱՅՑ 'ի մեռանել Ագիսայ՝ ոչինչ աճապարեաց Լէոնիդաս հասանել ունել զեղբայր նորա զԱրքիդամոս՝ որ ճեպընթաց անձնապուր փախեաւ : Սակայն եկեալ՝ ձգեալ արտաքս 'ի տանէն Ագիսայ զկին նորա (Ագիատիս անուն) մայր մանկան այն ինչ ծնելոյ, առեալ զնա ուժգին ածէր 'ի կին որդւոյ իւրոյ Կղէոմենեայ՝ թէպէտ և չէր նա տակաւին փեսայացու, զի այլում չկամէր եթէ լինիցի նա կին : Քանզի և ժառանգ էր Ագիատիս բազմահարուստ ընչից հօր իւրոյ Գիւլիպպոսի, և էր նա չքնաղագեղ քան զամենայն կանայս Հելլենացւոց, և էր նա բարեհամբոյր : Ուստի և բազում ջանաց նա՝ որպէս ասեն, և շատ պաղատեցաւ ազատել 'ի բըռնութենէն . սակայն կարի նեղ հասեալ նմա զուգիլ ընդ Կղէոմենեայ, ատելութ̃ էր ընդ Լէոնիդեայ . բայց իբրև լծակից բարի և խանդակաթ գնայր նա ընդ պատանւոյ փեսային, որոյ և յինքն առեալ

զնա՝ մեծապէս յոյժ սիրով սիրեաց զնա.
և ախտակից ևս լինէր նմա 'ի սէրն նորա առ
Ագիս և 'ի յիշատակն. զի և բազում ան-
գամ նստեալ հարցանէր զնա վասն ան-
ցիցն անցելոց, և մեծապէս ուշ ունէր նմա՝
'ի պատմել կնոջն զխորհուրդ մտաց և ըղ-
ձութն զԱգիսայ: Իսկ էր Կղէոմենէս և
հետամուտ պատուոյ և մեծանձն, և ան-
դստին 'ի բնութենէն հակամիտեալ 'ի
ժուժկալութիւն և յանպաճոյճ 'ի կենաս
ոչինչ պակաս քան զԱգիս. սակայն և ան-
բաժ 'ի նորա լաւութենէն և 'ի քաղցրա-
մոք բարուցն. և էր 'ի նմա խառնեալ և ե-
ռանդն ցասման, և յուժգին թափոյ ցանդ-
ածեալ բերէր յայն ինչ՝ զոր միանգամ
բարւոք համարէր:

Թուէր իմն նմա ամենագեղեցիկ տիրա-
նալ 'ի վերայ ինքնակամ հնազանդելոցն.
դարձեալ և վայելուչ՝ հպատակել զնոսա
ուժգին յանսաստել նոցա, և բռնադա-
տել 'ի լաւագոյն անդր: Այլ նմա սովո-
րութ.ք քաղաքին յայնժամ ոչինչ քաղց-
րացան. քանզի և պարապորդ.ք կային յայն-
ժամ քաղաքացիք և փափկացեալք էին 'ի
գրգանս. և արքայն ինքնին գլխովին անհո-
գացեալ էր՝ խնդրէր անարգել կեալ 'ի
պարապորդ 'ի կենսս և 'ի լիութեան և 'ի
գրգանս, և իբր հասարակաց ամայի լքեալ
կային. քանզի և այր այր իւրաքանչիւր ա-
ռանձինն զիւրն տուն խնդրէր բարգաւա-
ճել: Իսկ յաղագս կրթանաց մարզից պա-
տանեաց և 'ի պարկեշտութիւն վարժելոյ

զինուս և 'ի ժուժկալութիւն և 'ի հաւատարութիւն, չէր անվտանգ և յիշատակութիւնն անգամ այնպիսեաց. Իբրև պատճառք այնորիկ կացին մահուանն Ագիսայ:

Եւ ասեն՝ եթէ պատանեակ տակաւին գոլով Կղէոմենէս՝ էր լսաւէր իմաստասիրութեան ճառիցն 'ի գալ Սփերոսի Բորիսթենիտեայ 'ի Լակեդեմոնիա. ուր նա կենակից ընդ մանկանց և ընդ պատանեաց փութոյ ախորժութեամբ խնդրէր վարժել հրահանգել զնոսա: Եւ էր այս Սփերոս կացեալ մի 'ի գլխաւորաց անտի աշակերտացն Զենոնի Կիտացւոյ. և թուի թէ՝ սիրեաց նա զքաջութիւն և զարութիւն ուղւոյն Կղէոմենեայ, և իղձ պատուոյ սաստիկ ևս վառեաց 'ի նմա: Քանզի և ասեն նախնոյն Լեոնիդեայ հարցեալ՝ եթէ զի՞նչ պիսի քերթող կարծեացէ նա զՏիւրտէոս, ետ պատասխանի. "Քա՛ջ է յորդոր զոգիս պատանեաց, որ և գեղեցիկ վառեալ մոլութեամբ առ 'ի քերթուածոց անտի նորա, դիմագրաւ նահատակէին 'ի մարտի,,: Եւ արդեօք վարդապետութիւն ևս Ստոյիկեան բազմավտանգ ինչ աշխոյժ և համարձակութիւն ընաւորեցաւ ծնանել 'ի ձեռներէցս և 'ի խիզախս. սակայն և քաղցրախառնեալ 'ի բոյս բարուց հեզ և հանդարտ, յայնժամ ապա զանկակից բարին 'ի ներքս բերէ:

Արդ իբրև մեռաւ Լեոնիդաս և զարքայութիւնն առնոյր Կղէոմենէս, տեսեալ զանարի վատութիւն զքաղաքայնոցն,

քանզի յայնժամ ընչեղք՝ դրդանաց միայն պատկառ կացեալ և շահու անձանց՝ ոչինչ միտ դնէին իրացն հասարակաց. իսկ խուժան ամբոխին վատեալ վատթարեալ 'ի պատճառս առ ունին կարօտութեանն՝ յուլացեալ էր միանգամայն առ 'ի մարտ, և 'ի քաջիկ դաստիարակութեան զաւակաց անհոգացեալ իսկ էր. և զի՝ և ինքն գլխովին զանուն ևեթ ունէր զարքայի, և ըստ իսկ իշխանութիւնն միանգամայն զՊարետոյն կախեալ կայր, ապա անդէն վաղվաղակի խորհուրդ 'ի մտի հաստատեաց նա փոխել փոփոխել զիրացն զկարգ:

Եւ էր նորա բարեկամ Քսենարէս անուն՝ սիրող նորա, (և զսէր զայս Լակեդեմոնացիք կոչէին՝ Ներշնչութիւն). և առ 'ի փորձ հարցանէր զնա Կղէոմենէս՝ եթէ զի՞նչ թագաւոր եկաց Ագիս, և զիա՞րդ արդեօք, և ո՞յց սատարութեամբն զնոյն կալաւ ուղի: Իսկ Քսենարէս զառաջինն բերկրանօք յուշ ածէր զգործսն զայն. կայր և պատմէր մի ըստ միոջէ զամենայն անցսն. բայց իբրև խելամուտ եղև՝ զի ըղձակաթս յոյժ ունէր Կղէոմենէս զպատմեալսն, և զի՝ և կարի յոյժ շարժեցաւ նա ընդ նորոգ փոփոխութիւնն՝ զոր խորհեցաւն Ագիս, և զի՝ և բաղում անգամ խընդրէր լսել զնոյնս իրաց, զայրագնեալ յայնժամ էառ յանդիմանել զնա՝ իբրև այր խօթամիտ. և այնուհետև ապա ոչ եւս չխօսէր ընդ նմա և յայց չելանէր նմա: Սակայն և 'ի վեր ումեք չեհան զպատճառ

գժտութեանն. այլ տայր միայն՝ գխօսել զայն արքային։

Իբրև զայս օրինակ խորթացաւ Քսենարէս, ապա զմտաւ ածեալ Կղէոմենեայ՝ զի և այլք դարձեալ գուցեն համախորհուրդք առնն, մտախորհ լինէր ինքնին միայնակ 'ի գլուխ զգործն տանել. և համարեալ ևս՝ քան 'ի խաղաղութեան՝ հեշտին ևս 'ի կըռուի փոփոխել զկարգն, գրգռեաց զքաղաքն 'ի կագ ընդ Աքայեցիս, որ և պատճառս ևս տային զգրգռութեանն։ Քանզի Արատոս այր զօրաւոր յոյժ 'ի մէջ աքայեցւոց՝ 'ի վաղնջուց խնդրէր 'ի մի շար առնուլ խմբել առհասարակ զՊեղոպոննիսացիս։ Եւ էր այս կէտ նպատակին Արատեայ 'ի բազում գործս նահատակութեան նորա և 'ի բազմաժամանակեայ հնարիմացութիս նորա քաղաքականս. քանզի և կարծէր իսկ՝ եթէ զայն օրինակ միայն անպարտելի գուցեն նոքա յարտաքին թըշնամեացն։ Ապա իբրև առհասարակ գոգցես միամանեալք խմբեցան ընդ նմա՝ բայց 'ի Լակեդեմոնացւոց և յԵղէացւոց և յԱրկադացւոցն որ յարեալ էին 'ի Լակեդեմոնացիս, անդէն ապա 'ի մեռանել Լէոնիդեայ՝ վիշտ Արատոս հասուցանէր Արկադացւոց, առաւել ևս որ սահմանակիցքն էին Աքայեցւոց, փորձ փորձեալ այնպէս զԼակեդեմոնացւոց և արհամարհեալ զԿղէոմենէս իբրև այր պատանի և անփորձ։

Իսկ Պարէտք յայնժամ առեալ արձա_

կէին զԿղէոմենէս խաղալ ունել զոտաձար Աթենասայ մօտ 'ի Բելլբինա: Եւ մուտք Լակոնիոյ է վայրն, որ աղագաւ յայնժամ պայքարէին Լակեդեմոնացիք և Մեգալոպոլսեցիք: Ապա Կղէոմենէս հասեալ կալեալ զոտաձարն և ամրացուցեալ, ոչինչ դրդուեցաւ վասն այսորիկ Արատոս, և 'ի պահ գիշերոյն ելեալ խաղայր զօրու ըդդէմ Տէգէացւոց և Որքոմենացւոց: Իբրև յայնժամ ոչ համարձակեցան արքն 'ի գործն' որ պատրաստեալ էին 'ի ձեռս նորա մատնել զքաղաքսն' նա ելեալ դարձայր յետս, կարծէր ոչինչ խայտառակեալ իրացն: Բայց Կղէոմենէս հեգնեալ գրէր առ Արատոս, հարցանէր իբրև 'ի բարեկամէ, եթէ' 'ի պահ գիշերոյ ո՞ւր արդեօք խաղաց. նա պատասխանի տուեալ' եթէ լուր հասեալ առ նա պատուար ածել Կղէոմենեայ զԲելլբինաւ, էջ 'ի վայր արգելուլ զնա: Առաքեաց առ նա միւսանգամ Կղէոմենէս ասել' իբրու որ հաւատայց նմա, "Սակայն' ասէ' և զայն գրեասցես դու մեզ վայր մի, թէ ոչ ծանր թըւեսցի քեզ. առ ի՞նչ արդեօք ջահքդ ըղհեա գնային քո և սանդուղքդ այդոքիկ ": Ընդ հեգնութիւնն յայնժամ 'ի ծաղր հանեալ Արատոս, հարցանէր' զի՞նչ բոյս բարուց լիցէ պատանւոյն. յայնժամ Դեմոկրատէս Լակեդեմոնացի վտարանդեալն 'ի հայրենեաց' ասէր առ Արատոս. "Եթէ ինչ մի քո պատրաստեալ լիցէ գործել ընդդէմ Լակեդեմոնացւոց, հապա ձեպ տուր'

մինչև նորածին թուչնոյդ այգմիկ մաղիլս բուսեալ իցէ „ :

Յետ այսորիկ Կղէոմենեայ բանակ հարեալ յԱրկադիա սակաւ այրուձիով և երեքհարիւր հետևակօք, զանգիտեալ Պարետիցն՝ պատուէր տայլին նմա դարձ առնել. իբրև նա դարձ արար, անդուստ Արատոս հասեալ և կալեալ զԿափիա, առեալ անդրէն միւսանգամ արձակէին զԿղէոմենէս հանդերձ զօրու : Նա կալեալ զՄեթիւդրիոն և ասպատակ սփռեալ ընդ սահմանս Արգոլիկեան, 'ի դէն յայնժամ դարձան Աքայեցիք հետևակօք երկուց բիւրուց և հազար այրուձիով զօրավար կացեալ նոցա Արիստոմաքոս : Ընդ առաջ ել նորա Կղէոմենէս մօտ 'ի Պալանտիոն, և խնդրէր 'ի դիմի հարկանել մարտիւ : Բայց Արատոս զանգիտեալ 'ի քաջութենէ առութեան նորա, չետ թոյլ զօրավարին խառնել 'ի մարտն և դառնայր յետս՝ թշնամանեալ միանգամայն յԱքայեցւոց և ծանակեալ 'ի Լակեդեմոնացւոց, որ չէին և ոչ հինգ հազարօք չափ նոքա :

Ապա Կղէոմենէս մեծապէս խրախուսեալ 'ի հոգին, պարծէր առ քաղաքացւովքն և յուշ ևս առնէր նոցա զմի ոմն յարքայից անտի նոցա, որ ասէր՝ եթէ Լակեդեմոնացիք ոչ ևս հարցանեն քանիօն իցեն թշնամիք, այլ թէ ուրանօր իցեն : Ապա խաղաց գնաց 'ի թիկունս Եղէացւոց՝ ընդ որս մարտ եդեալ կռուէին Աքայեցիք. և անկեալ 'ի վերայ նոցա մօտ 'ի Լիւ-

կէօն, մինչդեռ նորա տեղի տուեալ վերջասնէին՝ արհաւիրս արկեալ առհասարակ ցիրուցան զզօրն կացուցանէր. հարուածս ածէր մեծամեծս, և դերի չատ վարէր 'ի նոցանէ, զի և հռչակ այնպէս հարաւ՝ 'ի Հելլենացիս եթէ և ինքնին Արտատոս անկաւ: Բայց Արտատոս յայնժամ դէպ ժամանակ գտեալ՝ խաղաց դիմեաց յետ հարուածոյն այնմիկ 'ի Մանտինէա. և հասանէր ունէր զքաղաքն, և գունդ հանդերձէր կազմէր 'ի նմա այնպէս յանկարծակի յեղակարծումն ժամու:

Ապա սրտաբեկ Լակեդեմոնացւոցն եղեալ և ընդդէմ Կղէոմենեայ դարձեալք և 'ի մարտէն խուսափեալք, խորհուրդ խորհեցաւ նա այնուհետև առաքել կոչել 'ի Մեսենեայ զԱրքիդամոս զեղբայր Ագիսայ, որում և անկանէր իսկ արքայութիւն ըստ իրաւանց միւսոյ զարմին. զմտաւ ածէր՝ նուազ զիշխանութիւնն առնել զՊարեոյց. քանզի և 'ի միաբանել երկուց արքայից՝ հանդիսակշիռ այնմ կայր այնուհետև արքայութիւնն: Իսկ որ յայնժամ դարանակալք եղեն կենաց Ագիսայ՝ իրազեկ եղեալք և 'ի պատուհասէն երկուցեալք 'ի գալուստ Արքիդամայ, ընդ առաջ չոքան ընդունել զնա՝ մինչդեռ նա թաքթաքուր գայր մտանէր 'ի .քաղաք անդր. և 'ի ներքս մուծեալ զնա՝ վաղվաղակի ապա բառնային զնա 'ի կենաց. կամ յակամայ կամս Կղէոմենեայ՝ որպէս համարի Փիւլարքոս, կամ թէ հաւանութեամբ

իսկ նորա՝ 'ի հրապուրելոյ անտի բարեկամացն տալ զայրն 'ի ձեռս նոցա. քանզի և բազումս զնոքօք արկանէին զձեռան, իբրու կարի նեղ 'ի նոցանէն հասեալ Կղէոմենեայ 'ի բանին յայնմիկ:

Սակայն Կղէոմենէս հաստատուն կացեալ յիւրում խորհրդեան փոխել զկարգ իրացն, արծաթով 'ի բանի առնէր զՊարէոս, վճիռ տալ նմա զզօրավարութեան յարշաւանին: Դարձեալ և զայլս բազումս յինքն առնէր 'ի ձեռն Կրատեսիկլեայ մօրն իւրոյ, որ ինչս անխնայ 'ի ներքս մատուցանէր նմա. և բաժանորդ ևս էր նա 'ի պատուասիրութեան որդւոյն. և ասեն ևս՝ 'ի շնորհս որդւոյն՝ թէպէտ և ինքն չկամէր՝ ամուսնանալ ընդ առն յոյժ ականաւորի և Ճոխի 'ի քաղաքին:

Եւ այնպ̃ ապա արտաքս զզօրն խաղացուցեալ Կղէոմենեայ, հասանէր ունէր զԼեւկտրա՝ ամրոց զՄեգալոպօլսեցւոց. իսկ յանժամ արագ արագ 'ի թիկունս ամրոցին դիմեալ Աքայեցւոց զօրավար ունելով զԱրատոս, Ճակատ յարդարէր Կղէոմենէս, և խառնեալ 'ի դրան առ պարըսպօքն՝ նկուն լինէր 'ի մասին ինչ բանակին: Իսկ Արատոս թոյլ չտուեալ Աքայեցւոց անցանել ընդ ձոր մի խորաձոր և հետամուտ թշնամւոյն լինել, սրտմտեալ Լիւդիադաս Մեգալոպօլսեցի՝ յառաջ վարէր զիւր այրուձին և 'ի վերայ անկեալ Լակեդեմոնացւոց 'ի վայր մի խռնեալ յայգիս և 'ի խոխոմս և յորմածս, վարատեալք

բաժանեցան զօրքն, և տագնապեցան յանդերձ արգելոցացն: Զայն տեսեալ Կղեոմենեայ, արձակէր 'ի վերայ նոցա զՏարանտացիս և զԿրետացիս, յորոց և գխտապատ անկանէր և ինքնին Լիւդիադաս նահատակեալ քաջութեամբն: Ապա խրախուսեալ Լակեդեմոնացւոց աղաղակ բարձեալ դիմեցին միանգամայն 'ի վ̄ր Աքայեցւոց, և հարուածս առհասարակ ածէին 'ի վերայ զօրուն: Եւ յայնժամ բազմակոյտ անկեալ դիականց զօրականին, դուլ ապա մարտին խօսեալ Կղեոմենէս՝ դարձուցանէր զդիակունսն. բայց հրամանն տայր ածել առ ինքն զդիակն Լիւդիադեայ. և զարդարեալ զնա 'ի հանդերձ ծիրանի և պսակ մի 'ի վերայ եդեալ նորա՝ այնպէս առեալ առաքէր զնա 'ի դրունս Մեգաղոպօլսեցւոց: Եւ էր սա այս Լիւդիադաս ինքնին, որ 'ի բռնակալութէ̄ն տեղի տուեալ յազատութիւն յանդորր հանէր զքաղաքացիսն, և զքաղաքն առեալ դաշնաւորէր ընդ Աքայեցւոցն:

Յետ այսորիկ մեծապէս 'ի խորհուրդս իւր քաջալերեալ Կղէոմենէս, և 'ի միտ եդեալ հեշտիւն ևս նկուն առնել զԱքայեցիս՝ եթէ մարտ եդեալ կռուեսցի ընդ նոսա բռնկամի, խելամուտ առնէր զՄեգիստոն զհօրուն՝ զի պամ մի ազատացեալ 'ի Պարետից անտի՝ հասարակաց գործեսցեն զդոյսն. և այնպէս 'ի հաւասարութիւն բերեալ զՍպարտիս, առեալ ամբարձցեն զնա 'ի տէրութիւն Եղլադայ: Իբրև հաւանե-

ցաւ և Մեգիստոն, առեալ յինքն յանկուցանէր Կղէոմենէս և զերկուս և զերիս ևս 'ի բարեկամացն ։ Եւ ապա դէպ լինէր յաւուրսն յայնոսիկ և միոյ ուրուք ևս 'ի Պարետից անտի 'ի քուն 'ի տաճարին Պասիփեայ տեսանել երազ սքանչելի ։ Քանզի Թուէր նմա տեսանել 'ի բազմոցի անդ ատենի Պարետիցն միոյ աԹոռոյ միայն դըտանել, իսկ այլոց չորիցն բարձեալ 'ի վայրէն . և 'ի զարմանալ նորա, ձայն լսելի լինել 'ի դաբիրայէ անտի տաճարին՝ որ ասէր՝ լաւ է բանդ վասն Սպարտիոյ ։ Զերազ զայս պատմեալ Պարետին յունկն Կղէոմենեայ, նա զառաջինն սրտաբեկ լինէր՝ կարծեաց զայլն փորձել ինչ զնա 'ի կասկածանաց իմէքէ ։ Այլ ապա ճշդըրտեալ զանկեղծուԹիւն զՊարետին, քաջալերեցաւ . և առեալ ընդ իւր առհասարակ 'ի քաղաքացեացն՝ զորոց միանգամ զչափն գիտէր դիմամարտուԹեան նոցա ընդդէմ իւրոցն խորհրդոց, խաղաց գնաց հասանել ունել զՀրէա և զԱլսէա՝ զքաղաքս Աքայեցւոց, կուտեաց ամբար յՈրքոմենոն, և բանակ հարեալ նստաւ մօտ 'ի Մանտինէա ։ Եւ համբուն վատեալ և պարտասեցուցեալ անդ զիւր զԼակեդեմոնացիսն երկայն ուղևորուԹեամբ 'ի վեր և 'ի վայր, զբազումս 'ի նոցանէն Թողոյր յԱրկադիա, զոր և խնդրէինն իսկ . և ինքն ածեալ ընդ իւր զվարձկան զօրականն՝ դէմ եդեալ գնայր 'ի Սպարտիա ։

Բայց յուղողն իրագէկ խորհրդոյն լուրոյ առնէր զմտերիմն իւր. և յամրաքայլ յառաջ խաղայր հասանել որսալ զՊարէտն 'ի ժամու անդ ընթրեացն: Մօտ հասեալ 'ի քաղաքն յառաջոյ արձակեաց զԵւրիւկղիդաս 'ի Ճաշարան անդր Պարէտից, իբրու լուր զբանակին տալ նոցա: Յետ Եւրիւկղիդեայ հասանէլին անդր և Թէրիկլոմէն և Փերիս և երկուք ևս այլ 'ի ննդակցացն Կղէոմենեայ՝ որոց անուն կարդային Սամոթրակեցիք՝ առեալ ընդ իւրեանս զօրականս սակաւս: Մինչդեռ անդ Եւրիւկղիդէս զբանիւք անկեալ էր ընդ Պարէտից, հասեալ նոցա անդր և 'ի վերայ անկեալ մերկապատեան սուսերօք ձեռն 'ի գործ առնէին: Ընդ առաջին վիրաւոր տապաստ անկանէր Ագեսիղայոս. կարծեցին զնա մեռեալ, բայց նա տակաւ յուժի եղեալ, և առ փոքր մի ձգեալ 'ի սող 'ի բնակութենէն, այնպէս մինչև 'ի գաղտագող քարշէր զինքն անդանօր 'ի յարկ մի փոքրիկ՝ այն ինքն էր մեհեան Արհաւրաց դիցն. ցանդ յայլ ժամանակ փակ էր, և յայնժամ բաց դիպաց գոլուբաց: Ապրդեալ 'ի նմա՝ առեալ զկնի իւր ձգէր զդուռնն: Իսկ անդանօր չորեքին 'ի Պարէտիցն անկան դիտապատ: Ընդ նոսա և այլք տասնիւ չափ և առաւել՝ որ պաշտպան կացին նոցա. քանզի և ոչ ոք կրեաց ինչ կիրս 'ի հանդարտելոցն, և ոչ դարձեալ զոք արգելին ելանել 'ի քաղաքէն. և ինքնին ևս Ագեսիղայոս ներողութիւն

գտանէր՝ որ յաւուրն երկրորդի ել արտաքս 'ի մեհենէն ։

Եւ են իսկ Լակեդեմոնացւոցդ մեհեանք ոչ Արհաւրաց միայն դիցն, այլ և Մահուան և Ծաղու, և այլոց ևս կրից այսպիսեաց ։ Եւ պատիւ տան նոքա Արհաւրաց, ոչ իբրու Քաջաց ոմանց անեղեաց՝ վնասակար զնա կարծելով. նա և համարին իսկ նոքա զնա գլխովին յօդակապ քաղաքին ։ Ուստի և Պարէտք յառնուլ զիշխանութիւնն, տան քարոզ կարդալ առ քաղաքայինսն, ըստ որում Արիստոտէլ ասէ, փոքրել զընչացսն և քաջ միտ դնել օրինացն, զի մի անաչառս և խստութեամբ գնասցեն նոքա ընդ նոսա. տալով նոցա՝ (որպէս ես կարծեմ՝) զայս պատուէր վասն ընչացն, առ 'ի ընտելս գործել զպատանիսն 'ի հնազանդութիւն և 'ի դուզնաքեայս անդամ ։ Եւ ինձ թուի՝ համարել առաջնոցն զարութիւնն՝ ոչ աներկիւղութիւն, նա մանաւանդ՝ արհաւիրք գլխովին կեղտ անուան և երկիւղ անփառութեան. քանզի և ոյք առաւել երկիւղածքն են յօրէնս, նոքա արիագոյնք ևս են ընդդէմ թշնամեաց, և երբէք երկնչին ոչ 'ի կրից՝ որ միանգամ զարհուրեալքն իցեն 'ի պարսաւանաց. ուստի և գեղեցիկ ասաց որ ասացն. “ Ուր է երկիւղ, անդ և պատկառանս ,, ։ Եւ Հոմերոս ինքնին. “ Պատկառանս ինձ, ասէ, սիրեցեալդ իմ աներ, ածես դու և երկիւղ ,, ։ Եւ այլուր ևս. “ Լուռ անշշունչ երկուցեալք 'ի ձայնա-

տու զօրավարացն„: Քանզի և է իսկ տեսանել բազում անգամ պատկառել՝ յորոց միանգամ և երկնչին մարդիկ: Ուստի և 'ի Լակեդեմոն առ դահըճի Ճաշարանին Պարետից կարգեալ էին զԵրկիւղն, զիշխանութիւն զայն խրեանց 'ի նմանութի ձգելով միապետութեան:

Իսկ յառաւօտուն պահու Կղէոմենէս 'ի ներքս մատուցանէր զանուանս ութսնից քաղաքացւոց 'ի տարադէմ վտարանդութիւն՝ և առնոյր բառնայր զաթոռսն Պարետից, և թողոյր մի միայն վասն իւր՝ առնել անդուստ իրաւունս: Եւ ապա 'ի մի խմբեալ եկեղեցի՝ խօսէր և 'ի չքմեղս լինէր վասն ամենայն գործոցն: Քանզի ասէր, եթէ Լիկուրգոս խմբեաց ծերակոյտ ընդ արքայից. և այնպէս հարուստ ժամանակ առաջնորդեցաւ քաղաքն, և պէտք չեղեն այլոց իշխանաց. և թէ՝ յետ այնորիկ յերկարել ձգել մարտի պատերազմի ընդդէմ Մեսսենացւոց, յայնժամ արքայիցն պատաղեալ 'ի զօրավարութեան և ոչ եւս ժամանեալք ատեան կարգել 'ի քաղաքին, առեալ այլընտիր 'ի բարեկամացն փոխանակ խրեանց ետուն քաղաքայնոցն զնոսա՝ անուն կարգացեալ նոցա Եփորոս. և այս Եփորոսք հարուստ մի ընդ առաջին ժամանակն մնացին այնպէս լոկ իբրև պաշտօնեայք արքայից. այլ ապա տակաւ տակաւ յինքեանս տարեալ զաւագութիւնն, և այնպէս յարամիի ոտնխթի 'ի ներքս մտեալ հաստատեցին զիշխանութիւնն. և

հաւատովք այն են բանին՝ զի և յայնժամ 'ի կոչել Եփորոսաց զարքային, նա ոչինչ անսայր նոցա զառաջին և զերկրորդ նըւագն, և յառնէր ապա գնայր առ նոսա 'ի կոչ երրորդին. և զի՝ և Աստերովպոս ինքնին՝ որ առաջին զայն իշխանութիւն հաստահարուստ գործեաց և արդոյ, չեկաց նա Եփորոս՝ բայց զկնի բազում ամաց. և թէ գոցա 'ի չափու կացեալ էր, արդեօք լաւ էր բերել զդոսա. այլ քանզի բռնակալ իշխանութեամբն զկարգն եղծին զնախնի վարչութեանն, մինչև և 'ի թագաւորաց զկէսս տարագիր հանին նոքա և ըզկէսս 'ի մահ վարէին առանց իրաւանց դատաստանի, և սպառնային ևս 'ի վերայ ածէին՝ որոց ցանկային միւսանգամ տեսանել 'ի Սպարտիա զհաստատութիւն զհոյակապ յոյժ և զաստուածային կարգի իրացն, ապա այնուհետև դժոխըմբերելք կացին նոքա :

Եւ զի՝ եթէ և մարթ ինչ էր առանց մահուան գործելոյ վարել մերժել 'ի Լակեդեմոնիոյ զեկամուտ զայն ժանտախտն, զգրգանսն և զշուայլութիւն և զպարտս և զտոկոսիս, և զերկուս ևս զայն 'ի վաղնջուց ևս ախտից՝ զաղքատութիւնն և զհարըստութիւնն, արդեօք երանելի ևս էր նա քան զամենայն թագաւորս, իբրու որ ըզժիշկ աւաքիչ հայրենեացն իցէ առանց ցաւոց : Եւ զի՝ և 'ի գործ անդր՝ յոր կարդեցաւ, զԼիկուրգոս ինքնին գլխովին ունի հովանի. այն՝ որ ոչ թագաւոր գոլով և ոչ

իշխան ոք՝ 'ի վեր առեալ 'ի սոսկականէն՝ լինել Թագաւոր, եւ նա արտաքս 'ի հրապարակ 'ի զէն 'ի զարդ վառեալ. մինչև և Քարիլաոսի արքայի զահի հարեալ՝ անկեալ ապաւինէր 'ի սեղան անդր. սակայն բարեհամբոյր սովորեալ լինքն և հայրենասէր, անդէն վաղվաղակի յարեալ 'ի Լիկուրգոս՝ հասարակորդ նորայն լինէր նահատակութեանց, և առնոյր ընդունէր զնորոգատուր քաղաքականութիւնն. որով և ինքնին Լիկուրգոս վկայեաց յարդեանց անտի՝ եթէ դժնդակ ուրեմն է փոխել շըրջել զկարգ քաղաքին առանց բռնութեան և երկիւղի: Եւ յաւել ևս ասել Կղէոմենէս. քանի՞ չափաւորութեամբ գնաց նա յայտնի, բարձեալ 'ի միջոյ զորեանն՝ որ ընդդէմ դառնային փրկութեանն Լակեդեմոնիոյ. իսկ այլոց ամենեցուն առհասարակ քարոզ կարդաց հասարակաց գործել զգետինն, և անվաւերական առնել զպարտս պարտապանացն. դարձեալ և 'ի քնին առնուլ և այլընտիր ժողովել յեկաց և յօտարաց, զի արք քաջք և արիք 'ի նոսա 'ի Սպարտացիս դարձեալք՝ հովանի իւրեանց իսկ զինուք կայցեն քաղաքին. զի այնուհետև և ոչ լիցի Լակոնիա յաւար Ետողացւոց և Լիւրիկեցւոց առ 'ի չգոյէ նահատակացն:

Զայս ասաց Կղէոմենէս, և ապա առաջին ինքն զիւր գոյսն եդ հասարակաց. ըզնոյն և Մեգիստոն հօրու նորա, և այլ այլ դարձեալ 'ի բարեկամաց անտի, ապա ըզ-

Նոյն գործեցին և առհասարակ քաղաքա-ցիք · և այսպէս ապա յաջողեցաւ բաշխ գաւառին : Առ այս՝ և բաժին հանէր նա առն առն՝ զոր միանգամ վտարանդի արար · և ձեռն յանձին հարկանէր՝ 'ի հանդար-տել իւրացն՝ դարձուցանել զամենեսեան զնոսա 'ի հայրենիսն : Իսկ 'ի բազմանալ քաղաքայնոցն 'ի լաւորերոյ անտի մերձա-կայ ընակչացն, զօրաժողով առնէր չորից հազարաց հետևակաց · և վարժեալ հրա-հանգեալ զնոսա՝ փոխանակ դեղարդանն 'ի գործ վարել զդայխոն երկոքումբք ձե-ռօք, և տանել վահան կալեալ ընդ ունկն և մի ընդ մանեակ, դարձաւ ապա 'ի դաս-տիարակութիւն պատանեացն՝ վարժել ըզ-նոսա 'ի դերահռչակեալն յայն հրահանգ՝ յորում և բազմօք գործակից գտաւ նմա յայնժամ Սփերոս : Եւ անդէն գեղե-ցիկս և 'ի ձեռն պատրաստէին կազմէին միանգամայն և ըմբշաց ասպարէզք և հաց-կերոյթք կոչնոց, և բազումք այն էին որ մտադիւրագոյնս յանձն առին զաղնուա-կանն զայն և զԼակոնացի զչափ կենացն, և նուազունք միայն առ 'ի հարկէ : Բայց նա և 'ի համբոյր զանուն միապետութեանն գործել, այլ քայ 'ի միասին ընդ իւր անուա-նէր զեղբայր իւր զԵւկլիդաս : Եւ այս ա-ռաջին նուագ կացին Սպարտացւոց թա-գաւորք երկու 'ի նմին զարմէ :

Ապա իրազգած եղեալ՝ զի Աքայեցիք և ինքնին Արատոս իբրև ձախողակի եդեալ զգործ փոփոխութեանն նորա զայնորիկ,

կարծէին չելանել նմա արտաքս 'ի Լակեդեմոնիոյ և չլքանել զքաղաքն այնպէս տարուբեր և տատան, մեծ համարեցաւ յայնժամ Կղէոմենէս և պիտանի եւս՝ հանդէս 'ի ներքս բերել իւրոց թշնամեաց զարութեան քաջութեան զիւրոյ զօրականին։ Ապա հրոս հանեալ 'ի վերայ Մեգաղօպօլսեցւոց, ժողովէր կուտէր աւարս շատ և յաղարտ մեծապէս վարէր զգաւառն: Եւ ապա առեալ և վարժապետս Ճարտարս զմրցանաց Դիոնիւսեայ եկեալ յայնժամ 'ի Մեսսենեայ. և կանգնեալ թատր 'ի սահմանի անդ թշնամեացն, և մրցանակ 'ի ներքս մատուցեալ քառասուն մնասից, ինքնին 'ի գնին նստէր մրցանացն զօրն ողջոյն. ոչ եթէ տեսարանացն այնոցիկ սիրող ինչ էր, այլ զի յանհարութին թշնամեացն արհամարհութեամբ ցուցցէ նոցա՝ եթէ և մեծապէս իսկ յանձնապաստան է վանել պարտել զնոսա: Եւ այն զի՝ սա այս Կղէոմենէս միայն յամենայն զօրունՀելլենացւոց և 'ի թագաւորան՝ զհետ իւր չածէր չտանէր ոչ միմոս ոչ ձեռնածուս և ոչ կաքաւիչ կանայս և ոչ վարձակս. այլ հեռի էր նա յամենայն յայսպիսի ցոփութենէ և յամենայն խեռութենէ և 'ի խըրախութեանց տօնախմբութեանց, պարապեցուցանելով բազում անգամ զպատանիս 'ի կրթանս, և զծերս՝ 'ի հրահանգել. և սփոփութիւնս կարգէր նոցա 'ի պարապել նոցա՝ զսովորական կատակն, և ասել իւրաքանչիւր յառ միմեանս կե-

նակցութեան նաղաքանութիւնս լակոնացիս ։ Իսկ զշահ օգտի որ 'ի նաղաքանութեանց սատի , արձանագրեալ է մեր 'ի վարսն Լիկուրգոսի ։

Արդ էր Կղէոմենէս ինքնին ամենեցուն վարդապետ , իբրև տիպ գեղեցիկ ժուժկալութեան 'ի ներքս մատուցանելով զիւրն պարզաքավարութիւն կենաց՝ զանպաճոյճ և զդուզնաքեայ՝ ոչինչ առաւել քան զոտականացն . որով և յԵլլադա մեծապէս յաջողեցաւ 'ի նաչատակութիւնսն ։ Քանզի յայնժամ որ միանգամ գնային առ այլս 'ի թագաւորաց, ո՛չ այնչափ ինչ հիացեալ կային ընդ փարթամութիւն գանձուց նոցա և ընդ հանդերձանս նոցա , որչափ ինչ զզուէին ատէին զգոռոզութիւն ամբարտաւանութե նոցա . այնչափ պերճս և անհամբոյրս վարէին նոքա առ մերձեցեալսն ։ Իսկ որք միանգամ գնային առ Կղէոմենէս՝ որ և ինքն թագաւոր էր և անուանէր , տեսեալ զի չէր նորա արկեալ զիւրեաւ ո՛չ ծիրանիս և ոչ վերարկուս շքեղս , և չէր նորա հանդերձանս բազմակատարս բազմոցաց և աթոռոց . և զի՝ և իրաւախօսէր և տայր ունկնդրութիւն ո՛չ դժուարաւ ինչ և հազիւ ուրեմն 'ի ձեռն բազմահոյլ բանբերից և դռնապանաց կամ 'ի ձեռն սնակաց գրոց , այլ ինքնին՝ հանդերձ զոտսկականի արկեալ՝ այնպէս ընդ առաջ գայր մարդկանն հիւրամեծարութեամբ ընդունել զնոսա . և կայր և խօսէր երկար զուարթս և սիրով՝ որոց միանգամ

պէտք ինչ էին առ 'ի նմանէ. առաւ վասն այսորիկ ըղձականք առ նա եղեալք համբաւէին իբրև միայն ճշմարիտ ճետ Հերակլեայ: Իսկ հանապազօրեայ ընթրիք նորա էր եռաքազմոց. սակաւապէտ յոյժ էր և լակոնացի. և թէ երբէք հիւրք էին նորա 'ի դեսպանաց անտի յօտարաց, յաւելոյր և բազմոցս երկուս այլ. և անդ պաշտօնէայքն յայնժամ մեծահաց պատրաստէին սեղան, ոչ եթէ 'ի համահամս ինչ կամ քաղցրաւենեօք, այլ առատ ևս գործելով զկերակուրսն և անուշակ մատուցանելով գինի: Եւ էր երբեմն՝ զի առեալ կշտամբեաց նա զմի ոք 'ի բարեկամացն, զի 'ի հացկերոյթ կոչեալ յօտարաց՝ եա առաջի նոցա զարգանակ զսեաւ և զՊլակինդի, զոր սովոր են նոքա առնուլ 'ի հասարակորդ հացկերոյթսն. և ասէր ցնա Կղէոմենէս՝ Չէ արժան 'ի դէպս յայդ այնչափ խստիւ լակոնանալ առ հիւրովքդ:

Իսկ 'ի բառնալ սեղանոյն՝ բերէին եռոտանի և 'ի վերայ խառնարան պղնձի լի գինեաւ և երկու այլ սկահք արծաթի ըստ չափու երկուց կոտիւղայից, և բաժակք ևս արծաթիք մանունք ընդել՝ որք կամէին, այլ երբէք բռնի չմատուցանէին բաժակ: Առ այս՝ չգոյր անդ և ախոփութիւն ինչ 'ի լուր ականջաց, և ոչ ըղձանային ևս այնմ. քանզի ինքնին նա կենակից խօսիւքն տանէր բերէր և զբօսեցուցանէր զգինեբրուսն. էր զի հարցանէր, և էր զի պատմէր ինչ մի, և չէին իսկ նորա բանք

տաղտուկք և լուրջք ամենևին, նա՛ չնոր- հարանք էին և զուարճախօսք: Վասնզի և որովք միանգամ այլք յորքայից յինքեանս յանկուցանէին զմարդիկ՝ կաշառաբեկ առ- նելով կամ պարգևաց խայծ մատուցանե- լով, նա զայնոսիկ առ անձնուէրս կալեալ և առ անխրատս, գիտէր իսկ ճարտար և յոյժ արժանի առն Թագաւորի՝ յինքն որ- սալ տանել զորեարն մտերիմ քաղաքավա- րութեամբ և նազելի խօսիւքն և անկեղ- ծութեամբն. որպէս զի և այր բարեկամ և այր վարձկան տարբերին իսկ ոչ, բայց զի առաջինդ յանկչի 'ի ձեռն գեղեցիկ բա- րոյցն և բանից, իսկ վերջինդ՝ 'ի ձեռն արծաթոյ:

Արդ առաջին յինքեանս զԿղէոմենէս ընձիւ ժողովեցին Մանտինեացիք, որ 'ի պահ գիշերոյն ապրդեալ մտեալ 'ի քաղաք անդր իւրեանց՝ վանեալ վարեցին զզօրսն Ա- քայեցւոց, և անձնատուր եղեն Կղէոմե- նեայ. իսկ նա անդէն զօրէնս նոցա և զքա- ղաքաւորութիւն նոցա դարձուցեալ առ նոսա, 'ի նմին իսկ աւուր խաղաց չոքաւ 'ի Տէգէա: Ապա յետ սակաւու՝ շուրջ յա- ծեալ զԱրկադեաւ, էջ 'ի կողմն Փերայ Աքայեցւոց. խնդրէր՝ կամ մարտ յարդա- րել ընդ Աքայեցիս կամ Թէ կշտամբանս 'ի վերայ կապել Արատոսի իբրև անարի վատացելոյ, որ այնպէս վերջոտնեալ՝ 'ի Թշնամեաց ձեռս լքանէր զդաւառն. քան- զի Թէպէտ և յայնժամ զօրավար Աքայե- ցւոցն էր ինքնին Իւպերբատաս, սակայն և

Արատոս տիրացեալ էր ամենայնին: Յայնժամ 'ի դուրս խաղացեալ Աքայեցւոց առհասարակ ամբոխին և բանակ հարեալ 'ի Գիւմէա մօտ յԵկատոմբէոն, չու 'ի վերայ նոցա առնէր Կղէոմենէս. բայց բանակ հարեալ ընդ Գիւմէա քաղաք Թշնամւոյն և ընդ բանակն Աքայեցւոց, Թուեցաւ իմն ձախողակ բանն. սակայն և արութեամբ քաջութեամբ ասպարէզ կարգաց նոցա և 'ի կռիւ մարտի խառնեաց զնոսա. և անդ նահատակեալ վանեալ և 'ի փախուստ ես զնոցա փաղանգն դարձուցեալ, զբազումս տապաստ արկանէր և զբազումս գերի վարէր: Անդուստ 'ի վերայ դիմեալ Լանգոնեայ, և անտի ես զԱքայեցւոց գունդն վանեալ՝ դարձուցանէր զքաղաքն առ Եղէացիս: Եւ այսպէս ապա վատթարեալ և նկուն Աքայեցւոցն եղեալ, յայնժամ Արատոս՝ որ սովորեալ իսկ էր յամենայն տարւոջ կալ զօրավար, հրաժեշտ տայր յիշխանութենէն, թէպէտ և Աքայեցիք հրաւիրանաւ աղաչէին զնա. և այնպէս նա անփառունակ՝ իբրու որ յանձնողաբելի մրրկի զբեղին յայլոց ձեռս թողոյր լքանէր. և զիշխանութիւնն՝ զոր նմա գըլխովին 'ի ներքս բերէին՝ առեալ այլոց ապըսպարեաց:

Ուստի և Աքայեցիք հրեշտակութիւնս առաքեալ առ Կղէոմենէս, Թուէր իմն զառաջինն պայմանս չափաւորս կռել նմա ընդ նոսա. ապա և ինքն արձակեալ առ նոսա դեսպանս՝ խնդրէր տալ նմա 'ի

ձեռս զզօրավարութիւնն, իբրու որ ոչ վասն այլ ինչ իրաց 'ի պայքար մտեալ էր ընդ նոսա. առ այս՝ և դարձուցանել առ նոսա զգերին, և որչափ ինչ 'ի վայրաց եհատ 'ի նոցանէ։ Իբրև Աքայեցիք յանձին կալան զհաշտութիւն պայմանացն, ապա հրաւէր կարդացին Կղէոմենեայ 'ի Լերնա՝ անդանօր խմբել եկեղեցի մեծ. այլ դէպ եղև Կղէոմենեայ 'ի խուճապ տագնապի յընթանալոյն՝ ըմպել տարաժամու ջուր, և արիւն շատ ժայթքել, որով և կորուսանէր զձայնն։ Սակայն դարձուցեալ ինքն առ Աքայեցիս զգերին՝ ականաւոր որեար, և յայլ օր զժողովն սահմանեալ՝ դառնայր 'ի Լակեդեմոն։

Եւ ապա այս արկած տապալեաց զիրսն Եղլադայ, որում և հասանէր իսկ յայնժամ ողի առնուլ 'ի չարեաց աղէտիցն, և ազատանալ 'ի խեռութենէ անտի Մակեդոնացւոցն և յընչաքաղցութենէն։ Քանզի յայնժամ Արատոս կամ զի խիթացեալ 'ի Կղէոմենեայ, կամ զի խանդացեալ զի այնպէս յանկարծ մեծապէս յաջողեցաւ այրն, և նախատինս անձին վարկուցեալ՝ զի յառաջադէմ ինքն գոլով յԵղլադա ամս երեսուն և երիս, նկուն ապա զնա արարեալ ոմն 'ի պատանեաց՝ զփառս և զզօրութիւնն կապտեսցէ 'ի նմանէն, տիրացեալ 'ի վերայ իրացն՝ զոր ինքնին Արատոս բարդուածեալ ժառանգէր հարուստ ժամանակ. Ապա յայնժամ զառաջինն գուն գործեաց Արատոս բուռն առնել Աքայե-

ցւոց. խոչ և խութ արկանէր պայմանացն. իբրև եւս զի անսաստեցին զարհուրեալք ՚ի քաջութենէն Կղէոմենեայ, և զի՝ և իրաւացի ևս կալան նոքա զխնդիր Լակեդեմոնացւոցն, որ ՚ի հայրենին յիւր կարգն խնդրէին հաստել զՊեղոպոննիսոս, ապա ՚ի գործ կրթեցաւ նա դժպատեհ առն հելլենացւոյ ՚ի մեծապէս անարգանս անձին իւրոյ և յոյժ անարժան գործելոց իւրոց նահատակութեանցն և քաղաքական հանդիսիցն: Քանզի հրաւէր կարդաց յԵլլադա Անտիգոնոսի, և մակեդոնացի որերով ելից զՊեղոպոննիսոս. Արատոս այն՝ որ տակաւին պատանի՝ ինքնին վարեալ վանեալ իսկ էր զնոսա ՚ի Պեղոպոննիսեայ, և յազատութի յանդորր եհան զԱկրոկորընթոս. այն՝ որ կասկածելի ևս գոյր և ոխերիմ արքայիցն ամենեցուն, և նմին Անտիգոնոսի ընդդէմ նա բիւրս զրուցեալ իսկ էր նախատինս, որպէս և է տեսանել ՚ի Յիշատակարանս նորա. յորս և պատմէ կիրս շատ կրել նմա և շատից ևս պատահել վտանգաց վասն Աթենացւոց՝ յազատել զքաղաքն ՚ի պահապան գնդէն և ՚ի Մակեդոնացւոց անտի:

Իսկ յայնժամ նոյն այր առեալ զնոսա ՚ի զէն ՚ի զարդ վառեալ մուծանէր ՚ի հայրենիսն և ՚ի տուն իւր, մինչև և ՚ի կանանոց անդր իւր: Յանձին չկալաւ՝ եթէ զանուն զզօրավարի զՍիկիւոնացւոց և զՏրիկացւոց տացէ Կղէոմենէս, այն՝ որ ՚ի զարմէն իսկ Հերակլեայ և թագաւոր Սպարտա-

ցւոց, խնդրէր զքաղաքականութիւն զիւ-
րոց հայրենեացն՝ իբրու ներդաշնակութիւն
վառեալ և խառնաձայն՝ առնուլ միւսան-
գամ և դաշնակել ՚ի քաղցրախառն յայն
և ՚ի Դորիկեան յօրէնս և ՚ի չափ կենաց
Լիկուրգեայ։ Եւ դարշեալ զզուեալ Ա-
րատոս զպալակինդին և զանպաճոյճ զայն վե-
րարկուն սպարտացի, և զջնջել հարստու-
թեանն և զդիւր աղքատութեանն և զխրա-
տամբերութիւնն, զոր և դատախազէր նա
ընդդէմ Կղէոմենեայ, առեալ զանձն և
ողջոյն զԱքայիա հպատակէր Թագին և
ծիրանւոյն և հրամանին Մակեդոնացւոց և
նոցուն նախարարաց, զի մի սպասարկու
երևեսցի լինել Կղէոմենեայ. և նստեալ
զոհէր զոհս՝ որոց և անուն կարգայր Ան-
տիգոնեանս. և պսակ բոլորեալ՝ երգ ա-
ռեալ նուագէր Պէյանս ՚ի պատիւ առնն՝
որ մաշարայիւ լուծեալն էր։ Եւ արձանա-
գրեմք աւադիկ զայնոսիկ, ոչ եթէ ամբաս-
տան ինչ կամք վասն Արատեայ, (քանզի
և ՚ի շատ ինչ իրս երևեցաւ այրն արժանի
Ելլադայ և մեծ անշուշտ), սակայն ախ-
տակից տկարութեան լինիմք մարդկան բը-
նութեանն, որ և ոչ ՚ի բարսն անդամ ար-
դոյս և առաքինիս երբէք բնաւորեցաւ գեղ
՚ի ներքս բերել անտխեղծ։

Արդ գնացեալ Աքայեցւոց յԱրգոս՝
միւսանգամ խմբել ՚ի ժողով, էջ և Կղէո-
մենէս անդր ՚ի Տեգեայ. և յայնժամ մեծա-
պէս ակն ունէին մարդիկն հաստատութե̄
խաղաղութեանն։ Այլ Արատոս որ և միա-

բանեալ իսկ էր ընդ Անտիգոնեայ 'ի մեծամեծս ևս, զանգիտեալ եթէ կամագիւտ երբէք լինիցի Կղէոմենէս, ամօք բանիւք յինքն զխուժանն յանդուցեալ, կամ բուռն ևս նոցա արարեալ, խնդրէր ինքնին միայնակ մտանել 'ի քաղաք անդր, առեալ յաներկևանութիւն անձինն պատանդս երեքհարիւր. կամ թէ յառաջ խաղացեալ ինքն զօրու հանդերձ մինչև յըմբշարանն Կիւլլարաբեան՝ որ արտաքոյ, անդանօր խօսեսցի վասն հաշտութեանն: Լուր առեալ զայսօրիկ Կղէոմենեայ, ասէր անիրաւութիւն կրել. քանզի պարտ իսկ էր նոցա՝ ասէր՝ անդէն 'ի սկզբանն իրազեկ զինքն առնել. և մի այնպէս ապա խիթալ 'ի նմանէ և զգուշել զնա՝ յորժամ առ դուրս նոցա հասեալ կայր. և գրեալ նամականի վասն այսօրիկ առ Աքայեցիս, և շատ ինչ ամբաստան եղեալ զԱրատեայ, իսկ անդուստ և Արատոս թշնամանս բազում ասացեալ ընդդէմ նորա առ խուժանին, ապա Կղէոմենեայ վաղվաղակի ժողովեալ զխորանսն՝ քարոզ արձակէր ազդ Աքայեցւոց առնել զմարտի պատերազմի ո՛չ յԱրգոս, այլ յԵգիոս, ըստ որում ասէ ինքնին Արատոս, առ 'ի հասանել որսալ զնոսա յանպատրաստից:

Յայնժամ անհնարին յուզեցաւ աղմուկ յԱքայեցիս և անդ քաղաքք պատրաստեալք իսկ էին 'ի փոարանջել. քանզի ռամիկք ակնկալեալ մնային բաշխից գետնոյն և ջնջելոյ պարտուցն, իսկ ձոխքն ոչ

ինչ հանդուրժէին ընդ Արատոս. ընդ որում և սրամտեալ իսկ էին կէսք 'ի Նոցանէն զի առեալ ձգեաց զՄակեդոնացիս 'ի Պեղոպոննիսոս: Որ աղագաւ մեծ ևս քաջալերեալ Կղէոմենէս հորդան տայր յԱքայիա, և 'ի վերայ անկեալ յեղակարծումն՝ առաջին ունէր զՊելլենէ. և տանէր անտի հալածական զգունդ զօրականին և զԱքայեցիս. ապա ընդ ձեռամբ նուաճէր և զՓենէոն և զՊենտէլէոն: Զանգիտեալ Աքայեցւոց եթէ դաւ ինչ գործեսցի 'ի Կորնթոս և 'ի Սիկիոն, առեալ արձակէին յԱրգոսայ յերկուս քաղաքսն զայրուձին և զեկս զօրականին 'ի պահ զգուշութեան. և ինքեանք իջեալ յԱրգոս կատարել ըզհանդէս զՆեմեան մրցանացն, ակն ունէր յայնժամ Կղէոմենէս (որ և կատարեցաւ իսկ) սաստիկ ևս արհաւրօք և խռովութեամբ լնուլ զքաղաքն յանկարծակի յեղակարծումն դռոյթս տալով, մինչդեռ յայնժամ բազմաժողով էր քաղաքն 'ի հանդէս տօնին և 'ի զնին մրցանացն. ուստի և գիշերային առեալ խաղացոյց զզօրն մօտ 'ի պատուարսն, և կալեալ զվայրն անուն Ասպիդէ 'ի վերայ Թատրոնին՝ վայր անխաբ և անկասկածելի, այնչափ իմն ահ խուժանին արկանէր, զի և ընդդէմ դարձաւ 'ի Նոցանէն և ոչ ոք. այլ առեալք ժողովեալք զգունդ պահապանացն և պատանդս ևս տուեալ քսան 'ի քաղաքայնոցն, և նիզակակիցք ևս լինէին Լակեդեմոնացւոցն ընդ ձեռամբ նորա:

Յայսմանէ ապա հռչակ հարաւ ո՛չ սակաւ՝ փառաց և զօրութեանն Կղէոմենեայ։ Քանզի և ո՛չ հինքն 'ի Թագաւորս Լակեդեմոնացւոց՝ Թէպէտ և բիւրապատիկ հընարիմացք եղեն՝ ոչինչ կարացին հաստատուն ընդ իւրեանց ձեռամբ ունել զԱրգոս. առ այս՝ և ինքնին Պիւռոս քաջափորձ սաստիկ յամենայն զօրավարս բանակի՝ մխեալ քաջութեամբ յայս քաղաք՝ ոչ ինչ կարաց պահել զնա. ինքն անդանօր տապաստ անկաւ և բազումք 'ի զօրաց նորա անդ 'ի սուր մաշեցան։ Ոյր աղագաւ և սքանչացան յայնժամ ընդ արութիւն և ընդ իմաստութիւն Կղէոմենեայ. և որք յառաջին ունէին զնովաւ առնէին, զի ասէր նմանութիւն յանձին բերել զՍողոնի և զԼիկուրգեայ 'ի հաւասարութեան գոյից, ապա յայնժամ ողջ խելամուտ եղեն, եթէ նա ինքնին գլխովին պատճառք եկաց փոփոխութեանն Լակեդեմոնացւոց։ Քանզի և էին իսկ նոքա յառաջագոյն այնչափ նկունք և 'ի պաշտպանութիւն իւրեանց անգամ անբաւականք, զի և հրոս երբեմն տուեալ Ետողացւոց 'ի Լակոնիա, առին վարեցին անտի գերի ոգիս բիւրս հինգ. յոյր սակս պատմեն՝ ասել յայնժամ ծերունւոյ ուրումն Սպարտացւոյ, եթէ՝ Օգուտ գործեցին Թշնամիք՝ Թեթեւացուցանել այնպէս զԼակոնիա։ Իսկ սուղ 'ի վերայ անցեալ ժամանակ, անդէն իբրև 'ի հայրենին իւրեանց հաստատեցան կարգ Սպարտացիք, և գամ մի զհետս կոխեցին

զառաջին իւրեանց հրահանգացն, իբրու եթէ Լիկուրգոս ինքնին անշուշտ մերձ անդ կացեալ իցէ և 'ի գործն ինքնին նիզակակից մտեալ իցէ, այնպէս գեղեցիկս նոքա 'ի ներքս ընծայեցուցին զիւրեանց քաջութիւնն և զառ զօրավարսն հնազանդութիւն, և վերստին զԼակեդեմոնիա տիրացուցին Ելլադայ և անդրէն զբռամբ ածին զՊեղոպոննիսոս:

Արդ իբրև առաւ Արգոս, և ըստ նմանէ անձնատուր Կղէոմենեայ լինէին Կղէովնէ և Փլիունտէ, յայնժամ Արատոս՝ որ դեգերեալ 'ի Կորնթոս՝ անդանօր հանդէս կարգէր քննութեան 'ի վերայ կարծեցելոցն կուսակցաց Լակոնացւոց, լուր առեալ զայսոցիկ՝ սրտաբեկ միջաբեկ լինէր. և 'ի վերայ ևս հասեալ հակամիտելոյ քաղաքին 'ի Կղէոմենէս, և զի՝ և Աքայեցիք խնդրէին գնալ 'ի բաց, 'ի խորհուրդ զքաղաքացիսն խմբէր և ինքն զանխուլ գաղտագնաց զերծանէր մինչև 'ի դուռն քաղաքին, և յերիվար աշտանակեալ փախչէր 'ի Սիկիւոն: Ապա այր զարամբ ելեալ Կորնթացւոց տանել զլոյց առ Կղէոմենէս, պատմէ իսկ ինքն Արատոս՝ եթէ պայթեցան ամենայն երիվարք. և թէ՝ Կղէոմենէս սաստիւ կշտամբէր զԿորնթացիսն՝ զի ոչ ձերբակալ արարին զԱրատոս, և թոյլ ետուն նմա փախչել: Սակայն և դարձեալ գրէ իսկ ինքն, եթէ արձակեալ առ նա Կղէոմենէս զՄեգխատոն՝ խնդրէր 'ի նմանէ տալ նմա 'ի ձեռս զԱկրոկորնթոս՝ ուր

գունդ կայր Աքայեցւոց, և 'ի ներքս վասն այնորիկ մատուցանէր նմա արծաթ բազում. և թէ՝ պատասխանի ինքն առնէր, ոչ իւրացն կախեալ կալ զնմանէ, այլ մանաւանդ ինքն՝ զիւրացն: Զայսոսիկ գրեաց ինքնին Արատոս:

Բայց Կղէոմենէս հրաժարեալ յԱրգոսէ, և 'ի բարեկամութիւն ընդ իւր հաստեալ զՏրիզինացիս և զԵպիդաւրացիս և զԵրմէոնացիս, չոգաւ ապա 'ի Կորնթոս. և անդ Աքայեցւոցն պինդ կալեալ զդղեակն՝ նա պատնէշ փակէր զնովաւ: Ապա առաքեալ կոչէր զբարեկամս և զոստիկանս զԱրատեայ, պատուէր տայր նոցա պահել զգուշութեամբ և տնտեսել զտուն և զգոյս նորա, և առեալ արձակէր ևս առ նա զՏրիտիմալոս Մեսսենացի ածել ամոքել զնա՝ զի 'ի միասին ընդ Սպարտացւոց կայցեն Աքայեցիք պահապան Ակրոկորնթոսին. և խոստումն ևս կռէր Արատոսի առանձինն տալ թոշակ կրկին ևս առաւել քան զառեալն յԱրքայէն Պտղոմեայ: Իբրև Արատոս ոչինչ անսաց, նա՝ և դարձուցանէր առ Անտիգոնոս զորդի նորա հանդերձ այլովք պատանդիւքն, և զԱքայեցիս ևս գրգռեաց վճիռ հատանել՝ տալ Անտիգոնոսի 'ի ձեռս զԱկրոկորնթոս, յայնժամ Կղէոմենէս հորդան տուեալ 'ի Սիկիւոնն, յաղարտ վարէր. և 'ի պարգևի մասին գրաւականէր անձին և զգոյսն Արատոսի՝ ըստ վճռոյն Կորնթացւոց:

Բայց 'ի ժամանակին յայնմիկ Անտիգո-

նոս հասեալ կալեալ զօրու ծանու զլեառն Գերանիա, խորհուրդ 'ի դէպ խորհեցաւ Կղէոմենէս պահ զգուշութեան ունել ոչ կրճին՝ այլ լերանցն Ոնէանց, և անդ կանգնել պատնէշս և պատուարս. և քան 'ի դիւրի ճակատամարտիւ ընդդէմ քաղա-մարտիկ փաղանգին, առաւել ևս 'ի վայրն յայնոսիկ մարտ եդեալ կռուեալ նուաճել այնպէս զՄակեդոնացին: 'Ի հնարիմացութիւն յայս քաջացեալ Կղէոմենեայ, 'ի տագնապ տարակուսի առեալ պաշարեաց զԱնտիգոնոս. քանզի և ոչ ամբարք բաւականք էին նորա, դարձեալ և ոչ հեշտին ինչ էր վանել զանցսն՝ ուր դարեալ կայր Կղէոմենէս: Ապա կազմեցաւ պատրաստեցաւ գիշերայն յառաջամուխ լինել 'ի վայր ընդ կողմն Լէքէոսի. բայց յետս ընկրկեալ՝ կորուսանէր ևս 'ի զօրաց իւրոց: Ուստի և Կղէոմենէս ուժգին խրախուսեալ, անդ և զօրականն առ 'ի յաղթութեն մեծապէս քաջալերեալք դարձան յընթրիս:

Իսկ անդուստ Անտիգոնոս սրտաթափեալ, շտապէր խորհուրդս 'ի մէջ առնուլ դժնդակս: Քանզի խորհէր խաղացուցանել զզօրն 'ի հրուանդան անդր Երեայ, և ընդ այն անցուցանել նաւուք 'ի Սիկիոնն, որում և երկայն ժամանակաց պէտք էին և ոչ դուզնաքեայ ինչ հանդերձանաց: Իբրև երեկուն լինէր, եկեալ ընդ ծով հասանէին առ նա յԱրգոսէ բարեկամք Արատոսի կոչել զնա. այդ առնէին

եթէ նշկահեցին Արգոսացիք զԿղէոմենէս։ Եւ էր պարագլուխ ապստամբութե̃ն Արիստոտէլ, որ և աշխատեցաւ ոչինչ նա 'ի հրապուրել զխուժանն. զի և սրտմտեալ իսկ էին նոքա ընդ Կղէոմենէս, զի 'ի գլուխ չեհան զակնկալեալն նոցա զջնջել պարտուցն։ Ապա Արատոս առեալ յԱնտիգոնեայ հազար և հինգհարիւր զօրական, նաւեաց յԵպիդաւրոս։ Բայց Արիստոտէլ ոչինչ մնաց նմա, առեալ ընդ իւր զքաղաքացիսն յարձակեցաւ 'ի վերայ պահապանաց դղեկին. և գայր նմա յայնժամ 'ի Թիկունս 'ի Սիկիւոնէ Տիմոքսենոս հանդերձ Աքայեցւովք։

Լուր առեալ զայսոցիկ Կղէոմենէս յերկրորդ պահու անդ գիշերոյն, առաքեալ վաղվաղակի կոչէր զՄեգիստոն, և զայրագին լի՛ ցասմամբ հրամայէր նմա խաղալ ձեպով յԱրգոս 'ի Թիկունս զօրականին. քանզի և այս Մեգիստոն յաւէտ իմն ապահովեալ էր զնա 'ի վերայ հաւատարմութեան Արգոսացւոցն, և չէր իսկ նմա թողացուցեալ վարել անտի արտաքս զկասկածելի մարդիկն։ Ապա առեալ արձակէր զՄեգիստոն անդր երկու հազար զօրականօք, և ինքն զտեղի առեալ ուշ ունէր Անտիգոնեայ, և քաջալերէր զԿորնթացիսն և ասէր զպատահարն զայն զԱրգոսի ոչինչ այնպէս մեծ, և աղմուկ յուզեալ անդր դուզնաքեայ 'ի սակաւուց ոմանց։ Բայց իբրև Մեգիստոն մարտ եդեալ յԱրգոս՝ տապաստ անկաւ. և անդանօր դունդ Լա-

կեդեմոնացւոցն յոգնս ապաստան կայր, և գուժկանք խիտ առ խիտ հասանէին առ Կղէոմենէս, երկեաւ եթէ Թշնամեացն տիրացեալ Արգոսի և զանցան փակեալ, աւար ապա յանդորրու հարցեն զԼակոնիա և պաշարումն ածցեն Սպարտիոյ յամայութեան նորա. չու հրամայէր զօրուն 'ի Կորնթոսէ և այնպէս վաղվաղակի 'ի ձեռաց զքաղաքն հանէր, քանզի մտեալ անդր Անտիգոնոս՝ կարգեաց 'ի նմա պահապանս:

Իսկ Կղէոմենէս մօտ հասեալ 'ի պարիսպն Արգոսի, ածէր խմբէր զզօրականն, և պատրաստէր կազմէր մտանել 'ի ներքս հրոսակաւ ընդ պատուարսն. իբրև ո՛չ յաջողեցաւ նմա այն, ապա քանդեալ զկամարակապսն՝ որ 'ի ներքոյ Ասպիդեայ, ընդ այն կողմն հորդան ետ 'ի վեր, և չոքաւ խմբեցաւ ընդ իւրոցն որ անդ 'ի դիմի հարեալ կային Աքայեցւոց. և սանդուղս ևս կանգնեալ տիրանայր և այլոց վայրացն 'ի ներքս, և 'ի բաց փարատէր 'ի փողոցացն զԹշնամիս՝ հրաման տուեալ Կրետացւոցն նետաձիգ լինել: Բայց իբրև անդուստ յակն արկանէր զԱնտիգոնոս իջանել փաղանգաւ 'ի կատարից անտի 'ի դիւր անդր, և զի և այրուձին ևս արշաւեալ գայր մտանէր 'ի ներքս, ապա յուսաբեկ Կղէոմենէս պահել զքաղաքն, խմբեալ զիւրսն՝ իջանէր 'ի վայր յանդորրու և վերջոտնեալ տեղի տայր առ պատուարաւն: Եւ այսպէս ապա 'ի սուղ ժամանակի մեծամեծս նահատակեալ Կղէոմենէս, և գոգ 'ի միում միայն

արշաւանին տիրացեալ ողջոյն Պեղոպոննիսոյ, ապա և արագ արագ փոխեալ գտանէր յամենայնէն միանգամայն: Քանզի և 'ի նիզակակցաց անտի նորա կէսք լքին թողին զնա վաղվաղակի. և կէսք դարձեալ յետ սակաւու 'ի ձեռս տային Անտիգոնեայ զքաղաքսն՝ որ յանձն եղեալ էին նոցա:

Յայս սահման հասեալ նորա յուրում արշաւանին և ածեալ յետս զզօրն, յայնժամ ընդ երեկս գային ժամանէին նմա մօտ 'ի Տեգեա բօթաբերք 'ի Լակեդեմոնիոյ, ուր և ոչինչ պակաս քան զնորոգ աղէտսն յոգւի խոցեցաւ նա. քանզի գոյժ նմա բերէին զմահու կնոջն, յոյր սակս նա և 'ի յաջողութեան անգամ հոյակապ նահատակութեանցն ստիպէր ստէպ ստէպ յառնել իջանել 'ի Սպարտիա. այնչափ իմն տարփալի և արգոյ էր նմա Ագիատիդէ: Ուստի և կարի յոյժ 'ի խոր խոցեցաւ Կղէոմենէս՝ ըստ որում և 'ի դէպ առն պատանւոյ, որ յայնպիսի չքնաղագեղ և 'ի պարկեշտ ամուսնոյն փոխեալ գտանիցի: Համայն և այնպէս՝ առ ցաւս սրտին ոչինչ թողացաւ 'ի քաջալերութենէ ոգւոյն և 'ի մեծութենէն. այլ անդրժելի միանգամայն պահեալ և զբարբառ ձայնին և զպերճութիւն անձինն և զկերպարան դիմաց պատկերին, այնպէս հրաման 'ի ներքս բերէր զօրավարացն և խնամ ածէր անդորրութեան Տեգէացւոց: Եւ ապա յաւուրն երկրորդի վաղ քաջ ընդ առաւօտն իջեալ 'ի Լակեդեմոնիա, և անդանօր վայր

մի առ տնէն կոծ եղեալ 'ի միասին ընդ մօրն և ընդ զաւակացն, անդրէն միւսանգամ դառնայր 'ի հասարակաց նախատակութիւնսն :

Բայց յետ այսորիկ իբրև Պտղոմէոս արքայ Եգիպտոսի զօրավիգն նմա խոստացաւ, և խնդրէր ևս 'ի նմանէ 'ի պատանդ զորդիս նորա և զմայրն, նա հարուստ մի ժամանակ խորշեցաւ՝ 'ի վեր մօրն հանել զբանն, և 'ի ստէպ յայց ելանել նմա՝ այն ինչ կամէր խօսել ընդ նմա և ոչինչ համարձակեալ լռէր. որպէս զի և կասկածեալ ինչ մօրն, հարցանէր զբարեկամս նորա, եթէ իցէ՞ ինչ մի Կղէոմենեայ ասել առ նա, զոր ոչն համարձակեսցի զրուցել: Ուստի և ապա ուրեմն ոգի առեալ Կղէոմենէս և 'ի վեր հանեալ մօրն զամենայն, նա շատ ինչ յայնժամ ծիծաղեալ, ասէր. "Ա՞յս ուրեմն էր զոր ստէպ դու պատրաստեցար մեզ ասել, և ո՛չ ժտեցար: Եւ հի՞մ ապա ո՛չ վաղվաղակի ամբարձեալ դու զմեզ 'ի նաւ, ո՛չ արձակես՝ ուր գիտես պիտանացու Սպարտիոյ լինել մարմնոյս այսմիկ, մինչև սա աստ նստեալ առ 'ի ծերութենէն լուծեալ իցէ": Ապա կազմ յարդարեալ զամենայնն՝ չոգան հետի մինչև 'ի Տենարոս հանդերձ վառելովք: Անդանօր հանդերձեալ Կրատեսիկլեա մտանել 'ի նաւ, առեալ զԿղէոմենէս միայնակ ածէր 'ի տաճար անդր Պոսիդոնի, և գիրկս ածեալ նմա և համբուրեալ զնա, իբրև թաղծագին յոյժ և սրտառուչ ետես զնա, ասէ. "Ա՛ղէ

դու ո՛վ արքայդ Լակեդեմոնիայւոց, մի՛ ոք յելս մեր աստի տեսցէ զմեզ յարտասուս և յինչ մի անարժան Սպարտիոյ: Այս միայն աւանդիկ է 'ի մերում իշխանութե՟. իսկ բնաւ իսկ դէպք իրացն են՝ որպէս և տացէ Աստուած,,: Զայս ասաց և զկերպարան դիմացն պարզէր, և հետեւեալ 'ի նաւ անդր հանդերձ մատաղ մանկամբն, հրաման տայր նաւապետին անդէն ուղւոյ լինել:

Հասեալ ապա յԵգիպտոս, իբրև լուաւ զՊտղոմեայ ընդունել հրեշտակութիւն յԱնտիգոնոսէ և բանադնաց ընդ նմա լինել, լուր ևս էառ՝ եթէ Կղէոմենէս հրաւէր յԱքայեցւոց առեալ 'ի բանս հաշտութեան, 'ի պատճառս իւր ոչինչ համարձակէր նա վախճան առնել մարտին աւանց կամացն Պտղոմեայ, ապա առեալ գրէր առ նա մայրն՝ գործել որ ինչ միանգամ Սպարտիոյ 'ի փառս իցէ և 'ի շահ օգտին, և 'ի Պտղոմեայ մի՛ ինչ զանգիտել վասն պառաւոյ միոյ և մանկան տղայոյ: Այսպիսի ուրեմն՝ ասեն՝ նահատակել կընոջն այնմիկ 'ի դէպսն բախտին:

Իսկ Անտիգոնոս յայնժամ տիրացեալ Տեգեայ և աւար հարեալ զՈրքոմենոն և զՄանտինէա, անդուստ Կղէոմենէս տեղի տուեալ և ամփոփեալ միայն 'ի Լակոնիա, յազատութիւն գրէր առհասարակ զհիլոտս՝ որ միանգամ փրկանս տուին՝ մնասս հինգ ատտիկեցիս: Յայսմանէ նա տաղանդս կուտեալ հինգ հարիւր, և արս երկու հազար

'ի զէն 'ի զարդ վառեալ ըստ օրինի Մակե-դոնացւոց 'ի դիմի հարկանել Լեւկասպի-տեանցն Անտիգոնոսի, այս է՝ Սպիտակա-սպարեանցն, եւ 'ի մտի նախատակութիւն մեծ 'ի ներքս բերել՝ որում և ակն ոք եր-բէք ո՛չ ունէր։

Էր Մեգաղօպօլիս յայնժամ առանձինն ոչինչ խոնարհագոյն և նուազեալ յամրու-թեան քան զԼակեդեմոնիա· առ այս՝ զի և զօրավիգն ունէր նա յԱքայեցւոց և յԱնտիգոնոսէ, որ առ երի նորա բանակ հարեալ նստէր, և թուէր իմն անդանօր հրաւիրեալ նա յԱքայեցւոց անտի յա-ւէտ իմն վեր 'ի վայր գործել զՄեգաղօ-պօլսեցիս։ Ապա խորհուրդ 'ի մտի եդեալ Կղէոմենեայ զքաղաք զայս յապուրակել յափշտակել, (քանզի և անուն չի՛ք այլ ա-ռաւել ճահաւորակի՝ շուտափոյթ և ան-կարծելի գործոյն այնորիկ)· հա՛պա հրաման տայր զօրականին կերակուր բառնալ զհըն-գից աւուրց· և արտաքս ածել խաղացուցա-նէր զզօրն 'ի Սելլասիա, իբրև հորդան տալ ասպատակել զգաւառն Արգոլիկեան· այլ իջեալ անտի 'ի սահման Մեգաղօպօլսոյ և ճաշ տուեալ զօրուն մօտ 'ի Հռետիոն, դէմ եդեալ անդէն խաղայր 'ի քաղաք անդր ընդ կողմն Եղիկունտեայ։ Իբրև ոչինչ կա-րի հեռի, արձակէր յառաջոյ զՊանտէոս հանդերձ երկու Լակեդեմոնացի գնդօք, հրաման տայր հասանել ունել զվայրն ընդ-մէջ երկուց աշտարակաց· զի և լուեալ իսկ էր զայն կողմն պարսպին լքեալ ամայի 'ի

Մեգաղոպօլսեցւոց. և ինքն հանդերձ մնացելով զօրուն տակաւ զհետ խաղայր:

Իսկ Պանտէոս անպահապան ոչ զվայրն զայն միայն գտեալ, այլ և հարուստ ևս միջոց 'ի պարսպէ անտի, և ձեռն 'ի գործ՝ կէս ատակեալ և կէս մի խռուեալ, և սպանեալ զոր և միանգամ գտանէր 'ի պարեկացն, անդուստ 'ի վերայ հասեալ Կղէոմենէս մտանէր 'ի ներքս հանդերձ ամբոխիւն՝ մինչչև իմացեալ ինչ քաղաքացեացն: Անդադան ուրեմն իրազեկ նոցա եղեալ իւրեանց աղէտին, կէսք 'ի փախուստ խուճապէին առեալք ընդ իւրեանս 'ի գոյից որ միանգամ 'ի ձեռս անկաւ, և կէսք դարձեալ վառեալք և 'ի դիմի հարեալք թշնամեացն, ոչինչ կարացին ընկրկել զնոսա, սակայն և ժամ ետուն պարապոյ փախըստէիցն չուել յանդորրու. զի և մնացին իսկ ոչ 'ի քաղաքին աւելի քան զհազար, իսկ այլք առհասարակ հանդերձ որդւովք և կանամբք անձապարեալք անկան 'ի Մեսսենէ. դարձեալ և 'ի մարտկաց անտի յայնժամ բազումք ապրեցան և նուազունք յոյժ ձերբակալ լինէին. յորս և Լիսանդրիդաս և Թէարիդաս այրք հոյակապք և ճոխք առաւել քան զամենայն Մեգաղօպօլսեցիս. ուստի և արագ արագ զօրականք առեալ ածէին զնոսա առ Կղէոմենէս:

Իսկ անդուստ Լիսանդրիդաս 'ի հեռաստանէ տեսեալ զԿղէոմենէս՝ ձայն բարձեալ ասէր. « Արդ է քեզ ո՞վ արքայ Լակեդեմոնացւոց՝ փառաւոր յոյժ յարդա֊

ըել զքեզ գեղեցիկ եւ նահատակութեամբ՝ քան զոր այժմդ նահատակեցար, յոյժ արժանի առն թագաւորի,,: Իսկ Կղէոմենէս մտաբերեալ 'ի խնդիրն՝ ասէր. "Եւ զի՞նչ ապա կամիցիս ով Լիսանդրիդաս: Մի՞ արդեօք ասես դու ինձ դարձուցանել առ ձեզ զքաղաքդ": Ասէ Լիսանդրիդաս. "Դա՛ զդոյն ասեմ. և խորհուրդ քեզ տամ մի՛ զմեծդ զայդ քանդել քաղաք, այլ լնուլ զդա արամբք բարեկամօք և նիզակակցօք՝ որ հաւատարիմ կացցեն քեզ և անդրժելիք. տուեալ քո անդրէն Մեգաղոպոլսեցւոց զնոցուն հայրենիս, և ըղ-քեզ լինելին փրկիչ յարդարեալ բազմահոյլ ժողովրդոց,,: Կղէոմենէս վայր մի լուռ կացեալ՝ պատասխանի առնէր. "Դժընդակ արդեօք իցէ վստահ լինել 'ի բանիդ: Սակայն և առ մեզ ցանդ յաղթական եղցէ փառաւորն՝ քան օգտակարն,,:

Ասաց և անդէն զնոյն այրն առեալ արձակէր 'ի Մեսսենէ հանդերձ քարոզիւ միով՝ գխոռւն զՄեգաղոպոլսեցիս առնել՝ զի դարձուցանէ առ նոսա զքաղաքն, միայն եթէ 'ի բաց կացեալ յԱքայեցւոց՝ և նիզակակիցք լինիցին նորա և բարեկամք: Թէպէտ և այնպէս մարդասէր և համբոյր էր խնդիրն Կղէոմենեայ, ոչինչ թողացոյց Փիլոպիմէն դրժել ուխտին որ ընդ Աքայեցիս. այլ և բամբասեալ եւ զԿղէոմենէս ասէր՝ եթէ փոխանակ զքաղաքն դարձուցանելոյ խնդրէ դա և զքաղաքացիս գլխովին 'ի բուին ունել. և այնպէս ապա զԹէա-

րիդաս և զՂիսանդրիդաս վարեաց արտաքս 'ի Մեսսենեայ։ Սա այս է Փիլոպիմէն՝ որ բարձերէց ապա գտաւ 'ի մէջ Աքայեցւոց և առաւելագունին մասին վիճակեցաւ փառաց 'ի մէջ Հելլենացւոց. ըստ որում և մասնաւոր արձանագրեալ իսկ է մեր 'ի վարս նորա ։

Իբրև զոյց զայն բերին Կղէոմենեայ, որ այնպէս ողջ անարատ պահեաց զքաղաքն՝ զի և ինչ մի դուզնաքեայ ոչ խորեաց ոք 'ի քաղաքէն, յայնժամ 'ի սրտմտութի բարկութեան բրդեալ՝ աւար հարեալ կապուտ կողոպուտ թողոյր զնա, և զանդրիս նորա և զնկարսն առեալ արձակէր 'ի Սպարտիա։ Ապա և բաղում ինչ և մեծամեծս 'ի կողմանց քաղաքին հիմն 'ի վեր տապալեալ, չու արարեալ դառնայր 'ի տուն՝ զանգիտեալ յԱնտիգոնոսէ և յԱքայեցւոց։ Այլ նոքա գործեցին և ոչինչ. քանզի և պարապեալք յայնժամ յԷգիոն 'ի ժողով խմբեալ կային ։ Եւ անդանօր իբրև 'ի վեր 'ի բեմն ելեալ Արատոս՝ կայր հարուստ մի ժամ յարտասուս հատեալ՝ քղամիդ ածեալ զերեսօքն, և առհասարակ յայնժամ յապուշ կրթեալ ստիպէին զնա խօսել, նա անդէն գոյժ տայր նոցա զաւերածոյն Մեգաղօպօլսոյ 'ի Կղէոմենեայ, և անդէն արագ լուծանէր ժողովն. և յապուշ հարկանէին Աքայեցիք 'ի լուր արագավախճան և մեծ աղէտիցն ։

Եւ Թէպէտ և Անտիգոնոս կազմեցաւ պատրաստեցաւ զօրավիգն տալ քաղաքին,

զօրք նորա յամբընթացք եղեալ 'ի ձմերոցաց իւրեանց, հրաման տայր նոցա նստել դադարել անդէն. և ինքն անցեալ գնայր յԱրգոս առեալ ընդ իւր զօրականն ոչ բազում։ Որ աղագաւ և զերկրորդ շահաւականութիւն իւր Կղէոմենէս՝ թէպէտ և յանդուգն կարծեալ և մոլեգին, բազում համեմատով և խոհեմութեամբ 'ի ներքս եբեր՝ որպէս Պոլիւբիոս ասէ։

Քանզի գիտելով չափ Կղէոմենեայ՝ որպէս ասէ նոյն այր՝ եթէ ցիրուցան Մակեդոնացիք 'ի ձմերոցս կային 'ի քաղաքս, և զի և Անտիգոնոս 'ի ձմերոցին էր յԱրգոս հանդերձ բարեկամօքն և սակաւաձեռն վարձկանօք, հորդան եա 'ի գաւառն Արգիա. զմտաւ ածէր կամ 'ի պարտութիւն զԱնտիգոնոս մատնել՝ եթէ երբէք առ ամօթոյն դրդեսցի 'ի կռիւն, կամ թէ 'ի խուսելն՝ խոտան զնա առ Աքայեցւոցն կարգել, որ և եղև իսկ։ Քանզի յաղարտ վարեալ նորա զգաւառն, և հանեալ տարեալ 'ի բաց զամենայնն, չհանդուրժեալ Արգոսացւոցն՝ եկեալ խռնեալ առ դուրս արքային բողոք բառնային. բռնադատէին կամ մարտ դնել կռուել կամ թէ 'ի ձեռս զզօրավարութիւնն տալ առն լաւագունի քան զինքն։

Բայց Անտիգոնոս զմտաւ ածեալ (որպէս և 'ի դէպ իսկ համեմարեղ զօրավարի), եթէ նախատինք՝ ոչ բամբասանքն իցեն յարտաքնոց անտի, այլ 'ի տարաժամս ոչ ինչ անքոյթ դիմագրաւ 'ի վտանգն լինել,

կայր մնայր. 'ի ներքս անդ՝ անդրդուելի 'ի խորհրդեանն: Իսկ Կղէոմենէս յառաջամուխ մինչև 'ի պատուարսն, հարկանէր աւերէր աներկիւղ զամենայն և գնայր 'ի բաց: Բայց ապա յետ սակաւուց լուր առեալ զԱնտիգոնեայ չուոյն միաւանգամ մինչև 'ի Տեգէա՝ իբրու անդուստ հորդան տալ 'ի Լակոնիա, խմբեաց ձեպ ընդ ձեպ զզօրն և չու արարեալ ընդ այլ ճանապարհ խուսել յերեսաց Անտիգոնեայ, 'ի ծագել առաւօտուն եկեալ եհաս 'ի քաղաք անդր Արգոսացւոց. աւերէր եղծանէր զդաշտավայրն, և զարմտիս կոտէր հնձէր՝ ոչ ըստ այլոց օրինակին՝ գերանդեօք և սրովք, այլ հարեալ երկայն ձողիւք 'ի ձև սուսերի. և այնպէս իբրև հեշտին զբօսանօք 'ի խաղալ անդ իւրեանց տապաստ հարեալ վատթարեցին միանգամայն զամենայն զհունձսն: Իբրև եկին հասին յոմբշարանն Կիլլաբարեան՝ կամէին հուր հարկանել, այլ թոյլ չետ Կղէոմենէս. քանզի և թափ ցասման բարկութեան՝ քան եթէ գործ գովանի համարեցաւ, զոր միանգամ գործեաց անդ 'ի Մեգաղոպոլիս:

Իսկ Անտիգոնոս անդէն ձեպով դարձ յԱրգոս արարեալ, իբրև հասեալ կալաւ զօրականօք զլեռինն և զբարձունսն զամենայն, անդուստ Կղէոմենէս իբրու ունչս զնովաւ առնելով արձակէր քարոզ 'ի քաղաքն, խնդրէր զփականս զտաճարին Հերայ՝ զոհ անդանօր զոհել դիցուհւոյն մինչչև մեկնեալ հրաժարեալ իցէ: Եւ այն-

պէս խաղ արարեալ զթշնամեօքն, և զոհ կատարեալ դիցուհւոյն մեծ տաճարին փակելոյ, ապա խաղացուցանէր զզօրն 'ի Փլիուսնտէ և անտի զպահապանն վանեալ զՈլոդունտեայ՝ իջանէր 'ի վայր 'ի կողմն Որքոմենեայ. ոչ քաղաքացեացն միայն խրախոյս 'ի ներքս տայր, այլ և հռչակ եւս հարկանէր առ իւր թշնամիս՝ իբրև այր քաջափորձ զօրավար և յաջողաձեռն 'ի մեծամեծս: Քանզի և խաղալ արշաւել նորա այս՝ 'ի զօրութիւն բազկի միոյ քաղաքի, և մարտ դնել կռուել նորա ընդ տէրութեան Մակեդոնացւոց և ողջոյն ընդ Պեղոպոննիսացիս և ընդդէմ գանձուն արքունի, և պահել զԼակոնիկէ ոչ անդրժելի միայն՝ այլ և զեան հաստուցանել դաւառին նոցա և առնուլ այնչափ քաղաքաց, այս ամենայն ոչ դուզնաքեայ ինչ արդեօք քաջութեան և արութեան ոգւոյ իցէ:

Այլ սակայն և որ ասաց առաջին, եթէ՝ Դրամք ինքնին ջիղք են գործոց, թուի յաւէտ իմն վասն մարտից պատերազմաց ասացեալ զայն: Եւ Դեմադէս ինքնին 'ի հրամայել երբեմն Աթենացւոց առնուլ ձգել 'ի ջուր զեռաթիս նաւաց և լնուլ մարդկամբ, և զի դրամ պակասէր նոցա, ասէր Դեմադէս. " Քան զթիավարել, նախ պարտ է զհայս հարկանել ": Եւ պատմեն եւս՝ եթէ և նախնին այն Արքիդամոս 'ի սկիզբն Պեղոպոննիսեան մարտին 'ի թախանձել զնա նիզակակցացն սահմանել կարգել զհասս հարկացն, ասէր ցնոսա՝

Չի՛ք պատերազմին սահմանաւոր չափ կերակրոյ: Քանզի զոր օրինակ ըմբիշք քաջակիրթք մարմնով բազմաժամանակեայք՝ տապաստ արկեալ պարտեն զարագունսն և զճարտարսն, սոյնպէս և Անտիգոնոս 'ի կռիւ ելեալ բազում զօրութեամբ, աշխատ և նկուն առնէր զԿղէոմենէս. այն՝ որ կարէր ճշդելով տայր զվարձս եկաց զօրականին և զկերակուրն քաղաքացեացն: Եւ այն զի ժամանակին ինքնին գլխովին զօրավիգն էր Կղէոմենեայ, իբրև զի և 'ի տան անդ իւրում կիրս կրէր Անտիգոնոս. քանզի բարբարոսք 'ի բացակայութեան նորա ասպատակ կալեալ յաւարի առնուին զՄակեդոնիա:

Դարձեալ և յայնժամ գունդ ասուար Լիւրիկեցւոց իջեալ հորդան տայր, յորոց և զվիշտ վտանգին տեսեալ Մակեդոնացւոց՝ առաքեալ կոչէին զԱնտիգոնոս: Եւ եթէ ըստ դիպաց վայր մի յառաջ քան զմարտն հասեալ էր առ նա նամականին, նա անդէն յետս դարձեալ էր՝ ողջոյն հրաժարական տուեալ Աքայեցւոց ընդ հարուստ ժամանակ: Սակայն բախտն ինքնին որ 'ի սուղ ժամանակ ընտրութեան սահման կարգեալ մեծամեծ իրաց, քաջ եցոյց յայնժամ՝ քանի՞ն լիցէ ոյժ և զօրութիւն ժամանակի. քանզի անդ իսկ և իսկ յետ մարտի պատերազմի 'ի Սելլասիա և յետ կորուսանելոյն Կղէոմենեայ զզօրն և զքաղաքն, ապա և պատուիրակքն եկեալ հասանէին յետս կոչել զԱնտիգոնոս: Եւ

յայտնանէ ապա աշխարհելի եւ եղեն ա-
ղէտքն Կղէոմենեայ. քանզի եթէ եւ զա-
ւուրս երկուս միայն տեղի տուեալ էր 'ի
մարտէն, ոչ եւ այնուհետեւ նմա պէտք էին
կռուոյ. այլ չու յայնժամ արարեալ Մա-
կեդոնացւոց, ինքն 'ի հաշտութիւն գայր
ընդ Աքայեցիս՝ հնազանդեալ զնոսա 'ի
պայմանին ըստ իւրոցն կամաց:

Արդ յայնժամ առ կարօտութեան
դրամոցն՝ որպէս ասացաք, ապաստան 'ի
զէնսն արարեալ զամենայնն, տոկալեցաւ 'ի
մարտ ճակատել երկու բիւրուք զօրակա-
նաց՝ որպէս ասէ Պողիւբիոս՝ ընդդէմ երից
բիւրուց: Յորում եւ 'ի բազմավտանգ յայն
դուրին սքանչելի երեւեցաւ զօրավար. առ
այս եւ իւրն քաղաքացիք յառաջամիտք եւ
արիականք նահատակեցան, նա եւ ոչինչ
բամբասելի առաքինացան եւ վարձկանք զօ-
րականին. համայն եւ այնպէս նկուն ե-
ղեալ պարտեցաւ Կղէոմենէս յօրինակէ
անտի սպառազինութեան թշնամեացն եւ
'ի քաջամուր զօրութենէ նոցուն փաղան-
գին: Բայց Փիւղարկոս պատմէ՝ եւ 'ի մատ-
նութենէ գլխովին դաւաճանեալ զնա,
յորմէ եւ առաւել տապալեցան իրքն Կղէո-
մենեայ: Քանզի յայնժամ Անտիգոնոս
հրաման տուեալ Լիւրիկեցւոց եւ Ակառնա-
ցւոց շրջան գործել զանխուլ եւ շուրջ պա-
տել պաշարել զմի 'ի թեւոց անտի բանա-
կին թշնամեաց՝ յորում զօրավարէր ինք-
նին Եւկղիդէս եղբայր Կղէոմենեայ, եւ ա-
պա կարգեալ դասաւորեալ 'ի կռիւ զմնա-

ցեալս զօրուն, անդուստ Կղէոմենէս դէտ ակն կալեալ 'ի բարձրաւանդակ վայրէ և ուրեք յակն չարկեալ զԼիւրիկեցւոց զէնսն և զԱկառնանացւոց, երկեաւ եթէ այն զօրականք խաբանօք դարանեալ լինչ իցեն յԱնտիգոնեայ: Անդէն կոչեաց առ ինքն զԴամոտեղէս՝ որում յանձն արարեալ էր հըսկել տքնել 'ի վերայ դարանաց. հրաման տայր նմա մանր դիտել զերան՝ որ 'ի Թիկանց կուսէն և որ շուրջանակի դասաւորութեան զօրուն: Իբրև պատասխանի ետ Դամոտեղէս, (այն որ կանուխ իսկ՝ որպէս ասեն՝ կաշառաբեկ լեալ էր յԱնտիգոնոսէ), մի ինչ հոգալ վասն կողմանն այնորիկ՝ զի յանդորրու է ամենայն, և ինքն ուշ եդեալ միայն ճակատելոցն 'ի հանդիպոյ՝ հարեալ վանեսցէ զնոսա. Հաւատաց Կղէոմենէս և խաղայր ընդդէմ Անտիգոնեայ, և Թափով դրոհ տուեալ իւրոց Սպարտացւոցն՝ վանէր ընկրկէր զփաղանգ Մակեդոնացւոցն. իսկ 'ի վերջօանել նոցա՝ ինքն յաղթական զհետ մտեալ հալածէր հարկանէր զնոսա ասպարիզս հինգ: Բայց ապա դոյժ առեալ՝ զի Եւկլիդէս 'ի միւսում կողմանն 'ի ներքս փակեցաւ, զտեղի էառ և վտանգին խելամուտ եղեալ եղբօրն, յոգւոց եհան և ասէր. "Մեռար դու ինձ անձկալի եղբայր իմ. սակայն և մեռար քաջաբար, և մանկանց նախանձելի Սպարտացւոց, և նուագաց հռչակելի կանանցն,,:

Այսպէս ուրեմն անդանօր դիտապատ անկեալ Եւկլիդէս հանդերձ իւրովքն, և

անդուստ յաղթականքն 'ի վերայ անկեալ
Կղէոմենեայ, նա իբրև սրտաբեկ սրտա-
թափ զիւր զօրականն տեսանէր ոչ կալ
մնալ յակատանի, անձնապուր փախըս-
տեայ լինէր : Եւ պատմեն՝ տապաստ ան-
կանել յայնժամ և բազմաց 'ի վարձկան
զօրականէն, իսկ 'ի վեց հազար Լակեդե-
մոնացւոց ապրել միայն երկերիւրոց :

Իբրև եկն եհաս Կղէոմենէս 'ի քաղաք
անդր իւր, յորդոր տայր ընդ առաջ ելե-
լոց քաղաքացեացն առնուլ ժողովել զԱն-
տիգոնոս. և ասէր ևս՝ եթէ կենօք եթէ
մահու անշուշտ նահատակել նորա 'ի շահ
օգտին Սպարտիոյ : Եւ տեսեալ անդանօր
զկանայսն ընթացեալ առ փախստեայսն և
զնոցա զէնսն առնուլ և արբումն նոցա մա-
տուցանել, ինքն չոքաւ եմուտ 'ի տուն իւր :
Իսկ յայնժամ աղջիկն՝ այն որ ածեալ 'ի
Մեգալոպօլսեայ կին ազատ՝ զոր ունէր
նա առ իւր յետ մահու ամուսնոյն, ընդ
առաջ եկեալ նմա ըստ սովորութեանն
խնդրէր սփոփութիւն նմա մատուցանել
'ի քրտանց մարտին. բայց նա ոչ ըմպել
ինչ յանձին կալաւ՝ թէպէտ և պապաքեալ
իսկ էր, և ոչ նստել ինչ՝ թէպէտ և խոն-
ջեալ էր. այնպէս հանդերձ զրահիւքն որ-
պէս և պատահեցաւ՝ առեալ զձեռսն առ
'ի շեղ հաստատէր 'ի սիւն մի, և զերեսն
'ի խոնարհ եդեալ յարմուկն, այնպէս ոչ
յերկարագոյն ինչ հանգիստ տուեալ ան-
ձին և մտախորհ եղեալ միանգամայն 'ի վե-
րայ ամենայնին, ապա յետ այնորիկ յառ-

ներ հանդերձ բարեկամօքն, դէմ եդեալ գնայր 'ի Նաւահանգիստ անդր 'ի Գիւթիոն, և ամբարձեալք 'ի նաւս՝ որ անդ վասն այնորիկ կազմ կային, այնպէս յուղի անկեալ հրաժարեցան :

Իսկ յայնժամ Անտիգոնոս վաղվաղակի զբռնամբ կալեալ զքաղաքն, և մարդասիրութիւն ցուցեալ առ Լակեդեմոնացիս, և ոչինչ ամենևին արհամարհութե͞ ոտնհար եղեալ շքոյն Սպարտոյ, տայր շնորհէր նոցա միանգամայն և զօրէնս և զքաղաքաւարութիւն նոցա. իսկ յաւուրն երրորդի դառնայր գնայր՝ զոհ զոհեալ դիցն. քանզի և գուժկան եհաս առ նա յուզելոյ մեծի պատերազմին 'ի Մակեդոնիա և քանդելոյ գաւառին 'ի բարբարոսաց անտի: Այլ նա և յառաջագոյն յախտ խօթութեան պաշարեալ կայր, և փոխեցաւ 'ի մաշարայականն և 'ի հարբուղխ անդուլ. սակայն և ոչինչ սրտաբեկ՝ բազում նահատակեցաւ դարձեալ 'ի դոռին յիւրում գաւառի, և մեծապէս յաղթութիւն տարեալ և հարուածս անհնարին 'ի վերայ ածեալ բարբարոսացն, մեռաւ փառօք 'ի մարտին՝ որպէս հաւանեալս եմ և որպէս պատմէ Փիւղարքոս՝ ձայն ուժգնակի բարձեալ 'ի դոռին՝ մինչև 'ի պայթել թոքոյն: Բայց 'ի վարժարանսն ասեն՝ յետ յաղթութեանն 'ի ձայն բարձր յոյժ գոչել նմա առ խնդին. « Բա՛րէ երջանիկ աւուրն »․ և այնպէս արիւն շատ յոյժ ժայթքել, և ապա սաստիկ հրատիւ տենդեալ

զրաւել 'ի կենացն ։ Այս են որ վասն Անտիգոնոսի բանք ։

Իսկ Կղէոմենէս մեկնեալ 'ի Կիւթերեայ՝ եհաս 'ի կղզին անուն Եգիալիա ․ իբրև համդերձեալ էր անցանել 'ի Կիւրենէ, անդ մի ոմն 'ի բարեկամացն Թերիւկիոն անուն այր քաջարի 'ի նահատակութիւնս և այլ մեծաբան միշտ և մեծապանծ, առանձինն խօսեալ ընդ նմա ասէր ․ "'Ի քաջարի մահուանէ ո՞վ արքայ վրէպ գտաք 'ի պատերազմին ․ սակայն և առհասարակ լուան զմէնջ ասել, եթէ Անտիգոնոս երբէք ոչ պարտեսցէ զարքայն Սպարտացւոց՝ բայց սպանեալ զնա ։ Արդ այժմիկ մեզ այլ մահ առաջի կայ երկրորդ 'ի փառս և յառաքինութեան ։ Ո՞ւր մեր նաւագնաց գիմեալ է անհանճարաբար, խոյս տուեալ 'ի մերձաւոր մահուանէ և 'ի խնդիր ելեալ հեռաւորին ։ Քանզի եթէ նախատինք չիցեն՝ պայազատացն Հերակլեայ ծառայութիւն հարկանել պայազատացն Փիլիպպոսի և Աղեքսանդրի, ծն անդր 'ի բաց թողցուք զտարադէմ նաւարկութիւնդ ․ Ինքնին անձնատուր Անտիգոնեայ լինելով, որ այնչափ ինչ արդեօք վեհագոյն է դա քան զՊտղոմէոս, որչափ Մակեդոնացիք քան զԵգիպտացիս ։ Եւ թէ երբէք դժպատեհ համարել իցէ զոխրանալ մեզ նոցա՝ յորոց պարտեցաք 'ի զինուց, առ ի՞նչ հպատակել մեր այնմ՝ որ ոչն պարտեաց զմեզ ․ որպէս զի և վատթար ևս երևել մեզ ոչ քան զմին միայն, այլ քան զերկուան․ փա-

խուցեալ յԱնտիգոնեայ, և չնթելով Պտո-
ղոմեայ: Այլ ասասցո՞ւք Թերևս, եթէ յԵգիպտոս դէմ եղեալ է քո 'ի պատճառս մօրդ: Անշուշտ տեսիլ հեշտին և նախանձելի եղիցի դու նմա, յորժամ նա կանանցն Պտղոմեայ յանդիմանեսցէ զորդին իւր գերի և փախստեայ՝ որ յառաջին էր արքայ: Ցորչափ իշխան եմք մեք մերոց ռուսերաց, ցոր վայր յակն տակաւին արկանեմք զԼակոնիա, ա՛ղէ ո՞չ աստէն անձնապուր լինիցիմք յաղէտից անտի. և 'ի չքմեղս լինիցիմք առ որս տապաստ 'ի մերայ Սպարտիոյ անկան 'ի Սելլասիա. և կամիցիմք Թերևս կալ նստել յԵգիպտոս և հարցանել՝ զո՞ 'ի նախարարաց արդեօք եթող Անտիգոնոս 'ի Լակեդեմոնիա,,:

Զայս ասաց Թերիկլիոն, և պատասխանի առնէր Կղէոմենէս և ասէր. “Զհետ կրթեալ քո մահու՝ որ քան զամենայն մարդկայինդ հեշտին է և առ ձեռն կայ ամենեցուն, կարծիցես Թերևս դու վատ արանց զքեզ այր քաջ, փախչելով քո փախուստ խայտառակ ևս քան զառաջինն: Քանզի և քան զմեզ եկաց ևս ականաւոր որեար, որ 'ի նեղ մտեալք տեղի ետուն իւրեանց Թշնամեացն. կամ առ 'ի բախտէն նշաւակեալք, կամ 'ի բազմութենէն յաղթահարեալք. իսկ որ միանգամ քրտանց և վշտաց հանդուրժել ոչ ունի և գովութեանց և պարսաւանաց մարդկան, այնպիսին նկուն եղեալ պարտի յիւրմէ իսկ տկարութենէն: Քանզի և մահ անձնաս-

տան չէ արդեօք փախուստ 'ի գործոյ, այլ գործ ինքնին գլխովին. քանզի անարգ է կեալ և մեռանել վասն անձին միայն, յոր դուդ այժմ զմեզ հրապուրես ճեպել ճողոպրել յառաջակայ աղէտիցդ, ոչինչ գործ գործեալ՝ ոչ գեղեցիկ և ոչ պիտանի 3 : Այլ ես այնպէս համարիմ, եթէ ոչ քեզ և ոչ ինձ արժան ինչ է յուսակտուր լինել օգնել հայրենեաց : Իսկ երբէք 'ի յուսահատ լինել, հեշտին յայնժամ իցէ մեռանել կամեցողացն ,, : Ոչինչ ընդդէմ Թերիկլիոնին դարձաւ Կղէոմենեայ բանիցն, այլ անդէն իբրև պարապ եգիտ մեկուսանալ 'ի Կղէոմենեայ, չոքաւ 'ի ծովափն և անդ երթայր զիւրովին :

Իսկ Կղէոմենէս ելեալ յԵգիպտեայ եկն եհաս 'ի Լիբիա, և ապա հանդերձ պաշտօնէիւք արքային մտանէր յԱղէքսանդրիա : Յանդիման եղեալ Պտղոմեայ, զառաջինն՝ հիւրամեծարութիւն հետուակս և չափաւոր գտանէր 'ի նմանէ. այլ ապա զիւրոյ խորհրդականութեանն տուեալ զճաշակ և այր ցուցեալ հանճարեղ, և 'ի հանապազօրեայ քաղաքավարութեանն 'ի դէմս բերեալ զլակոնականն զիւր և զանպաճոյճ զշնորհն հանդերձ վայելուչ ազատականութեամբ, ոչ զազնուականութիւն անձին աղարտէր և ոչ դարձեալ 'ի ձախողակ բախտէն ընկճէր. և այնպէս այր երևեալ նա լաւ ևս քան զուտակասպասն և զշնթողսն, մեծապէս յայնժամ զամօթի հարկանէր Պտղոմէոս և սորջանայր յան-

ձին, զի զանց զնովաւ արար և 'ի ձեռս ելեք զայրն Անտիոքնեայ՝ որ այնչափ ձգեաց յանձն փառս և զօրութիւն։ Այր աղագաւ և քաջալեր նմա յայնժամ տուեալ պատուով և մարդասիրութեամբ, յոյս առաջի դնէր նմա դարձուցանել զնա յԵւրոպա նաւուք և ընչիւք, և հաստատել զնա յարքայութեան իւրում. և ռոճիկ ևս յայնժամ կարգէր նմա քսան և չորս տաղանդաց 'ի տարւոջն. սակայն և կեանս սակաւապէտս և ժուժկալս կեայր նա հանդերձ բարեկամօքն, բաղում ինչ յայնմանէն ծախեալ 'ի մարդասիրել և օգնել մարդկանն՝ որ յԵլլադայ գաղթեցին յԵգիպտոս։

Զայնու ժամանակաւ մեռանէր Պտղոմէոս ծեր՝ մինչև 'ի գլուխ տարեալ ըղդարձն Կղէոմենեայ։ Եւ անդէն առ այն արքունիք մեծապէս աղուացեալ 'ի յաղակատանս և 'ի գինեբբուս և 'ի կանանցոյն տէրութիւն, անհոգացեալ կային իրքն Կղէոմենեայ։ Քանզի և թագաւորն ինքնին այնչափ անկղխացեալ էր 'ի կանայս և 'ի գինի, զի և երբեք 'ի զգաստանալ իւրում և 'ի լրջանալ, դառնայր պարապէր 'ի տօնախմբութիւնս, և շուրջ դնայր յածէր ընդ արքունիսն թմբուկ 'ի ձեռին. իսկ գործք արքայութեանն կարևորք կառարէին 'ի ձեռն Ագաթոկղեայ տարփածուին արքային, և 'ի ձեռն մօրն Ագաթոկղեայ, և 'ի ձեռն Ենանթեայ բոզարածի։

Սակայն և այնպէս թուէր ինն զառա-

ջինն 'ի գործ և զԿղէոմենէս վարել: Քանզի զանգիտեալ Պտղոմէոս յեղբօրէն իւրմէ 'ի Մագասայ՝ որ զօրացեալ յոյժ էր 'ի զօրուն 'ի պատճառս մօրն, վասն այնորիկ 'ի բանի իւրում առնէր զԿղէոմենէս, և խորհրդակից ևս հրամայէր զնա գաղտնութեան խորհրդոյն՝ որով դարմանէր կենաց դաւաճան լինել եղբօրն: Արդ Թէպէտ և այլք առհասարակ 'ի նոյն հրապուրէին զնա, միայն Կղէոմենէս ը̄դդէմ դարձաւ. ասէր՝ նմ պարտ իսկ էր՝ (եթէ հնար ինչ էր) և այլոց ևս բազում եղբարց ծնանել արքային՝ յաներկևանութիւն և 'ի լաւ ևս տնտեսութիւն իրացն: Իսկ անդանօր Սովսիբիոս որ առաւել ձոխն էր 'ի բարեկամս արքային, ասէր՝ եթէ վստահանալ չէք երբէք 'ի վարձկանս զօրականին, ցորչափ Մագաս կենդանի իցէ: Նա պատասխանի Կղէոմենէս՝ հոգ և ոչ մի ունել վասն իբաց. քանզի և 'ի վարձկանսդ յայդոսիկ են իսկ ասէր՝ առաւել քան զերիս հազարս 'ի Պեղոպոննիսացւոց՝ հնազանդեալք իւր. որ զի և ակնարկելի անդամ առնել չամ իցէ անդէն 'ի զէն ընթացուցանել զնոսա: 'Ի բանից աստի ոչինչ փոքր մտերիմ արքայի երևեցաւ Կղէոմենէս, առայս՝ և իբրև այր զօրաւոր:

Բայց յետ այսորիկ վատասրտութիւն յորդեալ 'ի Պտղոմէոս առ 'ի տկարութենէն, և որպէս բնաւորեցաւ իսկ 'ի տեղի տալ իմաստութեանն՝ աներկևանութի մեծ կարծել՝ երկնչել յամենայնէն և խի-

Թաւ յամենեցուն, նոյն այն բանք ահագին երևեցուցին աւագանւոյն զԿղէոմենէս՝ իբրու այր բազմաձեռն առ վարձկանս զօրականին. և բազումք ևս յայնժամ հծծէին, եթէ առիւծ գլխովին է դա՝ որ շրջի 'ի խաշին։ Եւ արդեօք այնպիսի երևէր նա յարքունիսն. լուռ անմռունչ ընդ ակամբ դիտելով նա անդանօր զամենայն զգործս։

Ապա այնուհետև Կղէոմենէս ոչ նաւս խնդրեաց 'ի նոցանէն և ոչ զօրական. այլ լուր առեալ զմահուն Անտիգոնեայ և զԱքայեցւոց մարտին ընդդէմ Էտոլացւոց, և զի և ինքն գլխովին հրաւէր անդր նմա կարգային, քանզի և աղմկեալ ամբոխեալ կայր Պեղոպոննիսոս. խնդրեաց նա յայնժամ արձակել զինքն անդր՝ միայն հանդերձ բարեկամօքն։ Սակայն 'ի հաւանութիւն ած նա և ոչ զոք. և Թագաւորն ինքնին և ոչ ունկն մատուցանէր նմա, այնպէս անդուլ պարապեալ 'ի կանայս և 'ի կաքաւս կայթից և 'ի ձայնս արբեցելոց։ Իսկ Սոսիբիոս՝ վերակացու ոստիկան ամենայնին, զմտաւ ածէր՝ եթէ յակամայս արգելեալ անդանօր Կղէոմենէս՝ դժուարընտել իցէ և ահագին. իսկ արձակեալ 'ի բաց՝ այր յանձնապաստան իցէ և 'ի մեծամեծս ձեռներէց. նա զի և խօթութեան արքայութեանն այնորիկ ականատես լեալ է։ Իսկ պարգևք ընծայից երբէք չամոքեցին զայրն. այլ զոր օրինակ ցուլ Ապեան 4, թէպէտ և քաջարբոյծ կայցէ և գրգասուն,

անձկայ անկակից ընութեամբն վարել և վազել և թինդս առնուլ և խայտալ, և քաջ 'ի դէմս բերէ զորանութիւնն՝ կացել այնպէս ընդ ձեռամբ քրմին, սամպէս և Կղէոմենէս խնդայր և ոչինչ ընդ դրդանան ընդ այն. այլ "Մղձկեալ 'ի փարելի որդւոյն իբրու զԱքիլլէս, կայր անդանոր և տենչայր 'ի մարտս և 'ի գոռս պատերազմի,,:

Իբրև այսպէս ընդ հակառակս նմա ելանէին իրքն, յայնժամ եկեալ հասանէր յԱղէքսանդրիա և Նիկագորաս Մեսսենացի. այր՝ որ ատելութեամբ բերեալ առ Կղէոմենէս, և ձևանայր բարեկամ. էր սորա երբեմն դաստակերտ փարելի վաճառեալ նմա, և զարծաթն չև էր հատուցել Կղէոմենէս յանքատութենէ դրամոցն՝ որպէս ինձ թուի, և յանպարապութենէն որպէս 'ի դէպ լինէ կարծել, և արգելեալ անդուլ 'ի պատերազմաց: Արդ յայնժամ Կղէոմենէս ըստ դիպաց ձեմ առեալ առ եզերբ նաւահանգստին, տեսեալ զՆիկագորաս իջանել 'ի նաւէն՝ ողջոյն սիրալիր տայր նմա և հարցանէր զպատճառ գալըստեանն յԵգիպտոս. անդուստ և Նիկագորաս ողջունեալ զնա 'ի ցոյց մեծապէս սիրոյ, ասէր՝ ածեալ արքային երիվարս գեղեցիկս մարզիկս. ծիծաղեցաւ Կղէոմենէս և ասէ. "Նա՛ կամէի ածեալ քեզ նմա վարձակս սնդահարս և մանկունս իգացեալս. քանզի և յայսոսիկ զարդիս յաւէտ կրթեալ է արքային,,: Ծիծաղեցաւ յայնժամ և Նիկագորաս:

Ապա յետ սակաւուց աւուրց յուշ նա արարեալ Կղէոմենեայ զվաճառ դաստակերտին՝ աղաչէր հատուցանել, իբրու որ և ոչ ժտէր արդեօք աշխատ առնել զնա, թէ չէր նորա շատ ինչ 'ի շահավաճառուն իւր ծախսեալ. իբրև պատասխանի արար Կղէոմենէս՝ եթէ չէ՛ք նորա յայնժամ ինչ նշխարեալ 'ի ռոճկաց անտի արքային, դժգմնեցաւ Նիկագորաս. և ապա չոքաւ պատմել յունկն Սոսիբիոսի զթշնամանալից հեգնութիւնն Կղէոմենեայ։ Մտադիւրագոյնս լուեալ Սոսիբիոսի զբանն, սակայն բարուր ևս մեծ հայթայթելով զդրդռութեան արքայի, թելադիր լինէր Նիկագորասայ 'ի հրաժարել իւրում՝ թողուլ գիր առ արքայ ամբաստան զԿղէոմենեայ, իբրու որ հաստատեալ իցէ նա 'ի միտս՝ յառնուլ յարքայէն զեռամթիս նաւացն և զզօրականն՝ խաղալ հասանել և ունել զԿիւրենէ։ Գրեալ զայս Նիկագորաս, և ինքն ամբարձեալ 'ի նաւ՝ գնայր։ Իսկ յետ չորից աւուրց բերեալ Սոսիբիոս զգիրն առ Պտղոմէոս, իբրու այն ինչ հասեալ, և գրգռեալ այնպէս զպատանի արքայն, խորհուրդ ապա հաստատեցին առնուլ փակել զԿղէոմենէս 'ի յարկ մեծ. ունել զնա ըստ առաջին կարգին, բայց թոյլ չտալ ելանել արտաքս։ Անդանօր սրտառուչ տապէր Կղէոմենէս, այլ 'ի խոր ևս խոցեալ կայր վասն որ յառաջոյ երացն։

Արդ էր յայնժամ Պտղոմէոս ումն ա-

նուն՝ որդի Քրիւսերմոսի բարեկամ արքայի. սա մարդասիրութիւն ցանդ ցուցեալ առ Կղէոմենէս, և ընտանիք միմեանց եղեալ՝ համարձակութեամբ ևս գնային ընդ միմեանս. զսա յայնժամ առաքեալ աղաչէր Կղէոմենէս գ.ալ առ ինքն. չոքաւ նա և քաղցրութեամբ խօսէր ընդ նմա և 'ի կասկածանաց ազատ առնէր զնա և 'ի չքմեղս հանէր զարքայն. իսկ յելանել իրում արտաքս 'ի յարկէն, և միտ չեդեալ՝ գալ Կղէոմենեայ զհետ իւր մինչև 'ի դուրսն, յայնժամ Պտղոմէոս դառնապէս սաստիկ կշտամբէր զպահապանսն, զի այնպէս յուլագոյնս և յանհոգս պահեն ունին զմեծ զայն գազանն և զդժուարորսալին: Զայս իւրովք իսկ ականջօք լուեալ Կղէոմենէս, և խուսեալ՝ մինչև տեսեալ Պտղոմեայ, պատմէր ապա զբանն բարեկամացն: Ուստի նոքա առհասարակ յուսահատ եղեալք յառաջին ակնկալութենէն, և 'ի սրտմտութիւն բարկութեան վառեալք՝ խորհուրդ 'ի մէջ եդին մեռանել զմահ ըստ արժանի Սպարտիոյ, վրէժ խնդրեալ զանիրաւութեանն և զխեռութեանն Պտղոմեայ, և մի' անդէն կալ մնալ իբրև սպանդք պարարակ.ք պատրաստեալք 'ի զենումն: Քանզի և դժոխըմբերելի իսկ էր արդեօք, եթէ Կղէոմենէս՝ որ արհամարհեաց զպայմանս հաշտութեանն զԱնտիգոնեայ զմարտիկ առն և զքաջարւոյ, սպասեալ յայնժամ դէտակն կալցէ 'ի պարապութիւն արքային մուրիկ առն Ոսկեմօր դից, մինչև նա 'ի

բաց զթմբուկն եդեալ և 'ի պարերգուացն դադարեալ, պարապեսցի 'ապա նստել փո֊ղոտել զնա :

Ապա զայն խորհուրդ խորհեալ նորա, իբրև Պտղոմէոս արքայ եւ չոքաւ 'ի Կա֊նովբոս, հուչակ հարին զառաջինն իբրու ազատութիւն Կղէոմենեայ տալ արքային: Եւ քանզի սովորութիւն էր արքայի՝ զի որք միանգամ հանդերձեալ էին ազատիլ 'ի բանտէն՝ առաքէր նոցա ընթրիս մեծա֊հաց և պարգևս, վասն որոյ և բարեկամք Կղէոմենեայ բազում ինչ պատրաստեալ յայնպիսեաց անտի՝ առաքեցին առ նա խաբեալք զպահապանսն՝ իբրու եթէ ար֊քայն առաքեաց. ուստի և Կղէոմենէս պսակ բոլորեալ, զոհ զոհէր և բաժին ա֊ռատ յայնցանէ հանէր պահապանացն, և ապա բազմեալ 'ի սեղան ընթրէր ընդ բա֊րեկամացն: Այլ ասեն՝ եթէ կանուխ քան զժամադիրն ձեռնամուխ 'ի գործն եղև Կղէոմենէս, գիտելով չափ՝ զի մի ոմն յընտանեացն գիտակ գործոյն՝ արտաքս ելեալ էր անկանել ընդ տարփածուին. ուստի և զահի հարեալ եթէ 'ի վեր բանն ելցէ, զհասարակ աւուրբ՝ մինչդեռ տա֊կաւին 'ի քուն կային պահապանքն 'ի գին֊ւոյն, արկեալ զիւրև զբաճկոնն և լու֊ծեալ զկարանն յաջոյ ուսոյն՝ 'ի դուրս վազէր սուսերամերկ հանդերձ երեքտասան բարեկամօքն, կազմ վառեալք և նոքա ընդ֊նոյն օրինակ :

Էր ընդ նոսա և Հիպպոտաս. Թէպէտ և

կաղ յոտից, յառաջին աշխոյժան քաղաբար և լինքն ելանէր արտաքս. այլ իբրև յիւր պատճառս ետես զայլսն յամրաքայլս տաղտապել, աղաչէր զնոսա սպանանել զինքն և մի այնպէս սպասեալք անպիտան առն, խանգար առնել նահատակութեանն: Բայց 'ի պահուն ըստ բաղդին անցեալ առ դրամբքն այր Աղեքսանդրացի ածեալ զերիվար, հանին զայն 'ի ձեռաց առնն և հեծուցին զՀիպպոտաս. ապա վազս առեալք սուրային ընդ փողոցս, յորդոր խրախոյս ազատութեան կարդային խուժանին: Բայց յայնժամ խուժանն քաջացաւ միայն գովել և զարմանալ ընդ արութիւն քաջութեանն Կղէոմենեայ, և ժտեցաւ և ոչ ոք զհետ գալ և զօրավիգն տալ նմա: Յայնժամ երեք ոմանք 'ի նոցանէն արագ արագ 'ի վերայ անկեալ Պտղոմեայ Քրիւսերմեայ՝ յելս նորա արտաքս 'ի գաւթէն, տապաստ արկանէին զնա. իբրև 'ի հանդիպոյ տեսին ընթացեալ 'ի կառս և զայլ ոմն Պտղոմէոս անուն՝ այր քաղաքապետ, խաղացին և նորա ընդդէմ. վարատեալ ցրուեցին զսպասաւորսն և զտիգաւորսն, և զնա 'ի վայր 'ի կառացն ձգեալ՝ անդէն խողխողեցին:

Անդուստ ապա դէմ եդեալ դիմեցին 'ի դղեակ անդր, հարկանել խորտակել ըղդուրս բանտին, և զբազմահոյլ պատժաւորսն 'ի գործ առնուլ: Բայց պահապանացն աճապարեալ՝ քաջ աղխեալ պնդէին զվայրն: Իբրև և անդ 'ի դերևս ել Կղէոմե֊

նէս, ապա գնայր ընթանայր նա աստ անդ թափառական ընդ քաղաքն. և այր ոք ո՛չ յարեցաւ ՚ի նա ամենևին, այլ առհասարակ զահի հարեալք փախչէին: Ապա Կղէոմենէս դադարեալ ՚ի նահատակութենէն, ասէր առ բարեկամսն. "Չի՛ք ուրեմն երբէք զարմանալ, եթէ աստանօր կանայք իշխեսցեն արանց՝ որ փախչին յաղասութենէ": Ասաց և քաջալեր կարգայր ամենեցուն վախճանել զկեանս ըստ արժանի նոցա և գործոյն նահատակութեան նոցա:

Անդ ապա առաջին սպանաւ Հիպպոտաս, աղաչէր զմի ոք ՚ի պատանեացն՝ վիրաւորել զնա: Իսկ ըստ նմանէն այր այր իւրաքանչիւր ինքնակամ և անզարհուրելի անձին առնէր. մնաց միայն Պանտէոսն՝ այն որ առաջին նահատակեալ տիրացաւ Մեգաղոպօլսեայ, պատանի առոյգ և անձնագեղ և քաջամոյն ՚ի բարս և ՚ի բարւոք դաստիարակութենէն՝ պատանեացն այլոց վեհագոյն և յոյժ սիրեցեալ յարքայէն. որ և պատուէր տայր նմա զի ՚ի մեռանել նորա և այլոցն առհասարակ ընկերացն՝ յայնժամ ապա և ինքն անձին արասցէ: Իբրև ամենեքեան դիտապաստ անկան, Պանտէոս յայնժամ մերձ եկեալ՝ զննէր փորձէր սուսերաւն զմի մի ՚ի նոցանէն, տեսանել եթէ իցէ՞ ոք տակաւին կենդանի ՚ի նոսա. իբրև խթեաց և զԿղէոմենէս առ կոճի ոտիցն, և ետես զի կնճռեաց նա զերեսն, համբոյր տայր նմա և մօտ

ծառաւ նորա․ իբրև և նա մեռաւ, ապա գիրկս ածեալ՝ և ինքն անձին առնէր։ Եւ օրինակ զայս ապա դէպք եղեն դիտապաստ վախճանին Կղէոմենեայ, որ ամս վեշտասան թագ կապեաց ՚ի Լակեդեմոնիա, և այսպիսի ոք եկաց նա։

Հուչակ բանին հարեալ ողջոյն ընդ քաղաքն, յայնժամ Կրատէսիկլեա՝ թէպէտ և կին քաջ և այրասիրտ, ՚ի տագնապ մեծի աղէտին սրտաթափ սրտաբեկ լինէր, և գիրկս ածեալ մանկանցն Կղէոմենեայ կոծ սաստիկ եդեալ աշխարհէր․ իսկ յայնժամ երէցն ՚ի մանկանց ելեալ ՚ի տանիս տանն, գլխիվայր զանձն հոսեաց, որում և ակն ոք երբէք չունէր․ թէպէտ և հարեալ այնպէս չարաչար ջախջախեցաւ, ո՛չ մեռաւ․ իբրև ՚ի վեր առին զնա, նա ձայն բարձեալ գոչէր և զայրանայր, զի թոյլ չտան նմա մեռանել։

Իսկ Պտղոմէոս արքայ իրազգած այսոցիկ եղեալ, հրաման տայր զդիակն Կղէոմենեայ պատել մորթով և կախել ՚ի բարձուն, և ՚ի մահ զմանկունս նորա վարել և զմայրն հանդերձ կանամբք որ էին ընդ նմա, յորս էր և կին Պանտէովսի կին չքնաղ և հրաշագեղ․ այն ինչ հարսնացեալ էր ընդ նմա, և յեռանդ խանդակաթ սիրոյն իւրեանց պատահեցան աղէտիցն։ Սա այս կին զառաջինն խնդրէր նաւագնաց ընդ Պանտէովսի լինել, այլ թոյլ չետուն ծնողքն և առեալ փակեցին զնա։ Նա յետ սակաւուց գտեալ երիվար և արծաթ սակաւ,

փախեաւ գիշերայն և ձեալընթաց չոգաւ 'ի Տենարոն, և ամբարձաւ 'ի նաւ որ դէմ եդեալ գնայր յԵգիպտոս. և եկեալ դըտեալ անդ զայրն, այնպէս անտրտում և զուարթագին ընդ նմա վշտըմբեր գտաւ 'ի կեանսն յօտար աշխարհին: Եւ սա յայնժամ կալեալ զձեռայն Կրատէսիկլեայ ածէր բերէր, մինչդեռ զօրականք ձգէին զնա 'ի տեղի պատուհասին. 'ի վեր բարձեալ տանէր զտեռնն, և խրախոյս քաջալեր տայր նմա: Սակայն և ոչ ինքնին Կրատէսիկլեա զարհուրեալ ինչ էր 'ի մօտալուտ մահուանէն, այլ զայս միայն խնդրէր՝ մեռանել յառաջ քան զմանկունսն:

Բայց 'ի վայր հասեալ պատուհասին, անդանօր դահիճք նախ զմանկունսն փողտէին յանդիման աչացն Կրատէսիկլեայ և ապա զնա ինքն, որ յայնչափ աղէտսն զայս միայն գոչեաց. "Ո՜վ իմ մանկունք՝ յո՞ր սահման աւադիկ հասէք դուք,,: Եւ ապա կինն Պանտէովսի կորովի և յաղթահասակ հանդրիձեալ զհանդերձն՝ խնամ ածէր լուռ և հանդարտիկ յօրինել ծածկել ըստ կարի զմի մի 'ի կանանցն սպանելոց. յետ ամենեցուն յօրինեալ և զինքն, և մեկնեալ տարածեալ զվերարկուն, և ումեք թոյլ չտուեալ մերձենալ 'ի նա կամ տեսանել զնա, բայց 'ի միոյն որում սպանութիւնն յանձն եղեալ էր, այնպէս դիւցազնաբար զմահ ճաշակէր. և պէտք չեղեն նմա յայլոցն ծածկելոյ, զի և 'ի մահուն պատկառ կացեալ իւրում մարմնոյն՝ պա-

հեաց անտխեղծ զզարդ ոգւոյն՝ որպէս միշտն 'ի կեանսն իւրում։ Եւ այսպէս ապա Լակեդեմոնն 'ի նահապետութեան կանանւոյն՝ ելեալ քաջութեան ընդ արականին 'ի ներքս մատուցեալ յանգս չարչարանաց ամբաւ աղէտիցն, քաջ 'ի դէմս եբեր՝ եթէ անդրժելի ուրեմն առ 'ի բախտէն է առաքինութիւնն 5։

Այլ յետ սակաւ աւուրց՝ պահապանք դիականն Կղէոմենեայ 'ի խաչին տեսանէին վիշապ ահագին խաղապատեալ զգլխոյն և ծածկեալ զերեսն, զի անմխատելի առ 'ի գիշակեր թռչնոցն կայցէ։ Իբրև յայնժամ 'ի սնապաշտութենէն և յարհաւրացն ապշեալ կայր արքայն, ապա և կանայք ինքնին սկսան քաւութիւնս քաւել. իբրու այն թէ 'ի կենաց զրաւեցաւ այրն աստուածասէր և վեհագունին վիճակեալ բնութեան. Իսկ Աղեքսանդրացիք խուռն դիմեալք 'ի վայր անդր՝ անուն դիւցազնի կարդային Կղէոմենեայ և զաւակի աստուածոց։ Մինչև արք յայնժամ 'ի մէջ եկեալ իմաստունք 'ի խաղաղել զնոսա, զպատճառս զայն իրացն 'ի վեր բերեալ՝ ասէին, եթէ զոր օրինակ շաղիղք անդէոց ծնանին մեղուս, և ձիոցն՝ զձիաստացս 'ի նեխել իւրեանց, և 'ի դիականացելոց իշոց կենդանածնին բզէզք, սոյնպէս և դիակունք մարդկան 'ի շնձել հիւթոց ուղղոյն և 'ի գալ խառնել 'ի միասին, ծնանին օձս։ Որում և հնոցն դէտակն կալեալ, առաւել քան զամենայն կենդանին՝ կարդեն զվիշապն ընտանակից դիւցազանց 6։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Խօսի Պլուտ. առ Սենեկիոնի, որում և ընծայեալ իսկ էր զմատենագրութիւն Վարուցս: Տե՛ս 'ի սկիզբն վարուցն 'ի Թեսէոս:

2. Գտանեն աշխարհագիրք անուն հին զքաղաքի՝ Մանդուրիոն, այլ ոչ՝ Մանդոնիոն:

3. Ահաւասիկ իմաստնախոհութի՜ն ճշմարիտ՝ 'ի հրապոյրս նուաստախոհ անձնասպանութեան, 'ի դէպ հանճարոյն և մեծանձնութեանն Կղէոմենեայ, թէպէտ և ոչ գլխովին քրիստոնէական վեհանձնութեան արժանի՝ վասն յետագայ բանիցն. և զի՝ և ինքնին Կղէոմենէս յապայս նկուն եղեալ 'ի կրիցն՝ վատացաւ և անիրաւեցաւ յինքն՝ անձին առնելով: 'Ի վերայ այսր՝ թող և ինքնին Պլուտարքոս հրահանգեսցի յայս պատասխանին Կղէոմենեան: Քանզի դիւցազնութիւն ոգւոյ ճշմարիտ է՝ յաղթել կրից յուսահատութեանն, և ո՛չ յաղթիլ և անձին առնել, որ կենացն տէր՝ ԱԾ միայն է որ ետն զնա: Տե՛ս և զոր այլուր ասացաք վասն անարգութեան անձնասպանութեանն. յոր մոլորեալ յուղ-

ղութենէ՝ դանդաչէ Պղուտարքոս յայամ մասին Բարոյականին։

4. Աժէ կոչէր եղն, զոր մնապաշտութեամբ Եգիպտացիքն տային բուծանել ընդ ձեռամբ քրմացն։

5. Տես 'ի վեր, և զոր ասացաք ընդդէմ Պղուտարքայ. 'ի Կատոնն կրսեր. Ծան. 10։

6. Ըստ Եգիպտացւոց ծիծաղելի բնաբանից և ինքնին Վիրգիլիոս նկարէ ըղծնունդ մեղուաց՝ իբրու և 'ի շաղղոյ անդեոց. 'ի Դ. Մշակականին։ Զնոյն և Ովիդիոս. 'ի Ե. Այլակերպութեանցն իւրոց։ Եւ Վարրոն դարձեալ. 'ի Գ. յղ. Երկրագործ. ուր 'ի ներքս ածէ և զԱրքեղայոս 'ի վկայ բանիցն։ Ոչինչ պակաս և բոռքդ և ձիաստացքդ և բղէղքդ՝ որ 'ի բնագրին, ունին վկայ 'ի հնոց մատենագրաց։ Իսկ յաղագս այնպիսի օձիցդ, բայց յԱրքեղայոսէն, դիմառնաբար ունի դարձեալ և Ովիդիոս։ Բնախօսութիւնք ծիծաղականք։

ՏԻԲԵՐԻՈՍ ԵՒ ԳԱՅԻՈՍ ԳՐԱԿՔԵԱՆՔ

Օ ԱՌԱՋԻՆԴ արձանագրեալ մեր պատմութիւն, աղէտս ոչինչ պակաս զարդիս հասանէ մեզ տեսանել յամոլսդ Հռոմայեցւոց, 'ի կչիռ զՏիբերեայ և զԳայիոսի վարսն բերելով ընդ առաջնոցդ:

Էին սոքա որդիք Տիբերեայ Գրակքոսի, որ Թէպէտ և համարակալ եկաց Հռոմայեցւոց և երկիցս անգամ հիւպատոս և երկիցս յաղթանակաւոր, քան 'ի փառաց անտի՝ մեծ ևս յառաքինութենէ անձինն պայծառացաւ նա. ուստի և յետ մահուն Սկիպիոնի՝ այն որ վանեաց եհար զԱննիբաղ, ըստ արժանին կին ածէր զԿոռնելիա դուստր նորա. Թէպէտ և ինքն բարեկամ ոչ կացեալ ընդ Սկիպիոնի, նա՛ ընդ հակառակս ևս բերէր ընդ նմա: Եւ պատմեն մեզ՝ գտանել երբեմն Տիբերիոսի յիւրում անկողնի ամոլս վիշապաց. և յայն-

ժամ դուշակք և խղճք դէտ ակն կալեալ հրէշիցն, թոյլ չտային նմա՝ ոչ զերկուսն միանգամայն սպանանել, և ոչ զերկոսինն դարձեալ ապրեցուցանել. և յայտնի ևս ասէին սպանութեան արուին՝ մահ անել Տիբերեայ, և իգինն՝ մահ անել Կոռնելեայ 1: Յայնժամ Տիբերիոս սիրող լծակցին տեսեալ զառոյգ տիսն նորա և զիւրն ալեւոյթ ծերութեանն, 'ի դէպ ևս համարեցաւ զմահ իւր քան զնորայն. և սպանանէր զարուն և ապրեցուցանէր զէգն. և ինքն յետ սակաւուց մեռանէր. թողեալ որդիս երկոտասան առ 'ի Կոռնելեայ:

Ապա զխնամ զաւակացն և զտանն առեալ զանձամբ Կոռնելիա, այնչափ պարկեշտացաւ նա և խանդակաթ առ զաւակսն գտաւ, միանգամայն և մեծանձն, զի և թուէր իմն՝ ոչինչ վատախորհուրդ լինել Տիբերեայ յընտրութեան մահուն փոխան այնպիսի լծակցին: Սա և 'ի հարսնութէն հրաժեշտ տայր Պտղոմեայ արքայի, որ խնդրեաց զնա և հասարակորդ թագին առնէր զնա. և այնպէս յայրութեան իւրում կացեալ և յայլոց ևս զաւակացն վրիպեալ, դուստր մի միայն նմա՝ զոր ապա 'ի կին ածէր Սկիպիոնի կրսերոյ. և երկու ևս որդեակք՝ Տիբերիոս և Գայիոս, զորոց բուռն աւագիկ հարեալս եմք արձանագրել: Եւ առեալ սնուցանէր զնոսա Կոռնելիա մեծապէս խնամով. զի թէպէտ և անշուշտ նոքա անդստին 'ի ծնէ քաջամոյն վիճակե-

ցան բռնոյ բարուց 'ի վեր քան զամենայն Հռոմայեցիս, սակայն և առաջութեամբ առաքինութեան լաւ ևս քան զբունն իւրեանց դաստիարակեցան նոքա ։

Այլ զօր օրինակ տիպ նմանութեան Դիոսկուրեանցն՝ Ճշգրտել մեզ յանդրեաց կամ 'ի նկարուց անտի, տարբերեալ գոյ 'ի դէմս երեսաց նոցա, իբրև միոյն՝ բռնամարտկի. և միւսոյն՝ սուրհանդակի, սապէս և մեծապէս նմանութիւն երկուց պատանեկացդ այդոցիկ 'ի քաջութեան մասին և 'ի ժուժկալութեան և յազատականութեան և 'ի Ճարտարախօսութեան և 'ի մեծանձնութեան, էր և մեծապէս տարբերեալ. զի և 'ի ծաղիկ հասեալ նոցա՝ յարդեանց անտի յերևան եկն և յօրինակէ քաղաքականութեան նոցա ։ Ուստի և ոչ անտեղի արդեօք ինձ թուի նախ յայնմխեաց անտի 'ի ներքս բերել մեզ ։

Քանզի առաջին 'ի կերպարան դիմացն և 'ի հայեցուն. և 'ի գնացուն՝ էր Տիբերիոս հեզ և հանդարտ. իսկ Գայիոս՝ աշխոյժ և հրացայտ. որպէս զի և 'ի հրապարակախօսել անդ նոցա, Տիբերիոս համակ յիւրում ակատտանի կայր պարկեշտացեալ 'ի կերպարանն. իսկ Գայիոս առաջին 'ի Հռոմայեցիս Ճեմ առեալ գայր և գնայր 'ի բեմին. և առաջին նա զպատմուճանն 'ի բաց 'ի թիկանցն առնոյր, ըստ որում և վասն Կղէոնեայ Աթենացւոյ պատմեն, եթէ նա առաջին 'ի հռետորս 'ի բաց զվերարկուն ձգէր և ընդ բարձն հարկանէր ։

Առ այս՝ և խօսել Գայիոսին ահագին էր և 'ի թափոյ կրից բերեալ. իսկ Տիբերիոսին՝ հեշտ և բաղձալի, և առաւել կրթեր 'ի գութ խանդաղատանաց։ Իսկ յոճն բանից՝ էր Տիբերիոսին յստակ և ճշգրտիւ յերիւրեալ. իսկ Գայիոսին՝ համոզակեր առաւել և համբուն պերճ և շքեղ։

Սոյնպէս և 'ի չափու կենացն և 'ի սեղանի՝ էր Տիբերիոս սակաւապէտ և անպաճոյճ. իսկ Գայիոս՝ թէպէտ և առ այլովք ամենեքումբք ժուժկալ և խստամբեր, առ եղբարբն՝ ճոխ և բազմակատար. որ աղագաւ և Դրուսոս յանդիմանեաց զնա, զի սնակս Դեղփիկանս արծաթիս գնեաց նա հազար երկերիւր և յիսուն դրամակշռոյ առ լիտր։

Նա և 'ի բարս խորհեանց տարբերեցան նոքա՝ որպէս 'ի խօսսն։ Քանզի մին համբոյր պատուահեցաւ և հեզ. և միւսն՝ խիստ և ցասկոտ. զի և յակամայս իւր Գայիոս յատենախօսել իւրում, էր բազում անգամ զի 'ի բարկութենէն բերեալ ճիչ բառնայր բարձրաձայն, և յորդէր 'ի թշնամանս, և վեր 'ի վայր գործէր ողջոյն զբանն։ Ուստի և 'ի դարման խակութեանն յատենաբանել իւրում՝ 'ի թիկանց կուսէն զծառայ իւր անուն Լիկինիոս կացուցանէր, այր ոչինչ անհանճար, գործի մի ձայնաւոր 'ի ձեռին. որպէս զի 'ի ջերմանալ իւրում և 'ի թափոյ ցասմանն յորդել, նա ձայն հեշտ և թուլակի ածեալ գործեաւն, և այնպէս ինքն 'ի չափու բերեալ միան-

դամայն զթափ կրից և զձայնն՝ հեղանայր և հեշտին սանձակոծէր զանձն : Այսպիսի ինչ էին 'ի նոսա տարբերութիւնքն :

Իսկ յարութեան նախատակութեան ընդդէմ թշնամեացն, և յարդարութեան իրաւունս առ հնազանդեալսն և 'ի փոյթ ժրութեան յիշխանութեանն և յառ հեշտութիւնս ժուժկալութեան, համբուն հանդունատիպք հանդիպեցան նոքա :

Բայց էր Տիբերիոս ինն ամօք երէց. ուստի և նախատակութիւնք նոցա 'ի քաղաքին՝ ուրոյն և այլաժամանակեայք գտան. և քանզի ոչ միանգամայն ծաղկեցան նոքա և ոչ 'ի մի զուգեցաւ արութիւն նոցա՝ լինել այնպէս մեծ և անվանելի, ուստի և ոչինչ դուզնաքեայ վնասեցան մրցանք նոցա : Վասն որոյ և ուրոյն զնոցանէն խօսել արժան է, և առաջին՝ զերիցագունէն :

Արդ՝ այն ինչ Տիբերիոս ըստ տիս մանկութեանն ելեալ՝ յոյժ զհամբաւի հարաւ, զի և քահանայութեանն արժանի գտանէր (որում անուն կարգային՝ Հաւահարցից), քան 'ի տոհմիկ զարմէն՝ առաւել եւս յառաքինութենէ անձինն : Եւ զնոյն քաջ 'ի ներքս եբեր Ապպիոս Կղաւդիոս այր աւագ հիւպատեան և համարակալ, և բարձերեց Սինկղիտոսին Հռոմայեցւոց, և քան զամենեսեան որ առ իւրովքն ժամանակօք՝ առաւելեալ իմաստութ̃բ : Քանզի 'ի կոչունս ուրեք 'ի միասին խըմբեալ քահանայիցն այնոցիկ, անդանօր Ապպիոս առ ինքն զՏիբերիոս կոչեալ և

մարդասիրագոյնս և գգուանօք ընկալեալ զնա, ընտրեաց զնա 'ի փեսայ իւրում դըստերն: Իբրև մտադիւրագոյնս հաւանեցաւ Տիբերիոս, դարձաւ Ապպիոս 'ի տուն և անդէն առ սեամս դրանն կարդաց զկին իւր և ասէ 'ի ձայն բարձր. "Ո՛վ Անտոնիա՝ խօսեալ է իմ առն զմերն Կղաւդիա,,: Զարմացաւ Անտոնիա և ասէ. "Եւ հի՞մ այդչափ փութացար: Եւ առ ի՞նչ ձեպդ այդ: Թէրևս զՏիբերիոս Գրակքոս գտեր զմա 'ի փեսայ,,:

Սակայն և յինէն զանխուլ չէ, զի կէսք վասն Տիբերիոսի հօրն Գրակքեանց պատմեն զբանդ և վասն Սկիպիոնի Ափրիկանոսի. բայց և 'ի մատենագրաց բազմագոյնք պատմեն ըստ գրելոյս: Եւ Պողիբիոս ինքնին ասէ՝ եթէ յետ մահուն Սկիպիոնի Ափրիկանոսի՝ մերձաւորք նորա զՏիբերիոսն զայն առաւել քան զամենեսեան խնդրեցին փեսայացուցանել Կոռնելեայ, աղջիկ կոյս և չև ումեք խօսեցեալ առ 'ի հօրէն:

Արդ կրսերս այս Տիբերիոս զինուորեալ 'ի Լիբիա առ Սկիպիոնի երկրորդի քեռառն իւրոյ, և կեցեալ ընդ զօրավարին 'ի միում վրանի, արագ արագ յերևան ել բոյս բարուց նորա, բազում ինչ և մեծապէս քաջացեալ 'ի յորդոր առաքինութեան և 'ի գեղեցիկ նախանձ նահատակութեանց նորա: Քան զպատանիս զամենայն երևելի գտանէր 'ի հլութեանն և յարութեան քաջութեան, և առաջին սա 'ի

վեր 'ի պարիսպ անդր ելանէր Թշնամեաց՝ ըստ որում պատմէ Փանիոս, և ասէ իսկ զինքն ընդ Տիբերեայ նահատակեալ յայնժամ և բաժանորդ լեալ քաջութեանն : Իսկ 'ի կալ մնալ Տիբերեայ ընդ զօրականին՝ յոյժ սիրէին զնա . և 'ի հրաժարելն՝ մեծապէս անձկային նմա :

Բայց յետ արշաւանին այնորիկ կարդեցաւ նա գանձաւոր . և վիճակ ելանէր նմա երթալ 'ի զինուորութիւն ընդդէմ Նումանտինացւոց ընդ Գայիոսի Մանկինոսի հիւպատոսի, այր ոչինչ դժխեմ, սակայն և յոյժ վատախտար քան զամենայն զօրավարս Հռոմայեցւոց . ուստի և յաղէտսն բախտին և 'ի ձախողակսն առն՝ առաւել ևս երևեցաւ ոչ զգօնութիւն միայն Տիբերեայ և քաջութիւնն, այլ և որ ևս սքանչելին՝ շուք վարելի ակնածութեան նորա առ իւրն զօրավար . այն՝ որ կարի հիքացեալ յաղէտից անտի՝ ոչ ևս առ զօրավարս արդեօք ունէր զանձն : Քանզի հարուած առեալ նա 'ի մարտս մեծամեծս, պատրաստեցաւ չու գիշերայն առնել և Թողուլ լքանել զբանակետղն . բայց իրազգած Նումանտինացւոց եղեալ և հասեալ արագ և կալեալ զբանակետղն, զհետ մտին փախստէիցն . և սուր 'ի վերայ եդեալ յետամնաց զօրուն, ապա և 'ի ներքս փակեալ զզօրն առհասարակ, և վարեալ վանեալ զնոսա 'ի դժուարս և յառապարս և յանելս վայրաց, յայնժամ Մանկինոս յուսահատուր 'ի փրկութենէ զօրուն, առաքէր

խօսել ընդ նոսա 'ի հաշտութիւն ։ Նոքա պատասխանի ետուն՝ հաւատս ընծայել և ոչ ումեք, բայց Տիբերիոսի ․ և խնդրէին զնա առաքել առ նոսա ։

Զայս խնդրեցին նոքա ոչ 'ի մեծարանս միայն երեսաց պատանւոյն, (զի և յոյժ անուն նորա զհամբաւի հարեալ էր 'ի բանակին նոցա), այլ զի և զՏիբերիոս զհայր նորա յուշ ածէին՝ զի մարտ եդեալ կռուեցաւ ընդ Իբերացւոց, և ժողովս վանեալ բազում՝ հաշտութիւն տայր ընդ Նոմանտինացիս, և ժողովրդեանն միշտ անդրժելի զնոյն պահէր իրաւամբք և արդարութեամբք ։ Իբրև անդր առաքեցաւ Տիբերիոս և խօսեցաւ ընդ նոսա, ընկալաւ ըզպայմանսն առ 'ի նոցանէ, և յայլ ինչ ևս պայմանս յանդուցեալ զնոսա, 'ի գլուխ հանէր զգործն ․ և այնպէս յայտնի օգուտ երկուս բիւրս ապրեցուցանէր յայնժամ 'ի քաղաքացեաց Հռոմայեցւոց, թող զծառայս և զայլ ևս խուժանն բանակին ։ Իսկ զանկածն ամենայն որ 'ի ղակղի անդ Հռոմայեցւոց՝ կապուտ կողոպուտ աւարեցին Նոմանտինացիք ․ յորս էին և Տիբերեայ տախտակք արձանագրութեանցն և համարոց գործոց գանձաւորութեանն ։ Կարևոր յոյժ համարեցաւ Տիբերիոս թափել 'ի նոցանէն զտախտակսն ․ և իբրև զօրականն 'ի չու անկանէր, ինքն յետս դարձեալ չոքաւ 'ի Նոմանտիա՝ առեալ ընդ իւր յընկերացն երիս կամ չորս ։ Իբրև չոքաւ, կոչէր արտաքս զհրամանատարս քաղաքին, խնդրէր

դարձուցանել առ նա զտախտակն. զի մի ամբաստանութիւն թերևս զնմանէն տեղի տացէ ինչ 'ի թշնամեացն, վրիպեալ ինքն 'ի պատասխանւոյն վասն պաշտամանն իւրոյ: Յոյժ ուրախ Նոմանտինացիքն եղեալ ընդ դէպս կարօտութեանն Տիբերեայ, և հրաւէր նա 'ի ներքս 'ի քաղաք անդր կարդային նմա. նա զտեղի առեալ մտախորհ լինէր. նոքա մատուցեալք առ նա և զձեռանէն կալեալք ժտէին՝ մի ևս ինքն թըշնամիս ունել զնոսա, այլ իբրև 'ի բարեկամս վստահ լինել: Ապա լաւ համարեցաւ Տիբերիոս հաւանել ընդ խնդիրն. քանզի անձկայր 'ի ձեռս զտախտակն բերել, և խիթայր ևս երկմտութեամբն զայրացուցանել զարսն. մտեալ 'ի քաղաքն, նոքա նախ ճաշ պատրաստեալ նմա՝ աղաչէին բազմել 'ի սեղան և ուտել ընդ նոսա. ապա առեալ դարձուցանէին նմա զտախտակն. և հրաւիրէին ևս՝ ինչ զոր կամի՝ առնուլ յանկածէն. նա ոչինչ էառ՝ բայց լիբանոս 'ի պէտս հասարակաց զոհիցն, և գիրկս սիրով ածեալ արանցն՝ հրաժարէր 'ի նոցանէն:

Իբրև նա դարձ արար 'ի Հռոմ, և անդ զամենայն զգործ նորա ամբաստանեալ խօսէին, իբրու դժոխըմբերելի իրս և քաղաքին անարգութիւն, յայնժամ մերձաւորք և բարեկամք զօրականին՝ ամբոխ մեծ, խռնեալ զՏիբերեաւ, և զամենայն զամօթ զդաշինն զայնորիկ 'ի վեր առ զօրավար անդր հանեալ՝ բողոք բառնային զի 'ի ձեռն

Տիբերեայ բիւրաւորք քաղաքացեաց ապրեալք փրկեցան: Իսկ որք միանգամ ընդ պայմանս դաշինն սրտնեալք էին, 'ի մէջ եկեալ՝ խնդրեցին զհետ զնախնեացն երթալ օրինակին՝ որ մերկամարմին առ Թըշնամին առեալ արձակեցին զզօրավարսն՝ որ յանձին կալան արձակիլ յազատութիւն 'ի Սամնիացւոց անտի. և առաքեցին ևս առ նոսա զգործակիցսն 'ի նոյն դաշն՝ որպէս զգանձաւորսն և զհազարապետսն, 'ի գլուխ կուտեալ նոցա այնպէս զերդմնազանց դրժել դաշանցն:

Բայց 'ի ժամուն խուժանն յայտնապէս զիւր խնամն 'ի ներքս բերէր առ Տիբերիոս: Քանզի վճիռ տայր առնուլ 'ի ձեռս տալ Նումանտինացւոց զհիւպատոսն ևեթ մերկ և կապեալ. իսկ այլոցն ամենեցուն առհասարակ թողութիւն առնէր 'ի շնորհս Տիբերեայ: Եւ թուի՝ թէ զօրավիգն 'ի ժամուն եկաց և Սկիպիոն՝ աւագամեծար այր և հաստահարուստ 'ի մէջ Հռոմայեցւոց: Սակայն և բամբասեցաւ Սկիպիոն, զի ոչ և զՄանկինոս փրկեաց. և ոչ դուն ևս գործեաց հաստատել զդաշն հաշտութեանն ընդ Նումանտինացիս՝ որ 'ի ձեռն Տիբերեայ ընտանւոյ իւրում և բարեկամի:

Եւ ապա թուի թէ բազում ինչ 'ի գրժտութեանցն՝ որ ընդ նոսա երկոսին, 'ի պատուասիրութենէն յուզեցաւ Տիբերեայ, և 'ի բարեկամացն և յիմաստակացն՝ որ բարձր առնէին զնա. սակայն և ոչ անհաշտ եկաց թշնամութիւնն և ոչ 'ի հա-

խողակ կրթեցաւ գործ ։ Նա որպէս ինձ կարծիք՝ երբէք Տիբերիոս յաղէտս չխարդաւանէր , եթէ 'ի նախահատակութիւնս նորա 'ի քաղաքականս մերձ կացեալ էր Սեիպիոն Ափրիկանոս ։ Այլ նա յայնժամ 'ի կռիւ պատաղեալ 'ի Նումանտիա , ձեռնամուխ 'ի քաղաքին լինէր Տիբերիոս կարգեալ Օրինօք՝ յայսպիսի ինչ պատճառաց ։

Որչափ ինչ 'ի գետնոյ մարտիւ պատերազմի 'ի բուռն արկանէին հռոմայեցիք 'ի սահմանակցաց անտի , կէս մի յայնմանէն 'ի վաճառ հանեալ, և զկէսն դարձեալ՝ հասարակաց գործէին. և առեալ բաշխէին զայն կարօտելոց և մուրկաց քաղաքին , և հարկանէին նոքա հարկ թեթև 'ի գանձ արքունի ։ Բայց ճոխիցն հարկս առաւել 'ի ներքս մատուցեալ և այնպէս 'ի բաց զաղքատսն վարեալ, օրէնս հաստատեցին մի ումեք ստանալ լծավարս գետնոյ առաւել քան զհինգհարիւր ։ Եւ ապա այս օրէնք առ վայր մի զընչաքաղցութիւնն սանձեաց զճոխիցն և դիւր արար աղքատացն կալ մնալ 'ի կալուածսն, և իւրաքանչիւր՝ որպէս և ունէր յառաջին՝ վայելել 'ի հասս բաժնին իւրեանց ։ Բայց յետ այնորիկ իբրև ճոխքն սահմանակիցք՝ 'ի ձեռն կարծեալ տեարցն յիւրեանս տարան զբաժինսն զայն , 'ի վերջէ՝ և յայտնի եւս բազում յոյժ յայնցանէ յանունն իւրեանց ժառանգեցին , յայնժամ ապա աղքատացն 'ի բաց վտարեալ՝ ոչ եւս մտադիւրութեամբ ընթանային 'ի պատերազմ, և խն_

նամ ես չածէին դաստիարակութե մանկրտոյն. որպէս զի և ողջոյն խաղլոյ վայրիկ մի ևս մեծապէս ամայանալ յազատաց որերոյն, և գերեօք ընուլ բարբարոսօք, յորոց և 'ի ձեռն մեծատունք մշակէին զկալուածսն՝ ուստի 'ի բաց մերժեալ խոկ էին զիւրեանց քաղաքացիսն :

Արդ Գայիոս Լելիոս ընկեր Սկիպիոնի բուռն հարեալ խոկ էր դարման տանել խակութեանն. բայց նորա ընդդէմ դարձեալ ճոխից արանց և աւագաց, նա զահի հարեալ յամբոխից՝ լռեաց 'ի գործոյն. յորմէ և անուն ընկալաւ խմաստուն կամ Զգօն, քանզի և Սափիէնս անուն՝ զերկուսն նշանակէ : Յայսմանէ ապա Տիբերիոս կարգեալ 'ի ժողովրդապետ, անդէն արագ զնորուն գործոյ բուռն հարկանէր. 'ի նոյն դրդեալ՝ որպէս բաղումք ասեն՝ 'ի Դիոփանեայ հռետորէ և 'ի Բլոսսիոսէ իմաստասիրէ : Էր Դիոփանէս փախրանդի Միտիլենացի, և Բլոսսիոս՝ յԻտալիոյ Կումանացի. և էր սա 'ի քաղաքին մտերմացեալ ընդ Անտիպատրոսի Տարսացւոյ, յորմէ և պատուեցաւ 'ի նուէրս իմաստասիրական արձանագրութեանց : Իսկ կէսք ասեն՝ եթէ պատճառք եկաց բանին և ինքնին մայր նորա Կոռնելիա, առէպ յերես հարեալ իւրոց զաւակաց՝ զի տակաւին անուն կարդան նմա Հռոմայեցիք՝ Դստեր Սկիպիոնի, և ոչ ևս՝ Մայր Գրակքեանց : Բայց և այլք ասեն պատճառք իրացն զՍպորիոս զոմն Պոստումիոս՝ համատիք Տեբերեայ և նա_

խանձաւոր նորա փառացն յատենախօսութիւնս. ուր վասն և Տիբերիոս 'ի դարձին 'ի մարտէն տեսեալ զայս Սպորիոս յոյժ յառաջադէմ քան զինքն 'ի համբաւսն և 'ի զօրութեան և յոյժ սքանչացեալ, խնդրեաց՝ որպէս հաւանեալս եմ՝ բարձերէց քան զնա լինել. բուռն հարեալ 'ի գործ քաղաքին դժնդակ յոյժ, որում և դէտակն մեծապէս կալեալ միայնն առհասարակ:

Իսկ նորա եղբայր Գայիոս գրեաց ուրեք 'ի մատենին իւրում, եթէ Տիբերիոս գնացեալ 'ի Նումանտիա ընդ Տիւրրենիա և տեսեալ զանդաստանսն լքեալ ամայի, և զի և մշակք արդիւնարարք և հովիւք՝ էին առհասարակ արք եկամուտք և խուժադուժք, միտախորհ յայնժամ եղև բուռն հարկանել 'ի գործ՝ որ եկաց նորա պատճառք ամբաւ աղէտիցն: Այլ սակայն և խուժանն ինքնին գլխովին յորդեաց 'ի նա առաւել զփղձն զայն և զպատուասիրութի̅, դրդեալ զնա 'ի ձեռն գրոց՝ գրե̅լ 'ի սրահս և յորմունս և 'ի շիրիմս, ժառանգեցուցանել միւսանգամ զաղքատս կալուածոյն արքունի:

Բայց և ոչ ինքնին միայնակ արձանագրեաց Տիբերիոս զօրէնսն զայն. այլ խորհուրդ վասն բանին հարցանէր 'ի քաղաքացեացն առաքինեաց և ականաւորաց. յորս էր ինքնին Կրասսոս քահանայապետ մեծ, և Մուկիոս Սկևողաս իրաւագէտ և հիւպատոս 'ի ժամուն, դարձեալ և Կղաւ֊

դիոս Ասպրիոս անէր Տիբերեայ։ Եւ թուի թէ օրէնք այնչափ հեզ և քաղցր երբէք չեկաց ընդդէմ մեծի անիրաւութեանն այնմիկ և հարստահարութեանն։ Քանզի և պարտ և արժան իսկ էր հարստահարողացն զվրէժն լուծանել զստամբակութեն և տուգանօք չափ 'ի բաց կալ 'ի կալուածոյն զոր վայելէին ընդդէմ օրինացն. բայց նոցա Տիբերիոս հրաման տայր՝ առեալ իւրաքանչիւր զգինն՝ թողուլ զոր անիրաւութեամբ ժառանգէին, և տալ ապա զայնոսիկ 'ի ձեռս քաղաքացեացն կարօտելոց։ Արդ թէպէտ և այնչափ մարդասիրագոյն էր կարգ սահմանին, և ժողովուրդն 'ի մոռացօնս զանցեալսն դարձուցեալ՝ գոհ էին անդորրանալ յառաջոյ, համայն և այնպէս ճոխքն և գոյաւորք՝ առ կիրս ընչաքաղցութեան յատելութիւն ընդդէմ սահմանին այնմիկ բերեալք, և առ զայրուց ցասմանն և յամառութեան՝ ընդսահմանագրին, գործ առնէին սադրել հրապուրել զամբոխն. ասելով եթէ ըղբաշխ զայդ 'ի ներքս արկանէ Տիբերիոս 'ի խռովլ քաղաքին և վեր 'ի վայր գործել զամենայնն։ Սակայն վճարեցին նոքա և ոչինչ յայնժամ։

Քանզի անդուստ Տիբերիոս 'ի զօրութի ճարտարախօսութեանն իւրոյ, այն՝ որ և սաստիկ յանցաւորութեանց բնաւորեցաւ շուք 'ի վերայ ածել, 'ի վէգ եկեալ ընդ նոսա յաղագս գեղեցիկ և իրաւացի բանին՝ ահ արկանէր և անպարտելի ճնայր,

յորժամ անդ 'ի բեմին պարառեալ 'ի բազմամբօքն խուժանէն կայր և խօսէր 'ի կողմն աղքատաց որերոյն և ասէր, եթէ՝ և գազանացդ անգամ Ճարակելոց յԻտալիա որջք գոն և կաղապք և խշտիք իւրաքանչիւր նոցա. իսկ որք մարտ եդեալ կռուին և 'ի մահ նահատակին 'ի վերայ Իտալիոյ, չիք նոցա այլ՝ բայց օդդ և լոյսդ, և անտունք այնպէս և անյարկք՝ յայսկոյս յայնկոյս գնան Թափառին հանդերձ որդւովք իւրեանց և կանամբք: Եւ ինքնակալքդ ինքնին գլխովին դաւեն խաբեն զզօրականն 'ի խրախուսել 'ի գոռ ընդդէմ Թշնամեացն վասն գերեզմանաց իւրեանց և բագնեացն. քանզի չիք և ոչ մի 'ի յոքնաթիւ Հռոմայեցւոցդ, որ բեմ գուցէ հայրենի և կամ շիրիմ նախնեացն. այլ մարտ եդեալ կռուին դոքա և մեռանին՝ առ 'ի հանդերձել այլոց գրգանս և մեծութիւնս. և Տեարք տիեզերաց անուանին դոքա, սակայն չիք դոցա սեպհական՝ և ոչ կոշտ մի հողոյ:

Յայսպիսեաց բանից խօսեալ Տիբերեայ մեծապէս քաջալերութեամբ, և 'ի գութ Ճշմարիտ խանդաղատանաց բերեալ առ խուժանն և գեղեցիկ մոլութեամբ վառեալ զնա և բարձրացուցեալ, ոչ ոք 'ի հակառակորդաց այնուհետև ընդդէմ դարձաւ: Թողեալ ապա զընդ նմա զպայքարն, դարձան նոքա առ Մարկոս Հոկտաւիոս մի 'ի ժողովրդապետաց անտի, այր պատանի համեստ և պարկեշտ, և բարեկամ ևս Տի-

բերեայ և ընտանի: Սա այս Հոկտաւիոս զառաջինն պատկառ կացեալ Տիբերեայ, ոչինչ հակառակէր. բայց ապա նեղեալ 'ի թախանձանաց և 'ի պաղատանաց բազմաց աւագաց և ճոխից, հուսկ ապա հակառակ ամբարձաւ Տիբերեայ, և սկսաւ կռուել ընդ օրէնսն ընդ այն:

Արդ 'ի ժողովրդապետսն ցանդ ընդդիմամարտ կողմն բնաւորեցաւ յաղթել. քանզի եթէ մի ոք միայն 'ի նոցանէն ընդդէմ դարձցի, դամադիր չլինելն 'ի բանն այլք առհասարակ իւրեանց հաւանութեամբն: Որ աղագաւ զայրացեալ յայնժամ Տիբերիոս, զվայելուչ զայն օրէնսն աղարտեաց, և 'ի տեղին օրէնս այլ մատուցանէր հեշտալի ևս խուժանին, և հարստահարող մարդկանն՝ առաւել ահաբեկ. քանզի հրաման տայր արագ արագ 'ի բաց 'ի կալուածոցն հրաժեշտ տալ՝ զոր ունէին նոքա հակառակ վաղնջուց կարգացն: Ուստի և յայնժամ զօրհանապազ 'ի բեմին 'ի պայքարի կային ընդ միմեանս Տիբերիոս և Հոկտաւիոս: Այլ թէպէտ և էր իսկ նոցա կագն ջերմագոյնս յոյժ և անվանելի, պատմեն՝ երբեք նոցա այր ընկերին չասել ինչ թշնամանս ամենևին, և երբեք բան տգեղ առ զայրացուս բարկութեանն չարձակել նոցա ընդդէմ միմեանց: Քանզի և քաջանութիւնն ինքնին և բարիոք դաստիարակութիւնն 'ի չափու ունել բնաւորեցաւ զմեր միտսն, ոչ միայն և 'ի գինեբբուս անդամ, այլ և 'ի վէգս պատուասիրու-

թեանն և 'ի թափս բարկութեան: Տեսեալ ապա Տիբերեայ՝ զի և 'ի Հոկտաւիոս ինքնին կրթին օրէնքն, իբրև որ ագարակս շատ զհասարակացն ժառանգեալ ունէր, սկսաւ աղաչել զնա 'ի բաց զյամառ զկիրսն դնել․ խոստումն ևս առնէր հատուցանել նմա ինքնին զայնոցիկ զգինն յիւրոց անտի գոյից, թէպէտ և չէր ինչ բազմահարուստ:

Իբրև յանձին չկալաւ Հոկտաւիոս, յայնժամ հրովարտակ հանէր Տիբերիոս, պատուէր 'ի վերայ կարգէր այլոց իշխանաց, գործել և ոչինչ մինչև 'ի սահմանել օրինացն այնոցիկ հանդերձ քուէիւք․ և ինքնին իւրով կնքովն առեալ փակէր զտաճար Կռոնոսին․ զի ոչ տանել ինչ անդր և ոչ բառնալ ինչ կարասցեն գանձաւորք․ և տուգանս 'ի վերայ սպառնացաւ զօրավարացն անսաստից, որպէս զի և առհասարակ զահի հարեալք՝ թողին լքին այնուհետև իւրաքանչիւր զգործել իւրեանց:

Յայնժամ և ձոխք և գոյաւորք փոխեալք զհանդերձս՝ գնային շուրջ ընդ հրապարակն հիքացեալք և քամահականորք․ այլ 'ի ծածուկ նենգ Տիբերեայ լարէին, և 'ի դարանի ևս սիկարեանս արարին սպանանել զնա: Ուստի և Տիբերիոս ոչինչ զանխուլ վառեցաւ և ինքն 'ի դաշնակ մի աւազակաց՝ որոյ անուն կարդան Տօլոնէս:

Իբրև օրն ժամանակաւ հասանէր, և Տիբերիոս կոչեաց զժողովուրդն արկանել քուէայս, յայնժամ ընչեղք առեալ 'ի բաց տանէին զսափորսն քուէիցն, և աղմուկ

մեծապէս յուզեցաւ 'ի ժամուն: Թէպէտ և Տիբերեայ Թիկնածուք բազմահոյլք բուռն առնել ձեռնհաս էին և 'ի մի վայր ևս խմբէին նոքա 'ի նոյն գործ, անդուստ Մալլիոս և Փուլբիոս այք հիւպատեանք զծնգովքն փարեալ Տիբերեայ և զձեռացն կալեալք և յարտասուս ևս հատեալք՝ յողոք խոնարհեցան լռել 'ի գործոյն: Ապա Տիբերիոս ընդ միտ ածեալ զահագին ազէտն՝ որ առ դուրս կայր, և մեծարանս ևս երեսաց արարեալ արանցն, հարցանէր՝ զինչ կամիք զի արարից: Նոքա ետուն պատասխանի՝ Զեն նոքա բաւականք խորհուրդ տալ նմա յաղագս կարևորագունիցն իրաց. սակայն Թախանձ արկեալ աղերսեն՝ ապաստան 'ի Սենեկլիտոս անդր լինել: Եւ ապա ուրեմն 'ի հաւանութիւն ածին զՏիբերիոս:

Իբրև Սենեկլիտոսն խմբեցաւ 'ի խորհուրդ, և վճարեցին և ոչինչ 'ի պատճառս ընչեղացն՝ որ անդանօր զօրացեալ էին, ապա գործ մի գործել բուռն եհար Տիբերիոս հակառակ օրինացն և դժպատեհ, 'ի բաց զՕկտաւիոս յիշխանութենէն առնել. և զի յանհնար մոլին իրքն՝ օրինակ այլ գամագիտ 'ի հաստատութիւն օրինացն լինել: Սակայն և կանխեաց յայտնապէս աղաչել աղերսել զնա, բանս մարդասիրագոյնս 'ի ներքս մատուցանէր, ունէր զնորա ձեռացն, յանձն առնուլ տեղի տալ և զշնորհ զայն առնել ժողովրդեանն՝ որ իրաւանցն 'ի խնդիր ելեալ է, և միջանակ

դուզնաքեայ տանն զմեծամեծ զնուրոց քըրմանցն և զվտանգաց։ Իբրև աղաչանացն երեսս ինչ չարար Հոկտաւիոս, ապա Տիբերիոս ասէր՝ եթէ երկաքանչիւր նոքա միանգամայն կացեալ իշխանք և հոմիշխանք և 'ի կարեւորագոյնսն անմիաբանք, երբէք նոցա անկռիւ զաւուրս իշխանութեն անցուցանել չէք հնար. և դարման իրացդ մի միայն՝ կամ միոյն կամ միւսոյն հասանէ 'ի բաց զիշխանութիւն դնել. և կայր և ժտէր զի Հոկտաւիոս ինքնին հրաման տացէ ամբոխին քուէայս արկանել վասն բանին. և զինքն առաջին 'ի ներքս արկանէր Տիբերիոս, և ասէր՝ արագ արագ 'ի բաց զիշխանութիւնն մերկանալ և 'ի սոսկականաց կարգն անցանել, եթէ այնպէս հաճոյ թուեսցի քաղաքին։ Իբրև և յայնմանէն տեղի ետ Հոկտաւիոս, ինքնին ապա՝ ասէր Տիբերիոս՝ տալ արկանել քուէայս վասն նորա, եթէ խորհուրդ ածեալ նա վասն բանին՝ երբէք չփոխեսցի 'ի մտացն. ապա և զեկեղեցին արձակեաց։

Ապա յաւուրն երկրորդի խմբեալ Տիբերեայ զժողովուրդն և ելեալ 'ի բեմն, միւսանգամ թեակոխէր ամոքել զՀոկտաւիոս. իբրև նա և յայնժամ անդրդուելի մնայր, ապա խորհուրդ 'ի ներքս տայր հանել 'ի նմանէ զժողովրդապետութիւնն. և կարդայր կոչէր զքաղաքացիսն տալ ըզքուէայսն։ Արդ ցեղիցն գոլով 'ի թիւ երեսուն և հինգ, և 'ի նոցանէն եօթն և տասինն արկեալ քուէայս հակառակ Հոկ-

տաւիոսի, իբրեւ մի ևս այլ շատ էր 'ի սու-
կականի կարգ անցուցանել զՀոկտաւիոս,
յայնժամ Տիբերիոս հրաման տայր զկայ
առնուլ. և սկսաւ միւսանգամ աղաչել
զՀոկտաւիոս, զի երկս ածէր և համբուրէր
զնա յանդիման ժողովրդեանն և յողոք
խոնարհէր առ նա՝ մի յանարգութիւն
յայն առնուլ խնդուցանել զանձն, և մի
բամբասանս ինքեան հանդերձել՝ զի զայն-
պիսի խորհուրդ զխիստ և զապառում 'ի
ներքս ընծայեայ: Եւ պատմեն՝ ոչ անցաւ
ինչ և անամօք լսել յայնժամ Հոկտաւիո-
սի զպղերին Տիբերիայ, նա և արտասուա-
լից ևս լինել նմա յայնժամ, և հարուստ
ժամ այնպէս կալ մնալ անմռունչ. բայց
ապա զաչին դարձուցեալ 'ի Ճոխան և 'ի
գոյատորան՝ որ անդանօր խմբեալ կային,
թուեցաւ իմն նմա զամօթ կրել առաջի
նոցա՝ զանգիտեալ յանարգութենէն և
յայլ ևս աննուէր կրից. ուստի և աղատա-
կանութեամբ ոգւոյ դարձաւ առ Տիբե-
րիոս և ասէր՝ առնել զոր ինչ և կամեցի:

Իբրև այնպէս հաւանեալք կնքեցին զօ-
րէնան, ապա հրաման տայր Տիբերիոս
միում ումեք յաղատագրելոց անտի խւրոց՝
առնուլ 'ի վայր քարշել 'ի բեմէն զՀոկ-
տաւիոս (քանզի և փոխան պաշտօնէից՝ նո-
քօք վարէր): Եւ անդ էր ապա տեսանել
զՀոկտաւիոս, տեսի՛լ աշխարհելի, յորժամ
նա այնպէս անարգաբար 'ի վայր ձգէր 'ի
բեմէն անտի, և անդէն խուժանն հան-
դերձէր 'ի վերայ անկանել նորա. բայց

ճոխիցն աճապարեալք՝ դիմեալ ընդդէմ և զյարձակումն սանձեալ, այնպէս հազիւ ուրեմն պարապ տային Հոկտաւեայ զանձն 'ի միջոյ անտի ամբոխին 'ի բաց ճողոպրել փախստեամբ. սակայն և զմիոյ 'ի հաւատարիմ ծառայիցն նորա՝ որ նահատակեալ պաշտպանէր իւրում տեառն՝ խլէին զերկոսին զաչսն. և ցաւեալ այն Տիբերեայ յոյժ և 'ի խուճապ տագնապի 'ի լուր գործոյն դիմեալ 'ի վայրն՝ խաղաղէր զաղմուկն :

Ապա և՛ ընդ օրէնսն բաշխից անդաստանացն հաւանեալք առհասարակ, կարգեցին եդին արս երիս ոստիկանս և բաժանարարս գետնոյն՝ զնոյն ինքն զՏիբերիոս և զԿղաւդիոս զԱպպիոս զաներ նորա և զեղբայր նորա զԳայիոս Գրակքոս. բայց նա չէր անդ յայնժամ և մարտ եդեալ կռուէր առ Սկիպիոնի 'ի Նումանտիա :

Իբրև 'ի գլուխ զիրսն տարաւ խաղաղութեամբ Տիբերիոս և հակառակորդ ոք չգոյր այնուհետև, կարգէր ժողովրդապետ փոխանակ Հոկտաւեայ ո՛չ յաւագաց զոք քաղաքին. այլ զՄուկիոս զոմն իւր արբանեակ. և վասն այնորիկ անհնարին խոցեցան ճոխքն. և զանդիտեալք 'ի բարդաւաճելոյն Տիբերեայ՝ խոտէին անարգէին զնա 'ի Սենկղիտոսին. որպէս զի և 'ի խնդրել Տիբերեայ ըստ սովորութեանն վրան մի 'ի հասարակաց ծախուցն՝ դադարել 'ի նմա և գործել զբաշխն զայն, չետուն նմա (թէպէտ և այլոց բազում անգամ շնորհեալ

խակ էին և 'ի դուզնաքեայս անգամ) · առ-այս՝ և ոչ ծախս հրամայեցին նմա՝ բայց նաքարակլիսս ինն յաւուրն. և այն՝ 'ի գըր-գռութենէն Պոպլիոսի Նասիկայայ, որ մերկապարանոց թշնամի հակառակ ամ-բարձաւ Տիբերիայ (քանզի և էր խակ նորա բազում 'ի գետնոցն հասարակաց, և դը-ժոխըմբերելի էր նմա հրաժեշտն). և վասն այնորիկ սաստիկ ևս 'ի ցասումն բրդէր յայն-ժամ խուժանն:

Իսկ յետ այսորիկ յեղակարծումն դէպ տայր մեռանել միում ումեք 'ի բարեկա-մացն Տիբերիայ. և 'ի դիակնն նշան երևել կապուտակ և ըրթադոյն, բողոք ժողովըր-դականքն բարձին վասն դեղակուր առնն լինելոյ. և առհասարակ դիմեալք 'ի դիա-հանսն, նոքա բառնային զդագաղն. և մերձ դիականն կացեալք 'ի մատուցանել անդ զհուրն 'ի ներքոյ, թուէր նոցա ոչինչ վրիպել 'ի կարծիս դեղոյն. քանզի պայ-թեալ յայնժամ մեռելոյն՝ բազում ինչ ժահահոտ և խխխաւրաս 'ի դուրս ժայթ-քէր, զի և զկրակն անցուցանէր. թէպէտ և այլ կրակ ևս մատուցին նոքա, ոչինչ կա-րացին բորբոքել. մինչև յայլ վայր փո-խեալ զդիակն՝ անդանօր ձիգն թափեալ հազիւ ուրեմն հրկէզ առնէին: Ապա և Տիբերիոս ինքնին 'ի գրգռել ևս ամբոխին՝ 'ի թուխս համակեցաւ. և առաջի զորդիսն իւր մատուցեալ խուժանին, աղաչէր խըն-նամ տանել նոցա և մօրն նոցա. իբրու որ վասն անձին վտանգեալ իցէ այնուհետև:

Զայնու ժամանակաւ պակասեալ 'ի կենաց փիլոսոփայն Աստաղոս, ուստի և Եւդիմոս Պերգամենոս առեալ բերէր զկտակ նորա 'ի Հռոմ քաղաք. քանզի ժառանգ իւր զՀռոմայեցւոց ժողովուրդն ինքնին կացուցեալ էր արքայն: Ապա անդէն Տիբերիոս 'ի շնորհս ամբոխին օրէնս դրէր, զի զինչսն Աստաղոսի ածեալ փոխեսցեն 'ի Հռոմ, և բաշխեսցեն 'ի քաղաքացիսն՝ որոց միանգամ բաժին ելեալ էր 'ի բաշխից գետնոյն, զի 'ի դրամոց անտի անօթս կարևորս և մշակութեան գործիս պատրաստեսցեն նոքա: Իսկ վասն քաղաքացն Աստաղոսի արքայութեանն՝ ասէր Տիբերիոս՝ ոչինչ պարտել մնալ Սինկղիտոսին խորհըրդոյ, այլ ինքնին խորհուրդ վասն այնորիկ 'ի ներքս մատուցանել ժողովրդեան. և յայսմանէ ապա առաւել ևս 'ի խոր խոցեցաւ Սինկղիտոսն: Ուստի և յայնժամ Պոմպէոս յարուցեալ ասէր, եթէ դրացի ինքն գոլով բնակութեամբ Տիբերեայ, իմացեալ եղև՝ զի Եւդիմոս Պերգամենոս ետ Տիբերեայ արքունի թագ և ծիրանի, իբրու որ հանդերձեալ իցէ թագ կապել 'ի Հռոմէ Անդուստ և Կուինտոս Մետեղղոս յերեսս հարկանէր Տիբերեայ, զի համարձակաւ հայր նորա կացեալ՝ ցանդ 'ի դարձին նորա 'ի տունն յետ ընթրեացն, յայնժամ քաղաքացիք անցուցանէին զՃրագունս, զի մի թերևս կարծեսցին տարաժամու յերկարագոյն նուագ դեգերել նոցա յակումբս և 'ի գինեըմբուս. իսկ ինքնին Տիբերեայ

Ճրագաւ գիշերի ուղի հորդեն արկայք և մուրիկք խուժանին։

Առ այսոքիւք և Տիտոս Աննիոս այր անբարի և լիրբ, բայց և անպարտելի թուէր այրն 'ի բանսն, 'ի հարց և 'ի պատասխանի, յառաջ եկեալ ձայն տայր Տիբերեայ, բողոք բառնայր կնքել՝ զի անշուշտ նա անարգեաց անպատուեաց զիւր իշխանակիցն՝ զայր անդրժելի և նուիրական ըստ օրինացն։ Իբրև անդ ալմուկ յուզեալ մեծ՝ 'ի դուրս վազեաց Տիբերիոս, խմբեաց զխուժանն. հրաման տայր ածել զառաջեաւ զԱննիոս՝ զորմէ և ամբաստան ինքն կայր։ Իսկ Աննիոս գիտելով զանձին չափ խոնարհագոյն քան զՏիբերիոս 'ի ճարտարախօսութեանն և 'ի համբաւն, գնացեալ ապաւինեցաւ 'ի սեպհական իւր քաջութիւն ուշիմութեն. և խնդրէր 'ի Տիբերեայ՝ մինչչև զփաստումն 'ի ներքս ածեալ՝ պատասխանի նմա դուզնաքեայ հարցմանն առնել։ Իբրև չնորհեաց նմա Տիբերիոս հարցանել, և 'ի լռութիւն դարձաւ ժողովն, եկաց Աննիոս և հարցանէր զայս ինչ. “Եթէ երբէք քեզ կամք էին թշնամանել և անպատուել զիս, և ես 'ի թիկունս ինձ զոք կարդայի 'ի քոց իշխանակցաց, և նա օգնէր ինձ, դու յայնժամ՝ սրտմտեալ ընդ բանն, ա՛ղէ ասա, 'ի բաց 'ի նմանէն հանէի՞ր արդեօք զիշխանութիւնն„։ Եւ պատմեն՝ եթէ 'ի հարցումն այնպէս իմն վարանեալ տագնապեցաւ Տիբերիոս, զի և՝ թէպէտ արագամիտ էր յոյժ այրն քան զամենեսեան 'ի խօսել և անվե-

հեր և անդարձուրելի, լուռ եկաց յայնժամ, և արձակէր զեկեղեցին :

Սակայն և խելամուտ եղև Տիբերիոս, զի անցքն Հոկտաւիոսին 'ի քաղաքականութեան դժոխըմբերելի գտաւ միանգամայն և ազատորերոյն և խուժանին. (քանզի և թուեցաւ ինձ նկուն և խոտան զաւագութիւնն առնել զժողովրդապետացն, որ յայն վայր մեծապէս կայր 'ի շուք փառաց իւրոց)։ Այս ատենաբանութիւն ինձ յարդարէր Տիբերիոս յանդիման ամբոխին, զոր և ոչ անտեղի արդեօք իցէ աստանօր համառօտ սղագունիւք 'ի ներքս բերել. ցուցանել զառնն զհամոզակէր քաջութիւն և զկորովութիւն ճարտարաբանութեանն :

Քանզի ասէր. " Եթէ այր ժողովրդապետ անշուշտ այր նուիրական դոյ և անդրժելի, նուիրական ժողովրդեան և հովանի նորա : Այլ թէ երբէք փոխեալ շրջեալ անիրաւեսցի նա առ ժողովուրդն ինքնին զլխովին, նուազ զնորա արասցէ զոյժն, և վրէպ զնա կացուսցէ 'ի քուարկութեանց անտի, անձամբ զանձն յայնժամ տեռապերծ կապտեսցէ 'ի բարձէն իւրմէ. ոչինչ առաքինացեալ յայն ինչ՝ որ աղագաւ նմա 'ի ձեռս ետուն զբարձն : Քանզի թէպէտ և թոյլ իցէ զԿապետոլին ինքնին հիմն 'ի վեր տապալել առն ժողովրդապետի և հուր ևս զնաւակայիցն հարկանել, յայտոսիկ աղուացեալ նա՝ եղեռնաւոր ժողովրդապետ կացցէ : Այս

եթէ զժողովուրդն ինքնին վանեսցէ, ժողովրդապետ ոչ ևս է: Նա զխորհուրդ ապա ոչ դժպատեհ և դժոխըմբերելի կիրք իցեն, եթէ այր ժողովրդապետ իշխան իցէ 'ի բանս զայր արկանել հիւպատոս. իսկ ժողովուրդն բաւական ոչ իցէ 'ի բաց յիշխանութենէն հանել զժողովրդապետն՝ 'ի զեղծանել նորա իշխանութեամբն ընդդէմ ժողովրդեանն՝ որ զնոյն ետ նմա, և որ ընտրեալ կարգէ միանգամայն և զհիւպատոս և զժողովրդապետ: Այսպէսն արքայութիւնն ինքնին, թող զնորա զամենայն շուք զիշխանութեանն, է և այն անշուշտ յարարողութիւնս մեծամեծս նուիրական յոյժ յաստուածակողմն անդր. համայն և այնպէս քաղաք մեր այս վանեաց զՏարկուինիոս՝ որ զեղծան իշխանութեամբն. և առ միոյն մարդոյ խեռութեանն՝ 'ի միջոյ 'ի բաց բառնայր զվաղընջուցն հայրենի տէրութիւն՝ որ զհիմունսն արկ զՀռովմայ: Եւ զի՞նչ ևս ապա սրբագոյն և պերճ առաւել կայցէ երբէք 'ի Հռոմ՝ իբրու զկուսեանն զայն ոստիկան և պահապան անշէջ կրակին: Սակայն և 'ի մեղանչել ուրուք 'ի նոցանէն, կենդանւոյն թաղումն առնու. քանզի և 'ի նոցա յամբարշտելն 'ի դիս անդր՝ վրէպ են այնուհետև 'ի նուիրականութենէն՝ զոր ունին 'ի մեծարանս երեսաց դիցն: Ապա և իրաւացի ուրեմն իցէ՝ եթէ և ոչ այր ժողովրդապետ որ վնասակար ժողովրդեանն իցէ, յաւերժացի 'ի շուքն՝ զոր 'ի մեծա-

բանայց ժողովրդեանն ունիցի · քանզի և ինքնին նա հարեալ վանեաց զզօրութիւնն՝ որ հզօր յարդարէն զնա ։ Առ այս դարձեալ՝ եթէ իրաւամբք դա ժառանգէ զժողովրդապետութիւնդ 'ի սահման քուեայց բազմադունիցն 'ի ցեղից, զիա՞րդ ապա առաւել ևս իրաւամբք չհանցի 'ի դմանէն իշխանութիւնդ 'ի սահման քուեայց առհասարակ ցեղիցն։ Իսկ արդեօք իբրև զծօնս կախեալ 'ի ։իցն փառս՝ չէք ինչ այնպէս սուրբ և նուիրական · սակայն արդել և ոչ որ՝ ժողովրդեանն 'ի գործ վարել զայնոսիկ, և շարժել փոխել ըստ կամի ։ Ապա և օրինակ զնոյն արժան իցէ արդեօք շարժել փոխել 'ի մարդոյ 'ի մարդ զժողովըրդապետական բարձդ , իբրու զմի 'ի նուիրական ձօնիցն ։ Իսկ եթէ աւագութիւն այդ չէ անդրժելի և անփոփոխ , քա՞ջ յայտնի կայ յարանց անտի՝ որ հրաժեշտ բազում անգամ ետուն 'ի բարձէդ , և արդարացան ևս յազատանալ իւրեանց ,, ։ Այս ինչ էին գլուխք իրաւաբանութեանն Տիբերեայ ։

Բայց քանզի բարեկամք նորա խիթացեալ 'ի սպառնալեաց և յամբոխից ընդդէմ առնն, խորհուրդ առին՝ առնուլ նմա զանձամբ և զմիւսոյ տարւոյն զժողովրդապետութիւնն , ապա և նա գուն գործեաց միանգամ յինքն զխուժանն յանդուցանել նորոգաւոր ինչ օրինօք · քանզի կարճէր զժամանակ յերկարաձգութեան նորա 'ի զինուորութեանն , և շնորհէր նո_

ցա բողոք յայլոց իշխանացն բառնալ առ ժողովուրդն. առ այս՝ և 'ի դատաւորսն որ յայնժամ 'ի Սինկղիտոսէն՝ առեալ խառնէր նոյնչափ թուով արս և յասպետաց կարգէն: Եւ այնպէս թեւակոխէր Տիբերիոս նկուն յամենայնի զզօրութիւնն առնել զՍինկղիտոսին. քան յիրաւն և յօգտակարն մտաբերեալ՝ առաւել ևս 'ի ցասմանէն գրգեալ և յատամբակ կրիցն:

Եւ քանզի յայնժամ յարկանե՛լ զքուեայն զանդիտեցին 'ի մեծէ զօրութենէ հակառակորդացն (զի և չէին իսկ անդ մերձ ժողովուրդք առհասարակ), սկսան նախ ժամավաճառութեամբ չարախօս լինել վասն իշխանակցացն. և ապա առեալ արձակէին զեկեղեցին, հրամանն տուեալ խուժանին դառնալ խմբել առ վաղիւն: Իսկ յետ այնորիկ Տիբերիոս իջեալ 'ի հրապարակ՝ համբուն ակնկորեալ և արտօսրալից յողոք խոնարհէր մարդկանն, իբրու որ յերկիւղի իցէ եթէ յանկարծ յեղակարծումն՝ թշնամիք նորա գիշերայն հարեալ զտունն՝ խողխողեսցեն զնա: Ասաց և այնպէս իմն շարժեաց զամբոխն, զի և բազումք յոյժ 'ի նոցանէն վրան հարեալ զնորա ապարանօքն՝ անդէն օթագայեցան 'ի պահ զգուշութեան:

Իսկ յառաւօտուն ծագել եկն եկաց 'ի հրապարակ անդր այրն՝ որ բարձեալ բերէր վառեակս, որովք հաւահարցն լինին. և արկանէր առաջի նոցա կեր, սակայն չելին նոքա արտաքս, բայց մի և եթ 'ի հա_

ուոյն, մինչդեռ և ուժգինս այրն ցնցէր անդ զվանդակն. առ այս՝ և որ էին՝ 'ի կերն չմերձեցաւ, այլ զձախողն թև ամբարձեալ և զորունսն մեկնեալ, այնպէս անդրէն մնեալ դարէր 'ի վանդակին: Այս հաւանհմայք յուշ անդանօր ածէր Տիբերեայ և զմիւս զայլ՝ զոր յառաջ եւես նա: Քանզի էր նորա սաղաւարտ փառաչուք երևելի՝ զոր վարէր 'ի մարտին, և 'ի ներքս անդ նորա սալրդեալք տղեալք օձք և զանխուլ ձուս ածեալ և ծնունդ ևս արձակեալ էին 'ի նմա: Եւ յայտմանէ ապա առաւել ևս սրտաբեկ լինէր Տիբերիոս և ընդ հաւահըմայս վառեկացն:

Սակայն և այնպէս լուր առեալ զխմբելոյ խուժանին 'ի Կապետոլիոն, դէմ եդեալ դնայր և ինքն. իսկ յելանն 'ի տանէն գլթեալ առ սեմօքն ուժգին բախմամբ, ջախէր նորա եղունգն բութ մատինն, և արիւն հոսէր արտաքս ընդ կօշիկն: Իբրև վայր մի յառաջ խաղաց, տեսանէին և ագռաւս երկու 'ի վէգ ընդ միմեանս 'ի տանիս ուրեք 'ի ձախմէ. և թէպէտև ընդ Տիբերեայ էր իսկ բազմամբոխ որեան, քար մի վայր արկեալ 'ի միոյ ագռաւուցն՝ գայր անկանէր կշիռ առ ոտսն Տիբերեայ. և յայտմանէ ապա զկայ առին յայնժամ և յոյժ սրտեայքն որ ը նմա: Բայց Բլաստոս Կիւմէացի որ անդ, ասէր՝ եթէ ծաղածանակ արդեօք կիրք լիցեն և յոյժ այպանելի՝ եթէ Տիբերիոս որդի Գրակքեայ և թոռն Ափրիկանոսի Սկիպիոնի բարձերեց 'ի ժո-

զօրագլուխն Հռոմայեցւոց՝ առ ահի ագռաւուցն տաղտապեսցի 'ի հրաւէր քաղաքացեացն. և թէ՝ նորա թշնամիք ոչ եթէ առ ծիծաղելիս ունիցին զայն հաղանան, այլ բամբասեսցեն զնա առ խուժանին իբրու բռնակալ այր և արհամարհոտ: Ա՛յն ինչ նորա բանքն 'ի բերան էին, անդուստ և բազումք ընթացան առ Տիբերիոս առաքեալք 'ի բարեկամացն 'ի Կապետոլինէ՝ արագել զնա, իբրու դեղեցիկս անդ յաջողեսցին իրք նորա: Եւ արդեօք 'ի ժամանել անդր՝ հիւրընկալութիւն շքեղ և պերճ տեսանէր Տիբերիոս. քանզի յերևել նորա՝ անդէն ժողովուրդք ձայն բարձին ցնծութեան և մտերմութեան. և յելն 'ի վեր առին ժողովեցին զնա զուարթագին և մտադիւրագոյնս, շուրջ զնովաւ պահ ունէին՝ զի մի ամենևին յանծանօթից ոք մերձեսցի առ նա:

Իբրև սկիզբն արար Մուկիոս կարդալ ձայնել զցեղսն, վճարէր և ոչինչ 'ի ժամուն. զի և աղմուկ յուզեալ շփոթից անդ էր տեսանել 'ի յետամնաց խուժանէն՝ որք նեղեալք սղմեալք՝ նեղէին և նոքա զյառաջակացսն, և բուռն և ուժգին յառաջամուխք խռնէին: Յայնժամ Փլաբիոս Փլակկոս 'ի Սինկղիտոսէն ելեալ յերևանի՝ տեսեալ եթէ ձայնիւ ազդ առնել չիք հնար, ձեռամբացի ակնարկէր. խօսել ինչ կամէր առանձինն ընդ Տիբերիոսի: Տիբերիոս հրամման խուժանին տալ 'ի բաց փարատել և անցս տալ նմա, նա աշխատ

եղեալ մերձեցեալ առ Տիբերիոս՝ գուշակ լինէր եթէ արք ձոխք ոչինչ կարացեալ 'ի Սենկղիտոսին 'ի հաւանութիւն զհիպատոսն ածել, 'ի խորհուրդ մոլին սպանանել զՏիբերիոս, և 'ի զէն ևս վառեալ են վասն այնորիկ զբազումս 'ի ծառայից և 'ի բարեկամաց : Իբրև զբան զայն պատմեաց Տիբերիոս որոց շուրջն կային, անդէն նոքա գունէպինդ համդրիձեալք զպատմուճանն և ջախեալ բեկեալ զնիզակաբունսն սուրհանդակացն՝ որովք փարատեն նոքա զամբոխն, առին զնիզակաբեկսն վառեցան նոքօք մարտ դնել կռուել ընդ յարձակելոյն 'ի վերայ :

Իսկ որք 'ի բացեայ կային լի եղեն զարմանալեօք ընդ բանն, և հարցեալք զպատճառն, յայնմ պահու Տիբերիոս առեալ զձեռն մերձեցուցանէր 'ի գլուխն, ազդունէր նշանաւն զվտանգ զանձինն. քանզի և ձայնիւ հնար չէր զգացուցանել: Իսկ անդանօր արք հակառակ կողմանն տեսեալ զայն նշան, ընթացեալք ձեպով առ Սենկղիտոս անդր զրոյց տային՝ եթէ Տիբերիոս Թագ խնդրէ. և նշան բանին տային զհպել նորա 'ի գլուխն : 'Ի լուր յայն առհասարակ աղմկեալ ամբոխեցան. և Նասիկաս յառաջ մատուցեալ աղաչէր զհիպատոսն օգնել ձեռն տալ քաղաքին և վանել հարկանել զբռնաւորն. Իբրև նա պատասխանի ետ հեզաբար՝ եթէ երբէք չմխի 'ի բռնութիւն և զայր քաղաքացի երբէք 'ի մահ չվարէ յառաջ քան զիրաւունս դատա-

տանին, ապա եթէ խուժանն հրապուրեալ կամ թէ նեղեալ 'ի Տիբերեայ ինչ մի յանդգնեսցի ընդդէմ օրինացն, ինքն ընդդէմ դարձեալ պատրաստեսցէ ։ Այսպէս յայնժամ 'ի դուրս վազեալ Նասիկաս ասէր. "Արդ որովհետեւ իշխանն մատն քաղաքին լինի, ո՛ն դուք որք օրինացն ախոյեան կամիք լինել, զհետ իմ խաղացէք,, ։ Ասաց և զգլխովն զվերջաւորն ածեալ պատմուճանին, դէմ եդեալ խաղայր 'ի Կապետոլիոն անդր ։ Ընդ և այր այր որ զհետ խաղայցին նորա՝ առեալք զպատմուճանսն զձեռամբք պատէին, և վանեալ ընկրկեալ զհանդիպակաց մարդիկն, իշխեաց և ոչ ոք 'ի դէմի Սինկղիտիկոսացն հարկանել 'ի մեծարանս երեսացն. այլ այնպէս փարատեալք 'ի փախուստ առհասարակ՝ զմիմեանս կոխէին ։ Իսկ որեարն կուսակիցք նոցա՝ զայլն ածէին 'ի տանց իւրաքանչիւր բիրս և լախտս և վարոցս. և Սինկղիտիկոսք ինքնին 'ի բուռն կալեալ զաթոռակացն ջախելոց խորտակելոց 'ի խուճապելոյ խուժանին զաթոռաբեկսն և զոտսն, այնպէս խուճապաւ եղանէին 'ի վեր դիմէին 'ի Տիբերիոս կոյս, վանեալք զհանդիպակացսն և թաւալգլոր տապաստ հարուածս 'ի վերայ ածեալ նոցա ։

Յայնժմ մեծի տագնապի և Տիբերիոս ինքնին 'ի փախուստ խուճապեալ՝ մի ոմն 'ի թշնամեացն ունէր զպատմուճանէն. նա թողեալ զայն 'ի ձեռս նորա, վազէր փախչէր միայն բաճկոնաւն. սակայն և 'ի գայթն

եղեալ՝ կործան 'ի վերայ անկանէր յառա-
ջագոյն անկելոցն · իբրև յոտն յառնել կա-
մեցաւ, անդուստ որ առաջին և յայտնի
հարուած տայր 'ի գլուխն Տիբերեայ ո-
տամբ աթոռակի, էր ինքնին Պօպլիոս Սա-
տուրնէոս մի յիշխանակցաց անտի նորա ·
իսկ Լեւկիոս Հռուփոս կրկնեաց 'ի վերայ
զհարուածն, և պանծայր ևս նա իբրև ընդ
գործ նահատակութեանն : Եւ յայլոց ևս
մեռան յայնժամ աւելի քան երեքհարիւր,
առհասարակ Թոպամահք և քարակոծ-
կոծք, և ոչ մի ոք սուսերահար: Եւ պատ-
մեն՝ զայս 'ի ընէ ժամանակաց անտի բառ-
նալոյ արքայութեանն առաջին կացեալ
աղմուկ չփոթից յապաժոյժ արեանց և 'ի
մահուանս քաղաքացեաց · քանզի և այլք
յամբոխից՝ ոչինչ դուզնաքեայ և ոչ վասն
դուզնաքէից ինչ լուեալ հանդարտեցան՝
առն ընկերին տեղի տալով · աւագորեարն
առ ահի խուժանին, և խուժանն ինքնին 'ի
մեծարանս երեսաց աւագորերոյն :

Բայց արդեօք Թուի թէ և յայնժամ
հեշտին տեղի տայր Տիբերիոս, եթէ ամոքս
գնացեալ էին ընդ առնն : Նա՛ տեղի ևս
տայր նա հեշտին ևս յարձակելոցն 'ի վե-
րայ՝ առանց արեանց և հարուածոց · քան-
զի և չէին իսկ առ նմա աւելի քան զերիս
հազար · այլ Թուի՝ 'ի Թափոյ բարկութեան
առաւել և յատելութենէ ճոխիցն առ-
այրն՝ գործել դաւանայն այնոցիկ, քան
'ի պատճառացն զոր կարկատէին : Եւ հա-
ւաստիք մեծ բանին՝ զի և անագորոյնս և

ամբարշտութեամբ ոմն՝ հար եղեն նոքա գլխական նորա ։ Քանզի իբրեւ յողոք անկաւ եղբայրն, ոչ շնորհեցին նմա բառնալ զնա և գիշերի թաղումն տալ նմա, այլ առեալ գետավէժ առնէին յայնժամ հանդերձ այլովք գլխաւորօքն ։

Սակայն և ոչ այնպէս վախճան լինէր դառնութեանն. այլ նոքա հետամուտ և զբարեկամս նորա հալածեցին, 'ի մահ առհասարակ վարեալ՝ զորս և մինդամ 'ի ձեռս բերին. և վտարանդիս արարին 'ի նոցանէ անքննաբար դատաստանաւ ։ 'Ի համար սպանելոցն էր ինքնին և Դիոփանէս հռետոր. և զԳայիոս զոմն Բիլլիոս առեալ փակեցին ուրեք յամանի արկեալ 'ի նմա իժս և վիշապս, և այնպէս սպանին զայն ։ Իսկ և Բղոսսիոս Կումնացի քարշեալ զառաջեաւ հիւպատոսացն, և հարցեալ վասն անցիցն անցելոց, խոստովան եղեւ՝ 'ի գլուխ տարեալ զամենայն հրամանն Տիբերիայ ։ Ուստի և հարցեալ զնա յայնժամ Նասիկա, " Եւ զինչ արդ, եթէ քեզ Տիբերիայ հրամայեալ էր հուր արկանել 'ի Կապիտոլին ,, ։ Նա զառաջինն ընդդէմ դարձեալ հարցմանն, ասէր՝ երբէք յայնպիսեաց ինչ ոչ հրամայել Տիբերեայ. իբրեւ զնոյն հարցումն կրկնեցին և երեքկնեցին և բազումք յայնժամ, նա 'ի վերջէ պատասխանի առնէր. " Եւ թէ երբէք զայն ինչ հրամայեալ էր ինձ Տիբերիոս, ես լաւ համարէի առնել և զայն. քանզի և Տիբերիոս արդեօք զայն բան հրամայէր

ոչ, եթէ օգտակար խուժանին չէր,,։ Արդ յայնժամ ապրեցաւ Բլոսսիոս, այլ յետ այնորիկ անցեալ յԱսիա առ Արիստոնի_կոս, իբրև հէքութեամբ չուառացան իրքն Արիստոնիկեայ, նա յայնժամ անձին առնէր։

Բայց Սինկղիտոսն յետ այնորիկ 'ի սփո_փանս խուժանին և 'ի յանդուգանել զնա, ոչ ևս ընդդէմ դարձաւ բաշխից անդաս_տանացն. նա և առաջի առնէր նոցա զայլ ոք ոստիկան գործոյն կարգել փոխան Տի_բերեայ։ Ապա քուեայս արկեալ ընտրէին Պոպղիոս Կրասսոս՝ մերձաւոր Գրակքո_սի. քանզի 'ի կին տուեալ էր զԼիկիննիա դուստր Գայիոսի Գրակքոսի։ Եւ թէպէտ և Նեպոս Կոռնելիոս պատմէ՝ ոչ տուեալ կին Գայիոսի զդուստր Կրասսոսի, այլ զԲրուտոսին՝ որ յաղթանակ կանգ_նեաց 'ի վերայ Լիւսիտանացւոց, սակայն և բազումք 'ի պատմագրաց պատմեն՝ որ_պէս մեք գրեցաք։

Բայց քանզի խուժանն 'ի խոր ևս խո_ցեալ էր ընդ մահն Տիբերեայ, և յայտնի ևս ժամ որսայր պարապոյ 'ի վրէժխնդրու_թիւն, և արդէն հանդերձեալ կաղ_մէին ամբաստանութիւնս յատենի ընդդէմ Նասիկայայ՝ զանգիտեալ Սինկղիտոսին վասն առնն, վճիռ տայր առանց հարկի առնուլ արձակել զնա յԱսիա։ Քանզի և 'ի պատահել երբէք առնն՝ ոչինչ զանխուլ զխէթն ունէր առ նա խուժանն. այլ ուր և պատահէին, զայրագին բողոք ընդդէմ

բառնային, այր բռնակալ և նզովեալ կարգային զՆասիկաս, որ այնպէս յորժամ ապաժոյժ նուիրական առն և անդրժելի՝ շաղախեաց պղծեաց զամենասուրբն զայն և զարգոյամեծար տաճար քաղաքին: Եւ այնպէս ապա շտապեցաւ Նասիկաս տեղի տալ ելանել յԻտալիոյ, թէպէտ և աւագութիւն հոյակապ զնուիրագործութեցն զանձամբ ունէր՝ վեհագոյն քահանայից գոլով և առաջին: Եւ արտաքոյ Իտալիոյ նա յայսկոյս յայնկոյս թափառական շրջէր յոգի սատակապէս հարեալ. և յետ ոչ բազմաց ինչ՝ անկեալ մեռանէր մօտ 'ի Պերգամոն:

Եւ զարմանք չեն արդեօք՝ այնչափ ատելութեամբ բերել խուժանին առ Նասիկաս. զի յայնժամ և Սկիպիոն ինքնին Ափրիկանոս՝ յոյժ սիրելի հռոմայեցւոյ քան զամենեսեան առաւելագոյն իրաւամբք, վայրիկ մի ևս և նա գլխովին վրէպ լինէր 'ի սիրոյ մոլեռնութեան խուժանին. քանզի լուր առեալ 'ի Նումանտիա զմահուն Տիբերեայ, ձայն բարձեալ բարբառեցաւ զտողն զայն զՀոմերոսին. "Այնպէս կորիցէ՝ և որ ոք միանգամ այնպէսն գործիցէ,,: Եւ զի և հարցեալ ապա ուրէք 'ի ժողովի 'ի Գայիոսէ և 'ի Փուլվիոսէ, զի՞նչ միտք իցեն նորա 'ի մահն Տիբերեայ, ետ նա պատասխանի՝ ոչինչ հաւանել ընդ քաղաքաւորութիւնն Տիբերեայ: Ուստի և խուժանն 'ի խօսելն Սկիպիոնի՝ աղմուկ յուզէր և շռինդն արձակէր, զոր երբէք

յառաջ ժամանակաւ չէր գործեալ խուժանին․ իսկ և նա անդուստ ժտէր յիշոցնատու լինել 'ի խուժանն։ Բայց յաղագս այսոցիկ մանրապատում արձանագրել իսկ է մեր 'ի վարսն Սկիպիոնին Ափրիկանոսի։

ԱՅԼ Գայիոս Գրակքոս յայնժամ զառաջինն, կամ զանգիտեալ 'ի հակառակորդացն, կամ թէ 'ի գրգռել խէթ ընդդէմ նոցա, տեղի տուեալ յատենէն մեկնացեալ նստէր առանձինն իբրու այր հեքացեալ 'ի ժամանակին և չիջեալփառ․ հաստատեալ 'ի մտի այնպէս անմիջամուխ յիրս՝ անցուցանել զնշխարեալ աւուրս կենաց իւրոց․ որպէս զի և կեսոց բամբասանաց պատճառս տայ վասն անձին, իբրու որ զՏիբերեայ քաղաքականութիւնն նա եղերեալ զզուէ։ Էր նա տակաւին պատանի․ քանզի և լինն ամօք կրսեր էր քան զեղբայրն, այն որ 'ի մեռանելն չև էր ամաց երեսնից։ Այլ քանզի յետ այնորիկ տակաւ բոյս բարուցն Գայիոսի 'ի վեր երևէր, իբրու որ անհաղորդ էր պարապորդ կենաց և դրդանաց և գիներբուաց և ընչաքաղցութեան, և զի և կրթէր ևս զանձն 'ի ճարտարախօսութեան, իբրև թևս իմն արագաթևս գործել իւր՝ վերաթևել 'ի նահատակութիւնս քաղաքին, խեղամուտ ապա լինէր մարդիկն՝ զի կեանս անգործ նա ոչ կեցցէ։ Նա՛ զի և ջատագով ևս մտեալ նա Բետտիոսի ուրումն իւրոյ բարեկամի դատախազելոյ յատենի, և 'ի մեծապէս հա-

ձեւ ընդ նա խուժանին, գեղեցիկ մոլութեամբ մոլեալ առ նա՝ որ իբրեւ մանկաբարոյս ոմանս նշաւակեաց յատեանին զայլս 'ի հռետորաց, յայնժամ աւագորեարն միաւանգամ զահի հարկանէր, եւ խորհուրդ 'ի մէջ առնուին երբեք չտալ թոյլ ամենեւին Գայիոսի ամբառնալ 'ի ժողովըրդապետութիւն:

Զայնու ժամանակաւ դէպ եղեւ վիճակել Գայիոսի գնալ գանձաւոր 'ի Սարդոն ընդ Որեստեայ հիւպատոսի. խնդացին թշնամիք, բայց եւ ոչ ինքնին Գայիոս դժգոհեցաւ ինչ. քանզի եւ մարտիկ գոլով եւ քաջակիրթ ոչինչ պակաս 'ի զինուորականին՝ քան յատենականին, առ այս՝ եւ յայնժամ զգուշեալ նորա 'ի քաղաքէն եւ 'ի բեմէն, եւ զի եւ ժտութեան խուժանին ոչինչ կարաց զդէմ կալ եւ բարեկամացն որ հրաւէր նմա կարդային, յոյժ հաճեալ հաւանեցաւ նա յայնժամ ընդ տարադէմ ուղեւորութիւնն:

Սակայն եւ առհասարակ կարծեն հաւատաստութեամբ՝ անձնատուր 'ի շնորհս ժողովրդեանն լինել Գայիոսի, եւ առաւել եւս քան զՏիբերը ըղձակաթ լինել համբուրիցն առ խուժանին: Այլ չէ ճշմարիտ. եւ թուի՝ քան 'ի կամաց անձին՝ առաւել եւս 'ի հարկէն միջամուխ լինել նմա յիրս քաղաքին: Նաեւ ինքնին Կիկերոն հռետոր պատմէ՝ եթէ 'ի խոյս տալ Գայիոսի միանգամայն յամենայն բարձից աւագութեան եւ հաստատեալ կեանս վարել անդորրա-

ւէտս, երևել նմա յերազի եղբօր նորա և բարբառել այսպէս . " Զի՞նչ ես դանդաղել .քո այդ ո՛վ Գայիէ։ Տեղի չիք փախըստեան։ Սահմանեալ գոյ վասն մեր երկոցուն նո՛յն չափ կենաց, և նո՛յն չափ մահու, նախատակեալ քաջութեամբ 'ի վերայ ժողովրդեանն ,,։

Արդ Գայիոս անդանօր 'ի Սարդոն կրօնաւորեալ յամենայն յառաքինութիւնս, երևելի գոյր առհասարակ քան զայլս 'ի պատանեաց 'ի մրցանսն ընդ թշնամեաց, յարդարութեան առ հնազանդեալսն, և 'ի մտերմութեան մեծարանսն առ իւր զօրավար . իսկ 'ի ժուժկալութեան մասին և 'ի սակաւապէտ 'ի կեանսն և 'ի վաստակասէր ճգնութեանն գերազանցեալ էր և քան զերիցագոյնսն հասակաւ։

Իսկ յայնժամ 'ի Սարդոն 'ի լինել դառնաշունչ և մահահոտ ձմերայնոյ, և 'ի խընդրել զօրավարին 'ի քաղաքաց անտի հանդերձս վասն զօրականին, քաղաքացիքն առեալ արձակէին արս 'ի Հռովմ աղաչել ազատ լինել 'ի պարտուց անտի։ Ընկալեալ Սենեկլիտոսին զաղերսն և պատուէր յղեալ զօրավարին այլուստ պատրաստել հանդերձս զօրուն, 'ի վարանել զօրավարին և 'ի չարակրել զօրականին, յարուցեալ յայնժամ Գայիոս երթայր 'ի քաղաքսն, և խօսէր ամոքէր զքաղաքացիսն ինքնակամ բազում յօժարութեամբ տալ զհանդերձանին և զօրավիգն լինել Հռոմայեցւոց զօրականին։

Լուր բանին հասեալ 'ի Հռոմ, և համարեալ զայն անշուշտ նահատակութիւն Գայիոսի յինքն զխուժանն յանդուգանելոյ, սրտաբեկ լինէր Սինկղիտոսն: Իսկ իբրև և 'ի Լիբիոյ եկեալ հասանէին դեսպանք 'ի Հռոմ 'ի Միկկիպսայ արքայէն, զոյց բերեալ՝ զի 'ի շնորհս Գայիոսի Գրակքոսի արքայն նոցա առաքեալ ցորեան 'ի Սարդոն առ զօրավար զօրուն, յոյժ յայնժամ սրտնեալ Սինկղիտոսին՝ 'ի բաց զարսն վարէր: Այսպէս և հրովարտակ եւ տայր՝ առնուլ արձակել 'ի Սարդոն զօր այլ փոխանակ առաջնոցն. իսկ զՈրեստէս թողուլ անդէն, զի այնպէս և Գայիոս ինքնին յայնժամ կացցէ մնասցէ անդանօր 'ի գործ պաշտամանն իւրոյ:

Իբրև զայն լուաւ Գայիոս, 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ՝ անդէն նաւագնաց լինէր. և հասեալ 'ի Հռոմ յեղակարծում յանակնկալն ժամու, բամբասեցաւ ոչ 'ի թշնամեացն միայն, այլ և 'ի խուժանէն գլխովին. իբրև օտարոտի համարեցան նոքա դարձ գանձաւորին յառաջ քան զիշխանն առնել: Սակայն և յամբաստանել իւրում առաջի համարակալացն, իբրև թոյլ խնդրեաց նա իրաւաբանել, եկաց և այնպէս իմն շրջեաց առհասարակ 'ի մտաց զլսելիսն, զի և մեծապէս հարստահարեալ զանձն 'ի ներքս հաստատութեամբ ընծայեաց առենին: Քանզի ասէր՝ եթէ ամս երկոտասան զինուորեցաւ նա 'ի բանակին՝ ուր այլոցն տասնա-

մեայ միայն զինուորութիւն պարտ 'ի վե-
րայ կայր. և զի՛ եռամեայ դանձաւորու-
թեամբ եկաց նա առ զօրավարի զօրուն,
որ ըստ օրինացն մարթ էր նմա դարձ առ-
նել յետ տարւոյ միոյ. և զի՛ նա միայն 'ի
զօրականէն լի՛ զկամար իւր առ և դատար-
կեաց 'ի Սարդոն. իսկ այլք արբեալք քա-
մեալք զգինին որ ընդ իւրեանս, դարձ 'ի
Հռոմ առնէին ածեալք բերեալք զամանան
այսրէն լի՛ ոսկւով և արծաթով:

Բայց իբրև միւսանգամ բամբասեցաւ
յայլ ինչ իրս, և ամբաստանութիւն ևս
այլ յուզեցաւ ընդդէմ առնն, իբրու դըր-
դել դրդուել նմա յապստամբութիւն զնի-
զակակիցն, և հասարակորդ ևս լինել նմա
'ի դաւաճանն՝ որ առակեցան 'ի փրեգեղէ.
Յայնժամ Գայիոս զամենայն զկազմած
միանգամայն 'ի բաց սրբեալ և արդարա-
ցեալ, անդէն հետամուտ 'ի ժողովրդապե-
տութիւն կրթէր: Թէպէտ և առհասարակ
միաբան աւագ որեարն և ականաւոր՝ ընդ-
դէմ դարձան, այնչափ իմն յայնժամ բաղ-
մահոյլ խռնեցաւ խուժան յԻտալիոյ 'ի
քաղաք անդր արկանել քուէայս վասն
առնն, զի և բազմաց 'ի նոցանէ պականե-
ցան օթեվանք. և չգտեալ տեղի ամբաւ
բազմութեանն 'ի դաշտին, արձագանգք
հնչէին ձայնին 'ի յարկաց անտի 'ի տա-
նեաց և 'ի կղմինտրաց:

Արդ յայնժամ աւագորեարն Ձիգն
ընդդէմ խուժանին թափեալ և նուաղ
գլոյսն արարեալ զԳայիոս, այնչափ միայն

դամադլոռ եղեն 'ի բանն, զի ոչ առաջին
անուանեցաւ նա՝ որպէս ակն ունէր՝ այլ
չորրորդ 'ի տրիբունս. բայց և ես ընդ ես
յիշխանանալ իւրում նախաթոռ բազմե-
ցաւ նա քան զամենեսեան. զի և Ճարտա-
րաբան իսկ էր նա քան զամենեսեան. առ
այս՝ և ազատութիւն ևս մեծապէս տուաւ
նմա խօսել յաղէտից անտի եղբօրն իւրոյ՝
զոր նա աշխարհաւ կոծէր. քանզի և յա-
մենայն իսկ 'ի բանս իւր՝ 'ի նոյն աղէտն
առեալ շրջէր նա զմիտս խուժանին, յուշ
ածեալ նմա զդէպս անցիցն անցելոց, և 'ի
դէմս բերէր նոցա զնախնեացն գործսն և
ասէր, զիարդ նոքա 'ի մարտ դրդուեցան
ընդդէմ փաղխկացուոց 'ի վերայ Գենիւ-
կլիոսի առն ժողովրդապետի՝ զոր թշնա-
մանեցին նոքա. և զիարդ դարձեալ՝ դա-
տակնիք մահու 'ի վերայ ածին նոքա Գայիո-
սի Բուստուրիոսի՝ զի միայն սա 'ի կողմն
չեղեալ 'ի հրապարակին՝ անցս չեա առն
ժողովրդապետի. և յաւել ասել Գայիոս.
"Իսկ այս աւագորեար բրօք Թոպամահ
տարածեցին ձեռովդ իսկ տեսանելով զՏի-
բերիոս. և զնորա մարմինն քարշեալ 'ի
Կապետոլինէ ընդ մէջ քաղաքին մինչև 'ի
գետ անդր ամային. և այս առ հասարակ
բարեկամք նորա ձերբակալք 'ի մահ վարե-
ցան առանց իրաւանց դատաստանի: Ա՛յն
զի՝ վաղնջուց էր կարգ մերոց հայրենեաց,
յամբաստանել մարդոյ 'ի վնաս գլխապարտ,
և 'ի յանդիմանել յատենի, դնայր փո-
ղար ընդ այդս այդուն առ դուրս նորա և

'ի ձայն փողոյ կարդայր զնա. և յառաջ քան զայն երբէք չտային դատաւորք վճիռ ընդդէմ առն: Այսչափ ուրեմն նոքա բարեպաշտք և զգուշացեալ էին 'ի դատել,,:

Իբրև յայսպիսեաց աստի շարժեաց և գրգռեաց նա զխուժանն, (զի և էր իսկ նորա բարբառ ձայնին ուժգնակի, և յոյժ կորովի հրապարակախօսել նորա). ապա և օրէնս երկու 'ի ներքս արկանէր: Մի' եթէ ժողովուրդն երբէք 'ի բաց յիշխանաւորէն հանցէ զաւագութիւն նորա, այնպիսին ոչ ևս ապա հասցէ բարձիլ ինչ երբէք: Եւ միւս ևս' եթէ յիշխանաւորաց ոք վտարանդի արասցէ զայր քաղաքացի առանց իրաւանց դատաստանի, բաւական իցէ յանձամ ժողովուրդն առնել դատաստան 'ի վերայ իշխանաւորին այնմիկ: Իսկ յօրինաց աստի առաջինն յայտնապէս կրթէր յանարգութիւն Մարկոսի Հոկտաւիոսի, յորմէ 'ի բաց զժողովրդապետութիւնն հանեալ էր Տիբերի. իսկ երկրորդն' ընդդէմ կրթէր Պոպիլիոսի, որ 'ի զօրավարութեան իւրում վտարանդի արարեալ էր զբարեկամսն Տիբերեայ:

Բայց Պոպիլիոս ոչ կամեցեալ 'ի ներքոյ կալ դատաստանի խուժանին, փախստեայ գնայր յԻտալիոյ: Իսկ զմիւս օրէնսն Գայիոս ինքնին յետս կոչեալ, ասէր' եթէ 'ի պարգև զՀոկտաւիոս տայ իւրում մօրն Կոռնելեայ' որ խնդրեաց զնա. զոր և մտադիւրագոյնս ընկալան ժողովուրդք շքադիրք Կոռնելեայ 'ի մեծա-

րանս երեսաց որդւոյն միանգամայն և հօրն. որում և այսպ պատկեր կանգնեալ պղնձի, վերտառութիւն գրեցին 'ի նմա այսպիսի՝ Կոռնէլիա մայր Գրակքեանց:

Այլ զբանս ինչ զԳայիոսի պատմեն Ճարտարս և երգիծանողականս 'ի ջատագովութիւն մօրն ընդդէմ միոյ ուրուք 'ի թշնամեացն. քանզի ասէր. “ Արդ դու բամբասան ինչ իցես նախատել զԿոռնէլիա, այն որ ծնաւ զՏիբերիոս „: Եւ քանզի նոյն այր այնպէս կշտամբեալ 'ի Գայիոսէ՝ բամբասեալ էր իբրև Ճակաճան, յաւել ասել Գայիոս. “ Եւ զիա՞րդ այդպէս ժախս դու՝ 'ի կշիռ զքեզ ընդ Կոռնելեայ ձգել: Թերևս քո ծնեա՞լ իցէ իբրև զնա: Նա՛ աւանիկ Հռոմայեցիք առ հասարակ Ճարտար գիտեն, եթէ ժուժկալեաց նա գիտել զայր՝ հարուստ ևս ժամանակ քան զքեզ՝ որ եսդ այր „: Այսպիսի ինչ էին երդիծաբանութիւնք Գայիոսի. և է իսկ ժողովել 'ի գրածոց անտի նորա և այլ ևս շատ յայսպիսեաց աստի:

Իսկ յօրէնս նորա 'ի շնորհս խուժանին և 'ի նուաճութիւն Սենկղիտոսին, էր որ 'ի գաղթականսն կրթէր և սահմանէր վասն աղքատաց զբաշխս գետնոյն հասարակաց. և էր որ 'ի զօրականն, և հրամայէր հանդերձ մի առն առն 'ի զօրականէն տալ 'ի գանձէն առանց նուազելոյ թոշակին նոցա. և զի՝ 'ի զինուորութիւն չգրել զոք կրսեր քան զեօթնևտասնամեայ: Եւ էր դարձեալ որ 'ի նիզակակիցսն, զի իշխան

առհասարակ զամենայն Իտալացիսն առնէր քուէայս արկանել ըստ օրինակի քաղաքացւոցն ։ Եւ օրէնք ևս այլ էին վասն ցորենոյ, և գիւր գնոյն առնէր վասն աղքատ որերոյն ։ Առ այս՝ և այլ ևս օրէնք յաղագս դատաստանաց ․ որովհետև յոյժ արար և զՍինկղիտոսին զօրութիւն ․ քանզի 'ի սոցանէ միայն իշխանացեալք 'ի դատել ահաւորք էին խուժանին և ասպետաց կարգին ․ բայց Գայիոս՝ ասպետս երեքհարիւր առեալ յաւելոյր յերեքհարիւրսն Սինկղիտոսին ․ և այնպէս վեցհարիւրոց նոցա միանգամայն հասարակէր զդատաստանն ։

Իսկ 'ի կարգել նորա զայն օրէնսն , ասեն մեծապէս ջանիւ և ուշիմութեամբ գնալ նմա յամենայնին ․ դարձեալ և յայս ինչ մանաւոր, զի ուր առհասարակ որ յառաջ քան զնա ատենաբանք սովորեցան զդէմն առ Սինկղիտոսն դարձուցանել և 'ի տեղին անուանեալ Քօմիցիօմ , սա այս Գայիոս դարձոյց առաջին 'ի կողմն որ արտաքոյ՝ ատենաբանել 'ի հրապարակ կոյս ․ և ապա միշտ զնոյն առնէր , դուզնաքեայ թեքմամբն և փոքու փոփոխութեամբ կայից մարմնոյն՝ մեծապէս գործեալ փոփոխութիւն յիրսն , և օրինակ իմն՝ զաւագպետութիւնն յընկերհաշտութիւն անդր փոխադրեաց ․ յայտ արարեալ՝ զի պարտ և արժան իցէ հռետորացն յատենաբանել խուռնից՝ ոչ առ ծերակոյտն քան թէ առ խուժանն շրջել զդէմն ։

Արդ խուժանին սիրով ընկալեալ ոչ

միայն զօրէնսն զայն, այլ և իշխանութիւն տուեալ՝ նմին խակ Գայիոսի կարգել ընտրել ըստ կամի դատաւորս յասպետաց կարգէն, միապետական դոգցես յանձամ զանձամբ առնոյր իշխանութիւն. որպէս զի և Սինկղիտոսն ինքնին յանձին կալաւ խորհրդակից իրաց իւրոց 'ի նեղքս առնուլ զԳայիոս. ապա և ինքն Գայիոս տայր խորհուրդ և ցանդ թելադիր լինէր առ 'ի շուք փառաց Սինկղիտոսին: Ըստ որում և այն վճիռ գեղեցիկ յոյժ և մարդասէր յաղագս ցորենոյն՝ զոր Փաբիոս փոխանակ զօրավարին յղեաց յԻբերիոյ. քանզի թելադիր Գայիոս լինէր Սինկղիտոսին վաճառել զցորեանն, և զարծաթն առնուլ աղաքել քաղաքացն՝ որ տուեալ էին. և կշտամբանս եւս տալ Փաբիոսի՝ զի այնպէս տաղտուկ և անբերելի զՀռոմայեցւոց տէրութիւնն գործէ դա ժողովրդոցն այնոցիկ. որ աղագաւ և 'ի գաւառսն մեծապէս ընդհամբաւի հարեալ սիրեցաւ Գայիոս:

Գրեաց նա և օրէնս այլ, առաքել գաղթականս 'ի քաղաքս և հորդել գործել ճանապարհս, և շինել ամբարանոցս ցորենոյ. և ինքն 'ի վերայ ամենայնին տեսչական կայր անխոնջ և անդուլ 'ի բազմադէմ յայն գործսն և 'ի մեծամեծսն, և սքանչելապէս շուտափոյթս և երկայնամիտս յամբոխ գործոցն ժամանէր, իբրու որ առ մին ևեթ 'ի նոցանէն ուշ եդեալ իցէ. որպէս զի և տեսլքն անգամ և ախորժք նորա յապուշ հարեալ կային ընդ յաջողակի

քաջութիւն գործոցն նորա ։ Իսկ ժողովուրդք հրաշացեալ էին և 'ի տեսանել՝ զի միանգամայն առ նմա խռնէր սաստիկ ոըեար՝ սակարկու գործաւորաց և արուեստագիտաց և դեսպանաց և իշխանաց և զօրականաց և բանասիրաց, որք առ հասարակ զնմանէն կախեալ կային. և գնայր մարդասիրութեամբ ընդ ամենեսեան պէրճ զկերպարանն պահեալ գեղեցիկ քաղաքավարութեամբ, և ըստ առն առն 'ի նոցանէն 'ի դէպ զանձն յարմարէր. որով և նշաւակեալ իսկ նա զբամբասողս իւր՝ որ իբրև այր վայրագ և ապառում և անհամբոյր դատափետ առնէին զնա ։ Եւ այնպէս քան հրապարակախօսութեամբք բեմին՝ առաւել ևս կենակից կենցաղակից քաղաքավարութեամբն և գործովք՝ յաջողեցաւ յինքն զխուժանն յանգուցանել ։

Իսկ ջան փարելի եդ նա մանաւոր 'ի գործել և 'ի հորդել Ճանապարհաց. ուշ եդեալ օգտակարին միանգամայն և 'ի շուք գեղեցկութեանն. քանզի ուղղագիծ ձգեցան Ճանապարհքն առ 'ի կողմանէ անդաստանացն. էր' ուրեք զի սալայատակք կոփածոյ քարամբք, և էր ուրեք զի ամրացեալք պնդեալք յաւազակոյտս. առ այս՝ և զխորափորս լցեալ զուղխից և զձորոց, և կապեալ կամրջօք զափունսն հարթ հաւասար յերկոցունց կողմանց, այնպէս իմն համբուն՝ տեսիլ գեղեցիկ և հարթյատակ 'ի ներքս ընծայեցաւ գործն ։ Առ այսոքիւք դարձեալ՝ և զմէն մի 'ի Ճանա_

պարհացն չափեալ, առ մի մղոն՝ (իսկ է մղոնդ գնացք իբրև ութից ասպարիսաց՝) կանգնէր կոթողս 'ի քարէ, նշանակեալ ի նոսա զմղոնաչափսն. և կարգէր արկանէր աստ անդ և վէմս վերելևակս յաջմէ և յահեկէ ճանապարհացն. զի ձիաւորաց ուղևորացն այնպէս հեշտին իցէ ոտնածել 'ի թամբն, և վերամբարձի պէտք չիցեն նոցա յաշտանակել:

Իսկ իբրև այնպէս 'ի գործոց անտի մեծապէս բարձր առնէին զնա ժողովուրդք, և մտադիւրագոյնս ևս զանձինս 'ի ներքս ընծայէին յամենայնի զառ նա սիրոյն ցուցանել հաւաստիս, նա յաւուր միում 'ի հրապարակախօսել իւրում ասէր՝ շնորհս իմն խնդրել 'ի խուժանէն. և զայն դարձ փոխարինի կալցէ նա ամենայն գործոցն՝ եթէ կամադիւտ լիցի, ապա թէ ոչ՝ ոչինչ կալցէ գանգատ: Կարծեցին առհասարակ եթէ զհիւպատոսութեան բարձն խնդրէ. և սպասեալ մնային՝ հետամուտ լինել նմա միանգամայն և հիւպատոսութեան և տրիբունութեան: Իբրև օր ընտրութեան հասանէր հիւպատոսացն, մինչդեռ առհասարակ յակճիռս կային, յայնժամ Գայիոս 'ի մէջ ածեալ բերէր զՓաննիոս. և հանդերձ բարեկամօքն հետամուտ լինէր վասն առնն. և զօրացաւ մեծապէս 'ի ժամուն տալ ընտրել 'ի հիւպատոս զՓաննիոս. և ինքն Գայիոս միւսանգամ կարգէր 'ի տրիբուն, ոչ 'ի թախանձանաց ինչ իւրոց՝ քան թէ յինքնակամ ջանից խուժանին:

Բայց ապա զկայտնապէս թշնամութի առ ինքն զՍինկղիտոսին տեսեալ Գայիոսի, և զի՝ և ինքնին փանինիոս ցրուացեալ էր 'ի մտերմութենէն, անդրէն միաբանգամ թևակոխէր յինքն զխուժանն յանդուգանել այլովք ևս օրինօք. սաՀման կարգեալ առաքել գաղթականս 'ի Տարանտոն և 'ի Կապիւա, և զԼատինացիս ևս Հրաւիրէր Հասարակորդս քաղաքին: Այս Սինկղիտոսին զանգիտեալ յանկռուելին զօրութենէն Գայիոսի, նոր և անսովոր Հնարեցաւ Հնարս 'ի բաց 'ի նմանէն զամբոխն ուծացուցանել. գուն գործեաց և ինքն մտերմանալ խուժանին և ընդ միտ մտանել նորա՝ թէպէտ և 'ի դժպատեՀս: Էր յայնժամ Լիվիոս ոմն Դրուսոս իշխանակից Գայիոսի, այր՝ զարմիւն և դաստիարակութեամբն ոչինչ խոնարՀագոյն քան զայլս 'ի Հռոմայեցւոց. իսկ և յընչաւէտութեն և 'ի ճարտարախօսութեանն մրցէր այրն ընդ ականաւորսն և ընդ ճոխսն: Առ այս Դրուսոս դիմեալ յայնժամ աւագորերայն, յորդորէին զնա 'ի դիմի Հարկանել Գայիոսի և միաբանել ընդ իւրեանս. ոչ բռնութիւն 'ի գործ առեալ և ոչ խուժանին ընդդէմ դարձեալ, այլ ըստ քմացն դնալով նոցա յիշխանութեանն և շնորՀեալ ևս նոցա զայն ինչ՝ զոր 'ի զլանալն քաջ իսկ սրտնեալցին արդեօք:

Այսպա Լիվիոս ըստ միտս գնացեալ Սինկղիտոսին յիշխանութեան իւրում, օրէնս իմն 'ի ներքս մատուցանէր ոչինչ վայելուչ

և 'ի պխտանեաց, միայն Թէակոսէր յաղԹահարել զԳայիոս 'ի հաՃել զամբոխն, անշուշտ իբրու 'ի կատակերգակ տեսարանի: Յորում ապա և ինքնին Մինուկիոսն նշաւակէր զանձն, իբրու որ ոչ ընդ քաղաքական կարգն Գայիոսի դժգմնեալ ինչ իցէ, այլ զի կենաց առնն դաւաՃան զհետ մտեալ իցէ, կամ Թէ խայտառակուն զայրն առնել ձիգն կալեալ իցէ: Քանզի 'ի հրամայել Գայիոսի արձակել զաղԹականս երկու, և 'ի դատել ընդ նոսա զպարկեշտագոյնսն 'ի քաղաքացեաց, յայնժամ ծերակոյտն բամբասէր զնա՝ իբրև մարդելոյզ ժողովրդեան. բայց ապա յասել Լիվիոսի՝ արձակել զաղԹականս երկոտասան, և 'ի մէն մի 'ի նոցանէն դասել ոգիս երիս հազար յաղքատաց, ձեռն տայր ծերակոյտն: Դարձեալ և 'ի բաշխել Գայիոսի աղքատաց անդաստանս, հրաման տուեալ առն առն հարկանել հարկ 'ի գանձ արքունի, առեալ զնա Մինուկիոսն իբրև զընԹող խուժանին. բայց իբրև զայն բաշխն ազատ կացուցանէր Դրուսոս և 'ի հարկաց անտի, հաՃեալ հաւանէր:

Դարձեալ առ այս՝ յորժամ իշխան զԼատինացիսն առնէր Գայիոս քուէայս արկանել, դժգմնեցաւ ծերակոյտն: Այլ ապա յօրինադրել Դրուսոսի՝ մի զոք 'ի Լատինաց զօրականէն գաւազանահար առնել, զօրավիգն կայր օրինացն: Եւ Դրուսոս ցանդ 'ի հրապարակախօսուԹեանն ասէր՝ 'ի ներքս արկանել զայնոսիկ ըստ

Սինկղիտոսին խորհրդոյ՝ որ զչար օգտի խնդրէ զխուժանին : Այլ զայս ինչ ևեթ պտղաբերեցին օրինադրութիւնքն Դրուսոսի, զի այնուհետև ամոք ևս յարգարեցաւ խուժանն առ Սինկղիտոսն . և որ յառաջն ընդ ակամբ և խեթիւ հայէր յաւագանին , համբուրեցոյց զնա Դրուսոս . յայտ արարեալ՝ եթէ 'ի նոցանէն նա զօրացեալ կայ ահաւադիկ 'ի հաճել և 'ի խնդացուցանել զնա :

Իսկ որ առաւել ևս սերտեաց զխուժանն 'ի սէր մտերմութեանն Դրուսոսի և յարգարութիւն նորա, զի ամենայն օրինադրութիւնք նորա չունէին ինչ բան ընդ նմա, և չահ ինչ օգտի վասն անձին նորա : Քանզի առեալ արձակեաց նա զգաղթականսն յայլոց ձեռն , և ոչ 'ի տնտեսութի դրամոցն միջամուխ ինչ լինէր . իսկ Գայիոս չառ ինչ 'ի գործոց անտի և 'ի մեծացն ևս՝ զանձամբ առնոյր :

Այլ երբև և Հռուփիլոս մի յիշխանակցաց անտի Գայիոսի հրամանն գրէր արձակել գաղթական 'ի բնակութիւն Կարքեդոնի՝ զոր Սկիպիոնն քանդեաց, և Գայիոսի վիճակ ելեալ տանել զգաղթականսն , նաւագնաց լինէր 'ի Լիբիա կոյս , յայնժամ Դրուսոս սաստիկ ևս ամբարձաւ ընդդէմ նորա 'ի բացակայութեանն , յինքն զխուժանն յանկուցեալ՝ յաւէտ ևս յամբաստանութեանց անտի ընդդէմ Փուլվիոսի :

Էր այս Փուլվիոս բարեկամ Գայիոսի ,

և էր կարգեալ ընդ նմա ստոիկան 'ի բաշխն գետնոյ . բայց էր նա խաղմարար , ատեցեալ ողջոյն 'ի Սինկղիտոսէն , և կեղակարծելի ևս առ այլսն՝ իբրու այր աղմկայոյզ նիզակակցաց և 'ի ծածուկ սատար 'ի վտարանջութիւն խռովայուզոյ . Թէպէտ և հաւաստիք տոյդ չէին 'ի միջի , սակայն և Փուլվիոս խամ խորհրդովքն և անխաղաղասէր՝ զօրավիգն տայր բանիցն : Եւ ապա այս բազումս ատապալեալ զԳայիոս , և ատելի իմն եկաց նա այնուհետև : Առ այս և յորժամ մեռեալ զՍկիպիոն Ափրիկանոսն գտին , և պատճառք յայտնի չէր 'ի միջի , և զի՝ և 'ի դիականն նորա նշանս նշմարեցին զհարուածոյ և զբռնութեան , ըստ որում 'ի վարսն նորա արձանագրեալ իսկ է . յայնժամ շատ ինչ յամբաստանութենէն 'ի գլուխն կուտէր Փուլվիոսի թշնամւոյն Սկիպիոնի , և որ յաւուր իսկ յայնմիկ թշնամանեալ էր զնա 'ի բեմէն : Առ այս՝ և 'ի կարծիս ևս գնային վասն Գայիոսի : Սակայն և ոճիր ընդդէմ այնպիսւոյն աւագամեծար առնն և հոյակապի 'ի Հռոմայեցիս , պատուհաս կրեաց և ոչինչ . նա և ոչ փութլիչ կարգեցաւ . քանզի ի թոյլ չետ խուժանն իրացն հետազօտութեան , և խափանեաց զդատաստանն , զանգիտեալ վասն Գայիոսի՝ զի մի յանկարծ պարտ ինչ քննութեանն գտցի նա 'ի մահ անդր : Բայց այսոցիկ յառաջագոյն դէպք եղեն :

Արդ յայնժամ 'ի պարապել Գայիոսի

'ի Լիբիա՝ միւսանգամ չէին գործել զԿարքեդոն՝ որում ինքն անուն կարգաց Յունոնէա, այն է՝ Հերէան, սակն՝ շատից հրէշից պատահել անդ յայնժամ առ 'ի դից 'ի խափան գործոյն: Քանզի հարեալ յուժգնակի հողմոյ առաջին դրօշն և մընդապէս կալեալ 'ի դրօշակակրէն, ջախեալ խորտակէր. անդ և մրրիկ յուզեալ վարատէր ցրուէր զձօնան նուիրականս 'ի վերայ սեղանոյն, և առեալ ձգէր հոսէր անդրագոյն քան զցանգապատ ծիր սահմանի քաղաքին. առ այս՝ և վոհմակաց գայլոց 'ի վերայ խուժեալ և 'ի բաց զցանգսն խլեալ տանէին 'ի բաց:

Սակայն և այնպէս Գայիոս 'ի կարգ դեղեցիկ յօրինեալ զամենայնն զաւուրս եօթանասուն, լուր առեալ զոտնհարութե Փուլվիոսի 'ի Դրուսոսէ՝ դարձ առնէր 'ի Հռոմ. և զի՝ և իրք ժամանակին պէտս ունէին նմա անդանօր: Քանզի Լեւկիոս Ոպտիմիոս այր հակամիտեալ յաւագպետութիւն և աւագամեծար այր 'ի Սինկղիտոսին, մերժեցաւ յառաջին 'ի հեստամուտ հիւպատոսութենէն, յորժամ զՓաննիոս 'ի մէջ մատոյց Գայիոս և խափանեաց զԼեւկիոս: Այլ ապա 'ի ժամուն բազումք գոլով թիկնածուք Լեւկիոսի, կարծէր անշուշտ՝ 'ի բուռն զհիւպատոսութիւնն արկանել, և ապա նկուն զԳայիոս առնել. քանզի և Գայիոսի գոգցես վատէր զօրութիւնն, զի և խուժանն յագեալ իսկ էր յայսպիսեաց աստի քաղաքաւորութեանց.

քանզի և բազումք յայնժամ հաճոյակատարք էին նորա 'ի մտադիւր հաւանութենէն Սենեկիտոսին :

Ապա դարձ 'ի Հռոմ արարեալ Գայիոս, առաջին փոխեցաւ 'ի Պաղատիոնէ և եկն բնակեցաւ ուրեք մօտ հրապարակին, վայր ռամկին՝ ուր բազմութիւն բնակէր մեծ սնընդքորաց և աղքատաց որերոյն . իսկ երկրորդ՝ և օրէնս այլ 'ի ներքս մատուցանէր, և կամէր հաստատել զայն 'ի քուէայս խուժանին : Իբրև 'ի կողմանց կողմանց խուռն ընթացաւ առ նա ամբոխ մեծ, խորհուրդ Փաննիոսի հիւպատոսի տայր ծերակոյտն՝ վանել վարել առհասարակ զամենեսեան՝ բաց 'ի Հռոմայեցւոց : Հռչակ հարկաւ օտար և անսովոր հրովարտակին, մի ումեք 'ի նիզակակցացն և մի 'ի բարեկամաց ումեք յայն աւուրսն գալ երևել 'ի Հռոմ քաղաք, անդուստ և Գայիոս վճիռ մի ներհակակիր 'ի դուրս տայր . խոտէր եպերէր զհիւպատոսն և խոստանայր եւս հովանի կալ ամենայն նիզակակցացն՝ որ միանգամ կայցեն մնասցեն 'ի ներքս : Սակայն և պաշտպանեաց և ոչ ումեք . նա՝ և 'ի հիւրոց անտի իւրոց և յընտանեացն զոմն յական արկեալ 'ի քարշ 'ի պաշտօնէիցն ածել Փաննիոսի, զանց արար և ձեռն չետ . կամ զի զանգիտեաց նշաւակել զվատեալն զիւր զօրութիւն, կամ թէ ոչ կամեցաւ (որպէս ասէր իսկ ինքն) բարուր 'ի ներքս տալ թշնամեացն կագի և կռուոյ՝ զոր և խնդրէինն իսկ :

Յետ այսորիկ դէպ եղև նմա Թշնամանալ և իւրոյն իշխանակցաց՝ յայսպիսի ինչ պատճառաց ։ Հանդերձեալ տեսարան մենամարտկաց տալ ժողովրդեանն 'ի հրապարակի, և բազումք յայնժամ յաւագաց տուեալ զնմարանս կերտել շուրջանակի 'ի նստոց, 'ի վարձու տալին. իսկ Գայիոս հրամա՛ն տայր բառնալ զայնոսիկ 'ի միջոյ, զի 'ի վայրաց անտի աղքատ որեարն ձրի 'ի զնին կայցեն տեսարանին ։ Իբրև ոմանք մատուցանէր և ոչ ոք, որպայր նա զգիշերին որ լուսանայր տեսարանին, և ընդ իւր առեալ զամենայն արուեստաւորսն՝ որ ընդ ձեռամբ գործաւորս իւր, քանդէր տապալէր զգնմարանսն, և յառաւօտուն ապա ցուցանէր խուժանին զվայրն ողջոյն սըրբեալ և մաքրեալ։ Այր աղաղակ և այր արի յանդիմանեցաւ առաջի ժողովրդեան. սակայն և սրտնեցոյց զիշխանակիցսն՝ իբրու որ այր յանձնապաստան իցէ և յանդուգն ։

Եւ Թուի պատճառք այս, զի ոչ ժողովրդապետ կարգեցաւ նա զերրորդ նուագ. զի Թէպէտ և բազմագոյնք 'ի քուէայց հաւանեցան ընդ նմա, այլ նորա իշխանակիցք յանիրաւի չարութեամբ խարդախեցին զանուանակոչութիւնն ։ Սակայն և հակառակութիւն գոյ վասն իրայս։ Այլ Գայիոս ոչ հանդուրժեաց ընդ մերժումնն. և պատմեն՝ եթէ 'ի ծիծաղել զնովաւ Թշնամեացն, նա յանդգնագոյնս քան զարժան՝ ասէր ծիծաղել նոցա զծաղր Սարդոնեան. ոչինչ խելամուտ եղեալ՝ քանի՛ սաստ-

բածս ած նա զնոքօք 'ի քաղաքական նահատակութեանց անտի իւրոց ։

Բայց յետ այնորիկ Ողիմպոս կարգեալ 'ի հիւպատոս, և շատ ինչ յայնժամ ջրել յօրինաց անտի Գայիոսի, և 'ի քնին ևս ածէր զգործան նորա 'ի Կարքեդոն. և էր բանն այն կարգեալ 'ի գրգռութի Գայիոսի, զի առ զայրացուս սրտմտութեանն մահ ընկալցի. բայց նա զառաջինն համբերութեամբ տարաւ բանին. այլ ապա գըրգռեալ 'ի բարեկամացն և առաւել 'ի Փուլվիոսէ, խմբէր կուտէր արս յիւր կողմն ընդդէմ հիւպատոսին ։ Եւ ասեն՝ և մօր նորա գործակից 'ի նոյն լինել, 'ի ծածուկ թոշակաւորեալ արս օտարս և յղեալ 'ի Հռոմ 'ի կերպարանս հնձողաց. որպէս և նշանակեալ կայ այս 'ի նշանագիրս իմն գաղտնածածուկս 'ի նամակն նորա առ որդին ։ Իսկ և կէսք ասեն՝ գործել իրացն այնոցիկ յոյժ յակամայս Կոռնելեայ ։

Այս յաւուր անդ ջրելոյ Ողիմպեայ զօրէնսն Գայիոսի, երկոքին նոքա միանգամայն վաղ քաջ ընդ առաւօտն՝ հասին կալան զԿապիտոլիոն ։ Իսկ 'ի զոհ զոհել հիւպատոսին, յայնժամ Կուինտոս Անտիւղիոս 'ի պաշտօնէից անտի նորա առեալ տարեալ այլուր զախոնդանն, և անցեալ ընդ մէջ խուժանին Փուլվիոսի, ասէր. " Տո՛ւք տեղի լաւաց՝ ո՞ քաղաքացիք անբարիք ,, ։ Եւ կէսք պատմեն՝ եթէ 'ի բարբառել նորա զայս, և զբազուկն ևս իւր ձգէր մեկնէր մերկ՝ այնպէս յայլատագոյնս

և Թշնամանագիրս ։ Եւ յայնժամ Անտոխւղիոս արագ արագ մահ ընդունէր 'ի սայրս մեծամեծ գրչաց՝ որպէս ասեն՝ այնպիսի կազմեալք 'ի պէտս գործոյն ։

'Ի դիտապաստ անկանել առնն՝ առհասարակ բազմութիւն յապշութիւն հարաւ․ իսկ կրկին պարագլուխք կողմանցն 'ի կիրս ըմբռնեցան ներհակակիրս ։ Քանզի Գայիոս 'ի խոր խոցեալ սաստէր կշտամբէր զիւրսն․ զի այնպէս բարուք 'ի ձեռս ետուն Թշնամեացն, զոր և 'ի վաղնջուց իսկ խնդրէին նոքա ։ Իսկ Ողիմիոս պատճառս 'ի դէպ առեալ զարկածն, խռով հարեալ գրգռէր զամբոխն 'ի վրէժխնդրութիւն․ բայց յայնժամ տեղատարափ իջեալ անձրևաց, ցիրուցան փարատեցան ժողովուրդք առհասարակ ։

Իսկ ընդ արշալոյսն առաւօտուն խմբեալ հիւպատոսին զծերակոյտն, մինչդեռ ինքն 'ի ներքս անդ կայր 'ի գործ իւր, անդուստ այլք ոմանք մերկ զդիակն զԱնտոխւղիոսին եդեալ 'ի դագաղի, առեալ բերէին ընդ միաբան պայմանադրութեանն յատեան անդր, անցեալք ընդ մէջ հրապարակին 'ի կոծ և յաշխարս ողբոց ։ Էր իսկ Ողիմիոս տեղեակ և գիտուն ամենայնին․ բայց լուեալ զիրսն՝ կեղծաւորեցաւ զարմանս, զի և Սինկղիտիկոսք ինքնին յայնժամ 'ի գիտել զբանն յարուցեալ գային արտաքս ։ Ապա անդանօր 'ի միջոցին հանդուցեալ զդագաղն, կոծ սկսան առնուլ նոքա և աշխարանս 'ի սպանութիւնն՝ իբրև 'ի մեծ

ինն և յուհազին արկած աղէտից. բայց յայնժամ խուժանն սաստիկ եւս գրգռեցաւ ատել և խոտել զկուսակիցս զաւարպետութեանն. զմնաւ ածէր՝ եթէ գուցէ ինքնին իւրեանց խակ ձեռօք 'ի կապեառլինին Թոպամանհ արկլին զՏիբերիոս Գրակքոս զայր ժողովրդապետ, և զգլուխնն առեալ ընկեցին 'ի բացէ. իսկ յայնժամ տեսեալ զԱնտոնիլոս զայր պաշտօնեայ հիւպատոսի՝ Թէպէտ և յանկուսի արդեօք սպանեալ, սակայն և շատ ինչ անձամբ յանձն ձգեալ այրն զարկածն, զի այնպէս հանդուցեալ 'ի հրապարակի, և զնովաւ Սինկղիտոսհ ռոմայեցւոց արտօսրալից պարուեալ կայ և յուղարկաւոր լինի առն վարձկանի, զի ապա զարեն հատցեն զառնն՝ որ միայն նշխար մնացեալ է 'ի պաշտպանաց անտի խուժանին:

Այպա միաբանգամ յառեան մնեալ Սինկղիտոսին, վճռաւ հրաման տային Ոպիմիոսի հիւպատոսի յանդորրու գլխովին զքաղաքն կացուցանել և զբռնաւորան եղծանել տապալել: Հանպա ձայն Սինկղիտոսին տայր Ոպիմիոս 'ի զէն վառիլ, և պատուիրէր եւ սպառազն առն առն 'ի նոցանէ առ վաղիւն վաղքաջ ընդ առաւօտն ածել վառեալս երկուս 'ի ծառայից. իսկ անդուստ և փուլվիոս հանդերձէր կազմէր ընդդէմ նոցա, և կուտէր հաւաքէր որեար շատ: Իսկ Գայիոս հրաժարեալ 'ի հրապարակէն, անդանօր յանդիման անդրւոյն հօրն իւրոյ զկայ առնոյր, և այնպէս հա-

բուստ ժամ ակնկառոյց 'ի նա եղեալ անմըռունչ և յարատատուս ցնդեալ և յոգւոց հանեալ, գնայր 'ի բաց. 'ի տեսիլ այն 'ի գութ խանդաղատանաց շարժեցան 'ի վերայ Գայիոսի բազումք 'ի ժողովրդոց, և անձամբ զանձինս թշնամանեալ՝ զի այնպէս լքեալ թողեալ մատն լինէին այնպիսում առն, գիմեալք հետևէին 'ի տուն անդր նորա և օթագայեցան առ դուրս նորա՝ յոյժ այլագգագոյնս 'ի գիշերապահ պահապանաց անտի Փուլվիոսի: Քանզի սոքա 'ի գինեըբուս և 'ի բարբառուս ցնծութեան անցուցեալք զբոլոր գիշերն, արբեալք և գինեհարեալք՝ յանդգնագոյնս ձայն արձակէին և մեծաբանս մնոտեաց, և ինքն Փուլվիոս առաջին ընդ գինի մտեալ և բազում ինչ և նա բարբառեալ և գործեալ դժպատեհ իւրում հասակին: Իսկ որք զԳայիոսիւն էին, 'ի խորին լռութեան անցուցեալք զայն գիշեր, անշուշտ իբրև 'ի հասարակաց ինչ աղէտս քաղաքին, մտախորհ եղեալք վասն որ յառաջոյ իրացն, և պահ զգուշութեան կալեալք, և այր ըստ առնէ 'ի հանգիստ փոխեալ:

Իսկ 'ի ծագել առաւօտուն՝ որք զՓուլվիոսիւն էին հազիւ ուրեմն զարթուցանէին զայրն. այնպէս իմն 'ի բազում արբեցութենէն անկեալ խոր 'ի քուն ննջէր: Ապա յարուցեալք վառեցան յանկածն մարտին՝ որ 'ի տան նորա, զոր և ինքնին Փուլվիոս 'ի հիւպատոսութեանն հանեալ էր 'ի Գաղատացւոց 'ի յաղթել իւրում.

և այնպէս 'ի ձայն բարձր աղաղակի և մեծապէս սպառնալեօք դիմեալ հասին կալան զբլուրն Աւենտինոն:

Բայց Գայիոս ոչինչ վարեցաւ, և այնպէս երթայր նա պատմուճան զիւրեաւ արկեալ իբրու յատեան երթիցէ. և առնոյր միայն ընդ իւր դաշնակ մի: Իսկ յելն նորա 'ի տանէն, կին նորա առ դուրսն անկեալ առաջի, և միով ձեռամբն կալեալ զնա, և միւսովն զորդայն իւր, ասէր. «Ո՛չ որպէս երբեմն՝ զքեզ զարդիս ո՛վ Գայիոս՝ 'ի բեմ անդր յուղարկաւորեմ իբրև ժողովրդապետ և իբրև օրէնսդիր, և ո՛չ դարձեալ 'ի մարտ փառաւոր. ուր եթէ և ձախողակ պատահեալ էր քո կրից, արդեօք իմ 'ի թուխ համակեալ էր փառաւոր. այլ քո ինքնին անձնագրաւ է երթդ առ խոշոշան Տիբերեայ. և այնպէս անզէն առ 'ի ճահ առնուլ մանաւանդ կիրս՝ քան տալ. 'ի կորուստ զքեզ մատնեալ՝ և շահ օգտի 'ի ներքս ածեալ և ոչինչ հասարակաց իրաց: Դա՛ւ աւագիկ անբարիք յաղթականք են. դա՛ 'ի բուռն և յերկաթ առնեն իրաւունս: Եթէ անդ 'ի Նումանտիա անկեալ էր քո եղբայր, արդեօք էր մեզ՝ դուլ տուեալ մարմին դարձուցանել զդիակն նորա. այլ զարդիս հարկ թերևս 'ի վերայ կայցէ և ինձ երթալ յողոք խոնարհել առ գետ կամ առ ծով. զի ինձ ապա յերևան ելցէ քոյ մարմին ամփոփեա՛լ 'ի նոսա: Քանզի և զի՞նչ ևս այլ վստահութիւն կայցէ յօրէնս կամ 'ի դիս, յետ սպանութեանն

Տիբերեայ,,: Զայսոսիկ կողկողեալ Լիկիննիա, իսկ Գայիոս հեզաբար զինքն 'ի բաց 'ի գրկախառնութեանցն նորա քեցեալ, դէմ եդեալ դնայր լուռ և անմռունչ հանդերձ բարեկամօքն. իսկ յայնժամ կինն աճապարեալ ունել զպատմուճանէն նորա՝ անկանէր յերկիր. հարուստ ժամ այնպէս անկեալ մնայր անշշունջ, մինչև ծառայիցն բարձեալ զնա այնպէս նուաղեալ՝ ածէին զնա յայնժամ առ Կրասսոս եղբայր նորա:

Բայց անդ յԱվենտինոն առհասարակ 'ի խմբել այնպէս փուլվիոսի, առեալ զկրսեր որդի իւր ըստ խորհրդոյն Գայիոսի արձակէր 'ի հրապարակն հանդերձ օձապատ գաւազանաւն: Էր սա պատանեակ չքնաղագեղ, և յանդիման եղեալ յայնժամ համեստագոյնս մեծապէս պատկառանօք և գերարտասուալից յաչս՝ առաջի հիւպատոսին և Սինկղիտոսին 'ի ներքս մատուցանէր բանս խաղաղութեան: Անդ բազմաց 'ի նոցանէ ոչինչ անախորժ էր հանդարտել կագին: Բայց Ոպիմիոս ասէր, չէ արժան հակառակորդացդ 'ի ձեռն քարոզից ածել ամոքել զՍինկղիտոսն. այլ ինքեանք իսկ իջցեն յատեան իբրև քաղաքացիք վնասակարք, և անձնատուրք առ Սինկղիտոսն՝ այնպէս ապա հաշտ արասցեն զցասումն նորա: Իսկ պատանեկին պատուէր տայր կամ դառնալ տանել զրոյց զայս պայմանացն, կամ թէ երբէք ոչ յաւելուլ 'ի դառնալ: Արդ Գայիոս

լուեալ զբանն, կամէր՝ որպէս ասեն՝ ինքն ինքնին գնալ ամոքել զծերակոյտն. իբրև հաւանեցաւ և ոչ ոք, յայնժամ Փուլվիոս առեալ միաբանգամ արձակէր զորդին առ Սենկղիտոսն առաջի մատուցանել բանս իբրու զառաջինն:

Յայնժամ ապա Ողիմիոս աճապարեալ 'ի կռիւն, տայր ձերբակալ զմանուկն առնել և պահել 'ի դիպահոջ. և ինքն սպառազէն վառելովք բազմօք խաղայր ընդդէմ Փուլվիոսեանցն, և հանդերձ բազում Կրետացւովք աղեղնաւորօք. որ բացարձակ նետաձգութեամբ հարեալ խոցեալ զխուժան նոցա, անդէն խռովեալ սատիկ 'ի նոսա հարեալ՝ 'ի փախուստ վարատէին: Յորում և Փուլվիոս ինքնին աճապարեալ՝ անկեալ ապաւինեցաւ 'ի բաղանիս ուրեք լքեալ ամայի. ուր և յետ սակաւ միոյ գտեալ զնա խողխողէին հանդերձ երիցագոյն զաւակաւն: Իսկ ընդ Գայիոսի ոչ ոք մարտ եդեալ կռուէր. այլ ինքն կարեվէր խոցեալ 'ի յոգին ընդ անցս չարչարանացն, մտեալ խուսէր 'ի տաճարն Արտեմեայ, անդ կամէր զիւրովին երթալ. բայց արգելեալ խափանեցաւ յերկուց անտի յոյժ հաւատարիմ ընկերացն. էին նոքա Պոմպոնիոս և Լիկիննիոս. քանզի առ նմա գտեալք 'ի ժամուն՝ 'ի բաց զդաշնակն առին 'ի նմանէ, և յորդորեցին փախուստ առնուլ: Եւ ասեն՝ յայնժամ 'ի ծունկս անկանել Գայիոսի և ըզձեռան ամբարձեալ առ դիցուհին՝ աղա-

չէր, զի ժողովուրդ Հռոմայեցւոց 'ի պատուհաս անշնորհակալու կրիցն և մատնութեանն ցանդ 'ի ծառայութեան կացցէ մնասցէ : Քանզի և յայնժամ բազումք յոյժ 'ի ռամկէն դարձան յայտնապէս 'ի միւս կողմն . իբրև անդուստ և քարոզ կարդային անպատուհաս թողութեան ժողովրդեանն :

Ապա Գայիոս փախուստ առեալ, զհետ նորա մոլին թշնամիք . իբրև հասին 'ի նա մօտ 'ի կամուրջն փայտեայ, յայնժամ կրկին բարեկամք զնա յառաջ վարեալ. ինքեանք արձանացեալք 'ի դիմի 'ի գլուխ կամրջին մարտ եդեալ կռուէին, ոչ թողլին ումեք անցանել՝ մինչև անկան նոքա դիտապատ : Իսկ Գայիոսի չէր ոք այլ ընկեր փախստեանն, բայց ծառայ մի Փիլոկրատէս անուն . իսկ այլք առհասարակ անդուստ խրախոյս քաջալէր կարդային միայն՝ որպէս 'ի մրցանսն ուրեք . և չէր ոք որ ձեռն տայր նմա, կամ երիվար 'ի ներքս մատուցանէր, թէպէտ և խնդրեաց . քանզի և հետամուտքն մօտեալ իսկ էին . յայն խուճապ տագնապին մօտեալ նա ապաւինեցաւ 'ի նուիրական մայրին Երիննեանց, ուր և մահ առնոյր 'ի Փիլոկրատեայ . և ինքն Փիլոկրատէս ապա գնայր զիւրովին : Բայց կէսք ասեն, երկոցունց նոցա անդանօր մինչև մեռեալ՝ 'ի վերայ խուժել թշնամեացն . և ծառային յայնժամ գլուխ ընդխառն այնպէս լինի ամբածածուկ զտէրն առնել, զի և անհնարին եղև հարկանել

զԳայիոս՝ մինչև Փիլոկրատեայ աստի անտի վէրս 'ի բազմաց առեալ անդանօր տապաստ անկանել։

Եւ տակն՝ յայնժամ Սեպտումուլեայ ուրումն բարեկամի Ոպիմիոսի առնուլ յափշտակել յուղւոջ զգլուխն Գայիոսի յառնէն որ գլխատեաց զնա, և ընթանալ տանել առ Ոպիմիոս. քանզի և 'ի սկզբան կռուոյն հռչակ հարեալ էր՝ զի որ ըզգլուխսն բերցէ զԳայիոսի և զՓուլվիոսի, կշիռ ըստ գլխոցն ոսկի առցէ։ Արդ Սեպտումուլէոս վարեալ զայն 'ի սայր նիզակին այնպէս բերէր առ Ոպիմիոս, և եդեալ 'ի կշիռ՝ հասանէր կշիռն լտերաց եօթն և տասանց և կիսոյ. քանզի խարդախեաց անիրաւութեամբ Սեպտումուլէոս, թափեալ յառաջագոյն զուղեղն՝ կապար ելից փոխանակ։ Իսկ որք զգլուխն բերին զՓուլվիոսի, փոխարէն առին և ոչինչ. զի էին մարդիկ անծանօթք։ Բայց զդիակունս երկոցուն նոցա՝ որպէս և զայլոց տապաստ անկելոցն զերից հազարաց՝ առեալք գետավէժ առնէին. և ինչք նոցա յարքունիս գրաւեցան. և կնքեալ արգելին և զսուգ կանանցն նոցա. և զԼիկիննիա ինքնին զկին Գայիոսի վրէպ առնէին յօժտէն։ Բայց ապա յոյժ անագորոյնս վարեցան նոքա ընդ կրսեր որդւոյն Փուլվիոսի, որ ոչ ընդդէմ դարձեալ ինչ էր նոցա, և ոչ ընդ մարտուցեալսն եղեալ էր. քանզի մինչ չև կռուոյն սկսեալ՝ չոքաւ նա առ նոսա բերեալ պայմանս խաղաղութեան, և 'ի

դիպահող եղաւ. և յետ կռուոյն 'ի սպանդ վարեցին և զնա :

Իսկ որ առաւել քան զայն և քան զայլն ամենայն սրտնեցոյց զխուժանն, զի տա֊ ճար միաբանութեան առեալ յայնժամ կանգնէր Ոպիմիոս. քանզի և թուէր իմն մեծապանծ պարծել և բարձրապարանոց յաղթանակ կանգնել յայնչափ ապաժոյժ արեանց քաղաքայնոցն : Ոյր աղագաւ և ոմանք գիշերայն 'ի ներքոյ վերտառութե տաճարին արձանագրեցին զոողս. Գործ անիրաւութեան՝ փառաց խնդրէ միաբանութե̃ 2:

Եւ այսպէսապա այս Ոպիմիոս առա֊ ջին անձին գրաւականեալ 'ի հիւպատո֊ սութեան աւագութիւն իշխանապետական, դատակնքեաց 'ի մահ՝ մինչև լուեալ զպա֊ տասխանին, թող զերիս հազարսն 'ի քաղաքայնոց, զԳայիոս Գրակքոս և զՓուլ֊ վիոս Փղակկոս. մին 'ի նոցանէն հիւպատոս կացեալ էր և յաղթանակ եւս տարեալ, և միւսն՝ բարձերէց 'ի փառս և յառաքինու֊ թեան քան զամենեսեան՝ որ առ իւրովքն էին ժամանակօք : Բայց այս Ոպիմիոս ոչինչ ապա գիտաց ժուժկալել 'ի գողութեան. քանզի 'ի հրեշտակութիւն առաքեալ առ Յուգուրթաս Նումադացի, կաշառաբեկ լինէր 'ի նմանէ. ոյր աղագաւ և պատու֊ հաս կրեալ զամօթապարտ չնաստն, ան֊ կեալ ծերանայ վատանուն կենօք, ատե֊ ցեալ և խոտեալ 'ի ժողովրդենէ, որ և ան֊ դէն յետ անցիցն անցելոց յոյժ հիքացեալ չուառանայր : Սակայն և ոչ հարուստ 'ի

վերայ անցելոյ ժամանակ, յայտնի 'ի դէմս բերէր զխանդակաթ սէր իւր առ Գրակքեանն։ Քանզի պատկերս նոցա կանգնէին յերևանի. և նուիրեալ ևս նոցա ըղվայրս սպանման նոցա, անդանօր ձօնեալ նուիրէին զերեխայրիս ողջոյն զեղանակաց տարւոյն. և բազումք ևս զօրհանապազ 'ի նմին վայրի զոհէին զոհս, և երկրպագութիւն տային հեռևեալք իբրու յաստուածոց տաճարս։

Իսկ յաղագս Կոռնելեայ պատմեն՝ քաջաբար և այրաւիրոս բերել զաղէտն զայն. և յաղագս վայրացն նուիրելոյ նոցա՝ յորս մեռան նոքա, ասէր Կոռնելիա՝ ըստ արժանին իւրեանց ունել մեռելոցն գերեզմանս։ Եւ ապա ինքն զաւուրս իւր անցուցանէր առ Միսենոսի, անփոփոխ կացեալ 'ի տնկակից քաղաքավարութեանն։ Էին նորա բարեկամք բազումք, և հիւրասիրութեամբ մեծահաց գործէր սեղան. և 'ի տուն նորա եկանէին հանապազ Հելլենացիք և բանասէրք, և ընծայառուք 'ի նմանէն լինէին առհասարակ արքայք, և ընծայատարք առ նա։ Առ այս՝ և բերկրալի յայժ էր նա առ որս յայց եկանէին առ նա և կենակից լինէին նմա, 'ի պատմել անդ նոցա զվարս և զկեանս զԱփրիկանոսի զհօրն իւրոյ։ Իսկ և կարի սքանչելի էր 'ի յուշ ածել նորա զզաւակաց իւրոց՝ այնպէս անտրտունջ և անարտասուր. և 'ի պատմել հարցանելեացն զնոցա նահատակութիւնն և զանցս չարչարանացն, իբրու որ

զանցիցն խօսեցի անցելոց զծերունեաց մարդկանն ։ Որ աղագաւ և կիտոց թուէր ինն՝ ՚ի պառաւեալ հասակէն կամ թէ առ բազմամեայ վշտին խելաթափեալ և ՚ի հախողակ կրիցն անզգայացեալ. բայց էին արդարև ինքնին նոքա անզգայք ոմանք. ո՛չ գիտելով, քանիօն նպաստ առ անարատում կեանս իցէ մարդոյ բարեպաշտութիւն ոգւոյն և քաջածնունդն լինել և քաջասնունդ. և զի՝ բախտն ինքնին գլխովին է բազում անգամ զի նկուն առնէ զերջանկութիւն զառաքինեացն, բայց ապա ՚ի հախողական ոչինչ արգելու նոցա համբերել իմաստութեամբ ։

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ԱԳԻՍԱՑ ԵՒ ԿՂԷՈՄԵՆԵԱՑ
ԸՆԴ ՏԻԲԵՐԻՈՍԻ

ԵՒ

ԳԱՅԻՈՍԻ

Իսկ մեր 'ի գլուխ և զայս հանեալ պատմութիւն, է մեզ աւադիկ 'ի զուգակշիռ նոցայն վարուց տեսութիւն 'ի ներքս բերել:

Արդ զԳրակքեանցդ՝ և ոչ չարախօսք ոխերիմք նոցա անգամ իշխեցին ինչ ժըխտել զդեղեցիկ բոյս բարուց նոցա անդրատին յառաքինութիւնն 'ի վեր քան զամ Հռոմայեցիս, և զլաւ սնունդ և զդաստիարակութիւն նոցա: Բայց զԱգիսայ և զԿղէոմենեայ զբոյս բարուցն տեսանեմք վեհագոյն քան զառաջնոյդ. քանզի անբաժք նոքա 'ի բարիոք դաստիարակութենէն, նա՝ սնեալք և աճեալք 'ի բարս և 'ի չափ կենաց աղուացելոցն նախնեաց 'ի հարուստ ժամանակաց, սակայն և այնպէս քաջացան նոքա 'ի տիպ հրաշալի սակաւապէտ կենաց և ժուժկալութեան:

Առ այս դարձեալ՝ Գրակքեանցդ կեցեալք 'ի ժամանակին՝ յորում մեծապէս էր շուք պայծառութեանն Հռովմայ. և 'ի նմա նախանձաւորութիւն բազում 'ի մրցանս հոյակապս, արդեօք ամօթ էր նոցա յուլանալ 'ի ժառանգութիւն հայրենատուր իւրեանց և վաղնջուց առաքինութեանն: Իսկ Ագիս և Կղէոմենէս ծնունդք հարց ըստ ներհակակիր խորհրդոց, և զիւրեանց ևս հայրենիսն գտեալ նոքա խաթարեալ և չարախառնեալ, ոչինչ կասեալ թուլացան յարխական ջանից իւրեանց:

Այլ արդեօք մեծ է յոյժ հանդէս Գրակքեանցդ, զի օտարք եղեն յընչաքաղցութենէ, և ժուժկալք յարծաթոյ, յիշխանութեան իւրեանց և 'ի տնտեսութեան քաղաքին կացեալ ցանդ անարատք 'ի զօշաքաղութենէ: Սակայն Ագիս և սրտմտէր արդեօք 'ի գովութեանն՝ զի զօտարինն չառնու. այն՝ որ և յիւրոց անտի ընչից ետ քաղաքացեացն. յորս՝ թող զայլս 'ի դոյից՝ էր և վեցհարիւր տաղանդ դրամոց: Քանի՞ն ապա վնաս մեծ համարէր զզօշաքաղութիւնն նա՝ որ յընչաքաղցութեան կարգի դնէր և զօրինաւոր բազմաստացութիւն քան զայլսն:

Իսկ 'ի գործս նահատակութեան և 'ի ձեռներէց նորութիւնսն երկուց Հեղլենացւոցդ մրցանք գերազանցեալ են քան զՀռոմայեցւոցն: Քանզի վերջինքդ 'ի քաղաքականութեան իւրեանց զհետ կրթեցան շինութեան և հորդելոյ ճանապար-

հայ, և առնուլ արծակել զաղթականս 'ի
քաղաքս քաղաքս, և 'ի քաջարութիւնն
Տիբերեայ մեծ էր բաշխն նորա հասարա_
կաց անդաստանաց. իսկ Գայիոսին՝ խառ_
նել նորա զիշխանութիւն դատաստանին՝
ընդ Սենկղիտոսին դասեալ և վեցհարիւր
յասպետաց անտի: Բայց Ագիսայն նորու_
թիւն և Կղէոմենեայն այլազգագոյն էր.
քանզի մտախորհ եղեալք՝ եթէ սրբել և
փարատել տոկոս և առանձին զախտս ըղ_
քաղաքին խուրեանց, լցէ արդեօք՝ (որպէս
Պղատոն ասաց) կարել գլուխ զհիդրային,
կազմեցան պատրաստեցան փոփոխութիւն
հատանել յիւրն՝ քաջ իսկ և բաւական 'ի
բուժել միանգամայն զամենայն զկիրսն և
յարդարել յօրինել զգործսն. նա և լցէ
արդեօք առնել ճշգրտագոյնս՝ եթէ դա այդ
նորութիւն նոցա բառնայր զապրդեալն 'ի
ներքս զփոփոխութիւնն՝ զարմատն ամե_
նայն չարեաց, և առեալ միանգամ 'ի
նախնին իւր և 'ի տնկակից դեղն հատանէր
զքաղաքն:

Այլ սակայն և ասասցէ ոք արդեօք,
եթէ քաղաքաւորութեան Գրակքեանցդ
ընդդէմ դարձան արք աւագք Հռոմայե_
ցւոց. իսկ նահատակութիւնքն Ագիսայ 'ի
գլուխ տարեալք 'ի Կղէոմենեայ՝ նեցուկ
ամրութեան կալան զգեղեցիկն և զերևելին
յոյժ զոլիպն, զվաղնջուցն ասեմ զհայրե_
նին զօրէնս քաղաքին 'ի սակաւապիտու_
թեան կենաց և 'ի հաւասարութեան. ո_
րոց կէսք հաստատահարուաք էին անդստին

'ի Լիկուրգեայ, և կէսք դարձեալ՝ 'ի Պիւթեայ:

Իսկ որ առաւել քան զամենայն՝ զի 'ի քաղաքական մրցմանց անտի Գրակքեանցդ ոչինչ աւելի ժառանգեաց Հռոմ քան ըզժառանգեալն: Բայց 'ի Կղէոմենեայն՝ 'ի խուն ժամանակ Ելլադա ինքնին տեսանէր զՍպարտիա տիրացեալ Պեղոպոննիսոյ. և մարտ եդեալ կռուեալ ընդ ժողովուրդս հարուստս ժամանակին՝ 'ի վէգ ընդ նոսա եկեալ 'ի վերայ տէրութեան: Իսկ կէսս նպատակի կռուոյն էր գլխովին ազատ զԵլլադա կացուցանել 'ի զինուց Լիւրիկեցւոց և Գաղատացւոց. և անդրէն ածել զնա 'ի բարւոք կարգ ընդ ձեռամբ Հերակլեանցն:

Բայց ինձ թուի և 'ի մահուն գլխովին արանցդ աւագաց նկատել տարբերութիւն յառաքինութեան դոցա: Քանզի Հռոմայեցիքդ երկոքին անկան տապաստ՝ մարտ եդեալ ընդ իւրեանց քաղաքացիս և ապա 'ի փախուստ դարձեալք: Իսկ Հելլենացիքդ երկոքին, Ագիս մեռանէր դոգցես ինքնակամ, զի ոչ կամեցաւ զմահ ուրուք 'ի քաղաքացեացն: Իսկ Կղէոմենէս զանարգութիւն տեսեալ զանձինն և զհարստահարութիւն, թէպէտ և վառեցաւ ևս 'ի վրէժխնդրութիւն, այլ ժամ չըգտեալ պարապոյ՝ ժտեցաւ անձին առնել:

Իսկ եթէ և այլով մասամբ մտախորհ ոք յարուդ լինիցի, տեսանէ զԱգիս ոչինչ նահատակեալ 'ի զինուորութեան արժա-

նի քաջի զօրավարի, զի կանխեցին սպանա-
նել զնա. բայց և յաղթութեանցն Կղեո-
մենեայ բազմադէմ և քաջարի, մարթ է
'ի համդիպոյ կշիռ կարգել զնահատակել
Տիբերեայ 'ի վեր 'ի պարիսպ անդր Կար-
քեդոնի, ոչինչ դուզնաքեայ մրցանք: Աւ-
այս՝ և զպայմանել նորա 'ի խաղաղութիւն
'ի Նումանտիա, որով և բիւրս երկու ապրե-
ցուցանէր 'ի զօրականէն Հռոմայեցւոց, ո-
րոց վասն և վճարեալ իսկ էր այնուհետև:
Նաև Գայիոս Ինքնին մեծապէս նահատա-
կեցաւ անդանօր 'ի զինուորութեանն, մե-
ծապէս և 'ի Սարդոն. որպէս զի եթէ և
օրհասս մահուն չէր կանխեալ նոցա, համ-
դունաոխալք արդեօք նոքա մեծացն լինէին
զօրավարացն Հռոմայեցւոց:

Բայց 'ի մրցանս նոցա քաղաքականս,
Թուի Աղիսայ յոյժ թուլակի բուռն հար-
կանել 'ի նոսա. զի վատացաւ նկուն յԱ-
գեսիղայոսէ լինել, և 'ի յուսոյն վրէպ
զքաղաքացին կացուցանէր՝ որ ակնկալեալ
մնայլին 'ի բաշխ գետնոյն. և համբուռն՝ զի
յանարի 'ի պատանի հասակէն վթար և
թերակատար դատու նա 'ի գործսն՝ զորոց
բուռն հար և զոր խոստացաւ: Իսկ ան-
դուստ և Կղէոմենէս կազմեցաւ պատրաս-
տեցաւ շրջել փոխել զկարգ քաղաքին
յանդգնագոյնս ինն և բռնութեամբ, 'ի
մահ զՊարէտոս վարեալ ընդդէմ օրինաց.
զի և հեշտին իսկ էր նմա 'ի զօրութեան
իւրում 'ի բանի իւրում առնել զնոսա
կամ թէ վտարանդի 'ի քաղաքէն առնել

ըստ օրինակին բազմաց ։ Քանզի և երկաթ 'ի գործ առնուլ առանց վերջին հարկի, արդեօք ո՛չ քաջին բժշկի է և ո՛չ քաջին քաղաքականի. այլ անարուեստ տգիտութե է յանդիմանութիւն յերկոսինն միանգամայն. իսկ յայր քաղաքական՝ այդ բանդ յանագորոյն 'ի կիրան բարդէ և զանիրաւութիւնն գլխովին ։

Բայց 'ի Գրակքեանց անտի եկաց և ո՛չ ոք առաջին 'ի սպանութիւն քաղաքայնոցն. և պատմեն ևս՝ Գայիոսի և ո՛չ 'ի նետաձիգ լինել 'ի նա՝ շարժել ինչ 'ի վրէժխնդրութիւն. այլ թէպէտ և քաջազօր այր 'ի մարտի, յոյժ յուլացաւ պաշտպանել անձին յամբոխին յայնմիկ. քանզի էր արտաքս անդէն, և 'ի ժամ կռուոյն տեղի ետ. և համբուն՝ թուէր իմն նա առաւել անձնապահ 'ի վնասել, քան 'ի վնասիլ ։ Որ աղագաւ և զփախուստ նոցա գլխովին արժան է համարել ո՛չ անարի վստահութեան հանդէս, քան թէ անկնածու զգուշաւորութեան ։ Քանզի հարկ 'ի վերայ կայր խոնարհել տեղի տալ յարձակելոցն, կամ թէ ընդդէմ դառնալ պաշտպանել անձանց՝ զի անվնաս կայցեն ։

Իսկ 'ի վնաս յանցաւորութեան նոցա, յայն ինչ առաւել բամբասեցաւ Տիբերիոս, զի 'ի բաց զիշխանակիցն վարեաց 'ի ժողովրդապետութենէն. և զի՛ և երկրորդ ժողովրդապետութիւն պատրաստեաց անձին ։ Իսկ Գայիոսին յանիրաւի ուրեմն՝ մահն ընծայեցաւ Անտիւղիոսի. քանզի

սպանաւ այրն յականամայս նորա և 'ի խոր կս խոցեաց զնա:

Այլ Կղէոմենէս (թողում ասել ըղՊարետոյն զսպանութիւն), յազատութիւն գրեաց առհասարակ զծառայս. և 'ի ներքոյ թագ կապեաց ինքն միայնակ՝ թէպէտ և 'ի վերին երեսս զերկրորդն կոչեալ տեղի, կարգեալ իւր թագակից զեղբայր իւր զԵւկլիդաս 'ի նոյն տանէ: Եւ արդեօք յորդորեաց շարժեաց նա զԱրքիդամոս (որում անկ էր թագ կապել 'ի միասին ընդ նմա՝ 'ի միւսմէն գոլով 'ի տանէ), դարձ առնել 'ի Մեսսենեայ. բայց Արքիդամոս այս 'ի մահ վարեալ և 'ի մահն նորա հետախոյզ ոչինչ եղեալ Կղէոմենէս, ինքնին տալ ընդդէմ անձինն արձանացոյց զկարծիս սպանութեան զառնն: Իսկ անդ ուրեմն Լիկուրգոս՝ որում նմանող զանձն 'ի ներքս ընծայէր Կղէոմենէս, ինքնակամ զթագն առեալ դարձուցանէր առ Քարիլաոս եղբօրորդի իւր. և զանգիտեալ ևս՝ գուցէ 'ի մեռանել մանկանն՝ խէթ ինչ զնմանէն կալցեն, տարաշխարհս հատանէր հարուստ ժամանակ. և դարձաւ ոչ 'ի հայրենիսն, մինչև ծնեալ Քարիլաոսի վաւակ պայազատ թագին: Այլ Լիկուրգոսին՝ նա աւանիկ և ոչ 'ի Հէլլէնացիս չիք ոք ուրէք հանդունատիպ:

Այս յայտնի դոյ 'ի քաղաքական մըրցանսն Կղէոմենեայ մեծաց լինել նորութեանց և անխրատութեանց. և որք զքաղաքավարութիւնն խոտեցին զերկուց հէլ

ընացուցդ, բամբասեն իբրև անդատին 'ի սկզբանէ բռնաւորական զայն և խաղմաբար: Իսկ նախանձորդք Հռոմայեցւոցդ երկուց՝ բամբասանս այլ 'ի վերայ չածելին բարոյից դոցա՝ բայց զսարապայման պատուասիրութիւն. և խոստովան ևս լինին՝ վառեալ նոցա ընդ հակառակորդան 'ի պայքարաց և 'ի սրտմտութենէն՝ իբրև յուժգնակի իմն հողմոց, բերել ընդդէմ իւրեանց իսկ բուսոյ բարուցն 'ի վերջինան յայն 'ի քաղաքաւորութեան իւրեանց:

Եւ արդեօք զի՞նչ այլ գեղեցիկ առաւել կայցէ և արդար քան զառաջին նոցա խորհուրդն, եթէ արդեօք ճոխքն պատրաստեալք կազմեալք՝ զօրութեամբ իւրեանց և կարողութեամբ 'ի վանել զառ 'ի նոցանէ կարգեալ օրէնան, ոչ տային մարտից պատահել երկոցուն նոցա. մին՝ որ զանդխանէր 'ի կենաց անձինն, և միւսոյն՝ որ վրէժ զեղբօրն խնդրէր, զի այնպէս անդատաստան և անդատապարտելք 'ի մահ վարեցան:

Արդ դու ինքնին՝ 3 յորոց միանգամ ասացաքս՝ համօրէն 'ի վերայ կայցես տարբերութեան դոցա: Ապա եթէ և պարտիցէ առ մէն մի 'ի դոցանէն մասնաւոր ինչ կնքել, ես զՏիբերիոս յառաքինութեանն բնաւից նոցա ասեմ վեհագոյն, իսկ զպատանին Ագիս յոյժ նուազ քան զայլսն դատիմ յանցաւոր. իսկ զԳայիոս ոչ խուն ինչ խոնարհագոյն դասեմ քան զԿղէոմենէս 'ի նահատակութիւնս և յարիութեան:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ո՜հ, կարի՜ է անհամութիւնն : Աւաղ զի՞նչ առնել իցէ և յաղագս անհամութեան և խամութեան նորուն Կիկերոնին. զի զոր Պլուտարք պարզաբար պատմէ յայլոց գիտաց, նա իբրև իմաստասէր արդարև անիմաստ՝ 'ի գիրս Գուշակ. իբրև հաւատախ ճշմարտութե հաւահամայիցն՝ զայն դէպս Տիբերեայ 'ի ներքս բերէ :

2. Տողս այս հաչակելի՝ նաև ըստ ձայնին գեղեցկապէս յերիւրեալ է 'ի լտ. Actus vecors (իբրու ասել՝ Actus vecordiae) templum facit Concordiae. բայց նա գեղեցիկ 'ի Յն. Ἔργον ἀπονοίας, ναὸν Ὁμονοίας ποιεῖ.

3. Խօսի առ Սենեկիոնի, որում նուիրեաց Պլուտ. զՄատենագրութիւն իւր :

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԴԵՄՈՍԹԵՆԵԱՅ

ԵՒ

ԿԻԿԵՐՈՎՆԻ

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

Որ 'ի յաղթութեան անդ Ողիմպիական մրցնթացիցն ներբող արձանագրեաց Աղկիպիադեայ, ով Սոսիէ, եթէ Եւրիպիդէս [իւ]քնին իցէ այրն, (որպէս բազմաց են կարծիք), կամ թէ այլ ոք, ասէ այսպիսի ինչ. եթէ՝ Առն երջանկի նախ քան զամենայն պարտ է ծնանել յականաւորն քաղաքի:

Բայց ինձ թուի՝ եթէ առ ճշմարիտ երջանկութիւնն՝ որ բազումս բնաւորեցաւ զօրել 'ի բարսն և 'ի բարետոհմութեան ազգւոյն, ոչինչ առաւել իցէ ծնանել յանփառունակ և 'ի դուզնաքեայ հայրենիս, քան ծնանել յանդեղեայ և 'ի կարճիկ մօրէ: Քանզի և ծիծաղելի արդեօք իցէ կարծել՝ եթէ Յուլիդէ աւան նկուն՝ Քիոյ փոքրիկ կղզւոյն, դարձեալ և Եգինա, (զոր Ատտիկեցի ոմն ասաց իբրև բիծ աչայն՝

սրբել զնա 'ի Պիրէոսէ ,) դերասանս ոմանս յառաջ բերցէ ճարտարս և քերթողս. իսկ զայր ոք արդար՝ անբասական իցէ 'ի ներքս բերել, և զայր ինքնաբաւ և զհանճարեղ և զմեծանձն :

Քանզի օգտածարաւ և փառախնդիր արուեստից 'ի դէպ իցէ արդեօք թօշնիլ վատիլ 'ի քաղաքս անշուքս և 'ի նկունս . բայց առաքինութեանն գլխովին՝ իբրու հաստահարուստ և ինքնաբաւ անկոյ՝ քաջարմատ հաստել յամենայն իսկ վայրս , ուր միանգամ բոյս բարուց քաջամոյն գտցէ և ոգի ժիր և գործասէր : Այր աղագաւ և մեք ինքնին 'ի թերանալ ինչ մերում յիմաստութենէ և 'ի գեղեցիկ քաղաքավարութենէ՝ ոչինչ գնեմք մեղ խոնարհութեան հայրենի քաղաքին , այլ մեծապէս իրաւամբք՝ անձանց մերոց : Իսկ որ միանգամ բուռն հարեալ իցէ հիւսել և արձանագրել պատմութիւնս 'ի մատենից՝ որ ոչն առձեռնինք և ընտանիք իցեն , այլ տարաշխարհիկք առաւել և աստ անդ ցանուցիրք , անշուշտ արդեօք պարտ է այնպիսւոյն առաջին՝ թարթափել կալ 'ի քաղաքի՝ որ ականաւորն իցէ և որ քաջիկ բարեմասնութեանց զհետ կրթեալ իցէ և բազմաժողով իցէ . որպէս զի գտանակ գունակ մատենից անբաւից մերձ նմա գոլով , և հարցաքննին ևս լինելով և խելամուտ ևս 'ի լռոցն՝ որ ինչ միանգամ իրք վրիպեալք առ 'ի մատենագրացն՝ յուշի մարդկան հաստեցան որդի 'ի հօրէ առեալ և արժա-

նահաւատք գտան, թեւակոխեսցէ արձանագրութիւն 'ի լոյս բերել ոչինչ թերացեալ 'ի բազմադէմ և 'ի կարևոր հմտութեանց:

Արդ մեք ինքնին բնակաւորք 'ի փոքրիկ քաղաքի 1, (և մտադիւրադոյնս դեգերիմք 'ի սմա՝ զի մի փոքրադոյն ես յարդարեսցի), 'ի դեգերել մերում 'ի Հռովմ և յայլ ես վայրս Իտալիոյ՝ ժամ չգտի պարապոյ վարժել հրահանգել 'ի Հռոմայեցւոց բարբառն վասն անպարապութեան իմոյ 'ի քաղաքականսն. և զի յայց ինձ տէպ ելանէին դեգերել վասն իմաստասիրականին. ուստի և անագան ուրեմն և 'ի տարաժամ հասակի պարապեցաք մեք ընթեռնուլ զՀռոմայեցւոց մատեանսն: Եւ պատահեաց ինձ զարմանալի բան, սակայն և ճշմարիտ. զի ոչ այնչափ 'ի բառիցն՝ խելամուտ գործոցն եւ լինէի, որչափ 'ի գործոց անտի՝ որոց տեղեակն իսկ էի՝ յաջողէր ինձ զիմաստ բառիցն 'ի վեր բերել: Իսկ համօրէն 'ի վերայ կալ գեղեցկութեան իմացուածոցն Հռովմէականին և նոցուն արագաբանութեանն և այլակերպութեց անուանցն և ներդաշնակութեանն և այլոց ևս հանդիսից պերճաբանութեանն, արդեօք բերկրական է մեզ այդ և հեշտալի, սակայն և առձեռն չէ ուսումն հրահանգացդ այդոցիկ. և 'ի նոյն նահատակեսցին նոքա՝ որոց գամ մի ժամ պարապոյ առաւել գուցէ և հասակ առոյդ բաւական վարժիցդ այդոցիկ:

Իսկ մեր արձանագրեալ այժմիկ 'ի մատենիս յայսմ 'ի հինգերորդ Զուգակշիռ վարուցս՝ յաղագս Դեմոսթենեայ և Կիկերոնի, 'ի գործոց անտի նախատակութեանց նոցա և 'ի քաղաքականութենէն 'ի մեր բերցուք մտածութեամբ զբոյս բարուց և զբարետոհմութիւն ոգւոյն նոցա, 'ի կշիռ ընդ միմեանս ձգեալ. զանց արար արասցուք 'ի հետաքննին կշռոյն՝ զատենաբանութիւն նոցա, ոչինչ սահմանել՝ ո՞ որք 'ի նոցանէն արդեօք առաւել քաղցրախօս իցէ կամ կորովաբան. քանզի և որպէս ասաց Յօ՛ն. Զօրութիւն դելփինի 'ի ցամաքի ոչինչ : Որում ոչ 'ի վերայ կացեալ Կեկիլիոս՝ համակ յանձնապաստան, ժտեցաւ կշիռ գործել ընդ Դեմոսթենէս և ընդ Կիկերոնի : Սակայն եթէ և էր իսկ ամենեցուն կատարել զառածն Ծանիր զքեզ, արդեօք չէր աստուածային իմն գող-ցես պատգամդ այդ :

Քանզի և թուի թէ անդստին 'ի սկզբանէ օրինակ զնոյն հաստեալ Աստուծոյ զԴեմոսթենէս և զԿիկերոնի, նմանութիւնս բազմադէմ 'ի նոսա բնաւորեալ իցէ. ըստ որում՝ զիղձ պատուոյն և զսէր ազատութեան զհայրենի աշխարհին, և զանարի վատասրտութիւն նոցա 'ի վտանգս և 'ի մարտս պատերազմաց. և զի՛ և բազում ինչ բաղդոյին խառնեալ իցէ 'ի նոսա : Քանզի և չիք ինձ արդեօք գտանել զերկուս այլ 'ի հռետորացն, որ յառաջին աննշանք ոմանք և դուզնաքեայք, ապա հա-

տաճարուստք և մեծամեծք կացին երկոքին նոքա. և երկոքեանն ոգորեցան ընդ արքայից և ընդ բռնաւորաց. և երկոքեան դարձեալ վրէպ կացին յիւրեանց դատերաց. և երկոքին միանգամայն վտարանդիք յիւրեանց հայրենեաց և դարձ անդրէն արարեալ փառօք, և կրկին միւսանգամ փախստականք. և 'ի վերջէ ուրեմն 'ի ձեռն անկեալք իւրեանց թշնամեացն, և 'ի կենաց վախճանեցան՝ 'ի վախճանել ազատութեան իւրեանց քաղաքայնոցն: Որպէս զի եթէ երբէք և բնութիւնն ինքնին և բախտն գլխովին՝ իբրու կրկին ճարտարապետք 'ի պայքար ընդ միմեանս մտանիցեն 'ի վերայ դոցա, արդեօք դժնդակ իցէ սահմանել՝ ո՞ 'ի նոցանէն հանդունատիպս առաւել գործեաց զարդ զայդոսիկ, արդեօք բնութիւնն՝ 'ի բարսն, եթէ բախտն՝ 'ի գործն նահատակութեան:

Արդ ժամ է մեզ այսուհետև յաղագս ծերագունին 'ի նոսա խօսել առաջին:

ԴԵՄՈՍԹԵՆԷՍ հայր Դեմոսթենեայ՝ էր 'ի լաւ և 'ի քաջ որերոյն, որպէս պատմէ Թէոպոմպոս, բայց մականուանեալ կոչէր նա Սուսերագործ. քանզի էր նորա հանութ մեծ, և 'ի նմա ծառայք պարապեալք 'ի նոյն արուեստ: Իսկ զոր միանգամ Եսքինէս պատմէ հռետորն վասն մօր Դեմոսթենեայ՝ ծնեալ 'ի Գիւղոնէ ումեմնէ վտարանդի եղելոյ 'ի քաղաքէ իբրև մատնիչ և 'ի բարբարոս մօրէ, չունիմք

ասել՝ Ճշմարիտ պատմէ՝ եթէ արդեօք նախատէ և առէ ։

Արդ Դեմոսթենէս որբացեալ առ 'ի հօրէ 'ի հասակի ամաց եօթանց, կալաւ ժառանգութիւն բաւական, զի և էին խակ ամենայն գոյք նորա իբրև տաղանդաց հնգետասանից ։ Սակայն և զեան հասուցին նմա հազարապետք նորա խորհեալք զկէս մի յընչիցն, և զկէս մի՝ անհոգացեալ, մինչև և զվարժապետս նորա զրկել 'ի վարձուցն. ուստի և թուի ոչինչ վարժեալ նմա 'ի հրահանգս վայելուչս քաջածնունդ մանկտոյն ։ Առ այս՝ և 'ի պատճառս անօսրութեան և գրգութեան մարմնոյն՝ մայր նորա ոչ թողացուցանէր նմա ճգնել. և ոչ դաստիարակք նորա բռնի առնէին նմա ։ Վասնզի և անդստին 'ի բնէ էր վտիտ և անառողջ. ուստի և պատմեն՝ 'ի պատճառս մարմնոյն հեգնութիւն լսել նմա 'ի մանկանց, մականուն խոտան կարդացեալ նմա՝ Բատտալոս ։ Եւ էր այս Բատտալոս՝ որպէս կէսք ասեն, կնամարդի ումն սրնգահար. ոյր աղագաւ և Անտիփանէս քերթուած մի փոքրիկ կատակերգեաց վասն այսորիկ ։ Իսկ կէսք դարձեալ զայս Բատալոս ասեն իբրև քերթող ցոփաբան և լիրբ ։ Եւ թուի թէ յայնժամ Ատտիկեցիք Բատտալոս անուն կարդային և անդամոց մարմնոյն՝ զոր անուանել անճահ իցէ ։ Իսկ յաղագս անուանակոչութեան նորա Արգաս. (քանզի ասեն և զայս մականուն տալ Դեմոսթենեայ), այն կամ 'ի պատ-

ճառս գաղանային և անհամբոյր բարոյիցն
նորա, (զի և զաղդ մի օձի Արգոս կոչէին
կէսք 'ի քերթողաց 2,) կամ 'ի պատ_
ճառս խօսիցն նորա՝ որ պատերազմող էին
լսելեաց · քանզի և էր Արգաս անուն ումն
քերթող անպատկանագիր և տաղտուկ։
Այլ յաղագս այսոցիկ՝ որպէս ասէ Պղա_
տոն՝ ցայս վայր։

Իսկ վասն Թափոյ եռանդեան նորա 'ի
վարժս ճարտարախօսութեան, ասեն օրի_
նակ զայս ունել սկիզբն։ Իբրև Կալլիս_
տրատոս հռետոր հանդերձեալ էր ատե_
նախօսել զդատն վասն Որովպոսի, յայն_
ժամ առհասարակ ամենեքեան մեծապէս
պատրաստեցան 'ի լուր պայքարացն · քան_
զի քաջ էր հռետորն և յոյժ զհամբաւի
հարեալ, դարձեալ և դատախազելն յա_
կանաւորաց անտի էր։ Ապա իրազեկ ե_
ղեալ Դեմոսթենէս, զի վարժապետքն և
դաստիարակքն միաբանեցան յառնել զը_
նալ յատեանն, նա կայր և ժտէր աղաչէր
զդաստիարակ իւր տանել և զնա 'ի լսարան
անդր · և քանզի ծանօթ իսկ էր դաստիա_
րակն պաշտօնէից ատենին, գտաւ տեղի
նստելոյ մանկանն 'ի ծածուկ և ունկն
դնել հռետորացն։

Իբրև գեղեցիկս 'ի գլուխ Կալլիստրա_
տոս տարաւ զբանն, և առհասարակ մե_
ծապէս սքանչացաւ, անդանօր Դեմոսթե_
նէս խանդայր զփառսն՝ զի սպասարկեալ
'ի բազմաց և երանի կարդային առն. և ա_
ռաւել ևս հրաշացեալ էր ընդ զօրութիւն

Ճարտարախօսութեանն, որ այնպէս ընտաւորեցաւ յաղթահարել և նկուն զամենայնն առնել: Եւ յայնմանէ ապա զամենայն հրահանգ և զպարապումն անխական 'ի բաց թողեալ նա, կրթէր զանձն և ընդ քիրտն մտանէր 'ի վարժս յայնոսիկ, որպէս եթէ և ինքնին գտանել յապայս ընդ առենաբանիցն: Ուստի և վարժապետ Ճարտարասանութեանն կալաւ իւր զԻսէոս, թէպէտ և 'ի ժամանակին վարժարան կարգեալ էր և ինքնին Իսոկրատէս. կամ զի 'ի պատճառս որբութեանն՝ որպէս կէսք ասեն՝ անձեռնհաս գտաւ հատուցանել տասն մնաս՝ զվարձն Իսոկրատեայ. կամ զի առաւել ընտրեաց առ 'ի պէտս զԻսէոսին Ճարտարաբանութիւն՝ իբրև ազդու առաւել և խորագիտագոյն:

Եւ պատմէ մեզ Երմիպպոս՝ պատահել յիշատակարանաց ումանց՝ անանուն. յորս արձանագրեալ կայր՝ եթէ հպատակ եկաց Դեմոսթենէս և վարժարանին Պղատոնի, և անդուստ մեծապէս օգտեալ 'ի Ճարտարախօսութեանն: Եւ պատմէ ևս՝ տալ Կտեսիբեայ՝ եթէ վարժեցաւ Դեմոսթենէս 'ի հրահանգս Իսոկրատեայ և Աղկիդամանդեայ, 'ի ձեռս զայնոսիկ բերեալ գաղտաբար 'ի Կալլիասայ Սիրակուսացւոյ և յայլոց ումանց:

Իբրև յարբունս եհաս Դեմոսթենէս, դատախազ կայր յառենի զխնամակալուաց իւրոց. և արձանագրէր առենախօսութիս ընդդէմ որոց հնարիմացն լինելին շատ յեր-

կարաձգել և կրկնել երեքկնել զդատաստանս: Եւ ապա քաջակիրթ եղեալ նա՝ ըստ Թուկիւդիդեայ բանիւն՝ 'ի բացախօսել, և յաջողեալ 'ի բանին՝ ոչ անվտանգ և անվաստակ, ոչ կարաց բաղում ինչ 'ի ձեռս բերել 'ի հայրենի գոյիցն: Սակայն և յայնմանէն խրախոյս առեալ խօսել յատենի, և շատ ես այնուհետև կրթեալ, և զշքոյն և զզօրութեան Ճաշակսն առեալ՝ որ 'ի պայքարաց անտի ատենին, կազմեցաւ պատրաստեցաւ այնուհետև միջամուխ լինել քաղաքին:

Եւ զորօրինակ ասեն՝ եթէ Լաոմեդոնտէս Որքոմենացի յապաքինել յախտէ փայծաղանն, կրթէր զանձն 'ի վազս երկայնս 'ի պատուիրանէ բժշկացն. և զի՝ յայնմանէ ապա կորովացեալ մարմնոյն, մխեցաւ 'ի մրցանսն տանել պսակ, և եղև նա մի 'ի քաջաց անտի ընթացողացն զԴոլիքոն 3: Նոյնպէս և Դեմոսթենէս զառաջինն նահատակեալ 'ի պայքար՝ զինչս իւր 'ի ձեռս բերել, յայնմանէ ապա կորովացեալ յարուեստին և բարգաւաճեալ, 'ի ձեռնարկսն քաղաքին իբրու արդարև յելևելս մրցանաց պսակաւորաց՝ վեհագոյն գտաւ նա ողջոյն 'ի բեմբասացս քաղաքին:

Սակայն և զառաջին նուագ հրապարակախօսութեանն առ ժողովուրդն, շռինդն մեծ հարեալ՝ 'ի ծաղր հատանէին ընդ անսովոր ոճ խօսիցն՝ իբրու որ խռուացեալ և մանուածոյ 'ի պարբերութիւնս բանին, և բռնաբար Ճգնեալ 'ի խիստ և 'ի հոծ հնա-

րից արուեստին. առ այս՝ զի և Նրբաձայն էր, և ոչ ողջ բերէր լեզուն զհենդենայսն, և չէր ևս երկարոգի. ուստի և զպարբերութիւնն ընդհատեալ՝ խառնափնդորէր զխմաստս ճառին: Այր աղագաւ և 'ի վերջէ մեկուսի հրաժեշտ տուեալ յամբոխէն, մինչդեռ սրտաբեկ սրտառուչ շրջէր գնայր թաղծեալ 'ի Պիրէոսի, անդանօր Եւնոմոսթրիասիոս այր հինաւուրց տեսեալ զնա այնպէս, սաստէր կշտամբէր զնա, զի ոճ՞ զբանիցն ունելով նա համգունատիպ յոյժ Պերիկլեայն, այնպէս անարի վատութեամբ մատն լինի անձին խորում՝ ոչ բերելով քաջաբար զաղմուկ խուժանին, և ոչ դարձեալ զեւրականն կրթէ զմարմին և վարժէ 'ի մրցանսն յայն, այնպէս անհոդացեալ ծխուրիլ ծնդիլ 'ի փափկութենէն:

Եւ պատմեն՝ եթէ և յայլում նուագի զնոյն այպանս այպանեալ զնա խուժանին, և դարձ արարեալ նորա 'ի տուն ողջ ծածկեալ զգլուխն և թաղծագին յոյժ, զհետ չոքաւ նորա Սատիւրոս դերասան ծանօթ նորա և 'ի միասին մտանէր ընդ նմա: Յայնժամ Դեմոսթենէս դանդատ կալեալ կոծէր, եթէ ընդ քիրտն առաւել մտեալ նորա քան զամենայն ճարտասանս, և 'ի նոյն հրահանդ դոդցես զձիգն վատեալ զմարմնոյն, շնորհս չգտանէ առ խուժանին. որ նոքա և մարդկան շուայտելոց, նաւաստեաց և ադխոսաց 'ի լուր նստին և զնոսին ախրացուցանեն բեմին. իսկ զնովաւ այնպէս զանց առնեն: Եւ պատաս_

խանի Սատիւրոս և ասէ. "Արդար ասես ո՛վ Դեմոսթենէ. այլ ես արագ դարմանեցից զպատճառ անկարգութեանդ, եթէ դու 'ի բերանոյ կարդասցես ինձ տողս ինչ յԵւրիպիդեայ կամ 'ի Սոփոկլեայ,, :

Իբրև արար այնպէս Դեմոսթենէս, ապա Սատիւրոս առեալ ինքնին կրկնեաց զնոյն. բայց կարդայր այրն այնպէս իմն ճարտար և այնպէս պերճ կերպարանեալ առ 'ի ձայն բարուց և կրից բանին զնոյն տողն, որպէս զի և Դեմոսթենեայ ինքնին համբուն այլայլանք թուեցան բանքն : Եւ յայնմանէ ապա խելամուտ եղեալ Դեմոսթենէս մեծապէս զարդու և շնորհի խօսից՝ որ 'ի կրից անտի առոգանութեանն, առ դուզնաքեայս այնուհետև՝ մանաւանդ եթէ և առ ոչինչ զկրթանան դրէր զարուեստին, եթէ առոգանութիւն և կիրք ճաշակաւորեալք բանիցն մերձ ոչ լիցին :

Ապա առեալ շինէր իւր կրթարան ստորերկրեայ (որ և պահեալ կայր մինչև ցաւուրս մեր), և 'ի նմա զօր ամենայն իջեալ վարժէր զանձն 'ի հրահանգ կրիցն և 'ի ձայնին. և էր բազում անգամ զի անդէն դադարեալ մնայր անդուլ ամիսս երկուս և երիս՝ փոքրեալ զգլուխն 'ի միոյ կողմանէն. զի թէպէտ և իղձ կալեալ արտաքս ելանելոյ, փակեալ առ 'ի յամօթոյ կացցէ 'ի ներքս : Առ այս և 'ի կենակից բանից և 'ի զրուցաց և յանպարապութեանց հդէր ժողովէր պատճառս և նիւթ կրթանաց : Քանզի անդէն հրաժարեալ 'ի նոցանէն,

եկեալ իջանէր 'ի կրթարան անդր իւր և անդէն մի ըստ միոջէ մնաբերեալ քաղէր զկրան՝ ոյր աղագաւ եղեն բանքն, որպէս և զփաստս նորա։ Դարձեալ և յուշի կալեալ նա զճառսն զոր լսէր, կարգէր յարդարէր զայն յառածս իւր հանճարեղս և 'ի պարբերութիւնս, և առեալ ուղղէր զարմանազան, և նորօրինակ 'ի ներքս մատուցանէր զայլոցն առ նա զասացուածսն, կամ զիւրն՝ առ նոսա։ Ուստի և համարեցաւ իսկ նա ոչինչ անդստին 'ի բնութենէն այր վիճակեալ ուշիմութեան, և քաջախօս և ճարտարաբան կացեալ նա միայն 'ի ջանից անտի իւրոց։ Եւ թուի հաւաստիք մեծ բանին, զի և ոչ հեշտին այնպէս հրապարակախօս յանպատրաստից լինէր Դեմոսթենէս։ Նաև դէպ եղև բազում անգամ նստել նմա յատենի ժողովոյն, և յականէ յանուանէ հրաւիրեալ 'ի խուժանէն, յանձին չկալաւ գալ 'ի մէջ, մինչև մտախորհ եղեալ և պատրաստեալ 'ի բանն։ Ուստի և շատք յատենախօսից հեգնէին զնա, և Պիւթէաս խաղ արարեալ ասէր, եթէ հոտ զպատրուգաց ունին փաստք նորա։ Առ որ և Դեմոսթենէս դառնապէս հեգնութեամբ զայս ասէր. "Եւ կարի իսկ քաջ։ Քանզի ոչ զնոյն առ իս և առ քեզ, ո՛վ Պիւթէաս, կանթեղն գիտէ և վկայէ":

Այլ և ոչ ինքնին Դեմոսթենէս առ այլս ժխտէր զայն. խոստովան լինէր՝ ոչ 'ի գիր առնուլ համբուն՝ զոր հանդերձեալն

էր խօսել, և ո՛չ դարձեալ համբուն անգիր թողուլ. և ասէր՝ այր ժողովրդամեծար է, որ մտախորհն լինի՝ զոր խօսել ունի. քանզի և օրինակ այս պատրաստութեան՝ շուք ակնածութեան է առ ժողովուրդն. իսկ փոյթ ոչինչ ունել զկարծեաց ամբոխին 'ի հրապարակախօսութեն, կիրք են առն՝ որ յաւագպետութիւն անգր կրթեալ իցէ, բռնանալ մանաւանդ՝ քան ամոքել:

Իսկ վասն վատասրտելոյն նորա 'ի յանպատրաստից ատենախօսութիւն՝ հաւաստիք և զայս 'ի ներքս ընծայեն, զի 'ի շփոթել նշանջել նորա բազում անգամ յաղմկելոյ խուժանին 'ի հրապարակախօսութեանն, յարեաւ յայնժամ Դեմադէս և անդէն արագ արագ ատենախօսէր և նա, և զօրավիգն կայր Դեմոսթենեայ. իսկ Դեմոսթենէս երբէք ո՛չ գործեաց զայս 'ի զօրավիգն Դեմադեայ: Այլ ասացէ ոք թերևս, առ ի՞նչ ապա կոչէ զնա Էսքինէս յոյժ հրաշալի 'ի քաջաբանութեան. և զի՞արդ ինքնին միայնակ Դեմոսթենէս յոտն եկաց ընդդէմ գառնայր Պիւթովնի Բիւզանդացւոյ՝ յախուռնացելոյ և յորդաբուղխ առն ընդդէմ Աթենացւոց: Կամ թէ զի՞արդ արդեօք յարձանագրել անդ Լամաքոսի Միւռրենացւոյ զներբող զարքայիցն Աղեքսանդրի և զՓիլիպպոսի՝ յորում և յոյժ չարախօս կայր նա զԹեբայեցւոց և զՈղինթացւոց. և 'ի հրապարակախօսել անդ առն 'ի խռան Ողիմպիա-

կան մրցանացն, անդէն Դեմոսթենէս յոտն կացեալ և ճահաւորակի պատմութեամբն և փաստիւք բանականօք 'ի դէմս բերեալ ողջոյն զբարեգործութիւնն զԹեբայեցւոց և զՔաղկիդեցւոց յԵւբեա, առ այսոքիւք՝ և զչարիսն որ 'ի մարդելուզաց անտի Մակեդոնացւոցն, այնպէս խիստ շրջեաց և փոխեաց զմիտս լսելեացն, զի և իմաստակին յայնժամ զահի հարեալ յամբոխիցն յուզելոց, ոտնխթի խոյս տայր յաշխարհախումբ ժողովոյն:

Այս թուի՝ Դեմոսթենեայ ոչ յայլ ինչ զնմանութիւն բերել զՊերիկլեայ, քան թէ հանգուճնատիպ նմա խնդրելով լինել 'ի գնացս և 'ի կերպարանն մարմնոյ, միանգամայն և անձնապահ 'ի խօսել յանպատրաստից և 'ի խօսել վասն ամենայնի. իբրու եթէ մեծապէս Պերիկլէս բարգաւաճեալ իցէ 'ի զգուշութեանց աստի: 'Ի վերայ այսր՝ և ոչ գլխովին ընդ վայր Դեմոսթենէս հարկանէր զփառսն զայնօրինակ ատենախօսութեանն՝ ըստ դէպ ժամանակի, թէպէտ և զգոյշ ինքն կայր այնպէս ոտէպ վտանգել բախտիւ զանձինն ուշիմութիւն:

Բայց և յանպատրաստից կարգեալքն Դեմոսթենեայ՝ կորովիք առաւել էին և համարձակաձայնք քան զարձանագրեալսն նորա, եթէ հաւատալ արժան իցէ Երատոսթենեայ և Դեմետրիոսի Փաղերիոսի և Կատակերգակաց դասուն: Քանզի Երատոսթենէս ասէ՝ 'ի յանկարծախօս լինել

Դեմոսթենեայ՝ բաղում անգամ գեղեցիկս խմն մոլել նմա: Եւ փաղերիոս ասէ՝ 'ի միում նուագի իբրև արդարև մարգարէացեալ՝ կռել նմա առ ժողովուրդն զերդումն 'ի չափս ոտից, եթէ "Օ՛ն և օն 'ի հող, օն և օ՛ն յաղբևրս, օն և օ՛ն 'ի գետս, օն և օ՛ն 'ի վտակս,,: Իսկ և 'ի կատակերգակաց ումն կոչէ զնա Բոֆոֆէ—ֆէ—ֆԲր—. այն է՝ Առձեռնախօս: Եւ այլ ումն հեգնեալ զնա՝ ըստ յաճախելոյ նորա զհակադրութեան ձևոն, ասէր. "Սա՛պէս նա Վերառնու, ըստ որում և Առնու,,. քանզի և սիրելի էր Դեմոսթենեայ վարել ոռէպ զբառ զայն. եթէ ոչ՝ օն և օ՛ն և ինքնին Անտիփանէս կատակէ զնոյն անդանօր՝ ակնարկեալ 'ի ճառն վասն կղզւոյն Ալոնեսեայ. յորում ճառի Դեմոսթենէս խորհուրդ տայր Աթենացւոց՝ Մէ Ա—ն—ւ զկղզին, այլ Վէր—ն—ւ 'ի Փիլիպպոսէ:

Սակայն և առհասարակ խոստովանեալ է, եթէ Դեմադէս և յանպատրաստից խօսել՝ անպարտելի էր այրն. և այնպէս առ ձեռն իւրովք փաստիւքն նկուն առնէր զճշգրտութիւնն և զպատրաստութիւնս բանիցն զԴեմոսթենեայ: Իսկ Արիստոնն Քիացի 'ի մէջ բերեալ և ըզԹէոփրաստեայ կարծիսն վասն հռետորաց՝ պատմէ՝ եթէ հարցեալ սա երբեմն զի՞նչպիսի հռետոր նա զԴեմոսթենէս համարեսցի, ետ պատասխանի, "Արժանի իւրում քաղաքին,,: Իսկ զի՞նչպիսի և Դեմադէս,,, ասէր, "Գեր 'ի վերոյ իւրում

քաղաքին,,: Եւ պատմէ դարձեալ նոյն իմաստասէր, ասել Պոլիւեւքտեայ Սփետտիոսի՝ որ մի էր յառաջնորդաց անտի Աթենացւոց՝ եթէ հռետոր մեծ յոյժ է Դեմոսթենէս, այլ կորովաբան յոյժ է Փոկիոն. քանզի սակաւաբան յոյժ էր այրն, այլ բազմիմաստ յոյժ:

Եւ պատմեն եւս՝ եթէ և ինքնին Դեմոսթենէս՝ քանիցս անգամ և յառնէր Փոկիոն 'ի բեմն պայքարել ընդ նմա՝ ասէր առ իւր բարեկամս, "Արդ աւադիկ յառնէ տապարն իմոց բանից,,: Սակայն և անյայտ է, արդեօք ճարտարախօսութեանն սակս Փոկիոնի ասել այնպէս Դեմոսթենեայ, կամ թէ վասն կենացն քաղաքավարութեան և համբաւոյ առնն. քանզի և անշուշտ բան մի և եթ՝ նա՛ և ակնարկել մի՝ արգոյ և մեծարոյ առն, յոյժ առաւել է քան զբանս բազումս և երկայնս:

Բայց Դեմոսթենէս 'ի դարման խակութեանց մարմնոյն (ըստ որում Դեմետրիոս Փաղերիոս պատմէ լուեալ 'ի նմին իսկ 'ի Դեմոսթենեայ 'ի ծերութեան նորա), կրթէր զանձն օրինակ զայս: Զծանրանալ լեզուին և զթոթովել ուղղեաց և յարդարեաց նա՝ արկեալ 'ի բերան իւր խիճս, և այնպէս վերծանէր նա զքերթածս: Իսկ 'ի բարբառ ձայնին՝ վարժէր նա զանձն խօսելով երկար յընթանալն իւրում և 'ի վազել, և ընդ զառ 'ի վեր յելանել. առ այս՝ և միաշունչ գլուխս ինչ զճառից կարդալով և զոտաղից: Դարձեալ

առ այս՝ էր նորա և 'ի տան հայելի մեծ, և 'ի հանդիպոյ կայեալ վերծանէր զշարագըրծածս իւր: Եւ պատմեն՝ եթէ 'ի գնալ առ նա ուրուք՝ զօրավիգն 'ի նմանէն խնդրել և պատմեալ նմա զհարուածել իւր յընկերէն, ասէր Դեմոսթենէս. "Այլ չէք քո վնասեալ ինչ՝ զոր ասես,,: Իբրև այրն ամբարձ զձայն իւր և սաստիկ գոչմամբ ասէր. "Եւ զիա՞րդ ապա, ո՞վ Դեմոսթենէս, ոչինչ վնասեալ իցէ իմ,,. կրկնեաց յայնժամ Դեմոսթենէս և ասէ: "Օ՛ն և ճ՛ն, ես ձայն լսեմ աւադիկ զհարստահարելոյ առն և զվնասելոյ,,: Ա՛յսպէս ուրեմն համարէր նա՝ եթէ բարբառ ձայնին և ձև մարմնոյն շատ ինչ առ 'ի հաւատ բանիցն օժանդակ իցեն:

Իսկ ծեքմունք նորա 'ի յանդիմանութի իրացն՝ յոյժ զարմանալի էին խուժանին, բայց որոց կիրթք առաւել էին ախորժակք (ըստ որում և Դեմետրեայ Փալերիոսին՝) իբրև անկածս ունէին զծեքել զայն և հետևակս և պչրոտս: Այլ պատմէ մեզ Երմիպպոս, եթէ հարցեալ Եսխինէ յաղագս ծերունեացն հռետորաց և որոց առ իւրովքն ժամանակօք, ետ պատասխանի, որ զնոսա լսէ՝ արդեօք սքանչացի ընդ համեստութիւն և ընդ պերճութիւնն ատենախօսութեան նոցա, իսկ որ զճառսն ընթեռնու զԴեմոսթենեայ, աշխատասիրագոյնս և կորովագոյնս առաւել գտանէ զսոսա:

Սակայն և ո՞ք երբէք տարակուսեսցի,

զի արձանագրեալքն 'ի ձեռաց նորա խլատք իցեն և գաւիթք։ Բայց նա յաւէրն պատասխանին խառնէր և զծաղրածուն։ Քանզի յասել երբեմն Դեմադեայ, ՚՚ Զիս ինքն՝ Դեմոսթենէս . խոզն՝ զԱթենաս ՚՚. պատասխանի առնէր . ՚՚ Բայց Աթենադայդ՝ չէն շատ ժամանակք՝ զի 'ի շնութեան ըմբռնեցաւ 'ի Կողիւտոն „։ Սոյնպէս և գողոյ ումեմն՝ մականուն Քալկոս այն է՝ Պղինձ, որ հեգնէր զԴեմոսթենեայ զտքնութիւնն և զպայդագրութիւնն, պատասխանի առէր այսպէս . ՚՚ Գիտեմ, իսկ զի ցաւեցուցանեմ զքեզ՝ վառ զճրագս ունելով։ Այլ դուք ո՛վ արք Աթենացիք զարմանայք մի զի յաձախեն գողութիւն . քանզի մեր պղնձի՝ են գողք, և կաւեղէն՝ որմունք „։ Բայց յաղագս այսոցիկ՝ թէպէտ և շատ ևս այլ իցէ մեզ պատմել, հերիքասցի արդեօք, և ժամ իցէ աւագիկ 'ի վերայ կալ բուսոյ բարուց և վարուց առնն յարգեանց անտի նորա և 'ի քաղաքականութենէն նորա։

Արդ միջամուխ Դեմոսթենէս յիրս լինէր քաղաքին առ ժամանակօք Փոկեան պատերազմին, ըստ որում ասէ իսկ ինքն, և ժողովեալք մեք 'ի Փիլիպպեանցն նորա . յորոց զկէսս 'ի ձեռաց անտի գրեաց նա 'ի վախճանել գործոցն այնոցիկ . իսկ առաջինքն յիշատակեն զնոյն գործս 'ի պատահել նոցա։ Իսկ յայտնի՝ ձեռնամուխ եղև նա ամաց երեսուն և երկուց դատախազել զՄիդիոս յատենի, յորժամ չև էր ինքն

բարդաւաճեալ և զհամբաւ հարեալ 'ի քաղաքին, ուր աղդքաւ և առաւել` թուի ինձ` զահի հարեալ նորա և առեալ արծաթ յեւս կալ 'ի թշնամութենէն Միդիայ, զի այր ոչինչ բարեհամբոյր էր նա և աղու, այլ անամոք և բուռն 'ի վրէժխնդրութիւն: Բայց տեսեալ յայնժամ ոչինչ դուզնաքեայ իր` վանել ինքնին զՄիդիաս` զայր հաստահարուստ յինչս և 'ի բարեկամս և 'ի ճարտարաբանութեան, լաւ համարեցաւ նա խոնարհել զիջանել աղաչաւորացն նորա: Այլ թէ ոչ` ինձ թուի` երից հազարաց դրամականացն այնոցիկ որ տուան նմա` անբաւական գոլ 'ի սանձ սրտմտութեանն Դեմոսթենեայ. եթէ էր նորա արդեօք զօրութիւն և ակընկալութե յոյս յաղթահարել զայրն զայն:

Բայց պատճառս գեղեցիկ առեալ Դեմոսթենեայ միջամուխ 'ի քաղաքին լինել, ախոյեան Հելլենացւոցն արձանացաւ ընդդէմ Փիլիպպոսի. և քաջապէս նահատակեալ 'ի պայքարսն յայնոսիկ` արագ զհամբաւ հարկանէր 'ի ճառից անտի իւրոց և 'ի համարձակաձայն բարբառոյն. որպէս զի և սքանչացաւ նա յԵլլադա և շուք 'ի մեծ թագաւորէն առնոյր, և արգոյ ևս յոյժ առաջի Փիլիպպոսի քան զամենայն հռետորս. զի և ոխերիմք նորա ինքնին խոստովան եղեն` եթէ ընդ յոյժ ականաւորի առն 'ի վէճ եկեալ մրցեցան. քանզի և այսպէս իսկ ասէին Էսքինէս և Հիպերիդէս 'ի դատախազել իւրեանց զայրն:

Որ աղագաւ և գիտեմ ոչ. զինչ Թէոպոմպոս՝ անհաստատ 'ի բարս զԴեմոսթենէս ասէ և անկայուն 'ի նոյն և 'ի մի գործ և ընդ նոյն և ընդ մի մարդկան: Քանզի և յայտնի՝ 'ի կողմն 'ի նոյն և 'ի կարծիս 'ի նոյն անդստին 'ի սկզբանէ յիւրում քաղաքականութեանն յաւերժացաւ Դեմոսթենէս, անյեղլի՝ ոչ միայն զամենայն աւուրս կենացն, այլ և յարևէն հատանէր՝ զի անյեղլի կացցէ: Եւ երբէք նա չասաց իբրու զԴեմադէսն 'ի չքմեղս անձինն վասն փոփոխելոյն 'ի քաղաքականութեանն, եթէ՝ շատ ինչ ներհակակիրս անձին խօսեցայ բազում անգամ, այլ երբէք ոչ և քաղաքին իմոյ: Զասաց և իբրու զՄելանոպոսն՝ այն որ 'ի քաղաքականութեանն ընդդիմամարտ գտեալ Կալլիստրատեայ և բազում անգամ արծաթով 'ի նա յանկուցեալ, ստորեցաւ ասել առ ժողովուրդն, "Անշուշտ այրդ այդ թշնամի իմ է, սակայն և յաղթեսցէ միշտ շահ օգտի քաղաքին": Որպէս և Նիկոդիմոս Մեսսենացի՝ յառաջն 'ի կողմն Կասանդրեայ և ապա Թիկնածու Դեմետրեայ, ասէր՝ Զոգորեմ ընդ անձին, քանզի միշտ օգուտ է յանկչիլ 'ի հզօրագոյնսն:

Բայց ոչ և վասն Դեմոսթենեայ զնոյն ասել է, եթէ փոխեցաւ շրջեցաւ 'ի բանից իւրոց և 'ի գործոց իւրոց. քանզի և անյեղլի 'ի նոյն կարգ քաղաքականութեան՝ եկաց մնաց 'ի գործան զնոյն պահել բարբառ: Իսկ և Պանետիոս իմաստասէր ասէ,

եթէ բազում 'ի Ճառից անտի արձանագրեաց նա՝ սկիզըն զայն ունելով անդրժելի, եթէ պարտ է զգեղեցիկն ընտրել ունել վասն անձին. ըստ որում Ճառն յաղագս Պսակին, և որ ընդդէմ Արիստոկրատեայ, և որ վասն Ապահարկութեանց, և Փիլիպպեանքն գլխովին, յորս 'ի բոլորեանսն ոչ 'ի հեշտալին՝ և 'ի դիւրինն և 'ի շահաւէտն նկրտի մանաւանդ զքաղաքացիսն ամոքել, քան թէ շատ ուրեք նա խրատ տայ՝ զաներկեանութիւնն և զփրկութիւնն յերկրորդում կարգի դասել քան զգեղեցիկն և զվայելուչն:

Այլ եթէ 'ի պատուասիրութիւն բանիցդ այդոցիկ և յաղնուականութիւն ատենաբանութեանցն՝ էր Դեմոսթենեայ յաւելեալ և զքաջութիւն զինուորականին և անպարտութի յամենայն 'ի գործսն, արդեօք ոչ ընդ հռետորսն միայն էր դասել զնա ընդ Միւրոկղեայ և ընդ Պողիեւքտեայ և ընդ Հիպերիդեայ, այլ և 'ի բարձրագոյնս կարգել զնա 'ի միասին ընդ Կիմոնիւ և ընդ Թուկիդիդեայ և ընդ Պերիկղեայ: Իսկ որք միջամուխ յետ նորա եղեն յիրս քաղաքին, որպէս Կոկիոնն՝ թէպէտ և թիկնածու 'ի քաղաքին ոչինչ գովանի կողմանն և թուէր իմն կուսակից Մակեդոնացւոցն, սակայն և 'ի քաջութենէ անտի իւրմէ և յարդարութենէն երևեցաւ նա այր ոչինչ նուազ քան զԵփիալտէս և քան զԱրիստիդէս և քան զԿիմոնն: Իսկ Դեմոսթենէս ոչինչ նահատակեալ 'ի զէնս,

որպէս Դեմետրիոս ասէ, և ոչ դարձեալ անձնապաշտ ինչ 'ի կաշառակերութենէ եղեալ, թէպէտ և 'ի Փիլիպպոսի արծաթոյն և 'ի Մակեդոնիոյ անընդունելի եկաց, այլ ապա վանեալ և ընկլուզեալ նա յոսկւոյ անտի՝ որ աղբերանայր 'ի նա անդուստ 'ի Շուշայէ և յԵկբատանայ, յոյժ քաջացաւ նա գովել գրուատել զառաքինութիւնս գեղեցիկս զնախնեաց, այլ ոչ և նմանել նոցա: Սակայն և 'ի քաղաքավարութեան կենաց երևելի էր նա քան զընդհանուրս ժամանակին՝ բայց 'ի Փոկիոնէն:

Բայց թուի՝ և համարձակախօս յոյժ լինել Դեմոսթենեայ առ ժողովուրդն, և 'ի դիմի հարկանել ընդձից խուժանին, և կշտամբել եւս զխակութիւնն. ըստ որում է մեզ ժողովել 'ի Ճառից անտի նորա: Նաև Թէոպոմպոս պատմէ՝ եթէ յորժամ թելադիր Դեմոսթենեայ լինէին Աթենացիք դատախազ զմարդոյ կալ յատենի, և նա հրաժարէր, և նոքա խռով հարկանէին, յոտն եկաց յայնժամ Դեմոսթենէս և ասէ. "Դուք ինքնին ով արք Աթենացիք՝ և յոչ կամաց ձերոց կալջիք զիս ցանդ այր խորհրդական. սակայն և չարախօս երբէք ոչ, թէպէտ և կամիցիք,,: Առ այս՝ և նահատակութիւն նորա 'ի քաղաքին վասն Անտիփոնեայ՝ յանդիմանեաց զնա իբրև այր յոյժ կրթեալ յաւազպետութիւն անդր: Քանզի այս Անտիփոնէս իբրև յազատութիւն արձակեցաւ յաշխարհախումբ ատենի խուժանին, կալաւ զնա Դեմոս֊

Թենէս և յառեան ձգեաց խորհրդոյ Արիստագորին. ցասման խուժանին երեսս ինչ չարար, և անդէն զայրն յայտ յանդիմանութեամբ նշաւակէր՝ իբրու խոստումն կալեալ նորա առ Փիլիպպոս հրձիգ 'ի նաւակայս լինել քաղաքին. յոյր սակս և դատակնիք առեալ յառենէ անտի այրն 'ի մահ վարեցաւ: Եկաց նա դատախազ և քրմուհւոյն Թէովրիդեայ վասն բազմապատիկ յանցաւորութեանց նորա, և զի և ծառայիցն ուսուցանէր նա խաբանս. և դատակնքով եռ 'ի մահ վարել և զնա:

Եւ ասեն՝ արձանագրել Դեմոսթենեայ և զԱպողոդորոսի զճառն. յորմէ և ուժեալ Ապողոդորոս, հակառակ զօրավարին Տիմոթեայ՝ նշաւակեաց զնա պարտապան լուր: Գրեաց և զճառսն զՓորմիոնին և զՍտեփանոսի. ոյց աղագաւ և եպերեցաւ նա՝ և յիրաւի. քանզի Փորմիոն դործի անշուշտ 'ի վէգ առնոյր զճառն Դեմոսթենեայ զԱպողոդորոսին: Եւ այնպէս Դեմոսթենէս իբրու 'ի միոյ անտի գործարանէ սուրս կրկին 'ի վաճառ եհան հակառակամարտս՝ կռուել վանել զմիմեանս:

Իսկ յառենախօսութեանց անտի իւրոց՝ ընդդէմ Անդրոտիոնին զճառսն և զՏիմոկրատեայ և զԱրիստոկրատեայ, գրեաց նա վասն այլոց. զի և չև էր նա միջամուխ 'ի քաղաքականութիւնն. քանզի թուի արձանագրել նմա զայնոսիկ՝ ամաց քսան և եօթանց կամ քսան և ութից. սակայն և կարդաց նա ինքնին զճառն՝ որ ընդդէմ

Արիստոգիտոնի և որ յաղագս Ապահարկութեանց, 'ի շնորհս Կտեսիփոնի որդւոյն Քաբրիասայ՝ ըստ որում ասէ իսկ ինքն. և ըստ որում այլք ասեն՝ զի զհետ էր նա խօսել զմայր պատանեկին այնորիկ. բայց անգործ մնացեալ հարսանեացն այնորիկ՝ ածէր նա իւր կին զՍամիա զոմն, ըստ որում պատմէ Դեմետրիոս Մագնէս 'ի բանսն յաղագս Համանունաց:

Իսկ յաղագս Ճառին՝ ընդդէմ Եսքինեայ ձախողակի դեսպանութեանն, չէ ինչ յայտ՝ եթէ վերծանեալ իցէ: Թէպէտ և Իդոմենեւս ասէ արձակեալ զԵսքինէս յաղթութի երեսուն ևեթ քուէիւք: Բայց թուի ոչ գոլ ճշմարիտ, եթէ գուշակել ինչ պարտ իցէ 'ի ճառից անտի Պսակին՝ զոր արձանագրեցին երկոքին նոքա միանգամայն. քանզի և ոչ մին 'ի նոցանէ յիշատակ չառնէ յայտնի և ճշգրտիւ վասն սահմանելոյ հակառակութեանն այնորիկ 'ի դատաստանի: Այլ յաղագս այսորիկ թող դատեսցեն այլք:

Իսկ օրինակ քաղաքականութեանն Դեմոսթենեայ՝ քաջայայտ իսկ և յանդորրութեան անդ քաղաքին՝ էր կշտամբել յանդիմանել զընա իսկ զգործսն զՄակեդոնացւոյն. և յուզէր գրգէր նա զԱթենացիս յամենայն իսկ արարս նորա և վառէր բորբոքէր ընդդէմ նորա: Այր աղագաւ և առ Փիլիպպոսի անգամ մեծապէս արգոյ էր Դեմոսթենէս. և յորժամ Դեմոսթենէս չոքաւ 'ի Մակեդոնիա հանդերձ դես-

պանօք և ինքն էր տասներորդ, յայնժամ Փիլիպպոս թէպէտ և լուաւ ամենեցուն նոցա, Դեմոսթենեայ բանիցն ժրագոյն ևս առնէր պատասխանի. սակայն և շուք զնոյն և զմարդասիրութիւն չեցոյց նմա որքայն իբրու այլոյն. քանզի յարեցաւ նա առաւել յԵսքինէս և 'ի Փիլոկրատէս: Վասն որոյ և ապա 'ի դրուատել երկոցուն նոցա զՓիլիպպոս իբրև այր կորովաբան՝ և գինօք գեղանի՝ և այր շատըմպու, յայնժամ Դեմոսթենէս խեթացեալ ոչ ժուժեաց հեգնել զբանսն և ասէր. Առաջին դրուագ՝ իմաստակի առն 'ի ճահ գայ, երկրորդ՝ կնոջ մարդոյ, իսկ վերջինդ՝ սպնգոյ, ուստի և ոչ մին 'ի դոցանէ դրրուատ արքենի ոչ է:

Բայց յետ այնորիկ 'ի գրգռել մարտին, զի և ոչ իսկ հանդարտէր Փիլիպպոս, գրգեցան Աթենացիք 'ի Դեմոսթենեայ՝ յարձակել առաջին յԵւբիա՝ զոր բռնաւորք ընդ ձեռամբ նուաճեալ էին Փիլիպպոսի: Խաղացին հանին վարեցին անտի զՄակեդոնացիս. և զսահման իրացն ինքնին Դեմոսթենէս 'ի ներքս մատուցանէր: Ապա առեալ արձակէր թիկունս և առ Բիւզանդացիս և առ Պերինթիացիս՝ ընդ որս մարտեդեալ կռուէր Մակեդոնացին. քանզի ամոքեաց հաւանեցոյց զժողովուրդն թողուլ զառ նոսա զթշնամութիւնն և մոռանալ զխակութիւնն 'ի նիզակակցութեանն, և առաքել զօր 'ի թիկունս նոցա՝ որով և փրկեցան նոքա: Ապա և հրեշտա-

կուլթեամբ գնացեալ առ այլս 'ի Հելլենացւոց և խօսեալ ընդ նոսա և գրգռեալ առհասարակ յամին կացուցանէր ընդդէմ Փիլիպպոսի՝ բայց 'ի սակաւուց . որպէս զի և կազմեցան հանդերձեցան յայնժամ բիւր և հինգ հազար հետևակաց և երկու հազար այրուձիոյ՝ բաց 'ի քաղաքացի զօրականէն. և մտադիւրագոյնս ևս պատրաստեցան դրամք և թոշակք 'ի պարէնս եկաց և օտարաց: Եւ յայնժամ ապա՝ ըստ Թէոփրաստեայ բանին՝ 'ի խնդրել նիզակակցացն չափ և սահման կարգել ռոճկաց նոցա, ասէր Կրովբիւղոս ատենախօս այսպէս . Պատերազմի՝ չափ և կշիռ չիք կերակրոյն:

Արդ յայնժամ Ելլադա յակձիռս կացեալ վասն որ յառաջոյ իրացն, և միամնեալք նիզակակիցք ժողովուրդք ազգաց ազգաց, և քաղաքաց քաղաքաց, Եւբիացւոց և Աքայեցւոց և Կորնթացւոց և Մեգարացւոց և Լեւկատացւոց և Կորկիւրացւոց, գործ դժուարին մնայր նահատակել Դեմոսթենեայ՝ առնուլ ձգել 'ի նիզակակցութիւն անդր և զԹեբայեցիս սահմանակիցս Ատտիկոյ, ժողովուրդ հզօր ախոյեան և 'ի ժամանակին քաջամարտիկ առաւել քան զայլս 'ի Հելլենացւոց: Սակայն և ոչ հեշտին ինչ էր շրջել զԹեբայեցիս, զի զնոսա Փիլիպպոսի յանկուցեալ իսկ էր այն ինչ նոցա շնորհս 'ի ներքս բերելով 'ի Փոկեան մարտին, նա զի և մեկնակազէնք Աթենայ և Թեբայ 'ի վէգ եկեալք 'ի պատճառս սահմանակցութեն,

հակառակութիւնք յուղէին մարտի ընդ երկոսս քաղաքս ։

Այլ իբրև Փիլիպպոս 'ի վեր վաղեալ'ի խորհուրդս իւր՝ 'ի գեղեցիկ ելից անուն իւրոց որ յԱմփիսսա, յանկարծակի յեղակարծումն 'ի վերայ անկաւ Եղատեայ և հասեալ կալաւ զՓոկկիդէ, յայնժամ պակուցեալ Աթենացւոցն և ոչ մի ոք 'ի նոցանէն ոչ ժտեցաւ այնուհետև 'ի բեմ ելանել, քանզի տագնապեցան 'ի բանս և լռիկ մնջիկ 'ի վարանս կացին առհասարակ. յայնժամ Դեմոսթենէս միայնակ յառաջ մատուցեալ՝ խորհուրդ 'ի նէրքս տայր իւրոց Աթենացւոցն դաշնաւոր ընդ Թեբայեցիսն լինել. և քաջալեր խուժանին կարգացեալ և առեալ խրախուսեալ (որպէս և ընաւորեցաւն) 'ի յոյս գեղեցիկ ակնկալութեան, ինքնին հրեշտակ արձակեցաւ 'ի Թեբէ համդերձ այլովք ոմամբք։ Անդրուստ և Փիլիպպոս՝ որպէս Մարսիւաս առէ՝ արձակեաց և ինքն անդր զԱմիւնտաս և զԿղէանքոս զՄակեդոնացիս, ընդ նոսա և զԴաոքոս և զԹեսաղոս և զԹրասիւդէոս 'ի պայքար ընդդէմ Աթենայւոց ։ Յայնժամ ապա Թեբայեցիք քաջ իսկ խելամուտ էին չահի օգտին իւրեանց, և այր այր 'ի նոցանէն յաչս նկարէր տակաւին զկիրս աղէտից մարտին. զի և չև էին ողջացեալ վէրք այն ինչ առեալք 'ի Փոկիդէ ։ Համայն և այնպէս քաջութիւն Ճարտասանին՝ որպէս Թէոպոմպոս պատմէ՝ գրգեաց գրգռեաց զոգիս նոցա, և վառեալ բոր֊

բոբեաց զպատուասիրութիւննոցա. որպէս զի և զամենայն միանգամայն անհետացոյց առաջի նոցա. և նոքա զահ երկիւղին փարատեալք յանձանց՝ միանգամայն և զողջախոհ մտածութիւնն և զշնորհակալու զմիտսն, գեղեցիկ մոլեցան մոլութիւն 'ի բանից անտի նորա՝ նահատակել 'ի գեղեցիկն:

Յայսմանէ առա այնչափ մեծապէս ըղհամբաւի հարաւ այս մրցանք Դեմոսթենեայ, զի և անդէն Փիլիպպոս առեալ դեսպանս արձակէր խնդրել զհաշտութի. և Եղլադա մախումբ յոտին կացեալ՝ 'ի դիմի հարկանէր մօտալուտ վտանգին. և Դեմոսթենեայ յայնժամ հրամանակատարք՝ անսայլին ոչ զօրավարք միայն Աթենացւոց, այլ և Բիովտացւոցք ինքնին դըլխովին, և ինքն Դեմոսթենէս ըստ իւրն կամի վարեալ զատեանս ողջոյն առ Թեբայեցիս և առ Աթենացիս, և էր իսկ սիրեցեալ նա յերկոցունց նոցա, տուեալ նմա 'ի ձեռս իշխանութիւն մեծ և առագութիւն ոչինչ արդեօք յանիրաւի՝ որպէս Թէոպոմպոս ասէ՝ նաև յոյժ 'ի դէպ:

Այլ սակայն և ձախողակ բախտ՝ որպէս Թուին՝ յաղմեալ իրացն՝ ածեալ 'ի գլուխ յայնժամ զազատութիւն Եղլադայ, ընդդէմ դարձաւ ջանիցն Դեմոսթենեայ: Առ այս՝ և շատ ևս նշանս վասն հանդերձելոցն իրաց 'ի ներքս բերէր, նաև անդուստ Պիւթիա ահագինս յառաջ բերէր գուշակութիւնս. և զվաղնջուց ևս զայն

պատգամ առ 'ի Սիբիւլեայց երգէին՝ օրինակ զայս.

Ո՜չ թէ ինձ կալ էր 'ի բացեայ
Թերմոդոնտեան 'ի մարտի,
Եւ սաւառնեալ՝ յամպոց յօդոց
Կալ 'ի զընին վերթ Արծուի:
Բարէ յաղթեալն անդ յարտասուս
Գերաշխարան հատանի
Բայց և ըզգոռն ըզյաղթականն
Ճանկք մալեն օրհասի:

Եւ ասեն՝ եթէ Թերմիդոնտէս գետակ փոքր է առ մեզ 'ի Քերոնէիա՝ որ թափի 'ի Կեփիսոս. բայց մեք զարդիս յայն անուն չգիտեմք վտակ անդանօր. այլ արդեօք որ այժմդ Եմոն կոչի՝ յայնժամ Թերմոդոնտէ անուն կարդային, և հոսէ առ երի մեհենին Հերակլեայ, ուր բանակ հարին Հելլենացիք. և է մեզ գուշակել՝ եթէ 'ի մարտի անդ լցեալ զեղեալ գետոյն յապականոյժ արեանց և 'ի դիականց՝ զանունն փոխեալ իցէ 4: Բայց Դուրիս պատմէ, եթէ ոչ գետ ինչ է Թերմոդոնտէ, այլ թէ յորժամ արք ոմանք խորան հարեալք և շուրջ պեղէին զնովաւ, գտանեն փոքրիկ անդրի 'ի քարէ՝ հանդերձ դրոշելովք տառիւք՝ եթէ՝ Այս է Թերմոդոնտէս, տարեալ 'ի գիրկս յԱմազոնաց զոմն վիրաւոր: Առ այս՝ և այլոյ իմիք նուագել պատգամի՝ այսպէս.

Մարտին մըհամ թերմոդոնտեան
Դու ով թռչուն սեպըղերայ
Զի գէշ բաղում քեզ անդանօր
Մարդկան անկցին դիականց

Սակայն և վասն իրացդ այդոցիկ դժնդակ իցէ արդեօք սահմանել ինչ մի ։
Բայց տեսն՝ Դեմոսթենէս յայնժամ վստահ 'ի Հելլենացւոց զէնսն եղեալ, և մեծապէս խրախուսեալ 'ի զօրութենէ և 'ի գեղեցիկ նահատակութենէ այնչափ զօրականին զինուորաւ 'ի թշնամիսն լինել, թոյլ չետ ոչ պատգամաց երեսս առնել, և ոչ գուշակութեանց ունկն մատուցանել, և կեղակարծելի խմն ևս եդ նա յայնժամ զՊիւթիա՝ իբրև փիլիպպոսացեալ զոմն. և յուշ ևս առնէր թեբայեցւոց զէպամինոնդաս, և Աթենացւոց՝ զՊերիկղէս, զխորդ երկոքին նոքա իբրև վատասրտութեան պատրուակ համարեալք զկրան, առաքինացան 'ի խորհուրդս իւրեանց ։
Արդ մինչև ցայս վայր արութեամբ նահատակեցաւ Դեմոսթենէս. այլ ապա 'ի կռիւ մարտին ոչինչ գեղեցիկ առաքինացաւ 'ի գործն՝ որպէս 'ի բազմադէմ 'ի բանսն, թողոյր 'ի գուին լքանէր զկարգն, և 'ի փախուստ անարգաբար դարձաւ. զէնընկէց լինէր, և ոչ ամաչէր՝ որպէս Պիւթէաս ասաց՝ ընդ վերտառութիւն ասպարին իւրոյ, յորում ոսկի տառիւք դրոշմեալ կայր, Գէշէօրէկ Բահայէ ։ Ոստի և

Փիլիպպոս յանձն իւր զուարճացեալ ընդ յաղթութիւնն. և առ խնդին ստահակեալ ևս և ոտնհար 'ի գինեհարութեան իւրում եղեալ զխականցն անկելոց, առեալ նըւագէր զսկիզբն հրովարտակին Դեմոսթենեայ, առեալ 'ի չափս ոտից և 'ի հնչիւն նուագի. " Դեմոսթենէս Դեմոսթենեայ Պէանիացի, զայսոսիկ ասաց ,, ։ Բայց իբրև զգինին թափեաց Փիլիպպոս, և յուշ անձին առնէր զմեծութիւն վտանգին, յապուշ հարկանէր՝ զմտաւ ածեալ զքաջութիւն և զուշիմութիւն զճարտասանին զայնորիկ, որ զնա այնպէս 'ի սակաւ ժամս աւուրն 'ի նեղ հասոյց զխմագրաւ վտանգել միանգամայն և զտէրութիւնն և զանձն զլխովին ։

Այլ Դեմոսթենեայ փառք գնացեալ հասին և մինչև 'ի թագաւոր անդր Պարսից. որ և նամականի տայր առ իւր նախարարսն, պատուիրէր արծաթ 'ի ներքս մատուցանել Դեմոսթենեայ և նմա առաւել քան զամենայն այր Հելլենացի պատկառել, իբրու որ բաւական էր յաղմուկս Ելլադայ առնուլ պատապաչեցուցանել զՄակեդոնացին ։ Եւ զայս բան յետ ժամանակաց 'ի վեր եհան ինքնին Աղեքսանդրոս, քանզի եգիտ նա նամականի զԴեմոսթենեայ 'ի Սարդի, և գիրս ևս զզօրավարաց արքային, յորում նշանակէին զմթերս արծաթոյն՝ զոր ետուն Դեմոսթենեայ ։

Բայց յորժամ հարուած զայս առեալ Հելլենացւոց, և հռետորք հակառակորդք

Դեմոսթենեայ քաղաքաւորութեանն՝ ամբարձան ընդդէմ և պատրաստեցան տալ նմա համարս տալ յատենի զգործոց իւրոց. յայնժամ ժողովուրդք ոչ միայն յամբաստանութեանցն ազատ արձակեցին զայրն, այլ և շուք ևս եդեալ նմա՝ հրաւիրեցին միւսանգամ զնա 'ի սնտեսութիւն իրացն, իբրև զայր բարեզգեաց բարուք, որպէս զի և 'ի բերել 'ի Քերոնիոյ յԱթէնս ոսկերաց անկելոցն 'ի մարտի և 'ի թաղել անդանօր, թոյլ ետ նմա ժողովուրդն կարդալ վերծանել զդամբանական դրուատ զզօրականին, ոչ անարգս ինչ և անփառունակ բերելով զայն կերս աղէտիցն՝ ըստ որում Թէոպոմպոս յորդեալ գրէ, այլ և 'ի մեծարանս և 'ի շուք այնպիսի խորհրդականին՝ յայտնելով թէ չէին ինչ նոքա ստրջացեալք անսալ խորհրդոց նորա: Ապա Դեմոսթենէս վերծանեալ յայնժամ զԴամբանականն դրուատ, սակայն և 'ի հրովարտակսն յետ այնորիկ ոչ ևս արձանագրէր զիւրական անունն. և գրէր փոխանակ այր ըստ առնէ զանուանս զբարեկամացն. քանզի և տաղտկացաւ իսկ այրն ընդ Ոգին և ընդ վատախտար իւր բաղդն: Մինչև ուրեմն անդրէն միւսանգամ ոգի առեալ խրախուսեաց նա ընդ մեռանել Փիլիպպոսի ոչ յետ բազմաց ինչ 'ի յաղթութենէն Քերոնիոյ 5. և թուէր զայն անշուշտ նախաքարոզ լինել պատգամին այնմիկ 'ի տողն 'ի վերջին, եթէ՝

Բամբէ յաղթեալն անդ յարտասուս
Գերաշխարան հատանի․
Բայց և ըզգօն ըզյաղթական
Ժանեք մալեն օրհասի։

Արդ Դեմոսթենէս զանխուլ խրաղգած եղեալ մահուն Փիլիպպոսի, 'ի կանուխ քաջալեր Աթենացւոցն և յաներկեանութեան հանդերձելոցն՝ չոքաւ յատեանն համակ զուարթադէմ, և ասէր՝ երազ տեսեալ նորա մեծաց բարեաց աւետաւոր Աթենացւոց, և ապա յետ սակաւու եկեալ հասանէին հրեշտակք բանբերք մահուն Փիլիպպեայ։ Յայնժամ արագ արագ դարձան նոքա 'ի զոհս 'ի լուր աւետեացն. և վճիռ ետուն պսակել զՊաւսանիաս՝ և Դեմոսթենէս ինքնին եւ արտաքս պսակ 'ի գլուխ և պատմուճան արկեալ պայծառ, թէպէտ և օր եօթներորդ էր մահու դըստերն իւրոյ, որպէս Եսքինէս ասէ, և եպերէ ևս զնա և յերես ևս հարկանէ նորա զխամութիւն որդեսիրութեան նորա։ Սակայն և անազատական արդեօք իցէ ոգին Եսքինեայ և մեղկագոյնս, եթէ արդարև նշան գթոյ և խանդաղատանաց ոգւոյն համարեսցի դա զկոծ և զաշխարանս և զարտասուս. և զանտրտում և զհեզաբար ըզհամբերութիւնն եպերեսցէ դա 'ի կիրսդ յայդոսիկ։

Արդ ես գեղեցիկ չասեմ վասն Աթենացւոցդ, զի բոլորեւք պսակեցան և զոհ

զոհեցին ընդ մահ ազգային. այն՝ որ յիւրում յաջողութեանն և 'ի նոցա աղէտն այնչափ քաղցրութեամբ և մարդասիրութեամբ գնայց ընդ նոսա. քանզի թող զդժպատեհութիւնդ, անփառունակ կեանք իցեն արդեօք՝ պատուել և քաղաքացի ես դրել զայր 'ի կենդանութեան նորա. և ապա 'ի մեռանելն յայլոց ձեռաց, ոչ կալ 'ի շափուն առ խնդրին, այլ ոտնհար դիականն լինել և նուազս առնուլ յաղթութեան, կբրու որ ինքեանք իսկ քաջութեամբ 'ի նոյն նահատակեալ իցեն: Սակայն և քաջ գովեմ ես զԴեմոսթենէս, զի առ ոտն զառանին հարեալ զկիրս ցաւոցն, և զարտասուս և զողըն թողեալ կանանւոյն, ինքն 'ի շահ օգտին կրթէր քաղաքին, վասն որոյ և ՚առ այր ունիմ ես զնա արդարև քաղաքական և արիական՝ որ ցանդ 'ի խնդիր հասարակաց բարւոյն եղեալ իցէ, և քան զիւր աղէտն և զկիրսն նախապատիւ զհասարակացն արարեալ իցէ, և անդրժելի զիւր շուքն պահեսցէ՝ լաւագոյն յոյժ քան զդերասանսն զայն ըղկերպարանաւոր ազգայից և զըռնաւորաց, զոր մեք 'ի զնին կացեալ տեսանեմք 'ի թատրս տեսարանաց, զի լան նոքա և ծիծաղին, ոչ 'ի կամաց ինչ իւրեանց, այլ յորժամ դէպք խաղուն և անձինն պահանջեսցեն 'ի նոցանէ:

Հանդերձ այսու՝ եթէ արդարև պարտ իցէ և ոչ ամայի լքանել զայր վշտատես և անբաժ 'ի մխիթարութենէ յաղէտս նորա.

այլ քաջալէր բանս 'ի ներքս մատուցանել և զմիտս նորա առնուլ ամբառնալ 'ի բերկրականս. զոր օրինակ և աչացաւացն խրատ տամք 'ի բաց զհայեցուածս դարձուցանել 'ի ճաճանչէղ և յականախտիղ գունոց, և շրջել հայել յերփն դալարեաց և յականապարարսն, ո՛ւստ ուստէք երբէք գեղեցիկ եւ սփոփանս կալցէ դք, քան թէ 'ի բարեբաստել հայրենեացն, բարեխառնելով ընդ առանձինն զհասարակաց զդէպսն, և 'ի բաց զյոռին փարատելով հեշտականօքն: Եւ ածաք մեք տալ յայսպիսեաց աստի. քանզի Եսքինէսդ այդ ճառիւդ այդուիկ զբաղումս 'ի մարդկանէ մեղկեալ իգացուցանէ 'ի կոծ և յաշխար:

Բայց յայնժամ անդրէն միւսանգամ յուզեալ քաղաքաց 'ի Դեմոսթենեայ, դաշնաւորեցան ընդ միմեանս. և յայնժամ Թեբայեցիք դիմեալք 'ի վերայ գնդին Մակեդոնացւոց՝ հարին զբաղումս 'ի նոցանէ. և ինքնին Դեմոսթենէս զէն պատրաստէր նոցա: Նաև Աթենացիք կազմեցան պատրաստեան ընդ Թեբայեցւոց 'ի գործ պատերազմի. և Դեմոսթենէս ելեալ ցանդ խօսէր 'ի բեմին, և նամականի եւ տայր յԱսիա առ զօրավարս արքային, դրդէր և անդանօր մարտ պատերազմի ընդդէմ Աղեքսանդրի. որում և անուն կարդայր նա՝ Մանուկ և Մարգիտէս 6:

Բայց իբրև Աղեքսանդրոս գեղեցիկ զերան կարգեալ զիւրոյ աշխարհին, ինքնին զօրու ծանու եկեալ երևեցաւ 'ի Բիովտիա, որը.

տարեկ միջարեկ լինելին Աթենացիք, և անկաւ թօշնեցաւ Դեմոսթենէս. ուստի և թեբայեցիք ամայի լքեալք առ 'ի նոցանէ և միայնակ 'ի վէգ եկեալք՝ 'ի ձեռաց զքաղաքն իւրեանց հանէին: Այս խռով մեծապէս և այլմուկ հարեալ յԱթենացիս, հաստատեցին նոքա առնուլ արձակել զԴեմոսթենէս առ Աղեքսանդրոս. իբրև ընտրեցաւ նա 'ի հրեշտակութիւն հանդերձ այլովք ոմամբք, և յուղի անկեալ եհաս մինչև 'ի Կիթերոն, դարձաւ յետս զանգիտեալ 'ի ցասմանէ արքային և թողոյր 'ի բաց զհրեշտակութիւնն: Յայնժամ փութապէս Աղեքսանդրոս առաքէր խնդրէր յԱթենացւոց հռետորս տասն թուով, որպէս պատմէ Իդոմենևս և Դուրիս, այլ որպէս ասեն բազմագոյնք 'ի մատենագրաց և արժանահաւատք ևս ութ միայն, որ են այսոքիկ. Դեմոսթենէս և Պոլիևեւքտոս. և Եփիալտէս և Լիկուրգոս և Միւրոկղէս և Դամոն և Կալլիսթենէս և Քարիդիմոս: Յայնժամ Դեմոսթենէս պատմեալ նոցա զառասպելն բան վասն խաշինն, եթէ զիարդ խաշնն առեալ տայր զգամփռս 'ի ձեռս գայլոց, զանձինս և զայլս ևս 'ի հռետորաց ընկերացն օրինակեաց շանց որ մարտ եդեալ կռուէին 'ի վերայ ժողովրդեանն. իսկ զԱղեքսանդր Մակեդոնացի կոչեաց՝ Գայլ մենակեայ: Առ այս դարձեալ ասէր նոցա Դեմոսթենէս և զայս ինչ: "Զո՞ր օրինակ ասէ տեսանեմք զվաճառականս, զի շուրջ յածեալ

տանին 'ի պնակի զփորձ վաճառուն․ և սակաւ ցորենոյն բաղում ինչ ապա 'ի վաճառ հանեն նոքա․ ըստ նմին օրինակի և դուք գլխովին առանց զգալոյ՝ ընդ մեզ առհասարակ և զձեզ թշնամւոյն 'ի ձեռս տայք „ ։ Եւ զայսոսիկ գրեաց մեզ Արիստոբուղոս Կասանդրացի։

Ապա իբրև 'ի խորհուրդ մտեալ Աթենացւոցն վասն բանին այնորիկ և վարանեցան, յայնժամ Դեմադէս առեալ տաղանդս հինգ յութից անտի արանցն կամ թէ 'ի տասանց, յանձն առնոյր երթալ ինքնին հրեշտակութեամբ առ արքայն աղաչաւոր վասն նոցա․ կամ զի 'ի բարեկամութիւն իւր ընդ նմա վստահացեալ էր այրն ։ կամ զի ակն ունէր գտանել զնա յղփացեալ առ 'ի մարտէն, իբրև զառիւծ որ յարիւն և յապականոյժ յագուրդ առեալ իցէ ։ Ապա գնացեալ Դեմադէս ամոքէր զԱղեքսանդրոս, և շնորհս եւս գտանէր 'ի նմանէ վասն հռետորացն, և զքաղաքն առեալ 'ի հաշտ ածէր ընդ նմա ։ Իբրև Աղեքսանդրոս չու արար մեկնեցաւ, և այլք 'ի հռետորաց մեծապէս զհամբաւի հարան, անդ անկաւ բեկաւ չուառացաւ Դեմոսթենէս։ Այլ ապա 'ի խաղալ Ագիսայ Սպարտացւոյ՝ միաբանգամ նա վայր մի յուռին կանգնեցաւ․ բայց և անդէն սրտաբեկ միջաբեկ լինէր․ քանզի չկամեցան Աթենացիք յառնել և նիզակակից մարտին լինել․ և զի և Ագիս անկեալ մեռաւ և Լակեդեմոնացիք վանեցան ։

Զայնու ժամանակաւ 'ի մէջ մատուցաւ և ամբաստանութիւնն ընդդէմ Կտեսիփոնեայ յաղագս Պսակին։ Սկիզբն եղև պայքարին առ իշխանապետութեամբն Քերոնդեայ, սակաւ մի յառաջ քան ըղհարուածն Քերոնէնիոյ. և ապա 'ի դատ վարեցաւ յետ ամաց տասնից առ Արիստոփոնդեաւ։ Եւ էր հռչակաւոր պայքարն՝ քան զամենայն որ միանգամ հրապարակեցան երբէք պայքարք, ո՛չ 'ի համբաւոյ անուն միայն ատենախօսիցն, այլ և յարդարակորովութենէն դատաւորացն, որք Թէպէտ և Դեմոսթենեայ հակառակորդք՝ հաստահարուստք ոմանք էին և Թիկնածուք Մակեդոնացւոցն, համայն և այնպէս ո՛չ դատապարտեցին ինչ զնա. այլ և մեծապէս յաղթութիւն արձակեցին զնա. զի և ո՛չ 'ի հինգերորդն քուէայց յաղթեաց Եսքինէս։ Ուր աղագաւ և ելեալ մեկնեցաւ նա վաղվաղակի 'ի քաղաքէն, և անդ 'ի Հռոդոս 'ի Յոնիխա դաս առեր, և անդանօր վախճանեաց զնշխարեալ աւուրս կենաց իւրոյ։

Իսկ յետ ո՛չ բազում ժամանակաց յԱսիոյ եկեալ հասանէր Արպաղոս յԱԹէնս՝ փախուցեալ յերեսաց Աղեքսանդրի. քանզի և էր իսկ նորա բազումս աղուացեալ յանժուժկալութեան իւրում, և երկուցեալ զանգիտէր յարքայէն, քանզի և բարեկամացն անդամ նա ահագին էր։ Արդ եկեալ ապաւինեալ Արպաղոս առ ԱԹենացիսն և անձնատուր եղեալ հանդերձ

գանձուքն և նաւուքն, յայնժամ այլք 'ի հռետորացն ակնկառոյցք 'ի գանձս առնն, Թիկնածուք Թևակոխեցին ամբել զԱԹենացին ժողովել ապրեցուցանել զաղաչաւորն: Բայց Դեմոսթենէս զառաջինն խորհուրդ տայր նոցա 'ի բաց վարել զԱրպաղոս, և անձնապահ 'ի կռուոյ լինել քաղաքին վասն անկարևոր և անիրաւ պատճառին: Այլ ապա յետ սակաւ աւուրց 'ի քննին առեալ գանձուն Արպաղեայ, և ինքնին Արպաղոս իրազեկ եղեալ՝ զի Դեմոսթենէս սիրեաց զբաժակ իւր զարքունի, և խնդրէ զքանդակն տեսանել զնել զբաժակին և զյօրինուածն, ասաց նմա Արպաղոս առնուլ ունել 'ի ձեռին զբաժակն և ինքնին խմանալ զկշիռ զոսկւոյն: Զարմացեալ Դեմոսթենեայ զի յոյժ ծանրեաց բաժակն, և զկշիռն հարցեալ, ասէ ժպտելով Արպաղոս. "Քեզ ինքնին կշռեսցէ քան տաղանդաց„. Եւ ապա 'ի գալ գիշերոյն, առեալ առաքէր առ նա զբաժակն հանդերձ քսան տաղանդօք: Եւ այնպէս ուշիմագոյնս Արպաղոս յայնժամ 'ի կերպարանէն Դեմոսթենեայ իմացաւ զոսկեսիրութիւն զառնն, և 'ի զուարթանալոյն նորա և յակնկառոյց լինելոյն յոսկի անդր՝ խելամուտ եղև բուսոյ բարուց նորա:

Եւ արդեօք ոչինչ ժուժկալեաց Դեմոսթենէս, այլ նկուն եղեալ վանեցաւ 'ի կաշառոյն, իբրու որ գունդ պահապան 'ի ներքս իւր առեալ իցէ, այնպէս ողջոյն անձնատուր եղև նմա: Ուստի և յաւուրն

երկրորդի իբրև եղեալ գնայր յԵկեղեցի անդր, առեալ քա՛ջ պատրաստեաց պարուրեաց զպարանոց իւր երիզաւլինդ ասուեօք. իբրև հրամայեցին նմա 'ի ժամուն առեննախօսել ինչ, նա ակնարկէր, կեղծաւորեցաւ զձայնահեղձ կերկերել կոկորդոյն: Իսկ յայնժամ զնա զուարթաբանք ոմանք հեգնեալ ասէին: Ո՛չ եթէ ախտ ձայնահեղձ, այլ արծաթահեղձս ինչ ախտացաւ 'ի գիշերի առեննախօսդ այդ:

Ապա իրազեկ առհասարակ եղեալ ժողովրդեան, եթէ կաշառաբեկ եղև Դեմոսթենէս, իբրև նա 'ի չքմեղս լինէր և ամոքել զխուժանն կամէր, զլացան զունկնդրութիւնն, և 'ի սրտմտութիւն եւս բըրդեալք՝ խռովլ հարկանէին, մինչև յարուցեալ անդ ոմն ասէր ընդ խաղ. "Եւ ո՞չ ունկն մատուսջիք դուք դմա՝ ո՞վ արք Աթենացիք՝ որ 'ի ձեռին զբաժակն ունիցի"[7]: Եւ յետ այնորիկ ապա առեալ 'ի բաց արձակեցին զԱրպաղոս 'ի քաղաքէն: Եւ խնթացեալ Աթենայւոց՝ թէ համար զիրացն՝ զոր առին՝ չտացեն հռետորք, քննութիւն ճշգրիտ 'ի ներքս ածեալ առաքէին արս խիղ արկանել յուզել 'ի տունս նոցա. բայց 'ի տանէն Կալլիկղեայ որդւոյն Արրենիդեայ. քանզի նո՛ր ինչ կին ածեալ սորա՝ թոյլ ոչ ետուն հետազօտութեանն անդանօր՝ զի 'ի ներքս անդ կայր հարսն՝ որպէս Թէոփոմպոս պատմէ:

Արդ յայնժամ Դեմոսթենէս տեղի տուեալ իրացն, վճիռ մի 'ի ներքս բերէր՝

քննութիւն լինել բանին յատենի Արիս_
պագին. և անդանօր վնասակար դատեալքն՝
լուծցեն պատուհաս: Իբրև յատենէ ան_
տի ինքն առաջին դատապարտեցաւ, յան_
դիման լինէր ատենին. այլ պատուհաս
տուգանաց 'ի վերայ ածեալ նորա յիսուն
տաղանդաց և առ ժամն բանտարգել ե_
ղեալ, ատեն՝ առ ամօթոյ վնասուն միան_
գամայն և առ վատութեան մարմնոյն 'ի
բերել զկիրս բանտին, փախչել նմա յար_
գելուէն. կէս մի զանխուլ, և կէս մի դար_
ձեալ զի թոյլ ետուն փախստեանն: Եւ
պատմեն՝ 'ի փախչել անդ նորա՝ չև կարի
հեռացեալ 'ի քաղաքէն, լսել ոտնաձայն
զթշնամեաց հետամուտ, և զօղել թաքչել
նմա զառաջինն. իբրև նոքա յանուանէ
զհետ կարդային զնա, և մօտ առ նա
հասեալք. աղաչէին առնուլ 'ի նոցանէ
պաշար զճանապարհին, զի և 'ի տանց իւ_
րեանց նոքա նմա արծաթ բերեալ՝ զհետ
մտին տալ նմա. միանգամայն և քաջալեր
խրախոյս կարդային նմա մի ինչ սրտառուչ
տանել վշտին: Յայնժամ Դեմոսթենէս
սաստիկ յարտասուս ցնդեալ ասէր. " Եւ
զիա՞րդ ոչ սրտառուչ բերեմ ես զկիրսդ 'ի
թողուլ ինձ զքաղաք զայդ, յորում այն_
պիսիք ոմանք իցեն թշնամիք, որպիսի չիք
հեշտին գտանել բարեկամս յայլում քա_
ղաքի ":

Արդ տարաւ նա իւրում վտարանդու_
թեանն ոչինչ քաջաբար. և կայր առաւել
յԵգինա և 'ի Տրիզենէ՝ գերարտօսրալից

անձնկառոյց եղեալ յԱտտիկէ կոյս : Եւ աւանդեն հանդէսս ինչ զբանից նորա դըժպատեհս և անճահաւորս գեղեցիկ նահատակութեանց նորա 'ի քաղաքականին : Քանզի պատմեն՝ 'ի խոյս տալ նորա 'ի քաղաքէն՝ 'ի վեր զձեռան կարկառել 'ի դղեակն կոյս և ասել այսպէս . "Ո՛վ Տիրուհի Քաղաքապահ մեր, և զիա՞րդ սիրելի երբէք քեզ իցեն երեք այս գազանք չարաչարք ամենից Բու և Վիշապ և Ժողովուրդ ": Ա՛ռ այս և զպատանիս՝ որ յայց եղեալ կենակից լինէին նմա, 'ի բաց ամենեւին քեցէր զնոսա միշտամուխ յիրս լինել քաղաքին : Եւ վկայութիւն եւս դնէր նոցա , և ասէր , զի թէ անդուստ 'ի սկզբանէն նմա ճանապարհս կրկին առաջի առնէին, մի՝ որ 'ի բեմն հանիցէ և յեկեղեցի անդր, և միւսն՝ որ դէպ ուղիղ 'ի մահն, ինքն նախատես աղէտիցն եղեալ և արհաւրացն և մախանացն և զրպարտութեանց և հակառակութեանցն՝ որ 'ի վարչութեան անդ քաղաքին, անշուշտ արդեօք նա ընթանայր արագահաս 'ի մահ անդր :

Բայց 'ի ժամանակի վտարանդութեանն Դեմոսթենեայ հասանէր և վախճան Աղեքսանդրի, ուստի և Հելլենացւոցն իրք միւսանգամ ոգի առեալ, քաջացաւ Լէոսթենէս և պատնէշ ածեալ 'ի Լամիա 'ի վերայ Անտիպատրոսի, այնպէս պատեալ պաշարեալ պահէր զնա : Իսկ յայնժամ Պիւթէաս հռետոր և Կալլիմեդոն Կարաբացի վտարանդեալք յԱթէնայ, դարձան

եղեն կուսակիցք Անտիպատրոսի. և շուրջ յածեալք հանդերձ բարեկամօք և հրեշտակօք նորա՝ Թոյլ չտային այլոց Հելլենացւոց նշկահել զԱնտիպատրոս և յարել յԱթենացիսն։ Այլ Դեմոսթենէս միամտեալ ընդ հրեշտակաց իւրոյ քաղաքին, գունդ գործէր և նա հանդերձ նոքօք, և գործակից եւս լինէր քաղաքացն միախումբ 'ի վերայ անկանել Մակեդոնացւոցն և 'ի բաց վանել յԵլլադայ։

Եւ պատմէ մեզ Փիւղարքոս՝ եթէ անդանօր յԱրկադիա Պիւթէաս և Դեմոսթենէս ուրեք յատենի, մին՝ 'ի Մակեդոնացւոց կողմն, և միւսն՝ 'ի Հելլենացւոց՝ յիշոցնատուք եւս եղեն միմեանց։ Եւ պատմեն եւս ասել Պիւթէասայ, եթէ զոր օրինակ է մեզ գուշակել եթէ տուն՝ ուր կաթն տանին գիշոյ՝ անշուշտ ախտ չար 'ի ներքս իւր ունիցի նա, սոյնպէս և հարկ է ախտանալ քաղաքի՝ յորում մուտ գտեալ սպրդեսցի հրեշտակութիւն Աթենացւոց։ Բայց և անդուստ Դեմոսթենէս շրջէր զնմանութիւն զայն օրինակին և ասէր. եթէ զկաթն գիշոյ տանին 'ի տունս տալ նոցա առողջութիւն. և Աթենացիք գլխովին մտանեն 'ի քաղաքս՝ տալ փրկութիւն խօթացելոցն։ Զի բան յայս ուշիմ Դեմոսթենեայ յանկուցեալ Աթենացւոց, վճռաւ սահմանեցին զդարձն նորա. իսկ ըղձահման վճռոյն արձանացոյց Դեմոն Պէանիացի քեռորդի Դեմոսթենեայ. և ապա արձակեցին առ նա եռաթի մի յԵգինա։

Իբրև ելանէր դայր Դեմոսթենէս 'ի Պիրէոնէ 'ի քաղաքն անդր, մինչ և ոչ ոք 'ի քաղաքէն յիշխանացն, մինչ և ոչ ոք 'ի քրմաց. այնպէս առհասարակ խումբս առեալ ընդ ժողովրդեանն չոգան ընդ առաջ նորա և մտադիւրագոյնս առին ժողովեցին զնա։ Եւ պատմէ Մագնես Դեմետրիոս եթէ զձեռսն 'ի վեր ամբարձեալ Դեմոսթենեայ, երանելի կարդայր զանձն յաւուր յայնմիկ. իբրու որ առաւել ևս շքով քան զԱլկիբիադէս դարձ առար. քանզի ինքնակամ յօժարութեամբ՝ և ոչ բռնի իբրու առ նովաւ՝ հիւրամեծար եղեն քաղաքացիք։

Բայց քանզի կայր մինչ տակաւին պատուհաս տուգանացն նորա (զի և օրէն չէր ջրել զդատակնիքն առ 'ի շնորհս), հնարս հնարեցան նոքա 'ի դերևս զօրէնսն հանել։ Քանզի սովորութիւն էր Աթենացւոցն 'ի զոհի անդ Արամազդայ փրկողին տալ մատուցանել արծաթ արանցն՝ որ յարդարիչք և զարդարիչք էին սեղանոյն, ապա 'ի նոյն գործ պաշտաման յայնժամ կացուցին զԴեմոսթենէս մատուցանելով նմա և տաղանդս յիսուն՝ չափ տուգանաց պատուհասին նորա։

Այլ սակայն և յետ դարձին իւրոյ ոչ բազում ինչ ժամանակ վայելեաց Դեմոսթենէս 'ի հայրենիսն. քանզի յայնժամ արագ արագ վատթարեալ իրացն Հելլենացւոց, յամսեանն Մետագիտնիոնի հարան խորտակեցան նոքա 'ի Կրանոնիա և

յամսեանն Բոէդրոմիոնի գունդ զօրականին մտանէր 'ի Մունիքիա. և ապա յամսեանն Պիւանեպսիոնի մեռանէր Դեմոսթենէս 8. և մեռաւ նա օրինակ զայս.

Իբրև բօթ հասանէր յառաջադէմ շուրջ Անտիպատրեայ և Կրատերոսի յԱթէնս կոյս, յայնժամ Դեմոսթենէս և կուսակիցք նորա աճապարեալք ելանէին 'ի քաղաքէն. իսկ անդուստ խուժանն՝ մահու դատակնիք տայր ընդդէմ նոցա. և զահամահ վճռոյն արձանացոյց Դեմադէս: Արդ 'ի նոցանէն կէսք ը̄ այս և կէսք ը̄ այն դարադէմ վարատեալք, Անտիպատրոս ձերբակալ առնել զնոսա արձակէր շուրջանակի արս, որոց էր պարագլուխ Արքիաս. որում անուն կարդային Ֆիղադօթերաս այն է՝ փախստէից որսակ: Եւ համբաւեն՝ եթէ այս Արքիաս ծննդեամբ Թուրիացի, եկաց նա երբեմն դերասան Ողբերգակ տեսարանին. և պատմեն՝ զՊոլոսն զայն Եգինացի յարուեստին յայնմիկ ընաւից վեհագոյն՝ աշակերտ կացեալ սորա. բայց Երմիպպոս դասէ զԱրքիաս ընդ աշակերտս Դակրիտոսի հռետորի. և Դեմետրիոս ասէ վարժեալ զնա առ ոտս Անաքսիմենեայ:

Արդ այս Արքիաս յայնժամ 'ի մեհենէն Այաքայ յԵգինա՝ առեալ 'ի դուրս ձգեաց, ուր անկեալ ապաւինեալ կային, զԻւպերիդէս հռետոր և զԱրիստոնիկոս Մարաթոնացի և զԽիմերէոս զեղբայր Դեմետրիոսի Փալերեայ. և առեալ արձակէր զնոսա 'ի Կղէոնէա առ Անտիպատրոս, ուր

և 'ի մահ վարեցան նոքա։ Իսկ առեն՝ և զլեզուն կորել զԽուպերիդեայ։ Այս լուր առեալ Արքիաս և զԴեմոսթենեայ կալ աղաչաւոր 'ի Կալաւրիա 'ի տաճարին Պոսիդոնի, եկեալ անցանէր անդր մակուկաւ հանդերձ Թրակացի տիգաւորօք։ Անդանօր կայր և ամոքէր զԴեմոսթենէս յառնել 'ի դուրս 'ի տեղւոյն, և 'ի միասին ընդ նմա գնալ առ Անտիպատրոս․ իբրու որ ոչինչ 'ի դժնդակացն կրեսցէ նա։ Բայց Դեմոսթենեայ դէպ եղև 'ի գիշերին յայնմիկ 'ի քուն օտարոտի իմն երազանալ։ Քանզի թուէր նմա ելևելս առնել ընդ Արքիասայ 'ի դերասանութեան Ողբերգակ տեսարանի․ և թէպէտ և գեղեցիկս հանդիսացեալ խնդացուցանէր զբազմականն, սակայն 'ի հանդերձանին և 'ի շուքն նկուն էր։ Այլ աղագաւ իբրև բազում ինչ յանժամ մարդասիրագոյնս խօսէր ընդ նմա Արքիաս, 'ի վեր առ նա հայեցեալ Դեմոսթենէս 'ի նստոցէն իւրմէ, ասէր այսպէս․ "Ո՛վ Արքիաս ո՛չ 'ի դերասանութեան երբէք ամոքեցեր զիս, և ո՛չ դարձեալ զարդիս հաւանեցուսցես 'ի խոստմանդ„։ Իբրև 'ի սրտմտութիւն բրդեալ Արքիաս սպառնայր նա 'ի վերայ կայէր, ասէ Դեմոսթենէս․ "Արդ բարբառիս դու 'ի Մակեդոնեան եռոտանւոյն, ա՛յն ինչ կացեալ քո դերասան։ Բայց փոքրիկ մի անսա ինձ՝ գրել ինչ մի առ իմ ընտանիս„։ Զայս ասաց Դեմոսթենէս և չոքաւ 'ի ներքս կոյս մեհենին՝ և առեալ անդ մատեան մի իբրև 'ի

գրել ինչ, արկանէր զեղէգնն 'ի բերան իւր և խածեալ զնա՝ ըստ որում և էր իսկ նորա սովորութիւն 'ի խորհել իւրում և 'ի գրել, առ վայր մի այնպէս կալաւ 'ի բերանին, և ապա համակ ծածկեալ զինքն՝ խոնարհեցոյց զգլուխն ։ Իսկ տիգաւորքն՝ որ առ դուրսն կացեալ էին՝ խաղ առնէին զնա իբրև վատասիրտ, և կնամարդի և անարի կարդային զնա ։

Բայց Արքիաս մատուցեալ առ նա յորդորէր յառնել, և կրկնեալ և երեքնեալ զնոյն բանն՝ խոստումն կռէր նմա հաշտ և համբոյր յարդարել զԱնտիպատրոս։ Իսկ յայնժամ Դեմոսթենէս զգացեալ յանձին զի տիրացաւ 'ի նմա դեղն և տիրացաւ նմա, եբաց զերեսն և հայեցեալ յԱրքիաս, ասէր. "Արդ է քեզ այժմիկ իբրու յողբերգակ տեսարանի դերասանանալ զԿրէոնտաս, և զիմ մարմին անթաղ ընկեցիկ առնել։ Իսկ ես ո՜վ սիրեցեալդ Պոսիդոնիդ ելանեմ 'ի դուրս 'ի նուիրական վայրէդ ողջ կենդանի. բայց Անտիպատրոս և Մակեդոնացիք՝ և ոչ զքոյ տաճարդ անդամ թողին անշաղախ ,,: Իբրև զայս ասաց Դեմոսթենէս, աղաչէր աղերսէր բառնալ զնա. այնպէս ողջոյն զդողանի հարեալ յերկրի կայր. իսկ 'ի գնալ իւրում և յանցանել առ սեղանովն՝ անդանօր անկեալ յերկիր և յոգւոց հանեալ փչեաց զոգին ։

Եւ պատմէ Արիստոն՝ եթէ առեալ ծծեաց նա զթոյնն ընդ եղէգնն՝ որպէս

ասացաք: Իսկ և Պապպոս ումն՝ (զոր ըղպատմութիւնն արձանագրեաց՝ Երմիպպոս), ասէ, եթէ յետ անկանելոյ նորա առ սեղանովն, գտին 'ի մատենին սկիզբն նամակի գրեալ առ 'ի նմանէ, եթէ. "Դեմոսթենէս առ Անտիպատրոս,,. և ոչ այլ ինչ աւելի: Եւ ասէ ևս՝ եթէ յապուշ կրթեալ ընդ արագամահ լինել առնն, պատմեցին յայնժամ Թրակացիք որ առ դուրսն, եթէ ինչ մի 'ի դրդլեկէ անտի իւրմէ հանեալ Դեմոսթենէս և 'ի ձեռն առեալ արկանէր 'ի բերանն. և եկուլ նա յայնժամ զդեղն, մինչդեռ նոքա կարծէին՝ կլանել ոսկի: Բայց և աղախինն ումն 'ի սպասարկուաց նորա՝ հարցեալ յԱրքիասայ, ետ պատասխանի՝ 'ի հարուստ ժամանակաց տանել Դեմոսթենեայ կապեալ առ իւր զկծիկն զայն՝ իբրև յուռութուլունս ինչ: Իսկ Երատոսթենէս ասէ՝ ունել պահել Դեմոսթենեայ զթոյնն 'ի փորածոյ մանեկի, և զմանեակ զայն տանել շուրջանակի 'ի բազկին:

Բայց զկարծիս զամենայն զպէսպէս չէ աստ 'ի ներքս բերել՝ որ գրեցին վասն նորա, և են նոքա բազումք յոյժ. սակայն զմիոյն ասասցուք զԴեմոքարիայ զընտանւոյն Դեմոսթենեայ, որ կարծէ՝ ոչ դեղակուր ինչ զայրն, այլ թէ 'ի շնորհաց դիցն և 'ի խնամոցն՝ որ յանագորոյն Մակեդոնացւոց անտի զնա թափել կամեցան, մեռանել նմա այնպէս յեղակարծումն և անցաւ: Արդ մեռաւ Դեմոսթե-

նէս 'ի վեշտասաներորդի Պիւանեպսիոնի ամսոյն, զոր օր՝ վատախտար յոյժ քան զամենայն աւուրս Թեսմոփորեան տօնա_ խմբութեանցն անցուցանէ կանանին 'ի պահս 'ի տաճարի դիցուհւոյն :

Բայց Աթենացւոց ժողովուրդ յետ սակաւու շուք պատուոյ զարժանին ըն_ ծայեալ Դեմոսթենեայ՝ կանգնեցին նմա պատկեր պղնձի . և վճիռ ես ետուն՝ երի_ ցագունին 'ի զարմին նորա տալ կերակուր 'ի Պրիւտանիոնի : Իսկ 'ի ներքնախարսխի անդրւոյն դրոշմեցաւ վերտառութիւն ա_ նուանի այսպէս .

Եթէ քաջութի 'ի քեզ՝ ո՜վ Դեմոսթենէս՝
Զուգահաւասար գոյր հանճարոյն ,
Երբէք Մակեդոնացին Արէս
Ո՛չ տիրանայր 'ի վերայ Հելլենացւոց :

Իսկ որք ասենն՝ զվերտառութիւն զայդ գրել նմին իսկ Դեմոսթենեայ 'ի Կալա_ բրիա , մինչև առեալ զմահաթոյնն , յոյժ բանդագուշեն :

Եւ պատմեն , վայր մի յառաջ քան զգնալն մեր յԱթէնս՝ այսպիսի ինչ դի_ պաց պատահեալ անդանօր : Զօրական ումն կոչեալ 'ի զօրապետէն տալ զհամար յա_ ռաջին , զոսկին իւր զսակաւ առեալ ողջոյն աւանդէր յայնժամ 'ի ձեռս անդրւոյն Դեմոսթենեայ՝ և էին մատունք ձեռացն կցեք զմիմեամբք , և էր մօտ անդրւոյն բու_ սեալ սօսի ոչինչ մեծ , որոյ և սաղար_

Թունք չառ (կամ ըստ գիտաց՝ 'ի հողմոյ տապատանեալք, կամ թէ 'ի ծածկոյթ ոսկւոյն ինքնին զօրականն կուտեաց անդր.) Թօթափեալ անկեալ 'ի վերայ ձեռացն, այնպէս ոչ սակաւ ժամանակ ծածկեցին զոսկին. և քանզի 'ի դառնալ իւրում զօրականն ողջ եգիտ անդանօր զաւանդն, և հռչակ հարաւ բանին, յայնժամ ապա 'ի մտաւոր արանց բազումք այնորիկ աղագաւ այր զարամբ ելանէին յօրինել գրել վերտառութիւնս վասն անկաշառ սրբութեան Դեմոսթենեայ:

Բայց յետ այնորիկ և ոչ Դեմադէս հարուստ ժամանակ վայելեաց 'ի նորածաղիկ յիւր փառսն, այլ 'ի վրէժխնդրութենէն Դեմոսթենեայ, ձգեալ ածեալ նա 'ի Մակեդոնիա՝ անդանոր իրաւացի ընդունէր մահ 'ի նոցունց իսկ արանցն՝ որոց ինքն չնթեաց անարգաբար. զի և յառաջնմէ իսկ տաղտկացան նոքա 'ի նմանէ, և յայնժամ ապա ըմբռնեցաւ նա և 'ի մեղս անձողոպրելի. Քանզի և նամակ գտին զնորա սադրիչ Պերդիկկասայ գալ հորդան 'ի Մակեդոնիա տալ և ապրեցուցանել զՀելլենացին, իբրու որք զհնացեալ և զփուտ պարանւոյ կախեալ իցեն. և առակէր զայն յԱնտիպատրոս: Ապա վասն այնորիկ ամբաստանեալ նա 'ի Դենարքոսէ Կորնթացւոյ, այնչափ 'ի սրտմտութիւն բարկութեան սաստիկ բրդեցաւ Կասանդրոս, զի և անդէն 'ի գիրկսն փողոտէր զորդին նորա, ապա և զԴեմադէս ինքնին հրաման

տայր սպանանել: Եւ այնպէս այրն 'ի վերջին անդ աղէտսն խելամուտ եղև ճշմարտութեան բանին՝ եթէ Մատնտուք նախ անձանց մատն լինին: Ասէր իսկ նմա զայս բազում անգամ Դեմոսթենէս. բայց նա հաւատաց ոչ:

Արդ աւադիկ քեզ ո՛վ Սոսսիէ՝ Դեմոսթենեայ վարք, որչափ ինչ միանգամ մեք ինքնին ընթերցաք, կամ թէ լուաք:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Քեր֊ձի֊՝ *փոքրիկ քաղաք Բիովտիոյ, հայրենիք Պղուտարքոսին մերոյ։*

2. *Բայց 'ի Քերթողաց՝ և Հիպպոկրատէս ինքնին յիշէ զազգ օձից՝ Արգ֊֊ անուն, կամ Արգ֊֊։*

3. *'Ի Յն.* Δολιχὸς. *Գոյականաբար. է ընթացք երկոտասան կամ քսան և չորս ասպարիսաց։*

4. Եմ֊ձ՝ *զանուն դեռոյն 'ի վեր բերէ Պղուտարքոս 'ի Յն. բառէն՝* Եմ֊, *որ նշանակէ՝* Արիւն։

5. *Յետ ամաց երկուց դէպք եղեն մահուն Փիլիպպոսի։*

6. *Էր ումն այր Մարգիտէս անուն, որ կարծէր յանձին գիտել զամենայն, և յոյժ թերակատար գիտէր զամենայն։*

7. *Քանզի սովորութիւն էր 'ի կոչունս ընծայից, զի որ զբաժակն ունէր՝ երգէր, և այլք ունկն մատուցանէին նմա։ Ակնարկէ 'ի բաժակն ոսկի, զոր 'ի կաշառս ունէր Դեմոսթենէս։*

8. *Մեռաւ Դեմոսթենէս 'ի հասակի վաթսուն ամաց։*

ԿԻԿԵՐՈՎՆ

Օ ԿԻԿԵՐՈՎՆԻ մայրն զՈլբիա քաջազգի ասեն միանդամայն և պարկեշտակրօն. բայց վասն հօրն նորա ոչինչ զրուցեն չափաւոր: Քանզի կէսք ասեն զծնունդ և զսնունդ զառնն 'ի գործարանի ուրեք թափչաց, և կէսք զՃետ նորա 'ի վեր հանեն 'ի Տուղղոս Ապպիոս՝ որ թագ կապեաց փառօք 'ի վերայ Վոլուսկեանց:

Այլ առաջին 'ի զարմէ աստի մականուանեալն Կիկերոնին՝ թուի թէ այր եկաց անուանի, ուստի և 'ի նմանէ սերեալքն ոչ ընդ վայր հարին զմականունդ. նա և սիրեցին և՛ թէպէտ և բազումք ձաղէին զանուամբն. քանզի Լատինք ՉԻՉԷՐ կոչեն զՍիսեռն. և զի և այրն 'ի ծայր ռնգացն ունէր երունդ, իբրու եթէ Սիսեռն անդանօր ելեալ իցէ. յորմէ և զմականուն զայն ձգեաց այրն: Եւ նոյն ինքն Կիկերոնին՝ զորմէ բանքս են՝ 'ի խնդրել իւրում առաջին

զբարձ և զանառակութիւն 'ի քաղաքին և 'ի խորհուրդ տալ նմա բարեկամացն՝ թողուլ զայն անուն, պատմէին՝ համարձակաձայն ասել նմա՝ եթէ զԿԻԿԵՐՈՆ անուն թեակոխեսցէ նա՝ հոյակապ ևս գործել քան զՍկաւրեանցն և զԿատուղեանցն: Իւ ապա 'ի գանձաւորութեան խրում Կիկերոնին 'ի Սիկիլիա, կահ արծաթի գործեալ կախել առ 'ի ձօն դիցն, արձանագրէր 'ի նա զերկուս զառաջին անուանն՝ Մարկոս և Տուղղիոս, իսկ փոխանակ երրորդին տայր արուեստագործին զհետ կրկին անուանցն՝ Սիսեռն մի քանդակել 'ի նմա: Արդ յաղագս անուանն այս է պատմութիւնն:

Բայց ասեն՝ եթէ զԿիկերոնի ծնամայրն աներկունք և անցաւ՝ յաւուր երրորդի նորոյ Կաղանդացն 1. յորում աւուր այժմ իշխանք կարգեն ուխտս և զոհս 'ի փրկութիւն իշխանին: Իսկ դայեկին նորա թուէր տեսանել առ աչօք ինչ. որ և նախապատում լինէր՝ մեծ ինչ 'ի բարեաց մնուցանել նմա վասն Հռոմայեցւոց առհասարակ: Այլ այս թէպէտ և երազապատում թուեցին բանք և անհամութիւնք, բայց նա արագ արագ 'ի տիս հասեալ վարժից ուսմանց՝ իբրև մարգարէութիւն երևեցոյց Ճշգրիտ, յանձին բերեալ զգեղեցիկ բոյս բարուցն և արդոյ և համբաւատենչ եղեալ քան զայլսն 'ի մանկտոյն. որպէս զի և նոցուն հարք բազում անգամ հետևէին 'ի վարժարանն՝ իւրեանց իսկ աչօք տեսանել զԿիկերոնի, և

ինք՚ին խմանալ զհուչակելին զայն ուշի-մութիւն և զարագամտութիւն մանկանն. իսկ 'ի նոցանէ վայրենագոյնքն՝ և ցասնուին ևս ընդ մանկունս իւրեանց, զի զԿիկե-րոնն 'ի միջոցին առնուին յուղւոյ՝ շուք տուեալ նմա:

Արդ թէպէտ և ինքնին Կիկերոն (որ-պէս Պղատոն խնդրէ լինել ուսումնասիրի առն և յիմաստասիրութիւն կրթելոյ) քա-ջուշիմ էր յամենայն 'ի վարժս և ոչ զազգ ուսմանց և զհմտութեանց երբէք նա ընդ վայր հարկանէր. սակայն և մտադիւրա-գոյն ևս կրթէր նա 'ի քերթողականն: Եւ ունիմք ևս մեք քերթած մի զնորա յան-տիական 'ի տիսն քերթեալ քառաչափ, անուն՝ Պոնփիոս Գլաւկոս: Բայց յետ այ-նորիկ ճշգրտագոյն ևս պարապեալ նա 'ի հրահանգս մուսայից, ոչ միայն իբրև հռե-տոր համբաւեցաւ, այլ և քերթող հռո-մայեցւոց վեհագոյն: Այլ սակայն և շուք փառաց նորա 'ի հռետորականին՝ անդըր-ժէլի տակաւին կայ մնայ. թէպէտ և նո-րութիւնք ոչինչ գուզնաքեայք եղեն յա-տենաբանութիւնս, իսկ շուք նորա 'ի քեր-թողականին գլխովին անփառունակ շիջաւ 'ի բազմաց անտի գերագունից քերթո-ղաց՝ որ զհետ նորա:

Այս 'ի գլուխ զմանկականն տարեալ զհրահանգս, հպատակ լինէր այնուհետև 'ի լուր Փիլոնին Ակադեմեան. որ քան զամենայն աշակերտս զԿլիտոմաքոսին մե-ծապէս աքանչացաւ առ Հռոմայեցիս 'ի

Ճարտարախօսութեանէն. և սիրեցաւ ևս 'ի վարուց անտի իւրոց: 'Ի նոյն ժամանակ հաստատեալ եկաց Կիկերոն և Մուկիոսի քաջահմուտ առն 'ի քաղաքականսն և աւագամեծար 'ի Սինկղիտոսին. յորմէ և յոյժ օգտեցաւ 'ի հրահանգս օրինացն. և ժամանակ մի ևս զինուորեցաւ նա առ Սիղղայի 'ի Մարսիկեան մարտին: Բայց ապա զհերձուած տեսեալ զիւրոյ քաղաքին, և 'ի հերձուածոյ անտի զմիապետութիւն համբուն, տեղի տուեալ կեանս այնուհետև վարեալ յանդորրու և տեսական. կենակից կենցաղակից լինէր քաջավարժիցն Հելլենացւոց և գեղեցիկ հրահանգաց պատկառ կայր, մինչև տիրացեալ Սիղղայի՝ Թուէր իմն անդորրանալ քաղաքին:

Զայսու ժամանակաւ Քրիսոգոնոս ազատագրեալն Սիղղայի՝ գնոց գնէր երկու հազար դրամակշռոց զգոյս զառն ուրումն՝ զորմէ ասէր նա սպանեալ իբրև այր տարագիր: Իսկ իբրև յայնժամ Հռոսկիոս որդի և ժառանգ սպանելոյ առն յարուցեալ բողոք բառնայր, կայր և ցուցանէր զգոյսն զայն իբրու երկու հարիւր և յիսուն դաղանգաց, անդուստ 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ Սիղղաս՝ իբրև նշաւակեցաւ ինքն 'ի պատճառս իւրոյ ազատագրելոյն, տայր ամբաստան զՀռոսկիոսէ լինել յատենի իբրև զհայրասպանէ, և զամբաստանութիւնն հայթհայթէր ինքնին Քրիսոգոնոս: Այր աղագաւ և ամ-

բարձաւ և ո՛չ ոք յայնժամ 'ի զօրավիգն Հռոսկիոսի. զի առ հասարակ հրաժարեալք տեղի ետուն առ ահի խստութեն Սիղղայի: Եւ այնպէս ապա պատանին Հռոսկիոս լքեալ ամայի և եկեալ ապաւինեալ առ Կիկերոնի, յորդոր 'ի ներքս ասյին նմա բարեկամքն առնուլ զանձամբ զպաշտպանութիւն պատանւոյն, իբրու պատճառս յոյժ հոյակապ և գեղեցիկ 'ի փառս անուան նորա: Յանձին կալաւ Կիկերոնի, և հովանի կացեալ պատանւոյն և 'ի գլուխ քաջիկ տարեալ զբանն, յոյժ սքանչացաւ:

Բայց յետ այնորիկ երկեաւ նա 'ի Սիղղայէ, և գնայր այնուհետև ուղևորութք յԵլլադա, համբաւ հարեալ՝ զի այնպէս հարկ իցէ 'ի քաջողջութիւն մարմնոյն, քանզի և էր խակ 'ի տկարութենէ ստամոքսին նիհար և վտիտ. յոյր սակս և կերակուր առնոյր սակաւ և գուղնաքեայ և անագանեալ: Բայց էր նորա բարբառ ձայնին քաջահնչակ, այլ խիստ և խոշոր. և քանզի ցանդ բարբառ բարձր արձակէր նա առ 'ի թափոյն և 'ի կրիցն՝ որով խօսէր, խիթային վնասել մարմնոյն: Արդ հասեալ նա յԱթէնս, չոքաւ 'ի լսելութիւն Անտիոքոսի Ասկաղոնացւոյ. և յակձիռս հիացեալ կայր ընդ յորդութիւն և ընդ շնորհս բանիցն նորա. սակայն և ոչինչ հաւանեցաւ ընդ նորութիւն կարծեացն նորա: Քանզի Անտիոքոս ուծացեալ յԱկադեմիոյ՝ որ Նորն անուանեալ, ելեք եթող

զաղանդն զԿարնէադեայ. բերեալ 'ի նոյն կամ 'ի յայտ յանդիմանութենէն և 'ի ըզգօյութեանցն, կամ որպէս կէսք ասեն՝ 'ի պատուասիրութենէ իմեմնէ, և 'ի գըժտութենէն իւրմէ ընդ աշակերտս Կլիտոմաքեայ և Փիլոնի. ուստի և փոխեալ՝ բազումս այնուհետև զհետ կրթէր կարծեացն Ստոյիկեանց: Բայց Կիկերոնի ըղձակաթ այնոցիկ՝ յաւէտ իմն կրթեցաւ 'ի նոսա. զմտաւ ածէր՝ զի 'ի բաց մերժել իւրում դխովլին 'ի քաղաքին իւրոց՝ փոխեալ յատենէն և հասարակացն գործոյ՝ գնացեալ բնակեացէ անդանօր անդորրաւէտ կենօք իմաստասիրեալ 'ի նմա:

Բայց ապա լուր զմահուն առեալ զՍիղլայի, և զի՝ և կրթանօք ևս կորովացոյց ըզմարմինն և պնդեաց հաստատեաց, և բարբառ ևս ձայնին կազմեցաւ յարդարեցաւ հեշտալուր 'ի լսել, և զօրաւոր ևս ըստ կազդուրել մարմնոյն: Առ այս՝ և նամականի բազումս առեալ աղաչաւոր զիւրոց բարեկամացն որ 'ի Հռոմ. և բազում ևս իրախուսեալ յԱնտիոքոսէն 'ի մտանեսութիւն հասարակաց. ապա անդրէն միւսանգամ բուռն հարկանէր Կիկերոնի զհռետորականին վարժից և 'ի նոյն հրահանգէր զանձն՝ իբրև յանօթ կարևոր. և վառէր մարզէր զքաղաքական զիւր ուշիմութիւնն, տուեալ զանձն 'ի քերթոն շարադրել և խօսել, և 'ի խնդիր հռետորաց ելեալ ականաւորաց: Որ աղագաւ և նաւեալ յԱսիա և 'ի Հռոդոս, և 'ի հռետորաց ան-

տի Ախայեցւոց կենակից եղև նա Քսենոկ֊
ղեայ Ագրամիւտացւոյ և Դինիխեայ Մագ֊
նեսեայ և Մենիպպոսի Կարիոսի. և 'ի
Հռոդոս քաղաքավարեցաւ ընդ հռետորին
Ապողոնիոսի որդւոյն Մողոնի և ընդ Պո֊
սիդոնիոսի իմաստասիրի:

Եւ պատմեն՝ անտեղեակ Ապողոնիո֊
սի գոլով Հռոմայեցւոց բարբառոյն, աղա֊
չէր զԿիկերոնն, Հելլենացի ատենաբանել.
իսկ Կիկերոնն յանձն առնոյր՝ զի այնպէս
լաւ ևս ուղղեսցեն զնա. իբրև ատենաբա֊
նեաց և յապուշ տուհասարակ կրթեցաւ
բազմականն և յայնժամ այր զարամբ ելա֊
նէին գրուատս ձօնել նմա, անդանօր Ա֊
պողոնիոս՝ որ և ոչինչ խնդագինս ունկն
մատուցեալ էր նմա, կայր այնպէս նըս֊
տեալ մտախորհ անմռունչ հարուստ ժամ.
իբրև ետես զի սրտնեցաւ Կիկերոնն, ապա
ուրեմն ասէր Ապողոնիոս. "Ես ինքնին
ո՛վ Կիկերոնն, քա՛ջ իսկ գովեմ զքեզ և
զարմացեալ իսկ եմ, այլ զաղէտս ողբամ
զԵլլադայ. քանզի տեսանեմ, զի կրկին
այս միայն գեղեցիկ հրահանգք տակաւին
մնացեալք առ մեզ, հմտութիւն և ճար֊
տարախօսութիւն, 'ի քոյ ձեռն աւադիկ
անցանեն և գոքա առ Հռոմայեցիս անդր,,:

Արդ՝ մինչդեռ Կիկերոնն այնպէս մե֊
ծապէս խրախուսեալ յօժարամտէր 'ի
վարչութիւն քաղաքին, անդուստ պա֊
տահանի մի 'ի պատգամախօսէն նուա֊
ղեաց զեռանդն նորա: Քանզի հարցեալ
նա զշխան 'ի Դեղփիս՝ զիա՛րդ առաւել փա֊

ռաւորեսցի նա, պատուէր տայր նմա Պիւթիա, առաջնորդ կենաց առնուլ իւր զանկակից բոյս բարուցն և մի՛ զկարծիս խուժանին: Ուստի և նա զառաջինն յետ դարձին իւր 'ի Հռոմ, կարի՛ աչալրջութեամբ և ակնածութեամբ կեայր և քաղաքավարէր և զգուշեաւ մատչէր նա առ իշխանսն: Եւ զանց առնէին զնովաւ, և զառձեռն և զսովորական զանուանսն զայն՝ որ 'ի բերան սինլքորացն Հռովմայ՝ կարդային նմա, Հոռոմ և Սքոլաստիկոս պարապորդ:

Բայց նա անդստին 'ի բնութենէն ըղձակաթ 'ի փառս, և գրգեալ ևս 'ի հօրէն և 'ի բարեկամացն, իբրև միջամուխ 'ի դատս լինէր ատենին, այնուհետև ո՛չ տակաւ, այլ անդէն միանգամայն ականաւոր բարձրացաւ այրն և նախաթոռ բոլորիցն բազմեցաւ ատենախօսից: Եւ ասեն՝ ոչինչ պակաս քան զԴեմոսթենէս խականալ և նմա 'ի ձևացուցանելն. ուստի և մեծապէս խնամով կրթէր զանձն մերթ 'ի ձեռն Ռոսկիոսի կատակերգակի, և մերթ՝ Եսովպոսի ողբերգակի: Եւ պատմեն՝ եթէ այս Եսովպոս ձևացուցեալ 'ի թատրոնի զդէմսն Ատրէոսի 'ի մտախորհ լինել նորա 'ի վրէժխնդրութիւնն Թիւեստեայ, այնպէս իմն ա՛յլ յայլմէ եղեալ էր այրն 'ի կրից անտի զգածեալ. զի և յանցանել անդ առ նովաւ ձեպով ծառայի ուրումն, առեալ գաւազանաւն հարկանէր ուժգին՝ մինչև դիտապաստ արկանել զայրն:

Արդ ոչինչ դուզնաքեայ յայնպիսի ձեռնալոյն օգտեցաւ Կիկերոն յամոքել համոզել. և հեգնեալ նա զհռետորսն՝ որ բնաւորեցան բարձրաձայն աղաղակել, ասէր՝ առ տկարութեանն յաղաղակ անդր վերելակեն դոքա, որպէս և կաղք՝ յերիվարս: Այլ սակայն և զուարթաբանութիւն բազում 'ի հեգնութիւնս և 'ի կատակս, թէպէտ և 'ի ճահ դիպեսցի ատենական հանդիսից և նազաբանութիւն կարծեսցի, սակայն և յաճախագոյնս 'ի վարել զայդ՝ տաղտկալի բազմաց եղև Կիկերոն. և իբրև երգիծաբան յանդիմանեցաւ:

Իսկ յետ այսորիկ գանձաւոր կարգեալ Կիկերոնի 'ի կարօտութեան ցորենոյ, և վիճակ ելեալ նմա Սիկիլիա, անդանօր զառաջինն դժոխըմբերելի երևեցաւ նա մարդկանն՝ ստիպեալ զնոսա յղել ցորեան 'ի Հռոմ. այլ ապա զփորձ առեալ զառնն խնամոց և զարդարութեանն՝ և զհեզութեանն, շուք եդին նմա՝ որպէս ոչ երբէք ումեք յիշխանաց անտի:

Զայնու ժամանակաւ իբրև բազումք 'ի պատանեացն ականաւորաց և քաջատոհմիցն Հռովմայ ամբաստանեցան իբրու անկարգացեալք ոմանք և վատացեալք 'ի հրահանգս մարտի, և արձակեցան նոքա անդր առ զօրավարն Սիկիլիոյ, անդանօր Կիկերոն փութոյ պնդութեամբ խօսեալ վասն նոցա՝ պաշտպան և հովանի եկաց: Իբրև դարձ նոքա արարին 'ի Հռոմ, ինքն

մեծապէս փքացեալ վասն իրացն՝ պատմէ իսկ ինքն ծիծաղելի իմն պատահեալ անձին: Քանզի ասէ՝ 'ի պատահել իւրում 'ի Կամպանիա առն ումեմն երևելւոյ՝ զոր առ բարեկամս ունէր նա, և 'ի հարցանելն զնա՝ եթէ զի՞նչ բանք իցեն Հռոմայեցւոց վասն գործոց նորա, և զի՞նչ զնմանէն իցեն նոցա կարծիք (քանզի և կարծէր իսկ այնպէս Կիկերոնին ողջոյն լնուլ քաղաքին 'ի համբաւոյ անձինն և 'ի փառաց գործոց իւրոց), իսկ յայնժամ այրն հարցանէր նմա այսպէս. "Իսկ դու ուրանօր էիր ո՞վ Կիկերոն 'ի ժամանակիս յայսմիկ": Եւ խոստովան լինի ինքնին Կիկերոն՝ զի 'ի խոր խոցեցաւ ընդ բանն, զի համբաւ նորա՝ 'ի քաղաքին յայնմիկ իբրու յահագին ծովու խորասոյզ եղեալ, ոչինչ յաջողեցաւ փառս հանդերձել նմա: Սակայն և յետ այնորիկ ողջախոհ մտածութեամբ բազում նուազեցոյց նա զպատուասիրութեան զկիրսն, քանզի և փառքն ինքնին՝ որում անձկայրն՝ անսահմանաւոր է և անպարագիծ առ 'ի հասանել ժամանել: Բայց և ցորչափ եկեաց՝ յաւերժացաւ նա կարի խնդալ 'ի գովութեան իւրում և խանդակաթ 'ի փառսն լինել, և ապա այս կիրք բազում ինչ բազում անգամ աղարտեաց 'ի գեղեցիկ խորհրդոց նորա:

Արդ պնդագոյնս յայնժամ պարապեալ Կիկերոնի յիրս քաղաքին, դժպատեհ համարեցաւ՝ զի անարգքն յարուեստաւորաց անոտի գործիս 'ի վար արկեալ և

կահս անկենդանս՝ զմիոյ միոյ 'ի նոցանէն ճարտար գիտեն զանուանսն և զտեղին և զզօրութիւնն . իսկ այր քաղաքական 'ի գլուխ զհասարակաց գործսն տարեալ 'ի ձեռն օտար որերոյն՝ յուլացեալ հեղգա-ցի ինքնին իմանալ ճանաչել զայր այր 'ի քա-ղաքին իւրում : Ուստի և Թեւակոխեաց նա ո՛չ միայն զանուանսն ուսանել զնոցա , այլ և գիտաց գլխովին զտուն տուն զտեղի բնա-կութեան աւագաց քաղաքին, զկալուածս ժառանգութեան նոցա , զբարեկամս նո-ցա , և զդրացիս նոցա . որպէս զի և յամե-նայն իսկ 'ի ճանապարհս խաղալոյ յուղեւո-րել իւրում ասէր Կիկերոնին և նշանացի առնէր իւրաքանչիւր զագարակս և զամա-րանոցս զիւրոց բարեկամացն :

Բայց 'ի գոյս նուազեալ գոլով Կիկե-րոնին , սակայն և բաւական առ 'ի ծախս , սքանչելի էր նորա չառնուլ ինչ ո՛չ վարձս և ո՛չ պարգևս 'ի փաստաբանութեան իւ-րում , և առաւել՝ որ ընդդէմ Վերրէսի 'ի դատս իրաւանցն : Քանզի այս Վերրէս կացեալ զօրավար 'ի Սիկիլիա և 'ի Սիկիլիա-ցւոց անտի դատախազեալ յատենի վասն բազում անիրաւութեանցն և չարեացն , տայր Կիկերոնին դատակնիք 'ի վերայ ածել նորա՝ ո՛չ զդատն վարելով, քան թէ՝ գոգ-ցես ոչինչ վարելովն : Քանզի զայն դատ առ ականէ Վերրէսի յապաղեալ զօրավա-րացն՝ ժամավաճառ լինէին մինչև յօրն վերջին . և քանզի պարապ աւուրն ո՛չ ժա-մանեաց 'ի պայքարսն՝ ուստի և չէր ինչ

սահմանել զբանն 'ի դատաստանի. ապա յատն կացեալ Կիկերոնի ասէր՝ պայքարաց չեն ինչ պէտք, և անդէն յառաջ զվըկայսն մատուցեալ և 'ի քնին առեալ՝ ստիպէր զդատաւորսն տալ զվճիռն:

Եւ յիշատակ առնեն նորա բազմադէմ զուարճաբանութեանցն և յայս ատեան: Քանզի Հռոմայեցիք Վէ——է. կարդան զխոզ մալեալ. ուստի և յազատագրելոց անտի ոմն Կեկիլիոս անուն՝ հրէականին հետևող օրինաց՝ կամելով ամբաստանել զՎէրրէս, և 'ի բաց մերժեալ 'ի Սիկիլիացւոց, ասէր յայնժամ Կիկերոնի. "Եւ զի՞նչ հաղորդութիւն իցէ առն հրէի ընդ խոզի": Դարձեալ՝ էր Վէրրէսի որդի յարբունս հասեալ, ոչինչ այնպէս առաքինացեալ յառողջ 'ի տիսն ըստ օրինի ազատ մանկանն. ուստի և Կիկերոնի յանդիմանեալ 'ի Վէրրէսէ իբրև գրգասուն, տայր պատասխանի Կիկերոն. "Առ որդիսն առնին զյանդիմանութիւն զայդ պարտ է գործել": Դարձեալ՝ յայնժամ և Հորտենսիոս հռետոր ոչինչ քաջալերեալ յայտնի պաշտպան կալ Վէրրէսի, սակայն և յանձին կալեալ գալ յատեան անդր 'ի ժամ դատակնքոյն նորա, և վարձ զգալըստեանն իւրոյ առեալ Հորտենսիոս զՍփինգս մի փղոսկրեայ, անդ Կիկերոնի խօսս ընդդէմ նորա 'ի ներքս արկանէր անյայտս իսկ յասել անդ Հորտենսիոսի, եթէ առեղծուածոց չէմ ինչ հրահանգ 'ի լուծումն, անդէն կրկնեաց Կիկերոնի.

"Եւ սակայն է իսկ քո Սփինգս 'ի տան քում,, 3 ։

Եւ այսպէս ապա դատապարտեալ Վերրէս, և ինքնին Կիկերոնի սահմանեալ զտուգանն եօթանասուն և հինգ բիւրուց դրրամակշռոց, բամբասեցաւ իբր՝ նուազ այնպէս զտուգանն առնել, իբրև արծաթոյ կաշառաբեկ եղեալ յառնէն ։ Համայն և այնպէս Սիկիլիացիք շնորհս կալեալ նմա, իբրև Կիկերոնի ամբարապետ կարգեցաւ՝ եկին առ նա ածեալք ընդ իւրեանս բազում ինչ 'ի պարգև 'ի կղզւոյն իւրեանց. բայց Կիկերոնի ոչինչ վարեալ նոքօք յանձին 'ի պէտս, 'ի պարգևաց անտի որերոյն՝ դիւրագնի յարդարեաց զվաճառս քաղաքին ։

Եւ էր Կիկերոնի դաստակերտ գեղեցիկ յԱրպոս. և կալուած մի ևս մօտ 'ի Նոր քաղաքն. և միւս ևս այլ մերձ 'ի Պոմպէոս ոչինչ ընդարձակ ։ Ապա յաւելաւ նմա և օժիտն Տերենտեայ կնոջ իւրոյ՝ երկոտասան բիւրուց. առ այս՝ և ժառանգութիւն այլ՝ ինունց բիւրուց դենարաց. յորոց և 'ի հաւիցն կեանս վարէր նա ազնուական և պարկեշտս հանդերձ այլովք կենակից բանասէր արամբք որ 'ի Հելլենացւոց և որ 'ի Հռոմայեցւոց ։ Դուն երբէք բազմէր նա յընթրիս նախ քան զմուտս արևուն. ոչ այնչափ վասն անպարապութեանցն՝ քան թէ առ վատել ստամոքսին. զի և էր իսկ նա կարի զգուշացեալ և ճշգրիտ յամենայն իսկ 'ի դարման մարմ-

նոյն, զի չափով և Թուով վարէր նա և 'ի շփմունս անդամ մարմնոյն և 'ի ձեռմն։ Եւ այնպէս ապա կրԹեալ նա զմոյն մարմնոյն կազդուրեաց և կորովացոյց՝ բաւական 'ի բազմադէմ և 'ի մեծամեծ պայքարս և 'ի քիրտն։

Եւ շնորհեաց եղբօր իւրում զհայրենի տունն. և ինքն չոգաւ բնակեցաւ մօտ 'ի Պաղատին, զի մի՛ յերկայն ուղւոյն տաղտկասցին այցելու սպասաւորք նորա. և հանապազօր յայց առ նա ելանէին դեգերեալք առ դուրս նորա ոչինչ պակաս բազմուԹեամբ քան զԿրասոսին սպասաւորսն՝ զընչաւէտ առն. և քան զՊոմպէոսին՝ զզօրաւորին 'ի բանակի, արք աւագամեծարք երկոքին նոքա և սքանչելիք առաւել քան զամենայն Հռոմայեցիս։ Նա՛ և ինքնին Պոմպէոս՝ սպաս հարկանէր Կիկերոնի. որ և քաղաքական անտեսուԹիւնք մեծապէս օժանդակ եղեն 'ի զօրուԹեան և 'ի փառս Պոմպէի։

Յետ այսորիկ հեստամուտ զօրավարուԹեան բարձին եղեալ Կիկերոնի հանդերձ բազմօք ևս ականաւոր արամբք, ընտրեցաւ նա առաջին քան զամենեսեան. և երևեցաւ նա 'ի պաշտաման իւրում անկաշառ այր և յոյժ արդարակորով։ Եւ պատմեն՝ եԹէ և Լիկինիոս Մակեր այր հաստահարուստ 'ի քաղաքին և Թիկնածեալ ևս 'ի Կրասոսէ, ամբաստանեալ իբրև զող առ իշխանուԹեամբն Կիկերոնի, այնպէս իմն յանձնապաստան կայր յան-

ձին զօրութիւն և յայլոց հոմանին, զի և 'ի ժամու անդ քուէայս արկանելոյ դատաւորացն՝ գնացեալ ինքն 'ի տուն և ըղձլուխն սափրեալ և պատմուճան պայծառ զանձամբ արկեալ՝ իբրու որ յաղթական 'ի դատին, այնպէս անդրէն դէմ եդեալ գնայր 'ի հրապարակն. Նմա ընդառաջ ելեալ Կրասոս մօտ 'ի դաւիթն, և դուժեալ նմա զդատապարտութիւն նորա քուէիւք բոլորիւք, դարձաւ յետս Լիկինիոս և մտեալ յանկողին՝ մեռանէր. և եղև այս 'ի փառս Կիկերոնին, զի փութոյ պնդութեամբ այնպէս ստիկան եկաց ատենին:

Իսկ յայնժամ և Վատինիոս ումն այր դժնեայ և 'ի փաստաբանութեանն արհամարհոտ իշխանաց, և որ պալարալից ունէր զպարանոցն, յառաջ մատուցեալ՝ խնդրէր ինչ 'ի Կիկերոնէ. իբրև նա յանձին չկալաւ և հարուստ ժամ մտախորհ լինէր առանձինն. ասէր այրն՝ եթէ ինքն էր կացեալ զօրավար, ոչինչ այնպէս վարանէր 'ի բանին յայնմիկ. յայնժամ դարձեալ առ նա Կիկերոնի՝ ետ պատասխանի. “Այլ իմ չէ՛ պարանոց այնպէս ստուար„:

Իսկ յորժամ աւուրք երկու կամ երեք մնացին դեռևս իշխանութեան նորա, ածեալ բերին առաջի նորա զՄանիլիոս ամբաստանեալ 'ի գողութեան: Եւ էր այս Մանիլիոս շնորհս գտեալ առաջի խուժանին, իբրու հալածեալ այր 'ի պատճառս Պոմպէի՝ որում և էր նորա բարե_

կամ։ Իբրև որ մի պարապոյ խնդրեաց Մա֊
նիլիոս, շնորհեաց նմա Կիկերոնն միայն
զօր վաղուին. ցասեան ժողովուրդք, քան֊
զի ամովրեցան զօրավարք շնորհել դէմ ա֊
ւուրս տասն. և յատեան իւրեանց կոչե֊
ցին զԿիկերոնն ժողովրդապետք. իբրև ամ֊
բաստանեցաւ՝ խնդրեաց Կիկերոնն ուն֊
կնդրութիւն. և ասէր՝ եթէ ցանգ ինքն
հեզաբար և մարդասիրութեամբ ըստ նե֊
րել օրինացն գնացեալ առ ամբաստա֊
նեալսն, դժպատեհ համարեցաւ ոչ զնոյն
օրինակ գնալ և առ Մանիլիոս, ուստի և
որ մի միայն զաւուրս իշխանութեանն՝ որ
մնայր նմա՝ շնորհեաց առնն, յորում ինքն
դատեացի զնա ըստ իշխանութեանն, քան֊
զի և ապատատան այլում իշխանի առնել
զայն դատաստան՝ արդեօք չիցէ մարդոյ որ
զօրավիգն կալ խնդրեսցէ առնն։ 'Ի բանից
աստի սքանչելապէս փոփոխեցան ժողո֊
վուրդք, և գոհութիւնս գոռոյց գունակ
և օրհնութիւնս կարդային Կիկերոնին, և
աղաչէին ևս հոլանի կալ Մանիլիոսի.
մտադիւրագոյնս յանձին կալաւ Կիկե֊
րոնն, և մանաւանդ՝ 'ի շնորհս Պոմպէի որ
յայնժամ չէր 'ի քաղաքին. և կայր մի֊
անգամ հրապարակախօս լինէր նա փու֊
թոյ պնդութեամբ ընդդէմ թիկնածուաց
աւագպետութեանն և յաջողկոտացն Պոմ֊
պէի։

Բայց Կիկերոնն 'ի հիւպատոսութիւն
ևս ամբարձաւ, ոչ միայն 'ի կուսակցաց
անտի աւագանւոյն, այլ և 'ի ժողովրդա֊

կանացն 'ի շահ օգտի քաղաքին . և երկոքին ևս կողմանք Թեսակոնեցին 'ի բանն 'ի պատճառաց ատի : Քանզի փոփոխութիւն կարգի քաղաքին՝ որ 'ի Սիղլայէ՝ Թէպէտ և 'ի սկզբանն օտար երևէր, սակայն և յայնժամ՝ 'ի ժամանակէ անտի և 'ի սովորութենէն Թուէր իմն խուժանին հաստատութիւն աներկևան առեալ փոփոխութեանն այնմիկ . յայսր ամենայնի վերայ էին էին և որ գուն գործէին դըրդուել փոխել զայն, ոչ 'ի լաւագոյն ինչ պէտս քաղաքին, քան Թէ 'ի շահ օգտի անձանց . քանզի և Պոմպէոս յայնժամ ընդդէմ Թագաւորաց 'ի Պոնդոս և 'ի Հայոց աշխարհին մարտ եդեալ կռուէր . և 'ի Հռոմ ևս չէր բաւական զօր 'ի դիմի հարկանել խազմարար որերոյն . որոց և պարագլուխ՝ այր ոմն ժպիրհ և յանդուգն՝ ձեռներէց 'ի մեծամեծս, խորամանկ և նենգապատիր, Լուկիոս Կատիլինաս անուն նորա : Սա այս այր՝ բայց յայլոց մեծեղեռն չարեաց, բամբասեցաւ և 'ի բըռնաբարութեան կուսի դստերն իւրոյ, դարձեալ և յեղբայրասպանութեան . և զանգիտեալ վասն այնորիկ քարշիլ յատեան դատաստանի, ժտեալ իւկ էր 'ի Սիղլայէ գրել ընդ տարագիրս զեղբայրն զայն զիւր՝ իբրու կենդանի : Արդ ապիրատ մարդկանն զայս այր կալեալ իւրեանց առաջնորդ, բայց յայլոց ինչ հանդիսից դաշնակուռ ուխտին ընդ միմեանս,, առեալ փողոտե֊

ցին և զայր ոմն , և միաբան առ հասարակ ճաշակեցին 'ի մարմնոյ նորա :

Յանժամ և զբաղումս 'ի պատանեաց քաղաքին եղծեալ խանգարեալ այս այր , պատրաստեալ առն առն 'ի նոցանէ հա_նապազ խնձոյս բերկրանաց և գիներբուս և տռփանս զկանանց . և անխնայ տայր բաշխէր իւրաքանչիւր զպէտս ծախուցն վասն այնոցիկ : Անդ ողջոյն Տիւրրենիա խլրտեալ յուզէր յապստամբութիւն , ըղ_նոյն և մասն մեծ Գաղատիոյ յայսկոյս Ալպեանց , և Հռոմ ինքնին 'ի վտանգ ան_հնարին պաշարեալ կայր նորութեանն այ_նորիկ՝ 'ի պատճառս անհաւասարութեան գոյիցն . քանզի որք աւագք 'ի փառս և 'ի հանճար՝ չքաւորեալ կային վատնեալք զինչս 'ի թատրս տեսարանաց և 'ի կոչունս խրախճանաց և 'ի հետամտութիւնս բար_ձից և 'ի շինութիւնս ապարանից . ուստի և ընչաւէտութիւն կուտեալ մթերեցաւ յանարգս որերոյն և 'ի սինլքօրս . որպէս զի և խուռն մի սստանութեան պէտք էին վասն իրացն , և այր որ ձեռներէց չա՛ռ իսկ էր 'ի ժամանակին առնուլ տապալել ըղ_քաղաքն . այն որ և անձամբ անձին ախ_տակրեալ իսկ էր :

Համայն և այնպէս՝ կամեցաւ Կատի_լինաս ամուրս իմն հաստել ունել անձին անկասկածելի և անխաբ . ուստի և հետա_մուտ հիւպատոսութեանն լինէր . ակն ևս ունէր նա հաստատ ընտրութեանն 'ի միա_

ւին ընդ Գայիոսի Անտոնիոսի, այր ոչինչ բաւական առանձինն պարագլուխ կալ հերձուածոյ՝ ո՛չ 'ի լաւն և ո՛չ 'ի վատթարն. սակայն և մեծապէս զօրավիգն լինէր՝ որ 'ի նոյն համարձակեսցի:

Յայնժամ քաջիկ խելամուտ իրացն այնոցիկ եղեալ բազումք 'ի լաւորերոյն, դըրդեցին զԿիկերոն հետամուտ լինել բարձին այնմիկ. զոր և մտադիւրագոյնս ընկալեալ ժողովուրդք՝ վրէպ 'ի յուսոյն առնէին զԿատիլինաս. և ընտրեալ կարգեցին զԿիկերոն և զԳայիոս Անտոնիոս. Թէպէտ և միայն էր Կիկերոն յամենայն 'ի հետամուտսն ծնունդ հօր յասպետեան կարգէ, և ո՛չ 'ի Սենկղիտոսեան:

Արդ զանխուլ տակաւին կայեալ 'ի խուժանէն դաւաճանութիւնք Կատիլինայ, բայց ինքնին Կիկերոն 'ի սկզբան հիւպատոսութեանն մեծամեծ պատահեցաւ հակառակութե՟ց՝ նախաշաւիղ հանդերձելոցն մարտից: Քանզի կէս մի յայնժամ արքն՝ որ ըստ Սիղղայի օրինացն ոչ ինչ գամագիտ եղեն յաւագութիւնս, (և չէին իսկ նոքա նուաղունք ոմանք և ո՛չ 'ի զօրութենէ ինչ անբաժք,) հետամուտ յայնժամ յիշխանութիւնս եղեալք, դուն գործէին 'ի հրապարակախօսութեան իւրեանց յինքեանս զխուժանն յանկուցանել. (Թէպէտ և ասէին իսկ բազում ինչ ճշմարիտ և արդար ընդդէմ բռնակալութեան տէրութեանն Սիղղայի. սակայն և յանպէտս և 'ի տարաժամու յուզեալ

աղմկէին զքաղաքն) : Եւ կէս մի դարձեալ՝ անդուստ ժողովրդապետք՝ օրէնս 'ի ներքս տային Ճահաւորակի 'ի նոյն խնդիր . քանզի խնդրէին ատեան իմն հաստատել զատանապետութեան զարանց ինքնիշխանից , և տէարք լինէին նոքա ողջոյն Իտալիոյ և ողջոյն Ասորւոց , և որչափ ինչ միանգամ այն ինչ տիրացաւ Պոմպէոս , և զի բաւական լինէին տասունքն այն 'ի վաճառ զգոյսն հանել զհասարակաց , կոչել 'ի դատաստան զոր ոք և միանգամ կամեսցին , առաքել վտարանդիս , բազմաժողով գործել զքաղաքս , առնուլ արծաթ 'ի տանէ գանձուն , հանդէս զօրականին առնել և պահել՝ որչափ և պիտոյն իցէ :

Յայնժամ ապա բաց յայլոց ոմանց ականաւորաց՝ որ թիկունս ետուն օրինացն այնոցիկ, առաւել քան զամենեսեան ձեռն տայր հաւանութեան Անտոնիոս իշխանակից Կիկերոնին . ակն ունէր լինել ինքն մի 'ի տասանց անտի : Բայց և թուէր այնպէս, եթէ գիտակ ինքն գոլով դաւանացն Կատիլինեայ , չէր ինչ դժկամակեալ ընդ բանն . զի և էր իսկ ինքն անկեալ ընդ ծանր պարտուք՝ և յայսմանէ ապա առաւել քան զամենայն զահի հարեալ էին լաւք քաղաքին :

Ապա Կիկերոնի առաջին ախտիս այսմիկ դարման տարեալ, տայր սահմանել վասն Անտոնիոսի զեպարքոսութիւն զՄակեդոնիոյ . և ինքն հրաժեշտ տայր 'ի Գաղատիոյ՝ զոր տային նմա . և այնպէս 'ի շը_

Նորհաց աստի յինքն զմիտս յանդոյց զՍնտոնիոսի · և ած դրդեաց զնա՝ իբրև դերասան վարձկան՝ Թեւակից կալ 'ի չահ հայրենեացն ։ Զայսօրինակ նա որսացեալ զայրն, և ամոք և համբոյր յարդարեալ զնա, ապա մեծապէս խրախուսեցաւ Կիկերոնի համառակ ամբառնալ խաղմարար մարդկանն ։ Ուստի և յարուցեալ յայնժամ 'ի Սենկղիտոսին դատապարտ առնէր զօրէնսն զայն, և այնպէս պակուցեալ զարհուրեցոյց ինքնին զօրէնսդիրսն, զի և ոչ ինչ ժառեցան ընդդէմ բանս բարբառել ։

Իսկ իբրև անդրէն միաբանգամ նոքա գօտեպինդք եղեն 'ի հաստատութիւն օրինացն, և կազմեցան պատրաստեցան և ձայն եւ եռուն հիւպատոսաց յանդիման լինել ժողովրդեան, ոչինչ երկուցեալ զարհուրեցաւ Կիկերոն · եւ հրաման Սենկղիտոսին զհետ իւր խաղալ · ապա յառաջ մատուցեալ՝ ոչ զօրէնսն զայն միայն տայր հերքել մերժել, այլ և զժողովրդապետսն գլխովին միջաբեկ յուսահատուր և յայլ ինչ եւ գործոց կացուցանէր · այնպէս ուրեմն նկուն եղեալ պարտեցան 'ի Ճարտարաբանութեան առն ։ Քանզի առաջին այս այր վարժեաց ուսոյց Հռոմայեցւոց, քանի՞ոն ճարտարախօսութիւնն բերկրանս 'ի գեղեցիկ խնդիրն յաւելուցու · և զիա՞րդ ցանգ անվանելի կացցեն իրաւունք՝ եթէ անսատերիւր և դիպողագոյնս կարգաւ 'ի դէմս բերցին · և զիա՞րդ դարձեալ խնամոտ առաջնորդի քաղաքին պէտք իցեն միշտ

ընտրել արդեամբք զլաւն փոխանակ չողոմութեանն. և բանիւք ապա գուն գործել բառնալ զդժպատեհն 'ի պիտանւոյն:

Հաւաստիք ևս գեղեցիկ՝ համոզակեր նորա բանիցն 'ի ներքս ընծայեցան 'ի դէպս անդ տեսարանացն առ նորա հիւպատոսութեամբն: Քանզի յառաջ ժամանակաւ ասպետաց խումբ կացեալ խառն 'ի խուռն 'ի թատերս ընդ խուժանին 'ի զննել խաղուն, առաջին պատուադիր նոցա՝ որոշեալ զնոսա 'ի խուժանէն՝ եկաց ինքնին Մարկոս Ոթոնիւ զօրավար, տուեալ նոցա ուրոյն տեղի 'ի զննարանին. զոր և մինչև ցայսօր ժամանակի ունին նոքա: Անարգութիւն զայս խուժանին համարեալ, իբրև անդանօր 'ի հանդիսին եկն երևեցաւ Ոթոնիւ, յոտնհարութիւն առնն խուժանն առիչ տուեալ սուլէր, իսկ անդուստ և ասպետք 'ի ծափս և 'ի կայթս ժողովեցին զնա: Իբրև զայն ետես խուժանն, ուժգին ևս արձակէր զսուլել. անտի և ասպետք մեծապէս ևս հարին ծափս. և ապա միմեանց ընդդէմ յիշոցնատուք ևս լինէին. և էր անդ առհասարակ թատրն 'ի մեծ աղմուկ շփոթից: Լուր առ Կիկերոնիւ հասեալ բանին, ընթացաւ 'ի տեսարան անդր. և կարդայր ձայն տայր խուժանին 'ի մեհեանն Ենիւայ. անդանօր ձայն բարձեալ սաստէր նոցա, և այնպէս իմն կշտամբեաց հրահանգեաց, զի և ինքնին նոյն խուժան դարձ 'ի թատրն արարեալ ծափս մեծամեծս հարկանէին Ոթոնիւ, և այր զարամբ

Ելանէին ընդ սալէտս՝ փառս և շուք դնել աւագ առնն :

Բայց յայնժամ դաւադիրք Կատիլի-նեան՝ որ յառաջն զահի հարեալ պակեան անդրէն միւսանգամ խրախուսեալք 'ի մի վայր խմբեցան, և այր զընկեր քաջալերէր մեծապէս զօրութեամբ 'ի գործն նահա-տակել, մինչև Պոմպէի դարձ արարեալ իցէ . քանզի և համբաւ հնչէր խաղալ առն հանդերձ բանակաւն : Եւ յուղէին դըր-դէին զԿատիլինա առաւել ևս զօրականք զինուորեալք առ Սիղղայի և ցանուցիւք ողջոյն ընդ Իտալիա . իսկ բազմագոյնք 'ի նոցանէ և քաջամարտիկքն օժտեալ կային ընդ քաղաքս Տիւրրենիոյ, նորա յերա-զեալ նոքա աւարս և առ և ապուր զդոյից մԹերելոց : Քանզի զօրավար իւրեանց կա-լեալ սոցա զՄալլիոս զմի 'ի հոյակապից անտի արանցն Սիղղայի, խմբեցան և նոքա 'ի դաւանան Կատիլինեայ, և եկին հասին 'ի Հռոմ՝ զօրավիգն իւրեանց քուէիւք լի-նել առն, որ անդրէն կրկին հետամուտ եղև հիւպատեան բարձին, եդեալ 'ի մտի սպանանել զԿիկերոնն 'ի շփոթս ընտրու-Թեանն :

Սակայն Թուէր և դից ինքնին յայտնել զիրսն ժամանակին՝ 'ի գետնաշարժից ան-տի և 'ի շանԹից կայծականց և 'ի ցնորից խօլականաց . իսկ հաւատքն՝ որ 'ի մարդ-կանէ՝ Թէպէտ և Ճշգրիտք ևս, բայց չև ևս բաւականք էին 'ի յաղԹահարել զայր այն-պիսի հոյակապ և զհաստահարուստ իբրու

զԿատիլինա ։ Ոյր աղագաւ և Կիկերոնն յապաղեալ զօր ընտրութեանն, կոչեաց ինքնին զԿատիլինա 'ի Սենեկլիտոսն, և հարցափորձ լինէր վասն իրացն համբաւելոյ ։ Ընդ անոր մտախորհ եղեալ Կատիլինա, եթէ էն իսկ 'ի Սենեկլիտոսին բազումք ըղձակաթք 'ի նորութիւնս. միանգամայն և խրոց դաշնաւորացն հանդէս կամելով 'ի դէմս բերել և համարձակութիւն, տայր պատասխանի Կիկերոնին հեգ և համբոյր ։ Քանզի ասէր. " Եւ զի՞նչ ապա գործեմ չար, եթէ երկուց գոլով մարմնոց՝ մին վտիտ և ախտակիր, բայց ունակ գլխոց. և միւսն՝ թէպէտ և անգլուխ, բայց կորովի և յաղթ, առեալ ես 'ի դորա վերայ դնեմ գլուխ,, ։ 'Ի յայս առեղծուած օրինակեալ նա զՍենեկլիտոսն և զխուժանն, առաւել ևս երկեաւ յայնժամ Կիկերոն. ուստի և առհասարակ Ճոխք քաղաքին և բազումք ևս 'ի պատանեաց ուղեկից նմա եղեն 'ի տանէն 'ի դաշտ անդր, իսկ ինքն ամրածածուկ եղեալ 'ի պատեան զրահի, մասն զմի բաց թողոյր՝ քակեալ զկարան բաճկոնին առ ուսովքն, տալ գիտել տեսանելեացն զանձինն վտանգ. յորմէ և մեծապէս սրտնեալք՝ խռնեալք նեղեալք պատէին զնովաւ ։ Եւ ապա 'ի վերջէ արկեալք քուէայս, անդրէն միւսանգամ 'ի բաց մերժեալք զԿատիլինա, ընտրեցին 'ի հիւպատոս զՍիղանոս և զՄուրենա ։

Իսկ իբրև ո՛չ յետ բազմաց խմբեցան ընդ Կատիլինեայ զօրականքն Տիւրրենիոյ,

և մերձեցաւ ևս օր ժամադիր խորաման_
կեալ դաւանոցն, յայժամ զհատարակ
գիշերաւ չոքան 'ի տուն անդր Կիկերոնին
այք երեք աւագանեծայք և հաստահա_
րուստք հռոմայեցւոց՝ Մարկոս Կրասոս,
և Մարկոս Մարկեղղոս, և Սկիպիոն Մե_
տեղոս. բախեցին զդուրսն և ձայնեալք
զդռնապանն հրաման տան նմա գնալ զար_
թուցանել զԿիկերոնն. և ազդ նմա զգա_
լըստեան նոցա առնել: Եւ էր բանն այս_
պիսի: Յետ ընթրեացն դռնապան Կրա_
սոսի եկն և մատուցանէր նմա նամականի,
տուեալ նմա յանծանօթ առնէ. կէսք 'ի
նամականւոյն գրեալ առ այլս ոմանս, և
մի ևս թուղթ առ Կրասոս ինքնին՝ առանց
անուան գրողի. զայն թուղթ միայն ընթեր_
ցեալ նորա և իրազեկ մեծի կոտորածին
եղեալ հանդերձելոյ 'ի ձեռն Կատիլի_
նեայ, և յորդորեալ ևս ինքն ելանել գաղտ
արտաքս 'ի քաղաքէն. ոչինչ լուծեալ
զկնիք զայլոց թղթոցն, անդէն ձեպով
գայ առ Կիկերոն՝ պակուցեալ յահագին
բօթոյն. միանգամայն և զանձն սրբել 'ի
բամբասանացն որ 'ի բարեկամութենէ ան_
տի խուրմէ ընդ Կատիլինեայ:

Արդ յայնժամ յարուցեալ Կիկերոնն
և քաջիկ ևս 'ի խորհուրդ մտեալ վասն ի_
րացն, այն ինչ առաւօտն մերկանայր, խըմ_
բէր զՍինկղիտոսն և առեալ ընդ իւր զնա_
մականին՝ բաշխէր իւրաքանչիւր առ որս
գրեալն էին. հրաման տայր առն առն ըն_
թեռնուլ յատենին: 'Ի նոյն բան կրթե_

ցան Թուղթքն բոլորեքեան, և զնոյն դաւանայն գոյժ տային: Իբրև անդ և Կուինտոս Արրիոս որ կացեալ էր զօրավար, լուր տայր զզօրականէն խմբելոյ 'ի Տիւրրենիա, և պատմէին ես՝ զի և Մալլիոս բազմաձեռն գնդաւ կազմ կայ առ քաղաքօքն՝ դէտ ակն կալեալ համբաւոյն առ 'ի Հռովմայ: Ապա խորհուրդ հաստատեալ ծերակուտին՝ ապաստան զամենայնն առնէր 'ի կամս հիւպատոսացն. և իշխանութիւն տայր նոցա զամենայնն հնարս հնարել ըստ խմատութեան իւրեանց 'ի կանգնումն և 'ի փրկութիւն քաղաքին: Բայց ծերակոյտն ոչինչ ստէպ սովորեցաւ գործել այնպէս. այլ 'ի ժամանակի միայն կարևոր չարեացն 4:

Ապա զիշխանութիւն զայն զանձամբ առեալ Կիկերոնի, զարտաքոյն Հռովմայ ապապարէր 'ի Կուինտոս Մետեղոս. և յանձն իւր առնոյր զքաղաքն. և շրջէր գնայր նա 'ի տունջեան պարառեալ 'ի բազմամբոխ մարդկանէ. զի և եկեալ մտեալ 'ի հրապարակն՝ գրաւէր ունէր նա իւրով գնդաւն վայր շատ: Իսկ անդուստ Կատիլինա ոչ ևս ժուժեալ, խորհուրդ խորհեցաւ յառնել դիմել արտաքս և գընալ առ Մալլիոս և առ զօրն, և պատուէր տայր Մարկիոսի և Կեթեգոսի, զի վառեալք 'ի սուսերս՝ վաղաքայ ընդ առաւօտն գնացեալք 'ի դուռն Կիկերոնի իբրու յայցորել, անկցին 'ի վերայ և սպանցեն զնա: Բայց Փուլվիա մի 'ի կանանց անտի

հոյակապին Հռովմայ՝ գնացեալ գիշերի առ Կիկերոնն, իրազեկ դաւոյն առնէր զնա. և կայր և խրատէր անձնապահ լինել ՚ի Կեթեգոսէ և ՚ի Մարկիոսէ: Իբրև չոքան նոքա անդր ընդ արշալոյսն, և արգելան ՚ի մտիցն, զայրացեալք աղաղակ բառնային առ դուրան. որպէս զի և առաւել ևս կասկածելիք գտան նոքա:

Ապա յետ այնորիկ ելեալ արտաքս Կիկերոնն, ՚ի խորհուրդ խմբէր զՍինկղիտոսն ՚ի տաճարի անդ Առկայացուցանողին Արամազդայ. որում Հռոմայեցիք անուն կարգան Ստատօռ, որ կայ յելս նուիրական ուղւոյն, ուր ելանեն ՚ի Պաղատին: Անդանօր խմբեցաւ և Կատիլինա հանդերձ արամբք՝ իբրև ՚ի չքմեղս վասն անձին. բայց ՚ի Սինկղիտոսէն հանդարտեաց և ոչ ոք նստել ընդ նմա. այլ առհասարակ զատեան ՚ի նստարանէն նորա: Իբրև սկիզբն առնէր խօսից Կատիլինա, արգելեալ խափանեցաւ ՚ի յուզելոյ ամբոխից: Ի վերջէ ապա յոտն կացեալ Կիկերոնին, հրաման տայր Կատիլինայ յառնել ելանել ՚ի քաղաքէն. քանզի և պարտ է ասէր ընդ երկոսին ընդ նոսա լինել միջնորմոյն. զի մին՝ բանիւք վարէ զքաղաքն, և միւսն՝ զինու:

Ապա Կատիլինա ելեալ փաղփաղակի ՚ի Հռովմայ հանդերձ երեքհարիւր վառելովք, և հանդերձ վարոցաւորօք ըստ օրինի իշխանին, և հանդերձ տապարօքն և դրօշակօք, չոքաւ առ Մալլիոս. և անդ խմբեալ քան հազար զօրականին, գնայր

շուրջանակի ընդ քաղաքս քաղաքս, դրդէր դրդուէր յապստամբութիւն։ Իբրև այսպէս մարտ հրատարակեցաւ պատերազմին, առեալ զԱնտոնիոս արձակեցին 'ի կռիւն։ Իսկ որք միանգամ կաշառաբեկք 'ի Կատիլինեայ թողան 'ի քաղաքին, զնոսա առեալ ժողովէր խմբէր և խրախուսէր Կոռնելիոս Լենտղոս՝ մականուանեալն Սուռաս՝ այր տոհմիկ, բայց և չարաչար վարեալ կեանս. և առ անժուժկալութե կրիցն յառաջ ժամանակաւ 'ի բաց հանեալ 'ի Սինկղիտոսէն. և էր նա երկրորդ անգամ կացեալ զօրավար, ըստ որում և սովորեցան՝ որք անէնչային միւսանգամ ունել զաւագութիւն Սինկղիտոսին։ Եւ պատմեն՝ մականուն զայն Սուռա առնուլ նորա 'ի պատճառաց աստի։ Սա առ Սիղղայիւ կացեալ գանձաւոր և ծախեալ զբրամ բազում 'ի գանձէն, սրտմտեալ Սիղղաս պահանջէր համար 'ի նմանէ 'ի Սինկղիտոսին. նա յանդիման եղեալ ընաւ իսկ յանհոգս և արհամարհոտ ժպրհութեամբ, ասէր չտալ համարս, այլ յանդիման զսրրունան առնել. զոր և մանկունս սովորեցաւ գործել 'ի սխալել իւրեանց 'ի գնտակախաղին. ուստի և անուն կարդացին նմա՝ Ս------, քանզի Հռոմայեցիք Ս------ կոչեն զսրունան։ Ապա և միւսանգամ դատախազեալ յատենի և կաշառեալ զդատաւորս 'ի դատաւորացն, իբրև յաղթեցաւ նմա արձակել յազատութիւն յերկուց միայն քուէից, ասէր՝ ընդ վայր վատնել

զոր 'ի ներքս մատոյց նա միումն յերկուց անտի դատաւորացն ․ քանզի և միոյն շատ իսկ էր նմա արձակել ազատ ։

Այսպիսի ոք էր այրն ․ որ և բաց 'ի Կատիլինեան դրդուեթենէն՝ և երաշխոյս ես զառածեալ էր նա 'ի սուտակապաս ըղձից անտի և 'ի կախարդաց, որ 'ի նուագածեալ տալս իմն և պատգամս սափասոսս, իբրու որ 'ի Սիպիլլեայց քաղեալք մատենից և նախաքարոզ եղեալք ․ երից ոմանց Կոռնելիոսից միապետել 'ի Հռոմ ․ որոց երկուք արդէն 'ի գլուխ տարեալ ըղձմանն, այն է՝ Կիննաս և Սիւղղաս, և երրորդին յայնժամ դիք 'ի ներքս զմիապետութիւն բերեն Կոռնելիոսին ․ և պարտ և արժան է նմա առնուլ զայն, և մի ժամավաճառ եղեալ աղարտել եղծանել իբրու զԿապիտոլինս ։

Այսպ յայնժամ Լենտղոս մտայոյզ ոչ 'ի դուզնաքեայս ինչ եղեալ և 'ի հետևակս, այլ հաստատեցաւ համբուն 'ի մահ առհասարակ զՍինկղիտոսն վարել, և յայլոց ես քաղաքայնոց ըստ բաւականի ձեռինն ․ առ այս՝ հրկէզ և զքաղաքն առնել, և խընայել և ո՛չ յոք՝ բայց յորդւոցն Պոմպէի ․ քանզի ասէր ունել զնոսա 'ի դիպահոյ իբրև պատանդս՝ խօսել պայմանս հաշտութեան ընդ Պոմպէի ․ որ ըստ ճշգրիտ համբաւոյն դարձ արարեալ գայր նա 'ի մեծէ արշաւանէն ։

Արդ սահմանեցաւ 'ի գործ դառնութեանն գիշեր մի ժամանակաւ 'ի Կռոնոսեան

տօնից անտի. և տարան Թմբուցին 'ի տաճն Կեթեգոսի միանգամայն և սուսերս և քուղս և ծծումբ. և ընտրեցին կացուցին արս հարիւր և բաշխեցին 'ի կողմանս կող-մանս Հռովմայ. և տան տան հրամայեցին կողմն մի, զի 'ի սուղ ժամանակ հուր հա-րեալ միանգամայն 'ի բազմաց, հրձիգ ըզ-քաղաքն արասցեն յամենայն կողմանց. էին էին և այլք կացեալք առ ջրմուղս, զի սպանցեն զեկեալսն զ ջրոյ:

Իբրև այս այսպէս հանդերձեցաւ, գտան 'ի ժամուն 'ի Հռոմ քաղաքի դեսպանք երկու յԱլլոբրիգեցւոց անտի. և էր այս ժողովուրդ մեծապէս հարստահարեալ յայնժամ 'ի Հռոմայեցւոց տէրութենէն: Ոյր ապագաւ և Լենտուլոս և արբանեակքն զմտաւ ածեալ 'ի նոցա ձեռն դրդել յա-պըստամբութիւն զԳաղատիա, առեալք զնոսա 'ի հաղորդութիւն խորհրդոց դաւա-նացն, և տային նոցա նամակ մի գրեալ առ ծերակոյտ նոցա, և նամակ մի ևս առ Կատիլինա. ձեռն յանձին հարկանէին ծերակուտին նոցա վասն ապստամբութեան Գաղատիոյ. և յորդոր 'ի ներքս տային Կատիլինեայ յապստամբութիւն կարդալ զծա-ռայից խուժան, և ձեպ տալ փութալ 'ի Հռոմ կոյս. և արձակէին ևս ընդ նոսա առ Կատիլինա զՏիտոս զոմն Կրոտոնիա-տէս հրեշտակ նամակաբեր:

Բայց 'ի ժամանակին յայնմիկ արք խոր-հրդակորոյք զբանիւք ընդ միմեանս ան-կեալ վասն իրացս և 'ի քնին մտեալք, մա-

նաւանդ 'ի գինւոջ և 'ի մէջ կանանւոյն , անդուստ Կիկերոնի որ անխոնջ հետախոյզ էր ամենայնին մեծաւ խորհրդով և զգօնութեամբ , էին էին նորա և լրտեսք արտաքոյ բազումք հետաքննիք յամենայնին , և 'ի բանս եւ զանխուլս մտանէր նա ընդ բազմաց արտաքնայարդար դաւակցացն՝ յորս և վստահն էր , այս Ճշգրիտ և համօրէն 'ի վերայ եկաց նա բանադնաց ընկերոյն նոցա ընդ եկացն դեսպանաց: Այր աղագաւ և 'ի դարանի նստուցեալ արս 'ի գիշերի , ձերբակալ առնէր զԿրոտոնիխաւէս և զնամականին . 'ի նոյն գործակից ըմկէին դաղտաբար և Ալոբրոգեցիք :

Ապա ընդ արշալոյսն առաւօտուն խըմբեալ զՍինկղիտոսն 'ի տաճարին միաբանութեան , և ընթերցեալ զնամականին , տայր ունկնդրութիւն և գուշակացն . անդանօր և Սիլլանոս Յունիոս վկայէր՝ լսել ոմանց 'ի նմին իսկ 'ի Կեթեգոսէ , ասել , եթէ երից հիւպատոսաց և չորից զօրավարաց հասանէ մեռանել . և յայսպիսեաց աստի պատմէր յայնժամ և Պիսոն հիւպատեան այր : Ապա Գայիոս Սուլպիկիոս մի 'ի զօրավարաց անտի առաքեալ 'ի տունն Կեթեգոսի , գտանէ անդանօր փքինս շատ և զէնս այլ , և առաւել եւ՝ վաղակաւորս և դաշոյնս առհասարակ այրասուրս : Յայնժամ վՃիռ Սինկղիտոսին տուեալ անպատուհաս արձակմանն Կրոտոնիխատեայ , զի յանդիման զամենայն մերկացի ատենին , յայնժամ Լենտուլոս նշաւակեալ՝ ինքնին

հրաժեշտ տայր յաւագութենէն, (զի և
էր իսկ այրն զօրավար 'ի ժամանակին). և
'ի բաց զպատմուճանն եդեալ՝ արկանէր
զեւրեաւ հանդերձ զտառապելոյ։ Իսկ զնա
և զարբանեակսն առեալ 'ի ձեռս տային
զօրավարացն, 'ի դիպահող կացուցեալ ա-
ռանց կապանաց։ Ընդ երեկս կարճանէր
օրն, և անդ ժողովուրդք բազմամբոխ դէտ
ակն կալեալ մնային արտաքոյ. եւ 'ի դուրս
Կիկերոնէ 'ի Սինկղիտոսէն, և 'ի վեր զբանն
հանեալ խուժանին, անցանէր ընդ այր հան-
դերձ նոքօք 'ի տուն մի բարեկամին իւրոյ,
որ անդ մօտ կայր. քանզի 'ի տան իւրում
ժողովեալ խմբեալ էր կանանին՝ կատա-
րեալք 'ի նմա զնուիրական պաշտամունսն
զգաղանիս 'ի պատիւ դիցուհւոյն, որում
անուն կարդան Հռոմայեցիք Պօնա, և
Հելլէնացիք՝ Ղինէքէա. և ամի ամի զոհ
զոհեն նմա 'ի տան հիւպատոսին կին նորա
կամ մայր նորա, և հանդիսակիցք դան
անդր և Վեստեան կուսանք։
Արդ 'ի տուն յայն մտեալ Կիկերոնի,
և նուազունք յոյժ ընդ նմա, կայր և մտա-
խորհ լինէր 'ի սրտի իւրում՝ զինչ՞ դա
վճարեսցէ ընդ դաւաճիր որեարն։ Քան-
զի և խորշէր իսկ 'ի վերջին պատուհասէ
արանցն՝ որում արժանի իսկ էին նոքա
առ անհնարին չարսուն. և վարանէր տագ-
նապէր ոչ 'ի անկակից միայն հեզութենէն,
այլ և զի մի թերևս կարծեսցի զեղծանել
իշխանութեամբն, և վայրենանալ առ այն-
պիսի որեար աւագ և տոհմիկ. որոց և էին

Իսկ հաստահարուստ բարեկամք 'ի քաղաքին։ Բայց և անդուստ զանդիմանեալ խիղճայր 'ի մօտալուտ վտանգէն, եթէ երբէք մարդասիրագոյնս գնասցէ ընդ նոսա։ Քանզի պատուհասս տարեալ արանցն ոչ մահուչափ, ոչինչ արդեօք հանդարտեսցին նոքա. նա և սաստիկ ևս աղուացեալք ժպրհեսցին յամենայն լրբութիւն, զնորոգ զայն կկրան զցասմանն՝ բարդեալք 'ի հին չարութեանն։ Առ այս՝ և այր անարի յանդիմանեսցի նա և վատասիրտ. քանզի և անշուշտ ոչ 'ի քաջաց ոք և յարեաց աւելին ժողովուրդք զԿիկերոնիւ։

Իբրև այսպէս 'ի մեծ վարանման տագնապէր Կիկերոն, յայնժամ դէպք հրաշալի 'ի զոհսն պատահէր կանանցն։ Քանզի 'ի վերայ սեղանոյն, ուրանօր կրակն երևէր շիջեալ, անդրէն 'ի գաղափոյն և 'ի խանձողացն բոց հատանէր մեծ և լուսաւոր. իբրև այլք 'ի կանանցն զահի հարան, նուիրական կուսանքն պատուէր ետուն Տերենտեայ կնոջն Կիկերոնի՝ գնալ վաղվաղակի առ այրն և ասել նմա՝ բուռն ըղգործոյն հարկանել զոր խորհեալն է 'ի փրկութիւն հայրենեացն. իբրու որ դիցուհւոյն ինքնին զմեծն զայն բորբոքել բոց՝ ազդարար նմա փրկութեան և փառաց։ Իսկ Տերենտիա (քանզի և չէր իսկ նա կին անարի և վատասիրտ, այլ կին պատուասէր. և որպէս ասէ իսկ ինքն Կիկերոն, առաւել մխէր 'ի քաղաքական գործս առնն, քան թէ զառտնինան հաղորդէր

ինչ նմա), գնացեալ պատմեաց առն իւրում զայսոսիկ և դրդեաց զնա ընդդէմ արանցն: Զնոյն յորդորէին զնա և Կուինտոս եղբայր նորա և Պոպղիոս Նիգիդիոս՝ ընկեր նորա յիմաստասիրականին. և վարէր իսկ Կիկերոնի զնոյն Պոպղիոս 'ի բազում գործս քաղաքին և 'ի մեծամեծս:

Ապա յաւուրն երկրորդի խորհուրդ առեալ Սինկղիտոսին վասն պատուհասի արանցն, առաջին Սիղղանոս հարցեալ՝ տայր խորհուրդ բանտարգել զարսն առնել և անդանօր զվերջինն ածել նոցա պատուհաս: Յայնժամ և առհասարակ ըստ նմանէ մի առ մի ձեռն տային խորհրդոյն հաւանութեան, մինչև 'ի Գայիոս Կեսար, որ և եկաց նա իշխանապետ: Էր նա յայնժամ պատանի և սկիզբն առեալ 'ի բարձրանալ. այլ հնարաւոր իմաստութ̃ն և յուսով ակնկալութեանն այնպիսի կալաւ ուղի, որով և յաջողեցաւ նա ապա 'ի միապետութիւն առնուլ շրջել զՀռոմայեցւոց կարգն. և յայնժամ խելամուտ լինէր և ոչ ոք. բայց Կիկերոնի մեծապէս կասկածէր վասն առնն. սակայն չէին նմա 'ի ձեռս հաւաստիք բաւական 'ի նշաւակել զայրն. և բազումք ևս ասէին՝ եթէ և Կեսար ինքնին վայրիկ մի ևս ձերբակալ լեալ էր, բայց ճողոպրեցաւ 'ի Կիկերոնէ. և կէսք ևս ասէին՝ կամաւ Կիկերոնի զանց առնել զնովաւ և չլսել գուշակացն նորա առ ահի բարեկամացն նորա և զօրութեանն նորա: Քանզի և յայտնի իսկ՝

զօրավիգն առաւել այն բարեկամք կացին 'ի փրկութիւն Կեսարու, քան թէ Կեսար 'ի պատուհասն նոցա :

Արդ և սմա յայնժամ կարգ հասեալ տալ զկարծիսն, նա յոտն կացեալ ասէր՝ ոչ մահու պատուհաս կապել արանցն, այլ զգոյս նոցա յարքունիս առնուլ և արկանել զնոսա յոր և քաղաք Խոալիոյ կամեսցի ինքնին Կիկերոնն, և անդանօր 'ի կոճեղս ունել զնոսա մինչև 'ի վանելն Կատիլինեայ: Եւ քանզի մեծապէս դթութեան էր խորհուրդն, և քաջաբան առաւել՝ որ զխորհուրդն զայն բարբառեցաւ յայնժամ, անդուստ և Կիկերոնն ինքնին ոչ սուղ ինչ օժանդակեաց նմա. քանզի յոտն կացեալ հաւանէր, և որ խօսեցաւ 'ի կողմն առաջին խորհրդոյն, սոյնպէս և երկրորդին յայնժամ: Ուստի և ամենայն բարեկամք Կիկերոնին՝ օգուտ նմա զխորհուրդն գիտելով զԿեսարու (իբրու նուազ բամբասել նմա՝ ոչ 'ի մահ զարսն վարելով), ձեռն ետուն և նոքա՝ որպէս զի և Սիլղանոս ինքնին յայնժամ փոխեալ 'ի մտացն զառածանէր. ասէր՝ և ոչ ինքն մահու խորհուրդ վասն արանցն խորհի. իբրև վերջին պատուհաս բանտարգելութիւնն իցէ առն Սենկղիտիկոսի Հռոմայեցւոյ:

Բայց անդ երկրորդի խորհրդոյն՝ առաջին ընդդէմ դարձաւ Կատղոս Լուտատիոս. ապա յարեաւ Կատոն. սա հզօրեղապէս կրթեալ 'ի բանս իւր և կասկա-

ծելն զԿեսար յարդարեալ, սրտմտութբ բարկութեամբ ընդր խրախուսէր զծերակոյտն. մինչ զի և դատաւորնիք մահու ապա 'ի վերայ ածէին պատժապարտից: Իսկ յաղագս յարքունիս գրաւելոյ ընչիցն նոցա, յորում կացեալ Կեսար ընդդէմ դատայր. յանձն չառնոյր եթէ զմարդասէր կողմն զիւրոյ խորհրդոյն նոքա 'ի բաց մերժեալ, 'ի դժնդակն միայն կրթեացին և 'ի խիստն. իսկ իբրև 'ի բազմաց բուռն լինէր առն 'ի բանին յայնմիկ, նա 'ի թիկունս կարդայր զժողովրդապետսն, բայց նոքա ունկն չմատուցին նմա. սակայն Կիկերոնէ ինքնին ամոքեալ՝ 'ի դերև հանէր զխորհուրդ զայն վասն ընչից նոցա:

Բայց յետ այնորիկ եղեալ գնայր հանդերձ Սինկղիտոսին առ Փաստակարան. որ և ոչ 'ի միում վայրի պատահեցան նոքա, այլ 'ի դիպահող կայսն բաշխեալք առ մէն մի 'ի զօրավարացն: Առաջին չոքաւ առ Լենտղոս. և առեալ զնա 'ի Պաղատինէ տանէր ը՟ նուիրական ուղին և ընդ մէջ հրապարակին, պարառեալ յուսադորերոյն 'ի պաշտպանութիւն անձինն. ըղհետ գնայր և խուժան ժողովրդեանն լուռ անշշունջ զարհուրեալք ը՟ պատահմանն. և 'ի պատանեաց ևս՝ որոց և արհաւրօք և զքանչելեօք թուէր այնպէս՝ իբրու թէ իւղագլխել 'ի նուէրս ինչ հայրենի զոհից յաւագպետական իշխանութենէն: Հատեալ անցեալ ընդ հրապարակն և յանդիման եկեալ բանտին, անդէն զԼենտղոս

'ի ձեռս տայր դահճին. հրաման կարգայր 'ի մահ վարել: Զնոյն օրինակ տայր սպանանել և զԿեթեգոս, և զայր այլ 'ի մեացելոց անտի, ածեալ առհասարակ և իջուցեալ 'ի բանտ անդր: Ապա տեսեալ և զբազումս 'ի դաւակցաց անտի խռնեալ կուտեալ 'ի հրապարակին, անտեղեակ եղելոցն՝ մինայլին գիշերոյ. կարծէին ողջ զընկերսն, և զերծ զնոսա տեսանել 'ի կապարանէն, մեծաձայն բարբառեցաւ առ նոսա Կիկերոնն և ասէր. Ո՛ղջ էն. քանզի և այսպէս ազդէին Հռոմայեցիք զմահն. ոչ կամէին բարբառել ինչ 'ի դժնդակացն:

Իսկ յայնժամ՝ երեկոյացեալ աւուրն, և Կիկերոնն յարուցեալ 'ի հրապարակէն ելանէր 'ի տուն իւր. և զհետ ամբոխ քաղաքին ոչ ևս այնուհետև անշշուկ և կարգաւ, այլ խուռն ամենայն ուրեք ընդ որ և անցանէր՝ ձայն ցնծութեան և ծափս և կայթս հարկանէին ժողովուրդք խուռնընթացք. անուն կարդային նմա՝ փրկիչ և հիմնադիր հայրենեաց: Անդանօր և 'ի ջահից բազմաց լուցելոց և 'ի ղամբարացն վառելոց հանդէպ դրացն՝ պայծառացան պողոտայք. այլ և կանանին ինքնին 'ի յարկաց իւրեանց լոյս 'ի դուրս տային 'ի փառս նորա և 'ի տեսիլ առնն, որ այնպէս շքեղ դարձ արարեալ գայր հանդերձ աւագորերօքն. յորոց և բազումք այն էին՝ որ մարտս 'ի գլուխ տարեալ մեծամեծս և յաղթանակաւ մտեալք 'ի Հռոմ, և բաժին ևս ոչ ինչ գուզնաքեայ յաւելին նոքա 'ի Հռո֊

մայեցւոց տէրութեանն զծովու և զցամաքի. Իսկ յայնժամ գնային և ընդ միմեանս խօսէին, խոստովան լինէին՝ զի շնորհս արդեօք կալցին ժողովուրդք բազմաց առաջնորդաց յայնժամ և զօրավարաց վասն ընչաւէտութեան, վասն աւարաց անկածից, վասն տէրութեան դաւառաց. բայց վասն աներկեան անդորրութեան և անձանց փրկութեան շնորհս միայն Կիկերովնի կալցեն՝ որ փրկեաց ապրեցոյց զնոսա յանհնարին վտանգէն ։

Զի և ոչ սքանչելիք ինչ իցեն արդեօք, զի սանձեաց կարճեաց նա զդաւն և պատուհասեաց զդաւաճանսն, այլ զի այնպէս փոքու չարաւ և անվրդով և անխռով շիջոյց նա զմեծ դաւն՝ ահագին ևս քան զամենայն դաւ ։ Ուստի և բազումք յայնժամ 'ի միաբանելոցն Կատիլինեայ, գոյժ առեալք զաղէտիցն Լենտուղեայ և զԿեթեգոսի, Թողին լքին զԿատիլինա և գնացին 'ի բաց ։ Իսկ ինքն Կատիլինաս մարտ եդեալ կռուեալ ընդ Անտոնիոսի հանդերձ մնացելովքն, տապաստ անկանէր 'ի միասին ընդ նոսա ։

Բայց և այնպէս էին էին, և որ կազմեցան պատրաստեցան չարախօս կալ զԿիկերոնէ վասն անցիցն անցելոց, և չարիս անցուցանել ընդ նա. և էին նոցա պարագլուխք արք երեք, որոց և իշխանութիւն հասանէր ունել. այս է՝ Կեսար՝ որ եկաց զօրավար. և Մետեղլոս և Բեստիաս՝ որ կացին ժողովրդապետք. որոց և իշխանա֊

ցեալք՝ մինչդեռ աւուրք սակաւք մնային Կիկերոնի իշխանութեանն, թոյլ չտային հրապարակախօսութեան նորա, այլ առեալք եղեալք զաթոռակս իւրեանց հանդէպ բեմիցն, արգելուլին նմա զանցան և չառնուլին յանձն խօսել նմա առ ժողովուրդն, և հրամայէին ևս նմա ելանել 'ի բեմն՝ եթէ երբէք կամիցի՝ կալ միայն անդանօր երդումն 'ի վախճանել աւուրց իշխանութեանն և անդէն իջանել 'ի վայր։ Յանձն էառ Կիկերոն և յառաջ մատեաւ՝ որպէս եթէ տալ երդումն։

Իբրև լռութիւն եղև ամենին, տայր ապա նա երդումն ոչ ըստ սովորութեանն, այլ նոր և օտար. Իբրու այն որ փրկեաց ապրեցոյց նա զհայրենի աշխարհն և պահպանեաց զտէրութիւնն։ Անդանօր և առհասարակ ժողովուրդք զնոյն կուեցին զերդումն։ Յոյր և սակս և Կեսար և Ժողովրդապետք անհնարին զայրացեալք, աղմուկս այլ խորամանկէին Կիկերոնի. յայնժամ և օրէնս 'ի ներքս խառնեցին նոքա՝ առաքել կոչել զՊոմպէոս հանդերձ բանակաւն գալ վանել զզօրութիւնն Կիկերոնի։ Բայց շահ մեծապէս նմա և բնաւիսկ քաղաքին լինէր յայնժամ ժողովրդապետութիւնն Կատոնի. քանզի 'ի դիմի հարաւ նա քաղաքականութեանց այլոցն ժողովրդապետաց՝ իշխանութեամբն հաւասար, իսկ համբաւոյն առաւելեալ քան զնոսա։ Քանզի և հեշտեաւ նա խաղաղացուցեալ զամենայն կռիւ, յոյժ բարձր առ-

նէր առենաբանութեամբ զԿիկերոնի հիւպատոսութիւնն. զի և շուք մեծապէս ձօնեցին նմա՝ առաւել քան զառաջնոցն ամենեցուն. և անուն կարդացին նմա ՀԱՅՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ. և թուի՝ նմա առաջին ժառանգել զայն անուն. քանզի և այնպէս անուանեաց Կատոն զԿիկերոն լու 'ի լու ժողովրդեան:

Եւ ապա գերազանցէր նա զօրութեամբ 'ի մէջ քաղաքին. սակայն և խէթ ատելութեամբ ձգեաց յանձն իւր՝ ո՛չ յանբարի ինչ գործոց, այլ 'ի հանապազօր գովութենէ և 'ի պարծանաց անձինն, յորմէ և տաղտկացան բազումք: Քանզի և ցանգ 'ի Սինկղիտոսին և 'ի ժողովս եւ խուժանին և յատենի դատաստանին՝ յուշ ածեալ նա մեղմով 'ի ներքս արկանէր զԼենտղոս և զԿատիղինա: Առ այս և զշարադրածս մատենից իւրոց և զգիրսն լնոյր 'ի գովութիւնս անձինն. և այսպէս ապա թէպէտ և հեշտալուր եւ էին բանք նորա և լի շնորհօք, անձամբ անձին պատերազմօղ լինէր լսելեաց. և դժպատեհ այն կիրք՝ իբրու անհրաժեշտ ախտ՝ անմեկնելի էր 'ի նմանէ:

ԱՅԼ թէպէտ և այնպէս անհնարին կրթեալ 'ի պատուասիրութիւն, ո՛չինչ վանեցաւ նա 'ի կրից նախանձու. Ճոխաբար տայր և գովութիւն արանց քաջաց, ո՛չ ծերունեացն միայն՝ այլ և որ առ իւրովքն ժամանակօք. զոր և է մեզ ժողովել 'ի մատենից անտի նորա: Եւ առ այս յիշատակ

առնէն զնորա բաղում զրուցաց. որպէս որ վասն Արիստոտելի, զոր Գէտ Ոսկէհոսան կոչեաց նա. և որ վասն Տրամախօսութեանցն Պղատոնի, եթէ՝ Յորժամ Արամազդ առցէ 'ի խօսել՝ ասէ՝ օրինակ զնոյն խօսեսցի: Իսկ զԹէոփրաստոս սովորեցաւ նա կոչել՝ իւր Բերկրանս. և հարցեալ երբեմն՝ որ 'ի ճառից անտի Դեմոսթենեայ ամենագեղեցիկ իցէ. ետ պատասխանի՝ Երկայնագոյնն: Բայց և կէսք 'ի կուսակցացն Դեմոսթենեայ եպերեն զբան զայն զԿիկերոնէ, զոր 'ի գրի ուրեք առ բարեկամն ասէր. եթէ՝ Է՛ երբեք՝ զի 'ի ճառս իւր նիրհէ Դեմոսթենէս: Այլ արդեօք մոռայօնք են դոյա մեծապէս գովութիւք և սքանչելիք Կիկերոնի բաղում ուրեք վասն Դեմոսթենեայ. և զի՝ և Փիլիպպեանս եւս յորջորջեաց նա զճառսն ընդդէմ Անտոնիոսի, զորս և գեղեցիկ եւս գրեաց քան զամենայն ճառս իւր:

Առ այս՝ և որք միանգամ առ իւրովքն ժամանակօք արք հռչակաւորք 'ի ճարտարախօսութեան և յիմաստութեան, առհասարակ նա առաւել եւս պանծացոյց ըզնոսա. խօսեցաւ քաջիկ և արժանագրեաց եւս վասն իւրաքանչիւր նոցա: Նաև զօրավիգն կացեալ նա Կրատիպպոսի ճեմականի՝ Հռոմայեցի գրէր զնա 'ի ձեռն Կեսարու իշխանութեանն. զնոյն և Արիսպագեան ծերակուտին թելադիր լինէր տալ մնալ և թախանձել զնոյն Կրատիպպոս՝ կալ մնալ յԱթէնս 'ի դաստիարակութե

պատանեաց՝ իբրու որ շուք փառաց լիցէ քաղաքին այնմիկ։ Եւ էն եւ 'ի միջի Թղթոց Կիկերոնի առ Հերովդէս, դարձեալ եւ առ իւր որդին, յորս առհասարակ զնոսա յորդորէ հպատակ կալ Իմաստասիրականին առ ոտս Կրատիպպեայ։

Է՛ եւ այլ Թուղթ, յորում կշտամբէ նա զԳորգիաս հռետոր, զի յաղտակատանս եւ 'ի գինեըբրուս կրթէր զպատանեակն. ուստի եւ պատուիրէ նմա մի եւս վարել ընդ նմա։ Իսկ 'ի Թուղթս նորա 'ի հելլենագիրս՝ այս Թուղթ եւ միւս եւս այլ առ Պեղոպէ Բիւզանդացի՝ արձանագրեալ կան զայրագինս իմն. եւ յիրաւի արդեօք կշտամբէ զԳորգիաս, եթէ էր նա արդարեւ՝ ըստ համբաւոյն՝ յանզգամաց ոք եւ 'ի շփացելոց անտի։ Սակայն եւ զժպատեհս բողոք արդեօք բառնայր նա, եւ յումպէտս գանգատի առ Պեղոպէ, զի անհոգացաւ շուք եւ հրովարտակ պատրաստել նմա առ 'ի Բիւզանդացւոց անտի։ Բայց պատուասիրութեան կիրք էին բանքն. ըստ որում եւ ստէպ այն տեղի տալ Կիկերոնի 'ի վայելչականէն՝ 'ի վեր վազեալ 'ի Ճարտարաբանութեան իւրում։ Քանզի էր երբեմն՝ զի եւ պաշտպան Նումանտիոսի կացեալ նա 'ի դատաստանի, իբրեւ յետ արձակելոյն՝ ամբաստան կայր Նումանտիոս զՍաբինոսէ բարեկամէն Կիկերոնի, պատմեն՝ եթէ 'ի սրամտութիւն բարկութեան բրդեալ Կիկերոնի՝ յարձակեցաւ 'ի Նումանտիոս եւ ասէր. " Եւ զի՞նչ ապա ո՛վ Նումանտիէ, Թէ֊

ըևս անձամբ անձին արձակեցար դու 'ի դատակնքոյն, և ո՛չ ինև, որ ստուերածս 'ի վերայ ածեալ լուսոյ առեհնին՝ մառախլապատ արարարի զնա ,, ։

Առ այս և երբեմն 'ի բեմէ անտի ներբողեալ նա զՄարկոս Կրասսոս գեղեցիկ ճառիւ, իսկ յետ սակաւ աւուրց 'ի նմին բեմէ պարսաւեալ զնոյն այր, ասէր Կրասսոս. " Ո՞չ դու ինքն աստանօր՝ չեն աւուրք շատ՝ գովեցեր զմեզ ,, ։ Ետ պատասխանի Կիկերոն. " Եւ կարի իսկ քաջ. սակայն 'ի հրահանգ ճարտարաբանութեան՝ 'ի նիւթ գժպատեհ ,,։ Էր և յաւուր միում յասել Կրասսոսի, եթէ 'ի Կրասսոսից և ոչ ոք եկեաց 'ի Հռոմ աւելի քան զամս վաթսուն, և ապա ուրացեալ Կրասսոս ասէր. " Եւ առի՞նչ ապա բարբառեցայ ես այդպէս ,, . Ետ պատասխանի Կիկերոն. " Գիտէիր իսկ քաջ՝ մոռադիւրագոյնս լսել զայդ Հռոմայեցւոցն. և գորին աղագաւ շնթեցեր զայդ ժողովրդեանդ ,, ։ Սա՛պէս և յասել Կրասսոսի, սիրել զառածն Ստոյիկեանց՝ " Ընչաւէտ է այր բարի ,, . ասէր նմա Կիկերոն. " Հա՛ դու ուշիմ լեր 'ի բանդ, զի նոքա զամենայն ինչ՝ իմաստնոյն ասեն լինել ,, . քանզի և բամբասեալ իսկ էր Կրասսոս յարծաթսիրութեան։ Իսկ և միւս այլ յորդւոցն Կրասսոսի նմանատիպ յոյժ երևէր առն ուրումն անուն Աքսիոս՝ որ նշանակէ Արժանի. ուստի և կարծիս չար տայր զմօրէն՝ գիտել զԱքսիոս. իսկ պատանին վայելուչս երբեմն խօսեալ ըզ-

Ճառ իւր 'ի Սինկղիտոսին, հարցանէին
ցԿիկերոնն վասն Ճառին։ Եւ պատասխա-
նի և ասէ, "Արժանի Կրասսոսի,, 5 ։

Իսկ իբրև հանդերձեալ էր Կրասսոս
խաղալ յԱսորիս, խնդրէր՝ քան թշնամի՝
բարեկամ իւր մանաւանդ յարդարել զԿի-
կերոնն. ուստի և մտերմութիւն ըղձակաւթ
ցուցեալ առ նա՝ ասէր երբեմն՝ ընթրել
առ նմա. և Կիկերոնն մտադիւր յօժարու-
թեամբ հիւրընկալէր զայրն։ Եւ ապա յետ
սակաւ աւուրց ոմանք 'ի բարեկամացն Կի-
կերոնի խօսեցալ ընդ նմա վասն Բատի-
նիոսի, եթէ մեծապէս ըղձայ հաշտու-
թեան և բարեկամութեան նորա (քանզի
և էր իսկ այրն թշնամի), ասէր Կիկերոն.
"Եւ թերևս և Բատինիոս ինքնին կամիցի
ընթրել առ իս,,։ Այսպիսի ոք էր Կիկե-
րոն առ Կրասսոս։ Իսկ զԲատինիոս, այն՝
որոյ էին խոյլք 'ի պարանոցին և փաստա-
բանէր յատենի, կոչեաց զնա Կիկերոն՝
Հռետոր փքուռոյց։ Եւ յայլում ևս նու-
ագի լուր հասեալ առ Կիկերոն մահու-
ան, և վայր մի յետոյ լուր հասեալ
ստոյգ՝ զի ողջ էր, ասէ Կիկերոն. "Չա-
րաչար ուրեմն կորիցէ, որ չարաչար
ստեաց,,։

Էր և երբեմն յորժամ Կեսար վճիռ 'ի
ներքս տայր բաշխել զօրականին զգետին
զԿամպանիոյ, և խռովեցան բազումք 'ի
Սինկղիտոսէն, իբրև անդ և Լեւկիոս Գել-
լիոս այր հնօրեայ յոյժ՝ վկայութիւն
դնէր, մի երբէք կատարել բանին՝ ցորչափ

ինքն կենդանի իցէ, ասէր յայնժամ Կիկերոն. « Սպասեալ մնասցուք ուրեմն. զի ոչ բազմաժամանակեայ ինչ յապաղումն խնդրէ Գեղլիոս »: Իսկ էր յայնժամ և Հոկտաւիոս ոմն՝ զոր անդուսնէին ծնունդ լինել Լիբիոյ. և յասել առնն 'ի փաստաբանելն Կիկերոնին՝ եթէ ոչ հասկանայ, ասէ Կիկերոն. « Եւ ոչ ապաքէն քո ծակ են ականջք » 6:

Որպէս և Մետեղոսի Նեպոսի երբեմն ընդ վայր հարեալ զԿիկերոն, զի շատս մարդիկ 'ի կորուստ մատնեաց դատախազելովն, քան թէ փրկեաց պաշտպանելովն. եւ պատասխանի Կիկերոն. « Դու ինքնին ապա վկայես, զի յիս քան ճարտասանութիւն՝ առաւել ես են հաւատք »: Իսկ և յամբաստանիլ պատանւոյ ուրումն՝ իբրու որ պլակինդի դեղեալ հօր իւրում մատուցեալ իցէ. և յաւուր միում 'ի լըրբել պատանւոյն այնմիկ թշնամանօք ընդդէմ Կիկերոնի. ասէ Կիկերոն. « Զայդ մանաւանդ կամիմ ես 'ի քէն, քան զպլակինդի »:

Էր և երբեմն՝ զի Պոպղիոս Սեստիոս յիւրում դատի ընտրեալ զնա փաստաբան ընդ այլոց ոմանց, և 'ի խօսել ինքնին Սեստիոսի զամենայնն՝ թոյլ ոչ տուեալ խօսել այլում, իբրև յայտնի էր արձակուրդ առն 'ի դատաւորացն՝ զի և քուեայս արկանէին, ասէր Կիկերոն. « Ա՛ղէ դու Սեստիէ վայելեա՛ զսերկեան օրդ. քանզի 'ի սոսկականաց եղիցիս դու առ վաղիւն »:

Դարձեալ և երբեմն Կիկերոնի կոչէր 'ի վկայութիւն ուրեք 'ի դատի զՊոպլիոս Կոնստաս, որ օրէնսգէտ ասէր զանձն և էր ինքն տգէտ և ապուշ. իբրև պատասխանի տայր նա առ հարցափորձն՝ գիտել և ոչ ինչ, ասէ յայնժամ Կիկերոն. "Թերևս կարծիցե՞ս դու, հարցափորձ քեզ լինել վասն օրինաց ինչ,,:

Ն՛ր և երբեմն 'ի պայքարի ուրեք 'ի հարցանել ցնա ստէպ Մետեղոսի Նեպոսի, "Եւ ո՞ ոք ապա էր՝ ո՞վ Կիկերոն, հայր քո,,. ասէ Կիկերոն. "Զպատասխանի բանիդ այդորիկ քեզ ինքնին դժուարին ես յարդարեաց մայր քո,,. քանզի և էր իսկ կին անժուժկալ համբաւեալ մայրն Նեպոսի: Եւ էր այս Նեպոս համարեալ իբրև այր յեղյեղուկ. որ և յանկարծակի երբեմն լքեալ զաւագութիւն ժողովրդապետութեանն՝ նաւեաց յԱսորիս առ Պոմպէոս, և անդուստ ապա միւսանգամ՝ նս անհանճարաբար՝ դարձ առնէր դայր. և ապա 'ի թաղել իւրում զՓիլագրոս վարժապետ իւր շքով և 'ի դնել 'ի վերայ գերեզմանին ագռաւ 'ի քարէ, ասէր ցնա Կիկերոն. "Իմաստութեամբ յոյժ արարեր զայդ. քանզի ուսոյց դա քեզ առաւել թռչել ՚, քան խօսել,,:

Իսկ և Մարկոս Ապպիոս ուրեք 'ի դատի վասն բարեկամին իւրոյ՝ յասել 'ի յառաջաբանին, եթէ յանձն է նմա 'ի բարեկամէն թափել անդ միանգամայն և ճիգն և ճարտարաբանութիւն և հաւատ, ասէր

առ նա Կիկերովն. «Իսկ դու այնչափ երկաթի՞ անձն, որ ինչ մի չկատարես յայնչափ պատուիրանաց բարեկամիդ»։ Արդ՝ զկծեցուցին այս զրոյցք 'ի Թշնամիս անդր, և 'ի հակառակորդս՝ արդեօք քաջավայելուչք իցեն հռետորականին արուեստի. բայց վարել զորա զայդօսիկ այնպէս անխորաբար 'ի պատճառս միայն ծաղու, ատելի գործեաց զնա։

Ինչ ինչ և յայնպիսեաց անտի եղից տակաւուք։ Մարկոսի Ակուինիոսի փեսայք գոլով կրկին՝ վտարանդիք միանգամայն, Ադրաստոս անուն կարդայր նմա Կիկերովն։ Առ այս՝ և Լեւկիոս Կոտտաս գոլով գինեսէր յոյժ, և համարակալ կացեալ 'ի ժամանակին՝ յորում Կիկերովն հետամուտ կրթէր հիւպատոսութեան, դէպ եղև Կիկերովնի 'ի ծարաւում ըմպել ջուր. և զնովաւ շուրջ բարեկամքն կացեալ յետ ըմպելոյն, ասէր ցնոսա. «Ուղղապէս ինձ պահ կալեալ երկնչիք դուք՝ մի՛ դուցէ ցասնուցու ինձ համարակալդ՝ զի ջուր ահաւադիկ ըմպեմ»։

Էր և երբեմն պատահել նմա Բոկոնիոսի՝ որ ածէր ընդ իւր դստերս երիս անդեղեայս յոյժ, բարբառեցաւ Կիկերովն ընդքերթուածն. «Արդեօք յակամայս փեբոսին սերմանեաց դա զաւակս»։ Եւ քանզի Մարկոս Գելլիոս համարեալ էր ոչ 'ի տոհմիկ ծնողաց զաւակ, յընթեռնուլ երբեմն սորա 'ի ծերակուտին նամակ 'ի ձայն բարձր և ուժգին, ասէր Կիկերովն.

" Մի՛ ինչ զարմանայք. այլ և դա՛ ինքնին մի է 'ի մունետկաց անտի ,, :

Իսկ Փաւստոս Սիւղղա՝ որդի այնորիկ որ միապետեաց 'ի Հռոմ և բազում մարդիկ 'ի մահ վարեաց հրովարտակօք, իբրև անկաւ ընդ պարտուք և բազում ինչ վաճանեալ 'ի գոյից, հրովարտակ 'ի դուրս տայր զանքատութեանն, ասէր յայնժամ Կիկերոն. ինձ այդ հրովարտակ դորա սիրելի առաւել է քան զհայրենականն: Ապա յայսպիսեաց ատի բազումք տաղտկացան ընդ Կիկերոն: Ուստի ապա և Կղոդիոս և կուսակիցք նորա հակառակ ամբարձան նմա՝ յայսպիսի ինչ պատճառաց:

Էր այս Կղոդիոս այր տոհմիկ, պատանի աշխոյժ և յանդուգն. և տռփացեալ սա Պոմպէեայ կնոջն Կեսարու, գաղտաբար սպրդեցաւ 'ի տուն նորա՝ առեալ հանդերձ և կազմած զվարձակի, յորժամ 'ի տան անդ Կեսարու պաշտէին կանայք Ըղգոհն զդաղտնի և անտես յարանց, և չէր ոք անդ այր մարդ և ոչ մի: Բայց Կղոդիոս տակաւին պատանեակ և անմօրուս, կարծեաց մնալ 'ի ծածուկ՝ մտեալ առ Պոմպէա 'ի միասին ընդ կանանց: Ապա գիշերի մտեալ յընդարձակատարր յայն ապարանսն, և վարանեալ դեգերէր Կղոդիոս 'ի վայրին. անդանօր զնա այնպէս վայրայած տեսեալ ումն 'ի նաժշտացն Աւրելեայ մօրն Կեսարու, հարցանէր զանունն: Իբրև կարի նեղ եհաս նմա 'ի խօսել, ասէր՝ զնաժիշտն խնդրել զՊոմպէեայ՝ Աւրա անուն: Լուեալ

նաժշտին Աւրելեայ զձայնն՝ զի չէր կանացի, ձիչ բարձեալ ձայնէր զկանանին: Նոքա վաղվաղակի առեալ փակեալ զդուրսն, և հետախոյզ եղեալ գտանեն զԿղոդիոս ուրեք 'ի սենեկի աղախնոյ՝ ուր ղօղեալ կայր: Հռչակ հարեալ բանին, անդէն գիր ապահարզանի տայր Կեսար Պոմպէեայ. և զԿղոդիոսէ իբրև զամբարշտէ դատախազ լինէր:

Եւ էր Կիկերոնին բարեկամ Կղովդիոսի, զի և յառաջամիտ գտեալ իսկ էր զնա 'ի Նիզակակցութիւն ընդդէմ Կատիլինեայ և անձնապահապետ իւր էր. համայն և այնպէս 'ի չքմեղս լինել Կղովդիոսի և 'ի պընդել նա՝ եթէ ոչ իսկ 'ի Հռոմ անգամ էր նա յաւուրսն յայնոսիկ, այլ 'ի վայրս բացաձիգս 'ի քաղաքէն, յայնժամ Կիկերոնին ընդդէմ դարձեալ վկայէր՝ 'ի նմին իսկ աւուր գալ առ նա Կղովդիոսի 'ի տուն և խօսել ինչ ընդ նմա. որ և էր իսկ ճշմարիտ: Բայց թուի՝ Կիկերոնին ոչ 'ի շնորհս ճշմարտութեան վկայել բանին, այլ միբաւացուցանել զանձն առ կին իւր Տերենտիա, որ թշնամութեամբ էր ընդ Կղովդիոսի 'ի պատճառս Կղովդեայ քեռն նորա. զորմէ 'ի կարծիս էին խնդրել ամուսնանալ ընդ Կիկերոնին՝ միջնորդաւ ուրումն Տուղղոսի մտերիմ ծանօթին Կիկերոնին. և յայց առեալ Տուղղոս ելանելով Կղովդեայ՝ որ մօտ բնակէր, և սպաս ևս հարկանելով նմա, 'ի կարծիս արկանէր զՏերենտիա. որ և կին անհամբոյր գոլով 'ի բարսն

և տիրացեալ ևս 'ի վերայ Կիկերոնին, դրդեաց զնա հակառակ ընդդէմ վկայութիւն տալ Կղոդիոսի ։

Անդ և բազում լաւորեար վկայեցին ընդդէմ Կղոդիոսի, իբրու որ երդմնահար է այրն և չարարուեստ և կաշառաբեկ ամբոխից. առ այս՝ և զոփկնայս պղծեալ է գորա: Նա և Լեւկուղղոս ինքնին 'ի ներքս մատուցանէր յաղախնեայց ումանց, որ վկայեցին՝ մտանել Կղոդիոսի առ կրսերագոյն քոյրն իւր՝ յորժամ 'ի կին առեալ իւր էր Լուկուղղեայ: Եւ էր ևս համբաւեալ առհասարակ, գիտել նորա և զերկուս այլ 'ի քերց անտի իւրոց, զՏերենտիա զոր ունէր Մարկիոս Հռեքս, և զԿղոդիա՝ զոր ունէր Մետեղոս Կելէր. և կոչէին զԿղոդիա Կուադրանտիա. քանզի մի 'ի տարփածուաց նորա արկեալ 'ի քսակի դրամս պղնձի, առաքեաց առ նա իբրև արծաթիս. և Հռոմայեցիք կուադրանդէմ կոչէին զմանրագոյն պղնձադրամն. և առաւել ևս վասն քեռն իւրոյ այսորիկ չատ բամբասեալ էր Կղոդիոս ։

Յայսր ամենայնի վերայ ը̅դէմ դարձաւ յայնժամ խուժանն վկայից և հակառակորդացն Կղոդիոսի. և դատաւորք զահի հարեալք Թիկնապահս կարգեցին իւրեանց, և շատք 'ի նոցանէն սնտակս խառնագիրս 'ի դուրս ետուն, սակայն և բազմագոյնք 'ի նոցանէն դատեցան արձակել զայրն, և համբաւեցան իբրև կաշառակուրծք ։ Որ աղագաւ և ապա Կատուղղոս հանդիպեալ

դատաւորացն այնոցիկ , ասէր այսպէս . " Ցիրաւի արդեօք խնդրեցէք դուք Թիկնապահս 'ի զգուշութիւն . զանգիտեալք՝ գուցէ ոք առցէ 'ի ձէնջ զկաշառ արծաթոյն ,, : Եւ Կիկերոնի ինքնին , յասել անդ Կղոդիոսի՝ եթէ 'ի վկայել նորա՝ ոչինչ հաւատացին դատաւորք , ետ պատասխանի . " Այլ ինձ հաւատս ընծայեցին Թուով քսան և հինգ 'ի դատաւորաց . զի նոյնչափ քուէայք արկան ընդդէմ քո . իսկ քեզ երեսունք Թուով ոչ հաւատացին , քանզի չարձակեցին զքեզ՝ մինչև առեալք զարծաթն ,, : Առ այս՝ և Կեսար կոչեալ յատենի՝ վկայեաց և ոչինչ ընդդէմ Կղոդիոսի . և ոչ դարձեալ շնութիւն ասէր դատանել 'ի կին իւր , սակայն և արձակել արձակեաց զնա . իբրև արժան էր կնոջ Կեսարու ոչ սուրբ միայն լինել յամենայն պղծութէ՝ այլ և 'ի կասկածանաց անգամ:

Ապա 'ի փտանգէն յայնմանէ ճողոպրեալ Կղոդիոս , և յետ այնորիկ կարգեալ 'ի ժողովրդապետ , անդէն բուռն եհար վանել զԿիկերոնի , դրդեալ հրապուրեալ միանգամայն զամենայն ինչ և զամենայն մարդ ընդդէմ նորա : Քանզի յինքն առեալ յանկուցանէր զխուժանն մարդասիրագոյն օրինադրութեամբք . և վճիռ ևս ետ տալ զմեծամեծ կուսակալութեանց վասն հիւպատոսացն երկուց . զՄակեդոնիոյ՝ տայր Պիսոնի . և Գաբինիոսի՝ զԱսորւոց . և առեալ խառնէր 'ի տնտեսութիւն քաղաքին զբազումս յաղքատաց

ժողովրդեանն. և զիւրև գումարէր կուտէր ամբոխ մեծ զծառայից վառելոց:

Արդ յերից անտի աւագամեծար արանցն 'ի ժամանակին, Կրասոս յայտնի իսկ մաքառէր ընդ Կիկերոնի. իսկ Պոմպէոս երկոցուն նոցա ընդ միտ մտանէր. իսկ Կեսար պատրաստեալ իսկ էր 'ի չուանկանել զօրու 'ի Գաղատիա: Ուստի և Կիկերոն գնացեալ առ Կեսար (Թէպէտ և չէր նորա բարեկամ, և խիթայր ևս' յետ անցիցն Կատիլինեան). Թախանձ արկանէր նմա առնուլ զինքն իւր տեղակալ: Հաւանեալ Կեսարու ընդ բանն. անդուստ Կղովդիոս տեսեալ եթէ այնպէս ճողոպրի Կիկերոն 'ի ներքուստ ժողովրդապետութեան իւրոյ, կեղծաւորեցաւ զկամս հաշտութեան ընդ նմա. և զինաս գժտութեանն բաղումն 'ի վեր հանեալ առ Տերենտիա, և միշտ հանդարտագոյն յիշատակ բերեալ զայնորիկ, և հեշտալուրս բղբանիւք անկեալ ընդ նմա' իբրու այր անոխակալ և անցաստումն, և գանգատ միայն կալեալ համեստագոյնս և իբրև բարեկամ, յանդորրու հանդուցանէր զԿիկերոն. որպէս զի և ինքնին նա գնացեալ առ Կեսար հրաժեշտ տայր 'ի տեղակալութենէն, և անդրէն միւսանգամ դարձաւ 'ի գործս քաղաքին:

Զչարեալ յայնժամ Կեսարու, առաւել ևս ոյժ ետ Կղովդիոսի ընդդէմ Կիկերոնին. և համբուն առեալ ուծացոյց 'ի նմանէ զՊոմպէոս: Առ այս' և ինքնին

մատուցեալ վկայէր յանդիման խուժանին, եթէ՝ որպէս ինքն կարծէ՝ ոչինչ արդարացի և օրինաւոր կարգաւ դատակնիք տուաւ մահուան Լենտուղոսի և Կեթեղոսի. զի և չեղև իսկ բանն ըստ դեղեցիկ կարգի դատաստանին: Այս ամբաստանութիւն այս յուզեալ ընդդէմ Կիկերոնի, ոչ ևս երթայր առ նա՝ պատասխանի տալ վասն անձին: 'Ի վարանս տագնապի պաշարեցաւ Կիկերոն, առեալ փոխեաց ըզհանդերձն, և շատ ինչ խռուացեալ հերօքն՝ այնպէս յայսկոյս յայնկոյս շուրջ եկեալ յոյզք խոնարհէր ժողովրդեանն: Բայց յայնժամ ամենայն ուրեք ընդ առաջ նմա Կղովդիոս եղեալ ընդ փողոցս, պար առեալ յամբոխից մարդկան խեռից և սատահակաց, որք և լրբագոյնս ձաղեալք զԿիկերոն 'ի փոխել հանդերձին և 'ի չուառանալ յայն կերպարան, էր բազում անգամ զի և դայռաձիգ և քարաձիգ լինէին 'ի նա, և խոչընդոտն կային աղաչանաց նորա:

Սակայն և այնպէս առաջին ընդ Կիկերոնի փոխեցին զհանդերձս գո՛դ առհասարակ և ասպետք. և ընդ նմա հետևեալք գնայլին ամբոխ մեծ պատանեաց ոչինչ պակաս քան երկուց բիւրուց. որք 'ի միասին և նոքա այնպէս երկայնագէսք խռուահերք յոյզք անկեալ աղաչէին: Այս և ծերակոյտն ինքնին խմբեալ՝ տայր վճիռ իբրև յօր սգոյ՝ և ժողովրդեանն զլխովին փոխել զհանդերձս. ընդդէմ դարձան հիւպա-

տոպք, և շուրջ զԿղովդեաւ խումբ վառելոցն պատեալ, յայնժամ ոչ սակաւք 'ի Սինկ֊ ղիտոսեան աւագանւոյն 'ի դուրս վաղեալք զպատմուճանս պատառէին, և ձայն աղա֊ ղակին նոցա բարձրանայր ։ Իսկ յայն հան֊ դէս մեծի ատեանին շարժեցան և ոչինչ հակառակորդք Կիկերոնին և կամ պատ֊ կառեցին ինչ. և հարկ ապա այնուհետև 'ի վերայ կայր Կիկերոնի կամ յաքսորս վը֊ տարանդի լինել, կամ զէն առ զէն ընդ Կղովդիոսի 'ի վէճ գալ ։ Չոքաւ Թիկոնոս խնդրել 'ի Պոմպէոսէ. բայց նա խոյս տուեալ 'ի ժամուն՝ գնացեալ նստաւ յա֊ գարակս իւր մօտ յԱլբանոն ։ Առաջին ա֊ ռեալ արձակեաց առ նա 'ի խնդրուածս զՊիսոնն փեսայ իւր. ապա և ինքնին չոքաւ առ նա. լուր առեալ Պոմպէի, ոչինչ հան֊ դարտեաց երևել նմա. քանզի և յոյժ իսկ պատկառէր յաննէն, որ մեծաց վտան֊ գաց մատնեաց զանձն վասն նորա. և շատ եւս 'ի քաղաքականին նախհատակեցաւ 'ի վերայ նորա ։ Համայն և այնպէս՝ քանզի փեսայ էր Կեսարու, յաղաչանսն խոնար֊ հեցաւ աներոյն, և մատն լինէր շնորհացն՝ զոր յառաջ ժամանակաւ ընկալաւ 'ի Կի֊ կերոնէն. և խոյս տուեալ ընդ այլ դուռն՝ ծածկեցաւ 'ի նմանէ ։ Նա այնպէս ապա 'ի Պոմպէէ մատնեալ Կիկերոն և ամայի լքեալ չոքաւ անկաւ առ հիւպատոսս. Գաբինիոս անողորքելի խստացաւ առ Կի֊ կերոն. իսկ Պիսոն մորդասիրագոյնս խօ֊ սեալ յորդորէր զնա տեղի տալ խուսել 'ի

մոլեգնութենէն Կղոդեայ, և համբերու-
թեամբ տարեալ փոփոխութեան ժամա-
նակին, միաբանդամ փրկիչ լինել հայրե-
նեացն որ 'ի վերայ նորա ամբոխեալ և յա-
ղէտս ծփայ ։

Զպատասխանի զայս առեալ Կիկերով-
նի՝ 'ի խորհուրդ մտանէր ընդ բարեկամսն ։
Յայնժամ Լեւկուղղոս խորհուրդ տայր
կալ մնալ, իբրու որ յաղթական իցէ 'ի
կռուին. իսկ այլք փախստեան խորհուրդ
տային, ասէին՝ անձուկ ընդ հուպ ունել
առ նա խուժանին, իբրև 'ի մոլութէն Կղոդ-
դեայ յափրասցի և յանզգամութենէն.
որում և ձեռն տայր հաւանութեան Կի-
կերոնի ։ Ապա յարուցեալ առնոյր ածէր
'ի Կապետովլինն դրօշեալ մի զԱթենա-
սայ՝ զոր և յառաջնմէ կանգնեալ իւր էր
նա յիւրում տանն մեծապէս փառօք. ան-
դանօր առեալ նուիրեաց զնա վերտառու-
թեամբ այսպիսի. "Առ Աթենաս՝ Պահա-
պան Հռոմայ,, ։

Ապա առեալ 'ի բարեկամացն առաջ-
նորդս ուղւոյ, գաղտաբար զհասարակ գի-
շերաւ ելանէր 'ի քաղաքէն. և հետի ըն-
թացեալ ընդ մէջ Լեւկանիոյ, խորհէր
անցանել 'ի Սիկիլիա ։ Հռչակ հարեալ
փախստեանն, հրովարտակաւ ետ Կղոդիոս
վտարանդի առնել զնա. և հրամանագիր
եւ 'ի դուրս բերէր, կարգէր արգելուլ 'ի
նմանէ զհուր և զջուր, և պատուիրէր մի
տալ նմա տեղի ապաւինի ընդ մղոնս հինգ-
հարիւր յԻտալիա ։ Սակայն և այնպէս ար-

դոյ էր այրն, զի և փոյթ ինչ չկալան առ հասարակ վասն հրամանագրին. և առեալ ժողովեալ զԿիկերոնն, և ուղեկից ևս լինէին նմա հիւրամեծար մարդասիրութբ̅։ Միայն 'ի Հիպպոնիոնիա քաղաք Լեւկանիոյ զոր այսօր կոչեն Վիբոնէ՝ Վիբիոս այր Սիկիլիացի մեծապէս օգտեալն առ 'ի բարեկամութենէն Կիկերոնի, և որ առ նորուն հիւպատոսութեամբն ոստիկան ևս կացեալ էր 'ի վերայ գործոց, ոչ ժողովեաց զնա 'ի տուն իւր, սակայն և խոստանայր նմա տալ տեղի ապաւինի յագարակին։

Իսկ Գայիոս Վերգինիոս զօրավար Սիկիլիոյ, որ ջերմագոյն ևս մտերմութեամբ գնացեալ էր ընդ Կիկերոնի, գրեաց առ նա հեռանալ 'ի կղզւոյն։ Յորմէ և սրտաբեկ Կիկերոն՝ չոքաւ 'ի Բրենդեսիոն. և անտինաւագնացեղեալ յաջողակ հողմով 'ի Դիւրրաքիոն, իբրև օր մի նաւարկեաց, 'ի հակառակ հողմոյն յետս ընկրկեալ, անդրէն միւսանգամ յառաջադէմ հասանէր զուղին։ Եւ ասեն՝ 'ի հասանել նորա 'ի Դիւրրաքիոն և յիջանել 'ի նաւէն, սասանեցաւ երկիրն և յետս ընդդէմ նհանջեցաւ ծովն. յորմէ և իղձքն գուշակեցին՝ ոչինչ բազմաժամանակեայ տևել վտարանդութեանն, իբրև փոփոխութեան յայտարար իցէն նշանքդ։

Արդ թէպէտ և ստէպ անդանօր բազում արք աւագք մարդասիրութեամբ յայց առ նա ելանէին, և քաղաքք ևս

Հելլենացւոց 'ի պատիւ նորա զմիմեամբք գային, նա՝ 'ի խոր խոցեալ 'ի հոգին՝ զոր օրինակ տարփածուք հիքացեալք 'ի տարփալիսն՝ այնպէս դառնայր հայէր յԻտալիա կոյս, սրտաթափ սրտառուչ թաղծեալ և հիքացեալ 'ի վշտին. զոր և ոք արդեօք չկարծէր տեսանել յայնպիսի այր քաջագէտ, քաջահմուտ: Եւ ինքնին դարձեալ Կիկերոն ստէպ աղաչէր զիւր բարեկամն մի հռետոր կոչել զնա, այլ իմաստասէր. իբրև ընտրեաց իսկ նա անձին իւրում զիմաստասիրութիւնն՝ գործ. իսկ հռետորականաւն վարէր իբրու գործեաւ ոմամբ 'ի պէտս քաղաքին:

Այլ սակայն և կարծիքն ինքնին դլխովին յոյժ զօրացեալ է ջնջել առ 'ի հոգւոյն զխոհականութիւնն՝ իբրու երանգ իմն զվերին երեսաց. և առնուլ տպացուցանել զկիրս խուժանին յարս քաղաքականս՝ որ ընդ խուժանին թարթափեսցին: Քանզի և չէք ոք արդեօք այնպէս անձնապահ յարտաքնոցն և միանգամայն միջամուխ, որ բաժանորդ նոցուն գործոցն եղեալ՝ անբաժ 'ի կրիցն մնասցէ, որ անմեկնելիք լիցին 'ի գործոց անտի:

Իսկ անդուստ Կղոդիոս յետ վտարանդելոյն Կիկերոնի, առեալ հրդեհակէզ առնէր զդաստակերտս նորա 'ի շինին, և զտուն ևս բնակութեան նորա 'ի Հռոմ. և 'ի նմին վայրի շինէր կանգնէր Տաճար զԱզատութեան: Ապա և 'ի վաճառ զամենայն զգոյս նորա հանեալ զօր ամենայն 'ի

ձայն մռնչեակի, սակայն և չէր ոք այն որ
գնէր : Բայց յետ այսորիկ իբրև ահագին
երևեցաւ նա և աւագորերոյն, և յինքն
տարեալ զխուժանն՝ խեռ և սաստիկ ար-
ձակերասան յամենայնի, յարձակեցաւ և
'ի Պոմպէոս. և աղարտէր խանդարէր ինչ
ինչ 'ի գործոց անտի նորա 'ի զօրավարու-
թեանն : Որ աղաղաւ և կեղտ անուն
յինքն ձգեալ Պոմպէոս, անձամբ զանձն
անհնարին նզովէր այրն՝ զի այնպէս ամայի
եղեք զԿիկերոնն. և անդէն 'ի մտացն փո-
խեալ՝ բնաւ խակ զհետ կրթեցաւ հանդերձ
բարեկամօքն դարձուցանել զԿիկերոնն :
Իբրև Կղովդիոս ընդդէմ դարձաւ, յայն-
ժամ սահման կնքէր Սինկղիտոսն՝ մի ինչ
ամենևին վաւերական գործել և մի ինչ
հասարակաց գործ 'ի գլուխ հանել, մինչև
սահմանեալ դարձին Կիկերոնի :

Իբրև յետ այնորիկ հիւպատոս եկաց
Լենտուղոս, և աղմուկ շփոթիցն յոյժ ճա-
րակեցաւ՝ մինչև և ժողովրդապետաց վէրս
առնուլ 'ի հրապարակին, և Կուինտոսի
եղբօրն Կիկերոնի մնալ թաքչել 'ի մէջ
դիականցն և ընդ մեռեալս համարել, յայն-
ժամ ապա 'ի խորհրդոց իւրեանց փոխե-
ցան ժողովուրդք, և անդէն Աննիոս Մի-
լոնն 'ի ժողովրդապետսն առաջին նահատա-
կեալ ձգէր ուժգին զԿղովդիոս յատեան
դատաստանի: Միաբանեցան ընդդէմ հան-
դերձ Պոմպէիւ և բազումք 'ի Հռոմայե-
ցւոց և յայլոց ևս քաղաքաց շուրջանակի,
որովք Պոմպէոս ինքնին յառաջ անցեալ

և 'ի հրապարակէն 'ի բաց զԿղոդիոս վանեալ, ձայն տայր քաղաքին քուեայս արկանել։ Եւ պատմեն՝ ուրեք երբեք 'ի խորհրդեան ոչինչ այնպէս գեղեցիկ միաձայնութիւն ժողովրդեանն 'ի հաւանութեան իւրում, որպէս յայնժամ : Իսկ և Սինկղիտոսին ել և ելս արարեալ ընդ խուժանին, տայր վճիռ գովութեանց և դրուատից առհասարակ քաղաքացն՝ որ զամ մի հիւրամեծարք ասպնջականք եղեն Կիկերոնի 'ի վտարանդութեանն. առ այս՝ զի և 'ի ծախուց արքունի միասանգամ շինեսցին դաստակերտք նորա որ 'ի քաղաքին և որ 'ի շինին, զոր քանդեալ տապալեաց Կղոդիոս :

Յետ այսորիկ ապա դառնայր դայր Կիկերոն 'ի հայրենի քաղաքն, յետ վեշտասան ամսոց վտարանդութեանն. և յայնժամ մեծապէս էին խնծղանք քաղաքաց և փոյթ խնամոց և աշխոյժք մարդկանն ընդառաջ ելանել նմա. որպէս զի և զոր ապա ինքնին Կիկերոն ասաց, արդեօք պակաս ասաց քան զճշմարտութիւնն։ Քանզի ասաց՝ 'ի վերայ ուսոց բարձեալ Իտալիոյ մտի 'ի Հռոմ։ Յայնժամ և ինքնին Կրասոս թշնամի նորա՝ մինչև վտարանդեալ, ընդ առաջ գայր նմա մտադիւր յօժարութեամբ և հաշտէր ընդ նմա՝ որպէս ինքն իսկ ասէր 'ի շնորհս որդւոյն իւրոյ Պոպղիոսի, որ թեւակոխէր նմանօղ լինել Կիկերոնի։

Իսկ յետ ոչ բազմաց՝ իբրև մեկնեցաւ

ուրեք Կղոդիոս, դէպ ժամանակ գտեալ Կիկերոնին, յարուցեալ եղանէր բազմութեամբ 'ի Կապիտոլիոն. և անդ 'ի վայր ձգեալ ջախէր խորտակէր զտախտակս ժողովրդապետական յիշատակարանաց գործոցն Կղոդեայ: Իբրև բողոք եբարձ Կղոդդիոս, և յաւել Կիկերոնին' եթէ պատրիկ գոլով ժողովրդապետ եկաց նա ընդդէմ օրինաց, ուստի և անվաւերական են ամենայն գործք նորա. լուեալ զայն Կատոննի' սրտնեցաւ և ընդդէմ դառնայր. ոչ եթէ զԿղոդիոս գովէր, զի և ընդ գործս առն սրտմտեալ իսկ էր, այլ կայր և ցուցանէր իբրև գործ բուռն և դժնդակ' վճիռ անվաւերութեան առ Սենկղիտոսին վասն այնչափ ինչ սահմանաց և գործոց ժողովրդապետութեանն Կղոդեայ. յորոց 'ի կարգի էին և ամենայն նահատակութիւնք Կատոնին' որ 'ի Կիւպրոս և որ 'ի Բիւզանդիոն: Յայսմանէ ապա յուզեցաւ վէճն Կիկերոնին և Կատոնին. սակայն և ոչ 'ի դժպատեհս ինչ յայտնի կրթեցան նոքա. նուազեցան միայն 'ի մտերմութենէն' որ առ միմեանս:

Դէպ եղև յետ այսորիկ սպանանել Միլոնի զԿղոդիոս. ուստի և ամբաստանեալ յատենի, առնոյր իւր փաստաբան զԿիկերոն: Բայց Սենկղիտոսին զանգիտեալ, եթէ 'ի վտանգ պաշարեալ այնպիսի այր հոյակապ և արիական' իբրու զՄիլոն, խռով հարցի 'ի քաղաքին, հրաման տայր Պոմպէի սաանկան 'ի վերայ կալ դատաստա-

նին այնմիկ և այլոց ևս դատաստանացն յան-
դորրութիւն քաղաքին և ատենից: Իսկ
Պոմպէոս մինչդեռ տակաւին դիշէր էր՝
պարսպեալ զօրականօք զհրապարակն ծայր
'ի ծայր, երկեաւ Միլոն եթէ յանսովոր
տեսլենէն զարհուրեսցի ինչ Կիկերոն և
Թուլադոյնս պայքարեսցի, հաւանեցու-
ցանէր զնա բարձեալ բերել շալակաւ 'ի
հրապարակ անդր. և անդէն հանդարտել՝
մինչև 'ի խմբել դատաւորացն և 'ի լնուլ
ատենին:

Քանզի և Կիկերոն ինքնին ո՛չ անարի
միայն 'ի զէնսն էր՝ (որպէս երևիդ), այլ
և վատասիրտ սկիզբն առնէր ատենաբա-
նութեանն, և հազիւ ուրեմն 'ի տեղի տալ
տրոփելոյ սրտին և դողութեանն՝ 'ի ջեր-
մանալ պայքարին կորովանայր 'ի ճարտա-
րաբանութեան անկռուելի ամրութեամբ:
Ըստ որում և յորժամ յանձին կալեա
նա պաշտպանել Լիկիննիոսի Մուրենեայ,
զորմէ ամբաստան կայր Կատոն. քանզի
պատուասիրեաց Կիկերոն յաղթել Հոր-
տենսիոսի՝ որ 'ի պայքարին ծափս առնոյր
մեծամեծս, և ո՛չ զմասն մի հանգեաւ զգի-
շերոյն Կիկերոն. զի և առ ճեպ ջանից
պարապմանն և առ տքնութեանն՝ յոյժ
տկարացեալ՝ նուազ երևեցաւ նա քան
զՀորտենսիոս:

Արդ յայնժամ ելեալ նա 'ի դուրս 'ի
շալակէն՝ խօսել զդատն Միլոնի, տեսեալ
զՊոմպէոս կացեալ անդ 'ի վերոյ հրապա-
րակին իբրու 'ի բանակի զօրուն, և զշողիւն

և զփայլել զինուցն առհասարակ 'ի վայրին, այնպէս իմն սրտաթափ եղև, զի և հազիւ ուրեմն բուռն զբանիցն հարկանէր դեդևուն անձամբ և հատկլեալ ձայնիւ. իսկ անդուստ Միլոն մերձ անցեալ կայր բեմին արիադոյնս և քաջասիրտս. զի և յանձն չէառ նա երկայնել ձգել զհերսն և ոչ 'ի Թուխ ինչ համօկել. որ և Թուի այս՝ ոչինչ դուզնաքեայ սատար լեալ 'ի դատապարտութիւն առնն: Այսպէս Կիկերոնն զայն օր՝ քան անարի ոք, առաւել ևս խանդաղատել 'ի բարեկամին կարծեցաւ 'ի ժամուն:

Յետ այնորիկ դասեցաւ Կիկերոնն ընդ քահանայսն՝ որոց անուն կարդան Հռոմայեցիք՝ Հաւահարցք, փոխանորդեալ զԿրասոսս կրսեր՝ որ սպանաւ 'ի Պարթևս: Եւ ապա վիճակ եղեալ նմա Կիլիկիոյ կուսակալութիւնն, և զօր ևս երկոտասան հազար հետևակաց, և երկու հազար և վեց հարիւր այրուձիոյ, եղեալ նաւադնաց լինէր: Եւ ունէր նա պատուէր հրամանի՝ ընդ ձեռամբ Արիոբարզան արքային ամոքել և զԿապադովկիա. զոր և 'ի դլուխ տարեալ՝ անդ զամենայնն անկախ և անբամբաս յարդարեալ այլոյն: Իսկ իբրև խլրտել ինչ զԿիլիկեցիսն ետես վասն հարուածոյն Հռոմայեցւոց առ 'ի Պարթևացն, և վասն այն ինչ վտարանջութեանն Ասորւոց, առեալ հեղ և հանդարտ իշխանութեամբն 'ի խաղաղութիւն համոզեաց զնոսա: 'Ի պարգևաց մասին նա չէառ ինչ եր-

բէք, և ոչ դարձեալ յընծայաբերութեանց ինչ արքայից. առ այսոքիւք՝ և ազատ զգաւառացին առնէր 'ի կոչնոց ընթրեացն՝ զոր պարտէին նմա. նա և ինքնին յիւր սեղանն օր ըստ օրէ հրաւիրէր զլաւորեալսն, հիւրընկալեալ զնոսա ոչ մեծահացս ինչ, սակայն և պարկեշտագոյնս: Չէր նորա դռնապան 'ի տան. և ումեք երբէք չերևէր ընկողմանեալ 'ի մահճի. այլ ընդ այգս այգուն յարուցեալ՝ առնոյր ժողովէր յոտին կամ թէ ձեռն առեալ հանդէպ սենեկին՝ որք միանգամ յայգորել գային առ նա: Եւ պատմեն՝ երբէք նմա ոչ տալ գանել զոք գաւազանաւ, և ոչ զուրուք պատմուճան պատառել, և ոչ դարձեալ յիշոցնատու և թշնամանագիր ումեք երբէք լինել առ զայրոյց բարկութեան կամ առ 'ի պատուհաս: Առ այս՝ և շատ ինչ 'ի հասարակաց գոյից տեսեալ դրաւականեալ, անդրէն միւսանգամ հաստացուցանէր զքաղաքս, տայր դարձուցանել նոցա ըզգոյսն, ոչինչ չարչարեալ զգրաւականողսն, այլ և համբաւոյն ևս նոցա պատճառ կայր:

Անդանօր կացեալ, և վայր մի միջամուխ ևս լինէր նա 'ի նահատակութիւն. քանզի վանեալ 'ի փախուստ դարձոյց զասպատակաւորսն որջացեալս յԱմանոն լերին, յորմէ և ինքնակալ անուն կարդացին նմա զօրականք: Եւ իբրև աղաչէր զԿիկերոնն Կեկիլիոս հռետոր արձակել առ նա 'ի հռոմ յովազս 'ի Կիլիկիոյ 'ի տեսարան

խաղուց, նա յանձն իւր զուարճացեալ ընդ անդանօր նահատակութիւն իւր, գրէր պատասխանի՝ եթէ 'ի Կիլիկիա չեն ուրեք յովազք, փախուցեալ չոքան նոքա 'ի Կարիա. ցասեան զի ընդ նոսա միայն մարտ եդեալ կուռին 'ի Կիլիկիա՝ ուրանօր 'ի խաղաղութեան կան առհասարակ:

Իսկ 'ի դարձին իւրում 'ի գաւառէ անտի, գայր հասանէր Կիկերոն 'ի Հռոդոս. ապա յԱթէնս. ուր և մտադիւրագոյնս դեգերէր, յուշ ածեալ տենչմամբ զթարթափել իւր անդ յառաջին ժամանակս: Անդանօր կենակից կենցաղակից եղեալ նախաթոռ գիտնաւորացն, և դիրկս ածեալ բարեկամացն և ընտանեացն, և այնպէս պքանչացեալ առհասարակ յՀելլադայ և մեծապէս պատուեալ, դառնայր 'ի հայրենի քաղաքն. յորում ժամանակի և քաղաքին իրք՝ իբրև հրակէզ խաղաւարտ՝ յորդեալ պայթեցաւ 'ի մարտ ընտանի:

Իսկ իբրև վՃիռ յաղթանակին նորա տայր Սինկղիտոսն, ասէր Կիկերոն՝ մտադիւրագոյն ևս ինքնին զհետ երթալ Կեսարու յաղթանակին՝ 'ի խաղաղել իրացն. և առանձին ապա գործակից 'ի նոյն լինէր իւրովք խորհրդովքն. առեալ գրէր բազում անգամ առ Կեսար, աղաչէր ողոքէր բազում անգամ զՊոմպէոս. գուն գործէր ճգնէր հաշտ առնել ամոքել զերկոսին միանգամայն: Այլ զի էր էր իսկ բանն ապստամբ 'ի հնարից դեղոց. իբրև 'ի վերայ խուժեալ հորդան ետ Կեսար, ոչ

ինչ հանդարտեաց Պոմպէոս. եԹող ելեք զքաղաքն հանդերձ բազմուԹեամբ լաւո֊րերոյն. իսկ Կիկերոնն ոչ չոքաւ 'ի փա֊խըստեան նոցա, և համարեցան յարել նմա 'ի Կեսար: Սակայն և յայտնի՝ նա բազում ինչ յուզեալ 'ի խորհուրդս իւր վարանէր. էր՝ զի զմիոյն Թեակոխէր, և էր զի զմիւ֊սոյն. քանզի և ինքնին Կիկերոն 'ի Թուղթս իւր գրէ այսպէս. "Եւ զո՞ր ապա ունել պարտ իցէ կողմն: Քանզի է իսկ Պոմպէի փառաւոր և գեղեցիկ պատճառք մարտի պատերազմի. բայց Կեսար լաւա֊գունին ևս հասեալ վիճակի, հեշտին ևս ապրեցուսցէ և զանձն և զբարեկամսն. որ֊պէս զի և է ինձ արդեօք փախչել յումեքէ, այլ ոչ և փախչել առ ոք":

Յայնժամ գիր առ նա գրէր Տրեբա֊տիոս ոմն բարեկամ Կեսարու. ասէր՝ եԹէ և ինքնին Կեսար անշուշտ 'ի մտի եդեալ է յարել նմա 'ի նա և հաստարակորդ լինել յուսոյն նորա. ապա եԹէ առ ծերու֊Թեանն՝ 8 ասէ՝ անկոխ կամեսցի կալ յու֊զի անկցի յՆԼլադա՝ անդ կեալ յանդորրու֊Թեան յերկոցունց կողմանց: Զարմա֊ցաւ Կիկերոն՝ զի ոչ ինքնին իւրովք իսկ ձեռօքն գրեաց Կեսար. տայր պատասխա֊նի զայրագինս՝ եԹէ երբէք նա գործեսցէ և ոչինչ անարժան առաջին գործոցն իւրոց 'ի քաղաքին: Այս ինչ են գրեալքն 'ի Թուղթս նորա:

Ապա յետ այնորիկ չու արարեալ Կե֊սարու յԻբերիա կոյս, յարեաւ Կիկերոն

և ճեպով նաւագնաց լինէր առ Պոմպէոս. անդ հիւրընկալեալ սիրով յայլոց ոմանց, այլ ոչ և 'ի Կատոնէ, որ առանձինն զնա շատ կշտամբեաց՝ զի եկն յարեցաւ 'ի Պոմպէոս: Քանզի ասէր նմա Կատոն, եթէ վասն իւր՝ չէր ինչ գեղեցիկ թողուլ լքանել զկարգ քաղաքականութեանն զոր 'ի սկզբանէն յանձին կալեալ. իսկ վասն նորա՝ օգտակարագոյն ևս էր հայրենեացն և բարեկամացն՝ կալ հանդարտել նմա 'ի Հռոմ և միտել և ոչ 'ի մին՝ ըստ դէպս կառավարեալ իրացն. բայց զարդիս ոչ գործելով զնոյն՝ յանխորհուրդս և անբռնադատ 'ի թշնամութիւն դարձոյց զԿեսար, և եկն խառնեցաւ յանհնարին վըտանգն:

'Ի բանից աստի Կատոնի ստրջացաւ Կիկերոն ընդ խորհուրդսն. մանաւանդ զի և Պոմպէոս ոչինչ 'ի գործ կարևոր վարեաց զնա: Սակայն պատճառք ինքնին իսկ էր Կիկերոն. ոչինչ թաքոյց՝ եթէ ստրջացաւ. այնպէս յընչաց քերէր զկազմած պատրաստութեանցն Պոմպէի, և դժկամակ անձամբ՝ ոչ հանդարտէր խորհրդոց նորա. տեղի չետ 'ի հեգն և 'ի զուարճախօս բանից իւրոց առ նիզակակիցսն. ինքն այնու անժպիտ և խոժոռադէմ շրջէր 'ի բանակին, և 'ի ծաղր շարժէր զայլս յակամայս նոցա: Եւ լաւ իցէ ինչ ինչ յայնպիսեաց անտի կարգել աստանօր:

Իբրև Դոմիտիոս խնդրէր զայր ոմն անփորձ պատերազմի ամբառնալ յաւագու-

թիւն զօրավարի, և ասէր զնա այր լաւ և իմաստուն և պարկեշտ. ասէ Կիկերոն. «Եւ առ ի՞նչ ապա ոչ ունիս դու զայրդ զայդ 'ի դաստիարակ որդւոց քոց»: Իսկ և 'ի գովել ոմանց զԹէոփանէս Լեսբացի՝ հրամանատար արուեստաւորաց 'ի բանակին, զի գիտաց նա քաջիկ սփոփել զՀռոդացիս 'ի խորտակել նաւահանգիստն նոցա, ասէր Կիկերոն. «Բա՛րէ՝ քանի՜ բարի իցէ ունել հրամանատար զայր Հոռոմ»: Առ այս՝ և 'ի բաղումն յաջողել իրացն Կեսարու և 'ի պատել պաշարել նորա զՊոմպէոսեանսն, ասէր Լենտղոս՝ եթէ լուր եհաս առ նա խոժոռութեան բարեկամացն Կեսարու. Եւ պատասխանի Կիկերոն. «Ասես դու ուրեմն, եթէ չարիս խնդրեն դոքա Կեսարու»: Որպէս և 'ի բանակ անդր այն ինչ հասեալ յԻտալիոյ Մարկիոսի ուրումն, և յասել իւրում՝ ձայն առհասարակ հնչէ 'ի Հռոմ պաշարմանն Պոմպէի. ասէ Կիկերոն. «Եւ դու ինքնին այսր նաւեցեր՝ հաւատալ զայդ քոյին իսկ աչօք»:

Իսկ յետ հարուածոյն Պոմպէի՝ յասել անդ Նոննիոսի, եթէ քաջայոյս տակաւին պա՛րտ է լինել, զի արծուիք եօթն թուով դեռ ևս կան 'ի բանակին Պոմպէի. Եւ պատասխանի Կիկերոն. «Գեղեցիկս արդեօք քաջալերէիր, եթէ էր մեզ կռիւս ընդդէմ սակռուց»: Որպէս և 'ի պնդել անդ Լաբիենոսի 'ի գուշակութեանց ինչ, եթէ յաղթել հասանէ Պոմպէի, ասէ Կի-

կերոնն. " Սակայն և զհնարիմացութիւն զայդ 'ի վար առեալ՝ կորուսաք մեք զըսպանակն ,, :

Արդ 'ի խորտակել և 'ի փախուստ դառնալ Պոմպէի 'ի փարսալեան պատերազմին՝ ուր չէր մօտ Կիկերոնն՝ զի խօթ էր. յայնժամ Կատոնն 'ի Տիւրրաքիոն բազմաձեռն ունելով գունդ և նաւահանգէս, կամէր զի զօրավար կացցէ ինքնին Կիկերոնն ըստ կարգի օրինացն՝ հիւպատեան գոլով այրն. բայց նորա հրաժեշտ 'ի զօրավարութենէն տուեալ, և համբուն անձնապահ 'ի զինուորութենէն եղեալ, վայրիկ մի ևս անդէն 'ի մահ վարէր զնա Պոմպէոս կրսեր և բարեկամք նորա. մատնոտու կարդային զԿիկերոնն և մերկացեալ ևս էին զսուսերսն, թէ ոչ հապ ճեպ անձապարեալ Կատոնի և ընդդէմ դարձեալ՝ հազիւ ուրեմն ճողոպրէր զայրն և ածէր արտաքոյ բանակին:

Ապա յուղի 'ի Բրենդիսիոն անկեալ Կիկերոնի, անդէն զկայ առեալ մնայր Կեսարու՝ որ թարթափեալ կայր յԱսիա և յԵգիպտոս: Եւ լուր առեալ դալստեան նորա 'ի Տարանտոն, և զի անտի դէմ եդեալ գայ հետի 'ի Բրենդեսիոն, չոքաւ ընդ առաջ նորա՝ ոչ ինչ անբաժ գլխովին 'ի բարիոք յուսոյն, սակայն և ամաչէր ըզչափ առնուլ զոդւոյն զթշնամւոյ առն և զյաղթականի՝ յանդիման բազմութեանն: Բայց և պէտք ինչ չեղեն նմա առնել կամ ասել ինչ մի դժպատեհ փառաց անձինն:

Քանզի տեսեալ զնա Կեսարու 'ի հանդի-
պոյ ընդ առաջ իւր և հարուստ եւ միջո-
ցաւ յառաջադէմ քան զընկերսն, վայր-
իջեալ՝ ողջոյն տայր նմա, և միայն ընդ
միայն զբանիւք ընդ նմա անկեալ՝ գնայր
այնպէս ասպարէզս չափ։ Եւ յայնմ օրէ
ապա պատուէր զնա Կեսար համապազ և
սիրէր. որպէս զի և յարձանագրել Կիկե-
րոնի զներբողն Կատոնի, թէպէտ և զհա-
կառակն արձանագրեաց և Կեսար, սակայն
և 'ի գովութիւն առ միանգամայն և զճար-
տարախօսութիւնն Կիկերոնի և զվարս
քաղաքավարութեան նորա՝ իբրու հան-
գունատիպ յոյժ Պերիկղեայն և Թերամե-
նեայն։ Եւ անուանեցաւ արձանագրու-
թիւնն Կիկերոնի՝ ԿԱՏՈՆ. և Կեսարուն՝
ԴԻԷՐԱԿԱՏՈՆ։

Եւ պատմեն՝ եթէ յամբաստանիլ յա-
տենի Կուինտոսի Լիգարիոսի՝ իբրև զմի 'ի
թշնամեաց անտի Կեսարու, և 'ի պաշտպան
կալ նմա Կիկերոնի, ասէր Կեսար առ
բարեկամսն. “Եւ զի՞նչ ապա արգելու-
ցու զմեզ՝ յետ այնչափ ժամանակաց՝ լսել
Կիկերոնի. թէպէտ և 'ի հարուստ ժա-
մանակաց այրդ այդ անզգամ Լիգարիոս
և թշնամի դատեալ իսկ է„։ Բայց 'ի սկը-
սանել Կիկերոնի յատենաբանել, անդէն
և Կեսար յեղակարծումն 'ի գութ գորո-
վեցաւ. և ըստ չափու յառաջադէմ ատե-
նախօսութեան առնն 'ի կիրս բազմադէմս
և 'ի սքանչելի շնորհաց զարդս, ապա և
յայտնի իսկ եղև տեսանելեացն՝ զի գոյն 'ի

դոյն համանէր շրջէր ոտից երեսացն կե-տալոյ, և նորա յուղէր ծփայր ոգին 'ի դիմանկ դիմանկ կրից։ Իսկ իբրև 'ի վերջէ բան ճառեաց հռետորն և վասն նահատակութեան փառ-սաղեան մարտին, ասէն՝ եթէ անհնարին շարժեցաւ կեսար, և ողջոյն մարմինն սար-սէր, և 'ի գետին եա անկան զերծան թուղթք 'ի ձեռաց նորա։ Եւ այնպէս ա-պա ուժգին հարկեցաւ կեսար յաղատու-թիւն արձակել զԼիգարիոս։

Բայց յետ այսոցիկ 'ի փոխել քաղաքա-կանութեանն 'ի միապետութիւն, եթող եկեք Կիկերոնին զհասարակացն և պարա-պեալ կայր 'ի հրահանգս պատանեաց՝ որ հետամուտք էին իմաստասիրականին. և յայնմանէ ապա՝ ընտանութեամբն ընդ քաջատոհմիկ և ը ասադ պատանեաց քա-ղաքին՝ անդրէն միաանդամ մեծապէս զօ-րացաւ։ Բայց էր նա պարապեալ յարձա-նագրութիւն տրամախօսութեանց իմաս-տասիրականին և 'ի թարգմանութիւն նո-ցուն, և 'ի Հռոմայեցւոց բարբառ յեղուլ 'ի յունէն առհասարակ զմէն մի անուանցն զտրամաբանութեն և զբնականին։ Քան-զի և նա ինքն առաջին՝ որպէս ասեն՝ ա-նուանեաց յիւր լեզու զՊղատոնն զհել-լենացւոց, և զՔսենոփոնն և զԴեմոսթենէս և զԵսքինէս. դարձեալ և զԱրատոս և զՀո-մերոս և զԵւրիպիդէս. 9 և այլ ինչ շատ յայս-պիսեաց աստի առաջին սա անուանեաց հռոմայեցի, կամ թէ ինքնին ս' շուշտ ա-ռաւել քան զամենայն Հռոմայեցիս գոր-

ծակից եղև յայտնի, թևակոխեալ յայտ-
նել և իմացուցանել զանուանսն. կէս մի
այլաբանաբար, և կէս մի՝ սեպհական ձայ-
նիւքն:

Բայց և սփոփութեան աղագաւ նա 'ի
գործ վարէր և զմեծապէս յաջողակու-
թիւնն առ 'ի քերթածսն: Քանզի և պատ-
մեն՝ 'ի գեղեցիկս մոլել իւրում՝ քերթել
նմա 'ի միում գիշերի տաղս հինգհարիւր:
Իւ բաղում ինչ 'ի ժամանակէն անցու-
ցանէր նա մօտ 'ի Տուսկղոն 'ի կալուածին
իւրում. ուստի և գրէր վասն անձին առ
բարեկամսն՝ կեանս վարել զԼայերտեայ.
և գրէր նա զայս կամ զուարթաբանելով
ըստ սովորութեանն, կամ թէ 'ի պա-
տուասիրութենէն, ըղձացեալ միջամուխ
անդրէն 'ի քաղաքականսն լինել, և տաղտ-
կացեալ ընդ առաջիկայ դէպսն: Սակայն
և դուն ուրեք երևէր 'ի քաղաքին, և դնայր
նա անդ վասն Կեսարուն. և էր իսկ ինքն
առաջին 'ի սատարսն փառաց պատուոյն
նորա և որ ցանդ թևակոխէին ինչ մի ասել
նոր 'ի գովութիւն առնն և գործոց նորա.
ըստ որում և զոր ասաց նա վասն պատկե-
րացն Պոմպէի կործանելոցն, զորս անդրէն
կանգնել հրամայեաց Կեսար՝ որպէս և ե-
ղև իսկ. քանզի ասաց յայնժամ Կիկերոն.
Կեսար մարդասիրութեամբդ այդուիկ՝
միանգամայն և զանդրին կանգնեաց զՊոմ
պէի, և զիւրսն ամուր արձանացոյց:

Ապա զմտաւ ածեալ Կիկերոնի՝ որ-
պէս ասեն՝ արձանագրել պատմութիւն

զիւրոց հայրենեացն, 'ի նոյն խառնեալ և
բազում ինչ զհելլենացւոցն, և յօդեալ 'ի
նոյն ողջոյն զնոցա վէպսն և զառասպելսն,
արդելաւ 'ի բազմապատիկ ականմայ անպա_
րապութեանցն՝ հասարակաց և առանձինն,
և յայլոց ևս շատ խոչընդակաց, զոր և
թուի բազմագոյն մասամբ ինքնակամ յինքն
ձգել: Քանզի նախ առաջին 'ի բաց զկին
իւր արձակէր զՏերենտիա, զի հոգ չկալաւ
զնորա 'ի ժամանակի անդ մարտին, և նա
'ի կարևոր պաշարոյն անմասն այնպէս յու_
զի անկանէր. և զի և 'ի դարձին իւր յԻ_
տալիա՝ չեգիտ ինչ զնա ըղձակաթ առ
ինքն, զի և ոչ չոքաւ առ նա 'ի Բրենդե_
սիոն՝ ուր բազում ժամանակ դեգերեցաւ
նա անդ. առ այսոքիւք՝ զի և ոչ վայելուչս
ինչ յուղարկեաց նա զիւր դուստրն Նորա_
տիք որ չոքաւ անդր՝ և ո՛չ նպարակ բաւա_
կան ետ զերկայն ճանապարհին, այլ և
մերկ և կողոպուտ յամենայնէն զտուն 'Կի_
կերոնին արարեալ՝ բազում և ծանր պար_
տուք գրաւեաց ևս զնա: Գեղեցիկ զայս
պատճառս 'ի ներքս արկանեն զարձակման
կնոջն:

Բայց ինքնին Կիկերոնն հաւատարմա_
ցոյց զպատասխանին Տերենտեայ, այն՝ որ
ժխտեաց յայնց պատճառաց բերիլ Կի_
կերոնին 'ի նոյն գործ. քանզի և ո՛չ յետ
բազմաց ինչ կին ածէր նա զօրիորդ մի կոյս՝
որպէս համբաւէր ինքնին Տերենտիա, հա_
րեալ 'ի նորա գեղն: Սակայն Տիրոն ա_
զատագրեալն Կիկերոնի գրեաց եթէ 'ի

գիւր հատուցման պարտուցն գործեաց զայն Կիկերոնի. քանզի բազմահարուստ էր աղջիկն և Կիկերոնի ինքնին էր ոտիկան հաւատարիմ պահապան ընչից նորա. ուստի և բազմաց բիւրուց պարտական գոլով նա՝ դրդեցաւ 'ի բարեկամացն և յընտանեացն կին առնել զնա, թէպէտ և 'ի տարաժամ հասակի, և 'ի պարտատեարցն ազատանալ ընչիւք նորա։ Բայց և Անտովնիոս յիշատակ արարեալ հարսանեացն այնմիկ յընդդիմագրութիւնն իւր ընդդէմ փիլիպպեանցն, ասէ՝ 'ի բաց Կիկերովնի զկինն վարել՝ ընդ որում ծերացեալն իսկ էր. միանգամայն և քաջիկ հեգնէ զընտասուն զկեանս Կիկերոնի՝ իբրու զանգործ առն և անզօր։

Այլ ոչ շատ ինչ անցեալ 'ի վերայ հարսանեացն, մեռանէր դուստր նորա յերկունսն առ Լենտուղոսի, որում և հարսնացեալն իսկ էր յետ մահուն Պիսոնի առաջին առնն։ Այսորիկ աղագաւ գային յայնժամ հասանէին առ նա 'ի կողմանց կողմանց իմաստասէրք մխիթարել սփոփել զԿիկերոնի. զի և այնչափ նա 'ի խոր խոցեցաւ ընդ արկածն, մինչ և զհարսնացեալն զայն առեալ 'ի բաց արձակէր. քանզի թուեցաւ իմն նա խնդալ ընդ մահուն Տուղղիայ։ Այսպիսի ինչ էին յայնժամ առտնին իրք Կիկերոնի։

Բայց 'ի դաւաճանութեան անդ ընդդէմ Կեսարու՝ ոչինչ բաժանորդ եկաց Կիկերոնի, թէպէտ և 'ի մտերիմ բարեկամաց

անտի Բրուտոսի էր նա և խոժոռեալ ևս ընդ վիճակ առաջիկայից և ըղձակաթ առաւել քան զամենեսեան 'ի նախնի կարգ անդր քաղաքին. սակայն դաւաճանք գործոյն ոչինչ վստահացան 'ի նա 'ի պատճառս անարի բուսոյ բարուց առնն և ծերացեալ հասակին՝ յորում և կորովք բընութեամբ բնաւորեցան վատել:

Արդ 'ի գլուխ զդաւն հանել Բրուտոսի և Կասսիոսի, և 'ի խմբել ը̅ միմեանս բարեկամացն Կեսարու, անդէն միւսանգամ արհաւիրք 'ի վերայ անկանէին քաղաքին ընտանի մարտից: Քանզի Անտոնիոս հիւպատոս 'ի ժողով զՍինկղիտոսն խմբեալ՝ կայր և խօսէր սղագունիւք յաղագս միաբանութեան. բայց Կիկերոնն բազում ինչ խօսեալ քաջավայելուչ ժամանակին, կայր և ամոքէր զծերակոյտն՝ Աթենացւոցն լինել նմանող 'ի ժամուն. վճիռ տալ 'ի մոռացօնս համբուն դարձուցանել զանցսն Կեսարու, և կուսակալութիւնս 'ի ձեռս տալ Բրուտոսի և Կասսիոսի. սակայն և վճարեցաւ և ոչինչ: Քանզի խուժան ժողովրդեան ինքնին 'ի գութ խանդաղատեալ 'ի տեսլենէ անտի դիականն Կեսարու զոր բարձեալ բերէին ընդ հրապարակն, այն ինչ անդուստ և Անտոնիոս առեալ ցուցանէր խուժանին զպատմուճանն Կեսարու արիւնաթաթաւ և 'ի բնաւ խոկ 'ի մասունսն ծակոտկէն 'ի սուսերաց, մոլեգինս յայնժամ 'ի ցասումն բրդեալ ժողովուրդք վազէին հետախոյզք ընդ հրապարակն

զհետ արանցն, և հուր 'ի ձեռս՝ ընթանային հրդեհակէզ զտունս նոցա առնել։ Այլ նոքա յառաջագոյն կանուխ ըզգուշացեալք՝ ապրեցան 'ի վտանգէն. և զանգիտեալք ևս 'ի բազում և 'ի մեծաց այլ վտանգաց՝ թողին ելին 'ի քաղաքէն։

Եւ այնպէս Անտոնիոս անդէն զօրացեալ տիրացաւ. և էր նորա ահն և հոյն 'ի վերայ ամենեցուն՝ իբրու միապետել նմա. բայց յոյժ ահագին Կիկերոնի. Քանզի տեսեալ Անտոնիոսի զԿիկերոնին բարգաւաճել 'ի քաղաքին, և գիտէր ևս զնա ըղձակաթ առ Բրուտոս, ոչինչ հանդարտեցաւ մերձ ունել զնա. առ. այս՝ զի և յառաջնմէ նոքա ընդ ակամբ հայէին ընդ միմեանս յաննմանութենէ անտի չափու կենաց նոցա։ Արդ զահի հարեալ Կիկերոնի, խորհէր զառաջինն նաւագնաց յԱսորիս լինել ը̄ Տոլաբելեայ իբրև ետեղակալ։ Բայց յայնժամ՝ Հիրտիոս և Պանսաս հանդերձեալք 'ի հիւպատոսութիւն յետ Անտոնիոսի՝ արք լաւք և հոյակապ նախանձաւորք Կիկերոնի, աղաչէին զնա մի թողուլ լքանել զնոսա։ Նա ակն ունելով 'ի միասին ընդ նոսա վանել զԱնտոնիոս և վարանեալ 'ի կրկին տարակոյս, եթող Տոլաբելեայ անկանել յուղի. և ինքն խոստումն տուեալ Հիրտիոսի և Պանսասայ, անցուցեալ զամառն յԱթէնս՝ դառնալ ապա 'ի Հռոմ յիշխանանալ նոցա, այնպէս ծովագնաց լինէր նա յայնժամ ինքնին միայնակ։

Այլ դեգերեալ և թարթափեալ 'ի նաւարկութեանն, և լուր եւս առեալ 'ի Հռովմայ (ըստ որում և պատահէ), եթէ Անտոնիոս ինքնին սքանչելապէս փոխեալ՝ ըստ Սինկղիտոսին կամաց քաղաքավարէ յամենայնի, և 'ի բարիոք կարգ քաղաքին՝ առաջակայութեանն նորա միայն պէտք իցեն, յայնժամ Կիկերոնի ընդ անձին ոգորեալ 'ի տարապայման յիւրում վստահութեանն, անդրէն միւսանգամ դառնայր 'ի Հռոմ:

Եւ արդեօք 'ի դերևս չեւ նա զառաջինն 'ի յուսոյն իւրմէ. այնչափ ինչ խուռն ամբոխ ընդ առաջ ելեալ գայր նմա. և յայնժամ 'ի հիւրընկալութիս և 'ի ցոյցս խանդակաթս առ դուրս նորա և 'ի մուտս՝ ծախեցաւ գոգցես օրն ողջոյն: Իսկ յաւուրն երկրորդի խմբեալ Անտոնիոսի զՍինկղիտոսն, և կոչեալ անդր և զԿիկերոնն, նա ոչ չոգաւ. և մնայր անդէն 'ի մահճին՝ պատճառեալ զխոնջ ուղւոյն. այլ էր բանին ճշմարիտ պատճառք երկիւղ դաւանացն 'ի կասկածանաց ինչ՝ զոր ազդ արարին նմա յուղւոջ: Ապա Անտոնիոս սրտմտեալ ընդ յերկուանան, առաքէր զօրականս հրաման տուեալ ածել զնա կամ թէ հրդեհել զտուն նորա. իբրև բազումք յայնժամ աղերս արկին Անտոնիոսի՝ հանդարտեցաւ այրն, և շատացաւ միայն գրաւ առնուլ: Իսկ այնուհետև 'ի պատահել նոցա միմեանց՝ միշտ զանց առնէին զմիմեամբք՝ անբարբառ, և այր յընկերէն զգուշանայր:

Մինչև եկեալ հասանէր յԱպողոնիոյ կըրսերն կեսար. որ և ժառանգ նա գոլով մեծին կեսարու՝ 'ի վէգ և 'ի պայքար եմուտ ընդ Անտոնիոսի վասն երկու հազար և հինգ հարիւր բիւրուց դրամակշռոց՝ զոր Անտոնիոսի առեալ էր 'ի գոյից անտի:

Յայնժամ Փիլիպպոս՝ որ կին առեալ էր զմայր պատանւոյն կեսարու, և Մարկեղոս քեռայր նորա, յարեան չոքան ընդ պատանւոյն առ Կիկերոնին. և յուխտ դաշին մտանէին ընդ Կիկերոնի, զի նա զօրավիգն և 'ի Սենկղիտոսին և առ խուժանի կացցէ պատանւոյն Ճարտարաբանութ̃բն և հնարաւոր իմաստութեամբն. իսկ անդուստ և պատանին պաշտպան կացցէ Կիկերոնի արծաթով և զինու. զի և էր իսկ ընդ պատանւոյն ոչինչ սակաւաձեռն գունդ զօրականին՝ որ զինուորեալ կային առ մեծին կեսարու:

Արդ՝ թուի ինձ յայնժամ Կիկերոնի գրգել 'ի մտադիւր բարեկամութիւն ընդ պատանւոյն և՛ յայլ մեծ ևս պատճառաց: Քանզի մինչդեռ տակաւին կենդանիք էին (որպէս հաւանեալս եմ) Պոմպէոս և Կեսար մեծ, երևութանայր Կիկերոնի յերազի իւրում՝ ձայնել կարդալ 'ի Կապետոլին զմանկտի աւագորերոյն, իբրու այն թէ ընտրել Արամազդայ զոք 'ի նոցանէն՝ իշխան Հռովմայ. անդ և քաղաքացիք Ճեպով ընթացեալք շուրջ կային զմեհենիւն. իսկ մանկտին անդանօր նստեալ էին անմռունչ արկեալ պատմուճան. իսկ յան-

կարծակի բացեալ դրացն և յարուցեալ մանկտոյն կարգ 'ի կարգ շրջան առեալ անցանէին առաջի դիցն, որ դէտակն 'ի մէն մի 'ի նոցանէն կալեալ՝ առեալ զնոսա թաղծագինս այնպէս արձակէր 'ի բաց. մինչև եկն մատեաւ առ նա մանուկս այս, և կարկառեալ 'ի նա դիցն զաջն՝ ասէր, "Սա այս ով Հռոմայեցիք՝ յիշխանանալ իւրում վախճան տացէ ընտանի մարտից,,: Եւ ասեն՝ յերազանալ իւրում զայս Կիկերոնի՝ ճշգրիտ 'ի միտս տպաւորել ըզդէմս մանկանն. թէպէտ և ճանաչէր իսկ ոչ զնա. և ապա առ վաղիւն յիջանել իւրում 'ի դաշտն արեսեան, այն ինչ մանկունք դառնային 'ի մարզիցն խաղեանց, դէպ եղև Կիկերոնի տեսանել 'ի նոսա ըզմանուկն զայն՝ զոր ետես 'ի քուն: Անդանօր յապուշ կրթեալ Կիկերոնն հարցանէր զծնողս մանկանն. ծանեաւ զնա հայր ունել զՀոկտաւիոս՝ ոչ յոյժ յականաւորաց ինչ, և մայր զԱտտիա՝ քոյր Կեսարու, ուստի և Կեսար անորդի՝ սմա կտակաւ թողեալ զամենայն զդոյսն՝ դրէր զնա յիւր զարմի: Եւ պատմեն՝ յայնմ օրէ և առյապայ 'ի պատահել Կիկերոնի մանկանն՝ մարդասիրագոյնս թարթափել ընդ նմա, անդուստ և մանկանն խանդակաթս ընդունել զգգուանսն Կիկերոնի. զի և ծնունդ մանկանն հանդիպեալ էր յամի հիւպատոսութեանն Կիկերոնի:

Ընդ պատճառ զայս 'ի ներքս բերեն ըղձանացն Կիկերոնի առ նա. այլ 'ի ներ-

քոյ՝ նախ ատելութիւնն Կիկերոնի առ Անտոնիոս, ապա և բոյս բարուց նորա դիւրամէտ կրթեալ 'ի պատուասիրութիւն, յօդիւ կապեցին զնա ընդ Կեսարու կրսերոյ · ակն ունէր Կիկերոն յինքն տանել զզօրութիւն պատանւոյն 'ի վարչութեան քաղաքին · մանաւանդ զի և անդուստ պատանին հլու և հպատակ զանձն 'ի ներքս ընծայեալ նմա՝ հայր ևս անուն կարդայր նմա ։ Այր աղագաւ ապա և Բրուտոս մեծապէս սրտնեալ ընդ բանն՝ եպերեաց ըզԿիկերոն 'ի Թուղթս իւր առ Ատտիկոս · իբրու որ սպասարկութեամբն առ Կեսար առ ահին Անտոնիոսի քաջ իսկ 'ի դէմս բերէր՝ ոչ յազատութիւնն թեւակոխել հայրենեաց, այլ իշխան բարեմոյն խնդրէր անձին ։ Սակայն և այնպէս առեալ յինքն Բրուտոս զորդին Կիկերոնի՝ որ կայր յԱթէնս առ իմաստասէրսն, 'ի ձեռս տայր նմա զօրավարութիւն · և 'ի գործ ևս բազում վարէր զնա՝ յորս և յաջողեցաւն իսկ։

Ապա յայնժամ կարի յոյժ զօրացեալ Կիկերոն 'ի Հռոմ քաղաքի, և յաջողեալ յամենայնին՝ տիրացեալ յիւր կողմն՝ վանեաց մերժեաց 'ի բաց զԱնտոնիոս · և 'ի մարտ ևս ընդդէմ նորա առեալ արձակէր զհիւպատոս կրկին զՀիրտիոս և զՊանսաս· և ամոքէր ևս զծերակոյտն վճիռ տալ վասն Կեսարու զգաւազանակրաց և զայլոց ևս զարդուց զզօրավարի՝ 'ի կռուել ընդ նորա 'ի վերայ հայրենեաց ։ Բայց քանզի հարաւ խորտակեցաւ յայնժամ Անտոնիոս,

'ի նոյն և տապաստ ևս անկան կրկին հիւպատոսք, և բանակք զօրուն յետ մարտին չոքան առհասարակ խմբեցան ընդ Կեսարու, զանգիտեաց Սինկղիտոսն 'ի պատանւոյն, զի այնպէս յանկարծակի գեղեցիկ և մեծին հանդիպեցաւ բաղդի. խնդրեաց յետս զզօրն կոչել՝ իբրու որ պատիւ և մրցանակ 'ի ներքս տայցէ զօրականին, և այնպէս տեւապելոծ 'ի զօրութենէն առնել զնա. և սակր՝ ոչինչ այնուհետև զօրականին պէտք իցեն 'ի պաշտպանութիւն անձին, քանզի և փախուցեալ իսկ էր Անտոնիոս: Ցայսմանէ զանգիտեալ Կեսարու առաքէ գաղտ արս առ Կիկերոն. աղաչէր զնա և ամոքէր, առնուլ զհիւպատոսութեան բարձն վասն երկոցուն միանգամայն. և խելամուտ ևս առնէր զնա՝ յիշխանանալ նորա առաջնորդել քաղաքին ըստ կամի. քանզի և պատանին ըղձակաթ միայն անուանն բարձին և պատուոյն՝ անձնատուր գլխովին նմա լինիցի: Եւ խոստովան ապա ինքնին եղև Կեսար, եթէ երկուցեալ թափուր 'ի զօրութենէն լինել և կալ ամայի՝ գործի իւր բարեպատեհ 'ի ձեռն առ զիշխանասիրութիւնն Կիկերովնի, յորդորեալ զնա 'ի հիւպատոսութիւն. գործակից ևս ինքնին և սատար նմա լինելով:

Այսպէս ուրեմն յայնժամ Կիկերոն 'ի վեր վազեալ և խաբեալ 'ի պատանւոյ անտի ծերն, և գործակից պատանւոյն լինելով և գծերակուտին ևս զմիտս 'ի նա

յանդուցեալ, եպերանս անդէն առնոյր յիւրոց բարեկամացն. և վայր մի ապա ինքնին ևս խելամուտ լինէր՝ զի անձամբ զանձն կործանեաց, և զժողովուրդն վրէպ կայոյց յազատութենէն:

Քանզի անդէն պատանին յաւագութիւն հասեալ հիւպատոսութեան և հաստահարուստ 'ի զօրութեան՝ եթող ելք զԿիկերոնն. և բարեկամութիւն հաստեալ ընդ Անտոնիոսի և ընդ Լեպիդոսի՝ առեալ զիւր զօրն խմբէր ընդ նոցայն. և ըզտէրութիւնն գլխովին՝ իբրու եթէ ժառանգութիւն՝ բաժանէր ընդ նոսա: Եւ ապա յայնմ հետէ ոգիս առաւել քան երկու հարիւր տարագիր առնէին նոքա, և խնդրէին զարեն հատանել նոցա: Իսկ յաղագս տարագրութեանն Կիկերոնի անհնարին պայքար և հակառակութիւն յուզեցաւ ընդ նոսա՝ որպիսի ոչ երբէք. քանզի և դաշնաւոր յիմիք յանձն չառնոյր լինել Անտոնիոս՝ մինչև առաջին 'ի մահ վարեալ Կիկերոնի. ձեռն տայր Անտոնիոսի և Լեպիդոս. իսկ Կեսար ընդդէմ դարձաւ երկոցունց նոցա: Ապա 'ի խորհուրդ մտեալ նոքա գաղտնի ընդ միմեանս առանձինն զաւուրս երիս մօտ 'ի քաղաքն Բոնոնիա, և վայր խորհրդոյն նոցա էր տեղի հանդիպական բանակացն՝ առ որով գնայր գետն: Եւ ասեն պայքարել կռուել Կեսարու 'ի վերայ Կիկերոնի զաւուրս երկուս զառաջինսն, և ապա յերրորդումն տեղի տալ լքանել զնա: Եւ եղեն տրխուր դաշինք

նոցա առ միմեանս՝ այս. զի Կեսար ոչ ևս հովանի կայցէ Կիկերոնին. և Լեպիդոս՝ խնդրել եղբօրն Պաւղոսի. և Անտոնիոս՝ քեռւոյն իւրոյ Լեւկիոսի Կեսարու: Այսպէս ուրեմն նոքա յայնժամ առ մոլեգին սրտմտութեանն տեղի ետուն միանգամայն 'ի մարդասէր խորհրդոց. նա 'ի դէմս իսկ բերին նոքա՝ եթէ չէք գազան վայրենագոյն քան զմարդ, յորժամ կիրք և ոյժ 'ի միասին մերձ լիցին:

Իբրև այս այսպէս հանդերձեցաւ՝ էր Կիկերոն 'ի յագարակս իւր մօտ 'ի Տուսկուղոն. էր առ նմա և եղբայր իւր. իբրև նոցա բօթ հասանէր տարագրութեանցն, խորհուրդ հաստատեցին երթալ անդանել յԱստիւրա, դաստակերտ ծովափնեայ նորուն Կիկերոնին, և անդուստ խաղալ նաւել 'ի Մակեդոնիա առ Բրուտոս. քանզի և հռչակ հարեալ էր անդանօր յօրանալոյն նորա: Ապա յուղի անկեալ նոցա և բարձեալ բերէին 'ի դարգիճս՝ սրտառուչք թաղծեալք, և զկայ առեալք յուղւոյ՝ մօտ դարգիճ առ դարգիճ, այնպէս աշխարեալք կոծէին նոքա ընդ միմեանս: Բայց վարանեցաւ առաւել Կուինտոս՝ զմտաւ ածեալ զանպաշար ուղին, զի ասէր ոչինչ առեալ 'ի տանէն. նա և Կիկերոն նպարակ միայն դուզնաքեայ բարձեալ էր ընդ իւր. ուստի և լաւ համարեցաւ՝ յառաջագէմ Կիկերոնի փախչել գնալ, և ինքն դարձ 'ի տուն արարեալ առնուլ պաշար և ձեպել զհետ նորա: Զայս բանս

հաստատեալ, գիրկս ածեալ այր եղբօր իւրում՝ այնպէս հրաժարեցան ողբս առեալ և յարտասուս հատեալ: Բայց Կուինտոս յետ աւուրց սակաւուց մատնեալ յիւրոց իսկ ծառայից 'ի ձեռս արանց խնդրակաց նորա՝ սպանաւ 'ի նոցանէ հանդերձ զաւակաւն:

Իսկ Կիկերոնն ածեալ յԱստիւրա և 'ի պատրաստի գտեալ նաւ և ամբարձեալ՝ յաջողակ հողմով նաւարկէր մինչև 'ի Կիրկէոն: Անդուստ ապա պատրաստեալ ղեկավարքն արագ հատանել զուղին, նա յայնժամ կամ 'ի ծովէն զանգիտեալ կամ թէ չև նա գլխովին յուսահատուր 'ի Կեսարէ, ել 'ի ցամաք. և հարիւր ասպարէզս այնպէս հետի յառաջ խաղայր՝ իբրու դէմ եդեալ 'ի Հռոմ: Բայց անդրէն վատասրտեալ և 'ի խորհուրդսն զառածեալ, դարձ 'ի ծովն առնէր. անդէն օթագայեալ թաղծագին յոյժ և յանհնարին վարանս ծփայր 'ի հոգին. որպէս զի և 'ի միտս անդամ բախեցաւ նորա՝ գաղտագնաց մինչև 'ի տուն անդր Կեսարու լինել, և անդանօր զիւրովին երթեալ առ կրակարանին նորա՝ այնպէս Այս չար արկանել 'ի նա 'ի խեղդանձին նր̅: Սակայն և ահ խոշտանգանացն՝ կասեցոյց զնա յուղւոյ անտի: Ապա միւսանգամ 'ի խորհուրդս յուզեալ ոգետանջս և բազմածուփս, առեալ զանձն ապաստարէր իւրոց ծառայիցն՝ տանել զնա նաւու 'ի Կայիտաս, ուր և էր իսկ նորա վիճակ և դաստակերտ գեղեցիկ ամարա-

տուն 'ի շնչել անդ քաղցրասիւդ Եւտեսեանցն ։ Է անդանօր և փոքրիկ մեհեան Ապողոնի առ ափամբ ծովուն. իսկ 'ի մեհենէ անտի յայնժամ տարմ յոքնաթիւ ագռաւուց 'ի վեր վաղեալ, կռինչս արձակեալ գային թռչէին հանդէպ նաւուն Կիկերոնին՝ մինչդեռ թիավարեալ գնայր 'ի ցամաքն. և դարեալք դադարեալք աստի և անտի 'ի վերայ առագաստակալին, կէսք անդէն նստեալ կարկաջէին, և կէսք զծայրս ապաւանդակացն կրծէին, և նշան ձախողակի առհասարակ երևեցաւ յայնժամ բանն ։

Բայց Կիկերոնն իջեալ 'ի ցամաք և երթեալ յամարատունն իւր՝ ընկողմանէր հանգչել 'ի մահճի. բայց և շատք յագռաւուցն թռուցեալք եկին նստան 'ի պատուհանին՝ անհնարին բարձեալ կարկաջ. նա և մի յագռաւուց անտի 'ի վայր իջեալ 'ի վերայ մահճին՝ ուր ողջոյն ծածկեալ կայր Կիկերոնն, կոցաւն այնպէս տակաւ 'ի բաց յերեսացն առնոյր ձգէր զմուքմանն ։ Զայն տեսեալ ծառայիցն, և անձամբ զանձինս այպանեալք՝ զի այնպէս հանդարտեն կալ մնալ 'ի զնին մահու տեառն իւրեանց, և ուր անբանիցն տարմ ձեռն տան գլխովին և խնամ անպարտակիր առնն ածեն, իսկ նոքեանք յուլացեալ կան յօգնել նմա. ապա կէս մի յողոք անկեալ, և կէս մի բուռն ևս արարեալ, այնպէս բարձեալ տանէին շալակաւ զԿիկերոնն 'ի ծով անդր ։

Իսկ 'ի նմին պահու դայլն հասանէին 'ի վայրն դահիճք Կիկերոնի, Երեննիոս հարիւրապետ, և Պոպիղիոս հազարապետ (այն՝ որ երբեմն 'ի հայրասպանութեան դատաստանէն ապրեցաւ 'ի ձեռն Կիկերոնի), և ընդ նոսա պաշտօնեայք ։ Տեսեալ փակ զդուրսն, խորտակեցին. իբրև ոչ գտին զԿիկերոն, և որ 'ի ներքս կային՝ վկայէին ես ոչ գիտել ուր իցէ, պատմեն՝ թէ յայնժամ պատանեակ ոմն Փիղոլոգոս անուն՝ դաստիարակեալն 'ի Կիկերովնէ յիմաստս և 'ի վարժս ազատականս, և էր իսկ նա ազատագրեալն եղբօր իւրում Կուինտոսի, գուշակ լինէր հազարապետին վասն շալակին՝ զոր բարձեալ տանէին 'ի ծով ընդ շաւիղս անտառախիտս և հովանաւորս ։ Ապա հազարապետն առեալ ընդ իւր արս սակաւս, շրջան առեալ ընթացաւ յելս ճանապարհացն. իբրև Երեննիոս սաստիկ ճեպով յարուցեալ հետևեցաւ ընդ նոյն շաւիղ, իրազգած Կիկերոնի եղեալ՝ հրաման տայր ծառայիցն անդէն 'ի վայր զդարդիճն հանդուցանել, և ինքն ձախոյ ձեռամբն առեալ զծնօտն՝ որպէս և սովորութիւն իսկ էր նորա՝ այնպէս անքթիթ ակնկառոյց էր 'ի մարդախոշոշն՝ գարշ և խռուացեալ հերօքն և 'ի վշտաց անտի երկիթացեալ դիմօքն. որպէս զի և բազումք անդանօր քօղաձիգ եղեն՝ մի տեսանել զնա 'ի խողխողել զնա Երեննիոսի ։ Եւ խողխողեցաւ նա անդ՝ այնպէս 'ի շալակէն 'ի դուրս կարկառեալ ձգեալ զպա-

բանոցն , ամաց ինքն գոլով վաթսուն և չորից ։

Բայց Երեննիոս 'ի հրամանէն Անտովնիոսի կտրեաց զգլուխ նորա և զձեռսն՝ որովք արձանագրեաց նա զփիլիպպեանսն . քանզի և ինքնին Կիկերովն փիլիպպեանս մակագրեաց զճառսն իւր ընդդէմ Անտովնիոսի . և կոչին ևս փիլիպպեանք այն մատեանք մինչև ցայսօր ժամանակի։ Իսկ 'ի ժամուն՝ յորում բերին 'ի Հռոմ զհատածս մարմնոյն Կիկերովնի , կայր Անտովնիոս յատենի ժողովոյն . իբրև լուաւ զիրսն և ետես ևս ինքնին՝ 'ի ձայն բարձր աղաղակէր . արդ աւասիկ վախճան է տարագրութեանցն . և հրամայէր զգլուխն և զձեռսն դնել յատենին 'ի վերայ բեմին . տեսիլ քստմնելի Հռոմայեցւոցն , որք անդ ոչ զԿիկերովնին համարեցան տեսանել զգիտակ , քան թէ զԱնտովնիոսին զպատկեր հոգւոյն ։

Բայց սա յանհնարին յայն կիրսն՝ ինչ մի չափաւոր 'ի ներքս բերէր . տայր զՓիլողոգոս 'ի ձեռս Պոմպոնեայ կնոջն Կուինտոսի , որ և տիրացեալ 'ի վերայ մարմնոյ պատանւոյն , թող զչարաչար չարչարանսն՝ զոր անցոյց ընդ նա , ստիպեաց ևս զնա կտրել տակաւ 'ի մարմնոյն իւրմէ , և խորովել և ուտել։ Քանզի և այսպէս իսկ արձանագրեցին կէսք 'ի պատմաբանից ։ Այլ Տիւրոն ազատագրեալն Կիկերովնի ոչ ինչ յիշատակէ յաղագս մատնութեանն Փիլողոգեայ ։

Իսկ ես ինքնին լուայ ասել՝ եթէ յետ բազում ժամանակաց գնացեալ երբեմն Կեսարու 'ի տուն որդւոյ դստերն իւրոյ, խուճապեցաւ սա՝ զի գիրս իմն 'ի ձեռին ունէր զԿիկերոնին, և զարհուրեալ ծածկեաց զայն ընդ հանդերձիւն. տեսեալ զայն Կեսարու՝ առնոյր զգիրսն, և այնպէս յոտին կացեալ ընթեռնոյր բազում ինչ 'ի մատենէն. ապա դարձուցեալ զնոյն առ պատանին՝ ասէր. “ Բանաւոր այր, ո՛վ որդեակ, բանաւոր և հայրենասէր ,, :

Յետ այսորիկ արագ արագ վանեալ Կեսարու զԱնտոնիոս և նկուն արարեալ, կարգեցաւ 'ի հիւպատոս և առնոյր իւր իշխանակից զորդին Կիկերոնի, առ որով և Սենկղիտոսն 'ի միջոյ բառնայր զարձանսն Անտոնիոսի, և զայլ ևս շուք փառաց նորա ջնջէր 'ի բաց. և վճիռ ևս տայր՝ մի՛ ումեք յԱնտոնիոսեանց երբէք տանել անուն Մարկոս: Եւ այսպէս ապա աստուածակողմն 'ի տուն անդր Կիկերոնի ածեալ սահմանեաց զվախճան պատուհասին Անտոնիոսի:

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ԴԵՄՈՍԹԵՆԵԱՅ
ԵՒ
ԿԻԿԵՐՈՎՆԻ

ԵՆ արդ՝ յիշատակաց արժանիք 'ի պատմութեանն Դեմոսթենեայ և Կիկերոնի՝ որչափ ինչ առ մերս հասին դիտութիւն՝ այդոքիկ են :

Եւ թէպէտ և թողեալ իմ 'ի կչիռ գնոցայն ձգել զարուեստ ճարտարաբանութեանն , սակայն և զայն ինձ թուի ոչ լուռ անցանել , եթէ Դեմոսթենէս 'ի հռետորականին քաջ վարժեաց զքաջութիւն ճարտարաբանութեանն իւրոյ՝ զոր անդըստին 'ի բնութենէն կամ թէ 'ի կրթանացն ունէր նա , գերազանցեալ 'ի կորովութե և 'ի զօրութեան առհասարակ որ միանգամ 'ի բեմս ատենականս և 'ի պայքարս 'ի վէգ գային ընդ նմա . 'ի պերճութեան և 'ի հոյակապութեանն՝ որ միանգամ առ

'ի ցոյցս խօսէին. առ այս և 'ի ճշգրտութեան և յարուեստին՝ վեհագոյն գտաւ իմաստակացն:

Բայց և Կիկերոնին՝ Թէպէտև բազմահըմուտ և գիմակ գիմակ գիտութիւնս յարեալ պատկանեաց 'ի վարժս ճարտարաբանութեանն, և եթող աւանդեաց մատենագրութիւնս ոչ սակաւ իմաստասիրականս յոճ Ակադեմեան, սակայն և յայտնի 'ի ճառս իւր՝ որ 'ի հրապարակախօսութիւնս և 'ի պայքարս՝ կրթի իմն 'ի դէմս բերել զհմտութիւն իւր 10:

Իսկ 'ի ճառից անտի նոցա է մեզ խելամուտ լինել բարուց նոցա: Քանզի ոճ Դեմոսթենեայ համբուն անպաճոյճ և անկատակ, և ողջոյն պերճ և լուրջ, ոչ զպատրուգաց արձակէ հոտ՝ ըստ որում հեգն ասէր Պիւթէաս, քան թէ զջրմբու լինել նորա 'ի դէմս ածէ և զանխոնջութիւնն նորա, և զխստամբերութիւն բուսոյ բարուցն՝ զոր ասեն ունել նմա, և զթաղծութիւնն:

Բայց Կիկերոնին բազում անգամ հեգնաբանութեամբն մինչև 'ի խեղկատակութիւն կրթեալ, և խաղ և ծաղր վարեալ առ օգուտ պայքարացն՝ որոց առաւելագոյնի պէտք էին լրջութեան, անփոյթ առնէր զվայելչականաւն: Ըստ որում 'ի ճառին պաշտպանութեանն Կելիոսի. ուր և ասէ՝ ոչինչ դժպհի գործել նմա՝ յայնչափ փափկութեան և 'ի գրգանսն անձնատուր 'ի հեշտութիւնս լինելով, իբրև ան-

մտութիւն իցէ արդեօք չվարել 'ի գործ զբարիսն՝ զոր վայելել մարթ իցէ. ուր և իմաստասէրք գլխովին ականաւ որք զերջանկութիւնն համարեն 'ի հեշտութեան 11 :

Եւ պատմէն ևս՝ յամբաստանել Կատոնի յատենի զՄուրենա, ինքն հիւպատոս կացեալ՝ պաշտպանէր առն. և առ Կատոնի հայեցուցեալ սաստկապէս հեգնէր զաղանդ Ստոյկեանցն ըստ դժպատեհ նոցուն վարդապետացն, զոր Աչլակարծիս կոչէն: Ոյր աղագաւ 'ի .քըքինջ անհնարին հատեալ ատենին, 'ի մերձակայիցն մինչև 'ի դատաւորսն անդր ժամանէր. անդուստ և Կատոնի ինքնին ժպտեալ՝ դարձեալ առ բազմականն՝ ասէր. "Բարէ՝ ո՛վ արք, զի՞րդ ծիծաղելի ունիմք հիւպատոս,,:

Եւ արդեօք անդստին բնաւորեցաւ նա զուարճաբան լինել և ծաղր առնել. նա և 'ի դէմս երեսաց նորա ցանդ ժպիտ իմն տպանայր և զուարթութիւն. իսկ 'ի Դեմոսթենեայն՝ անժպիտ միշտ էր տեսիլն և լուրջ. և ոչ հեշտին դարձեալ փարատէր 'ի նմանէն կերպարան նորա մտայոյզ. յոյր սակս և թշնամիք նորա անուն կարգային նմա՝ որպէս ասէ իսկ ինքն, Անհամբոյր և աննուէր:

Առ այս դարձեալ՝ և 'ի նոցուն մատենից է մեզ տեսանել, զի Դեմոսթենէս խընայօրէն և մեղմով յիշատակ առնէ իւրոց գովութեանցն՝ հարկաւորեալ 'ի կարևոր պատճառաց, չափով միշտ զգուշացեալ 'ի բանին: իսկ անչափութիւն Կիկերոնի 'ի

խօսել զանձնէն յիւր ճառսն՝ նշանակէ զայրն իբրև անժուժկալ փառախնդիր . մինչև և աղաղակել նմա զայս . " Զէնք տեղի տայցեն պատմուճանին , և լեզուին՝ սարդենի հպատակ կացցէ ,, 12 ։ Առ այս և 'ի գովութիւն առնու նա ոչ միայն զգործս նահատակութեանց իւրոց , այլ և զճառսն գլխովին զիւր զատենաբանութեանցն և զարձանագրութեանցն , իբրու անտիպական եղ և ելս առնելով ընդ սոփեստիցն Իսոկրատեայ և Անաքսիմենեայ . և ոչ մանաւանդ պատուասիրէր 'ի տանել և 'ի բերել իւրում զհռոմայեցւոց զժողովուրդ . " Զանվանելին, զքաջազէնն, զգոռն ախոյենից ,, ։

Քանզի հարկ լինէ արդեօք առաջնորդի քաղաքին քաջաբան լինել . այլ այս խընդալ բերկրիլ և փառս քաջաբանութեամբն որսալ, անազատական ոգւոյ է ։ Ուստի և 'ի մասինդ յայդմիկ արդոյ և պատուական եկաց Դեմոսթենէս . քանզի և ինքնին նա եցոյց՝ եթէ 'ի ճարտարութենէ բանիցն խնդրէր միայն փարելի ունկնդրացն և հեշտալուր լինել . սակայն և առ սինլըքորս և առ հետևակս (որպէս և էն իսկ) ունէր զնոսա՝ որ զամ մի վասն արուեստին այնմիկ սոնքացին ։

Բայց 'ի հրապարակախօս հանդիսին և 'ի տնտեսութեան իրաց քաղաքին , համազօրք գտան երկոքին նոքա . որպէս զի և զօրավարք ինքնին գլխովին և առաջնորդք բանակաց կարօտացան նոցա . Դեմոսթե_

նեայ՝ Քարեաէս, Դիոպիթէս և Լէոսթենէս. և Կիկերոնինն՝ Պոմպէոս և Կեսար կրսեր. որպէս և ինքնին Կեսար վկայէ 'ի Յիշատակարանին՝ զոր արձանագրեաց առ Ագրիպպաս և առ Մեկենաս։

Իսկ յիշխանութեան բարձին և յաւագութեան, յորոց յաւէտ իմն՝ որպէս Թուլի և որպէս ասեն՝ համօրէն 'ի դէմս գալ ընդնաւորեցաւ բոյս բարուց մարդկան, իբրու որ զամենայն զկիրսն շարժեսցեն 'ի կայից իւրեանց և յերևան բերցեն միանգամայն զամենայն չարութիւն, Դեմոսթենէս երբեք ոչ իշխանացաւ և զփորձ զանձին իւրոյ 'ի մասինդ ոչ յաջողեցաւ տալ մեզ. զի և ոչ յաւագութիւն երևելի երբեք ամբարձաւ այրն, և ոչ դարձեալ զօրավարեաց զօրուն՝ զոր ինքնին նա խմբեաց ընդդէմ Փիլիպպոսի։ Իսկ Կիկերոնին՝ արձակեալ գանձաւոր 'ի Սիկիլիա, և փոխանակ հիւպատոսի 'ի Կիլիկիա և 'ի Կապադովկիա 'ի ժամանակին՝ յորում մեծապէս ախրեաց ընչաքաղցութիւնն, և զօրավարք ինքնին աւաքեալք 'ի գաւառան, և առաջնորդքն առ անարգ զգողութիւնն ունելով 'ի յափշտակութիւն անդր կրթէին. ուստի և չար չերևէր յայնժամ խուել, այլ բարեհամբոյր համարէր մարդ՝ որ չափով գործէր յայնպիսեաց անտի. արդ Կիկերոնին յայնպիսումն ժամանակի յոյժ գեղեցիկս 'ի դէմս եբեր զարհամարհութն ընչիցն, և բազում ևս հաւաստիս 'ի ներքս ընծայեաց զլաւութեան և զմարդասիրութեան իւրոյ։

Ապա և 'ի Հռոմ քաղաքի կարգեալ նա 'ի հիւպատոս անուամբ չափ, այլ բուն իսկ զաւագութիւն զանձամբ առեալ զինքնաբաւ տեառն և զիշխանապետի ընդդէմ Կատիլինեայ, հաւատարմացոյց իւրով իսկ վկայութեամբ զդուշակութեան պատգամ զՊղատոնին, որ ասէր՝ Գադարեսցեն իսկ և իսկ չարիք 'ի քաղաքս, եթէ երբէք ըստ գեղեցիկ բախտին՝ զիշխանութիւն վեհագոյն և զհանճար՝ նոյն այր յանձին ունիցի հանդերձ արդարութեամբ։

Այլ յաղագս Դեմոսթենեայ՝ բամբասեն զայրն իբրև շահավաճառ 'ի հռետորութենէն. այն՝ զի շարադրեաց 'ի ծածուկ ճառս 'ի փաստաբանութիւն Փորմիոնի և Ապողոդորոսի, որ հակառակ ոսոխք էին միմեանց։ Առ այս՝ և բամբասեցաւ. զի էառ նա արծաթ յարքայէ. և դատապարտ ևս եղև՝ զի էառ ինչս և յԱրպաղոսէ։ Ապա թէ ասասցէ ոք, եթէ բարուցք իցեն այդ յընդդիմադրացն նորա (որ և չէն իսկ նուազունք ոմանք), իսկ չիք երբէք հնար ընդդէմ ասել՝ որոց միանգամ վկայեն զԴեմոսթենեայ՝ զի անձնապահ չեղև յընծայաբերութեանց անտի արքայից առ նա 'ի պատիւ առնն և 'ի շնորհակալութիւն. և արդեօք անձնապահն լինել յայնպիսեաց՝ չէր մարդոյ, որ և 'ի նաւական տոկոսեացն շահավաճառ լինէր։

Իսկ յաղագս Կիկերոնի ասեն՝ եթէ և 'ի պարգևս ընծայից բազմաց 'ի Սիկիլիացւոց անտի յամբարապետութեան իւրում

'ի կղզւոջ անդր, և յարքայէն՝ 'ի փոխանակհիւպատոսութեան իւրում 'ի Կապադովկիա, դարձեալ և 'ի բարեկամաց իւրոց 'ի Հռոմ 'ի վտարանդութեանն և աղաչեալ ևս ընդունել առնուլ, նա ցանգ անդրդուելի՝ չէառ ինչ երբէք:

Իսկ առ սոքօք՝ և վտարանդութիւնն ինքնին՝ անփառունակ էր միումն, զի նշաւակեցաւ իբրև գող. իսկ միւսումն՝ լի փառօք. քանզի վտարանդի գնայր՝ զի 'ի հայրենեացն 'ի բաց զարս եղեռնաւորս հալածեաց. ուստի և 'ի վտարանդել միոյն՝ փոյթ ինչ ոչ տարան. բայց 'ի պատճառս միւսոյն՝ և Մինկղիտոսն ինքնին փոխեաց զհանդերձսն և 'ի Թուխս համակէր. և պատուիրեաց ևս՝ մի ինչ հաստատել խորհուրդ ամենևին՝ մինչև վճիռ տուեալ դարձին Կիկերոնի:

Բայց և այլազգ՝ Կիկերոնի զվտարանդութիւն իւր անցուցանէր պարապորդ 'ի Մակեդոնիա. այլ Դեմոսթենէս և 'ի վըտարանդութեան անդ բազում պարապեցաւ 'ի քաղաքականսն: Քանզի գնայր ընթանայր ընդ քաղաքս քաղաքս, զօրավիգն լինէր Հելլենաց՝ որպէս և պատմեցաք, և վանէր հալածէր զդեսպանսն Մակեդոնացւոց. և այնպէս լաւ ևս յոյժ քաղաքացի զանձն 'ի ներքս ընծայէր քան զԹեմիստոկղէս և քան զԱլկիբիադէս՝ 'ի նմանատիպ դէպս նոցա: Ապա և 'ի դարձին իւրում 'ի հայրենիս միւսանգամ բուռն հարկանէր զգործոյն իբրու զառաջինն. և յա-

ւերժացաւ նա մարտ դնել կռուել ընդ Անտիպատրոսի և ընդ Մակեդոնացիս։

Իսկ Կիկերոնին ինքնին յերեւս հարկանէր Լելիոս 'ի Սինկղիտոսին, զի Կեսարու 'ի հետամուտն լինել հիւպատոսութեան ընդդէմ օրինացն՝ զի և նորատիք անմօրուս եւ էր նա, անդանօր Կիկերոնի անբարբառ այնպէս նստէր դադարեալ։ Նաև Բրուտոս ինքնին գանգատ ունի 'ի թուղթս իւր, զի տածէ Կիկերոնի բռնակալութիւն դառն և սաստիկ եւ քան զոր նոքա հարին վանեցին։

Իսկ 'ի վերջէ՝ 'ի մահու անդ նոցա, արդեօք արգահատելի յոյժ իցէ Կիկերոնի, որ այնպէս 'ի ծերացեալ հասակին սրտաթափ սրտառուչ 'ի վեր 'ի վայր ածեալ բերէր յիւրոց ծառայից. և խնդրէր հնարէր փախչել դամ մի ճողոպրել 'ի մահուանէն, այն՝ զոր և ոչ յետ բազմաց բնութիւնն ինքնին ածէր նմա. և այնպէս հուսկ ապա խողխողեալ լինէր։ Բայց Դեմոսթենէս (թէպէտ և վայրիկ մի յողոք անկաւ այրն) զարմանալի է 'ի պատրաստութեան անդ դեղոյն և 'ի պահելն առ իւր. զարմանալի, 13 և 'ի վարելն նովաւ. քանզի ապաստան անխաբ չաւեալ առ 'ի դիցն, չոքաւ ապաւինեցաւ իբրու 'ի վեհագոյն սեղան, անձնապուր 'ի զինուցն եղեալ և 'ի սուրհանդակացն, և ծաղր զանագորոյն զկիրան արարեալ զԱնտիպատրոսին։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. 'Ի նմին ժամանակի ծնաւ և Պոմպէոս մեծ:

2. Այսպէս Պլուտ. 'ի Ցն: Բայց Կիկերոն ասաց 'ի Լտ. ընդ Վէրրէսի:

3. Սփինգս անուն՝ էր առասպելեալ հրէշ խօսուն, յոյժ յաջողակ յառեղծուածս:

4. Իսկ էր վճռոյ ծերակուտին պատճէն կարճառօտ և ազդու, այսպիսի. Curent Consules, ne quid Resp. detrimenti accipiat. Այս տող՝ իշխանութիւն ինքնաբաւ 'ի ժամանակին 'ի ձեռս տայր հիւպատոսացն:

5. Աքսէօս. 'ի Ցն. է՝ Արժանի: Էր և անուն առն՝ զոր սպան Պլուտ: Եւ ասեն՝ յունարէն պատասխանի տալ Կիկերոնի. Ἄξιος Κράσσου.

6. Ակնարկի առնէ զավորութիւնն ծակելոյ զունկն գերեաց:

7. Ակնարկէր զերթն նորա յԱսորիս, և անդրէն զերադարձութեանց դարձն նորա:

8. Էր յայնժամ Կիկերոն ամաց յիսուն և ութից:

9. Ցունական ձայնքդ նշանակեն՝ ըստ կարգի. Երևակութիւն. Հաստատութի.

Կախումն. Ըմբռնումն. Անհատ. Անբաժանելի, և Դատարկ. զորս և առհասարակ լատինացի գրել և ասել, առաջին սկսաւ մեծս այս Կիկերոն:

10. Ինձ թուի՝ եթէ 'ի մասին յայսմիկ զուգակշռութեանն Պղատոնեայ 'ի Ճահ ասասցէ ոք լատինացի զայս միայն. Յոյն լինել պարտ էր Կիկերոնի. և հռոմայեցի՝ Դեմոսթենեայ.

11. Բայց 'ի ճառի պաշտպանութեանն Կեղիոսի զոր ունիմք, չգտանէ և ոչ ոք այսպիսի ինչ ասացեալ Կիկերոնի:

12: Առասացութիւնն Կիկերոնեան 'ի Լտ. է այսպիսի. Cedant arma, togae; concedat laurea, linguae.

13. Սակայն որչափ զարմանալի, այնչափ և առաւել ևս այպանելի է 'ի մեծի անիրաւութեանն: Քանզի այնպիսի այր իմաստասէր՝ և ոչ ակներև լուսոյ բանին պատկառ եկաց. զի զոր ինքն չէր անձին զկեանսն, իբրև ինքնատէր յափշտակէր յանձնէն: Տես զայսմանէ ընդդէմ Պղուտ. և 'ի ծան. Կատոնի կրսերոյ:

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

ԱՐԱՏՈՍ

ԱՐԱՏՈՍ

ՕԱՌԻԱԾ զայն զվաղնջուց՝ ո՛վ Պողիւկրատէս 1, իմաստասէրն այն Խրիւսիպպոս զանգիտեալ՝ եթէ դժոխալուրս հնչեսցէ, առեալ յերկիւրեաց՝ ո՛չ որպէս էրն, այլ որպէս ինքն կարծեաց լաւագոյնս, օրինակ զայս. " Ո՞ զհայրն գովեսցէ, եթէ ոչ որդիքն բարեբախտք ": Սակայն Դիոնիսոդորոս Տրիզինացի յանդիմանեալ զԽրիւսիպպոս, անդրէն 'ի բունն իւր կարգեաց եդ զԱռածդ, որ էր այսպիսի. " Ո՞ զհայրն գովեսցէ, եթէ ոչ որդիքն չարաբախտք ": Ես ասէ՝ առածիւդ այդուիկ զբերանս կարկել զնոցա՝ որ ոչինչ արդոյք յանձանց իւրեանց, թեւակոխեն սպրդին յառաքինութիւն անդր նախնեացն իւրեանց, և անդուլ 'ի բերան առեալ գովեն զնոսա:

Այլ մարդոյ՝ յորոյ 'ի բոյս բարուցն՝ ըստ Պինդարոսին առասացութեան՝ ազնուականութիւն փայլէ լուրոցն նախնեաց՝ (ըստ որում և 'ի քեզ ինքնին՝ հանգունատիպ 'ի վարս հոյակապ օրինակաց քոց համազարմից) գեղեցիկ լիցէ արդեօք և փարելի յուշ ածել զառաքինի մարդիկ զիւրոյ զարմին, և լսել միշտ և պատմել ևս 'ի նահատակութեանց անտի նոցա : Քանզի որ այսպիսիք ոմանք ընաւորեցան, ոչ եթէ փառս որսան նոքա յայլոցն գովութեանց՝ վրէպ գտեալք 'ի փառաց անձին, քան թէ 'ի մի զիւրեանցն զօդեալ ընդ նախնեացն, այնպէս ներբողեն զնոսա իբրև նախահարս իւրեանց զարմին և քաղաքավարութեան:

Ոյր աղագաւ և իմ այժմիկ զվարս արձանագրեալ զԱրատոսի զքոյին քաղաքակցի և զնախահօր, որում և անչքութիւն երբէք 'ի ներքս բերես և ոչինչ՝ ըստ քաջի համբաւոյ անձինդ և ըստ աւագութեան զօրութեան քո, առ քեզ ինքն առեալ ուղղեցի. ո՛չ զի դու ինքնին անդստին 'ի սկզբանէ ոչ խնդրեցեր գիտել ճշգրտագոյնս առաւել քան զամենեսեան՝ զգործս նահատակութեան նորա, այլ զի ինքնին Պողիւկրատէս և Պիւթոկլէս քոյին որդիք սնեալք ածեսցին յօրինակս իւրեանց ընտանեաց. կէս մի 'ի լուր զարթուցեալ, և կէս մի 'ի վերծանութիւն՝ որոց ինչ միանգամ նմանողութեան պէտք են նոցա: Քանզի և զանձն միշտ լաւ հա-

մարել քան զամենեսեան, անձնասէր մարդոյ է՝ և ոչ առաքինասէր ։

Սիկիւոնեանցոց քաղաքն՝ յորժամ միանգամ զառաջինն յաւագպետութենէ անտի իւրմէ յանխառն և 'ի Տոմբիկեան՝ իբրու 'ի ներդաշնակութենէ իմեմէ խանգարելոյ և չփոթելոյ, անկաւ 'ի հակառակութիւնս և 'ի պայքարաց մրցանս հաւտորաց խուժանին, այնուհետև ցանգ յաղէտս պաշարեցաւ նա և 'ի խռովս, բռնաւորէ 'ի բռնաւոր ․ մինչև 'ի մահ Կղէոմենէ վարեալ, կարգեցան ընտրեցան առաջնորդք՝ Տիմոկղիդաս և Կղինիաս, որք փառաւորք և աւագամեծարք 'ի քաղաքին ։

Այլ իբրև յայնժամ բարեկարգութեան քաղաքին դէտակն ունէին, մեռանէր Տիմոկղիդաս ․ և ապա Աբանտիդաս որդի Պասեայ 'ի բռնաւորութիւն կըրթեալ, սպանանէր զԿղինիաս, և զկէս 'ի մահ վարեալ 'ի բարեկամաց նորա և 'ի մերձաւորաց, և զկէսս տարամերժեալ, խնդրէր և զորդեակն նորա զԱրատոս սպանանել՝ մանուկ եօթնամեայ ։ Մինչ այս մինչ այն՝ յաղմուկս անդ չփոթից յորում վեր 'ի վայր տապալեցաւ յայնժամ տուն Կղինեայ, անձնապուր ձողոպրեալ մանկանն ընդ փախստէիցն, խուճապեցաւ ընդ քաղաքն զարհուրեալ և անօգնական, և եկեալ ըստ դիպաց մտանէր զանխուլ 'ի տուն կնոջ ուրումն՝ անուն Սովսէ, քեռ Աբանտիդեայ՝ կնոջ Պրոփանտոսի եղբօր Կղինեայ ։ Սա այս Սովսէ ըստ գեղեցիկ

բուսոյ բարուցն, և զի և համարեցաւ 'ի դից անտի խնամոցն զառ նա ապաւինութիւն զմանկանն, ժողովեալ թաքոյց զնա. և ապա 'ի գիշերի առեալ արձակեաց զնա գաղտ յԱրգոս:

Եւ այսպէս ապա Արատոսի ծողոպրեալ 'ի վտանգէն, անդանօր տնկակից 'ի նմա ընդ տիոց հասակին գնալով գնայր և աճէր սաստիկ և ոխերիմ ատելութիւնն ընդդէմ բռնաւորացն: Եւ մնեալ դաստիարակեալ յԱրգոս ազնուականութ՟բ առ հիւրսն հայրենիս և առ բարեկամսն՝ աճեցաւ 'ի քաջառողջ մարմին և յաղթահասակ. կրթէր 'ի մարզս ըմբշաց, և նահատակեալ կռուեալ 'ի հնգամրցանակ խաղսն, տանէր պսակս: Եւ արդեօք է իսկ տեսանել 'ի պատկերս դրօշեալս նորա՝ կերպարան զգօտէմարտի. և նորա դիտակ երեսացն պերճ և արքենի՝ տիպ 'ի դէմս բերէ զշատակերութեան զըմբշացն և զբահին նոցա 2: Ուստի և ոչինչ այնպէս ըստ արժանի քաղաքականի առն պատկառ եկաց նա վարժից հռետորականին. թէպէտ և ասեն զնա՝ պերճաբան յարուեստ ճարտարախօսութեան՝ առաւել քան զկարծեալն. և է իսկ տեսանել 'ի Յիշատակարանս նորա՝ զոր և վեր 'ի վերոյ արձանագրեաց նա և հարևանցի՝ բառս 'ի նմա վարելով հետևակս և հասարակս:

Իսկ յետ այնորիկ Դինիաս և Արիստոտէլ տրամաբան՝ դաւաճանեցին զԱբանտիդաս: Էր Աբանտիդեայ սովորութիւն

գալ զօրհանապազ ունէր դնել պայքարաց բանից նոցա 'ի հրապարակի անդ, և ինքնին ևս վիճէր ընդ նոսա, քանզի և նոքա սովորեցուցեալ էին զայրն 'ի նոյն գեգերանս. և ապա դաւեցին զնա 'ի կենաց: Իբրև Պասիաս փոխանակեաց 'ի տէրութեանն՝ հայրն Աբանտիդեայ, նենգաւ սպան և զնա Նիկոկղէս և բռնացաւ: Եւ պատմէն յոյժ նմանատիպ լինել սորա 'ի դէմս՝ Պերիանդրեայ որդւոյն Կիւպսելեայ, որպէս և զԹրոնդէս պարսիկ ասեն՝ նման Ալկմէոնեայ Ամփիարեան, և Հեկտորի դարձեալ նմանատիպ՝ զպատանին զայն Լակեդեմոնացի. այն՝ որ ըստ Միւրսիլեայ պատմելոյն՝ առաւթուր կոխեցաւ 'ի խուռն մարդկանն, որ լուեալ զնմանութենէն՝ խուռներնթաց եղեն տեսանել զնա:

Արդ Նիկոկղէս յետ չորից ամաց բռնակալութեանն՝ յորս մեծապէս նեղեաց զքաղաքն, վայրիկ մի ևս 'ի ձեռաց հանէր զնա 'ի դաւանաց անտի Ետողացւոցն: Իսկ զայնու ժամանակաւ 'ի տիս պատանեկութեան գոլով Արատոսի, յոյժ արդոյ երևէր և միանգամայն 'ի քաջութենէ զարմին և յաշխուժից ևս ոգւոյն. ոչինչ դուզնաքեայ և հետևակ՝ նա և մեծ և քաջախորհուրդ և կորովամիտ 'ի վեր քան զտիս հասակին: Ոյր աղագաւ և վտարանդեալ մարդիկն յաւէտ իմն ակնկառոյց 'ի նա էին. և Նիկոկղէս ինքնին ոչինչ անհոգացեալ՝ ծածկաբար դէտ ակն կալեալ զննէր զգնացս և զշարժել նորա. ոչ եթէ զանդի-

տեալ ինչ՝ ձեռնամուխ յայնպիսի մեծ նահատակութիւն լինել պատուոյն և դիմադրաւ յահագին 'ի վտանգն, այլ խիթայր՝ եթէ բանագնաց ինչ պատանեակն լինիցի ընդ թագաւորս ընդ բարեկամս հօրն իւրոյ և ընդ հիւրսն: Եւ արդեօք զնոյն հետոց կալեալ իսկ էր Արատոս, բայց ապա տեսեալ զի Անտիգոնոս դրժեալ խոստմանցն՝ յուլանայր 'ի գործն և ժամանաճառ լինէր, և զի և յոյս ականկալութեանն իւրոյ յԵգիպտոսէ և 'ի Պտղոմեայ՝ բացական յոյժ է, եդ 'ի մտի ինքնին միայնակ հարկանել վանել զբռնաւորն:

Նախ 'ի վեր զխորհուրդն հանէր Արիստոմաքեայ և Եկդեղեայ. էր առաջինն վըտարանդի 'ի Սիկիւոնէ. իսկ Եկդեղոս՝ Արկացի 'ի Մեգաղէպօլսոյ՝ այր իմաստասէր և ժիր, որ և յԱթէնս ընտանեցեալ իսկ էր Արքեսիղայոսի ակադեմեան: Իբրև մտադիւրագոյնս երկոքին նոքա յանձին կալան, ապա եկեալ խօսեցաւ Արատոս և ընդ այլոց վտարանդեաց. 'ի նոցանէն նըւազունք միայն պատկառեալք հրաժեշտ 'ի յուսոյն տալ, միամտեցան ընդ նմա. իսկ բազումք ևս 'ի բաց 'ի խորհրդոյն քեցէին և զԱրատոս ինքնին, իբրու յանդուգն ձեռներէց յանփորձութեան 'ի տիան 3:

Մինչդեռ զմտաւ ածէր Արատոս հասանել ունել վայր մի 'ի սահմանին Սիկիւոնի, և անդուստ խաղալ մարտ դնել ընդ բռնաւորին, եկն եհաս յԱրգոս այր

ռմն 'ի Սիկիլիովնէ փախստեայ 'ի տանէ բանտին. և էր նա եղբայր Քսենոկղեայ՝ որ մի էր 'ի վտարանդեաց անտի: Զսա Քսենոկղէս ածեալ առ Արատոս, կայր և պատմէր նմա այրն՝ եթէ վայր պատուարին՝ զորով անց ընթացաւ նա 'ի փախչել իւրում՝ էր իսկ 'ի ներքուստ անտի դոգցես հաւասար գետնոյն, զի անդանօր դերբուկ է գետինն և բարձրադէզ. իսկ արտաքուստ բարձրութիւնն դիւրամատոյց է սանդղոց: Զայն լուեալ Արատոսի, առեալ արձակէր զՍեւթաս և զՏեքնոն զերկոսս 'ի ծառայիցն հանդերձ Քսենոկղեաւ՝ երթալ լրտեսել զպատուարն. եդ 'ի մտի եթէ հնար ինչ իցէ՝ 'ի ծածուկ և 'ի մի վտանգ 'ի կարճոյ վճարել զիրսն, քան թէ երկայն կռուով և յայտնի պատերազմաւ ոգորել սոսկականի առն ընդ բռնաւորի:

Իբրև դարձ արար Քսենոկղէս՝ առեալ ընդ իւր զչափ պատուարին, ցոյց բերէր՝ իբրև ոչինչ անմատոյց և դժուարուտ է վայրն. սակայն դժուարամերձենալի է 'ի ծածուկ առ 'ի կորեանց անտի շանցն՝ որ անդ պարտիզպանին, կորիւնք նկունք մարմնով, այլ խեռք յոյժ և ստահակք և բնաւ իսկ անհրահանգք: Լուեալ Արատոսի զամենայնն, կազմեցաւ պատրաստեցաւ 'ի գործն: Եւ էր իսկ 'ի ժամանակին յայնմիկ վառել 'ի զէնս հասարակ ամենեցուն. քանզի և առհասարակ դոգցես յայնժամ գողութեամբք ասպատակէին այր յընկեր.

Իսկ զանդուղսն ետուն յայտնապէս շինել Եւփրանորեայ մեքենայագործի առն. որ թէպէտ և էր նա մի 'ի տարագրելոց անտի, սակայն և ըստ ներելոյ արուեստին յաջողեցաւ շինել յանկասկածս ։ Անգուստ և այր այր 'ի բարեկամաց անտի Արատոսի որ յԱրգոս, տայր նմա 'ի ձեռս արս տասն. և ինքն արս երեսուն վառեաց 'ի զէնս 'ի ծառայից անտի իւրոց. առ այսոքիւք՝ և 'ի ձեռն Քսենոփիլեայ աւազակապետի 'ի վարձու կալաւ սակաւաձեռն գունդ զօրականի, և ձայն հնչեցին խաղալ ասպատակաւ յերկիրն Սիկիւոնի վարել 'ի բաց զմատակս ձիոց արքային. և յառաջոյ ևս արձակեցան արք, շատք 'ի նոցանէն ուրոյն ուրոյն յաշտարակն Պողիւգնոտեայ, հրաման տուեալ նոցա սպասեալ մնալ անդ Արատոսի։ Արձակեաց կանուխ և զԿափեսիաս զայր շոյտ և ժիրաժիր ընդ այլոց չորից, գիշերագնաց լինել անդր առ պարտիզպանն և կեղծաւորել իբրև ուղևորս. և յիջևանին առ նմա առնուլ փակել զայրն 'ի ներքս հանդերձ կորեամբքն, զի և այլ ճանապարհ չէր անցից։ Իսկ զանդուղսն քակտելիս արկեալ 'ի գրուանս և թաքուցեալս 'ի սայլսն՝ առաքեցին յառաջ։

Բայց յայնժամ յԱրգոս եկին երևեցան արք լրտեսք առաքեալք 'ի Նիկոկլեայ. որք՝ որպէս ասէինն՝ զանխուլ 'ի ծածուկ շուրջ գային 'ի վեր և 'ի վայր, և զննէին դիտէին զգնացսն Արատոսի։ Իսկ նա վաղ

քաջ ընդ առաւօտն ելեալ արտաքս և յերևան եկեալ՝ Թարթափէր 'ի հրապարակին ընդ բարեկամսն։ Ապա գնացեալ իջեալ յըմբշարանին, և առեալ ընդ իւր յասպարիզէն 'ի պատանեաց անտի՝ որ սովորեալքն իսկ էին ընդ նմա 'ի բաժակս և 'ի սփոփութիւնս, դարձաւ 'ի տուն. և վայր մի անցեալ՝ տեսանէին և զծառայս նորա 'ի հրապարակին, կիսոյ բոլորս տանել պսակաց, և այլոց՝ գնոց գնել լապտերս, և կիսոց դարձեալ՝ դեգերել անդ զբանիւք ընդ կանանւոյ վարձակաց և սրընդահարացն 'ի գինեըմբուս։ Զայս ամենայն տեսեալ անդանօր լրտեսացն Նիկոկղեայ, խաբեցան. և ծաղր ընդ միմեանս արձակեալ ասէին. անշուշտ՝ Չիք ինչ առաւել անարի վատասիրտ քան զայր բռնաւոր, եթէ և Նիկոկղէս ինքնին այնպէս տիրացեալ մեծի քաղաքի և հզօր առաւել՝ երկուցեալ զանգիտէ 'ի պատանւոյ այտի՝ որ 'ի հեշտութիւնս և 'ի գինեըմբուս առեալ վատնէ զօրհանապազ զպէտս կենաց վտարանդութեան իւրոյ։ Եւ այնպէս խաբեալ նոքա 'ի պատիր խորհուրդս իւրեանց, գնային 'ի բաց։

Բայց Արատոս անդէն յետ ճաշուն ելեալ արտաքս և խմբեալ ընդ զօրականին՝ որ յաշտարակին Պօլիւգնոտեայ, առեալ ածէր զնոսա 'ի Նէմէաս. և անդ 'ի վեր հանէր գնդին զխորհուրդ գործոյն. նախ առաջին խոստմունս և յորդորակս 'ի ներքս մատուցանէր, և տայր բաշխէր նշան՝ Աղ.-

ղոն Յաջողակ ։ Խաղայր ապա յառաջադէմ 'ի քաղաք անդր. էր զի՝ ճեպէր յուղին, և էր զի յամր ընթանայր, ճշգրիտ չափմամբ ընդ շրջանի հոլովման լուսնին, զի 'ի լոյս նորա գնասցէ զճանապարհն, և 'ի մուտս նորա 'ի պարտէզ անդր եկեալ ժամանեսցէ մօտ պատուարին ։

Անդուստ ապա գայր ընդ առաջ Կափեսիաս, զորոյ տայր փակելոյ 'ի ներքս պարտիզպանին. այլ թէ՝ ոչ յաջողեցաւ նմա ունել փակել և զկորիւնսն, զի ածապարեալք վազեցին 'ի դուրս ։ Ուստի և յարանց անտի Արատոսի բազմաց սրտաբեկեալ, և թախանձեալ ևս դադարել 'ի գործոյն, նա քաջալերս կարդայր նոցա և ասէր յետս առնուլ դարձուցանել զնոսա, եթէ վիշտ վտանգի հասցէ նոցա 'ի կորեանց անտի ։

Յայնժամ ապա յառաջ արձակեալ Արատոսի զսանդղաբարձսն՝ որոց պարագլուխք Եկդեղոս և Մնասիթէոս, և ինքն յամրաքայլ զհետ երթայր ։ Իսկ անդուստ կորիւնքն սաստիկ և անդուլ հաջէին, և վազս ևս առեալք ունէին զհետոց Եկդեղայ և ընկերացն ։ Այլ նոքա եկեալ մօտեցան 'ի պատուարն, և առեալ յանդորրու յեցուցին զսանդուղսն ։

Իբրև այնպէս առաջինքն սկսան խաղալ 'ի վեր ընդ սանդուղսն, դէպ լինէր յայնժամ այգապահ գնդապետին անցանել ընդ վայրն զանգակաւ և բազում ղամբարօք և 'ի շաչիւն շառաչիւն գնդին իւրոյ ։

Իսկ որք 'ի վերայ սանդղոցն կային, անդ ծակեալք և ամփոփեալք՝ այնպէս հեշտեաւ ծածկեցին զինքեանս: Բայց ապա 'ի վտանգ անհնարին պաշարեցան յանցանել ընդ այն և այլում գնդի պահակաց՝ որ ընդ առաջ գայր առաջնոյն: Իսկ իբրև և այն անց գնաց և ոչ զոք տեսին 'ի նոցանէ, անդէն արագ Նիկդեղոս և Մնասիթէոս նահատակեալք ելեալք 'ի վերայ պարըսպին, և կացեալք աստի և անտի և կալեալք զՃանապարհն, արձակեցին զՏեքնոն առ Արատոս ձեպել փութացուցանել զնա:

Չէր հարուստ ապարէս 'ի պարտիզէ անտի 'ի պարիսպ անդր և յաշտարակ մի՝ յորում կայր 'ի պահպանութեան բարակ մեծ որսական: Այս բարակ կամ անդըստին 'ի բնէն յոյլ և պղերգ, կամ թէ յառաջին օրէն վաստակաբեկ խոնջ կենդանին, ոչինչ զգաց ամենևին 'ի խաղալ առանցն 'ի վեր ընդ պարիսպն. սակայն 'ի կողեանց անտի պարտիզպանին՝ որ հաջիւն 'ի ներքուստ անդուլ տային, սթափեալ՝ և ինքն դարձեալ հաջիւն արձակէր զառաջինն խաղտաղուղտ և դժոխալուր. այլ ապա զմօտ անցանել մարդկանն լուեալ, սաստիկ և բուռն հնչեցուցանէր առհասարակ զվայրն յահագնալուր ձայնէն. որպէս զի և ինքնին պահակեր ոք 'ի հեռաստանէ աղաղակ բարձեալ հարցանէր որսորդին, առ ո՞ ոք այնպէս ահագինս հաջեսցէ բարակն, զի՞նչ իրք նորք իցեն: Իսկ նա ան-

դուստ յաշտարակէն պատասխանի առնէր. եթէ ուստեք չէք լինչ 'ի դժնդակաց. իսկ բարակդ գրգռեցաւ 'ի լոյս պատուարապահ որերոյն և 'ի շաչիւն զանդակին նոցա:

Զայս բանս լուեալ զօրականին Արատոսի՝ մեծապէս քաջալերեցան, եթէ ուրեմն և ինքնին արտորդն հաստարակորդ է գործոյն, զի այնպէս քօղարկէ զբանն. առ այս՝ և բազումք արդեօք 'ի քաղաքին գործակիցք նիզակակիցք լիցեն նոցա: Իբրև առհասարակ ժամանեցին 'ի պատուարն, և անդ մեծապէս էր վտանգն 'ի դանդաղելոյ իրացն, քանզի ոչինչ հանդարտէին սանդուղքն՝ բայց եթէ այր ըստ առնէ և յուշիկ ելանիցէ ընդ նոսա. իսկ յայնժամ պահ գիշերոյն ձեպ տայր, քանզի և հաւք սկսան խօսել, և ժամն ևս 'ի վերայ հասեալ կայր գեղջկացն բերել յագարակացն վաճառ 'ի հրապարակ անդր: Վասն որոյ և Արատոս աճապարեաց ելանել 'ի վեր զկնի արանցն որ ելին անդր քառասնիւք չափ, և սպասեալ ևս այլոց ոմանց սակաւուց՝ որ էին 'ի խոնարհ, դէմ եդեալ նոքօք հանդերձ խաղայր յապարանսն բռնաւորին և 'ի տաճար խորհրդոյն, ուր կային գիշերապահք 'ի վարձկան զօրականէն. և անկեալ 'ի վերայ նոցա և առհասարակ ձերբակալ արարեալ՝ սպանանէր և ոչ զոք, և անդէն առաքէր կոչէր արտաքս 'ի տանց զբարեկամս իւր:

Իբրև 'ի կողմանց կողմանց խռնեցան անդր, և օրն տակաւ լուսանայր, և յայն-

ժամ՝ Թատրոնն լի մարդկամբ միահամուռ խմբեալ 'ի վարանս և 'ի մեծ տարակուսանս 'ի լուր անյայտութեան ձայնին, գիտէր և ոչ ոք ճշգրիտ վասն եղելոց իրացն, անդուստ յառաջ եկեալ Քարոզին՝ ձայնէր զայս ինչ. եթէ Արատոս Կղինիասայ որդի հասեալ աւադիկ յազատութիւն ըղքաղաքացիսն կարդայ։ Ա՛յն ինչ բանքն 'ի բերան նորա էին, անդուստ առհասարակ՝ իբրև եկեալ հասեալ ժամուն որում նոքա 'ի վաղնջուց խոկ էին ցանկացեալ՝ միադունդ խուռնս առեալ յանդուգն յարձակմամբ 'ի դուրսն բռնաւորին՝ հուր հարին զապարանիցն։ Եւ ելանէր բարձրանայր բոցն յոյժ մեծաբորբոք, զի և անդուստ 'ի Կորնթոսէ տեսանէին հրայրեացք տանն, և վայրիկ մի ևս Կորնթացիք յայնժամ զարհուրեալք յեղելոցն՝ ընթանային 'ի Թիկունս։ Իսկ Նիկոկղէս ականամուտ ելեալ արտաքս՝ գաղտագնաց Թաքթաքուր փախչէր 'ի քաղաքէն։

Ապա զօրականք Արատոսի հանդերձ Սիկիւոնացւովք հասեալք շիջուցանէին զհուրն, և աւար զպալատն հարկանէին, և ոչ ինքնին Արատոս արգելոյր ինչ. այլ բարձեալ կուտեալ զամենայն զգանձսն՝ որ մնացեալն էին՝ զբռնաւորացն, հասարակաբաժին արարեալ բաշխէր տայր քաղաքացեացն։ Իսկ 'ի յարձակելոց անտի և 'ի Թշնամեացն՝ տապաստ կամ վիրաւոր անկաւ և ո՛չ ոք. այլ ըստ գեղեցիկ բախտին սուրբ և անշաղախ յարենէ քաղաքա-

ցեացն դատաւ նահատակութիւն գործոյն ։

Իսկ յետ այնորիկ առեալ դարձուցանէր Արատոս զվտարանդիսն, զոր միանգամ տարագրեաց Նիկոկղէս՝ ութսնիւ չափ, և զոր բռնաւորքն տարագրեցին որ յառաջ քան զնա՝ ոչինչ պակաս քան զհինգհարիւր, որ թափառեալ շրջէին նոքա տարագէմ 'ի հայրենեացն ամս իբրև յիսուն ։ Եւ դարձան եկին բազումք 'ի նոցանէն չքաւորեալք, և կալան տեարք իւրաքանչիւր զարարս իւրեանց, և նստեալ բնակեցան 'ի դաստակերտս և 'ի տունս իւրեանց յանդորրու ։

Իբրև այս այսպէս կատարեցաւ, յոյժ ապա 'ի միտս իւր հարեալ խոցեցաւ Արատոս․ քանզի արտաքոյ դարանք և մախանք վասն ազատութեան քաղաքին պատրաստեցան յԱնտիգոնոսէ, և 'ի ներքոյ՝ ինքն յինքեան ծփայր 'ի խռովութենէ ։ Ապա Արատոս քաջիկ խորհրդով 'ի ժամանակին յայնմիկ առեալ դաշնաւորէր զքաղաքն ընդ Աքայեցւոց ։ Եւ քանզի Տովրիկեանք էին նոքա, կամակար յանձն առին զանուն Աքայեցւոցն և հասարակորդ եղեն կարգի քաղաքին նոցա․ Թէպէտ և Աքայեցիք 'ի ժամանակին ոչ մեծահամբաւք ինչ էին և ոչ մեծազօրք․ քանզի բազումք 'ի նոցանէն բնակաւորք էին քաղաքաց փոքունց, և երկիր էր նոցա ոչինչ արգաւանդ և բարեբեր․ զի կային նոքա առ ափամբ աննաւահանգիստ ծովուն, և որ շատ ուրեք հարեալ բախեացէ

զցամաքն ընդ ժայռս դժուարինս ։ Ցայսր ամենայնի վերայ՝ ցանդ անվանելի զՀելլենացւոց զօրութիւնն 'ի դէմս բերին Աքայեցեք 'ի քաջիկ կարգին իւրեանց և 'ի միաբանութեան ընդ ձեռամբ զօրավարի իմաստնոյ։ Քանզի թէպէտ և՝ առ վաղնջուց արութեամբ քաջութեամբ Հելլենացւոցն իբրև ումպէտք ոմանք՝ զի այսպէս ասել՛ էին նոքա, և միահամուռ նոցայն զօրութիւն ոչինչ հաւասարէր միում անդամ յերևելի քաղաքացն, համայն և այնպէս՝ գեղեցիկ կարգաւորութեամբն և միաձայնութեամբն և աննախանձաբար բարոյիւք ընդ հոյակապն քաջութեամբ, նա՝ և հնազանդօրէն հլութեամբն առ նոսա, նոքա ոչ զանձինս միայն յազատութեան յանդորրու կացուցին 'ի մէջ քաղաքաց քաղաքաց և զօրութեանց և ահագին բռնակալութեանց, այլ և զքաղուսն այլ 'ի Հելլենացւոց անտի յազատութիւն հանեալ փրկեցին ։

Բայց Արատոս և 'ի բոյս բարուց իւրոց էր քաղաքական այր և մեծանձն, և քան յառանձինն՝ առաւել ժիրաժիր 'ի հասարակացն. և էր նա բռնաւորացն ոխերիմ թշնամի. իսկ կէտ նպատակի թշնամութեանն՝ միայն հասարակաց շահ օգտի. ուստի և թուի ինձ՝ ո՛չ այնպէս բարեկամ ճշգրիտ և անյողդողդ լինել նմա, քան թէ թշնամի հեզ և ամոք, դարձադարձ ըստ ժամանակին առնելով է զի 'ի մի կողմն և է զի 'ի միւսն՝ 'ի շահ օգտի քաղաքին ։

Ոյր աղագաւ և միաձայնաբար ժողովուրդք և քաղաքաց ընկերութիւնք և ժողովոց ատեանք և թատրոնք՝ 'ի մի բերան ասէին․ Արատոս 'ի սէր միայն առաքինութեան հարեալ կայ, և թէպէտ և միջամուխ յայտնի 'ի մարտս լինել անարի է դա և վեհերոտ, սակայն 'ի հնարագիտութիւնս գաղտնածածուկս և 'ի դարանակալութիւնս զանխուլս ընդդէմ քաղաքաց և բռնաւորաց, խորագէտ յոյժ է այրն։ Ուստի և ինքն քաջիկ 'ի գլուխ տարեալ նահատակութիւնս բազումս անկարծելիս արութեամբ քաջութեամբ, թուի թէ առ 'ի տարապայման զգուշաւորութենէն՝ ոչ յաջողեցաւ նա 'ի բազում ինչ 'ի հեշտինս։ Քանզի՝ զոր օրինակ ոմանց 'ի կենդանեացդ տեսութիւն աչաց՝ որպէս երևիդ՝ սրակն է 'ի մութ խաւարի, իսկ 'ի տունջեան զաչացու կայ առ ցամաքութեան և անօսրութեան հիւթոցդ՝ որ զընբօքն շողայցեն, ուստի և հանդարտէ ոչ խառնութեան լուսոյն․ սոյնպէս և 'ի մարդիկ ինքնին գլխովին է տեսանել ուշիմութիւն և հանճար՝ որ 'ի նահատակութիւնս յայտնիս և յերևելիս հեշտեաւ բնաւորեցաւ սրտաբեկիլ․ իսկ 'ի ծածուկսն և 'ի զանխուլսն լի է արիութեամբ։ Իսկ այս յողդողդութիւն 'ի քաջամոյն բոյս բարուց մարդկանն՝ բնաւորեցաւ յանուսումնութենէ, յորմէ և ծնանի 'ի նոսա առաքինութիւն անբաւ 'ի գիտութենէն․ զոր օրինակ պտուղ՝ որ ինքնաբոյս լցէ և անմը-

չակ : Եւ է իսկ զայսոսիկ քաջիկ լուսաբանել յօրինակաց անտի :

Արդ յայնժամ Արատոս՝ իբրև նիզակակից իւր և քաղաքին արար զԱքայեցիսն, ինքն զինուորեցաւ 'ի գունդ այրուձիոյն. և էր նա 'ի հնազանդութենէ անտի իւրմէ առ զօրավարսն՝ սիրեցեալ յոյժ առ 'ի նոցանէ. քանզի թէպէտ և շատ մեծապէս 'ի ներքս բերեալ էր հասարակաց՝ 'ի համբաւոյ անձինն և 'ի նահատակութենէ հայրենեացն, սակայն և հպատակէր միշտ զանձն իբրև զմի 'ի սոսկական զօրականէն՝ զօրավարին Աքայեցւոց, որ ոք միանգամ և էր, եթէ Դիւմէոսին՝ եթէ Տրիտաեայ, կամ այլոյ ուրուք 'ի փոքրիկ քաղաքաց անտի :

Յետ այսորիկ դէպ եղև առաքել Պտղոմեայ արքային առ Արատոս տաղանդս քսան և հինգ 'ի պարգև. յանձն առ ընկալաւ Արատոս և առեալ բաշխէր աղքատաց ժողովրդեան 'ի պէտս նոցա, միանգամայն և 'ի փրկանս գերւոյ պատերազմին : Բայց քանզի վտարանդիքն յայնժամ անողոքելիք կային 'ի ներել զժառանգաւորսն ընչից իւրեանց, և ողջոյն քաղաքն վայրիկ մի եւս հիմն 'ի վեր տապալէր, ած զմտաւ Արատոս զմիակ յոյս ակնկալութեանն 'ի մարդասիրութիւն անդր Պտղոմեայ. եդ 'ի մտի նաւագնաց լինել աղաչել զթագաւորն վասն արծաթոյ 'ի հանդարտութիւն կագին :

Այս յուղի անկանէր նա 'ի Մեթոնէ 'ի վերոյ Մալեայ, անդուստ դէպ ուղիղ

դիմել յԵգիպտոս ։ Բայց նաւապետին տեղի տուեալ ուժգնակի հողմոյն, և ալեացն ամբարձելոց 'ի մեծ ծովէն, և վարեալ տարեալ նաւուն, հազիւ ուրեմն հասանէր ունէր զԱդրիա երկիր թշնամեաց ընդ տէրութեամբն Անտիգոնոսի. և էր ևս անդանօր գունդ զօրականին ։ Որ աղագաւ տագնապեալ Արատոսի անձնապուր լինել մինչև յերևան եկեալ, իջեալ 'ի ցամաք և լքեալ զնաւն՝ ինքն տարագէմ գընայր 'ի ծովէն . և էր ընդ նմա Տիմանթէս միայն 'ի բարեկամաց անտի իւրոց . և եկեալ մխեցան երկոքին նոքա 'ի վայր մի անտառախիտ . անդանօր զգիշերն անցուցանէին մեծապէս տառապանօք ։ Իսկ վայր մի յետ ելից Արատոսի 'ի նաւէն, գայր հասանէր անդր 'ի խնդիր նորա զօրագլուխ գնդին . և խաբեցաւ 'ի ծառայիցն Արատոսի՝ որք 'ի նմանէն թելադրեալք զոյց զայն տային արագապէս փախստեամբն Արատոսի նաւագնացութեամբ յԵւբէա ։ Այլ զօրագլխին՝ իբրև թշնամեաց աւար ժողովեալ միանգամայն զնաւն և զծառայսն և զայլն ամենայն՝ կալաւ առ իւր ։

Իբրև աւուրք 'ի վերայ անցին ոչ բազում, և 'ի մեծ վարանս պաշարեալ էր Արատոս, դէպ գեղեցիկ պատահէր նմա՝ գալ մօտել յայնժամ նաւու հռովմայեցւոյ 'ի վայր անդր, ուրանօր նա է զի 'ի դարաւանդ ելեալ դիտէր զննէր 'ի ծովէն կոյս, և է զի 'ի դարափոր մտեալ զօղէր ։ Եւ էր այն նաւ դէմ եդեալ յԱսորիս.

անդր մտանէր Արատոս, աղաչէր զնաւապետն տանել հանել զնա 'ի Կարիա. և եկեալ ժամանէր 'ի վայրն՝ ոչինչ պակաս կրեալ վտանգս՝ զոր վտանգեցաւ միւսանգամ 'ի ծովուն: Ապա յետ հարուստ ժամանակաց անցեալ 'ի Կարիոյ յԵգիպտոս, չոքաւ խօսեցաւ ընդ արքային: Նա մտադիւրագոյնս լսէր նմա, իբրու որ բարիոք սպասարկեալ երբեմն յԱրատոսէ. յորմէ և ընկալեալ իսկ էր արքայ յառաջ ժամանակաւ նկարս կենդանագիրս և պնակս առաքեալ նմա յԵլլադայ: Քանզի Արատոս՝ որ ճշգրտագոյնս գիտէր ընտրէր յայսպիսեաց սատի, ժողովեաց կուտեաց առ իւր ձեռագործս հրաշակերտս, յաւէտ իմն յարուեստից անտի Պամփիւղեայ և Մելանթայ, և առեալ յղէր առ Պտղոմէոս արքայ: Քանզի 'ի ժամանակին յայնմիկ տակաւին բարգաւաճ էին փառք Սիկիւոնեան հրաշակերտութեանն և ճարտարագործ նկարու, յորում միայն անդըրժելի և անապակ կայր մնայր գեղ արուեստին: Որպէս զի և Ապեղէս ինքնին՝ զքանչելին այն այր հետևեալ անդր, հպատակ կայր ճարտարացն այնոցիկ, տուեալ նոցա 'ի վարձ տաղանդ մի. ոչ զի պէտս ինչ ունէր նա հրահանգացն արուեստին այլ զի բաժանորդ ինքն նոցայն լինիցի համբաւոյն:

Ուստի և Արատոս յազատութիւն յանդորր հանեալ զհայրենի աշխարհն, իբրև արագ արագ ձեռն 'ի գործ քանդէր ա_

ւէ րէր առհասարակ զպատկերս զբռնաւորացն, բայց վասն պատկերին Արիստրատոսին՝ որ եկաց առ Փիլիպպոսիւ, հարուստ ժամ այնպէս կայր և մտախորհ լինէր այրն։ Քանզի զայս զԱրիստրատոս ամենայն աշակերտք Մելանթոսին նկարեցին առ երի ինչ յաղթանակաբեր կառացն․ յայն նկար և ինքնին Ապեղէս ունէր մասն և բաժին, որպէս պատմէ Պողեմոն Պերիգիտէս։ Եւ էր այս նկար հրաշատիպ գործ, զի և ինքնին Արատոս յայնժամ հրաշացեալ՝ յաղթեցաւ ՚ի ճշգրտութենէ արուեստին․ բայց ՚ի վերջէ ուրեմն գրգեալ ՚ի ատելութենէն առ բռնաւորսն, հրաման տայր եղծանել աղարտել զգործն։ Եւ պատմեն՝ յայնժամ Նէաղկեայ կենդանագիր նկարչի բարեկամին Արատոսի արտասուօք բարեխօսել վասն պատկերին․ իբրև ոչինչ կարաց ամոքել զԱրատոս, ասէր ցնա․ կռուել պարտ է ընդդէմ բռնաւորաց, այլ ոչ և ը պատկերս բռնաւորաց․ և յաւել ասել Նէաղկէս․ " Թողցուք ուրեմն զԿառուդ զայդ և զՅաղթանակդ, և ես քեզ ջնջեցից ՚ի բաց զԱրիստրատոս ՚ի պնակէդ ,,։ Իբրև հաւանեցաւ Արատոս, ջնջէր Նէաղկէս զԱրիստրատոս միայն, և անդ արմաւենի մի փոխանակ նկարէր միայն․ զի ոչինչ այլ քաջալերեցաւ յաւելուլ ՚ի նմա։ Բայց ասեն՝ անդ ՚ի ջնջելն ոտքն Արիստրատոսի գաղեալ մնաց ՚ի նկարուն ՚ի ներքոյ կառացն։

Այսոցիկ աղագաւ սիրելի լեալ էր Ա-

բատոս յառաջնմէ արքային այնմիկ . իսկ յետ այնորիկ և կենակից քաղաքավարութեամբն ընդ նմա շնորհս բազում գտեալ առաջի նորա , առնոյր 'ի նմանէ 'ի պարգև քաղաքին իւրոյ տաղանդս հարիւր և ութսուն : Առեալ ապա ընդ իւր քառասուն 'ի տաղանդացն , անդէն յուղի անկանէր 'ի Պեղոպոննէսոս . իսկ զմնացեալն 'ի բաժինս բաժինս բաշխեալ արքային` հետզհետէ առաքեաց 'ի ձեռս նորա :

Եւ ապա այս մեծապէս էր Արատոսի , զամբաւութիւն զայն արծաթոյն պատրաստել իւրում քաղաքի . ուր այլք 'ի զօրավարաց անտի և 'ի հռետորաց խուժանին սակաւիկ մի արծաթ առեալ 'ի թագաւորէն` դրժէին իրաւանց , և ընդ լծով ծառայութեան արկանէին թագաւորաց զհայրենի քաղաքսն : Իսկ որ մեծ ևս` զի նովին արծաթով եղոյծ Արատոս զկապ գժտութեան զաղքատացն ընդ մեծատունսն , հաստեաց խաղաղութիւն , և փրկութիւն աներկևանութեամբ պատրաստեաց առհասարակ ժողովրդեանն :

Բայց էր և սքանչելի չափաւորութիւն Արատոսի յայնչափ զօրութեանն : Քանզի և յորժամ ինքնիշխան զնա միայնակ ընտրեալ կարգեցին հաշտարար իրաւախոհ յիրս վտարանդեացն , յանձին չկալաւ . այլ առ ընտրեաց ընդ իւր 'ի միասին և հնգետասան այր , և նոքօք հանդերձ բաղմաքիրտն տաժանեալ , և ապա ուրեմն հաստէր բարեկամութիւն և խաղաղութիւն 'ի

մէջ քաղաքայնոցն ։ Ոյր աղագաւ ոչ միայն առ հասարակ նոքա զարժանին չուք պատուոյ հարին նմա, այլ և մասնաւոր՝ վտարանդիք ինքնին պատկեր կանգնեցին նմա պղնձի, ողբերգակ արձանագրութեամբ՝ այսպիսի.

“ Խորհուրդք, մըրցանք վասն Ելլադայ,
Նոյն և կորովն այս քաջի,
Համբաւատենչք մինչև յԱրձանս
Տարածեցան Հերակլի ։
Այլ մեք դարձեալքս, ով Արատէ,
Ի մերն աշխարհ բարեբեր,
Քում սրբութեան, արդարութեան,
Աստ կանգնեցաք ըզպատկեր ։
Ըզփըրկողէդ ընդ դից փրկչաց
Եդաք աստէն առընթեր,
Զի Հայրենեացդ՝ աստուածեան կարգ
Նըման Քաջին նուաճեցեր ։

Ապա 'ի գլուխ զայսոսիկ տարեալ Արատոսի, վեհագոյն գտաւ նա և նախանձուն կրից քաղաքայնոցն 'ի բազմադէմ երախտեաց անտի իւրոց ։

Բայց Անտիգոնոս արքայ խռովեալ և 'ի խոր խոցեալ, խնդրէր կամ բարեկամ գլխովին իւր յարդարել զԱրատոս, կամ թէ յաչաց հանել զնա Պտղոմեայ ։ Ապա բաց յայլոց անտի գեղեցիկ քաղաքավարութեանցն իւրոց առ նա, թէպէտ և ոչ ինչ ըղձացեալ ինչ էր Արատոս, զոհ դից զոհեալ Անտիգոնոս 'ի Կորնթոս՝ բաժին

'ի սպանդիցն առաքէր Արատոսի 'ի Սիկիւոն. Նա և յընթրիսն իւր 'ի մէջ յոգնաթիւ բազմականին՝ ձայն բարձեալ ասէր այսպէս. « Կարծէի այնպէս՝ եթէ այդ պատանիդ Սիկիւոնացի աղատանձնեայ միայն իցէ անդստին 'ի բնէն և առ իւր քաղաքացին խանդակաթ, այլ զարդիս թուի ինձ՝ դատաւոր լինել դորա արդարակորով քաղաքավարութեան կենաց և գործոց արքայից: Քանզի յառաջ ժամանակաւ դա յընչաց քերէր զմեզ, ակնկառոյց դէտակն կալեալ 'ի յոյս ակնկալութեանն՝ որ արտաքոյ, և հրաշացեալ կայր ընդ եգիպտական ընչաւէտութիւնն, լուեալ զհռչակ համբաւոյ զփղաց նոցա և զնաւահանգիսից և զորահից ալքունեաց: Իսկ զարդիս դա 'ի ներքս անդ յառեալ իրացդ և ճշգրիտ 'ի վերայ կացեալ ողբերգակ տեսարանին նոցա և ստուերագիծ ուրուականին, համբուն մեզ անձնատուր եղև: Արդ ես մտադիւրագոյնս առեալ ժողովեմ զպատանիդ. և հաստատեալ եմ 'ի գործ առնուլ զդա յամենայնի, և հրաման եմ տամ առ բարեկամս ունել ձեզ զդա »: Բայց յայնժամ արք յաչաղկոտք և չարարուեստք առեալ պատճառանս 'ի բանից աստի, այր զարամբ ելանէին նամակադիր լինել շատ ինչ առ Պտղոմէոս և դրդռութիւնս ընդդէմ Արատոսի. որպէս զի և ինքնին Պտղոմէոս առաքէր՝ դանդատ ունէր զԱրատոսէ: Եւ այսպէս ապա 'ի բարեկամութիւնս անդ արքայից և բռնաւորաց ընդ

առնն՝ նետահարեալ 'ի պայքարաց և 'ի հրաբորբոք խանդից, այնչափ լինի սպրդեալ եմուտ կիրք նախանձուն և չարութեան:

Զայնու ժամանակաւ կարգեալ Արատոսի այս առաջին նուագ 'ի զօրավար Աքայեցւոց, խաղաց գնաց աւար հարկանել զԼոկրիդէ՝ որ կայ 'ի հանդիպոյ, և զԿալիդոնիա. և ապա չու արարեալ բիւրուք զօրականօք 'ի Թիկունս Բէովտացւոց՝ հասանէր անդր յետ կռուոյն, յորում հարեալ վանեցան նոքա յԵտոլացւոց անտի մօտ 'ի Քերոնիա. և անդ տապաստ անկանէր զօրավար նոցա Աբէոկրիտոս, հանդերձ հազար զօրականօք:

Բայց յետ տարւոյն միւսանգամ կարգեալ 'ի զօրավար, կազմեցաւ պատրաստեցաւ խաղալ 'ի դիմի հարկանել Ակրոկորնթոսի, ո՛չ միայն 'ի շնորհս Սիկիւովնացւոց և Աքայեցւոց, այլ և Հելլենացւոց առհասարակ. եդ 'ի մտի վանել վարել անտի զդունդ Մակեդոնացւոցն, և այնպէս ողջոյն զՀելլադա փրկել ազատել 'ի հասարակ բռնակալութենէն: Իսկ արդ՝ եթէ անդ Քարէս Աթենացի մարտ պատերազմի քաջիկ 'ի գլուխ տարեալ ընդդէմ զօրավարաց արքային, առեալ գրէր յԱթէնս առ ժողովուրդն՝ զի մարտ 'ի գլուխ տարայ զհարազատ Մարաթոնեան կռուոյն, ո՛չինչ մեղանչիցէ ոք եթէ զնոյն նահատակութիւն զԱրատոսին կոչեսցէ անշուշտ, Հարազատ Պեղոպիդեայ Թեբայեցւոյ մրցանացն և Թրասիբուղեայ

Աթենացւոյ, յորժամ 'ի մահ վարեցին նոքա զբռնաւորսն. բայց մրցանք այս Արատոսին արդեօք ականաւոր ևս է, և առաւել հոյակապ. զի ոչ ընդդէմ մրցեցաւ Հելլենաց, այլ եկամուտ և օտար տէրութեանն։

Քանզի Իսթմոսդ այդ անջրպետ երկուց ծովուց՝ առնու զօդէ անդանօր զմեր ցամաքն. իսկ Ակրոկորնթոս լեառն բարձրաբերձ՝ ամբարձեալ 'ի մէջ Ելլադայ, եթէ երբէք 'ի գունդ զօրականին ամրացեալ կայ վայրն, կարճէ միանգամայն զամենայն հաղորդութիւն և զանցս և զարշաւան 'ի կիրճ անդր. առ այս դարձեալ՝ և զամենայն շահավաճառութիւն ընդ ծով և ընդ ցամաք խցեալ կուրացուցանէ, և զիշխանն անդանօր զամրապահ գնդին առեալ տիրացուցանէ 'ի վերայ ամենայնին։ Ուստի և կրսերոյն Փիլիպպոսի՝ թուի ո՛չ ընդ խաղ, այլ ճշմարտութեամբ կոչել զքաղաք զայն Կորնթացւոց՝ Ոտնակապ Ելլադայ։ Որ աղագաւ և առհասարակ ամենեքեան 'ի վէգ գային վասն տեղւոյդ այդորիկ, և հանապազօր թագաւորք և կուսակալք։ Իսկ իղձ Անտիգոնոսի հասանել գրաւել զվայրն զայն, ոչինչ պակաս վառեալ էր քան ըղկիրս գլխովին զանհնարին տռփեցելոց ոմանց. և բիւրապատիկ հնարէր հանել զայն նենգաւ 'ի ձեռաց ունելեացն զնա. զի և ակն չունէր յայտնի հրոսակաւ գամագիտ 'ի նոյն լինել։ Վասն որոյ իբրև 'ի հնարից անտի Անտիգոնոսի՝ որպէս ասեն՝ դեղակուր մեռանէր Աղեքսանդրոս՝ այն որ զը-

բաւեալ ունէր զտեղին, և զնոյն վայր յետ այնորիկ ընդ ձեռամբ կալեալ Նիկեա կին նորա՝ ընդ նորա միջամտուխ 'ի գործն լինէր, առեալ զորդի իւր զԴեմետրիոս արձակեաց առ կինն, և 'ի գեղեցիկ ակնկալութիւն հարսանեաց արքունի ամոքեալ զնա, զի և անախորժ ինչ չէր կնոջ երիցագունի ափոք՝ ունել ամուսին երիտասարդ, այնպէս գործի զորդին 'ի ձեռն առեալ՝ իբրև խայծիւ կարթեաց զկինն:

Իբրև կինն ոչ 'ի ձեռաց ելեք զվայրն, այլ և 'ի պահ զգուշութեան ամրացոյց զնա, անդուստ Անտիգոնոս կեղծաւորեցաւ իբրու փոյթ ոչինչ ունել զիրացն, և պարապեալ կայր 'ի տօնախմբութիւն հարսանեացն ընդ որդւոյն 'ի Կորնթոս. տեսարանաց հանդէսս 'ի ներքս մատուցանէր, և հանապազօր խրախուճս կոչնոց պատրաստէր. իբրու այն՝ որ անձնատուր 'ի դրդանս և 'ի խնծղանս՝ ուշ միայն ունիցի սփոփութեանց և պարապորդ կենաց: Արդ՝ 'ի ժամուն յորում հանդերձեալ էր Ամիբէոս ոմն անուն նուագ առնուլ 'ի թատրոնին, ինքնին Անտիգոնոս յուղարկաւոր Նիկեայ հետևէր 'ի տեսարան անդր. և բարձեալ բերէր Նիկեա 'ի տախտ արքունի շքեղ զարդարեալ, համբուն խնդագին 'ի շուք պատուոյն, զմտաւ ինչ ամենևին չածէր վասն հանդերձելոց իրացն: Իբրև եկին հասին 'ի փողոց ճանապարհին՝ որ հանէ 'ի վեր անդր, հրաման տայր Անտիգոնոս առնուլ զՆիկեա ածել 'ի թատրոնն.

իսկ ինքն բարեաւ մնալ ասացեալ Ամիբէոսի, բարեաւ մնալ և հարսանեացն գըլխոյն, ելանէր 'ի վեր յԱկրոկորնթոսն ձեպընթաց քայլիւ 'ի վեր քան զախս հասակին. փակ գտեալ զդուրսն, բաղխեաց դաւաղանաւն. հրաման տայր բանալ. իսկ որք 'ի ներքս կային զարհուրեալք՝ բանային նմա: Իբրև այնպէս տիրացաւ դղեկին, ոչ ինչ այնուհետև հանդարտեաց յանձին. առ սաստիկ խնդրին գնացեալ նստէր 'ի դիներբուս յանձուկս փողոցացն և ընդ հրապարակն 'ի մէջ սրնգահար կանանւոյն. և բոլորս ունելով պսակաց, ինքնին այրն յալևոյթ ծերութեան յեցեալ և որ անցեալ ևս էր ընդ բազմադէմ և ընդ մեծամեծ արկածս, այնպէս աղճատէր. և որոց միանգամ և պատահէրն՝ զաջոյն ունէր և առհատարակ ողջունէր: Այսպէս ուրեմն առաւել քան զկիրս տրտմութեան և զերկիւղին՝ խնդութիւնն ինքնին անչափաւոր առ 'ի բանէն, վեր 'ի վայր և այլ յայլմէ բնաւորեցաւ գործել զհոգին:

Ապա 'ի բուռն Անտիգոնոս արկեալ՝ որպէս ասացաք՝ զԱկրոկորնթոս, տայր զայն 'ի պահ զգուշութեան 'ի ձեռս հաւատարիմ մարդկանն, և ոստիկան կացուցանէր անդ զՊերսէոս իմաստասէր: Սակայն և Արատոս անդուստ առ կենդանութեամբն Աղեքսանդրոսի, ձեռնամուխ և ինքն պատրաստեցաւ 'ի նոյն գործ. իսկ իբրև դաշնաւորք ընդ միմեանս եղեն Աքայեցիք և Աղեքսանդրոս, յետ կայր 'ի

գործոյն : Բայց յայնժամ 'ի նոյն միանգամ բուռն հարկանէր յայսպիսեաց ինչ պատճառաց :

Էին անդ 'ի Կորնթոս եղբարք չորք ազգաւ Ասորիք, յորոց մին՝ անուն Դիոկղէս էր 'ի վարձկանսն ամբապահ գնդին. իսկ այլք երեք գողացեալ ոսկի 'ի գանձուց արքունի, չոգան 'ի Սիկիւոնն առ Եգիաս ոմն լումայափոխ, զոր և ինքնին Արատոս վարէր 'ի նոյն գործ : Ապա նոքա վաղվաղակի զմասն ոսկւոյն ետուն 'ի լումայափոխն. իսկ 'ի մնացելոյ ոսկւոյն՝ մի ոմն 'ի նոցանէն Երգինոս անուն մերթ ընդ մերթ գնացեալ գաղտաբար առ նոյն լումայափոխ փոխէր զոսկին : Ցայսմանէ ապա մտերմացեալ նորա ընդ Եգիասայ, և զբանիւք անկեալ ընդ նմա Եգիաս վասն ամբապահ գնդին, ասէր Երգինոս՝ եթէ ելեալ ինքն 'ի վեր յամուրն յայցելութիւն եղբօրն իւրոյ Դիոկղեայ, գիտեալ իսկ է 'ի ժայռսն անդ շաւիղ խոտորնակ որ հանէ 'ի վայրն՝ ուր պատուար դղեկին զնստագոյն յոյժ է շինեալ: Իսկ Եգիասայ խաղ արարեալ ասէր ցնա. “Արդ ուրեմն ով քաջդ վասն սակաւ ոսկւոյ աղարտէք դուք զիրսն արքունի. նա՝ մարթ է ձեզ ժամ մի միայն ծախել վասն բազում մթերից ընչից : Եւ թերևս մահ ոչ միանգամ ունիցին մեռանել յըմբռնիլ իւրեանց՝ և պատուարախոռք և մատնողք „ : Յայնժամ Երգինոս 'ի ծաղր հատեալ, խոստացաւ նմա երթալ հետազօտել զԴիոկղէս վասն բանին այնո-

րին · քանզի և ոչինչ այնպէս վստահ էր նա յայլոյն յեղբարց անտի։ Իբրև յետ սակաւ աւուրց դարձ այսրէն արար Երգինոս, ժամանակեաց առնուլ ածել ինքնին զԱրատոս 'ի վայր անդր՝ ուր չէր ինչ բարձր պատուարն աւելի քան հնգետասան ոտնաչափից, և գործակից ևս լինել նմա յայլ ինչ իրս 'ի միասին ընդ Դիոկղեայ։

Իսկ Արատոս խոստացաւ տալ նոցա տաղանդս վաթսուն 'ի յաջողել իրացն. ապա թէ ոչ՝ յանձնապուր լինել նորա հանդերձ նոքօք, տացէ նոցա տուն մի և տաղանդ մի առն առն 'ի նոցանէ։ Եւ քանզի պարտ էր վաթսուն տաղանդացն յաւանդի կալ առ Եգիասայ լումայափոխի 'ի հաւատ Երգինոսի, իբրև ոչինչ ունէր արծաթ Արատոս, և զի և տոկոսեօք չկամէր ինչ հայթհայթել՝ զի մի թերևս ոք կասկածեսցի վասն իրացն, առեալ տայր յաւանդ 'ի ձեռս Եգիասայ 'ի գրաւական արծաթոյն՝ շատ ինչ յիւրմէ կարասւոյն 'ի բաժակացն, և զզարդս ևս ոսկւոյ զկնոջ իւրոյ։

Քանզի և էր իսկ Արատոս մեծանձն յոյժ, և հետամուտ գեղեցիկ նախատակութեանց. քանզի և գիտելով զայն ինքն՝ եթէ Փոկիոնն և Եպամինոնդաս՝ արդարք առաւել համարեցան և առաքինիք քան զամենայն Հելլենացիս, զի յանձն չառին զմեծամեծ պարգևսն. և երբէք նոքա կաշառաբեկք՝ մատն չեղեն առաքինութեն, ընտրեաց նա գաղտաբար ծախել տալ յիւ-

րոց անտի գոյից 'ի գործ անդր՝ յորում գիմագրաւեաց զանձն 'ի վերայ հասարակաց՝ զանխուլ 'ի նոցանէն: Եւ ո՞ ոք չզարմասցի ընդ մեծանձնութիւն առնն, և չըխրախուսեսցէ և այսօր նահատակել ընդ նմա, որ այնչափ մթերից արծաթոյ գնոց գնեաց զմեծապէս վտանգն, և զարգոյն և զպատուականն առեալ եդ յաւանդ, զի երթեալ ինքն մխեսցի 'ի ժամ գիշերոյն 'ի մէջ թշնամեացն, մարտ դնել կռուել ոգւով չափ, ոչինչ այլ ունելով առ 'ի յընտանեացն գրաւ անխար, բայց զյոյս ակնկալութեանն 'ի քաջիկ նահատակութեանն իւրում:

Արդ բազմավտանգ այն գործ՝ առաւել ևս վտանգեցաւ 'ի սկզբան իրացն՝ 'ի վրիպանաց ինչ անդիտութեան՝ այսպիսի: Քանզի առեալ արձակեցին անդր զՏեքնոն ծառայ Արատոսի, 'ի միասին ընդ Դիոկղեայ լրտեսել զպատուարն. բայց Տեքնոն երբեք յառաջ ժամանակաւ չէր տեսեալ զԴիոկղէս, այլ կարծէր քաջիկ խելամուտ եղեալ գիտակին նորա և կերպարանին 'ի նշանաց անտի՝ զոր ազդեաց նմա Երգինոս, եթէ գանգրահեր է այրն և թուխ է և անմօրուս: Արդ գնացեալ Տեքնոն 'ի պայմանեալ վայրն, անդէն դէտակն կալեալ մնայր Երգինոսի գալստեանն հանդերձ Դիոկլիղեաւ առաջի դրանն՝ 'ի վայրն զոր Որնիթոս կոչեն: Իսկ 'ի պահուն յայնմ դէպ տայր անցանել ընդ վայրն Դիոնիսեայ՝ երեց եղբօրն Երգինոսի և

Դիոկղեայ՝ բնաւ իսկ անտեղեակ գործոյն այնմիկ և անբաժին. բայց նմանութիւն, բերէր նա զգիտակին Դիոկղեայ: Ընդ Տեքնոնի խաբեալ 'ի նմանութենէ դիտակին՝ ըստ նշանացն ազդելոյ նմա, հարցանէր ցայրն՝ եթէ արդեօք բանք ինչ իցեն նորա ընդ Երգինոսի. իբրև պատասխանի ետ՝ եթէ եղբայր իմ է, անշուշտ յայնժամ հաստատեցաւ Տեքնոնի՝ խօսել իբրու ընդ Դիոկղեայ. և հարցեալ և ոչինչ զանուանէն և հաւաստիս և ոչ այլ հետախուզեալ, կալեալ զաջոյն նորա՝ սկսաւ խօսել ընդ նմա և հարցանել վասն բանին՝ զոր հաստատեալ էին ընդ Երգինոսի: Իսկ Դիոնէսիոս խորամանկ խորհրդով առեալ յինքն զվրիպանս առնն, լսէր և հաւանէր ամենայնին. և դարձ արարեալ 'ի քաղաք անդր՝ գնայր տակաւ տակաւ յառաջ վարեալ զՏեքնոնի և զբանիւք անկեալ անկասկած ամենևին: Իբրև մօտ հասին 'ի քաղաքն, և պատրաստեցաւ մխել ձեռն 'ի Տեքնոնի, անդ և դէպ այլ տայր պատահել նոցա Երգինոսի. անդէն սա խելամուտ վրիպանացն և վտանգին՝ ակնարկի ազդ առնէր Տեքնոնի 'ի փախուստ խուճապել. և այնպէս ապա երկոքին նոքա շտապաւ մաղապուր վազեալ եկին անկան առ Արատոս:

Իսկ Արատոս ոչինչ սրտաթափ 'ի ձախողակ դիպաց անտի, անդէն ետ ընդ ետ զԵրգինոս ինքնին առեալ արձակէր տանել արծաթ Դիոնիսեայ և աղաչել զնա

լուել վասն բանին ։ 'Ի գլուխ Երգինոսի տարեալ զամենայնն , նաև զԴիոնէսիոս ինքնին առեալ ածէր առ Արատոս ։ Իբրև եկն՝ ոչինչ այնուհետև Թոյլ ետուն առն երԹալ ուրեք . այլ կապեալ փակեցին զնա 'ի պահ 'ի փոքրիկ տան , և ինքեանք հանդերձեցան կազմեցան 'ի գործն ։

Իբրև կազմ էր ամենայնն, հրաման տայր Արատոս զօրականին վառել գիշերի 'ի զէնս իւրեանց . և առեալ ընդ իւր չորեքհարիւր այրընտիր զօրընտիր , գիտէին և ոչ ինչ նոքա վասն գործոյն՝ բայց 'ի սակաւուց . և առեալ ածէր զնոսա առաջի դըրացն մօտ 'ի տաճարն Հերայ ։ Եւ էր տարւոյն եղանակ՝ խոր ամարայնոյ , և ամսոյն՝ լուսնապատար , և գիշեր պարզ և պայծառ յոյժ . երկուցեալ զանգիտէին եԹէ 'ի ճառագայԹից անտի լուսնին նշոյլք հատցին զինուցն առ պահապանսն քաղաքին և անծածուկ 'ի նոցանէն կայցեն ։ Իբրև մօտ հասին անդր նահատակք զօրականին , յայնժամ մէգ և մառախուղ ամբարձեալ 'ի ծովէն եկեալ պատէր զքաղաքն և զարուարձանեայսն , և նսեմանայր ։ Իսկ այլք 'ի զօրականէն նստան , լուծանէին յոտից զկօշիկս , (քանզի և ընդ սանդուղսն վերելակեալք այնպէս բոկոտն , ոչինչ շատ արձակէին դղրդիւն , և ոչ դարձեալ հեշտին ինչ գայԹակղին) ։ Իսկ Երգինոս և այլ եօԹն պատանիք հանդերձ արկեալ զուղևորի , մերձ եղեալք զանխուլ 'ի դուռն՝ անդանօր սպանանէին զդռնապանն, և զայլս

ևս 'ի պահապանացն ։ Յանժամ և զսանդուղն յեցուցեալ, անդուստ Արատոս 'ի շուտ տագնապի 'ի վեր հանեալ արս հարիւր, և հրաման տուեալ և այլոցն փութապէս զհետ իւր խաղալ, և 'ի վեր արագ արագ զսանդուղսն առեալ, գնայր յարձակէր ընդ մէջ քաղաքին հանդերձ հարիւրովքն դէմ եդեալ 'ի դղեակն՝ մեծապէս խնդացեալ ընդ ծածկութիւն բանին, իբրու այն որ քաջիկ 'ի գլուխ զգործն տարեալ իցէ ։

Իբրև սոքա վայր մի յառաջադէմ եղեն, ընդ առաջ գային գիշերապահ արք չորք հանդերձ լապտերաւ, բայց տեսին ոչ զսոսա, քանզի 'ի ստուերի լուսնին գնային. այլ սոքա տեսանէին զորս գային 'ի հանդիպոյ ։ Ապա Արատոս խոտորեալ վայր մի 'ի ներքոյ որմոցն և խարխուլ տանցն, և անդ դարանեալ, և յեղակարծումն 'ի վերայ անկեալ հանդերձ իւրովքն, տապաստ արկանէին զերիսն. իսկ չորրորդն սուսերահար խոցեալ 'ի գլուխն, մազապուր խուճապէր. ձայն բարձեալ գոչէր՝ եթէ թըշնամիք 'ի ներքս խուժեցին ։ Անդ արագ արագ նշան տուեալ 'ի ձայն փողոյ, յուզէր ծփայր քաղաքն. անդ և փողոցք լի՛ մարդկամբ յայսկոյս յայնկոյս ընթացեալք, և բոց մեծ բորբոքեալ բազմաց ղամբարաց՝ կէս մի 'ի ներքուստ, և կէս մի 'ի բարձանց անտի դղեկին, և առհասարակ ձայն բարձրանայր աղաղակի և գոչիւն խառնաձայն ։

Բայց Արատոս ուշ եդեալ յառաջա-

դէմ ճեպէր փութայր ընդ վայր ապառաժ և անկոխ, դժուարագնաց եղեալ և յամրաքայլ՝ անտեղեակ վայրացն գոլով, և ընդ այս և ընդ այն թափառէր. քանզի և ուղի ճանապարհին խառնամուխ մոլորեալ անհետանայր ընդ ափափայսն. և այնպէս 'ի շրջանս բազմաշրջանակս գայր ուրեմն ժամանէր 'ի պատուար անդր: Այլ պատմեն յայնժամ զարմանալի դէպ՝ փարատել լուսնին զամպս, և փայլատակեալ՝ այնպէս ցուցանել նոցա զուղին՝ ուր առապար ևս էր և դժուարին, մինչև եկեալ մօտէին 'ի բուն իսկ վայր պատուարին. և միւսանգամ ստուերացեալ անյայտանայր լուսինն՝ գումարեալ անդրէն ամբոցն առ 'ի ներքոյ:

Բայց զօրականք՝ զոր եթող Արատոս արտաքոյ դրացն մօտ 'ի տաճարն Հերայ՝ արք երեքհարիւր, 'ի վերջէ ուրեմն միջամուխ 'ի քաղաքն եղեալք՝ խռովութեամբք լի և 'ի զամբարաց անտի պայծառացեալ, ոչինչ գտեալ նոցա զուղին՝ զհետ խաղալ յառաջագէմ եղելոցն, այնպէս զահի հարեալք՝ խումբ առեալ միահամուռ զտեղի կալան 'ի մթին ինչ վայր ժայռից այնոցիկ. անդանօր խռնեալք սպասեալ մնային առհասարակ վարանեալք 'ի տագնապի: Քանզի Արատոս յայնժամ 'ի ծայր դղեկին ախոյենից պատահեալ և մարտ եդեալ կռուեալ, աղաղակ 'ի խոնարհ հնչէր պատերազմողացն, և 'ի լերանց դարձեալ արձագանգաց ձայն կրկնեալ խառնամբոխ և

խառնաձայն, վարանեցան՝ ոչ իմանային ուստի՞ սկիզբն ձայնին հնչիցէ։ Իբրև այնպէս տարակուսեալ էին և 'ի խորհուրդս տատանեալք, անդուստ Արքեղայոս զօրավար արքունի գնդին 'ի վեր ընթացեալ 'ի գլեակն բազմաձեռն զօրութեամբ, աղաղակ բարձեալ և 'ի դոչիւն փողոյ, և զանցեալ զերեքհարիւրովքն խաղայր դիմէր անկանել 'ի վերայ Արատոսի։ Յայնժամ ապա յանկարծակի արտաքս վազեալ երեց հարիւրոցն իբրև 'ի դարանաց ոմանց, անկանէին 'ի վերայ Արքեղայոսի. և 'ի սուր սուսերի մաշեալք զնահատակսն և արհաւիրս մեծապէս 'ի վերայ հասուցեալ այլոցն և Արքեղայոսի ինքնին գլխովին, զնոսա 'ի փախուստ դարձուցանէին. հետամուտ պնդեալք՝ մինչև ցիրուցան ընդ քաղաքն վարատել վարել զնոսա։

Այն ինչ նոցա զյաղթութիւնն տարեալք, դայր հասանէր Երգինոս առաքեալ 'ի մարտկացն՝ որ 'ի վեր անդր, զրոյց տայր՝ եթէ Արատոս ինքնին 'ի վէգ եկեալ ընդ թշնամիս քաջամարտիկս և մարտ սաստիկ եդեալ շուրջ զպատուարօքն, պէտք էր նմա անդանօր փութապէս ձեռին օգնականութեան։ Իբրև զայն լուան, թախանձ արկանէին առն՝ արագ արագ ինքնին ածել տանել զնոսա առ նա. և անդէն 'ի վեր խաղացեալք՝ նշան 'ի ձայն իւրեանց տային բարեկամացն 'ի խրախոյս քաջալերութեան։ Իսկ յայնժամ և լուսինն համակ լուսապատար՝ զէնս բազմախուռն ե-

ըսեցուցանէր յաչս Թշնամեացն յերկայնութենէ անտի ուղւոյն . և ձայնից արձագանգ այնպէս 'ի գիշերին ժամու՝ Թուէր շառաչիւն տալ յոքնախումբ զօրաց բազմութեան : Եւ այնպէս ապա միահամուռ առհասարակ յարձակեալք 'ի Թշնամիսն, վանէին մերժէին . և 'ի ծայր անդր հասեալք տիրանային դղեկին ընդ լուսանալ առաւօտուն . և դայր ապա ելանէր արեգակն՝ ծագէր անդէն 'ի վերայ նահատակութեան գործոյն : Յայնժամ և 'ի Սիկիւոնէ գայր հասանէր Արատոսի գունդ այլ․ զնոսա մտադիւրագոյնս Կորնթացիք առեալ ժողովեցին 'ի ներքս, և նիզակակից լինէին նոցա հասանել ըմբռնել զզօրականս արքային :

Իսկ իբրև յանդորրու այնուհետև զամենայնն համարեցաւ Արատոս, գայր իջանէր 'ի դղեկէն 'ի Թատրոնն . և անդ բազմութիւն ամբաւ խռնեալ խուժանին, ցանկացեալք տեսանել զնա և լսել զխօսել նորա հրապարակախօս առ Կորնթացիս : Ապա Աքայեցիք՝ աստի և անտի 'ի մուտսն կարգեալք դասաւորեալք, ինքն 'ի մէջ եկեալ 'ի խորանէն զրահ զանձամբ և 'ի դիտակ երեսացն այլափոխ 'ի քրտանց աշխատութենէն և 'ի կրից տքնութենէն, որպէս զի և պերճութիւն ոգւոյն և սրտին խնծղանք վատեալ նուաղեալ իսկ էր առ 'ի խօնջելոյ մարմնոյն : Իբրև յերևան եկն Արատոս, անդանօր ժողովուրդք մեծապէս հիւրամեծարութեամբ և սիրով ընկալան

զնա . և ինքն յաջոյ ձեռն փոխեալ ա-
ռեալ զնիզակն , և վայրկեան մի կրկնեալ ըղ-
ծունդն և զմարմինն Թեքեալ հաստատէր
'ի նեցուկ նիզակին , և այնպէս կայր հա-
րուստ ժամ , և անմռունչ լսէր ընդունէր
զբարբառ աղաղակին և զծափ և զկայթ ,
որք 'ի գովութիւն զառաքինութիւն ա-
ռեալ զառնն , փարելի և նախանձելի ա-
սէլին զբաղդն նորա :

Իբրև առհաւարակ 'ի լռութիւն դար-
ձան , նա վայր մի ոգի առեալ 'ի բաղում
վաստակոցն , բան ճառէր բարբառէր 'ի
գովութիւն Աքայեցւոցն՝ յոյժ 'ի ճահ
նահատակութեան գործոյն . ապա ածէր
հաւանեցուցանէր և զԿորնթացիս ինքնին
դաշնաւոր խմբել ընդ Աքայեցւոց . և ա-
ռեալ դարձուցանէր առ Կորնթացիսն ըղ-
փականս դրացն : Եւ այն առաջին նուագ
նոքա 'ի բուռն կալան զփականսն զայն յետ
Փիլիպպեան ժամանակացն :

Իսկ 'ի զօրավարացն Անտիգոնոսի՝ որ-
ձակէր նա յաղատութիւն զԱրքեղայոս ըղ-
նուաճեալն . բայց զԹէոփրաստոս 'ի մահ
մատնէր , զի ոչ կամէր մեկնել 'ի քաղա-
քէն : Իսկ Պերսէոս յառնուլ դղեկին՝
անձնապուր ճողոպրեալ , անկաւ ապաւի-
նեցաւ 'ի Կենքրս : Եւ պատմեն՝ եթէ
այս Պերսէոս յանցանել ժամանակաց
Թարթափեալ ուրեք 'ի պայքարս , ընդ
յասել ուրումն , եթէ՝ Զօրավար ինձ Թուի
միայն այր իմաստուն . եւ պատասխանի
Պերսէոս , "Օ՜ն և օն դիք . ընդ այդ իմաստ

և իմ գլխովին մածապէս հաւանեալ էր երբեմն 'ի վարդապետութեանցն Զենոնի. այլ զարդիս փոխեմ զկարծիս՝ հրահանգեալ 'ի պատանւոյ անտի Սիկիւոնիացւոյ,,: Եւ զայս յաղագս Պերսէոսի պատմեն բաղումք 'ի պատմաբանից: Այլ այնուհետև Արատոս հասեալ գրաւէր զաճարն Հերայ և զԻսթմոս, և տիրանայր 'ի վերայ քաղաքն և հինգ նաւաց արքունի, և առեալ վաճառէր հինգհարիւր ձի, և չորեքհարիւր այր յԱսորւոց: Իսկ զԱկրոկորնթոս կալեալ Աքայեցիք 'ի պահ զգուշութեան չորեքհարիւր զօրականին. հանդերձ յիսուն բարակօք և նոյնչափ ևս որսորդօք՝ որ մնանէին 'ի դղեկի անդ:

Արդ՝ Հռովմայեցիք հիացեալք ընդ Փիլոպիմէն, զնա կարդացին վերջին այր Հելլենացւոց, իբրու որ զկնի նորա չեկաց ոք այլ 'ի Հելլենս այր աւագ: Բայց ես ասեմ՝ նահատակութիւն գործոյն Արատեայ վերջին է և առոյգ առաւել 'ի նահատակութիւնս Հելլենաց, զուգակշիռ հոյակապիցն յաղթութեան և յելս գեղեցիկս. որպէս և 'ի մօտոյ դէպք իրացն ճշգրտեցին: Քանզի միանգամայն և Մեգարացիք նշկահեալք զԱնտիգոնոս՝ խմբեցան ընդ Արատոսի, և Տրիզենացիք և Եպիդաւրացիք նիզակակիցք եղեն Աքայեցւոց:

Ապա Արատոս առաջին հորդան տըւեալ՝ մխեցաւ եմուտ յԱտտիկէ, և անցեալ հատեալ ընդ Սաղամինա՝ աւար հար-

կանէր. և յամենայն 'ի կամս իւր 'ի գործ զԱքայեցւոցն առեալ զզօր, իբրու արձակեալ զօր 'ի կապարանէն: Իսկ յԱթենացւոց անտի զաղատ մարդիկն առեալ նա արձակէր առանց փրկանաց. և յայնմանէ ապա և զնոսա ինքնին գրգեաց նշկահել զԱնտիգոնոս: Եւ ած ձգեաց և զՊաղոմէոս գլխովին 'ի նիզակակցութիւն Աքայեցւոց, 'ի ձեռս տուեալ նմա ոստիկանութիւն զմարտին՝ ընդ ծով և ընդ ցամաք:

Եւ ապա այնչափ իմն յօրացաւ և զօրացաւ այրն առ Աքայեցիս. որպէս զի եթէ և յօրինաց անտի թոյլ չէր կարգել ընտրել զնա 'ի զօրավար ամի ամի, սակայն և յերկուս ամս միանգամ կարգէին զնա: Բայց յարդիւնս գործոց և 'ի խորհուրդս ատենից նա ինքնին առաջնորդէր հանապազ. քանզի և տեսանէին իսկ քաջ՝ զի միանգամայն նա ոչ զգանձուց մթերս, ոչ շուք զփառաց, ոչ զբարեկամութիւն զալքայից, ոչ զշահ օգտի զիւրոց հայրենեաց, և ոչ զայլ ինչ ամենևին, երբէք նախամեծար առնէր քան զբարգաւաճել Աքայեցւոց: Քանզի և համարէր եթէ քաղաքք նկունք ինքնին առանձինն, զմիմեանս պահեն պահպանեն՝ միաբանեալք 'ի հասարակաց շահն. և զորօրինակ անդամք մարմնոյ կեան և առողջ են՝ զօդեալք ընդ միմեանս, իսկ քակտեալք և բաժանեալք՝ ծնդին և 'ի փտութիւն ևս գնան. սոյնպէս և քաղաքք 'ի կորուստ մատնին 'ի պառակտողայ հասարակացն. իսկ աճեցուն և բարգաւաճ՝ զմի-

մեանս առնէն, յորժամ անդամք մեծի գոլով մարմնոյն, վայելէն 'ի կեանս հասարակացն:

Ապա և զայն ինչ տեսեալ Արատոսի, զի յայնժամ հզօրք 'ի սահմանակից ժողովրդոցն վարէին ինքնուրոյն օրինօք, ոչ ինչ հանդարտեցաւ ընդ ստրկութիւն ծառայութեան Արգոսացւոցն: Եւ 'ի մտի բառնալ զկեանս զԱրիստոմաքոսի զբռնաւորին նոցա. գեղեցիկ համարեցաւ յաղթութիւն հանել զքաղաքն զայն 'ի դարձ փոխարինի դաստիարակութեան իւրոյ 'ի նմա, միանգամայն և նիզակակից առնուլ զնա ընդ Աքայեցւոց: Էին էին անդանօր և մարդիկ խրախուսեալք յայն գործ, և պարագլուխք նոցա՝ Եսքիւղոս և Քարիմենէս իղձ. այլ սուսեր ո՛չ գոյր նոցա. իբրև մեծամեծ պատուհասիւք արգելեալ իսկ էր բռնաւորին՝ ունել յայնպիսեաց անտի: Ապա Արատոս տայր պատրաստել նոցա 'ի Կորնթոս դաշնակս փոքունս, և կարեաց զնոսա 'ի մէջ համետից գրաստուցն, որ բարձեալ բերէին կահս ինչ դիւրագնի. և այնպէս առաքեաց յԱրգոս:

Անդ իբրև Քարիմենէս իղձ՝ առնոյր իւր ընկեր 'ի գործն զայր ոմն, մեծապէս խոժոռեցան Եսքիւղոս և իւրքն, և լքեալք զՔարիմէն՝ ինքնին առանձինն կրթէին 'ի բանն: Իրազեկ այնմ եղեալ Քարիմէն, և 'ի սրտմտութիւն բերեալ, չոքաւ 'ի վեր հանել զբանն՝ մինչդեռ նոքա դիմեալ էին հասանել անկանել 'ի վերայ բռնաւորին:

Ուստի և նոքա անդէն տագնապաւ խուճապեալք 'ի հրապարակէն՝ աճապարեալք փախեան և անկան 'ի Կորնթոս: Իսկ յետ սակաւուց զԱրիստոմաքոս սպանին ծառայք. և զտէրութիւնն անդէն 'ի բուռն կալաւ Արիստիպպոս բռնաւոր՝ դառնագոյն ևս քան զառաջինն: Իսկ անդուստ Արատոս առեալ ընդ իւր առհասարակ զԱքայեցիս՝ որ միանգամ զէն շարժէին, շտապաւ խաղայր գնայր 'ի Թիկունս քաղաքին. ակնունէր գտանել առհասարակ զԱրգիացիս յառաջամիտ 'ի նիզակակցութիւն անդր: Բայց քանզի խուժանն սովորեալ իսկ էր 'ի մտադիւր ստրկութիւնն, և նա նիզակակից իւր չետես և ո՛չ զոք, տեղի ետ. և զվնասն արկանէր զԱքայեցւովքն՝ զի 'ի խաղաղութեան պատերազմ յուզեցին, ուստի և յատեան դատաստանի կոչեցան նոքա առաջի Մանտինեացւոց: Արատոս ո՛չ չոքաւ անդր. իսկ դատախազ Աքայեցւոցն եկաց Արիստիպպոս, և էր դատակնիքն երեսուն մնասից:

Բայց Արիստիպպոս յատելութիւն բերեալ ընդ Արատոսի, միանգամայն և զանգիտեալ 'ի նմանէ, խորհեցաւ դաւել զնա 'ի կենաց՝ գործակից ունելով զԱնտիգոնոս արքայ, և գոգցես ամենայն ուրեք կազմ կային մարդիկ դարանեալք 'ի գործ անդր: Այլ արդեօք չիք ինչ այնպէս անխաբ ապաստան առն իշխանի, իբրու զանկեղծ և զմտերիմ սէր զիշխեցելոցն: Քանզի յորժամ դամ մի ժողովուրդք և աւագ որեալ

բնաւորեցան երկնչել ոչ յիշխանէն, այլ վասն իշխանին, նա այնուհետեւ տեսանէ բիւրուք աչօք, և լսէ բիւրուք ականջօք, և կանուխ հասանէ իրազգած լինել բանին: Ոյր աղագաւ և ես վայր մի զտեղի առից յընթացս բանիս, պատմել զքաղաքավարութիւն կենաց զԱրիստիպպոսի, զոր սագրեաց նմա խանտացեալն այն բռնաւորութիւն և ամբարտաւանութիւն երջանիկն և հռչակելին միապետութեան:

Քանզի այս Արիստիպպոս նիզակակից Անտիգոնոսի, և որ այնչափ որեար ունէր իւր անձնապահապետ, և որ 'ի թշնամեաց անտի իւրոց և ոչ զմի ոք եթող կենդանի 'ի քաղաքին, սա այս Արիստիպպոս պատուէր տայր տիգաւորացն իւրոց և թիկնապահաց կալ արտաքոյ 'ի սիւնազարդ դահլիճ անդր. և ինքն զծառայսն յետ ընթրեացն' անդէն 'ի դուրս վարեալ առհասարակ, և փակեալ աղխեալ զներքնադաւիթն, մեկուսանայր ընդ սիրուհւոյն 'ի սենեակ մի փոքրիկ 'ի բարձու' փակեալ սահանադրամբ, յոյր վերայ արկանէր իսկ զմահիճն և ննջէր, զորօրինակ և 'ի դէպ իցէ ննջ առնուլ մարդոյ' որ յարհաւիրս այնչափ և 'ի ծուփս անչափ պաշարեալ իցէ:

Իսկ մայր սիրուհւոյն առնոյր անտի 'ի բաց զսանդուղսն և փակէր յայլում սենեկի. և ապա յառաւօտուն պահու առեալ միւսանգամ յեցուցանէր զնոյն սանդուղսն, և 'ի վայր կոչէր հրաւիրէր զքանչելին զայն բռնաւոր. որ գայր ապա իջանէր անդուստ

իբրև վիշապ սողուն արտաքս յորջոյն խուրմէ 4 : Իսկ առ Նովաւ Արատոս, այն՝ որ ոչ զինուց բռնութեամբ, այլ գեղեցիկ կարգաւն և առաքինութեամբ տէրութիւն մշանջենաւոր անձին ժառանգեաց, վերարկու զանձամբ առեալ և քղամիդ դուզնայքեայ, Թշնամի հասարակ յընդհանուրս համբաւեալ բռնաւորաց, զարմն ականաւոր եթող առ Հելլենացիս՝ որ ցայսօր կայ մնայ 5 : Իսկ անդուստ բռնակալք՝ որք ամուրս անխաբս 'ի բուքն կալան և տիգաւորաց վաշտս պահեցին, և անձանց պահ զգուշութեան կարգեցին զինու զարդու և դրամբք և աղխիւք և սահանադրամբք, նուաղունք միայն 'ի նոցանէն 'ի սուսերահար մահուանէն՝ իբրև նապաստակք՝ զերծան. և մի ոք 'ի նոցանէն չեթող յաշխարհի ոչ տուն, ոչ զարմն, ոչ Ճետ, ոչ շիրիմ գերեզմանի 'ի յիշատակ պատուոյ:

Արդ յայնժամ Արատոս բազում անգամ կազմեցաւ պատրաստեցաւ 'ի ծածուկ՝ դարձեալ և յայտնի, հանել զԱրգոս 'ի ձեռաց Արիստիպպեայ. այլ ոչ յաջողեցաւ նմա. և 'ի միում ևս նուագի սանդուղս ևս յեցուցանէր և հանդերձ սակաւուք ելեալ 'ի վեր 'ի պարիսպն անհնարին վտանգաւ, տապաստ արկանէր զպահապանսն որ դիմեցին անդր: Իսկ իբրև ընդ առաւօտն եկեալ հասեալ բռնաւորին 'ի վայրն, խնդրէր վանել հարկանել զԱրատոս յամենայն կողմանց, յայնժամ Արգոսացիք՝ իբրու այն զի կռիւ մարտին

ո՛չ յաղթութիւն նոցա կրթեացի, իբրև պարգևաբաշխք ռաբունայցն 'ի Նեմեան մրցանան, այնպէս բաղձեալ կային 'ի մեծապէս յանդորրու հանդիսատեսք արդարակշիռք եղելոցն: Մինչդեռ այնպէս քաջապէս զօրութեամբ ընդդէմ դառնայր Արատոս, միգահար 'ի ձեռանէ խոցեցաւ բարձ նորա, համայն և այնպէս զտեղի կալաւ արձանացաւ ուր էրն, և եկաց մնաց մինչև 'ի ժամ գիշերոյն և վերջոտնեցաւ և ոչինչ 'ի յարձակելոյ թշնամեացն. և եթէ էր նմա կալ զդէմ ունել 'ի գոռին և զգիշերն զայն, արդեօք 'ի դերևս չէլանէր 'ի յուսոյն. քանզի և բռնաւորն ինքնին պատրաստեցաւ յայնժամ 'ի փախուստ, և 'ի ծով անդր առաքեալ խակ էր շատ ինչ 'ի կարասւոյն իւրմէ: Բայց Արատոս ոչինչ իրազգած յումեքէ, և զի նորա պակասեցաւ և ջուրն, և անձեռնհաս ևս էր նահատակել ինքնին 'ի հարուածոց անտի վիրացն, դարձոյց յետս զզօրականն:

Իբրև օրինակ զայս ոչինչ յաջողեցաւ դամագիտ լինել, յայտնի ապա չու արար զօրուն 'ի սահմանս Արգողիդեան և աւար հարկանէր. և մարտ սաստիկ յօրինեալ մօտ 'ի գետն Քարէս ընդդէմ Արիստիպպեայ, բամբասեցաւ ապա՝ զի լքեալ ըղմարտն՝ վրիպեցաւ 'ի յաղթութենէն: Քանզի յորժամ անդ միւս թև զօրուն նորա յաղթական եղեալ, և յառաջագէմ ևս հարուստ մի զթշնամիսն վանեաց, անդուստ Արատոս ո՛չ այնչափ յախոյեանիցն իւրոց

տագնապեալ, քան թէ ընդ գեղեցիկ ելս իրացն յերկուացեալ վատասրտեցաւ, և տագնապաւ տեղի տայր 'ի բուռն բանակն։ Դարձ ապա յաղթականացն արարեալ 'ի հետամուտ պնդելոյն, ոչինչ հանդարտէին՝ եթէ ոք 'ի փախուստ զթշնամիսն դարձուցին, և բազմագոյն ևս քան զիւրեանց անկեալսն՝ տապաստ 'ի նոցանէն արկին, 'ի վերայ այնր՝ և նշան յաղթութեան կանգնեցին պարտեալքն։ Ապա Արատոս առ ամօթոյն հաստատեաց միւսանգամ մարտ յարդարել ընդդէմ թշնամւոյն. և դուլ օր մի տուեալ՝ անդրէն կարգէր ճակատեցուցանէր զզօրն 'ի պատերազմ։ Նուր յայնժամ առեալ զատուաբութեան գնդի ընտանորին և զյանդգնաբար պատրաստութեան նոցա, ոչ համարձակեաց 'ի դիմի հարկանել, այլ տեղի տուեալ՝ թաղէր զանկեալսն ըստ պայմանի հանդստեան մարմնին։

Բայց յայսր ամենայնի վերայ նա հեշտ և բաղձալի քաղաքավարութեամբն և քաջիկ հմտութեամբ քաղաքականին քօղարկեալ զնախատն զայն, ձգեաց յանկոյց զԿղէոնացիս 'ի նիզակակցութիւն Աքայեցւոց։ Եւ անդանօր 'ի Կղէոնա կատարէր նա զհանդէս զՆեմեան մրցանացն. իբրև զի և նախ առաջին անդանօր սահմանեալ կարգեցան այն մրցանք. և քան այլոց քաղաքաց՝ առաւել անդ էր քաղաքին այնմիկ։ Սակայն և Արգոսացիք կատարեցին զնոյն մրցանսն. և զայն առաջին նուագ յայն.

ժամ ապարտեցաւ ազատութիւն և աներկեանութիւն մրցանաւորացն այնոցիկ. քանզի Աքայեցիք զորս միանգամ 'ի ձեռս բերէին յերկրին իւրեանց 'ի մրցողաց անտի Արգոսացւոցն՝ իբրև թշնամիս առեալ վաճառէին։ Այսպէս ուրեմն բուռն և անհաշտ ատելութիւն էր Արատեայ ընդդէմ բռնաւորացն։

Իսկ յետ սակաւուց լուր առեալ Արատոսի, զի Արիստիպպոս հնարի անկանել 'ի վերայ Կղէոնէայ, այլ զանգիտէ զի դադարեալ նստի նա 'ի Կորնթոս. յայնժամ զօրաժողով եղեալ հրովարտակ 'ի դուրս տայր Արատոս, հրաման տուեալ բառնալ տանել համբարս կերակրոց վասն բազմաց աւուրց. և խաղայր իջանէր ինքն 'ի Կենքրա. զի այնպէս խաբկանօք դրդռեսցէ զԱրիստիպպոս անկանել 'ի վերայ Կղէովնացւոց՝ կարծեալ թէ անդ ոչ իցէ Արատոս, որ և եղև իսկ։ Քանզի Արիստիպպոս արագապէս չու արարեալ յԱրգոսէ՝ գայր հասանէր անդր հանդերձ զօրու։

Բայց Արատոս 'ի նսեմանալ գիշերոյն դարձ արարեալ 'ի Կենքրայեցւոց 'ի Կորնթոս, և հասեալ կալեալ պահապանօք զճանապարհսն, ածէր արտաքս զԱքայեցիս։ Իսկ Աքայեցիք յայնժամ այնպէս իմն գեղեցիկ կարգաւ և 'ի ճեպ տագնապի և մտադիւր զուարթութեամբ զհետ խաղացին նորա, զի ոչ միայն չուն նոցա զանխուլ մնաց, այլ և եկին մտին նոքա 'ի Կղէոնէա՝ մինչդեռ գիշեր էր, և

կոտորեցան կացին 'ի մարտ պատերազմի , և դիտաց և ոչինչ Արիստոնիպպոս : Եւ ապա ընդ այդս այդուն բացեալ զդուրսն , և նշան տուեալ 'ի ձայն փողոյն , յարձակէր անկանէր Արատոս 'ի վերայ թշնամեացն , դիմէր և աղաղակ և խրախոյս բառնայր մեծապէս քաջալերութեամբ , և անդէն հարկանէր սատակէր զնոսա , և զհետ մտեալ վանէր ընդ կողմն՝ ուր ակն ունէին փախչել Արիստոնիպպոսի , զի էին 'ի վայրսն շրջանք բազմադիմիք : Իբրև հետամուտ հալածեցին զփախստեայսն մինչև 'ի Մլուկենայցիս , անդ բռնաւորն՝ որպէս Դինիաս պատմէ՝ ձերբակալ եղեալ յառնէ Կրետացւոյ Տրագիսկոս անուն՝ խողխողեցաւ . և տապաստ անկանէին 'ի զօրաց նորա առաւել քան զհազար և հինգ հարիւր : Բայց թէպէտ և զհոյակապ զայն և զփառաւոր յաղթութիւնն տարաւ Արատոս , և տապաստ և ոչ մի ոք անկաւ յիւրմէ զօրականէն , ոչինչ յաջողեցաւ հասանել ունել և փրկել զԱրգոս . քանզի աճապարեալ Ագիաս և կրսերն Արիստոմաքոս եկին մտին անդր հանդերձ զօրուն արքունի և տիրացան ամենայնին :

Բայց 'ի գեղեցիկ նահատակութենէ սատի սանձեաց կարծեաց Արատոս շատ ինչ 'ի բամբասանաց անտի անձինն և 'ի հեգնութեանց և 'ի ղրուցաց և 'ի թշնամեանց հացկատակաց բռնաւորացն , որ 'ի բերկրեցուցանել զնոսա ասէին նոցա՝ եթէ Աքայեցւոց զօրավարին որովայնն յու-

զի և ծփայ՝ յորժամ կռիւ մարտին 'ի վերայ կայ. և զի՝ յափշութենէն և 'ի գլխոյն պտուտից անդէն հարկանի այլն ընդ պատրաստել փողարին 'ի գոչեցուցանել. և զի՝ կարգեալ և դասաւորեալ նորա զզօրն և նշանս բաշխեալ, և զզօրապետսն հարցեալ և զգնդապետսն՝ եթէ պէտք ինչ այլ իցեն արդեօք նոցա առ 'ի նմանէն (քանզի և արկեալ իսկ են այնուհետև լիցքն), ինքն տեղի տայ գնայ՝ անդուստ 'ի հեռաստանէ դէտ ակն կալեալ ելից իրացն: Եւ զրոյցք այս վասն նորա այնչափ իմն զհամբաւի հարան, որպէս զի և իմաստասէրք անգամ 'ի վարժարանս իւրեանց 'ի պայքար մտանէին, եթէ արդեօք տրոփալ սրտի և հատանել գունոյ 'ի վտանգս կառևորս՝ վատասրտութեան ծնունդ իցէ եթէ արդեօք չարաչար խառնուածոյ մարմնոյն և ցրտութեան. զայս պայքարէին և յանուանէ միշտ զԱրատոս 'ի ներքս արկանէին իբրու զօրավար քաջ, սակայն և ցանգ ախտակիր անձն 'ի կրից աստի յայտցանէ 'ի ժամ մարտին:

Արդ իբրև Արիստիպպոս մեռաւ, այնուհետև Արատոս դարանակալ լինէր Լիւսիադեայ Մեգապօլեցւոյ՝ որ բռնացեալ էր 'ի վերայ հայրենեացն: Սա այս Լիւսիադէս անդստին 'ի բնէն ոչինչ անբաժ յազատական և 'ի պատուասէր կրից, ո՛չ որպէս բազումք յինքնակալ բռնաւորացն, կրթեցաւ 'ի նոյն յանժուժկալութենէն և յընչաքաղցն ագահութենէ. այլ մինչդեռ

տակաւին պատանեակ՝ ձգեալ 'ի փառասիրութենէ, և անհանճարաբար ամբարհաւաճեալ ոգւոյն 'ի սուտակապաս խօսից անտի յաղագս բռնաւորութեանն՝ իբրու փառելի բանք և սքանչելի, յայն վիճակ բռնաւոր առեալ հաստատեաց զանձն. այլ ապա արագ արագ յափրայաւ այրն 'ի վշտաց անտի բռնակալութեանն ։ Իսկ յայնժամ հիացեալ ևս ընդ յաջողութիւն Արատոսի և 'ի դաւանաց ևս նորա երկուցեալ, փոփոխութիւն բարի յանձին կալաւ. խորհուրդ հաստատեաց նախ զանձն գլխովին բուժել յատելութեանն կրից և յարհաւրաց և 'ի զօրականէն և 'ի թիկնապահացն, ապա բարեգործ և առ հայրենիսն գտանել։ Վասն որոյ և առաքեալ կոչեաց զԱրատոս և հրաժեշտ տայր 'ի տէրութէն, և զքաղաքն առեալ նիզակակից կարգէր Աքայեցւոցն. ուստի և մեծապէս գովեալ յԱքայեցւոցն, և զօրավար ևս իւրեանց կարգէին զնա ։

Եւ ապա նա փաղփաղակի պատուասիրեալ՝ վեհագոյն փառացն լինել Արատոսին, ուստի և բա՛ց յայլ ինչ բազում և յանկարևոր իրաց, հրաման տայր և արշաւանի ընդդէմ Լակեդեմոնացւոց. իբրև Արատոս ընդդէմ դարձաւ՝ թուեցաւ ինն խանդալ ընդ նա. քանզի և զօրավար երկրորդ անգամ կարգեցաւ Լիսիադէս՝ թէպէտ և Արատոս ընդդէմ եկաց, և այլում ումեք ջանացաւ տալ զզօրավարութիւնն. քանզի (որպէս ասացաք) զօրավարէր նա

յերկուս ամս միանգամ: Բայց Լիւսիադէս յաջողեցաւ 'ի նոյն բարձ աւագութեան և երրորդ անգամ, զօրավարեալ փոփոխ ամ ըստ ամէ ընդ Արատոսի: Իսկ իբրև յայտնապէս ևս 'ի թշնամութիւն գրգռեցաւ նա ընդ Արատոսի, և բազում անգամ ամբաստան զնմանէն եկաց առ Աքայեցիս, 'ի վերջէ ուրեմն մերժեցաւ 'ի նոցանէ. քանզի և թուէր այնպէս՝ եթէ կեղծուպատիր բարոյիւք և արուեստահընար հակառակորդ ամբարձեալ իցէ այրն ընդդէմ ճշմարիտ և անկեղծաւոր առաքինութեան: Եւ զօրօրինակ՝ ըստ Եսովպեայ առակախօսութեն՝ հարցեալ կկու զճընճղուկն՝ եթէ առ ի՞նչ նոքա խոյս տուեալ փախչին 'ի նմանէ, ետուն պատասխանի՝ եթէ յանկարծ յաւուր միում դարձցի նա եղիցի Բազէ. սոյնպէս և վասն Լիւսիադեայ՝ զի եկաց նա բռնաւոր, 'ի միտս լինէին կասկածոտս ընդ փոփոխութիւն բընութեան առնն:

Բայց յետ այսորիկ Արատոս զհամբաւի հարաւ և 'ի մարտին ընդդէմ Ետոլացւոց: Քանզի իբրև խորհուրդ հաստատեցին Աքայեցիք մարդ յարդարել ընդ նոսա մօտ 'ի սահմանս Մեգարայ, և դրդեցան ևս 'ի նոյն յԱգիսայ արքայէն Լակեդեմոնացւոց՝ որ անդր հասեալ էր բանակաւն, ընդդէմ դարձաւ խորհրդոյն Արատոս. և ժուժէր համբերէր յանժամ այրն բազում նախատանաց և ծաղու և հեգնութեանց՝ իբրու որ անարի վատա-

սըրտեալ լիցէ 'ի գործն. և վասն առժամայն նախատանացն չթողոյր 'ի ձեռաց ըղխորհուրդս իւր զքաջս. այլ թոյլ տայր թշնամւոյն համանել ունել զլեառն Գերանիա, և յանդորրու անցանել 'ի Պեղոպոննիսոս:

Այն ինչ նոքա անցին և հասին կալան զՊեղլինէ, յայնժամ ապա Արատոս ո՛չ իբրու զառաջինն այր դանդաղկոտ ժամավաճառ դէտակն մնայր խմբելոյ զօրուն 'ի կողմանց կողմանց, այլ անդէն չու առնէր խաղայր հանդերձ առձեռն զօրականօքն ընդդէմ թշնամեացն. որք 'ի յաղթութեան անդ իւրեանց հարեալ վատացան յանկարգութենէն և 'ի սանձարձակ կըրիցն: Քանզի անդէն մխեալք 'ի քաղաքն չոքան սփռեցան զօրականք 'ի տունս տունս. այր զարամբ ելանէին և ընդ միմեանս կռուէին վասն աւարին. և անդ նոցուն զօրապետք և դասապետք շուրջ ընթացեալք առնուին յափշտակէին զկանայս և զդստերս Պեղենացւոց, և 'ի գլխոց իւրեանց հանեալք զսաղաւարտս՝ դնէին 'ի գլուխ յափշտակելոցն, զի մի ոք այլ առցէ զնոսա, և 'ի սաղաւարտէն ծանիցեն զոէր իւրաքանչիւր նոցա:

Մինչդեռ նոքա այնպէս յանկարգութեանն թարթափէին, անդուստ յանկարծ գուժկան հասանէր եթէ ինքնին Արատոս առ դուրս հասեալ կայ: Եւ ապա արհաւիրք յայնժամ մեծապէս յուզեցան՝ որպէս և 'ի դէպ իսկ՝ յայն աղ-

մուկ չփոխթից նոցա . և մինչև համօրէն 'ի վերայ կացեալ վտանգին իւրեանց, որ միանգամ առ դրօքն դեգերեալ կային և 'ի բուրաստանսն՝ 'ի կոխ ընդ Աքայեցւոցն կաքաւեալք, նկուն եղեալք 'ի փախուստ խուճապեցան . և այնպէս տագնապաւ վանեալք առհասարակ որոտաբեկ սրտաթափ առնէին՝ զորս միանգամ 'ի մի խմբեալ 'ի թիկունս դիմէին նոցա : Յայն խռով ամբոխին մի ումն յօրհորդաց անուն յափշտակելոց դուստր ականաւոր առն Եպիդեթէ անուն, օրհորդ չքնաղ և երևելի և բարձր հասակաւ, կայր յայնժամ ընդ դիպաց նստեալ 'ի ներքս մեհենին Արտեմեայ, ուր ամփոփեալն էր զնա այրն յափշտակող զօրագլուխ եկաց զօրականին, և եդեալ եւս էր 'ի գլուխ օրհորդին զիւր գլխանոցն երկիւք վերջաւորօք փողփողեալ: Արդ յայն աղմուկ ընթացեալ օրհորդին արտաքս՝ իբրև անդ առաջի դրաց մեհենին արձանացեալ՝ այնպէս սաղաւարտ եռավերջ 'ի գլուխն զաչսն դարձուցեալ հայէր 'ի խոնարհ 'ի բարձրաւանդակէն 'ի մարտիկսն, թուէր իմն քաղաքացւոցն տիպ տեսանել հրաշատիպ և մեծվայելչութիւն գերաշխարհիկ . իսկ անդուստ և թշնամիք կարծեալք դիւցական իմն տեսանել առաջօք, հրաշացեալք պակուցեալ կային . զի և ամենայն այր յայնժամ անկանէր բեկանէր 'ի զօրութենէն :

Նա պատմեն ինքնին Պեղենացիք, եթէ դրօշեալն դիցուհւոյն 'զամենայն ժամա֊

նակն կայ այնպէս անհուպ և անմերձ. իսկ յառնուլ զնա քրմուհւոյն և յածել արտաքս, հայի և ոչ ոք 'ի նա 'ի հանդիպոյ, այլ առհասարակ յետս կոյս դարձուցանեն զաչս, քանզի և տեսութիւն նորա ոչ մարդկան միայն սոսկալի է և զեան ածէ, այլ և զտունկս գլխովին ամուլ գործէ, և զպտուղս խամրէ, ուր ուրեք ածեալ բերիցի նա: Եւ ասեն՝ եթէ և յայնժամ քրրմանոյշն ածեալ զնա արտաքս, և դարձուցեալ ցանդ այնպէս զդէմսն 'ի հանդիպոյ Ետողացւոյն, այնպէս ընաւ իսկ յափշութիւն և 'ի խելայեղութի կրթեաց զնոսա միանգամայն:

Բայց Արատոս 'ի Յիշատակարանս իւր ոչինչ ասէ յայսպիսեաց ատի, այլ թէ հարեալ զԵտողացիսն և մխեալ 'ի քաղաք անդր նոցա 'ի միասին ընդ փախստէիցն, մարտ եդեալ վանեաց զնոսա և տապաստ արկանէր 'ի նոցանէ ողխ եօթն հարիւր: Եւ ապա այս նահատակութիւն քաջութեան զհամբաւի հարաւ իբրև զմի 'ի հռյակապից անտի. ուստի և Տիմանթէս այր նկարագիծ՝ առեալ տպաւորեաց զայն մարտ 'ի պնակի յոյժ կենդանագիր և ճըշգրիտ: Իսկ յետ ժամանակաց այսոցիկ իբրև ժողովուրդք բազումք և կուսակալք միաբանեցան ընդդէմ Աքայեցւոց, յայնժամ Արատոս բարեկամութիւն հաստէր ընդ Ետողացիս. և 'ի ձեռն Պանտալէոնի՝ այր Ճոխ և աւագ 'ի մէջ Ետողացոց, ոչ խաղաղութիւն միայն՝ այլև նիզակակցու-

Թիւն գլխովն հաստատեաց ընդ նոսա և ընդ Աքայեցիս:

Յետ այսորիկ Թեւակոխեալ Արատոսի յազատութիւն 'ի վեր հանել և զԱթենացիս ինքնին, բամբասեցաւ առ Աքայեցիս. զի 'ի ժամանակին՝ յորում նոքա պայմանադիր եղեալ ընդ Մակեդոնացւոց՝ դուլ արարին մարտին, զհետ կրթեցաւ նա հասանել ունել զՊիրէոն: Բայց ինքնին Արատոս ժխտեաց զայն յիւր Յիշատակագիրսն զոր եթող մեզ, և զվնասն արկանէր զԵրգինոսիւ, այն՝ որ գործակից էր 'ի նահատակութեանն Ակրոկորնթոսի: Քանզի ասէ՝ եթէ ինքնին սա այս այր չոգաւ հրոստալ 'ի Պիրէոն. և անդ խորտակեալ սանդղոցն և զհետ նորա մտեալ Թշնամեացն, նա յանուանէ կարդայր անդուլ զԱրատոս 'ի Թիկունս. իբրու որ մերձ անդ իցէ՝ և այնպէս խաբեալ զԹշնամիսն՝ մազապուր լինէր: Այլ պատասխանի այս նորա չէ ինչ արդեօք հաւանական. քանզի և ոչ հաւանեսցի ոք արդեօք՝ եթէ այս Երգինոս այր ռամկական և Ասորի՝ յայնչափ նահատակութիւնն ինքնին մտաբերեալ կըրթեալ իցէ, չունելով իւր առաջնորդ զԱրատոս, և որեար և զպատեհ ժամուն չառեալ 'ի նմանէ վասն հրոսակին այնորիկ: Եւ արդեօք և ինքնին Արատոս յայտնի երևեցոյց զայն. քանզի պատրաստեցաւ կազմեցաւ հասանել ունել զՊիրէոն՝ ոչ երկիցս միայն և երիցս, այլ և բազում անգամ, իբրու արդարև տարփածուք ոմանք

խանդակաւթք: Իսկ երբէք թէ վրիպէր 'ի գործոյն, ոչ պարտաւէր և ոչ լքանէր. այլ վայրիկ մի ևս յաջողեալ 'ի գործն և մերձ ընդ մերձ յամբուկ գործոյն ժամանեալ՝ միշտ քաջալերութիւն զգենոյր. և 'ի միում ևս նուագի 'ի փախչել իւրում ընդ Թրիասիոն՝ բեկան սրունք նորա. և 'ի դարման բժշկութեանն բազում հատմանց տարաւ այրն, և հարուստ ժամանակ այնպէս բարձեալ բերէր շալակաւ յարշաւանին իւրում:

Զայնու ժամանակաւ իբրև մեռաւ Անտիգոնոս և փոխանակեաց յարքայութէն Դեմետրիոս, յայնժամ առաւել ևս գուն գործէր Արատոս, յաղատութիւն կարգել զԱթէնս, և բնաւ իսկ ունչս զՄակեդոնացւովք առնէր. որ աղագաւ և 'ի պարտութիւն մատնեալ նորա 'ի մարտի մօտ 'ի Փիւղակիա 'ի Բիւթիոսէ զօրավարէն Դեմետրի, հռչակ յայտնի հարաւ. մերթ՝ եթէ ըմբռնեցաւ Արատոս, և մերթ՝ եթէ մեռաւ. ուստի և Դիոգինէս զօրադլուխ 'ի Պիրէոն նամակ տայր 'ի Կորնթոս՝ հրաման տուեալ Աքայեցւոցն ելանել արտաքս 'ի քաղաքէն՝ քանզի մեռաւ Արատոս: Արդ դէպ տայր զի 'ի հասանել անդր նամակին և Արատոս ինքնին գտաւ յայնժամ 'ի Կորնթոս. ուստի և նամակաբերքն Դիոգինեայ կորակոր դառնային և այպնակատակ:

Նաև ինքնին արքայ արձակեաց նաւ մի 'ի Մակեդոնիոյ, զի կապեալ ածցեն զԱ-

րատոս ։ Բայց և Աթենացիք յայնժամ յոյժ տարապայման ղեղեալ 'ի մարդահաճութիւն Մակեդոնացւոցն , այն ինչ լուր զմահուն առեալք զԱրատոսին , բոլորեալք պսակեցան ։ Որ աղագաւ և 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ Արատոսի , անդէն ետ ընդ ետ չու հրամայէր զօրուն . խաղաց գնաց յառաջամուխ մինչև յԱկադեմիա անդր նոցա . բայց անդանօր 'ի հաշտութիւն բերեալ՝ չար և ոչ մի հասուցանէր նոցա ։

Այսորիկ աղագաւ և Աթենացիք համօրէն 'ի վերայ կացեալ առաքինութեան քաջութեան առնն , երբև յետ մահուն Դեմետրի ազատութիւն խնդրէին , առաքեցին կոչեցին ինքնին զԱրատոս ։ Իսկ Արատոս՝ թէպէտ և այլ ոք յայնժամ իշխան կացեալ էր Աքայեցւոց , և ինքն 'ի բազմաժամանակեայ խօթութենէն անկեալ դնէր 'ի մահիճս , սակայն և շալակաւ բարձեալ բերաւ անդր , և ընոյր կատարէր նոա զպէտս քաղաքին . և ածէր հաւանեցուցանէր զԴիոգինէս զօրագլուխ դղեկին՝ տալ Աթենացւոց 'ի ձեռս զՊիրէոն և զՄունիքիա և զՍալամինա և զՍունիոն՝ հարիւր և յիսուն տաղանդաց . և քսան ևս տաղանդ յանձնէն տայր քաղաքին Արատոս ։ Ապա յետ այնորիկ և Եգինացիք և Հերմիոնացիք ինքնին միաբանեցան ընդ Աքայեցւոց , զնոյն արարին և բազումք յԱրկադացւոց . ուստի և 'ի պատաղել անդ Մակեդոնացւոց 'ի կռիւս մար-

ակից ընդ մերձաւորսն և ընդ սահմանակիցսն, յայնժամ զօրութիւն Աքայեցւոց գնալով գնայր և բարգաւաճէր. քանզի և Ետողացիք ինքնին նիզակակիցք էին նոցա :

Բայց Արատոսի միւսանգամ թևակոխեալ 'ի նախնին իւր խորհուրդ, հանդարտէր և ոչինչ ամենևին ընդ բռնակալութիւնն որ յԱրգոս՝ դրացի նոցա. առաքեաց առ Արիստոմաքոս, և ածէր հաւանեցուցանէր զնա 'ի բաց կալ, և 'ի նիզակակցութիւն Աքայեցւոցն յանկուցանել ըզքաղաքն. և նախանձաւոր գեղեցիկ եղեալ Լիւսիադեայ՝ կալ մանաւանդ 'ի զօրավար յոքնաթիւ ժողովրդոց քաջ անուամբ և պատուով, քան բռնակալ 'ի վերայ կալ միոյ քաղաքի, ցանգ նշաւակ վտանգաց բազմաց և ատելութեան կրից : Հաւանեցաւ Արիստոմաքոս, և խնդրէր յԱրատոսէ տաղանդս յիսուն հանձել զզօրականն իւր և արձակել 'ի բաց. իբրև առ զարծաթն 'ի նմանէ, անդուստ Լիւսիադէս՝ որ յայնժամ զօրավար, և պատուասիրէր զնիզակակցութիւն զայն ընդ Աքայեցւոց իբրև յիւրոց արդասեացն պտղաբերել, ամբաստան զԱրատոսէն լինէր առ Արիստոմաքոսի՝ իբրու զանհաշտ թշնամւոյ բռնաւորացն. և ամոքեալ զնա յինքն ապաստան զգործն առնել, և այնպէս ապա յանկուցանէր զայրն 'ի միաբանութիւն Աքայեցւոցն: Բայց յայնժամ ատեանք Աքայեցւոց մտերմութիւն յայտնի 'ի դէմս բերէին առ Արատոս և զառ նա վհաւատն.

քանզի իբրև Արատոս ընդդէմ դարձաւ, յայնժամ և նոքա որոմնութեամբ բարկութեամբ 'ի բաց մերժեցին զԱրիստոմաքոս. իսկ իբրև նա հաւանեցաւ և յառաջ մատուցեալ խօսեցաւ ևս վասն նորա, անդէն նոքա մտադիւրագոյնս քուէս արկեալ հաստատեցին և առին ընկալան 'ի միաբանութիւն քաղաքին իւրեանց զԱրգոսացիս և զՓլիասացիս. և յետ տարւոյն առեալ կարգեցին 'ի զօրավար զԱրիստոմաքոս:

Արդ սա մեծապէս յօրացեալ առ Աքայեցիս, իբրև և հորդան խնդրէր տալ յերկիր Լակոնացւոց, կոչէր զԱրատոս յԱթենայ՝ ուր էր նա յայնժամ: Բայց Արատոս առեալ գրեաց առ նա և բնաւ իսկ չէր հաճեալ ընդ արշաւանն. քանզի և կամէր իսկ ոչ 'ի մէջ գալ Աքայեցւոց ընդ Կղէոմենեայ, որ այր ձեռներէց յանձնապաստան և անձնադրաւ 'ի վտանգս՝ այնպէս գնալով գնայր և մեծանայր: Իբրև անդուստ Արիստոմաքոս պնդեալ կայր 'ի կամին, հնազանդեցաւ Արատոս և չոգաւ ընդ նմա 'ի բանակ անդր:

Ընդ առաջ նոցա խաղացեալ Կղէոմենեայ մօտ 'ի Պալլանտիոն, չետ թոյլ Արատոս Արիստոմաքեայ 'ի կռիւ կպչել ընդ նմա: Յայնժամ անդուստ Լիւսիադէս ամբաստան լինէր զնմանէն, և վասն զօրավարութեանն 'ի վէճ և 'ի պայքար մրցեալ ընդ նմա, սակայն և յաղթեաց Արատոս յընտրութեանն, և կարգեցաւ

նա յայնժամ 'ի զօրավար այս երկոտասան նուագ ։

Այլ 'ի զօրավարութեան աստ յայսմիկ 'ի պարտութիւն մատնեցաւ նա 'ի Կղէոմենեայ մօտ 'ի Լիւկէոն և 'ի փախուստ դարձաւ, և ապա աստանդական թափառական գիշերագնաց՝ այնպէս ընդ մեռեալս համարեցաւ. և առհասարակ անդրէն միւսանգամ հռչակ հարաւ առ հելլենացիս՝ եթէ մեռաւ Արատոս ։ Բայց նա ապա յանդորր եղեալ, և խմբեալ ևս զզօրականն, ոչինչ շատ համարեցաւ գնալ խոյս տալ յանխաբ վայրս, այլ պատեհ ժամ գտեալ պարապոյ՝ իբրև ակն չունէր և ոչ ոք և զմտաւ անգամ ոք չածէր, նա յանկարծակի յեղակարծումն ժամու անկանէր 'ի վերայ Մանտինացւոց՝ որ նիզակակիցքն էին Կղէոմենեայ. և առեալ ըզքաղաքն նոցա՝ գունդ կարգեաց 'ի ներքս. և քաղաքացիս 'ի նմա առեալ նստուցանէր զգաղթեանն ։ Եւ այսպէս ապա ինքնին միայնակ ժառանգեցոյց Աքայեցւոյն յաղթեցելոց զայն ինչ, զոր և յաղթականք նոքա՝ ոչինչ հեշտեաւ արդեօք 'ի ձեռս բերէին ։

Իսկ յետ այնորիկ իբրև միւսանգամ մարտ յուզեցաւ Լակեդեմոնացւոց ընդդէմ Մեգապօլսեայ, խաղաց նա 'ի թիկունս քաղաքին. բայց վարանեցաւ տալ պատերազմ ընդ Կղէոմենեայ՝ որ ասպարէզ կարգայր նմա, և ընդդէմ ևս դարձաւ նա Մեգապօլսեցւոց՝ որք կռուելըն կամէին ։

Փանգլի և չէր իսկ նա անդստին 'ի բնութենէն դիմագրաւ 'ի ճակատամարտ, և յայնժամ սակաւ ևս էին զօրականք նորա, և տեսանէր ևս 'ի վէգ գալ ընդ առն պատանւոյ և յանձնապաստան. իսկ ինքն նըւաղեալ ևս էր յայնժամ յարիութեան, և 'ի պատուասիրութեան իւրում վատեալ. առ այսոսիկ' և զմտաւ ածէր զի թէ Կղէոմէնէս 'ի խրախոյս արութեանն ժառանգել խնդրէ զփառսն' զոր չունէր, նմա պարտ էր պահել անձին զփառսն' զոր ժառանգեալ իսկ էր նա 'ի գեղեցիկ զգուշութենէն:

Ապա թեթևազէն զօրականին յառաջ դիմեալ, և վանեալ ընկրկեալ զՍպարտացիս մինչև 'ի ներքս բանակին նոցա, և սփռեալ ծաւալեալ զօրականին և ընդ վըրանս նոցա, համայն և այնպէս ոչինչ շարժեցաւ Արատոս անկանել 'ի վերայ թըշնամւոյն. այլ յառաջամուխ խաղացեալ 'ի ձոր մի 'ի միջոցին, անդ առկայացուցանէր զքաղաքացիս իւր և արգելոյր նոցա զանցսն: Որ աղագաւ և 'ի խոր խոցեալ յայնժամ Լիւսիադէս, չարախօս կայր զԱրատոսէն, և ինքն ձայն տայր այրուձիոյն' խրախոյս բառնայր 'ի թիկունս խաղալ' որոց զհետ մտեալ էին թշնամւոյն, և մի 'ի ձեռաց զյաղթութիւնն հանել, և մի զինքն լքանել թողուլ' որ մարտ եդեալ կռուէր 'ի վերայ հայրենեացն: Իբրև այսպէս բազմութիւն 'ի քաջաց զօրականին խմբեցաւ առ Լիւսիադեայ, նա յարձա-

կեալ յաջող Թևն Թշնամեացն, և հարուած 'ի վերայ ածեալ՝ հետամուտ վանէր զնոսա : Սակայն և բուռն և սաստիկ յաշխուժից ոգւոյն և 'ի պատուասիրութենէն բերեալ յայնժամ 'ի վայրս լինի ծամածուռս և ծառախիտս և լայն խրամովք լի, անդուստ 'ի վերայ նորա գրոհ տայր Կղէոմէնէս. և 'ի վերջէ ուրեմն տապաստ անկանէր Լիւսիադէս, մարտ եդեալ քաջութեամբ 'ի գեղեցիկ նահատակութեանն առ դուրս իւրոց հայրենեացն :

Իբրև այս եղև, 'ի փախուստ խուճապեցաւ այրուձին և եկեալ մխեալ 'ի փաղանգն և խռով 'ի հետևակազօրն հարեալ, վատթարեալ աղարտեցին առհասարակ զզօրն: Մեծապէս յայնժամ ճխասակար առէին զԱրատոս, իբրու որ ամայի ելէք եթող զԼիւսիադէս. և սրտմտութեամբ բարկութեամբ չու արարեալ Աքայեցւոցն, բռնադատեցաւ և Արատոս և ըզհետ երթայր նոցա մինչև յԵգիոն: Անդանօր նոքա յատեան ժողովեալ վճիռ ետուն ոչ ևս այնուհետև տալ Արատոսի արծաթ 'ի ձեռս և ոչ ևս պահել կերակրել 'ի վարձկան զօրականէն. և Թէ ևս կամք լիցին նմա մարտ դնել կռուել, ինքնին նա առ անձին հայթայթեսցէ արծաթ:

Իբրև այսպէս նշաւակեցաւ Արատոս, եդ 'ի մտի անդէն արագ 'ի բաց զկնիքն ընկենուլ և հրաժեշտ 'ի զօրավարութենէն տալ, այլ ապա քաջախորհուրդ ևս եղեալ՝ լռեաց և ժուժկէր համբերէր : Եւ առեալ

ածեալ զԱքայեցիս յՈրքոմենոն, անդ մարտ տուեալ ընդ Մեգիստոնի ընդ հօրուին Կղէոմենեայ, և յաղթական եղեալ տապաստ արկանէր ոգիս երեքհարիւր 'ի թշնամեացն, և զՄեգիստոն ինքնին կենդանւոյն ձերբակալ առնէր :

Բայց յետ այնորիկ ըստ երկամեայ սովորութեանն 'ի զօրավարութիւն, իբրև միւսանգամ 'ի հասանել կարգին՝ հրաւիրեցաւ 'ի նոյն բարձ, մերժեաց. և փոխանակ կարգեցին զօրավար զՏիմոքսենէս : Իսկ պատճառ մերժելոյն, զոր ասեն զարտմտութիւն բարկութեան նորա ընդդէմ ժողովրդեանն, չէ հաւանելի. այլ էր ճշգրիտ պատճառք բանին՝ վիշտ վտանգին Աքայեցւոց : Քանզի անդուստ Կղէոմենէս՝ ոչինչ այնուհետև հանդարտ և տակաւ իբրու զառաջինն յառաջադէմ խաղայր, և ո՛չ ընդ իշխանութեամբ ինչ էր նա այնուհետև աւագանւոյ քաղաքին. այլ յորմէհետէ 'ի մահ վարեաց նա զՊարէտոս, և բաշխեաց բաժանեաց զգետինն, և 'ի քաղաքացիս գրեաց զբազումս յեկաց անտի, յայնժամ իշխանութիւն ինքնիշխան անձին գրաւեալ՝ անդէն խաղայր 'ի վերայ յարձակէր Աքայեցւոցն, խնդրէր կարգել կալ 'ի զօրավար նոցա :

Ուր աղագաւ և բամբասեցաւ Արատոս, զի 'ի ծուփս անդ սաստիկ մրրկին՝ ինքն գոլով ղեկավար, ելիք եթող զքեղիան 'ի ձեռս օտարին. Նա՛ զի լաւ ևս էր նմա ոստիկան 'ի վերայ կալ քաղաքին, թէպէտ

և յոչ կամաց Աքայեցւոցն՝ 'ի փրկութիւն նորա ։ Իսկ թէ երբէք յուսակտուր ինչ էր յիրաց Աքայեցւոցն և 'ի զօրութենէն, պարտ էր նմա խոնարհել տեղի տալ յայնժամ Կղէոմենեայ, և ո՛չ անդրէն միւսանգամ 'ի բարբարոսութիւն առնուլ փոխել զՊեղոպոննէսոս, 'ի գնդաց անտի զօրականին Մակեդոնացւոց. դարձեալ և ոչ զԱկրոկորնթոս առնուլ լնուլ 'ի զօրականս Լիւրիկեցւոց և Գաղատացւոց, զորս ինքնին նա ցանգ նկուն արարեալ իսկ էր 'ի մարտս և յիրս քաղաքին, և ինքնին ևս յիւր Յիշատակարանսն խոտեալ անարգեալ ևս էր զնոսա, և առնուլ ածել զնոսա տեարս քաղաքաց, նիզակակիցս առ ձայնելով ըզնոսա ։ Եւ թէ արդեօք (զի այսպէս ասել) էր իսկ Կղէոմենէս այր անիրաւ և բռնաւոր, սակայն և 'ի Հերակլեանց անտի ձետ ունէր այրն, և Սպարտիա ինքնին էր հայրենիք նորա ։ Իսկ զՍպարտիոյ զոք քաղաքացի՝ թէպէտ և այր անաւագ՝ քան զայր աւագ Մակեդոնացի առաւել արժանի համարիմ զօրավարութեան բարձին, թէ արդեօք որք միանգամ արգոյ զՀելլենականն վարկցեն զազնուականութիւն ։

Եւ անշուշտ՝ խնդրէր Կղէոմենէս յԱքայեցւոց զբարձն զայն, զի բազում ինչ բարեգործեաց նա քաղաքաց քաղաքաց 'ի դարձ փոխարինի պատուոյն այնմիկ և աւագութեանն ։ Իսկ անդուստ Անտիգոնոս զօրավար կարդացեալ ինքնիշխան ընդ ծով և ընդ ցամաք, չառնոյր յանձն զա-

ւադրութիւնն զայն՝ մինչև տուեալ նմա 'ի վարձ զԱկրոկորնթոս, նմանող ճշգրտիւ եղեալ 'ի բանիդ՝ Որսորդին Եսովպեան 6։ Քանզի և ոչ իսկ կամեցաւ Անտիգոնոս տիրանալ 'ի վերայ Աքայեցւոց՝ որ յոլովք անկեալ կոչէին զնա և դեսպանօք և հրովարտակօք հնազանդեալս նմա դաւանէին զանձինս, մինչև ժողովեալ նոցա զգունդ զօրականին նորա և տուեալ ևս պատանդս, իբրու եթէ՝ սանձ 'ի բերանս իւրեանց առնուցուն. Թէպէտ և յայնժամ Արատոս զամենայն ձիգն թափէր իրաւացուցանել զբանն՝ իբրու որ 'ի հարկէն բռնուն ստիպեցաւ 'ի նոյն։

Բայց Պողիւբիոս ասէ, եթէ 'ի հարուստ ժամանակաց և յառաջ քան զհարկն զայն, ինքն Արատոս խեթիւ հայեցեալ 'ի յանձնապաստանութիւնն Կղէոմենեայ՝ 'ի ծածուկ բանագնաց եղեալ իսկ էր ընդ Անտիգոնոսի, և դրդեալ ևս զՄեգալոպօլսեցիս աղաչել զԱքայեցիս կոչել զնա 'ի թիկունս. քանզի և Մեգալոպօլսեցիք ինքնին առաւել քան զամենեսեան պաշարեալ հանապազ 'ի մարտէն՝ վխշտս կրէին յասպատակութենէն Կղէոմենեայ։ Զնոյն վասն իրացս պատմէ ինքնին և Փիւղարքոս. և սակայն եթէ Պողիւբեայ վկայութիւն 'ի միջի չէր, չէ՛ր արդեօք դիւրեաւ հաւատալ առնն. քանզի այս Փիւղարքոս յոնկուցեալ 'ի Կղէոմենէս՝ քանիցս անգամ բան ճառէ նա վասն Կղէոմենեայ, որպէս յայլմէ լինի այրն առ մեծարիմ սիրոյն առ

նա. և 'ի պատմութեան իւրում՝ իբրու եթէ յատենական դատի՝ այնպէս ցանգ ամբաստանէ զմիոյն, և ջատագով մտանէ վասն միւսոյն:

Արդ իբրև 'ի ժամանակին յայնմիկ այս երկրորդ անգամ զՄանտինէա 'ի ձեռաց Աքայեցւոցն հանէր Կղէոմենէս, և ապա 'ի մեծի ուրէք պատերազմի մօտ յԵկատոմբէոն հարուածս ևս ածէր 'ի վերայ նոցա, նոքա մեծապէս զահի հարեալք՝ անդէն առաքեցին կոչեցին զԿղէոմենէս յԱրգոս դալ առնուլ զանձամբ զզօրավարութիւնն: Իբրև զայն լուաւ Արատոս եթէ յուղի անկեալ է նա և մերձ է 'ի Լեռնա հանդերձ բանակաւն, երկուցեալ առաքէ բանբերս աղաչել զնա՝ զի իբրև առ ժողովուրդ բարեկամ և նիզակակից եկեսցէ նա առ նոսա երեքհարիւր միայն արամբք. իսկ եթէ վստահ ոչ իցէ, առցէ պատանդս: Խաղ զբանն և թշնամանս համարեալ Կղէոմենեայ, դարձաւ յետս և առեալ գրէր թուղթ առ Աքայեցիս դանդատանօք լի և ամբաստան զԱրատոսէն: Իսկ և Արատոս անդուստ ընդդէմ նորա տայր նամականի. և ապա նոցա լուտանք և հայհոյութիւնք կրթեցան մինչև յաղարտել զանկողինս անգամ առն զընկերին և զկանայսն:

Իսկ յետ այնորիկ Կղէոմենէս պատուիրակ արձակէր առ Աքայեցիս ազդարար մարտի պատերազմի. և վայրիկ մի ևս յայնժամ դաղտաբար 'ի նոցանէն մատնութ̃

'ի բուռն արկանէր զքաղաքն Սիկիւոնեացւոց: Իբրև 'ի դերևս եւ 'ի խորհրդոյն, չու անտի արարեալ խաղաց 'ի վերայ Պելլենեայ, և 'ի փախուստ խուճապեալ զօրավարին Աքայեցւոց, նա եմուտ տիրեաց քաղաքին: Եւ յետ սակաւու հասեալ կալաւ նա և զՓենէոն և զՊենտելէոն: Յայնժամ ապա Արգոսացիք միաբանեցան ընդ նմա. և Փլիասացիք առեալ ժողովեցին զգունդ զօրականին նորա: Եւ համբուն՝ որչափ ինչ տիրացեալ էր Աքայեցւոցն, այնուհետև մնայր նոցա հաստատուն և ոչինչ. և Արատոս ինքնին 'ի ծուփս յուզայր անհնարինս. քանզի և վեր 'ի վայր շարժեցաւ Պեղոպոննեսոս, և 'ի կողմանց կողմանց խլրտեցան քաղաքք 'ի խռովայոյզ մարդկանէն. և հանդարտիկ չէր և ոչ ոք, և գոհ չէր մարդ ընդ առաջակայ իրսն: Նաև 'ի Սիկիւոնացիս և 'ի Կորնթացիս առակեցան բազում մարդիկ բանադնացք ընդ Կղէոմենեայ. և 'ի խնդիր ելեալք առանձին տէրութեանն՝ նոքա 'ի վաղնջուց իսկ չարիս նիւթէին ընդդէմ հասարակաց:

Յայնժամ իշխանութիւն ինքնաբաւ զանձամբ առեալ Արատոս ընդդէմ նոցա, զորս միանգամ 'ի Սիկիւոնիա 'ի ձեռս եբեր 'ի չարարուեստից անտի՝ 'ի մահ վարեաց. իսկ իբրև ձեռնամուխ եղև խիլ արկանել խուզել և զորս միանգամ 'ի Կորնթոս, և պատուհաս 'ի վերայ ածել, դըրգռեցան ժողովուրդք՝ որ և խօթացեալ

Իսկ էին նոքա և խռժոռեալք ընդ առաջնորդութիւն Աքայեցւոցն ։ Ապա 'ի մի վայր խմբեալ Կորնթացւոց 'ի տաճարի անդ Ապողոնի , առաքեցին կոչեցին զԱրատոս , 'ի մօտ եղեալ ողջունանել զնա կամ թէ ձերբակալ առնել՝ մինչև յապստամբութիւն վառարանջեալ նոցա ։ Նա ելեալ չոքաւ անդր և զհետ իւր ինքնին ձգէր զերիվարն , իբրու ոչինչ յերկուացեալ ամենևին 'ի միտս կասկածոտս ։ Իբրև երևեցաւ նա նոցա , շատք ոմանք յոտին կանգնեալք յիշոցս արձակէին և լռստանս ընդդէմ առնն . նա հեզ և անխռով կերպարանօքն և հանդարտ բանիւք ասէր նստել նոցա , և մի այնպէս յոտին զխռովութեան զայն արձակել բարբառ ։ Միանգամայն և հրամանն տայր որոց առ դրօքն կային՝ մտանել 'ի ներքս , և մինչդեռ այնպէս տակաւին խօսէր՝ քայլ 'ի քայլ տեղի տայր վերջոտնէր , իբրև որ մարդ խնդրէ՝ տալ նմա 'ի ձեռս զերիվարն ։ Եւ այնպէս ապա վայր մի հեռացեալ , և քաջասիրտս բարբառեալ որոց և միանգամ պատահէր 'ի Կորնթացւոցն , հրամանն տուեալ նոցա ընթանալ հետևել 'ի տաճարն , այն ինչ մերձ եղև 'ի դղեակ անդր՝ յանկարծակի յերիվար աշտանակեալ , և պատուէր տուեալ Կղէոպատրոսի ամրապահ իշխանին՝ ամրագոյնս պահ զգուշութեան կարգել դղեկին , ինքն մտրակ 'ի կուշտ դայր 'ի Սիկիւոնն հանդերձ երեսուն զօրականօք միայն . քանզի այլք առհասարակ լքեալք ցիրուցան եղեն ։

Ապա յետ սակաւու խրաղէկ փախըստեան նորա եղեալ կորնթացւոց, զհետ պնդեցան. այլ ոչ ժամանեալք՝ առաքեցին կոչեցին զԿղէոմենէս, և զքաղաքն տային 'ի ձեռս նորա. իսկ նա՝ քան զոր 'ի նոցանէն առնոյր՝ առաւել մեծ համարեցաւ զի 'ի ձեռաց եհան զԱրատոս:

Յետ այսորիկ իբրև և բնակաւորքն Աքաեայ գաւառին միաբանեցան ընդ Կղէոմենեայ և ետուն նմա զքաղաքս իւրեանց, եկեալ նա շերտափակ և պատուարափակ շուրջ պատէր զԱկրոկորնթոս: Բայց և անդուստ բաղումք յԱքայեցւոց եկեալ խըմբեցան առ Արատոս 'ի Սիկիւոնն, և անդ ատեան գումարեալ կարգեցին զնա 'ի զօրավար ինքնիշխան, և առեալ նա Թիկնապահս կացուցանէր զիւրև յիւրոց անտի քաղաքացւոց: Եւ այր՝ որ ամս երեսուն և երիս առաջնորդ կացեալ էր քաղաքականութեանն Աքայեցւոց, և բարձրերէց 'ի Հելլենացիս փառօք և զօրութեամբ, իսկ յայնժամ ամայի լքեալ, չքաւոր և վտանգեալ, իբրու 'ի նաւաբեկութեան անդ կլրս իւրոց հայրենեացն, յայսկոյս յայնկոյս յուզեալ և ծփեալ 'ի մեծամեծս մրրկին և 'ի վիշտ վտանգին. քանզի և Էտողացիք ինքնին՝ յորոց խնդրեաց օգնութիւն՝ զլացան նմա. իսկ քաղաքն Աթենացւոց թէպէտ և յառաջամիտ օգնել Արատեայ, արգելաւ յԵւկղիդեայ և 'ի Միկիոնէ:

Բայց Արատոսի էին դրամոց մթերք 'ի Կորնթոս և տուն բնակութեան. այլ ոչ

ինչ մերձեցաւ 'ի նոսա Կղէոմենէս և Թոյլ ես ումեք չտայր մօտել. և կոչեալ զբարեկամս նորա և զգործակալսն՝ պատուէր տայր նոցա փոյթ ունել և քաջ պահպանել զամենայնն, իբրու որ համարս հանդերձեալ իցեն տալ Արատոսի վասն այնոցիկ: Եւ ապա առանձին առեալ յղեաց առ Արատոս զՏրիպիղոս, ապա և զՄեգիստոն զհօրուն իւր. և խոստանայր նմա բաց յայլ ինչ բազմաց՝ և զտարեւոր հաս երկոտասան քանքարաց, կրկին քան զտուեալն Պտղոմեայ (որ վեց միայն քանքար ամի ամի առաքէր նմա). և խնդրէր Կղէոմենէս ոչ այլ ինչ, բայց զօրավար 'ի վերայ կալ Աքայեցւոց, և հանդերձ նոքօք պահել զԱկրոկորնթոս: Իբրև պատասխանի ետ Արատոս զայս ինչ, եթէ՝ Ձէն իսկ ընդ ձեռամբ նորա իրք, մանաւանդ ինքն ընդ նոքօք է, հեգնութիւն զբանն համարեցաւ Կղէոմենէս. և անդէն փութապէս գռոյթ տուեալ յերկիրն Սիկիւոնացւոց աւար հարկանէր և յաղարտ վարէր առհասարակ. և եկն արձանացաւ յանդիման քաղաքին ամիսս երիս. և անդ քաջութեամբ արութեամբ ընդդէմ դառնայր Արատոս. բայց և վարանեալ ևս էր արդեօք առնուլ ժողովել զԱնտիգոնոս և տալ 'ի նորա ձեռս զԱկրոկորնթոս. քանզի և այլազգ նա ձեռն օգնականութեան չտայր նմա:

Ապա յայնժամ Աքայեցիք ժողովեալք յԷգիոն, անդր կոչէին զԱրատոս. բայց բանակ Կղէոմենեայ հարեալ յանդիման

Սիկիւոնին, վասնզի մեծապէս էր անցանել յՆեգիոն. առ այս՝ և քաղաքացիք ինքնին արդելուին զԱրատոս յողոք անկեալ, մի 'ի կշիռ զանձն իւր դնել՝ զի մօտ առ դուրս կայ Թշնամին: Շուրջ պատեալ ըղձնովաւ և կանանւոյն և մանկտոյն, գիրկս ածէին նմա իբրև հասարակաց հօր և փրկողին իւրեանց, և արտասուս իջուցանէին: Սակայն և այնպէս քաջալերեալ նա զնոսա և սփոփեալ, աշտանակեալ յերիվար չոքաւ 'ի ծով անդր՝ առեալ ընդ իւր տասն 'ի բարեկամաց և զորդին իւր հասակեալ: Եւ գտեալ անդ նաւս, ամբարձան 'ի նոսա. յուղի անկեալ գնային յՆեգիոն 'ի ժողով անդր. յորում և հաստատեալ կնքեցին առաքել կոչել զԱնտիգոնոս և տալ նորա 'ի ձեռս զԱկրոկորնթոս, և Արատոս ինքնին ընդ այլոց պատանդաց առաքէր նմա և զիւր որդին: Ցայսմանէ ապա 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ Կորնթացւոցն, յաւարի առին զինչս նորա, և զտուն բնակութեան նորա առեալ տային Կղէոմենեայ 'ի պարգև:

Իսկ անդուստ Անտիգոնոս չու արարեալ խաղայր գայր հանդերձ բանակաւն ածեալ ընդ իւր բիւրս երկուս հետևակաց Մակեդոնացւոց և հազար և չորեքհարիւր այրուձիոյ: Բայց Արատոս զանխուլ 'ի Թշնամեացն ելեալ գնայր նմա ընդ առաջ 'ի ծովուն մինչև 'ի Պէգա հանդերձ աւագ որերովն, Թէպէտ և չէր ինչ նա այնպէս վըստահ յԱնտիգոնոս և ոչ 'ի Մակեդոնացիս

անդր • քանզի և գիտէր իսկ քաջ զար-գաւաճել իւր 'ի չարեաց անտի՝ զոր ան-ցոյց նա ընդ նոսա • և զի՝ և կէտ նպատակի քաղաքականութեան իւրոյ մեծ և առա-ջին՝ կալաւ նա զԹշնամութիւն իւր ընդ-դէմ հնոյն Անտիգոնեայ • սակայն և յան-խուսափելի հարկէն ստիպեալ, և 'ի ժա-մանակէն՝ որում և կարծեցեալ իշխանքդ ինքնին ծառայք են, դիմագրաւ եղև 'ի մե-ծապէս վտանգն :

Արդ՝ յայնժամ Անտիգոնոս լուր ա-ռեալ զգալստեանն Արատոսի, չափաւոր և հասարակ հիւրընկալութեամբ առեալ ժողովէր զայլսն: Իսկ առ Արատոս անդէն 'ի սկզբանն շուք մեծաշուք հիւրամեծարու-թեամբ 'ի ներքս բերէր • իսկ ապա և զփորձ առեալ զառնն լաւութեան և զիմաստու-թեանն, 'ի կարևոր մտերմութիւն առեալ ընդունէր զնա : Քանզի և ինքնին Արատոս ոչ պիտանացու միայն էր 'ի նահատակու-թիւնս մեծամեծս, այլ և առաւել քան զամենեսեան էր նա զուարթարար կենցա-ղակից առն թագաւորի 'ի պարապորդու-թեան նորա : Ուստի և Անտիգոնոս թէ-պէտ և տակաւին պատանի՝ խելամուտ ե-ղեալ բուսոյ բարուց առն՝ քաջավայելուչ և պիտանացու 'ի բարեկամութիւն թագա-ւորաց, և նախապատիւ զնա ոչ միայն Ա-քայեցւոցն դասեալ, այլ և առհասարակ իւրոց Մակեդոնացւոցն, յամենայնի 'ի գործ առնոյր զնա :

Եւ այսպէս ապա 'ի գլուխ արդեօք ե-

լանէր յայտնութիւնն եղեալ նմա առ 'ի դից 'ի հմայս սպանդիցն ։ Քանզի պատմեն՝ եթէ ոչ շատ ինչ յառաջ յորժամ զոհ զոհէր Արատոս՝ երևել նմա կրկին լեղւոյ 'ի լերդին 'ի նոյն ճարպ, և անդ այրն լերդահմայ ասէր՝ եթէ արագ արագ նա բարեկամութիւն մտերիմ հաստեսցէ ընդ ոխերիմ թշնամեացն ։ Բայց Արատոս յայնժամ զանց զգուշակութեամբն առնէր, քանզի և ոչ յայլ ինչ ժամանակ ընտանորեցաւ նա այնչափ հաւատս հմայից ընծայել սպանդիցն և գուշակութեանց, և զխոհականութիւն վարէր զբանին ։ Իսկ յետ ժամանակաց 'ի գեղեցիկ յաջողել մարտին, յընթրիս երբեմն 'ի Կորնթոս 'ի մէջ յոքնախումբ բազմականին առեալ Անտիգոնոսի զԱրատոս բազմեցուցանէր առ իւր 'ի վերոյ. և յետ սակաւու վերարկու խնդրեալ Անտիգոնոսի, հարցանէր Արատոսի՝ եթէ և ինքնին նա զգա՞յ ցրտոյն. իբրև պատասխանի ետ Արատոս, եթէ դառնաշունչ է ցուրտն, հրաման տայր նմա մօտել և ևս առ ինքն. և առեալ յայնժամ սպասաւորացն զգորդն այնպէս զերկոսին զնոսա միանգամայն ծածկէին ։ Յայնժամ յուշ Արատոսի ածեալ զզոհն իւր, 'ի ծաղր հատանէր. և պատմէր յայնժամ արքային զհմայսն և զգուշակութին ։ Բայց այսոքիկ յետոյ ուրեմն պատահեցին ։

Իսկ յայնժամ նոքա 'ի Պեգաս երդումն տուեալ առն ընկերի իւրում, խաղացին գնացին ընդդէմ թշնամեացն. և ապա

*մարտք պատերազմաց յուղէին շուրջ զԿորն-
Թոսիւ. քանզի և էր իսկ քաջապէս ամրա-
ցեալ Կղէոմենէս, և Կորնթացիք ինքնին
քաջութեամբ մղէին զմարտն: Յայնժամ
Արիստոտէլ Արգիացի բարեկամ Արա-
տեայ գաղտ բանագնաց լինէր ընդ նմա
յապստամբութիւն դրդել զքաղաքն՝ 'ի
խաղալ նորա անդր հանդերձ զօրականօք:
'Ի վէր զքանն հանեալ Արատոսի առ Ան-
տիգոնոս, և նաւագնաց անցեալ 'ի շտապ
տագնապի 'ի կրճէ անտի յԵպիդաւրոս
հազար և հինգհարիւր զօրականօք, յայն-
ժամ Արգոսացիք՝ մինչև հասեալ նորա՝
'ի վերայ անկեալ Կղէոմենեանցն հարին
վանեցին միանգամայն, և 'ի ներքս փակե-
ցին դղեկին:*

*Գոյժ զայս առեալ Կղէոմենեայ և զան-
գիտեալ եթէ յառնուլ թշնամւոյն զԱր-
գոս՝ խցեալ կուրացի ճանապարհ ապա-
ստանին իւրոյ 'ի տուն, ելք եթող զԱկրո-
կորնթոս, և գիշերագնաց խաղայր 'ի Թի-
կունս իւրոցն. և կանուխ հասանէր յԱր-
գոս, և ինչ մի հարուած ածէր 'ի վերայ
թշնամւոյն: Յետ սակաւու հասեալ անդր
և Արատոս, և արքայն ինքնին ժամանեալ
հանդերձ բանակաւն, ետղի տայր Կղէոմե-
նէս 'ի Մանտինիա: Յայնմանէ ապա առ-
հասարակ քաղաքք անձնատուր Աքայե-
ցւոցն լինէին, և Անտիգոնոս եկեալ տիրա-
նայր Ակրոկորնթոսի. և Արատոս կարգեալ
յԱրգոսացւոց 'ի զօրավար նոցա, ածէր
հաւանեցուցանէր զնոսա՝ պարգև 'ի ներքս*

տալ Անտիգոնոսի զգանձս բռնաւորացն և զմատնոտ արանցն ։

Իսկ Արգոսացիք անդանօր 'ի կենքրա 'ի խոշտանգանս տանջանաց մատուցեալ զԱրիստոմաքոս , և ապա ծովակուր առնէին ։ Այր աղազաւ և մեծապէս բամբասեցաւ Արատոս , զի այնպէս յանիրաւի թոյլ ետ կորնչել առն՝ որ չէր 'ի վատթարաց ոք . ընդ որում և կենակից գործակից եւս էր նա , և զոր ամոքեալ եւս էր 'ի բաց յիշխանութենէն կալ և զքաղաքն իւր դաշնաւոր ընդ Աքայեցւոցն առնել ։ Նա և զայլոց ինչ իրաց զնմանն զնովաւ արկանէին . զայն՝ զի 'ի պարգև զԿորնթացւոց քաղաքն ետուն Անտիգոնոսի՝ իբրև աւան դուզնաքեայ . և զի թոյլ ետուն՝ զՈրքոմենոն աւարել Անտիգոնոսի , ապա և կարգել 'ի նմա զգունդ զօրականի Մակեդոնացւոց . և զի՝ վճռեա եւս ետուն ոչ գրել և ոչ հրեշտակս առ ոք 'ի թագաւորաց առաքել առանց հաւանութեան Անտիգոնոսի , և զի պարտական եղիցին նոքա պահել և թոշակաւորել զզօրականն Մակեդոնացւոց , և զի զոհ եւս զոհեսցին և նուէրս և մրցանս 'ի շուք պատուոյն Անտիգոնոսի . և սկիզբն բանին արասցեն քաղաքացիքն Արատեայ և առցեն ընկալցին 'ի քաղաքն իւրեանց զԱնտիգոնոս զհիւրամեծարութեամբ ժողովեալն յԱրատոսէ ։

Վասն այսորիկ ամենայնի դատափետ զԱրատոս առնէին , ոչ գիտելով զի Անտիգոնոսի գամ մի 'ի ձեռս տուեալ զե-

ժամանակն, ձգեալ բերէր այնուհետև Արատոս բուռն յիշխանութենէ անտի արքունի. և ոչ այլ՝ բայց միայն ձայնին բարբառոյ խրոյ իշխան էր, և համարձակաձայն ևս բարբառել վասնզի էր նմա. նա զի յայտնի՝ շատ ինչ յեղելոց իրացն և զԱրատոս ինքնին 'ի խոր խոցէին, ըստ որում և պատկերացն արկածք: Քանզի Անտիգոնոս առեալ միանգամայն զամենայն պատկերս զբռնաւորացն կանգնեալ անդրէն՝ զոր տապալեալ էին. և տապալէր կործանէր զպատկերս զարանցն՝ որ կալան զԱկրոկորնթոս, բայց յԱրատոսին. և թէպէտ և շատ աղաչեաց զնա Արատոս վասն այլոցն, ոչ կարաց հաւանեցուցանել:

Նա՛ և անցք որ անցին ընդ Մանտինիա յԱքայեցւոց անտի, ոչինչ այնպէս վայելուչք են հելլենացի բարոյիցն: Քանզի կալեալ սոցա զքաղաքն զայն 'ի ձեռն Անտիգոնոսի, ընդ սուր հանին զարս աւագս և զհոյակապս. և զմնացեալն կէս մի վաճառեցին, և կէս մի առեալ առաքեցին կապեալ ոտիւք 'ի Մակեդոնիա, և 'ի ստըրկութիւն վարեցին զողայս և զկանայս՝ և առեալ բաժանեցին յիւրեանս զերրորդ մասն զարծաթոյն մթերելոյ, և զերկուսն տային Մակեդոնացւոցն: Բայց այդոքիկ գործեցան ըստ իրաւանց վրէժխնդրութեն: Քանզի եթէ անագորոյն կիրք լցեն զվիշա զայն առ զայրոյթ բարկութեանն հատուցանել արանց համազգեաց և մերձաւորաց, սակայն 'ի հարկ իրացդ՝ քաղցր է բանդ՝

ըստ Սիմոնիդեայ բանին, և ոչ 'ի դժընդակաց ինչ. իբրու որ դարման և յագուրդ 'ի ներքս բերեն հոգւոյն՝ որ ցուցանին կայ 'ի սրտմտութեան բարկութեանն և վառ և բորբոք է:

Իսկ որ ինչ յետ այնորիկ գործեցաւ ընդ քաղաքն Ը այն, չիք այնմ պատրուակ ոչ լաւութեան ինչ և ոչ հարկի բռնադատութեան 'ի չքմեղս Արատոսի: Քանզի զայն քաղաք առեալ Արգոսացւոցն 'ի պարգև յԱնտիգոնոսէ, և հաստատեալ միւսանգամ շէն յարդարել զնա, յայնժամ Արատոս զօրավար 'ի ժամանակին և կարգեալ ևս 'ի գործ անգր, վճիռ 'ի ներքս բերէր՝ մի ևս Մանտինիա կոչել զնա, այլ Անտիգոնիա. զոր և կոչեն մինչև ցայսօր ժամանակի: Եւ այսպէս ուրեմն 'ի նորա ձեռն փարելին այն Մանտինէա խաղաց 'ի միջոյ բարձաւ, զի եկաց մնաց նա այնուհետև քաղաք անուանակիր մարդասպանիցն նորա:

Բայց յետ այսորիկ Կղէոմենէս 'ի պարտութիւն մատնեալ 'ի մեծ պատերազմի մերձ 'ի Սելլասիա, թողլոյր լքանէր զՍպարտիա և նաւագնաց լինէր յԵգիպտոս. իսկ Անտիգոնոս շուք զամենայն և զհիւրամեծարութիւն ցուցեալ Արատոսի դառնայր գնայր 'ի Մակեդոնիա: Իբրև անդ նա 'ի խօթութիւն անկանէր, առեալ զՓիլիպպոս չև յարբունս հասեալ՝ զպայազատ թագին՝ առաքէր 'ի Պեղոպոննիսոս, պատուէր տայր նմա յարել անձկանօք յԱ֊

րատոս, և 'ի նորա ձեռն յայց ելանել քա-
ղաքաց քաղաքաց, և 'ի ծանօթութիւն
գալ Աքայեցւոց: Իսկ Արատոս առեալ
ժողովեաց զՓիլիպպոս, և այնպէս իմն գե-
ղեցիկս դաստիարակեալ հրահանգեաց,
որպէս զի և 'ի Մակեդոնիա առեալ դար-
ձուցանէր զնա կարևոր մտերմութեամբ առ
ինքն, և խնամոտ նախանձախնդիր իրացն
Հելլենացւոց:

Իսկ իբրև մեռաւ Անտիգոնոս, արհամար-
հեցին Ետողացիք զԱքայեցւովքն վասն
յուլութե կենաց նոցա, քանզի և սովորել
էին նոքա 'ի փրկութիւն յայլոց ձեռն, և 'ի
զէնս Մակեդոնացւոցն ապաւինեալ՝ ինք-
եանք պարապորդ վարէին կեանս և ան-
կարգս: Ապա հորդան 'ի Պեղոպոննէսոս
տուեալ նոցա, և ըստ ընթման յուղւոջ
անդ աւար հարեալ զերկիր զՊատրէացւոց
և զԿիւմէացւոց, մխեցան 'ի Մեսսենէ և
յաղարտ վարէին: 'Ի սրտմտութիւն բրդե-
ցաւ Արատոս, և տեսեալ ևս զի Տիմոքսե-
նէս որ յայնժամ զօրավար Աքայեցւոց
ժամավաճառ յուլանայ, իբրև և 'ի կա-
տարած ևս էր նա իւրոյ իշխանութեանն,
կանխեաց աւուրս հինգ (քանզի և ընտ-
րեալ իսկ էր ինքն փոխանակ նորա) և առ
զանձամբ զզօրավարութիւնն խաղալ գնալ
'ի Թիկունս Մեսսենացւոց:

Ապա զօրաժողով արարեալ Աքայե-
ցւոց, որոց մարմինքն ոչինչ քաջակիրթք,
իսկ ոգիքն վառեալ 'ի գործ պատերազմի,
ուստի և հարան խոլատակեցան մօտ 'ի Կա-

փիւս : Կարծեաց ինձ այնպէս Արատոս՝ եթէ յայնժամ յանդգնագոյնս զօրավարեաց. ուստի և այնուհետև լքաւ բեկաւ այրն, և սրտաթափ սրտաբեկ լինէր 'ի գործոյն. զի թէպէտ և բազում անգամ ժամ բարեպատեհ ընծայեցաւ նմա հարկանել վանել զԵտողացիս, զանց արար և թոյլ տայր նոցա այնպէս բազում խեռութեամբ և ստահակութեամբ իբրու 'ի շուայտութեան գինեբբուս՝ աղուանալ նոցա 'ի Պեղոպոննիսոս :

Ապա Աքայեցիք անդրէն միւսանգամ մատուցին տատանել 'ի Մակեդոնիա կողմն՝ ածէին բերէին զՓիլիպպոս միջամուխ յիրս լինել Հելլենաց. ակն ունէին զնա հեշտ և բաղձալի տեսանել յամենայնի 'ի շնորհս մտերմութեան նորա և վստահութեանն առ Արատոս: Բայց յայնժամ ամբաստան զԱրատոսէ կացեալ Ապելղէս և Մեգաղէոս և այլք ևս յաւագանւոյն, ունկն մատոյց արքայ և յընտրութեան զօրավարին թեւակոխեալ 'ի կողմն հակառակորդաց, գուն գործեաց ընտրել Աքայեցւոց 'ի զօրավար իւրեանց զԵպերատոս : Այլ իբրև սա արհամարհ գլխովին գտաւ առ Աքայեցիս, և անդուստ Արատոս ձեռնթափ եղև, և 'ի պիտանեաց գործեցաւ և ոչինչ, յայնժամ խելամուտ եղև Փիլիպպոս զի խաբեցաւ 'ի խորհուրդս իւր. և անդրէն հակամիտեալ առ Արատոս՝ ողջոյն անձնատուր նմա լինէր. և 'ի լաւագոյնսն անդր յաջողեալ 'ի գործսն և բարգաւաճեալ 'ի

տէրութեանն և 'ի փառսն, համբուն զնմա-
նէն կախեալ կայր. Իբրու այն որ 'ի նորա
ձեռն միայն՝ յաջողեսցի նա 'ի փառս և
ամենեցուն լիցի: Եւ այսպէս ապա առհա-
սարակ զհամբաւի հարաւ Արատոս իբրև
դաստիարակ ճարտար՝ ոչ ընկերհաշտու-
թեանն միայն, այլ և արքայութեանն գըլ-
խովին: Քանզի և խորհուրդք նորա քաջա-
խորհուրդք և քաղաքավարութիւն կենաց՝
արդարև իբրև երանգ գեղեցիկ գունոց
այնպէս հատեալ ցոլանային 'ի գործսն
արքային: Եւ անշուշտ՝ փարելին այն չա-
փաւորութիւն պատանւոյն Փիլիպպոսի
առ Լակեդեմոնացիս մեծասակարսն, և նո-
րա բանախօսութիւն այն ընդ Կրետացւոցն՝
որով յինքն 'ի սակաւ աւուրս յանկոյց ող-
ջոյն զկղզին. դարձեալ և արշաւան նորա
ընդդէմ Ետոլացւոցն զօրաւոր յոյժ. այս
ամենայն փառս յաւելլին Փիլիպպոսի իբրև
հեշտալուր առն, և Արատոսի՝ իբրև ողջա-
խոհ խորհրդականի:

Յայսմանէ ապա սաստիկ ևս խանդացան
ընդ նա աւագանին. և տեսեալ ևս զի դա-
մադիտ չլինին 'ի ծածուկ ամբաստանու-
թեամբք, սկսան յայտնի նախատել զնա.
և 'ի կոչունս ընդդէմ դառնալ նմա բա-
զում լրբութեամբ և խեղկատակութեամբ:
Եր երբեմն՝ զի և յետ ընթրեացն 'ի գնալ
նորա 'ի խորան իւր, հետամուտք քարա-
ձիգք եղեն նմա. 'ի սրտմտութիւն բրդե-
ցաւ Փիլիպպոս և դատակնքէր զքարաձիգսն
'ի տուգանս քսան տաղանդաց. իսկ իբրև

ետես՝ զի և զգործս նորա աղարտեալ խը-
ռով հարկանէին, 'ի մահ մատնեաց զնոսա:

Բայց յետ այնորիկ 'ի վեր վաղեալ ամ-
բարձաւ Փիլիպպոս 'ի գեղեցիկ բախտէ ե-
լից իրացն, և առաւելեալ նշաւակէր զցան-
կութիւնս զիւր զբաղում և զմեծամեծս.
և տնկակից նորա չարութիւն՝ հակառակ
ընդաբոյս կրիցն 'ի վերին երեսն թափ
հարեալ և յերևան եկեալ՝ տակաւ մեր-
կանայր խայտառակէր զբարս առնն: Նախ
առաջին թշնամանեաց նա առանձինն զկըր-
սերն Արատոս 'ի կին նորա. և ծածկեալ
մնաց բանն հարուստ ժամանակ, զի էր նա
հիւրընկալեալ 'ի տան անդ Արատեանց:
Իսկ երկրորդ անգամ՝ վայրենացաւ նա 'ի
գործս քաղաքականսն, և յայտնի իսկ ու-
ծացաւ 'ի ծերոյն Արատոսէ, և խիթայր
կասկածէր զնմանէն 'ի դէպսն Մեսսենա-
ցւոց: Քանզի աղմուկ շփոթից յուզեալ 'ի
Մեսսենացիս, խաղաց գնաց Արատոս 'ի
թիկունս նոցա. բայց Փիլիպպոս կանուխ
հասեալ 'ի քաղաք անդր, սաստիկ ևս խռո-
վութեամբ ձգեաց ընդ միմեանս զքաղա-
քացիսն. առանձինն ուրոյն հարցանէր զզօ-
րագլուխս Մեսսենացւոց, արդեօք օրէնք
ո՞չ գուցեն նոցա ընդդէմ խուժանին. և
ուրոյն դարձեալ՝ զգլխաւորս խուժանին,
արդեօք ձեռն և բազուկ չգուցէ՞ նոցա
ընդդէմ բռնակալացն: Ուստի և խրախոյս
առեալ երկոցուն ևս կողմանցն, յայնժամ
իշխանքն խնդրեցին 'ի դիպահոջ առնել
զհռետորս խուժանին. այլ նոքա յառա-

ջամբուխ եղեալ բազմութեամբ խուժանին, տապաստ արկին զիշխանսն հանդերձ այլովք բազմօք իբրև երկերիւր արամբք ։

Իբրև 'ի դառնութեան յայն գործն յաջողեցաւ Փիլիպպոս, և 'ի դրդռութիւն և եւս յուզեաց զՄեսսենացիս ընդ միմեանս, դայր ապա հասանէր անդր Արատոս. և յայտնի իսկ խոժոռեալ յոյժ ցուցանէր զանձն, և զիւր եւս որդին ոչինչ արգել կարծեաց 'ի դառնապէս կշտամբանացն՝ զոր կշտամբէր նա զՓիլիպպոս և Թշնամանէր ։ Եւ Թուէր իմն այնպէս եթէ պատանին 'ի սէրն հարեալ էր Փիլիպպոսի, քանզի և յայնժամ դարձուցեալ առ նա զերեսսն ասէր ցնա, եթէ յետ գործոյն այնորիկ զոր գործեաց նա՝ այնուհետև ոչինչ գեղանի երևի նա նմա. նա՝ և քան զամենայն մարդ յոյժ անգեղեայ է ։ Թէպէտ և պատասխանի չէտ նմա Փիլիպպոս, սակայն և Թուէր իմն պատասխանի առնել 'ի սրտմտութիւն բարկութեան իւրոյ, զի ստէպ՝ 'ի խօսել պատանւոյն՝ սրտնէր և քրթմնջէր. բայց իբրև այր համբերատար և հեզ բնութեամբ և հանդարտ այնպէս կալաւ զձեռանէ ծերոյն Արատոսի և առեալ զնա արտաքս 'ի Թատրոնէն՝ ածէր յԻթովմատէ զոհ զոհել Արամազդայ և դիտել զննել զդղեակն զայն զքաջամուր՝ ոչինչ պակաս քան զԱկրոկորնթոս. իսկ Թէ և պահապան գունդ իցէ նորա, այնուհետև անհագին է նա մերձաւորացն և անկասկածելի վայր ։ Անդ նա ելեալ և զոհ կատարեալ,

առաջի մատուցանէր նմա դուշակն զախոնդիս զուարակին . իսկ նա առեալ զայն երկոքումբք ձեռօքն՝ ցուցանէր Արատոսի և Փարիոսի Դեմետրիոսի . մերթ 'ի միոյն կողմն խոնարհէր, և մերթ 'ի միւսոյն, և հարցանէր՝ զիարդ թուի նոցա 'ի սպանդան անդր, եթէ արդեօք կալցէ զդղեակն կամ դարձուսցէ առ Մեսսենացիս ։ Անդ 'ի ծաղր հարեալ Դեմետրիոս , ասէր . “ Եթէ քո խորհուրդք իցեն՝ առն լերդահըմայի . թող 'ի բաց զվայրդ . ապա եթէ՝ առն թագաւորի, կալցես զզուարակդ զերկոցունց զեղջերացն „ . զայն ինչ ակնարկէր առակաւն, եթէ 'ի միասին ընդ Ակրոկորնթոսի կալեալ Փիլիպպոսի և զԻթոմ մատէ , այնուհետև խաղաղ նուաճեսցի ընդ ձեռամբ Պեղոպոննիսոս ։

Իսկ անդուստ Արատոս հարուստ ժամն լուռ եղեալ կայր ։ Իբրև ստէպ աղաչէր զնա Փիլիպպոս՝ ասել զիւր խորհուրդն , եւ պատասխանի և ասէ . “ Լերինք բազումք արդեօք և մեծամեծք՝ ով Փիլիպպէ՝ են Կրետացւոց . և բազումք ևս Բիովտացւոց և Փովկէացւոց ամբարձեալք յերկրէ . նա՛ և Ակառնացւոց, 'ի ցամաքի և ծովափնեայ ամուրք բազումք կան անխաբ վայրաց . բայց քո ոչ տիրացեալ և ոչ միում 'ի նոցանէ , քո մտադիւրագոյնս հնազանդեալ կան հրամանիդ ժողովուրդք առհասարակ վայրացն ։ Քանզի և աւազակաց իցէ արդեօք հասանել ունել զանձաւս, և մտանել որջանալ 'ի դժուարս . իսկ առն թա-

դաւորի չէ՛ք ինչ անխաբ և քաջամուր ա-
ռաւել քան զհաւատ և զշնորհս: Ա՛յս
քեզ առաջի զծունր երբայ Կրետեայ. այս
քեզ զՊեղոպոննիսոս. և առաջնորդ զայս
քեզ ունելով արշաւանիդ, Թէպէտ և 'ի
դոյն չափ հասակի, զօրավար կացեր վերջ-
նոյդ, և տէր առաջնոյն 8: Մինչդեռ տա-
կաւին խօսէր Արատոս, առեալ Փիլիպպո-
սի զախոնդիրն տայր 'ի ձեռս գուշակին, և
ձգեալ զաջոյն Արատոսի, ասէր. " Օ՛ն
առեալ գնասցուք ուրեմն մեք ընդ ճանա-
պարհն ընդ նոյն,,: Իբրու այն որ յաղթա-
հարեցաւ 'ի բանից անտի նորա, և 'ի ձե-
ռացն հանաւ քաղաքն:

Բայց Արատոս այնուհետև վերջոտնե-
ցաւ յարքունեացն, և տակաւ տակաւ տեղի
տայր 'ի կենակից քաղաքավարութենէն
Փիլիպպոսի, մինչ զի և յԵպիրոս 'ի խա-
ղալ նորա և աղաչեալ զԱրատոս գնալ ընդ
նմա 'ի մարտ պատերազմի, հրաժարեցաւ.
երկեաւ վասն անուն ժառանգել անձին 'ի
գործոց անտի Փիլիպպոսի: Իսկ իբրև մե-
ծապէս կորանօք կորոյս Փիլիպպոս զնաւս
իւր՝ վանեալ 'ի Հռովմայեցւոց, և նորա
յոյժ վատթարեցան իրք, դարձ արարեալ
'ի Պեղոպոննիսոս՝ միւսանգամ Թեակո-
խէր խաբել դաւել զՄեսսենացիս. բայց
իբրև նորա խայտառակեցան հնարք [?], յայտ-
նի ապա հարստահարեալ զնոսա, աւար
հարկանէր զգաւառն նոցա: Եւ այնուհե-
տև Արատոս բնաւ իսկ ուծացաւ 'ի նմանէ
և ամբաստան եւս կայր. մանաւանդ զի և 'ի

վերայ կացեալ նա թշնամանաց առագաստին՝ որ 'ի կանանոցի անդ, յոյժ հարեալ խոցեցաւ 'ի միտս իւր, թէպէտ և 'ի ծածուկ յորդւոյն ունէր զբանն. սակայն և ծանուցեալ ևս զթշնամանսն՝ կարէր խոկ և ոչինչ առնել նմա որդին. զի զօրութիւն չգոյր նորա 'ի վրէժխնդրութիւն:

Քանզի և փոփոխութիւն յոյժ մեծ և այլանդակ փոփոխեալ Փիլիպպոսի, այն որ թագաւոր հեզ էր և պատանի զգաստ, այր գտաւ պագշոտ և բռնաւոր մահահոտ: Թէպէտ և ճշգրիտ՝ ոչ փոփոխութիւն ինչ էր բնութեան առնն, քան թէ խայտառակութիւն նորուն բնութեանն յայնժամ՝ յորժամ և երկիւղ ինչ չէր նմա ուստէք, և այնպէս հարուստ ժամանակ զօղեցաւ 'ի թաքստեան առ երկիւղին չարութիւն նորա: Քանզի և 'ի գործոց անտի նորա ընդդէմ Արատեայ ինքնին առաւել նշաւակեաց, եթէ գութ սիրոյն նորա առ նա անդստին 'ի սկզբանէ՝ խառն ուրեմն էր 'ի պատկառանացն և յերկիւղէն: Որ աղագաւ՝ թէպէտ և հետամուտ զարեն հատանել զաւագ առնն, և կարծեալ ևս այնպէս՝ եթէ ցորչափ նա կենդանի է, ինքն ազատ չէ և ոչ բռնաւոր և կամ թագաւոր, ոչինչ յայտնի բռուռն արար առն. այլ պատուէր տայր Տաւրիոնի զօրագլխին և բարեկամին իւրոյ՝ ծածուկ հնարիւք սպանանել զայրն, իբրու դեղակուր առնել զնա՝ մինչդեռ ինքն հեռի 'ի բացեայ իցէ:

Զայս պատուէր առեալ Տաւրինոնի՝ մտերմութիւն հաստեաց ընդ Արատոսի և հուսկ ուրեմն արբուցանէր նմա դեղ մահու, ոչ արագամահ և բուռն, այլ որ նախ տապ ամոք եռացուցանէ 'ի մարմինն և հալ դուզնաքեայ. և այնպէս ապա տակաւ առեալ հիւծէ և մաշէ զնա: Քաջիկ խելամուտ եղև բանին Արատոս. սակայն և այնպէս՝ զի և 'ի բողոք բառնալոյն օգուտ և ոչինչ՝ լուռ և հեզաբար տարաւ կրիցն, իբրու որ բնաւորական իմն ախտացու ախտ և հասարակ. բայց էր զի յընտանեաց անտի ումն երբեմն 'ի սենեկին նորա՝ տեսեալ զի և արիւնախառն եւ եթուք՝ զարմացաւ, յայնժամ ասէ Արատոս "Ա՛յս ինչ է աւադիկ արդասիք՝ ո՛վ Կեփաղոնէ՝ 'ի բարեկամութեան արքային,,: Եւ այնպէս ապա մեռանէր Արատոս յԷգիոն, իբրև եկաց նա զօրավար եօթն և տասներորդ անգամ: Յայնժամ Աքայեցւոյն պատուասիրեալ անդանօր կատարել նմա յուղարկաւորութիւն, և շիրիմ կանգնել նմա շքեղ և քաջավայելուչ կենաց առնն, անդուստ Սիկիւոնացիք աղէտս համարէին անձանց, զի ոչ առ նոսա թաղեցաւ մարմին նորա. ուստի և ողոքեալ ամոքէին զԱքայեցիս տեղի տալ 'ի բանէն: Իսկ վասնզի օրէնք վաղնջուց գոլով օրինաց մի զոք թաղել 'ի ներքս պարըսպացն, և 'ի նոյն օրէնսն մեծապէս զօրավիգն տայր երկիւղածութիւն կրօնիցն, առաքեցին 'ի Դեղփիս հարցանել զՊիւթիա և եղանէր 'ի նմանէ պատգամ՝ այսպիսի.

" Խորհուրդ հարցանես, կենսամըրցանակ
տալ Արատոսի,
Եւ ցանգ տօն նըւէր տապաստ արկելոյ
կարգել Արքայի։
Արդ որ միանգամ խիստ և դըժընդակ
քաջիդ այդ բերցի,
Նոյն անփառութիւն լիցէ և երկնից,
ծովու, և երկրի։

Իբրև զպատգամ զայս առին, առհասարակ ցնծացեալ բերկրեցան Աքայեցիք․ և մանաւոր՝ Սիկիւոնիացիք․ և զսուգն 'ի տօն փոխարկեալ՝ պսակօք բոլորեցան, և սպիտակազգեացք առին բարձին վաղվաղակի զդիակն յԸնգինէ 'ի քաղաքն իւրեանց, Պէյանս 'ի նուագ առեալ և պարերգութիւն կարգեալ։ Եւ ընտրեցին սահմանեցին տեղի բարձր և երևելի, և անդ թաղեցին զնա, իբրու քաղաքին հիմնադիր և փրկիչ․ և կոչեն զայն վայր մինչև ցայսօր ժամանակի՝ Արատիոն․ և կատարեն անդ զոհ յաւուրն՝ յորում փրկեաց նա զքաղաքն 'ի բռնաւորութենէն, և է այն հինգերորդ օր Դեսիոն ամսոյն, զոր Աթենացիք կոչեն Անթեստերիոն, և անուն կարդան զոհին Սոտէրիա, այն է՝ փրկութեան զոհ․ և միւս ևս այլ յամսեանն՝ յորում յիշատակ առնէին ծննդոց առնն։ Զառաջինն կատարէր զոհագործ քուրմն Արամազդայ փրկողի, իսկ զվերջինն՝ ինքնին Արատոսի որդին՝ ունելով վարսակալ ոչ

համակ սպիտակ, այլ կէս 'ի ծիրանւոյ. և 'ի նուագ առնուլին տաղս 'ի ձայն կիթառի ճարտարքն Դիոնիսեայ, և հանդիսակից էր տօնին ոստիկան ըմբշապետն, ածեալ ընդ անօր մանկունս և պատանիս, և զհետ ընթանայր ապա ծերակոյտն 'ի բոլորս պսակաց, և 'ի քաղաքացեաց անտի՝ որ միանգամ և կամէր։ Իսկ և ցայսօր Սիկիւովնացիք յաւուրս յիշատակին նշանս դուզնաքեայս պահեն զայսոցիկ 'ի նուիրական պաշտամունսն. այլ շատ ինչ 'ի պատուոյ անտի անգործ կայ 'ի պատճառս ժամանակին, և այլ ինչ իրաց։ Արդ՝ Արատոս ծեր՝ որչափ ինչ արժանագրեցին պատմաբանք, օրինակ զայս եկեաց, և այսպիսի ոք էր նա։

Այլ որ ինչ յաղագս որդւոյն նորա, Փիլիպպոս այր անդստին 'ի բնէն չարաբուեստ, անագորոյն և խեռ, դեղս իմն տայր ճաշակել Արատոսի կրսերոյ ոչ մահաբերս, այլ յիմարեցուցիչս և խելազիրկս. և այնպէս ժանտացոյց զպատանին 'ի թափս կրից անպատեհս և դժպհիս, և համբուն հակամիտեալ 'ի գործս անտեղիս և 'ի կիրս զազիրս և վնասակարս։ Ուստի և կատարած մահուն՝ թէպէտ և այր պատանի ծաղկահասակ էր նա՝ ոչ յաղէտս կարգեցաւ հիքացելոյն, քան թէ 'ի կատարած չարեաց և 'ի փրկութիւն նորա։

Բայց ապա և Փիլիպպոս ինքնին 'ի կեանս իւրում զվրէժ ոչինչ դուզնաքեայ զամբարշտութեան իւրոյ ելոյծ Արամազդայ Վանատրի և Հիւրասիրի։ Քանզի հա-

բուած 'ի մարտին առեալ 'ի Հռոմայեցւոց, տայր 'ի նոցա ձեռս զամենայն զգոյս իւր: Եւ մերկ կողոպուտ միանգամայն յամենայն տէրութենէ, և կորուսեալ զամենայն զնաւսն՝ բայց 'ի հնգից, և խոստումն ևս կալեալ տալ տաղանդս հազար, և 'ի պատանդի ևս տուեալ զորդին իւր, գթացեալ թողուլին 'ի նա զՄակեդոնիա և ըղհարկատու գաւառսն: Անդանօր նա հանապազորդեալ 'ի մահուանս արանց լաւաց և կարևոր մերձաւորացն, արհաւիրք ելից ողջոյն զարքայութիւնն և ատելութեամբ անձին: Մի միայն գեղեցիկ նշխար մնացեալ նմա յամբաւ աղէտսն, էր նորա որդին երևելի և ականաւոր յառաքինութե․ և զնա ինքնին գլխովին 'ի մահ վարեաց նա 'ի մախանացն՝ խանդացեալ զպատիւն զոր պատուէին զնա Հռոմայեցիք, և ետ զարքայութիւնն միւս որդւոյն իւրոյ Պերսէոսի, զոր ասեն ոչ հարազատ, այլ կարծեցեալ որդի, ծնեալ 'ի դերձակ կնոջէ՝ Գնաթենիէ անուն: Եւ է այս Պերսէոս՝ զոր 'ի հանդէս յաղթանակին ածէր Եմիլիոս․ և 'ի նմա վախճանէր ձեռն արքունի Անտիգոնոսին: Իսկ անդուստ՝ Արատոսին զարմն և մինչև ցայսօր ժամանակի կայ մնայ 'ի Սիկիւոնի և 'ի Պեղենէ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Պողիւկրատէս այր երևելի, 'ի սերնդոց անուանի Արատոսի, զորոյ զվարսն ընծայէ նմա Պլուտարքոս: Բայց երկավաստակ յոյժ և պերճաբան և իմաստասպատում յոյժ է այս արձանագրութիւն Պլուտարքեայ. որպէս յառաջ տարեալ ոք զվերծանութիւնն՝ արդարացուցէ:

2. Ըմբիշք շատակերք լինէին, առ 'ի հաստահարուստ գործել զանդամսն: Դարձեալ՝ և 'ի բաց և 'ի բրէշ կրթէին զկորովութիւն բազկացն և զմարմնոյն:

3. Չև էր յայնժամ Արատոս ամաց քսանից:

4. Յոյժ հրաշացեալ է առ մատենագիրս կենդանագիր այս նկարագրութիւն առն բռնաւորի, որ ցանդ 'ի խէթ մնացն հաշկցի և մաշկցի, և իբրև վատախտար քան զամենայն մարդ կեցցէ յաշխարհի:

5. Ինքնին Պողիւկրատէս, որում 'ի ձահ ընծայէ 'ի սկզբան Պլուտարքն մեր զհրաշալի զայս արձանագրութիւն վարուցս՝ էր 'ի սերնդոցն Արատոսի, և ունէր ևս որդիս երկու. և կայր ցայնժամ զարմն նորա,

այս է՝ ընդ ամս 350 'ի բնէ անտի ժամանակացն Արատոսի։

6. Առակ է Եսովպոսին վասն առնն՝ որ զերիվարն յանձկութեան պահուն փրկէր 'ի ձեռաց հալածչացն, որպէս զի ապա ինքն վերելակեալ 'ի նա՝ վարեսցէ միշտ 'ի պէտս իւր։ Յիշէ զայս Առակ՝ և Արիստոտէլ և Ովրատիոս։

7. Բայց Պոլիւբիոս ասէ, եթէ այր եղեռնագործ էր այլն և դառնագունից արժանի պատուհասից։

8. Այս հանճարեղ խրատաբանութիւն ծերոյն Արատոսի առ պատանի Թագաւոր, գլուխ և աւարտ ողջամիտ Քաղաքականին, առաջին և վերջին 'ի ջանան պարտի լինել առն Առաջնորդի։ 'Ի սակաւտողին առաւել խօսեցաւ Արատոս վասն Ճշգրիտ Քաղաքագիտութեան, քան զայլն՝ 'ի բազում Մատեանս։

ԳՐԱԴԱՐԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ 7
ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ 153

. . . .

ԱԳԻՍ ԵՒ ԿՂԷՈՄԵՆԷՍ . . . 267
ՏԻԲԵՐԻՈՍ ԵՒ ԳԱՅԻՈՍ . . . 365

Զուգակշռութիւն 433
ԴԵՄՈՍԹԵՆԷՍ 445
ԿԻԿԵՐՈՎՆ 497

Զուգակշռութիւն 585
ԱՐԱՏՈՍ 597